

Ա. ԳԱԲՐԻԷԼՅԱՆ

ՀՈՎԿԱՆՆԵՍ  
ԻՄԱՍՏԱՍԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1629

9 (47.925)  
Ա-16







John Jay







Сигнальный экземпляр



2012





ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМ. В. Г. ШОТОВЫ

А. Г. АБРААМЯН

ТРУДЫ  
ОВАНЕСА  
И МАСТАСЕРА



2004

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА  
Ереван — 1956



ՎԵՐԱՆՈՏՈՎ ԿՆՁՄԵՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա.Գ.ԱՐԲՐԱՆԱՄՅԱՆ

9 (97.925)

Ա-16

Վ



ՉՈՎՃԱՆՆԵՍ  
ԻՄԱՍՏԱՍԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



97.027

26869-Ա, 3

Խմբագիր՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ.



5953-57 8



## ԱՌԱՋԱԲԱՆ

Հովհաննես Իմաստասերը<sup>1</sup> միջնադարյան հայ մատենագրության աչքի ընկնող դեմքերից մեկն է: Նրա մասին, որպես հանձարեղ գիտնականի, գովեստով են խոսում նրա գրական վաստակներին ծանոթ գրեթե բոլոր պատմիչները՝ Սամուել Անեցին (Հովհաննեսի աշակերտը), Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուրիշները: Այսպես օրինակ, Կիրակոս Գանձակեցին, որն ապրել է Հովհաննեսից մոտ մեկ դար հետո և մոտիկից ծանոթ է եղել նրա գրական-գիտական ժառանգությանը, հետևյալ ձևով է բնութագրել նրան. «...մեծիմաստն գիտութեամբ քան զյուրովն և հանձարեղն յամենայնի՝ մտահարուստն Յոհաննէս»<sup>2</sup>:

Ժամանակակից մատենագիրների հազորգած տեղեկություններից երևում է, որ Հովհաննես Իմաստասերն իր գիտությամբ մեծ հռչակ է ունեցել ո՛չ միայն Հայաստանում, այլև նրանից դուրս՝ հարևան Վրաստանում և Ազովանից աշխարհում: «Քարթլիս ցխովրերայի» հայերեն հնագույն թարգմանության մեջ եղած մի տեղեկությունից երևում է, որ Հովհաննեսն առանձնապես մեծ հարգանք է վայելել Վրաստանի թագավոր Գավրիլ Վերաշինոդի արքունիքում: «Այլ ինքն թագաւորն Գաւրիլ, — կարդում ենք այնտեղ, — սիրէր զազգն հայոց և զեկեղեցիսն և զոմն հոռտոր վարդապետ ի Հաղբատ Սարկաւազ անուն խոստովանէր նմա զյանցանս իւր, և կորացուցեալ զպատուական զլուխն արհնէր ի նմանէ, և նստէր ընդ նմա և փարէր զզարանոցաւ նորա...»<sup>3</sup>:

Գավրիլ Վերաշինոդի՝ Հովհաննեսի նկատմամբ ցուցաբերած սիրալիր վե-

<sup>1</sup> Հովհաննես Իմաստասեր հայ մատենագրության մեջ հայանի է մի շարք մականուններով՝ Հովհաննես Սարկավազ, Հովհաննես Սովեսոս, Հովհաննես Իմաստասեր, Հովհաննես Պոնտիկոս, Հովհաննես Սարկավազ վարդապետ, Սարկավազ Լոնտոս և այլն: Նրա ստեղծագործությամբ գրադվող գիտնականները, ըստ նախասիրության, իրենց ուսումնասիրությունների մեջ զործ են ածել այս մականուններից մեկն ու մեկը: Նկատի ունենալով, որ Հովհաննեսն իր գրական վաստակով, մարի խորությամբ փելիստփա մտածող է, խոհուն գիտնական և ժամանակակիցները մեծ մասամբ հիշում են «իմաստասեր» մականունով, ուստի և հարմար գտեսցինք նրա անվան հետ գործածել իմաստասեր մականունը: Կարծում ենք, որ այս ավելի համապատասխանում է մեր մեծավաստակ հեղինակի գիտական ուղղությանը, քան մյուս մականուններից որևէ մեկը:

<sup>2</sup> Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոս վարդապետի Գանձակեցոյ, Թբիլիս, 1909, էջ 104:

<sup>3</sup> Երանտոս Եսեփեանի մեջլիս նամակները (պրոֆ. Իլիա Արուստանի հրատարակությամբ), Երևան, 1953, չմմ. «Համասոս պատմութիւն Վրաց», Վենետիկ, 1904, էջ 122—123:

բաբերմունքի մասին հիշատակություններ կան նաև Կիրակոս Գանձակեցու<sup>1</sup> և Գավիթ Վերաշինողի պատմիչի մոտ<sup>2</sup>:

Հովհաննեսի մեծությունը ճանաչել և նրա աշխատությունն ըստ արժանավունքն գնահատել են հայ մատենագրության ուսումնասիրությանը զբաղվող բոլոր աչքի բնկնող հայագետները: Այսպես, Հ. Ղ. Ալիշանը հետևյալ ձևով է բնորոշում նրա արժանիքները. «Բնատուր մեծ հանձար՝ կրթութեամբ և երկար ուսմամբ կրկնակի մեծացած և զօրացած, բարակամիտ ըմբռնումն և վարպետ բացատրութիւն, լեզու արուեստաւոր՝ բայց յստակ և հայկաբանարտաքին և աստուածային գիտութեանց հմտութիւն, քաջասոհ դատողութիւն, վսեմ և անխռով ողի՝ անխոնջ հետաքնին և սիրող ստուգութեան, պատկասելի ծանրութեանը հետ զուարճախանն բնամանիութիւն... ասոնք են մեր մեծանուն Յովհաննէս Սարկաւազ վարդապետին յատուկ բնութիւնը, բարբը, ձիրքը...»<sup>3</sup>:

Հանգուցյայ պրոֆ. Մ. Արեղյանը Հովհաննէս Իմաստասերին անվանում է «...մեծ գիտնական, փիլիսոփա, տոմարագետ, պատմագիր, հեղինակ կրօնական ներբողների, միաժամանակ և բանաստեղծ...»<sup>4</sup>: Պրոֆ. Մ. Արեղյանը Հովհաննէս Իմաստասերին համարում է Հայաստանի վերածննդյան շրջանի գրական նոր ուղղության հիմնադիրներից մեկը: Նա իր «Հայոց հին գրականութեան պատմության» 2-րդ հատորում խոսելով Հովհաննեսի ստեղծագործությունների արժանիքների մասին, գրում է. «Մեր վերածննդյան նոր մտավոր հոսանքի առաջին արտասայտիչներից մեկն է Հովհաննէս (Յովհաննէս) Սարկավազ վարդապետը»<sup>5</sup>:

Նման ձևով բարձր են գնահատում Հովհաննէս Իմաստասերին նրա երկերի ուսումնասիրությանը զբաղվող մյուս գրեթե բոլոր լուրջ պատմաբանները և գրականագետները:

Պատմիչների և ուսումնասիրողների՝ Հովհաննէսին տված այս գնահատականները անվիճելիորեն ապացուցում են այն, որ հանձին Հովհաննէսի մենք ունենք իր ժամանակի խոշորագույն մատենագիրներից մեկին, մի մատենագիր, որի գրական ու գիտական գործերն արժանի են առանձնահատուկ ուշադրության:

Հայանի ու հրատարակված նյութերի սահմաններում Հովհաննէս Իմաստասերի աշխատությունները մասամբ ուսումնասիրված են: Նրա երկերի ուսումնասիրությանը նվիրված առաջին լուրջ աշխատությունը պատկանում

<sup>1</sup> Տես Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 105:

<sup>2</sup> Տես պրոֆ.-դոկտ. Մելիսեթ-Բեկ, Վրաց պոքրերները Հայաստանի և հայերի մասին, մասն Ա, Երևան, 1934, էջ 219:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Յուզեղբ հայրենեաց Հայոց, հատոր Բ, Վենետիկ, 1870, էջ 279:

<sup>4</sup> Պրոֆ.-դոկտ. Մ. Արեղյան, Վերածննդյանը հայոց հին գրականության մեջ, Տեղեկագիր ՍՍՌԿ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, 1941, № 5—6, էջ 94: Պրոֆ. Արեղյանի այս աշխատությունը արտատպվել է նրա «Հայոց հին գրականության պատմության» 2-րդ գրքի հավելվածում (էջ 570—577):

<sup>5</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, 2-րդ գիրք, Երևան, 1946, էջ 43:

Հովհաննէս Իմաստասերին նվիրված պրոֆ. Մ. Արեղյանի աշխատության այս դրույթը հրատարակվել է նախապես Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր մեջ (1944, № 1—2), իսկ հետո զետեղվել է նրա «Հայոց հին գրականության պատմության» մեջ:



է Զ. Ղ. Ալիշանի գրչին և լույս է տեսել հարյուր ինը տարի առաջ «Քաղճա-վէպ» ամսագրում՝ «Յովհաննէս Սարկաւազ վարդապետ» վերնագրով: Ալիշանի նույն հոդվածը վերահրատարակվել է նրա «Յուշիկը հայրենեակը Հայոց»-ի երկրորդ հատորում<sup>1</sup>:

Պետք է ասել, որ Ալիշանի այս աշխատությունը, առաջինը լինելով, ամենից հարուստն է փաստական նյութերի տեսակետից: Նա տվել է Հովհաննէսի անձնավորության և նրա երկերի մասին հայ մատենագրության մեջ պահված տեղեկությունների հիմնական կմախքը: Հետագա ուսումնասիրողները, բացառությամբ մի քանի հոգու, փոքրիկ լրացումներ են կատարել Ալիշանի այս աշխատության վրա այս կամ այն հարցում, իսկ ոմանք՝ ուղղակի կրկնել նրան: Դժբախտաբար, Ալիշանի մոտ բացակայում են աղբյուրագիտական խորը վերլուծումներ, և վատ է գիտական դրվածքը. հաճախ դժվար է պարզել այն սկզբնաղբյուրը, որից նա օգտվում է:

Ալիշանից հետո, ըստ ժամանակագրական հաջորդականության, Հովհաննէսի մատենագրությամբ զբաղվել է Գ. Զարբհանալյանը իր «Հայկական հին դպրության պատմության» մեջ<sup>2</sup>: Նա համառոտել է Ալիշանի վերևում հիշված աշխատությունը՝ նպատակ ունենալով մի քանի էջերի սահմաններում տալ ամփոփ տեղեկություն Հովհաննէս Իմաստասերի անձնավորության և նրա թողած երկասիրության մասին: Աչքի ընկնող պատմական որևէ նոր փաստ կամ նոր թեզ մենք չենք գտնում Զարբհանալյանի այս աշխատության մեջ:

Հովհաննէսի մատենագրությամբ հետազայում զբաղվել է դոկտ. Ե. Տեր-Մինասյանը՝ Հաղբատի և Սանահինի վանքերի պատմությանը նվիրած իր մի ուսումնասիրության մեջ: Հովհաննէսը, ինչպես կտեսնենք հետո, սովորել է Հաղբատում, իր ստեղծագործական աշխատանքի որոշ շրջանում գտնվել է այնտեղ, ուստի և բնական է, որ դոկտ. Ե. Տեր-Մինասյանը, խոսելով Հաղբատի և Սանահինի մասին, պետք է կանգ առներ նաև Հովհաննէսի անձնավորության ու նրա ստեղծագործության վրա<sup>3</sup>: Դոկտ. Ե. Տեր-Մինասյանի այս աշխատության մեջ կան արժեքավոր նորություններ. նրա մոտ հիշատակված են էջմիածնի մատենադարանի ձեռագրերում պահված Հովհաննէս Իմաստասերի մի քանի նոր աշխատությունները, որոնք հայտնի չեն եղել նախորդ ուսումնասիրողների մոտ: Դոկտոր Ե. Տեր-Մինասյանը, սակայն, Հովհաննէսի նորահայտ այդ աշխատությունները թվարկել է միայն մեկական տողով, չի տվել այդ աշխատությունների ամբողջական վերնագրերը, ցույց չի տվել այն ձեռագրերը, որոնք պարունակում են Իմաստասերի տեքստերը, ուստի և նրա արժեքավոր հայանագործություններին պատշաճ գնահատական չի արվել և հետագա ուսումնասիրողների ուշադրությանը չի արժանացել:

Ընդհանրացնող և բանասիրական արժեքավոր աշխատություններ են հանդիսանում Զ. Ոսկյանի երկու ուսումնասիրությունները՝ «Հովհաննէս Սար-

<sup>1</sup> Տես «Քաղճավէպ», 1847, էջ 214—225:

<sup>2</sup> Ղ. Ալիշան, Սարկաւազ Սոփեստես (տես՝ «Յուշիկը հայրենեակը Հայոց», Բ հատոր, էջ 279—307):

<sup>3</sup> Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897, էջ 606—616:

<sup>4</sup> Տես «Արարատ»-ում (1901, էջ 340—344) նրա՝ «Հաղբատի դպրոցը և Հովհաննէս Սարկաւազ վարդապետը» վերնագրով ուսումնասիրությունը:



կապագի կյանք» և «Հովհաննես Սարկավագի գրությունները»<sup>1</sup>, որոնք աեղա-  
վորված են «Հանդէս ամսօրեայ»-ի 1925 թվի համարներում: Փաստորեն  
Հ. Ոսկյանն Ալիշանից հետո առաջին ուսումնասիրողն է, որը փորձել է հա-  
լոցդիտության մեջ հայանի և հրատարակված աղբյուրների մանրակրկիտ  
ուսումնասիրության հիման վրա լուծել Հովհաննեսի կյանքի և դործունեության  
հետ կապված մի շարք անեղծվածներ:

Հովհաննեսի մատենագրությանն են նվիրված սովետական գիտնական-  
ներ՝ պրոֆ. Մելիքսեթ-Քեկի՝ «Վարդապետ Բայոց հյուսիսային կողմանց» և  
պրոֆ. Մ. Արեղյանի «Հովհաննես Սարկավագ վարդապետ» ուսումնասիրու-  
թյունները:

Պրոֆ. Մելիքսեթ-Քեկն իր աշխատությունը գրել է վրացերեն լեզվով և  
հրատարակել 1928 թվին<sup>2</sup>: Օգտվելով հրատարակված և անտիպ նյութերից նա  
իր վերը հիշված ուսումնասիրության մեջ աշխատել է Հովհաննեսի մատենա-  
գրության ուսումնասիրությունը դնել գիտական հողի վրա: Պրոֆ. Մելիքսեթ-  
Քեկի այդ աշխատությունն արժեքավոր է առանձնապես այն տեսակետից, որ  
նա Հովհաննեսի երկերն ու դործունեությունը քննում է ո՛չ թե առանձնացված  
ձևով, կտրված շրջապատից, ինչպես նախորդ ուսումնասիրողներից ոմանց  
մոտ է, այլ կապված իր ժամանակի գրական ու հասարակական հիմնական  
հոսանքների հետ:

Գիտական խորը վերլուծումներ է պարունակում պրոֆ. Մ. Արեղյանի ու-  
սումնասիրությունը<sup>3</sup>: Պրոֆ. Մ. Արեղյանը առաջին ուսումնասիրողն է, որ  
Հովհաննեսի մատենագրությունը քննում է ո՛չ միայն բանասիրական, այլև  
այդ հեղինակի գրական ու գիտական արժեքը վեր հանելու և գնահատելու  
տեսանկյունից: Նա Հովհաննեսի աշխատությունների մեջ տեսնում է վերա-  
ծնության շրջանին հատուկ մտքեր ու գաղափարներ: Կոնկրետ օրինակների  
հիման վրա նա ցույց է տալիս Հովհաննեսի բանաստեղծության բարձր ար-  
վեստը, Հովհաննեսի հայրենասիրությունը և այլն:

Կարելի է ընդարձակել Հովհաննեսի առանձին աշխատություններով  
գրադվոլ ուսումնասիրողների ցանկը, սակայն, վերևում հիշված ուսումնա-  
սիրողների հիշատակումը բավական է համոզվելու համար, որ Հովհաննես  
Իմաստասերը հայ մատենագրության ինչ-որ կտրած, երկրորդական դեմք չէ, և  
մենք մեր ներկա հատորով Ամերիկա չէ, որ բաց ենք անում: Ծիշտ է, Իմաս-  
տասերի մատենագրությունից մինչև այժմ քիչ բան է հայանի հղել, սակայն  
այդ քիչն էլ այնքան բարձրորակ դործեր են եղել, որ նրա կողքից անուշաղբի  
չեն անցել հայագիտության մեր աչքի ընկնող ներկայացուցիչները:

Մինչև այժմ Հովհաննեսի աշխատություններից հայանի են և հրատա-  
րակված հետևյալները. 1) «Սարեակի տաղ»-ը, որը հրատարակել է Ալիշանը  
1847 թվին «Բագմավկա»-ում, իսկ վերջերս՝ նաև պրոֆ. Արեղյանը, 2) «Յով-  
հաննու հատ վասն Բահանայութեան», հրատարակվել է Վենետիկում 1853  
թվին, 3) «Աղօրգիր», հրատարակվել է Վենետիկում 1852 թվին, 4) տոմարա-  
կան երկու հատվածներ՝ «Յաղագս ամսոց Բայոց և տօնից և յաղագս չորեքտա-

<sup>1</sup> «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 27—40, 117—125, 233—248:

<sup>2</sup> Լ. Մեղուկյետ-ձեցո, «Խրդուլու մնարդետա և ումլետա մոմլեզորնի» և ձետո զոնտոմա, տծոլոն, 1928.

<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, 11 դիրք, էջ 43—61:

սաներոցաց լուծոյ Զատիկ» և «Յառաջ Բան գրութիւն իւրոյ տաւմարին», որոնք հրատարակվել են Բ. Սարգսյանի «Ազաթանգեղոս և յուր բազմադարյան գաղտնիքը» աշխատութեան ծանոթագրութեան մեջ, 5) «Վասն շարժման ասացնայ Սարկիազ վարդապետին», հրատարակվել է 1925 թվին «Հանդէս ամսօրեայ»-ում Ոսկյանի ուսումնասիրութեան հավելվածում (էջ 242—243), իսկ վերջերս նաև՝ պրոֆ. Մելիքսեթ-Բեկի կողմից Հայկ. ՍՍՌ Գիտութեաննե-րի ակադեմիայի Տեղեկագրում: Հրատարակված են նաև մի քանի մանր գործեր:

Դժվար չէ նշված աշխատութեաննե-րի բովանդակութեաննից կոահել, որ նրանք որքան էլ բարձրորակ գործեր լինեն, այնուամենայնիվ Հովհաննէսի երկրորդական աշխատութեաննե-րն են և ունեն մեծ մասամբ կրօնական բո-վանդակութիւն: Հովհաննէսը, որ հայկական մատենագրութեան մեջ հիշվում է որպէս հայկական տոմարի բարեփոխող իմաստասեր, որպէս փիլիսոփա՝ «Սոփեստոս», «Պոետիկոս» և այլն, թվարկված աշխատութեաննե-րով չէր, որ կարող էր տիրանալ նման համբավի, այլ պետք է ունենար մեծարժեք գործեր: Բանասեր Գ. Զարբճանալցանն իրավացիօրէն նկատել է, որ Հովհաննէս Իմաստասերի մեզ հասած և հրատարակված աշխատութեաննե-րը նրա «...իմաստութեանը և անխոնջ փութութեան քանի մը երախտայրիքը պիտի ըլլան ան-շուշտ, վասն զի հավանական կերևնա թե՛ յուր գրվածներն շատը կորսված են...»<sup>1</sup>:

Նույն կարծիքն ավելի որոշակի հայտնել է պրոֆ. Մ. Արեղյանը. «Բազ-մաթիվ և քսո բովանդակութեան բազմազան են եղել Սարկիազ վարդապե-տի գրական գործերը, — գրում է նա, — որոնք մեծ մասամբ չեն տպագրված, մասամբ երեւն չեն եկել, կան այնպիսիներն էլ, որոնցից հատվածներ են միայն հայտնի: Նա հորինել է ներբողյաններ, մեկնություն, ճառեր, տաղեր, շարականներ, աղոթքներ, տոմարական աշխատութեաննե-ր, խրատներ («Բան խրատու առ ուսումնասէրս»), տիեզերագրական և ուրիշ բնագիտական գրք-վածքներ, փիլիսոփայական, բարոյագիտական երկեր և այլն»<sup>2</sup>:

Երբեկացու մատենագրութեան ուսումնասիրութեանն ավարտելուց հետո, մտա հինգ և կես տարի տառջ, ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական ձեռագրատուն (Մատենագարանի)<sup>3</sup> գիրեկցիայի հանձնարարութեամբ մենք ձեռնարկեցինք Հովհաննէս Իմաստասերի աշխատութեաննե-րի ուսումնասի-րութեանը՝ նպատակ ունենալով ի մի հավաքել և հրատարակութեան հանձնել միջնադարյան այս խոշոր գիտնականի հայտնի և նորահայտ աշխատութեան-նե-րը: Տվյալ թեմայի ընտրութեանը, իհարկե, պատահական չէր: Սկսած 1937 թվից, աշխատելով Մատենագարանի ձեռագրերի թեմատիկ բիրտոգրաֆիայի վրա, մեզ արդէն հայտնի էին զարծել Հովհաննէսի շրատարակված որոշ աշ-խատութեաննե-ր: Մնում էր, որ մենք շարունակեինք մեր պրպտումները Մա-տենագարանի ձեռագրական հարուստ ժողովածուում՝ Հովհաննէսի անվերնա-գիր աշխատանքները ևս գտնելու ուղղութեամբ և ամբողջացնեինք նրա մա-տենագրութեաննե-րը:

<sup>1</sup> Գ. Զարբճանալցան, Պատմութեան հայ մատենագրութեան, էջ 609:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականութեան պատմութեան, II գիրք, էջ 48:

<sup>3</sup> Սույն աշխատութեան մեջ՝ ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական ձեռա-գրատուն (Մատենագարան) անվանումը, համապատասխան համար, տեքստում հիմնական-ում կրեթվի Մատենագարան ձևով, իսկ տողատակ՝ ՀՊՁՄ հաղագումով:



Ակսելով աշխատանքը, պետք է խոստովանվենք, որ մենք հանդիպեցինք որոշ դժվարությունների: Այդ դժվարությունները գլխավորապես կապված էին Հովհաննեսի տոմարական աշխատությունների ուսումնասիրության հետ. Հովհաննեսի տոմարական աշխատությունների մի մասը, ինչպես պարզվեց, անդամահատված և աղճատված է ուշ շրջանի տոմարի մեկնիչների կողմից: Հովհաննեսի տոմարական որոշ գործերի հարազատ բնագիրը գտնելու նպատակով մենք հարկադրված ենք եղել թերթելու Մատենադարանի տոմարական բովանդակություն ունեցող գրեթե բոլոր ձեռագրերը:

Մեր պրպտումները ավելցին գոհացուցիչ արդյունքներ. մեզ հաջողվեց հասնել անհամեմատ ավելի մեծ արդյունքների, քան մենք ակնկալում էինք: Այդ առանձնապես նկատելի է տոմարի, բանաստեղծության, մաթեմատիկայի և կրոնաբարոյախոսական աշխատությունների գծով: Մեր հույսերը շարդարացան Հովհաննեսի կորած պատմության և «Սարեակ»-ի նոր ընդօրինակությունը գտնելու ուղղությամբ:

Ուսումնասիրելով Հովհաննեսի հայտնի ու Մատենադարանի ձեռագրերում նորահայտ աշխատությունները՝ մենք զասավորեցինք նրանք բաա առանձին տեսակների՝ կենսագրական, պատմական, մաթեմատիկական, տիեզերագիտական, դրական և փիլիսոփայական: Մենք բաց ենք թողել Հովհաննեսի կրոնա-բարոյախոսական բովանդակություն ունեցող աշխատությունները. նրանք մենք նպատակ ունենք հրատարակել առանձին հատորով:

Ուսումնասիրության բաժնում մենք կանգ ենք առել գլխավորապես հետևյալ խնդիրների վրա. ա) ի՞նչ ձեռագրերից է հայտնի ավյալ աշխատությունը, բ) հրատարակված է այն, թե ոչ, գ) ի՞նչ հիմնական խնդիր է շոշափված ավյալ երկում, դ) ի՞նչ աղբյուրներ են օգտագործված ավյալ տեքստը կազմելու ժամանակ, ե) ի՞նչ արժեք է ներկայացնում Հովհաննեսի ավյալ աշխատությունը գրականության, պատմության կամ դրական գիտությունների պատմության համար:

Մենք խուսափել ենք Հովհաննեսի այս կամ այն աշխատությունը քննության առնել ավյալ գիտության նեղ մասնագիտական տեսակետով: Այդ մի աշխատանք է, որով պետք է զբաղվեն առանձին գիտությունների պատմությամբ զբաղվող նեղ մասնագետները՝ տոմարագետները, փիլիսոփաները, գրականագետները, մաթեմատիկոսները և այլն:

Մեր Հայրենիքում, ուր աննախընթաց շափով ծաղկել են գիտությունն ու կուլտուրան, ժամանակակից գիտությունը զուգընթաց մեծ ուշադրություն է դարձնում գիտությունների պատմության վրա: Մենք այսօր գոհունակությամբ կարող ենք նշել, որ Սովետական Հայաստանում ունենք գիտությունների պատմությամբ զբաղվող այնպիսի վաստակավոր գիտնականներ, ինչպիսիք են՝ դոց. Գ. Պետրոսյանը՝ մաթեմատիկայի պատմության գծով, պրոֆ. Լ. Սեմյոնովը՝ տոմարի պատմության գծով, դոց. Ա. Մովսիսյանը՝ մանկավարժության պատմության գծով, պրոֆ. Հ. Գարբիելյանը և դոկտ. Վ. Չալոյանը՝ փիլիսոփայության պատմության գծով, ակադ. Լ. Հովհաննիսյանը՝ բժշկության պատմության գծով, պրոֆ. Տ. Ղազանջյանն ու դոց. Ա. Հարությունյանը՝ քիմիայի պատմության գծով և ուրիշները:

Մենք, որպես պատմաբան-աղբյուրագետ, ներկա հատորում ներկայացնում ենք Հովհաննեսի աշխատությունների ճշտված տեքստերը և նրանց հետ



կապված անհրաժեշտ բանասիրական ուսումնասիրությունները: Մեր հիմնական նպատակն է եղել սովորածավալ ձեռագրերի էջերից լույս աշխարհ հանել մեր քննասեր մատենագիրներից մեկի՝ Հովհաննես Իմաստասերի գիտական և գրական վաստակները ու ներկայացնել այն գիտությունը: Միաժամանակ մենք մեր բանասիրական ուսումնասիրություններով աշխատել ենք կանգ առնել աղբյուրագիտական կարգի որոշ հարցերի վրա, որոնց համար ունեցել ենք փաստական ավյալներ:

Հովհաննես Իմաստասերի աշխատություններն ամբողջացնելու նպատակով մենք ներկա հատորում գետեղել ենք նաև նրա մի քանի հրատարակված դորժերը:

Ա. Գ. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ



## 1. ՀՈՎՏԱՆՆԵՍ ԻԾԱՍՏԱՍԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Իմաստասերը հանդես եկավ հայ ժողովրդի պատմության արշունստ մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանը կորցրել էր իր քաղաքական անկախությունը և ընկել սելջուկյան աշխարհակալ պետության ծանր լծի տակ: Հովհաննես Իմաստասերի երիտասարդության տարիները դուրսագրիպեցին այն շրջանին, երբ դեռ ծխում էին հայկական երբեմնի շեն ու բարգավաճ գյուղերը և քաղաքները ու հայրենի երկիրը տոբովում էր սելջուկ հեծելազորի ձիերի սմբակների տակ: Քաղաքական այս իրադրությունը, որքան էլ ծանր լիներ, ինչպես պարզված է պատմագրիտական ուսումնասիրությունների մեջ, որակական էական փոփոխություններ չմտցրեց ավատական Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքում: Հովհաննես Իմաստասերի ժամանակի մշակույթը, որոշ ընդմիջումով, փաստորեն օրգանական շարունակությունը հանգիստացավ նախորդ շրջանի, ուստի և մեր բազմաշխատ հեղինակի դիտական ստեղծագործական ժառանգությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է փոքր-ինչ մոտից ծանոթանալ քաղաքական, տնտեսական և կուլտուրական այն տեղաշարժերի հետ, որ տեղի ունեցան Հայաստանում X—XII դարերում:

Սկսած X դարի քսանական թվականներից, ինչպես հայտնի է, Հայաստանում ստեղծվեց հարաբերական խաղաղության մի շրջան, որն անընդմեջ շարունակվեց մինչև XI դարի երեսնական թվականները, այսինքն՝ բյուզանդացիների դավաճանական հարձակումը Անիի վրա և վերջինիս գրավումը:

Հարաբերական խաղաղության այս շրջանում Հայաստանն ապրեց տրնտեսական և կուլտուրական զգալի վերելք: Այդ մասին ուշադրով տեղեկություններ են մեզ հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Ասողիկը և ուրիշները<sup>1</sup>:

XI դարի կեսերին Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքը, ճիշտ է, ենթարկվեց խոշոր վայրիվերումների: Բյուզանդիայի վարած նենգ քաղաքականության հետևանքով զգալի թվով հայ բնակչություն զաղթեց դեպի Փոքր Ասիա և Կիլիկիա, որով Հայաստանի բնակչությունը նոսրացավ և նրա ռազմական հզորությունը պակասեց: Ծանր հարվածներ ստացավ

<sup>1</sup> Տե՛ս Սեփանոսի Տարոնեցոյ Ասողիկն Պատմութիւն տիեզերական, ՄՊԲ, 1885, էջ 161, և «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 198—199:



Հայաստանը նաև սելջուկյան արշավանքների շրջանում: Սելջուկյան արշավանքների հետևանքով ավերվեցին Հայաստանի առևտրաշատ քաղաքները, բնակչությունը ենթարկվեց կոլոպուտի և գերեվարության: Սակայն սխալ է որոշ պատմաբանների առաջ քաշած այն թեզը, որ իբր սելջուկների արշավանքից հետո խզվեց Հայաստանի զարգացման միայն րնթացքը և տնտեսական ու կուլտուրական կյանքը ամբողջովին խորտակվեց: Ակադ. Հովսեփ Թրբելին Անի քաղաքի հնագիտական հայտնաբերումների ուսումնասիրության հիման վրա եկել է վճռական այն եզրակացության, որ «Պետք է թողնել հնացած և սխալ այն կարծիքը, որ իբր Անիի ծաղկումը տեղի է ունեցել Բագրատունյաց շրջանում և քաղաքի հետևյալ կյանքը՝ միայն նրանց մասնացումն է: Հայկական հարստության անկումը Անիում բոլորովին առաջ չի բերել նաև կուլտուրայի անկում. նա հանդիսացել է միայն բեկման կետ, ըստ որում, այն էլ ոչ այնքան սուր շրջադարձային կետ, որովհետև Անիի հետևյալ կյանքը նախորդ ժամանակաշրջանի սկզբածքի բնականոն զարգացումն է հանդիսացել»<sup>1</sup>:

Այդ նույն շրջանը բազմակողմանի ուսումնասիրած մի այլ գիտնական և՛ ակադ. Յա. Մառը, Անի քաղաքի օրինակով գտնում է, որ Բագրատունյաց թագավորության անկումը և Անիի հայերի ինքնավարության կորուստը չէր նշանակում դեռևս հայկական կուլտուրայի, մասնավորապես հայկական արվեստի առանձին անկում Հայաստանում: Անի քաղաքը շարունակեց զարգանալ նաև 1045 թվից հետո, երբ նա զաղարեց Բագրատունյան Հայաստանի գահանիստ կենտրոնը լինելուց<sup>2</sup>:

Սելջուկների արշավանքից հետո արտագաղթող հայ բնակչության զգալի մասը հաստատվեց Կիլիկիայում, այնտեղ հիմնեց իր տնտեսական և կուլտուրական օջախները, իսկ բուն Հայաստանում տնտեսական և կուլտուրական կյանքը տեղաշարժվեց դեպի լեռնային շրջանները՝ դեպի Սյունիք, Տաշիրք, Զորագետ, Սասուն, Մոկս և այլն:

Սելջուկյան արշավանքի փոթորից անմիջապես հետո սելջուկյան տիրապետության բոլոր մասերում, այդ թվում և Հայաստանում, ստեղծվեցին որոշ ապահովություն և պետական կարգ ու կանոն<sup>3</sup>:

Սելջուկյան կենտրոնախույս իշխանության կողմից հրատարակվեց հատուկ օրենք, ըստ որի արգելվում է գյուղացիներից սահմանված հարկից ավելին պահանջելը: «Սիասեթ-նամե»-ում այդ մասին կա որոշակի ցուցմունք. «Եկատայի տերերը (այսինքն՝ ոչ ժառանգական այն ֆեոդի տերերը, որոնց տրվում է որոշ տարածությունը կալված՝ նրանց վասալական ծառայության համար— Ա. Ա.),— սսված է այնտեղ,— պետք է գիտենան, որ իրենց հպատակների նկատմամբ նրանք ավելի իրավունք չունեն, քան պատշաճ ձևով ստանալ նրանցից այն հարկը, որը սահմանված է: Հարկը վերցնելուց հետո հպատակ ժողովուրդը թող օգտվի անձի, գույքի, կնոջ և երեխաների կատարյալ անձեռնմխելիությունից և իկատայի տերը ոչ մի իրավունք չունի նրանց նկատմամբ: Եթե ժողովրդից որևէ մեկը ցանկություն ունենա դիմել արքունիք՝ գանդատվելու իր վիճակի մասին, թող նրա առջև ոչ մի դժվարություն

<sup>1</sup> И. А. Орбели, Развалины Ани, СПб, 1911, էջ 34:  
<sup>2</sup> Н. Я. Марр, Ани, Л.-М., 1934, էջ 36:  
<sup>3</sup> С. Brockelmann, History of the islamic Peoples, London, 1953, թ. 171—173:

Հհարուցվի: Իկտայի այն տերը, որ այդպես չի վարվի, պիտի նրա իրավունքը սահմանափակել, վերցնել նրանից իկտան, պատժել նրան, որպեսզի այդ օրինակ լինի ուրիշներին»<sup>1</sup>:

ժամանակակից գրեթե բոլոր պատմիչները վկայում են, որ սելջուկյան պետությունը վերջ տվեց ավազակությանը, նպաստավոր պայմաններ ստեղծեց առևտրի և արհեստների զարգացման համար, և այս ամենը նպաստեցին երկրի տնտեսական կյանքի զարգացմանն ու բարգավաճմանը:

Երկարատև խաղաղության նախորդ շրջանում, ինչպես և սելջուկյան տիրապետության օրոք զարգանում են Հայաստանի քաղաքները: Ակադ. Հ. Մանանդյանը միջնադարյան հայ քաղաքներին նվիրած իր ուսումնասիրության մեջ գտնում է, որ «Երկրի (Հայաստանի— Ա. Ա.) տնտեսական զարգացումը և նրա քաղաքների աճը X դարում և XI դարի առաջին կեսում աստիճանաբար հասավ իր ամենաբարձր ծաղկմանը»<sup>2</sup>:

X—XI դարերում Դվին—Տրապիզոն տարանցիկ ճանապարհի վրա հիմնվեցին Անին, Կարսը, Արծնը, Արտանուշը և այլ քաղաքներ, որոնք իր ժամանակի բազմամարդ, հարուստ և առևտրաշատ կենտրոններից էին: Հին քաղաքներից գործուն գեր ունեին Դվինը, Արճեշը, Խլաթը, Վաղարշապատը, Վանը և մյուսները:

Այդ տեսակետից հատկանշական է Անի քաղաքի զարգացման պատկերը, ուր ապրել է և գործել մեր հեղինակը՝ Հովհաննես Իմաստասերը: Ակադ. ն. Յ. Մառը, որ երկար տարիներ զբաղվել է Անի քաղաքի պեղումներով և նրա պատմության ուսումնասիրությամբ, հետևյալն է գրում. «Անիի միջով անցնում է կենսատու մի երակ— մեծագույն առևտրական ուղու ճյուղերից մեկը: Անին դարձավ առևտրի և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի փոխանակության կենտրոնատեղի՝ ժառանգելով ավելի հին և ավելի հայտնի հայկական Դվին քաղաքի նշանակությունը: Այս շրջանի հետ են կապված Անիի իջևանատների և Ախուրյան գետի վրա տասնյակ գեղեցիկ քարե կամուրջների կառուցումները»<sup>3</sup>:

Քաղաքների այդ զարգացումը, իհարկե, հետևանք էր Հայաստանի ներքին կյանքում տեղի ունեցած տնտեսական ակնառու տեղաշարժերի, բայց նրա զարգացման գործում մեծ դեր ունեցավ առանձնապես տարանցիկ առևտուրը: Բյուզանդիան և Արաբական խալիֆաթը X—XI դարերում, ինչպես հայտնի է, անհաշտ թշնամության մեջ էին. խզված էին բոլոր տեսակի առևտրական հարաբերությունները նրանց մեջ: Միակ շեղոք երկիրը, ուր բյուզանդացի և արաբ առևտրականները բերում էին իրենց մեծաքանակ ապրանքները և փոխանակում, հանդիսանում էր Հայաստանը: Հայաստանը X—XI դարերում դառնում է փաստորեն միջազգային շուկա Արևելքի և Արևմուտքի միջև:

<sup>1</sup> *Сиясет-наме*, Книга о правлении визира XI столетия Низам ал-мулька, перевод проф. Б. И. Заходера, М.-Л., 1949, էջ 34:

<sup>2</sup> Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930, էջ 204:

<sup>3</sup> Н. Я. Марр, Ани, էջ 35:



Հայ առևտրականները միջազգային այդ առևտրի մեջ գործուն մասնակցություն ունեին ո՛չ միայն այն տեսակետից, որ նրանք ակտիվ դեր էին վերցրել փոխանակության մեջ, այլև որ նրանք տեղում կազմակերպում էին իրենց սեփական արդյունագործությունը և իրենց ապրանքները հանում սպառողական լայն շուկա: Ժամանակակից արար և հայ մատենագիրները հիշում են Հայաստանում արտադրված մի շարք ապրանքներ, որոնք մեծ համարում ունեին միջազգային շուկայում:

Այս նոր իրադրության մեջ բարենպաստ պայմաններ են ստեղծվում արհեստագործության արտադրանքի զարգացման համար Հայաստանում: Արհեստավորական լայն շրջանները սկսում են հավաքվել, կենտրոնանալ քաղաքներում: Նրանք, ֆեոդալներից կախված կամ կիսանկախ վիճակում, սկսում են ծավալել իրենց արհեստագործական արտադրանքը: Գնալով տեղի է ունենում արհեստների նեղ մասնագիտացում և խորացում: Ըստ մատենագրական տեղեկությունների Հայաստանում այդ ժամանակ գոյություն են ունեցել հարյուրից ավելի զանազան արհեստներ: Հայկական որոշ քաղաքներում արհեստավորներն սկսում են կազմակերպվել համքարությունների մեջ. մեկ տեղեկություններ են հասել Երզնկայի և Անիի մի քանի համքարությունների մասին: Այսպիսով արհեստներն աստիճանաբար անջատվում են գյուղատնտեսությունից և կենտրոնանում քաղաքներում:

X—XI դարերի այս փոխհարաբերությունների մեջ առանձնաակտիվ դեր է ստանձնում իշխող ֆեոդալական շրջանը: Նա այժմ դուրս է լիս ավատական իր գոյակից և մտնում քաղաքային ետուն շրջապտույտի մասնակցելով առևտրի, վաշխատության և արհեստագործության արտադրի կազմակերպմանը: Առաջանում են Տիգրան Հոնենցի, Սամմադին Դավթակ քորեպիսկոպոսի մակարդակի հարուստներ, որոնք հայ վաշխատուկան կապիտալի ակնառու ներկայացուցիչներն են հանդիսանում: Քաղաքում, սաղմային վիճակում, առաջանում է սոցիալական այն տարրը, ընդհանրապես անվանվում հայտնի է «բուրգուե» անունով:

Քաղաքային պերճ կյանքի վայելքը ճաշակած հայ ֆեոդալն այլևս չի ավարարվում շահագործման նախկին ձևերով, նա բնավճար հարկերը փոխրինում է գրամավճար հարկերով, նա նոր ձևով է կազմակերպում ֆեոդալան իր տնտեսությունը և, վերջապես, նա ձեռք է մեկնում դեպի ազատ և ղական համայնքները և աշխատում քայքայել այն և ընդարձակել ճորտ կախյալ իր գյուղացիության թիվը:

Ընչազուրկ գյուղացիության մի մասը ամբացվում է հողին և ճորտացվում: Այդ առանձնապես նկատելի է Հայաստանի հյուսիսային շրջաններում: Գյուղացիության որոշ մասը տեղափոխվում է քաղաք ազատ վարձու աշխատանք կատարելու և կամ լրացնելու արհեստավորական շրջանը:

Ի պատասխան ֆեոդալական լծի ծանրացման գյուղի և քաղաքի աշխատավորությունը հանդես է գալիս հակաֆեոդալական բուռն շարժումով, մի շարժում, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Թոնդրակյան անունով: Այս շարժմանը մասնակցում էին շինականները, քաղաքի արհեստավորությունը և քայքայվող մասը արհեստավորությունը: Թոնդրակյան շարժումը—



սոցիալական խոշորագույն շարժումներից մեկն է միջնադարյան Հայաստանում<sup>1</sup>:

Տեսեաւական, սոցիալական այս տեղաշարժերի հետեանքով առաջանում են դադափարական նոր հոսանքներ: Վերափոխված և միջազգային հարաբերությունների մեջ մտնող միջնադարյան քաղաքը պարզ է, որ այլևս չէր կարող կազմավարվել հին դադափարների շրջանակներում. ժամանակն ինքը պարտադրում է որոշ գիտությունների անհրաժեշտությունը՝ մաթեմատիկայի, աշխարհագրության, աստարի և այլ գիտությունների: Քաղաքային խոշոր շինարարությունների գարգացումը, արհեստագործության որոշ ճյուղերի կատարելագործությունը և այլն, պարզ է, որ անկարելի էր առանց պատշաճ գիտության: Քաղաքական աշխույժ կյանք տեսած ու ճաշակած քաղաքացուն այլևս չէր հետաքրքրում կրոնական նեղ և միասնիկ թեմատիկան, նա ցանկանում էր լսել աշխարհիկ ուրախ երգեր և տեսնել արվեստի գեղեցիկ և կատարյալ գործեր: Ահա թե ինչո՞վ պետք է բացատրել, որ X—XII դարերում նկատվում է մեծ հետաքրքրություն գիտության, գրականության և արվեստի գրեթե բոլոր բնագավառների նկատմամբ: Ֆեոդալական հետամնաց դադափարներն իրենց տեղն սկսում են զիջել առաջավոր դադափարներին: Աշխարհայեցողության մեջ նկատվում է զգալի բեկում, «...կրոնա-ճգնալիրական ոգին,— ինչպես շատ ճիշտ նկատել է պրոֆ. Մ. Աբեղյանը,— տակավ առ տակավ տեղի է տալիս մի ուրիշ ոգու զիմաց և առաջ է գալիս ինքնուրույն վերածնություն, որից չէր կարող չազդվել և հոգևորականը»<sup>2</sup>:

Ուշադրության արժանի է այն գնահատականը, որ վերածննդյան հարցում տրվել է Հովհաննես Իմաստասերին: Պրոֆ. Մ. Աբեղյանը Հովհաննես Իմաստասերին համարում է վերածնության նոր մտավեր հոսանքի առաջին արտահայտիչներից մեկը<sup>3</sup>:

Մեր նպատակը չէ այստեղ վիճարանության մեջ մտնել վերածնունդը Հայաստանում ընդունող կամ ժխտող գիտնականների հետ: Տվյալ ղեպրում մեզ համար կարևորն այն է, որ վիճարանող կողմերից ոչ մեկը չի ժխտում X—XII դարերում Հայաստանում տեղի ունեցող կուլտուրական խոշոր տեղաշարժերը, թեպետև նրանցից յուրաքանչյուրն իր ձևով է բացատրում այն. մեկը նրա մեջ տեսնում է վերածննդի որակ, իսկ մյուսը՝ ժխտում:

Հովհաննես Իմաստասերը ահա այս նոր, բեկման շրջանի դադափարախոսության ականավոր ներկայացուցիչներից մեկն է:

Հովհաննեսի անձնավորության մասին մեզ տեղեկություններ են հաղորդում, հիմնականում, հայկական հեռեկալ շորս պատմիչները՝ Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին և Մխիթար Այրիվանեցին: Այս պատմիչների տեղեկությունները, սակայն, շատ կցկտուր են և հնարավորություն չեն տալիս մեզ լրիվ պատկերացում ունենալ ո՛չ Հովհաննեսի անձնավորության և ո՛չ էլ նրա գրական ու գիտական գործունեության մասին ամբողջությամբ առանձին: Նրա կենսագրության հետ կապված մի շարք կարևոր հարցեր մնում են դեռևս չպարզաբանված: Այսպես, մինչև այժմ վիճելի են

<sup>1</sup> Թոնդրակյան շարժման նորագույն ուսումնասիրություններից ուշադրության արժանի է պատմ. գիտ. գոհտոր Ա. Գ. Հովհաննիսյանի «Движение толковых в Армении IX—XI вв.» (см. «Вопросы истории» № 10, 1954 г., էջ 100—108):

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, էջ 11:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 43:



Հովհաննեսի ծննդավայրը, մասվան թվականը, նրա՝ Անիի հետ ունեցած կապը և այլն: Իրավացի է հանդուցյալ պրոֆ. Արևելյանը դանդաղում, թե «...այս համբավավոր գրողի կենսագրության համար, ցավոք, սակավ տեղեկություններ ունինք, եղածներն էլ մասամբ դեռ չեն ստուգված»<sup>1</sup>:

Ալիշանը իր «Սարկաազ Սոփեստես» աշխատության մեջ այս առթիվ գրում է. «Յաւալին է մեղի Սարկաազայ վարուց և զործոց մասամբ անծանօթ մնալն, ինչպէս նաև իր վերջի տարիներուն և մահուան կերպն. և զարժանք է, որ Յաւամավորաց մէջ չեմ հանդիպած տնոր վարքին կամ յիշատակին, ինչպէս որ իրմե ետք եղող շատ վարդապետաց վարքն կան»<sup>2</sup>: Ալիշանն այնուհետև նույս է հայտնում, որ «...գուցէ դեռ իր ապրած կողմերուն մնացելու վանից և եկեղեցիաց Յաւամավորաց մեջ, գտուի այս փոփազածնին»<sup>3</sup>:

Ալիշանի հույան այժմ, բարեբախտաբար, իրագործված է. Մատենադարանում հայտնի է զարձեղ նրա ենթագրած Հովհաննեսի վարք-կենսագրականը: Ուշադրության արժանի է, որ այդ վարքը գտնվեց ո՛չ թե Հովհաննեսի ապրած վայրերի գրչության դպրոցներում ընդօրինակված ձեռագրերում, ինչպէս սպասել է Ալիշանը, այլ հեռավոր Սիսիանի շրջանի պատմական Անդեղակոթ գյուղում գրված ձեռագրում:

Հովհաննես Իմաստասերի կենսագրությունը Մատենադարանի № 2680 ձեռագրից մեկ հայտնի էր զարձեղ 1939 թվականին և մենք այդ մասին գրել ենք մեր մի քանի աշխատությունների մեջ: Հետագայում պարզվեց, որ նշված տեքստի հետ, մեզանից առաջ, ծանոթ է եղել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը, որն այդ մասին գրել է իր «Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց» խորագրով շատ արժեքավոր աշխատության մեջ<sup>4</sup>: Այնուհետև, այդ տեքստի հետ ծանոթ է եղել զոց. Ա. Մովսիսյանը իր «Հայագիր դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը» վերատառությամբ ընդարձակ հոդվածում<sup>5</sup>: Եվ, վերջապես, նշված տեքստի հետ ծանոթ է եղել նաև Գ. Կ. Հովսեփյանը, որը նրա մասին տեղեկություններ է տպել իր «Նյութեր և ուսումնասիրություններ»-ի 3-րդ հատորում, իսկ կենսագրությունն ամբողջապես հրատարակել իր «Հիշատակադրանքներ»-ի ժողովածուի մեջ<sup>6</sup>:

Հովհաննեսի նշված վարք-կենսագրականն ընդօրինակված է 1378 թվականին: Ընդօրինակող գրիչն է Մատթեոս երեցը, որն իր թողած հիշատակարանում ձեռագրի գրչության մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Կատարեցաւ հրաշափառ սուրբ գիրքս այս... ձեռամբ նոյն վերայգրեալ Մատթեոս իրիցոյ ի թիս հայոց ՊԻԷ (1378), ի գեղարագարս, որ Անկեղակոյա կոչի...»<sup>7</sup>: Մատթեոս գրիչը նույն էջի տողատակ ծանոթության մեջ թողել է նաև հետևյալ փոքրիկ հիշատակագրությունը. «Սակառիկ յիշատակիկ Մատթէոսի վախճանաքի տրուպիկ գրի»:

<sup>1</sup> Մ. Արևելյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, էջ 43:

<sup>2</sup> Ղ. Ալիշան, Յուշիկք, Բ. հատոր, էջ 306:

<sup>3</sup> Նույն տեղը:

<sup>4</sup> „Ճճճճճճ մեծոյն տոմոցն մեծոյնն“, էջ 124:

<sup>5</sup> Տես երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր XIII, էջ 345—464:

<sup>6</sup> Գաբելիև Ա. կաթողիկոս, Հիշատակարանը ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, էջ 335—342:

<sup>7</sup> ՀՊՁԾ, ձեռագիր № 2680, Թ. 370բ:





Հովհաննեսի նորահայտ այս կենսագրությունը վերնադրված է «[Հա]նդիս բանի վասն երանեալ առնն Աստուծոյ Սարկաւագին կենաց և մահուն, և այլոց սրբոց՝ հուպ յայն ժամանակս»<sup>1</sup>:

Չկազմողը բովանդակութիւնը «Հարանց վարք» է: Նա Մելիք Շահնազարի պատմերով նորոգվել է 1580 թվին՝ Գրիգոր քահանայի ու նրա աշակերտի՝ վարպետ Հովասափի կողմից: Նորոգութեան հիշատակագրութեան մեջ ասված է. «Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄելիք Շահնազարն, զգովելի յիշխանն... որ ևս վերատին նորոգել զսուրբ գիրքս... Արդ՝ վերստին նորոգեցաւ սուրբ գիրքս ձեռամբ վարպետ Տէր Գրիգորի և Յովասափ անուն նորին անարժան աշակերտի թվականութեանս Հայոց Ռ և ԻԹ ամի ի յերկիրս Քեզամայ ի գաւղս, որ կոչի Մազրա ընդ Հովանեաւ սուրբ աստուածածնի և սուրբ Գրիգորի Լուսաորչին ի գառն և ի նեղ ժամանակի, զի տարածամ մահ էր և հարկապահանջութիւն, սով էր և հեծելաշարժութիւն և ամենայն կողմանց պատուհաս պատեալ է վասն ծովացեալ մեղաց մերոց...»:

Չկազմողի նյութը թուղթ է: Գրված է երկսյուն գեղեցիկ բոլորագրով:

Գովար է այժմ մեզ պարզել կենսագրի անձնավորությունը, ինչպես նաև ճշտութեամբ որոշել նախագաղափար օրինակի գրություն ժամանակը: Սակայն կենսագրի որոշ ակնարկներից երևում է, որ նա XII դարի կեսերում ապրած մարդ է: Համենայն դեպս նա տեսել է Հովհաննեսի աշակերտներին և նրա ժամանակակից մարդկանց ու նրանցից տեղեկություններ է վերցրել իր կազմած վարքագրութեան համար: Այս առթիվ մենք կարող ենք մատնացուցց անել հետևյալ երկու փաստը.

ա) Կենսագիրը Բարսեղի անվան հետ կապված մանրավերջ պատմելուց հետո մանրավեպն ավելի հավաստիապատում դարձնելու նպատակով ավելացնում է. «Ձայս՝ ինչ գրով խնդրեալ իմ և նորա՝ (բնագրում նոցա— Ա. Ա.) ի բերանոյ առնն, որ ականատեսն էր և սպասաւոր, ստուգեալ գրեցին առ մեզ, զոր գրեցարս»<sup>2</sup>:

բ) Կենսագիրը երկրորդ անգամ կամենալով ցույց տալ իր օգտագործած աղբյուրների հավաստիությունը նորից մատնացուցց է արել իր սկզբնաղբյուրը՝ Հովհաննեսի աշակերտը և նշել, որ «Այս հաւաստի պատմութիւն պատմեցաւ յաշակերտէ նորին կրանաւորի սրանչելանշան յերիցս երանեալ վարպայեալէն Յովհաննու Սարկաւագին, զոր գրեցիս»<sup>3</sup>:

Հովհաննեսը, ինչպես հետո կտեսնենք, մահացել է 1129 թվին. եթե կենսագիրը տեսել է Հովհաննեսի աշակերտին ու ժամանակակիցներին և նրանցից տեղեկություններ է վերցրել, ապա այդ եղած պետք է լինի նրա մահվանից ոչ ուշ, քան 10—20 տարի, հետևապես՝ Հովհաննեսի կենսագրությունը գրված պետք է լինի մոտավորապես XII դարի կեսերին:

Հովհաննեսի անվան հետ կապված առաջին վիճելի հարցը նրա ծննդավայրի հարցն է: Հովհաննեսի մասին մինչև վերջերս եղած գրեթե բոլոր ուսումնասիրությունների մեջ նրա ծննդավայրն է համարվել Փառիսոսի դավաոր (Արցախում): Հայագետների կովաններն այս հարցում, իհարկե, պատմիչ-

1 ՀԳՁԾ, ձեռագիր № 2680, թ. 579ա:

2 Նույն տեղը, թ. 581ա:

3 Նույն տեղը:



ների հազարգած տեղեկություններն են: Այսպես, Վարդան Արևելցին վկայում է, որ Հովհաննէսը Փառիսոսի գավառից էր. «էին և վարդապետք յայնմ ժամանակի Յոհաննէս, որ և Սարկաւագ՝ ի գաւառէն Փառիսոսոյ...»<sup>1</sup>:

Մասամբ այլ է Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը, որը Հովհաննէսին համարում է իրեն հայրենակից՝ գանձակեցի. «...սոքա երեքհանս «Դաւիթ վարդ. Ալաւկայ որդի, Գրիգոր վարդ. Յոքակերի որդի և Յովհաննէս Իմաստասէր— Ա. Ա.) էին յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես»<sup>2</sup>:

Հ. Ոսկյանը Հովհաննէսի անձնավորության և գրական աշխատությունների մասին գրած իր ուսումնասիրության ծանոթության մեջ աշխատել է հարթել պատմագրերի մոտ նկատվող այս հակասությունը, Փառիսոսը համարելով Գանձակի մի գավառը. «յաշխարհէն Գանձակայ», այս է՝ «Արցախայ, որուն մէկ գաւառն այլ է Փառիսոս»<sup>3</sup>:

Պրոֆ. Մ. Արեղյանն իր «Հայոց հին գրականության պատմություն» մեջ չի համաձայնում Հ. Ոսկյանի եզրակացության հետ և գտնում է, որ Գանձակեցին, վերը հիշված երեք վարդապետներին գանձակեցի համարելու խնդրում, առաջնորդվել է տեղական փառասիրությամբ<sup>4</sup>: Մեր կարծիքով պրոֆ. Արեղյանը սխալվում է. իրականության մեջ Փառիսոսն այդ ժամանակաշրջանում Գանձակի ամիրայության մասն էր կազմում և նրա գավառներից մեկն էր, ուստի և անտեղի է վիճարկելը: Այս մասին խոսք կլինի քիչ հետո:

Հովհաննէսի կենսագրականը մեզ օգնում է պարզելու նրա ծննդավայրը: Նրա կենսագիրը խոսելով Հովհաննէսի՝ Հաղրատի վանքում կրթություն ստանալու և տարրեր դիտությունների մեջ խորանալու մասին, նշում է, որ նա իր այդ գիտելիքները, որոնք անվանում է բազմերանգ հոտի և համի ծաղիկներ, իմաստուն մեղվի նման բերում է իր քաղաքը, սննդյան վայրը՝ Անին. «Որ իրրե դիմաստուն մեղու,— կարդում ենք Հովհաննէսի վարքագրության մեջ,— բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յիրանգոց գունոց, և հոտոց, և համոց, բերէր ի քաղաք իւր և տեղի սնրնդեան՝ ի քաղաքամայրս Անի (ընդգծումը մերն է— Ա. Ա.) և լի առնէր դտունն ի փարթամութենէ անտի...»<sup>5</sup>:

Ինչպես տեսնում ենք, կենսագիրը Անին հիշում է որպես «քաղաք իւր» և «տեղի սնրնդեան»՝ ցանկանալով նշել Հովհաննէսի Անիում ծնվելու, նրա հետ սերտորեն կապված լինելու փաստը: Այդ նույն եզրակացությանն է եկել նաև պրոֆ. Մ. Արեղյանը՝ հիմնվելով մեր վերև բերված հասկացածի վրա, որի հետ նա ծանոթ է եղել դոց. Ա. Մովսիսյանի հոգվածի միջոցով<sup>6</sup>:

Փառիսոսից էր, ինչպես երևում է Հովհաննէսի կենսագրականից, նրա քեռին՝ Ուռձացի մականուն ունեցող վարդապետը, որի մոտ Հովհաննէսն ստացել է իր կրթությունը. «Մնեալ և դաստիարակեալ (Յովհաննէսն) առ սրբասնունդ քեռոյն իւրոյ (Ուռձացի վարդապետին) ի վանսն Հաղրատ՝ գաւառա ի Փառիսոսոյ»<sup>7</sup>— կարդում ենք վարքագրության մեջ: Այստեղ Փառիսոսը հիշված է ոչ թե Հովհաննէս Իմաստասերի ծննդավայր, այլ նրա քեռու:

<sup>1</sup> Մեծիմ Կարգանայ Բարձրեցողոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 107:

<sup>3</sup> Հ. Ոսկյան, Հովհաննէս Սարկաւագի կյանքը (տես «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 28):

<sup>4</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, էջ 532:

<sup>5</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 2680, Թ. 579ր:

<sup>6</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, էջ 532:

<sup>7</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 2680, Թ. 579ա:

Հովհաննեսի վարքագրության մեջ նրա քնուռ մասին եղած այս տեղեկությունը մեզ հնարավորություն է տալիս լուսարանել պատմագրերի մոտ առերևույթ նկատվող որոշ հակասությունը. ըստ կենսագրի, Հովհաննեսի քեռին, ինչպես իհարկև և մայրը, Փառիսոսից են: Սխալ չէ նաև Գանձակեցու տեղեկությունը՝ որ Հովհաննեսը գանձակեցի էր, որովհետև Փառիսոսը XII դարում Արցախի գավառներից մեկն էր, ուստի և Կիրակոս Գանձակեցին իրավունք ուներ Հովհաննեսին համարելու իրեն համշիրակ: (Փառիսոսը, ըստ Շիրակացու «Աշխարհացոյց»-ի, Քուտի Փառնեսն է և գտնվել է ներկայիս Կալենքյանդ կոչվող վայրում):

Ի դեպ, որոշ աշխատությունների վերնագրում Հովհաննեսը հիշված է նաև «Հաղրատեցի» մականունով: Այսպես, XI դարի առաջին տասնամյակում գրված մի հիշատակարանում Հովհաննեսը հիշված է «Սարկառագ վարդապետն Հաղրատեցին» ձևով (տե՛ս Գ. Կ. Հովսեփյանի հիշատակարանների ժողովածուն, էջ 307): Այս պետք է բացատրել այն հանգամանքով, որ Հովհաննեսն իր կրթությունը ստացել է Հաղրատում, երկար աշխատել է, իր կյանքի վերջին շրջանում, ինչպես կոտանենք հետո, երկար տարիներ միաբանել է այնտեղ, ուստի և, բնական է, որ հետագա մատենագիրները Հովհաննեսի անունը պետք է կապեին և կապել են Հաղրատի հետ: Հովհաննեսի՝ իր գործունեությամբ Հաղրատի հետ կապված լինելու փաստը նշում է նաև կենսագիրը: Նա խոսելով Հովհաննեսի մահվան մասին, գրում է. «Եւ այսպէս բարտը կացեալ ի ժիր մշակութեան, շողաւ առնուլ զվարձն ի յաւերժականն ժառանգութեան և եղաւ ի հանգստարանի սրբում ի Հաղրատ, ուր սընաւ և վարժեցաւ...»<sup>1</sup>: Այստեղ «սընաւ» բառը կենսագիրը գործ է ածել անշուշտ «Տոգևոր սննդի» իմաստով, նկատի ունենալով Հովհաննեսի Հաղրատում սովորելու փաստը:

Այսպիսով, ամենից հավանականն օչն է, որ Հովհաննեսը ծննդյամբ Գանձակի Փառիսոս գավառից է. նրա «մարմնական սննդեան» վայրն է հանգիստացել Անին, իսկ «Տոգևոր սննդեան» վայրը՝ Հաղրատը:

Հովհաննեսի կենսագրության հետ կապված երկրորդ վիճելի հարցը նրա ծնողների հարցն է, ովքե՛ր են եղել նրա ծնողները:

Հովհաննեսի ծնողների մասին մեզ տեղեկություն տալիս է Վարդան Արևելցին, որը Հովհաննեսին համարում է «ի քահանայական ազգէ»<sup>2</sup>: Հովհաննեսի վարքագրությունից ևս երևում է, որ նա ծնվել է քահանայի ընտանիքում. քահանա է եղել ո՛չ միայն նրա հայրը, այլև մոր հայրը: Կենսագիրն այդ մասին գրում է. «Սա (այսինքն՝ Հովհաննեսը — Ա. Ա.) ի մանկական տիոց և ի խանձարոց, ըստ սրբոյն Սամուելի, նուիրեալ Աստուծոյ և կուտութեան՝ յարենէ և յարգանդէ քահանայից (ընդգծումը մերն է — Ա. Ա.)»<sup>3</sup>: Կենսագրի այս տեղեկության մեջ՝ «յարենէ» պետք է հասկանալ հոր կողմից, իսկ «յարգանդէ»՝ մոր: Այնպես որ՝ Վարդանի «ի քահանայական ազգէ» արտահայտությունը, կոնկրետ դեպքում, տոհմական իմաստ չունի, ինչպես ենթադրել են ոմանք, այլ անմիջապես Հովհաննեսի ծնողներին է վերաբերում:

<sup>1</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 2680, Թ. 381ր:

<sup>2</sup> Վարդանայ Մեծ, Պատմութիւն տիեզերական, էջ 159:

<sup>3</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 2680, Թ. 379ա:



Հովհաննեսի կենսագրականում նրա ծննդյան տարեթվի մասին հիշատակություններ չեն պահել սկզբնաղբյուրները, բայց որոշ ավայաների հիման վրա, հայագետներից սմանք մոտավոր ճշտությամբ որոշել են նրա ծննդյան ժամանակը:

Հովհաննեսը մահացել է 1129 թվին ծեր հասակում, ինչպես իրավացի նկատել է Չամչյանը՝ «հասկալ ի բարոք ծերութիւն»<sup>1</sup>: Եթե մենք հաշվելու լինենք, որ Հովհաննեսը մահանալու ժամանակ 75—85 տարեկան էր, ապա նա ծնված պիտի լինի 1045—1055 թվականներին, ինչպես շատ ճիշտ, մեր կարծիքով, հաշվել է և Հ. Ոսկյանը<sup>2</sup>:

Մի այլ հաշվով Հովհաննեսը հայոց տոմարի բարեփոխությունը անվիճելիորեն կատարել է 1084 թվին: Այդ ժամանակ նա, անպայման, 30—40 տարեկան պատկանելի հասակ պետք է ունենար, որպեսզի այդպիսի մի պատասխանատու գործ հանձնարարեին նրան, և ինքն էլ համարձակվեր հանձնատու լինել: Եթե 1084 թվականից հանելու լինենք նրա 30—40 տարեքը, զարձյալ Հովհաննեսի ծնունդը ընկնում է 1045—1055 թվականներին:

Այսպիսով, մոտավոր ճշտությամբ կարելի է ասել, որ Հովհաննեսը ծնված պետք է լինի XI դարի 40—50-ական թվերին:

Ինչպիսի՞ դաստիարակություն է ստացել Հովհաննես Իմաստասերը: Հովհաննեսի ծնողները, ինչպես պարզվում է, զարգացած մարդիկ են եղել և հոգածու վերաբերմունք են ունեցել իրենց որդու դաստիարակությանը: Այս մասին վկայում է ինքը՝ Հովհաննես Իմաստասերն իր մի աշխատության մեջ. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, ձեռաչգեմ՝ զործեցի, որք սնուցին զիս օրինաբ հոգույն կենաց՝ առաւել քան զբնութեանն աածիւք խնամոյ առ մանկուսս, որովք յառաջին հասակին դաստիարակեալք յոյս տալի քաջութեանն»<sup>3</sup>:

Այս հատվածը, առանց սկզբնաղբյուրը ցույց տալու, «զրվածքի մը մեջ» ցուցումով, առաջին անգամ մեջ է բերել Այվազյանը: Նրանից օգտվել է Զարր-հանալյանը, իսկ վերջինից՝ պրոֆ. Մ. Արեղյանը: Վերցնելով այս մեջբերումը, պրոֆ. Մ. Արեղյանն անհրաժեշտ է համարել տալ հետևյալ տողատակ ծանոթությունը. «Այս ցիտատը բերում է և Զարր-հանալյանը «Հայկական հին գաղության պատմության» մեջ, աղբյուրը ցույց տալով «տրիշ տեղ մը» անորոշ բառերով ըստ հին վեներտիկյան սովորության: Հետաքրքիր է իմանալ, թե Սարկավազ Վարդապետն իր ո՞ր գրվածքի մեջ է գրել այն»<sup>4</sup>:

Մատենադարանում եղած Հովհաննեսի աշխատությունների ընդօրինակություններից մի քանիսը բարեբախտաբար պահել են այդ հատվածը և մեզ հաջողվեց գտնել այն: Հովհաննեսի այդ աշխատությունը «Ամբաստանութիւն զանձնէ» վերնագիրը կրող աշխատությունն է, որը դեռևս չի հրատարակված: Նշված տեքստն ընդօրինակված է Մատենադարանի № 7, № 777 և այլ ձեռագրերում:

Հայագիտության մեջ մինչև այժմ հայտնի չէ Հովհաննեսի ուսուցիչը: Մեզ ծանոթ պատմիչները լսում են այդ մասին: Իրավացի է Հ. Ոսկյանը,

<sup>1</sup> Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, Գ հատոր, էջ 41:

<sup>2</sup> Հ. Ոսկյան, Հովհաննես Սարկավազի կյանքը (տես «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 28):

<sup>3</sup> ՀՊՁԹ, ձեռ. № 7, թ. 68բ—69ա:

<sup>4</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 11, էջ 44:



երբ գրում է. «Ո՞վ է կամ որո՞նք են Հովհաննու ուսուցիչները: Պատմությունը պատասխան չի տար: Այս միայն հայտնի է, թե գիտության մեջ մեծ և բազմակողմանի նմանություն մը կյարացնե՞ն»<sup>1</sup>:

Հովհաննեսի կենսագրության մեջ պահվել է փոքրիկ տեղեկություն նրա ուսուցչի մասին: Հովհաննեսի ուսուցիչն է հանդիսացել, ինչպես ասել ենք վերևում, իր քեօին՝ Ուոճեցի մականուն ունեցող վարդապետը, որը գանվել է Հազրատում և, հավանական է, այդ միարանություն անդամ է հանդիսացել. «...անկալ և դաստիարակեալ (Յովհաննէան) առ քեռոյն իւրոյ ի վաննն Հազրատ» — գրում է կենսագիրը<sup>2</sup>:

Հովհաննեսի կենսագրությունից երևում է, որ նա սկզբում ցանկացել է մասնագիտանալ երաժշտության մեջ, իսկ հետո, երբ գրեւորվի են նրա արտահարգ ընդունակությունները մյուս գիտությունների բնագավառում, նրա վրա սկսել են հատուկ ուշադրություն դարձնել: «[Սարկաւագն] յառաջագոյն առաւ ի վարժս երաժշտական հոգևոր ուսմանց, — գրում է կենսագիրը. — և ապա յերեման մեծին ի նման ծածկելոյ գանձին, աւանդեցաւ և յանձնաբարտ: ի քեռոյն իւրմէ Ուոճացի վարդապետին»<sup>3</sup>:

Աշակերտական շրջանից սկսած, ըստ կենսագրի տեղեկության, Հովհաննեսն սկսում է փայլել իր արտահարգ ընդունակություններով և որքան նա տարիքավորվում է, այնքան ափելի են գրեւորվում նրա ընդունակությունները և ափելի է աչքի ընկնում նա իր ընկերների մեջ: Կենսագիրն այդ մասին գրում է. «Եւ ի տղայական տիոց անտի եցոյց (նա) գանհաւատարութիւն առ նմանիս իւր և յամենայն փոփոխման հասակաց՝ զերազանցեալ գաւաւ առ հասակակիցս յառաջատուութեամբ աստորական (հաստատուն — Ա. Ա.)»<sup>4</sup>:

Կենսագրի պատմելով Հովհաննեսը մանկուց հրաժարվել է իր հասակին հատուկ խաղերից և զվարձանքից, առանձնացել և ամբողջապես նվիրվել է գրական ուսումնասիրության. «Ամենայնի, որ վաչքաբարչ և երկրի է, — գրում է կենսագիրը, — բարեաւ մնալ ասացեալ՝ ողջախոհ իմն մոլութեամբ մոլեալ, քաղցրացան ի քիմս նորա և համեղացան իմաստութեանն խոկումն... խոխոմս յերանց միաջնացեալ աւորբս յոյժս ի մանուկ հասակին կարգայր և սւսանէր»<sup>5</sup>: Կենսագրի այս տեղեկությունը, անկասկած, բարոյախոտական նպատակով է կազմված, սակայն նա վկայում է Հովհաննեսի մեծ ընդունակության և աշխատասիրության մասին:

Հազրատն իր ժամանակին հայ գրչության զարգացած դպրոցներից մեկն էր. այնտեղ կային «գիտուն ուսուցիչներ», ահա նրանց ձեռքի տակ է ու նրանց շրջապատում, որ իր դաստիարակությունն է ստացել Հովհաննեսը: Կենսագիրը հիշում է, որ Հովհաննեսը «սակաւ սակաւ յառաջ մատուցեալ նստեր առ սոսս վարդապետաց, ամուսր ի նոցանէ գմեկնութիւնս և դասակս խորինս»<sup>6</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ Հազրատն ու Սանահինը, ինչպես ձիշտնկատել է Լեոն, խոշոր մտավոր կենտրոններ էին և «ուժեղ ոչ միայն իրենց

<sup>1</sup> Հ. Սուկյան, Հովհաննէս Սարկավագի կյանքը (տե՛ս ՀՀանդէս ամսօրեայք, 1925, էջ 30):

<sup>2</sup> ՀՊԶԳ, ձեռ. № 2680, Թ. 579ա:

<sup>3</sup> Նույն տեղը:

<sup>4</sup> Նույն տեղը:

<sup>5</sup> Նույն տեղը:

<sup>6</sup> Նույն տեղը:

մասվոր կարողութիամբ, այլև մանավանդ իրենց հարստութիւններով<sup>1</sup>: Հաղ-  
րատ—Սանահինի «Քլոթով» կոչվող ձեռագրում այդ ժամանակ միտրանների  
թիվը հաշվվում է մինչև 500 հոգի (ՀՊՁԹ, ձեռ. № 3031, Թ. 18ա—18բ):

Հովհաննեսի աշխատասիրութիւնը ցույց տալու համար նրա կենսագիրը  
բերում է այլի հանրածանոթ միջադեպը, որի մասին հիշատակութիւն ունի  
նաև Կիրակոս Գանձակեցին: Մատենագարանում աշխատանքը վերջացնելուց  
հետո, Հովհաննեսի ընկերները դուրս են գալիս այնտեղից և կարծելով թե  
Հովհաննեսը ևս աշխատանքը վերջացրել ու գնացել է, փակում են դուռը:  
Օրեր հետո, երբ դալիս են մատենադարան և բաց անում դուռը, Հովհաննե-  
սին գտնում են այնտեղ պարապելիս: Երբ նրան հարցնում են՝ «Որպէ՛ս ապ-  
րեցար առանց կերակրոյ և ըմպելոյ», Հովհաննեսը ցույց տալով իր կարդա-  
ցած գրքերը, պատասխանում է. «Ա՛յս է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ  
և արբի գաւուրս գայտսիկ»<sup>2</sup>: Հովհաննեսի կենսագիրն այդ դեպքը նկարա-  
գրում է հետևյալ ձևով. «Եւ առ յոյժ սիրոյ և բղձից, գաւուրս ութ արգել  
զանձն գաղտաղոցի յարկեղս գրոց յայլի անդ՝ պարարեալ զանձն ի գրաւսանս  
զանազան երանգոց և համազամ կերակրոց, որ անզն զանձեալ էին հոգեոր  
կերակրոց խորտիկք»<sup>3</sup>:

Ըստ երևույթին Հովհաննեսի՝ այլի մեջ փակվելու այս միջադեպը լայն  
տարածում է գտել իր ժամանակին և որպէս աշխատասիրութիւնը խրախու-  
սելու դաստիարակիչ խրատ՝ օգտագործվել է:

Երկարատե ուաման վրա գրած իր քրտնաջան աշխատանքի մասին Հով-  
հաննեսը պարզ ակնարկել է և «Սարկակ»-ի մեջ.

«Ուսայ ևս դեղերմամբ ևս ի բաղմաց ամաց հետէ.

Զի տքնեցայ դօր ամենայն և ըզգիշերրն բովանդակ.

Առ իմաստըս ցանկութեան, նա և սիրովն որ առ հանձար...:

Յանապատի աստ գամ նըստիմ, զի օգտեցայց հանգարտութեամբ.

Ասացի՛ց և իմացայց, և մի՛ եղէց ընդ վայրատանը.

Աշխատեցայց անշահութեամբ ունայնասոյր աստանդութեամբ»<sup>4</sup> (այ-  
սինքն՝ ունայնութիան տատանումով— Ա. Ա.):

Աշխանի կարծիքով, որովհետև Հովհաննեսը փոքր տարիքից սարկավա-  
ցութիան աստիճան է ստացել և երկար մնացել այդ աստիճանում՝ քահանայի  
համար հասուն տարիք չունենալու հետևանքով, «Սարկավագ» կոչումը նրա  
համար դարձել է մականուն<sup>5</sup>: Աշխանի ենթադրութիւնը, կարծում ենք,  
ճիշտ է:

Որ «Սարկավագ» կոչումը, իրոր, Հովհաննեսի համար ոչ թե աստիճան է  
հանդիսացել, այլ մականուն, այդ երևում է և նրա կենսագրականի հետևյալ  
տողից. «Վարդապետն Յովհաննէս և անուն բարդ՝ Սարկավագ»: Կենսագիրն  
այնտեղ «բարդ անուն» ասելով, անկասկած, նկատի ունի մականունը: Այդ

<sup>1</sup> Ան, Պատմութիւն Արարազի հայոց թեմական հոգեոր զպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 47—48:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 107:

<sup>3</sup> ՀՊՁԹ, ձեռ. № 2680, Թ. 57Եա:

<sup>4</sup> «Բաղմավագ», 1847 թ., էջ 222—223 (Տերտուռ. կատարված է գրչական որոշ ուղ-  
ղումներ Յմմատի ձեռագիր ընդօրինակութիւն հիման վրա):

<sup>5</sup> Ա. Ալիբան, Սարկավագ Սոփեասես (տես «Յուշիկը», Բ. էջ 281):



սպացուցում է և այն փաստը, որ Հովհաննեսի աշխատություններից մի քանիսը ուղղակի վերնագրված են որպես մականուն՝ «Յովհաննէս վարդապետ, (զոր) մականունն Սարկաւագ կոչի»:

«Սարկավագ» մականունից բացի, ինչպես ասել ենք վերևում, Հովհաննէսն ունեցել է նաև «Սոփեստես», «Պոետիկոս» և «Իմաստասէր» մականունները: «Սոփեստոս» — հունական σοφιστης բառն է, իհարկե լավ իմաստուն իմաստով, «Պոետիկոս» — հունական ποιητικός, -ն է բանաստեղծ նշանակությամբ, իսկ «Իմաստասէր» — ընտանիքի անունով իմաստ է ունեցել:

Հովհաննեսը Հաղթատում կրթությունն ավարտելուց հետո եկել է Անի և այնտեղ դպրոց հիմնել, որը, ինչպես երևում է, շատ խոշոր դեր է խաղացել միջնադարյան Հայաստանում: Ըստ կենսագրի վկայության Անիից Հովհաննէսի հոշակը տարածվել է շատ հեռուները: Նրա մոտ եկել են սովորելու մատիկ և հեռավոր վայրերից բազմաթիվ աշակերտներ: Կենսագիրը խոսելով Հովհաննէսի անձնավորության մասին՝ թե նա պարկեշտագնաց էր, քաղցրահայաց, համեղախոս և աչքն, նշում է, որ Հովհաննէսի մոտ սովորելու էին գալիս աշակերտների մեծ խմբեր. «...[է]ր և [Յովհաննէսն] բարերարույ, քաղցրահայաց և զուարթատեսիլ, պարկեշտագնաց և համեղախոս, առ մեղուցեալս գրիած և առ ծանրարեոինս իմաստուն բրժիշկ: Այնչափ համբաւե[ա]լ ի բարիս, մինչ զի զբոսի տուեալ ի բացագոյն սահմանաց անուղ սպեղանիս քստ իւրարանչիւր խորխայթեալ վիրի»<sup>1</sup>: Կենսագիրը պատկերավոր ձևով շարունակում է. «Այլ և որք իմաստութեանն գանձու վաճառականք և տենչացողք էին, եկեալ մականդէին առ ուսս երջանիկ համեղարան իմաստնոյն և ընտին քստ շափոյ մեծութեան զքսակս մտաց»<sup>2</sup>:

Հովհաննէսի՝ Անիում դպրոց հիմնելու փաստը խիստ կարևոր երևույթ է հայ մատենագրության պատմության մեջ, որովհետեւ ակադ. ն. Յա. Մատի՝ Անիում կատարած պեղումներից հետո, երբ Անիի պատկերը մոտավոր գծերով պարզ դարձավ, հայտնի եղավ նրա զարգացման աստիճանը, բնականորեն, առաջացավ մի խոշոր առեղծված. ի՞նչպես է, որ Անին չի ստեղծել իր մատենագրությունը: Նկատվում էր ինչ-որ հակասություն Անիում հայտնաբերված նյութական հարուստ կուլտուրայի և Անիից մեզ հասած, համեմատաբար, աղքատ մատենագրության միջև: Կարելի էր լսել իրավացի արտունջներ այն մասին, որ Անին մեզ հասար ու մեկ եկեղեցի տվեց, բայց ոչ մի դպրոց: Եվ դարձանալի չէ, որ մանկավարժներից ոմանք խոսելով հայ մանկավարժության պատմության մասին ամենևին կանգ չեն առել նույնիսկ Անիի զբոսը: Մարտիանը 1930 թվին իր «Արքայան պատմությունը Հայաստանում» անգլերեն լեզվով գրած աշխատության մեջ ոչ մի խոսք չունի Անիի դպրոցի մասին<sup>3</sup>: Մանկավարժության պատմությամբ զբաղվողները, իհարկե, զբանում հանցանք չունեն, բանի որ մինչև այժմ այդ մասին փաստեր հայտնի չեն եղել: Հովհաննէս Իմաստասե-

<sup>1</sup> ՀՊՁՄ, ձեռ. № 2680, թ. 579ա:

<sup>2</sup> Նույն տեղը, թ. 579բ:

<sup>3</sup> K. A. Sarajian, History of education in Armenia, La Verne, 1930: (Մովեստական մանկավարժներից զոգ, Ա. Մովսիսյանը ծանոթ է Անիի դպրոցի մասին եղած նյութերի հետ և խոսել է իր հոգվածներում):



րի հիմնած դպրոցի մասին առաջին անգամ սովետական մանկավարժներից խոսել է զոց. Ա. Մովսիսյանը<sup>1</sup>։

Այսպիսով, այժմ արդեն լուծվում է առեղծվածը. պարզվում է, որ Անին ունեցել է մատենագրություն և բավականաչափ զարգացած մատենագրական դպրոց, աչնպիսի դպրոց, ուր դասավանդվել է Արիստոտելի փիլիսոփայությունը, Յրակացու քերականությունը, Փիլոնի մաթեմատիկան, աոմարագիտություն, ճարտասանություն և այլն։ Եվ այդ դպրոցի հիմնադիրն է հանդիսացել Հովհաննես Իմաստասերը։ Այդ մասին դեռ խոսք կլինի հետո։

Հովհաննեսն իր մոտ ընդունել է աշակերտներ և սիրահոծար պարապել նրանց հետ ամեն տեսակ խրթին և խորին համարվող առարկաներ. դրա մասին Հովհաննեսի կենսագիրը գրում է. «Եւ ծաղկաւաեալ արձակեաց բողբոջս և բուսոյց բոչսս արդիւնարար։ Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիրեաւ խոնարհարար և ախորժելի սիրով ուսուցալնէր զխրթին և զխորին իրս»<sup>2</sup>։

Եվ գնալով Հովհաննեսի դպրոցի հռչակն ավելի է մեծացել։

Թե ինչ բարձրության վրա է գտնվել Հովհաննեսի դպրոցը, այդ կարելի է գտնել նրա դպրոցում ավանդվող առարկաներից։ Ըստ Հովհաննեսի կենսագրի տեղեկությունն այդ դպրոցում դասավանդվել են հետևյալ առարկաները. քերականություն (որին կենսագիրն անվանում է «բանալի գիտութեան, դատտիարակ վերժանութեան, աղբիւր տասնեակ տողանութեանց»), աոմար (որին անվանում է «զուշ և զակն ոգուշ», որ «տեղեակ տունէր տոնից կարգաւորաց»), Արիստոտելի փիլիսոփայությունը, Փիլոնի մաթեմատիկական բովանդակությունն ունեցող գործերը («զաստակախաս բանս Արիստոտելի և զթուականաչափ խորոցս Փիլոնի՝ դարից և կոճատաց, և զառ ի նոցանէ զձնունդս, և ի ներքոյ տասնեկին զձնունդս և թանց և զանկարութիւնս ի յատուկան ստուգակարգս, յաճունս և յանաճականս»<sup>3</sup>) և իմաստասիրական ու աստվածարանական այլ առարկաներ։ Այն ժամանակ, երբ բյուզանդական համալսարաններում արգելված էր Արիստոտելի մասին խոսելը, միջնադարյան հայ իրականության մեջ Արիստոտելի փիլիսոփայության դասավանդումը և նրա մեկնաբանումը, անշուշտ, դրական երևույթ էր։

Կենսագիրը, խոսելով Հովհաննեսի տարած մանկավարժական խոշոր աշխատանքի մասին, նրան համարում է մարդիչ, մարքիչ և հալիչ. «Յալստսիկ և ի սոցին ազգական իրաց կրթարանս մղէր, կրթէր զամանս իրաց՝ զբնակ մտաց մանկանց, մարդիչ, և մարքիչ, և հալիչ լաւին և վատթարին պատրաստելով»<sup>4</sup>։

Հովհաննեսի աշակերտները, ավարտելով դպրոցը, վերադարձել են տեղերը, հիմնել սեփական դպրոցներ և ուսուցչից ստացած իմաստությունը տվել իրենց աշակերտներին. «Ելին յարմատոյ և շառավեղէ նորին,— գրում է Հովհաննեսի կենսագիրը,— բարունակք յո՛հնապետողք ուսուցիչք և լուսաւորք սգրով, աստեղք անմոյարք և ջահք լուսախաղանթք և լցին զտիեզերս բանին կենաց և իմաստայեղց արամախոհ ներճունական իմաստիւր...»<sup>5</sup>։ Կենսագրի

<sup>1</sup> Ա. Մովսիսյան, Հայագիր դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», XIII հատոր, էջ 411—414)։

<sup>2</sup> ՀՊԷԲ, ձև. № 2680, թ. 579բ։

<sup>3</sup> Նույն տեղը, թ. 580ա։

<sup>4</sup> Նույն տեղը։

<sup>5</sup> Նույն տեղը, թ. 579բ։

այս տեղեկությանից պարզ երևում է, թե ինչ խոշոր դեր է ունեցել Անիի զբարոցը միջնադարյան հայ իրավունության մեջ:

Սակաւն Հովհաննէս Իմաստասերի դերը չի սահմանափակվել միայն մտնկավարժական աշխատանքներով: Նա իր հիմնած դպրոցում գրական-գիտական խոշոր աշխատանք է ծավալել. փոշինների տակից դուրս հանելով տեղական և Թարգմանական հին մատենագրութիւնը նա մեծ աշխատանք է կատարել գրանք մեկնելու ուղղութիւամբ: Նա գրել է նաև ինքնուրույն նոր աշխատութիւններ: Այդ աշխատանքը նկատի ունենալով է, որ կենսագիրը իրավունք է համարել իրեն ասելու «Յամենայն դէմս՝ բանի և գործոյ, տեսութեան և յատաչրերութեան, գրելոյ և ընթեռնոյ, պատմագրութեան և վարդապետական վերլուծութեան, մարգարէականին և աստրելականին, այնպէս կատարելագոյն գտաւ [Յովհաննէսն], որպէս և ոչ ոք ի մինն միայն համբաւեալ՝ կամ ի գործս կամ յարդիւնս»: Այժմ, երբ ծանոթանում ենք Հովհաննէսի մեզ հասած աշխատութիւնների հետ, մենք ևս համոզվում ենք, որ իրօք մեծ է նրա Հովհաննէսի դերը հայ մատենագրության զարգացման գործում:

Ըստ Հովհաննէսի կենսագրի աչքից ընկած, արհամարհված գիտութիւնները, որոնք խավարամիտների տգիտութիւն պատճառով ծածկված էին և ազավազված, Հովհաննէսի ջանքերով և ազգանդով նորից փայլեցին հուրսխութիւն ուսումնասեր անձանց. «Եւ ամենայն նսեմացեալ և խամբացեալ գիտութիւնք, որ ի տգիտութեանէ և ի ծուրացելոյց և խատարելոյց մտաւք ծածկեալ ազաւազեցան՝ որ ի նախնեացն, նորին աշխատաջան երկովք և արագութեամբ մտաց, զարդարեցան և ցնծացան անձինք տեսասէր և յասէր արանց»<sup>1</sup>:

Հովհաննէսը որպէս հոգևորական հետու չի եղել նաև եկեղեցական գործունեութիւնից: Մատենագարանում մեզ հայտնի գործավ մի հիշատակարան, որից երևում է, որ Հովհաննէսն Անիի Կաթողիկէ եկեղեցու ծխական քահանան է հանգրկացել: Հիշատակարանը գրել է Մարկոս գրիչը: Նա Հովհաննէսին հիշում է իր ընդօրինակած նախադադափար օրինակի կապակցութիւամբ. «Եւ գծեցաւ սաչ ձևոամբ իմ՝ յոտին անարժան և մեղաւապարտ Մարկոսի, զի էի անարհեստ յիմաստութեան և ի դիժ, և տկար մարմնով, աչխնքն՝ մի սասնի, որ հոգով երկու սոս կազամ անբժշկելի, որ ի հարկէ սորայ և յօժար կամաց իմոց՝ գրեցի փանաք գրով՝ յընտիր և յազնիս արինակէ, զոր Յարկաւագ Բահանայ, սպասաւոր սուրբ Կարողիկէի Մեծի՝ որ յԱնի (ընդգծումը մերն է — Ա. Ա.) ի բազում արինակաց, ի ձևն և աչոց գիտնականաց զաւղատակարան տակալ հաւաքեաց ի մի դիր, և շարադրեաց իւրով ձևոամբ, ի գիրարար մտաց և զիտութեան, զոր սխալեալ թիրեցին անհամեմարութեամբ գրիչը, որ միայն ոչօրկութեան գրի ոչ եղեալ և ոչ ստուգութեան մտաց և բանից՝ բոս օրինակի շար փոհակերի՝ անընդել զուլով արոհութեանց»<sup>2</sup>:

Հովհաննէսը, ինչպէս երևում է, գործուն մասնակցութիւն է ունեցել քաղկեդոնականութիւնի դեմ ծավալված վեճերին: Գրիգոր Վկայասերի ժամանակ, ինչպէս հայտնի է, արևմտյան եկեղեցին ամեն կերպ աշխատում էր իրեն

<sup>1</sup> ՀՊՁԹ, ձև. № 2680, թ. 579բ:

<sup>2</sup> ՀՊՁԹ, ձև. № 666 (769), թ. 251ա: Հովհաննէս Սարկավագին չպետք է շփոթել Դ. Ալիշանի՝ «Ծիրակ»-ում հիշած Սարկավագի (սիշխեցող Կաթողիկէին Անոյ) հետ: Վերջինիս հիշատակութիւն թվականն է 1286 (տես «Ծիրակ», էջ 96):



ենթարկել հայ համայնքները, իսկ հաշկական եկեղեցին՝ զիմադրում էր նրան: Ահա այդ ժամանակ Հովհաննեսը քաղկեդոնականութեան դեմ հանդես է եկել պոլեմիկ աշխատություններով և կազմել հակաքաղկեդոնական բնույթ ունեցող աղբյուրների մի ժողովածու: Այս երկու աշխատություններն էլ մեզ հաջողվել է հայտնաբերել և նրանց մասին խոսք կլինի առջևում:

Կղեմես վարդապետն իր «Միարանություն...» աշխատության մեջ Վենետիկի արխիվից վերցնելով տեղավորել է մի վավերագիր, որից երևում է, որ Հովհաննեսը 1080 թ. Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կողմից պատվիրակ է ուղարկված եղել Գրիգոր VII Հիլդերբրանդոս կոչվող պապի մոտ: Նա պապին է տարել Գրիգոր կաթողիկոս Վկայասերի նամակը դավանաբանական բնույթի: Հավանական է, որ Հովհաննեսն այլ, զուցե և քաղաքական բնույթի, հանձնարարություններ էլ ունեցած լինի: Գրիգոր պապը 1080 թ. հունիսի 24-ին գրել և Վկայասերին է ուղարկել նրա՝ վերը նշված նամակի պատասխանը: Նամակի վերջում պապը խնդրել է Վկայասերից, որպեսզի վերջինս Հովհաննես քահանայի միջոցով պատասխանի իրեն. «Նա ապա վերստին յանձն առնեմք եղբայրութեան քում և պատուիրեմք, զի ի ձեռն վերոյգրեալ քահանային (այսինքն՝ Հովհաննես քահանայի— Ա. Ա.) և կամ այլոյ պատշաճաւոր հրեշտակի՝ առաքեսցես առ մեզ նամակս»<sup>1</sup>:

Ճիշտ է, եղել են այս նամակի նկատմամբ կասկածներ. այսպես, օրինակ, Օրմանյանի կարծիքով, «նամակը հայոց կաթողիկոսին վերագրելու փաստ մը չկա»<sup>2</sup>: Եվ նա հավանական է համարել, որ նշված նամակը ուղղված լինի ոչ թե պապին, այլ Այուննադայի Գրիգոր եպիսկոպոսին: Օրմանյանը գտնում է, որ եթե նույնիսկ այդպիսի նամակ էլ տարված լինի Գրիգոր պապի մոտ, ապա հազիվ թե գրված լինի Վկայասերի կողմից և «պապն ալ խարեական կեղծիքի մը զիմաց գտնված է»<sup>3</sup>: Այս նամակի կասկածնությունը պետք է՝ ասենք, որ անհիմն է Չամչյանի այն պնդումը, որ իբր թե Վկայասերը գնացած լինի Հոտոմ: Համենայն դեպս, մեզ այդ մասին ոչ մի պատմական հաստատուն վկայություն հայտնի չէ<sup>4</sup>:

Կցկատր են դժբախտաբար Հովհաննեսի ընտանիքի, աշակերտների, շրջապատող մոտիկ մարդկանց վերաբերող տեղեկությունները: Մասենադարանի ձեռագրերի ժողովածուում հայտնի է Ստեփանոս քահանա անունով մի տոմարագիր, որը հիշված է որպես Հովհաննես քահանայի որդին: Մեզ հասել է այդ Ստեփանոս քահանայի տոմարական մի աշխատությունը, որն ունի «Ստեփանոս իրիցու տոմարագլխի, որդույ Յովհաննու Բահանայի ասացեալ Յաղագս բնբացութեան արեգական Բսան և ուր ամաց և շրջագայութեան լուսեին ինն և տասներեակ ամաց, որ լինի միահամուտ բնդ ամենայն՝ ամբ ԸԼԹ» վերնագիրը<sup>5</sup>: Նկատի ունենալով, զոր այս Ստեփանոս երեցի ժամանակը համընկնում է Հովհաննեսի ժամանակի հետ, և ապա՝ Ստեփանոս երեցը տոմարագետ է ու հիշված է որպես Հովհաննես քահանայի որդի, ուստի

<sup>1</sup> Միարանություն հայոց եկեղեցւոյն բնդ մեծի և սուրբ եկեղեցւոյն Հոովմայ, Կղեմէս վարդապետէ, հատոր 3, Հոտոմ, 1650, էջ 233:

<sup>2</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, հատոր 1, Կ. Պոլիս, 1912, էջ 1305—1306:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 1306:

<sup>4</sup> Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատոր 11, էջ 1000:

<sup>5</sup> ՀՊՁԹ, ձեռ. № 3304, թ. 218ր (տոմարական տեքստը, գժբախտաբար, բերի է):



և հավանական ենք համարում, որ այս Ատեփանոսը հենց մեր Հովհաննես Իմաստասերի սրբին եղած լինի:

Կցկոտուր են նաև Հովհաննեսի աշակերտների մասին եղած տեղեկությունները: Նրա բազմաթիվ աշակերտներից մի քանիսի անուններն են միայն մեզ հասել: Մատենադարանի տեղեկությունների հիման վրա կարելի է հիշել Հովհաննեսի հետևյալ աշակերտներին.

ա) Երեմիա Ածերեկ, սրա մասին տեղեկություն են տալիս Վարդան Արևելցին և Հովհաննեսի կենսագիրը<sup>1</sup>: Ըստ Հովհաննեսի կենսագրի տեղեկության այս Երեմիան Երեսուն տարի շարքի սեղանա հացի և բանջարով շատացելը<sup>2</sup> (այսինքն՝ զոհացավ, բավարարվեց — Ա. Ա.):

բ) Սամուել Բանանա Անեցի, սա մեզ ծանոթ ժամանակագիրն է: Մամուլի<sup>3</sup> Հովհաննեսի աշակերտ լինելու մասին գրում է Վարդանը. «Եւ ի նմանէ (այսինքն՝ Հովհաննեսից — Ա. Ա.) աշակերտեալն... Սամուէլ երէց աշխարհի, որ զգաւազանսն յորինեաց Քրոնիկոնին, Անեցին»<sup>4</sup>:

գ) Սարգիս, սրա՝ Հովհաննեսի աշակերտ լինելու մասին տեղեկություն է պահպանել մի հիշատակարանում, որը մեջ է բերել Ալիշանը իր «Հայագատում» աշխատությունում մեջ: Հիշատակարանում ասված է. «Կատարեցաւ հոգնեորոց տասն մեկնութեան սուրբ անտարանին Յովհաննու, զոր կարգեալ և ուղղեալ բազում աշխատութեամբ մեծի իմաստնոյ Սարգիս կոչեցեալ, աշակերտ երիցս երանեալ սուրբ վարդապետի Սարկաւազ կոչեցեալ, որ և նմա համոզեալ ի սոյն խորհրդի, ժողովեալ բանս պատշաճատարս շաղազս ոգաի լսողաց և ուսումնասիրացն ընթերցողաց»<sup>5</sup>:

դ) Խաչատուր Անեցի, սրա անունը հիշատակում է Սամուել Անեցին<sup>6</sup>:

ե) Գրիգոր Անեցի, տեղեկություն է տալիս նույն Սամուել Անեցին<sup>7</sup>:

զ) Հովհաննես Անեցի, գարձյալ Սամուելն է հիշում նրան<sup>7</sup>:

է) Ատեփանոս Զովգումա մականուն ունեցող քահանան, սրա մասին մեզ տեղեկություն է տալիս Հովհաննեսի կենսագիրը և Կիրակոս Գանձակեցին<sup>8</sup>:

Մեր մատենագիրների մաս պահել է նաև Հովհաննեսի երկու ընկերների անունը՝ Գրիգոր, Քոքակերի սրբի կոչվածը, և Գավթի՝ Ալավկա սրբին (Գատատանագրքի հեղինակը): Գանձակեցին հետևյալ մանրամասն է բերում իր աշխատության մեջ. «Մէջ եղև զի չաւոր միում նստէին երեքեան արքս սրանելի, եկն անդ ոմն շինական այր մի և ասէ ցնոսա՝ Երանի՛ որ գիտէ՛ ք՝ իմաստագույն իցէ: Զայս իբրև ծաղրական ասաց: Պատասխանի ևս Քոքակերի սրբին և ասէ. ես ասեմ քեզ, մինչդեռ էաք ի մերում աշխարհի, ևս կարող էի և կարող, իսկ Սարկաւազա՛ կարել միայն գիտէք, իսկ այժմ սա կարէ, և

<sup>1</sup> Վարդանի ազգային տեքստերը սխալաբան օրինակ լինելու պատճառով օգտվել ենք Մատենադարանի № 3074 ձեռագրից (թ. 66ա):

<sup>2</sup> ՀՊԶԲ, ձեռ. № 2680, Թ. 380ա:

<sup>3</sup> ՀՊԶԲ, ձեռ. № 3070, Թ. 66ա:

<sup>4</sup> Ղ. Ալիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, էջ 371:

<sup>5</sup> Սամուելի քահանայի Անեցույ շատարանք ի գրոց պատմադրոց, էջ 128:

<sup>6</sup> Եւսյն տեղը:

<sup>7</sup> Եւսյն տեղը:

<sup>8</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 106:

կարժ, և բազում նկարս յաւելու ի վերայ: Զայս առակարար վասն իմաստութեան նորա սասայ»<sup>1</sup>:

Էրժբ կա ենթադրելու, որ Հովհաննեսն իր ծերութեան ճասակում քաշվել է Հաղբատի վանքը և այնտեղ անցկացրել իր վերջին օրերը: Նա այնտեղ էլ մահացել է ու թաղվել: Ուշադրության արժանի է, որ Հովհաննեսի կրոնական բովանդակությունն ունեցող աշխատությունների մեծ մասի վերնագրերում նա չիշված է լինում ոչ թե սովորական «Յովհաննէս Բահանայ» ձևով, այլ «Յովհաննէս Սարկաւագ վարդապետ» ձևով: Մեզ իվում է, որ իր կրոնական գործերի մեծ մասը նա գրել է ծերութեան շրջանում, Հաղբատում միաբանած ժամանակ:

Հայագետներից ոմանք (Ալիշան, Օրմանյան, պրոֆ. Ե. Տեր-Մինասյան և ուրիշները) ենթադրել են, որ Հովհաննեսը Հաղբատի վանքի վանահայր է եղել: Այսպես, պրոֆ. Ե. Տեր-Մինասյանը այդ մասին գրում է. «...մեծ արժանավորությունների շնորհիվ Հովհաննես սարկավագ վարդապետը արժանի եղավ նաև Հաղբատի սուրբ ուխտի առաջնորդը լինելու, բայց թե ինչքան ժամանակ կառավարեց նա, հայտնի չէ մեզ»<sup>2</sup>: Հովհաննեսի՝ Հաղբատի վանահայր լինելու փաստը սկզբնաղբյուրներով չի ճշտվում: Մենք չունենք ուղղակի կամ միջոցնկալ ո՛չ մի ճիշտակություն նրա վանահայր լինելու մասին:

Ի միջի այլոց մեր հեղինակ Հովհաննես Սարկավագին շսխար է շփոթել համանուն այլ Հովհաննեսի կամ «Սարկավագ» մականունն ունեցող անձնավորությունների հետ, որովհետև այդ անունով և մականունով մի շարք հեղինակներ են հայտնի հայ մատենագրության մեջ: Այսպես, մեզ հայտնի են Հովհաննես քահանան՝ եվդոկիայում, որը 1171 թվին գրել է մի ավետարան<sup>3</sup>, Հովհաննես քահանա՝ Հարիճա վանքում, որը գրել է մի ձեռագիր 1219 թվին<sup>4</sup>, Սարկավագ մականունով մեկը, որը Քամարա թագուհու ժամանակ Գեռեկի վանքի վանահայր է հանդիսացել (Փանձակեցին նրա մասին հիշում է՝ «Եւ էր առաջնորդ վանիցն վարդապետն, որ Սարկաւագ անուանիր»), Հովհաննես Սարկավագ անունով մեկը, որը թաղված է Մշո Ա. Կարապետի վանքում<sup>5</sup>, Հովհաննես Սարկավագ անունով մի գրիչ ավելի ուշ շրջանում, որի մի շարք ձեռագրերն են մեզ հասել<sup>6</sup>, Սարկավագ անունով մի գրիչ՝ 1310 թվականից<sup>7</sup>: Ակադ. Հ. Աճառչանի «Հայոց անձնանունների բառարան»-ից երևում է, որ III դարում եղել են Հովհաննես Սարկավագ անունով այլ անձինք ևս՝ Հովհաննես Սարկավագ Շիրինի որդի (էջ 592) և Հովհաննես Սարկավագ անունով մեկը, որ 1276—1286 թվերին մի մաշտոց է գրել (էջ 597) և այլն:

Հովհաննեսի մահվան թվականը վիճելի է: Նրա տապանաքարը, որը գտնվում է Հաղբատում, թվական չունի, իսկ պատմիչների հրապարակված տեքստերում Հովհաննեսի մասին եղած տեղեկությունները հակասական են:

1 Կիբակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 106:

2 Տես «Արարատ», 1901, էջ 343:

3 ՀՊՁՄ, ձեռ. № 313, թ. 210ա, 266բ:

4 ՀՊՁՄ, ձեռ. № 1352, թ. 301բ:

5 Բեզեարություն ի Փոքր Ասիա, գրեցին Ալպեր Տզլե և Գրիգոր (թարգմ. Հ. Տաշյանի, Վիեննա, 1892, էջ 54):

6 Տես ՀՊՁՄ, №№ 1221, 1222 ձեռագրերը և այլն:

7 ՀՊՁՄ, № 380, թ. 311բ:



Հայագետների մեծ մասը (Հ. Ալիշանը, Հ. Ոսկյանը, պրոֆ. Մ. Արեղյանը և ուրիշներ), հիմնվելով Կիրակոս Գանձակեցու և Սամուել Անեցու հազարամյակ տեղեկությունների վրա Հովհաննեսի մահվան թվականն են համարում 1129 թվականը: Բանասեր Կ. Կոստանյանը, Գավիթ Ալավկա որդու ժամանակի կապակցությամբ խոսելով Հովհաննեսի մահվան մասին նրա մահվան թվականը համարում է 1139-ը<sup>1</sup>: Բանասեր Կ. Կոստանյանից օգտվել և նրա տված թվականը կրկնել է պրոֆ. Խ. Սամվելյանը<sup>2</sup>:

Պրոֆ. Մ. Արեղյանը՝ անդրադառնալով այդ խնդրին և մանրամասն քննելով Կ. Կոստանյանի կովանները՝ համոզիչ փաստերով ապացուցել է, որ Հովհաննեսի մահը տեղի է ունեցել ո՛չ թե 1139 թվին, այլ 1129-ին<sup>3</sup>:

Մենք չենք ցանկանում այստեղ մեջ բերել պրոֆ. Մ. Արեղյանի կովանները: Սակայն լրացման կարգով ցանկանում ենք մասնացույց անել մի քանի նոր փաստեր, որոնք նույնպես հաստատում են պրոֆ. Մ. Արեղյանի եզրակացությունը Հովհաննեսի մահվան ժամանակի խնդրում:

Առաջին փաստը Հովհաննեսի կենսագրի տեղեկությունն է, որ նրա մահվան թվական է նշանակել 1129-ը. «Յետ վարելոյ զբազարականութիւն երկնաքաղաքական վարոց», գրում է կենսագիրը, «...պատկերն ճշմարտութեան և բանունն արինատր կարգաց, երիցս երջանիկ վարդապետն ճովհաննէս և անունն բարդ՝ Սարկազն, ևհաս ի կէտ և յաարտ բարտք կենաց ճանապարհին ի ԾՀԸ (1129) թոտականին և եղաւ պատուով ի քնարտնի հանգրտանան ընդ ամենայն սուրբս»<sup>4</sup>: Նույնը կրկնված է կենսագրության վերջում: «Եւ այսպէս բարտք կացեալ ի ժիր մշակութեան, չողաւ անոնով զվարձն ի յաւերժական ժառանգութեան և եղաւ ի հանգստարանի սրբում ի Հաղբաա... թվ. ԾԸ»<sup>5</sup>: Ընդօրինակող գրիչն անուշադրությամբ ԾՀԸ թվականից բաց է թողել Հ (70) տարը և գրել ԾԸ, իսկ նոր գրչությամբ լուսանցրում մեկն ուղղել է՝ ԾՀԸ ձևով: Այսպիսով Հովհաննեսի կենսագիրը նրա մահվան թվականը համարում է 1129-ը:

Երկրորդ փաստը Հովհաննեսի մահվան մասին Վարդան Արեւելցու տված թվականի ճշտումն է: Հովհաննեսի մահվան թվականը 1139 համարող հայագետների գլխավոր կովանը, ինչպես հայտնի է, Վարդան Արեւելցու տեղեկությունն է, որը Մոսկվայի հրատարակության մեջ նշանակված է ԾԶԸ, այսինքն՝ 1139: Այս խնդիրը պարզելու համար մենք գիմեցիներ ձեռագրերին: Վարդան Արեւելցու՝ Մատենադարանում եղած ձեռագրերի ուսումնասիրությունը մեզ բերեց այն եզրակացության, որ տպագիր տեքստում ԾԶԸ-ն գրչական սխալի արդյունք է և պետք է լինի ԾՀԸ ձևով: Ըիշտ է, այդ թվականը Վարդանի տարբեր ձեռագրերում տարբեր ձևով է պատահում. որոշ ձեռագրերում՝ ԾԿԸ (1119), որոշ ձեռագրերում՝ ԾԶԸ, սակայն հնագույն և լավագույն գրչությամբ ձեռագիրը ԾՀԸ (1129) է: Պետք է ասել, որ Վարդանի շարադրած փաստերի պատմական հաջորդականությունից ևս պարզ երևում է, որ ճիշտը, ինչպես ցույց է տվել պրոֆ. Արեղյանը, ԾՀԸ է:

<sup>1</sup> Կ. Կոստանյան, Գավիթ Ալավկա որդի («Ազգագրական հանդէս», ԺԲ դիրք, 1906, էջ 105):

<sup>2</sup> Խ. Սամվելյան, Հին իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 74:

<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 534:

<sup>4</sup> ՀԳՁՄ, ձեռ. № 2680, թ. 579ա:

<sup>5</sup> Նույն տեղը, թ. 581 բ:



Իմաստասերի մահվան մասին ՇՀԸ թվականն է տալիս նաև Օրբելյանն իր ժամանակագրության մեջ: Նա գրում է. «ՇՀԸ փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկաւազ ի Հաղրատ»<sup>1</sup>:

Հովհաննեսի ժամանակի հարցում պատմական կոպիտ անխորհրդմ է թույլ տվել Սուրիաս Սոմալյանը, որի վրա կանգ է առել Ոսկյանը: Սոմալյանի կարծիքով Հովհաննես Սարկավազի զպրոցը ծաղկել է 1157 թվին, Գրիգոր Պահլավունու ժամանակ<sup>2</sup>, մինչդեռ Հովհաննեսը 1157 թվից 28 տարի առաջ արդեն մահացել էր և նրա զպրոցն իր անկման շրջանում էր գտնվում:

Ելուրիմացությունը գուցե տառացի էր Ասմուել Անեցու ժամանակագրության անհաշոգ տպագրությունից և նրա ֆրանսերեն թարգմանությունից, որ կատարել է ակադ. Բրոսսեն: Վերջինս իր թարգմանության ծանոթագրության մեջ Հովհաննեսի մահվան թվականն է նշել 1129-ից 1157 թվականների միջև ընկած շրջանը, իսկ վերջերս Մինորսկին օգտվելով ակադ. Բրոսսեից բառացի կրկնել է նրան<sup>3</sup>:

Միանգամայն բավարար լուծում է ստանում նաև այն տեղո՞վածը, որը կապված է Ասմուել Անեցու մոտ Սարկավազ անունը Սարգիս ձևով հիշվելու հետ: Ասմուել Անեցու ժամանակագրության ամենահնագույն ընդօրինակության մեջ ՇՀԸ թվականի առջև, ժամանակագրական սյունակի ձախ կողմում, կարելի է պարզ կարգաւ ո՛չ թե Սարգիս, այլ Սարկավազ. «Փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ մեծ վարդապետն Սարկաւազն ի Հաղրատ»: Աջ կողմում, ՇԶ թվականի առջև, գրված է. «Ննջեաց յայսմ ամի լուսաւորիչ սուրբ վարդապետն Դուրիթ Ալուեկալ որդին»<sup>4</sup>: Հովհաննեսի մասին Ասմուել Անեցու ժամանակագրության էջ 128-ում բերված հատվածը կրկնություն է առաջին տեղեկության. հրատարակիչ Ա. Տեր-Միքայելյանը շփոթելով վերցրել է այն այլ ձեռագրից և թյուրիմացաբար կրկնել:

Ուշադրության արժանի է այն, որ Անեցու ժամանակագրության մեջ ուղղահայաց իջնող երկու թվականների շարքում ներկա թվականության տարբերությունը հայկական թվականից հաշված է ոչ թե 551, այլ 553: Այս մասին խոսք կլինի ուրիշ առիթով, առմարտական բաժնում: Այժմ միայն կասենք, որ Անեցու մոտ հայկական 553 թվականի հավելումը այդ ժամանակի համար ճիշտ է եղել:

Անեցու ժամանակագրության տպագիր տեքստի՝ Հովհաննեսի մասին եղած առաջին հատվածում արժեքավոր է նրա աշակերտներին վերաբերող մի տեղեկություն, որը վերցված է ավելի հին աղբյուրից, շատ հավանական է, Հովհաննեսի վարք-կենսագրականի ընդարձակ տեքստից, որը մեզ չի հասել:

Հովհաննեսը, ինչպես ասացինք, մահացել է Հաղրատում: Նրան, քան Գանձակեցու տեղեկության, թաղել են տաճարի արևելյան կողմը, փոքր եկեղեցու դիմաց: Հետագայում նրա զերեզմանի վրա Համազասպ եպիսկոպոսը գանգակատուն է կառուցել. «...և թաղեցին զնա (այսինքն՝ Հովհաննեսին) —

<sup>1</sup> Ժամանակագրություն Ասիական Օրբելյանի, Երևան, 1922, էջ 17:

<sup>2</sup> P. Somalian, Quadro della storia letteraria d'Armenia, 1829, p. 89:

<sup>3</sup> V. Minorsky, Studies Caucasian History, London, 1953, p. 79:

<sup>4</sup> ՀԳՁՄ, ձև. № 5610, Թ. 69ա:

Ա. Ա.), — գրում է Գանձակեցին, — արեւելից կուակ եկեղեցւոյն մեծի առ դուրս փոքրագոյն եկեղեցւոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Համարասայ և շինեաց հրաշալի շինուած, ուր զգանկական կախէին, յարմարեալ ի նմին և եկեղեցիս»<sup>1</sup>:

Հովհաննեսի տապանաքարը մինչև այժմ մնում է Հաղբատում: Նրա վրա լակոնական ոճով փորագրված է հետևյալ երկու տողը.

«Արձանս այս սեմական է  
Սոփեսոեսի Սարկաւագին»<sup>2</sup>:

Հայ գիտնականի անշուք տապանաքարը հարազատ պատկերն է նրա համեստ կյանքի: Միջնադարյան թանձր խավարում մարդիկ դեռ չէին տեսնում Հովհաննես Իմաստասերի մեծութիւնը, այդ պատճառով էլ դուրս պատշաճ արժանավորութեամբ չեն դնահատել ու մեծարել նրան: Սակայն նա իր գիտութեամբ և մատենագրական վաստակներով շատ մեծ է եղել, այդ մեզ երևում է դարերի խորքից:

Հովհաննես Իմաստասերի հիշատակը երկար դարեր մեծարվել է ու զմիջնադարում: XVII դարի ճանապարհորդներից մեկը՝ Թումա Վանանդեցին իր «Ռատնաւօր ներքոյ սրբազան տեղեաց Հայոց աշխարհի» տաղում Հաղբատի վանքը հիշում է Ստեփանոսի և Իմաստասերի շիրիմներն այնտեղ գտնվելու կապակցութեամբ:

«Ի սուրբ յուխան Հաղբատ հասեալ,  
Ուր են շիրիմքըն հոշակեալ,  
Սքանչելի արանցն լիալ,  
Վարդապետաց անկեալ կանխաւ,  
Ստեփանոսի՝ որ սպանաւ,  
Սարկաւագայ՝ որ անդ եղեալ,  
Եւ Յովհաննէս անուանեցաւ»<sup>3</sup>:

Հովհաննեսի կենսագրութեան հետ կապված նյութերից մենք հրատարակում ենք երեքը՝ նորահայտ կենսագրականը, Հովհաննեսի մասին պահված հիշատակարանը և իր «Ամբաստանութիւն զանձնէլ» աշխատութիւնը, որի մեջ հեղինակն ակնարկութիւն ունի իր ծնողների մասին և որը մինչև վերջերս փնտրվել է հայագիտութեան մեջ:

<sup>1</sup> Կիւակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 106—107:

<sup>2</sup> Ղ. Ա. Փիլղալեմյան, Նոտարք Հայոց, Կ. Պոլիս, էջ 112 (հմտ. Տաշյան՝ Յուզակ ձեռագրաց, էջ 984) և ուրիշները: Ամենից փոստահիլին պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկիլնն է:

<sup>3</sup> «Ճոսքագ», 1860, է՛ և Թ՛ տետր, էջ 121—122:

## 2. ՀՈՎՏԱՆՆԵՍ ԻՄԱՏՏԱՍԵՐԻ ՊԱՏՄԱԴԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննես Իմաստասերի աշխատություններից, բոս մատենագրական տեղեկությունների, արժեքավոր գործ է հանդիսացել նրա Պատմությունը: Իրավացի է Ալիշանը, երբ գրում է. «Անշուշտ իր ամեն գործքերուն մեջ պուխ գործոց սեպելու էր իր Պատմությունը, որ պետ կորսվածներուն կարգն է ինձի»<sup>1</sup>:

Հովհաննեսի այդ կորած Պատմությունը Ալիշանի կարծիքով բաղկացած է եղել երկու մասից. առաջին մասում շարադրված է եղել սկյութացիների պատմությունը՝ սելջուկների հանդես գալը, նրանց արշավանքները, Տուղրիլ բեկի, Մահմուդի, Ալփասլանի պատմությունները և այլն, իսկ երկրորդ մասում շարադրված է եղել Մելիքշահի պատմությունը<sup>2</sup>: Նույն կարծիքն է հայտնել նաև Գ. Զարբհանալյանը. «Կերենա թե (Հովհաննեսի) այս պատմության գիրքը, — գրում է նա, — երկու մաս բաժանված էր. մեյմը ընդհանուր սկյութական ազգաց ծագման և արշավանաց վրա, որ ժԱ դարեն սկսան գալ ի Հայաստան. Սելճուգյանց ու Տուղրիլյանց և Ալփասլանա ու իր նախորդացը վրա, մեյմըն ալ Ալփասլանա որդվուն Մելիքշահի գործերը, որուն մահվամբ զազարեցուցած կերենա Սարկավագ յուր պատմությունը»<sup>3</sup>: Եվ այս տեսակետը, պետք է ասել, քաղաքացիություն է գտել հայագիտության մեջ:

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ ընդհանրացած այս կարծիքը ճիշտ չէ: Մամուել քահանա Անեցու մի տեղեկությունից պարզ երևում է, որ Հովհաննեսի վերև հիշված աշխատությունները ո՛չ թե մի գրքի երկու մասերն են հանդիսացել, այլ Հովհաննեսի պատմագիտական տարրեր աշխատություններն են. Մամուել Անեցու տեղեկությունից երևում է նույնիսկ, որ նա իր ժամանակագրությունը շարադրելիս Հովհաննեսի այդ Պատմություններից առաջինը, այսինքն՝ «Սկյութացուց պատմութիւն»-ը, որն առաջներում է տեսած եղել իր ուսուցչի մոտ, ձեռքի տակ չի ունեցել և չի կարողացել օգտվել նրանից, իսկ երկրորդը՝ Մելիքշահի պատմությունը, ունեցել և օգտվել է: Դրա մասին նա հետևյալն է գրում. «Ջայստսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեղ Իմաստասէրն [Յովհաննէս], մինչև ցՄելիք շահն, զոր յուրում տեղուջն

<sup>1</sup> Ղ. Ալիշան, *Յուշիկք*, էջ 300:

<sup>2</sup> Տես նույն տեղը, էջ 301:

<sup>3</sup> Գ. Զարբհանալյան, *Հայկական հին պատմության պատմություն*, էջ 1609:



գրեցից սորին ձեռքնառութեամբ: Իսկ զհօրն նորա ժամանակ, զարինա-  
խանձին Ալիաալանայ, և զնորին հօրն և զհաւուց, որ՝ Տուղուպէկ և Մահ-  
մուա և Սարչուկ անուանք են նոցա: Տեսաք երբեմն գրեալ սորին ձեռօք  
ստոյգ դատակաւ, եթէ հանդիպիմք մատենին և մեք շարագրեսցուք և թէ ոչ՝  
լքցուք»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք վերև բերված վկայութիւնից, Հովհաննեսի  
պատմական աշխատութիւններից մենք ունենք ո՛չ թի մեկ, այլ երկու կո-  
րուստ:

Հովհաննեսի նշված աշխատութիւններից ոչ մեկն ամբողջութեամբ, զըժ-  
բախտաբար, մեզ չհաջողվեց հայտնարեռել Մատենադարանում: Միայն  
առաջին պատմութիւնից, այսինքն այն պատմութիւնից, որն Անեցին տե-  
սած է եղել իր ուսուցչի մոտ, բայց ձեռքի տակ չի ունեցել, մի փոքրիկ  
հատված պահվել է Հաղբատ—Սանահին «Քյոթուկ» կոչված ձեռագրում: Այս  
հատվածը վերնագրված է. «Վասն սփանչելեաց Սուրբ Աստուածածինին»:

Նշված հատվածի՝ Հովհաննեսին պատկանելու մասին կա «Քյոթ-  
ուկ»-ը կազմողի հետևյալ հիշատակութիւնը. «Էր և պատահումն ի վանսն  
Սանահին կոչեցեալ, զոր տայ մեզ գրով իմաստուն Պոետիկոսն Սարկա-  
ւազ»<sup>2</sup>: Այս հատվածում Հովհաննեսը պատմում է, որ 1110 թվականի օգոս-  
տոսի 13-ին Հաղբատում, առավոտյան, միաբանները եկեղեցում աղոթելու  
ժամանակ ենթարկվում են սելջուկների հարձակման. «Յանկարծակի յարեան  
և կախալ զդուրս և զկողմանս աղօթարանին շուրջ պատեալ ամբարշտացն  
պարսկային սկիւթացուցն մերկ զինուք պատրաստականաւք, խժարան ձայ-  
նիւ զաղաղակ եղեալ»<sup>3</sup>: Այդ նույն ժամանակ, ինչպէս երևում է, վանքում է  
գտնվել նաև Դավիթ Թագավորը՝ Կյուրիկէի որդին, առանց իր հետ պաշտ-  
պան զորք ունենալու: Սանահինի միաբանութիւնը, տեսնելով վերահաս  
վտանգը, կարողանում է անվնաս ազատել Դավիթին ու փախցնել:

«Քյոթուկ»-ի հիմնական մասը կազմվել է XVII դարում<sup>4</sup>: Այն կազմող  
հեղինակն օգտվել է հին պատմագրերից, վավերագրերից, հիշատակարան-  
ներից և պատմական այլ նյութերից: Անկասկած, հենց այդ ժամանակ էլ  
կազմող հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է Հովհաննեսի ամբողջական աշ-  
խատութիւնը և օգտվել է նրանից: Շատ ցավալի է, որ Հովհաննեսի մինչև  
XVII դարն անվնաս մնացած այս պատմութիւնն այժմ կորած է մեզ  
համար:

Ի միջի այլոց, ժողովածուն կազմող հեղինակը, հայտնի մատենագրերի  
շարքում հիշում է մի պատմագիր ևս, որի հեղինակը ինքը չի կարողացել  
պարզել ձեռագրի փտած և թերթեր թափած լինելու պատճառով. «Եւ միւս  
ևս գոյր պատմագիր, յորում գրեալ էր, զորոյն անուն ոչ կարացաք գիտել,  
վասն որոյ աղաչեմք ներել մեզ, քանզի կարի փտեալ էր, որոյ ոչ սկիզբն

<sup>1</sup> Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 98:

<sup>2</sup> ՀՊՁԸ, ձեռ. № 3031, թ. 27ր:

<sup>3</sup> Նույն տեղը, թ. 27բ—28ա:

<sup>4</sup> Այս ձեռագիրը հայտնի է նաև «Հովսեփ Արղությանի ձեռագիր» անունով, որովհետև  
սկսած 1797 թվականից Արղությանի սեփականութիւնն է կազմել: Հովսեփ Արղությանի  
թողած հիշատակութիւնից երևում է, որ նա ևս նպատակ է գրել Հաղբատ—Սանահինի  
վանահայրերի արաղիցխայով շարունակել իր ժամանակի հետ կազմած կարևոր վավերա-  
գրերի գրանցումները (տես ձեռագրի թ. 1ր, 28է և այլն):

դոչը և ոչ վերջն»<sup>1</sup>։ Գծվար է այժմ հաստատապես որևէ բան ասել այս պատմագրի մասին, բայց մարդ ակամա կասկածում է՝ արդյո՞ք հեղինակի չարագլված պատմագրական այս աշխատությունը Հովհաննեսի կորած պատմություններից մեկն ու մեկը չի հանդիսացել։

Բանասեր Բ. Սարգսյանն իր կազմած՝ Վենետիկի ձեռագրաց ցուցակի մեջ հիշում է իրենց մատենադարանում մի ձեռագիր (№ 261, 1504 թվի ընդօրինակությամբ), որը պարունակում է անանուն մի ժամանակագրություն, «ժամանակագրականը կամ կարգը կաշահրաց, թագաւորաց և կաթողիկոսաց» վերնագրով, որի հեղինակը, ըստ Սարգսյանի տեղեկության, օգտուվել է Հովհաննեսի պատմությունից։ Այդ մասին ժամանակագրությունը կազմող հեղինակը թողել է հետևյալ հիշատակությունը. «Թակ յեա նոցա այսինքն՝ (արաբացուց— Ա. Ա.) Ալիթագուցն առնուլ զբնակալութիւնն այսպիսի պատճառաւ, զոր բնբեցաւ զեալ վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի որ է այսպէս»<sup>2</sup>։

Սարգսյանի տեղեկությունից երևում է, որ անանուն ժամանակագրության սկզբի մասը քաղված է Սամուել Անեցուց, իսկ շարունակությունը «Սարկավագ վարդապետի անհայտացած պատմութենեն»<sup>3</sup>։ Ժամանակագիրը ուշ շրջանի համար կատարել է իր ավելացումները, հասցնելով այն 1314 թվականը, այսինքն՝ շարունակելով ևս 180 տարվա պատմություն։ Ժամանակագրությունը հասցվում է մինչև Աբխազիայի կոտորածը. «Եւ անտի գահնաբար յարձակէին (թաթարք) յաշխարհին Գուգարացուց և սուր ի գործ արկեալ անխնայարար կոտորէին, զորս ի բունն արկանէին, և այնպէս ասարեկ արարեալ գամենեսեան՝ զբազում զեօղս և զգառաս անբէին մինչև ի ներքին կողմն Վրաց, որ կոչի Ափխազք»<sup>4</sup>։ Յանկալի է, որ Վենետիկի միաբանները, հնարավորին շափով շուտ, հրատարակության հանձնեին անանուն այս ժամանակագրությունը, որպեսզի հնարավոր լիներ պարզել ժամանակագրի՝ Հովհաննեսից օգտված մասի չափը և արժեքը։

2. Ղ. Ալիշանը Հովհաննեսի անունով հիշում է նաև եկեղեցական մի պատմություն. «...անցյալ դարուն վերջը,—գրում է նա,—գրող բանասեր մը կըսես (ԺԲ), թե «Սարկաւագ վարդապետն սուրբ Յովհաննէս՝ արար եկեղեցական պատմագիր». այս բանիս վրա հիներեն վկայություն մը չունիմ, միայն փոփոագիմ թե հիրավի գրած ըլլար, ևս առավել թե գտված ըլլար»<sup>5</sup>։ Ալիշանը ենթադրում է նաև, որ այդ պատմությունը, հավանական է, կանոնգիրք լինի «...զուցե թե այս եկեղեցական պատմագիրքն՝ ըլլա (ԺԹ) Կանոնգիրք»<sup>6</sup>։

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ Հովհաննեսի անունով իրոք մեզ է հասել եկեղեցական մի պատմություն, որը սակայն ոչ մի կապ չունի կանոնգրքի հետ։

Հովհաննեսին վերագրվող եկեղեցական պատմության մի հավավածը գտնվում է մեր Մատենադարանի երեք ձեռագրերում՝ № № 2042 (XIV դարի

1 ՀՊՁՄ, ձեռ. № 303, Բ. 19ա-բ։

2 Բ. Սարգսյան, Մայր ցուցակի հայերեն ձեռագրաց մատենադարանին Միխիթարյանցի Վենետիկ, Բ. հատոր, Վենետիկ, 1924, էջ 817։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

5 Ղ. Ալիշան, Յուշիկը, Բ. հատոր, էջ 301։

6 Նույն տեղը։



ընդօրինակություն, թ. 11բ—12բ), 2043 (XIV—XV դդ., թ. 372ա—376ա) և 2045 (XIV դ., թ. 104ա—106բ): Այս հատվածը վերնագրված է: «Յեկեղեցական պատմութենէն, զոր երկրորդեալ է Սարկաազ վարդապետէ»: «Երկրորդեալ է» այստեղ, մեր կարծիքով, պիտի հասկանալ մեկնելու, ծաղկաբաղ անելու իմաստով: Իսկ, թե ի՞նչ աշխատությունից է Հովհաննէսը ծաղկաբաղ արել, այդ մասին խոսք կլինի քիչ հետո:

Հովհաննէսի եկեղեցական պատմության հատվածը սկսում է հոռմեական Բեկաոր եպիսկոպոսի գործունեությունից, այնուհետև հիշատակված են մի շարք աղանդներ (Արտեմոնի, Նեստորի և նրանց հետևողների), իսկ վերջում Հովհաննէսը բնութիւն է առնում Հայտնության և Մկրտության տոների հարցը: Ի միջի այլոց, Հովհաննէսին վերագրված եկեղեցական պատմության այս հատվածի մի այլ ընդօրինակությունը, ինչպես երևում է Հ. Ռսկյանի տեղեկությունից, պահվել է նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանում (№ 884 ձեռագիրը):

Հովհաննէսի անունով մեզ հասած «Յեկեղեցական պատմութենէն, զոր երկրորդեալ է Սարկաազ վարդապետէ» խորագիրը կրող հատվածի նախնական ծանոթության ժամանակ մենք ևս այն կարծիքն էինք կազմել, որ Հովհաննէսը, հովանական է, ունեցել է, իրոք, եկեղեցական պատմության ընդարձակ մի տեսք, որի հատվածն է վերը բերված պատասխիկը: Սակայն ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ մենք սխալված ենք եղել: Հովհաննէսի մեզ հասած այդ պատասխիկի ուշագիտ ուսումնասիրությունը մեզ բերեց միանգամայն այլ եզրակացություն: Այս մասին ևս մենք կխոսենք ստորև:

Հովհաննէսի կրոնական-պոլեմիկ աշխատությունների շարքում մեզ հայտնի է դարձել նրա մի աշխատությունը, որը վերնագրված է «Նորին [Յովհաննէս Բահանայի] հակաբանութիւն հնագիտական բնդդէմ անգիտակաց ոմանց յիս գիտութեան, որ ստայօղ ճառիւմ հաւանեցուցին զոմանս ի վայրագաց և պարզամտաց հաւատալ անհաւաստի իրեանց կարճեաց»<sup>1</sup>: Հեղինակին այս աշխատության մեջ, ինչպես խոստանում է իր ներածականում, նպատակ է դրել ծանոթացնել վաղ քրիստոնեական շրջանում առաջ եկած աղանդների հետ, նշել նրանց յուրաքանչյուրի առաջ դալու ժամանակը, տեղը, դեկավարները, ընդհանուր ուղղությունը և այլն, այսինքն՝ այն, ինչ որ արված է նրան վերագրվող եկեղեցական պատմության վերը հիշված պատասխիկում: Եվ Հովհաննէսը, իրեն հատուկ բարեխղճությամբ, հիմնվելով սկզբնաղբյուրների տեղեկությունների համեմատական ուսումնասիրության վրա պարզում է, թե ո՞ր ազանդը ո՞ր թագավորի կամ ո՞ր եպիսկոպոսի ժամանակ է հանդես եկել:


Պետք է ասել, որ ազանդավորների հետ կապված Հովհաննէսի այս աշխատությունը կարևոր նյութ է տալիս Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, որովհետև այնտեղ որոշ տեղ է տրված նաև պավլիկյաններին, որոնց հիմնադիրն է հիշված Պող Սամոսատցին:

Ինչպես հայտնի է, ժամանակին Հայաստանում տեղի ունեցող սոցիալական շարժումների մասին սենսացիոն նորություններ են հանդիսացել Գ. Տեր-Մկրտչյանի՝ «Արարատ»-ում լույս ընծայած Անանիա Նարեկացու

<sup>1</sup> ՀՊՁԲ, ձեռ. № 2751 թ. 200բ—207ա:



«Գիր խոստովանութեան»-ը՝ և Բ. Սարգսյանի «Ուսումնասիրություն մանր-  
րեա-պալղիկյան-թոնրակեցիներու աղանդին» հավելվածում տեղավորված  
Գ. Նարեկացու թուղթը, Կնավա միաբանությունը՝ թոնրակեցիների մասին՝  
Այս տեքստերի և մասնագրերի մոտ եղած որոշ տեղեկության հիման վրա  
է, որ Կարապետ Եպիսկոպոսը գրել է իր արժեքավոր ուսումնասիրությունը



Նկ. 1. Սոցիալական շարժումների մասին աշխատության ձեռագրից մի կտի:

1 Երանելույն հարց Անանիայի Գիր խոստովանութեան («Առարատ», 1892, էջ 6—18):

2 Թուղթ անհնաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացու, զոր գրեաց ի Հայկազն ուխտին Կնաւայ վասն կարծեացն անցիկոց թոնրակեաց... (տես Բ. Սարգսյանի «Ուսումնասիրություն մանրեա-պալղիկյան թոնրակեցիներու աղանդին», Կենտոնիկ, 1893, էջ 106—107):

պատվիկյանների մասին<sup>1</sup>: Պետք է ասել, որ Հովհաննեսի ներկա աշխատությունն էլ կարևոր սկզբնաղբուր է սոցիալական շարժումների պատմության համար Հայաստանում:

Հովհաննեսն իր այս աշխատության մեջ օգտվել է Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմությունից: Նա տեղ-տեղ տառացի ընդօրինակել է Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմության հինգերորդ գլխուկան<sup>2</sup> «Վասն այնոցիկ, որ եղեն ի սկզբանէ յաղանդոց անտի Արտեմոնի և որով օրինակաւ էին նորա և որպէս համարձակեցան նորա եղծանել զգիրս սուրբս» վերնագիր ունեցող գլուխը: Հետաքրքրական է, որ Հովհաննեսի՝ Եվսեբիոսից օգտված այս գլուխը ոչ թե վենետիկյան հրատարակության բնագրի բուն տեքստի ընդօրինակության խմբին պատկանող տեքստից է, այլ տողի տակի տրված ընդօրինակության խմբից, որը, մեր կարծիքով, ավելի հին է և կարևոր, քան հրատարակության բուն տեքստը: Մենք այստեղ ավելցորդ ենք համարում զուգահեռ բերել Հովհաննեսի և Եվսեբիոսի այդ տեքստերը, որովհետեւ նրանք այնքան նման են իրար, որ որոշ տեղեր հնարավոր է լինում նույնիսկ մի տեքստի հիման վրա ուղղել մյուս տեքստի մեջ տեղ գտած զրշական սխալները:

Հովհաննեսի՝ Եվսեբիոսից օգտվելու այս փաստը օգնում է մեզ պարզելու նաև Հովհաննեսի անունով մեզ հասած՝ վերը հիշված եկեղեցական պատմության հատվածի աղբյուրը և հասկանալ՝ թե ինչու է նա վերնագրված եղել «Յեկեղեցական պատմութենէ, զոր երկուրդեալ է Սարկաազ վարդապետէ» ձևով: Ուսումնասիր հայազեանները, մեր կարծիքով, սխալ են հասկացել նրշված պատասխիկ վերնագիրը: Այստեղ խոսքը Հովհաննեսի եկեղեցական պատմության մասին չէ: Հովհաննեսի այդ հատվածի վերնագրից նույնպես չի երևում, որ նա ունեցել է որպես թե եկեղեցական պատմություն, ուստի և ճիշտ չէ այն ենթադրությունը, որ Հովհաննեսի եկեղեցական պատմությունը կորել է: Այստեղ խոսքը պարզապես Եվսեբիոսի եկեղեցական պատմությանն է վերաբերում, որի համապատասխան հատվածը Հովհաննեսը մեկնել, յուսարանել է նոր փաստերով, կամ, ինչպես վերնագրում է ասված՝ «երկուրդեալ» է:

Արշակ Տեր-Միքայելյանը Սամուել Անեցու ժամանակագրության ծանոթագրություններից մեկի մեջ հայտնում է, որ Փարիզի ազգային մատենադարանում ինքը հանդիպել է XII—XIII դարերի ընդօրինակություն ունեցող մի ձեռագրի, որը պարունակել է Հովհաննեսի՝ քաղկեդոնական ժողովի և երկու բնության մասին մի աշխատություն: Նա կարծում է, թե այդ Հովհաննեսի պատմության մի հատվածն է<sup>3</sup>:

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ Տեր-Միքայելյանը սխալվում է: Հովհաննեսի քաղկեդոնական ժողովի և երկու բնության մասին գրած՝ վերը հիշված աշխատության ընդօրինակությունն ունենք Մատենադարանի ձեռագրերում ևս, սակայն նշված աշխատությունները ոչ մի կապ չունեն Հովհաննեսի պատմագրական աշխատությունների հետ: Նրանք կրոնական-պոլեմիկ աշխատություններ են, որ Հովհաննեսը գրել է քաղկեդոնականության դեմ: Եթե կան այդ ժողովածուում պատմական որոշ նշումներ, ապա

<sup>1</sup> K. Ter-Mkrtchian, Die Paulikianer, Leipzig, 1893.

<sup>2</sup> Սամուել Անեցի, Հաւարմունք ի գրոց պատմագրաց, էջ 292:



այդ ամենը բերված է միայն քաղկեդոնական եկեղեցու հարձակումներից պատմական փաստերի հիման վրա պաշտպանվելու նպատակով: Այս մասին մենք կխոսենք իր տեղում:

Մատենադարանի ձեռագրերում պահված՝ Հովհաննեսի աշխատությունների որոշ փշրանքներ հնարավորություն են տալիս մեզ նաև լուծել Ալիշանի սուսց քաշած այն առեղծվածը, թե Հովհաննեսի անունով հայտնի եկեղեցական պատմությունը կարող է նրա կանոնադրեր լինել: Պարզվում է մի ցավալի փաստ, որ Հովհաննեսն իրոք ունեցել է կանոնգրք, բայց այն մեզ չի հասել: Այդ կանոնգրքից մի փոքրիկ հատված պահել են Մատենադարանի ձեռագրերը:

Հովհաննեսի այդ հատվածը երևաց Մատենադարանի երկու ձեռագրերում — № № 228 և 6933: Առաջին ձեռագրում մեջ է բերված հետևյալ հատվածը. «Որպես և մեծ վարդապետն Հայոց Սարկաւազ ի դատաստանաց գիրսն յիշէ և ասէ՝ բազում ժամանակք, զի Կոստան հարկանեն զգաւակն և ինքեանք մաղկատենն զնոսա, ապտակեն և ինքեանք մորմոքին, մանաւանդ յորժամ տեսանեն յարտասուս հարեալ առաջի ծնողացն, յայնժամ գալարին աղիբն, ձմիլն երկիւմունքն և արտեանունքն արտասուս թորացուցանեն»<sup>1</sup>: Մյուս հատվածը, համեմատաբար, ավելի կարճ է և հեղինակի մասին ոչ մի նշում չունի. «Նախախնամութիւնն Աստուծոյ... որպէս հայր որ սիրէ զորդի... է և բազում անգամ, զի ծնողն հարկանէ զգաւակն և ինքն մորմոքի, և յորժամ տեսանէ յարտասուս հարեալ զտղայն, գալարի աղիբն և արտասուս ծորացուցանեն, այսպէս և մարդասէրն Աստուած»<sup>2</sup>: Երկրորդը հավանորեն համառոտված է առաջինից: Յավալի է, որ Հովհաննեսի դատաստանագիրքը, որն անշուտ մեծ արժեք պիտի ներկայացնէր հայ իրավունքի պատմության համար, կորած է:

Հովհաննեսի մեզ հայտնի աշխատություններից կիսապատմական-կիսատմարական բովանդակություն ունի նրա «Պատձեն տոմարի» ընդօրինակությունների հավելվածում գրված ժամանակագրական ցանկը, որի հիմնական նպատակը եղել է ոչ թե առանձին ժամանակագրություն կազմել, այլ իր կատարած տոմարական հաշիվներով ժամանակագրության որոշ թվականներ ամփոփել:

Այս տեքստը Մատենադարանի № 1973 ձեռագրում վերնագիր չունի: Վերնագրի փոխարեն կարմիր թանաքով միայն ընդգծված է «Նորին» բառը<sup>3</sup>: Նախորդ տեքստը Հովհաննեսինն է, ուստի և այստեղ ընդօրինակողը Հովհաննեսի անունը նորից չկրկնելու համար պարզապես վերնագրել է «Նորին» ձևով, ցանկանալով ասել, որ սա նախորդ գլխում հիշված Հովհաննես քահանայի աշխատությունն է:

Հովհաննեսի ժամանակագրության այս ցուցակի համառոտ ընդօրինակությունը հրատարակել է Ռսկյանը «Հանդէս ամսօրեայ»-ում<sup>4</sup>: Վենետիկի մատենադարանի ձեռագրերի պարունակած այս ցանկը վերնագրված է եղել «Սարկաւազ վարդապետին է րանս»<sup>5</sup>: ժամանակագրությունն սկսում է Աղա-

<sup>1</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 228, թ. 152բ:

<sup>2</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 6933:

<sup>3</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 1973, թ. 195ա:

<sup>4</sup> Լ. Ռսկյան, Հովհաննես Սարկավազի գրությունները («Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 238—239):

<sup>5</sup> Նույն տեղը:

մի մասնավանից և վերջանում վրաց եկեղեցու բաժանումով: Ժամանակագրական աչք ցանկը իր բովանդակությամբ շատ է նմանվում Շիրակացու տոմարի մեջ բերվող ժամանակագրական ցանկին: Վերջինս հիշում է Հ. Տաշյանն իր կազմած ձեռագրերի ցուցակում<sup>1</sup>: Այս նմանությունը հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ Հովհաննեսի ժամանակագրական ցանկի հիմքը Շիրակացու ժամանակագրական ցանկն է հանդիսացել:

Մատենադարանի № 1973 ձեռագրի պարունակած<sup>2</sup> Հովհաննեսի ժամանակագրական ցանկը ուշ շրջանի բնագործակողների կողմից զգալի փոփոխություն է ենթարկվել: Ընդգործակող գրիչները ժամանակագրությունը շարունակել և հասցրել են մինչև 1236 թվականը, մոնղոլների Հայաստան մտնելը և ավերելը.

«ՈՁև (1236) թվին անտախկ բերդն, որ կոչի Կաշիան և Լաւր, բազար և Անի մայրաքաղաք Հայոց և այլ բնակ աշխարհս Հայոց, գաւառք և անտա բերդորայր և անմուտ մայրիք ի միում ամ առան և կոտորեցին՝ անհամար և անթիւ արք կանայր և մանկունք»<sup>3</sup>:

Ժամանակագրության վրա ավելացումներ կատարող ճեղինակն անհրաժեշտ է համարել անգամ նշել Հովհաննեսի մասնվան մասին<sup>4</sup>:

Մատենադարանի № 1973 ձեռագրի ժամանակագրական ցանկի արժևքովոր մասը, պետք է ասել, որ Հովհաննեսի ժամանակագրական ցանկի վրա հետագա գրիչների կատարած ավելացումներն են, որոնք կոնկրետ իշխաններ են պարունակում այս կամ այն պատմական կարևոր իրադարձություն մասին: Այսպես, նշված են վրաց Գավթի, Գեմեարիի և Գորգու գաղակալության կոնկրետ թվականները, նրանց առանձին արշավանքները, V—XIII դարերի Հայաստանում կատարված շինարարական կարևոր աշխատանքները և այլն:

Հովհաննեսի վերը նշված պատմագիտական աշխատությունները, համեմատաբար, մանր գործեր են: Նրանք փշրանքներ են պատմագիտական այն մեծ աշխատությունների, որոնց մասին հիշատակություն է պահվել մեր մատենագիրների մաս, բայց որոնք առայժմ չեն հայտնաբերված: Գուցե երբևէ հայագետներից հաջողակ մեկին հաջողվի հայտնադործել հայ մատենագրության այս աչքի բնկնող ճեղինակի կորած պատմագիտական աշխատությունները և մենք հնարավորություն կունենանք կոնկրետ նյութի հիման վրա գտակ նրա արժեքը միջնադարյան հայ պատմագրության մեջ:

Հովհաննեսի պատմագիտական աշխատություններից հատորում գեակցում ենք Սամուել Անկցու ժամանակագրության մեջ պահված հատվածը՝ վերջնելով այն Մատենադարանի հնագույն ձեռագրից, ժամանակագրության՝ Հաղրատի «Քլոթուկ»-ում պահված պատմության հատվածը, Եկեղեցական պատմության հատվածը և «Հակարանութիւն հնագիտական»-ը:

<sup>1</sup> Հ. Տաշյան, *Յուրակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Միլիթարյանց ի Վիեննայ, Վիեննա, 1895*, էջ 117:

<sup>2</sup> ՀՊՁԿ, ձեռ. № 1973, թ. 199ա:

<sup>3</sup> Նույն տեղը, թ. 198ա:



### 3. ՀՈՎՃԱՆՆԵՍ ԻՄԸՍՏԱՍԵՐԻ ՄԸԹԵՄԸՏԻԿԵԿԸՆ ԵՎ ՏԻԵԶԵՐԸԳԻՏԸԿԸՆ ԸՇԽԸՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարյուր ինը տարի առաջ, Հ. Ղ. Ալիշանը, «Բազմավեպ» ամսագրում տեղափորած «Յովհաննէս Սարկաւազ վարդապետ» խորագրով մեկ ծանոթ աշխատության մեջ առաջին անգամ Հովհաննէսի երկասիրության շարքում հիշել է նրա «Բեկնութիւն տոմարի և Յաղագս անկիւնատուր բուոց» աշխատությունը, որից, ըստ նրա տեղեկության, «միայն քանի մը հատվածը ունինք»<sup>1</sup>։ Հ. Ղ. Ալիշանը նույն տեղեկությունն առանց փոփոխության կրկնել է «Յուշիկը»-ում գետեղած իր «Սարկաւազ Սոփեստես» վերնագրով ուսումնասիրության մեջ<sup>2</sup>։

Ալիշանը, ինչպես երևում է, մտախիչ ծանոթ չի եղել Հովհաննէսի նշված աշխատության հետ, որովհետև Հովհաննէսի այս երկը, ինչպես հետո կտեսնենք, նախ՝ Հովհաննէսի ոչ թե մեկ, այլ երկու տարբեր աշխատություններն են (նրանցից մեկը՝ «Բեկնութիւն տոմարի»-ն տոմարական բովանդակություն ունի, իսկ մյուսը՝ «Յաղագս անկիւնատուր բուոց»-ը՝ մաթեմատիկական), և ապա, նշված աշխատությունները մեկ հասել են ոչ թե հատվածներով, այլ ամբողջական բնագրերով։

Ալիշանի վերը բերված հիշատակությունից օգտվել և նրան տառացի կրկնել է Հովհաննէսի երկերի ուսումնասիրությամբ հետադադրված գրադպոզ բանասերների մեծ մասը, ընդօրինակելով նաև Ալիշանի սխալը՝ տոմարի մեկնությունը անկյունավոր թվերի հետ նույնացնելու խնդրում։ Որպես օրինակ կարելի է մատնացույց անել Հ. Գ. Զարրհանայանին, որն իր «Հայկական ճին դպրության պատմության» մեջ տոմարի մեկնությունը նույնացնելով «Յաղագս անկիւնատուր բուոց» աշխատության հետ նրանք դասում է Հովհաննէսի այն աշխատությունների շարքը, որի «ամբողջը մեր ձեռքը հասած չէ»<sup>3</sup>։

Հովհաննէսի նշված աշխատությունները իրար հետ շփոթել են նաև գոկոս Հ. Ոսկյանը<sup>4</sup> և ուրիշները։

<sup>1</sup> «Բազմավեպ», 1847, էջ 279։

<sup>2</sup> Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, հատոր Բ, էջ 300։

<sup>3</sup> Հ. Գ. Զարրհանայան, Հայկական ճին դպրության պատմություն, 3-րդ տպ., վեներտիկ, 1897, էջ 613։

<sup>4</sup> Հ. Ոսկյան, «Հովհաննէս Սարկավազի գրությունները» (տես «Հանդէս ամսօրեայ», 1905, էջ 238)։

Հովհաննես Իմաստասերի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութեան հետ, ինչպես երևում է, ծանոթ են եղել «Հայկազյան բառարան» կազմողները և նրա տեքստից որոշ քաղվածքներ արել: Այդ քաղվածքներից «Հայկազյան բառարան»-ում կարելի է մտանայցույց անել հետևյալները.

«Ճոանկիւնի» բառի համար բերված քաղվածքը. «[Թիւք] եռանկիւնի. Ա. Գ. Զ. Ժ. ԺԵ. ԻԱ. ԻԷ և այլն: Եռանկիւնույն արմատն մի մի աձէ, իսկ չորեքանկիւնին երկու: Սարկ. Տում.»<sup>1</sup>:

«Հինգանկիւնի» բառի համար բերված քաղվածքը. «Աւելորդ հինգանկիւնի. Ա. Գ. Է. Ժ. ԺԳ. ԺԷ. ԻԱ. և այլն: Ուղղորդ հինգանկիւնի. Ա. Ե. ԺԲ. ԼԵ. ԾԱ. Ը.: Աձէ հինգանկիւնին [արմատն] երեք: Սարկ. Տում.»<sup>2</sup>:

«Վեցանկիւնի» բառի համար բերված քաղվածքը. «Աւելորդ վեցանկիւնի. Ա. Ե. Թ. ԺԳ. ԺԷ. ԻԱ. և այլն: Ուղղորդ վեցանկիւնի. Ա. Զ. ԺԵ. ԻԲ. ԽԵ. ԿԶ. և այլն: Աձէ վեցանկիւնին չորս: Սարկ. Տում.»<sup>3</sup>:

«Քառանկիւնի» բառի համար բերված քաղվածքը. «Ի թիւս՝ ավելորդ (իմա՝ կրճատ) քառանկիւնի. Ա. Գ. Ե. Թ. ԺԱ. և այլն: Ուղղորդ քառանկիւնի. Մ. Գ. Թ. ԺԶ. ԻԵ. ԼԶ. և այլն: Սարկ. Տում.»<sup>4</sup>:

«Հայկազյան բառարան»-ի հեղինակները, սակայն, այս քաղվածքները բերել են ոչ թե որպէս Հովհաննէսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութեանց վերջրած քաղվածքներ, այլ նրա տոմարի օգտագործած գրականութեան ցանկում տվյալ հաստատումների ազդեցութեամբ «Սարկ. Տում.», այսինքն՝ Սարկավագի տոմարական աշխատութեանը:

«Հայկազյան բառարան»-ի հեղինակներից հետո Հովհաննէսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութեան մասին հիշատակութեան ունի Բ. Վ. Կյուլեսերյանը իր 1911 թվին դրած «Հայ աղու առաջին դասագիրքը» վերնագրով հոդվածում: Հովհաննէսի այդ աշխատութեան ընդօրինակութեանները նա տեսել է Կ. Պոլսի Ազգային մատենադարանի № 69 և № 254 ձեռագրերում: Սակայն Կյուլեսերյանը, ինչպես երևում է, մտախիչ չի ուսումնասիրել այդ աշխատութեանը և վերջնականապես չի ճշտել նրա բովանդակութեանը. ընդունելով այդ աշխատութեան իվարանական տեքստ լինելը, նա միաժամանակ ենթադրում է, որ կարող է այն և «երեսական» լինել. «Ազգային մատենադարանի թիվ 69-ը (Փիլոն երբայեցի), — գրում է նա, — իր 601—611 էրեսներուն մեջ կրովանդակե իվարանական գործ մը, որ կարծես բէ ընդարձակ Գերական մըն է (ընդգծումը մերն է — Ա. Ա.) և կկրէ սա խորագիրը. «Յովհաննու քահանայի Յաղագս անկիւնաւոր թուոց...» (Հմմտ. նույն մատենադարանի թիվ 254 ձեռագրի (Վեցհազարչակի) հետ, էր. 44—49)»<sup>5</sup>:

Հովհաննէսի «Անկյունաւոր թիւեր»-ի մասին վերը բերված հիշատակութեանները միջանկյալ և կցկտուր են, ուստի և դարմանալի չէ, որ ոչ որ նրանց վրա առանձին ուշադրութեան չի դարձրել: Այնպիսի լուրջ և մանրակրկիտ կովկասագետ, ինչպիսին պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկն է, ուսումնա-

<sup>1</sup> «Նոր բացդիրք Հայկազեան լիզուի», Վենետիկ, 1836—1837, հատոր 1, էջ 662—663:

<sup>2</sup> Նույն տեղը, հատոր 2, էջ 99:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 817:

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 992:

<sup>5</sup> Բ. Վ. Կյուլեսերյան, «Հայ աղու առաջին դասագիրքը» (տես «Անանիտ», 1911, № 3—4, էջ 70):



սիրենյով Հայաստանի և Վրաստանի գրական գիտությունների պատմությունը, տեղեկություն չի ունեցել և ոչինչ չի գրել Հովհաննեսի նշված աշխատության մասին իր «Հայաստանի և Վրաստանի գրական գիտությունների շուրջ» վերաատությանը արժեքավոր ուսումնասիրության մեջ<sup>1</sup>:

Հովհաննեսի «Յազազս անկիւնատըթ թուոց» աշխատությունը, որպես մասնատիկական գործ, առանձնահատուկ ուշադրության առարկա է սկսել դառնալ միայն վերջին տարիներս Մայր Հայրենիքի հայագետների կողմից՝ բնական գիտությունների պատմության ուսումնասիրության կապակցությամբ, մի բան, որ բոլորովին աչքաթույ է արված եղել անցյալում<sup>2</sup>:

Հովհաննեսի նշված տեքստի վրա, որպես մասնատիկական աշխատության, առաջին անգամ կանգ է առել տողերիս հեղինակը 1939 թվին, իր «Յոթներորդ դարի հայ գիտնական Անանիա Ծիրակացու թվարանության դասագիրքը» վերնագրով հոդվածում: Խոսելով Մատենադարանի № 1770 ձեռագրի պարունակած երկրաչափական բովանդակություն ունեցող մի պատասխիկ մասին տողատակ ծանոթության մեջ մենք նշել ենք, որ ա) հաշված պատասխիկը Հովհաննեսի «Յազազս անկիւնատըթ թուոց» աշխատության պատասխիկն է, բ) որ Հովհաննեսի «Յազազս անկիւնատըթ թուոց» աշխատությունը ունի ոչ թե սամարական, այլ մասնատիկական բովանդակություն և գ) որ այդ աշխատության ամբողջական տեքստը հայնաբերված է Մատենադարանում<sup>3</sup>:

Երկու տարի հետո, 1941 թվին, Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի այդ նույն պատասխիկի վրա կանգ է առել դոց. Տ. Գ. Հարությունյանը, իր «О таблице полигональных чисел А. Ширакаци» վերնագրով հոդվածում: Մակայն նա պատասխիկը համարել է ոչ թե Հովհաննեսի աշխատության հոտվածք, այլ՝ Անանիա Ծիրակացու<sup>4</sup>:

Հետագայում Հովհաննեսի այս աշխատությանը մենք վերագարձել ենք նորից մեր «Անանիա Ծիրակացու մատենագրությունը» աշխատության մեջ, «Անկյունավոր թվեր»-ը ենթադրյալ տակ, և հույց ավել, որ այդ երկը, ճիշտ է որ գալիս է հնից, սակայն այն կցված է Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ին և նրա օրգանական մասն է կազմում<sup>5</sup>:

Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի վրա, վերջերս, ավելի հանգամանորեն, նրա մասնատիկական արժեքը վեր հանելու տեսանկյունով, կանգ է առել դոց. Գ. Պետրոսյանը իր «Հովհաննես Սարկավազի Անկյունավոր թվեր» վերնագրով հոդվածում, որը տպագրվել է 1945 թվին, Հայկ. ՍՍԲ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագրի մեջ: Գոց. Գ. Պետրոսյանը, ուսումնասիրելով նշված երկը, եկել է այն եզրակացություն, որ ա) նշված տեքստը անվիճելիորեն պատկանում է Հովհաննեսին, բ) նրա պարունակությունը թվերի տեսությունն է, և այն որպես դասագիրք գործադրվել է միջնադարյան հայկական դպրոցներում, գ) Հովհաննեսի տվյալ աշխատության հավանական աղբյուրն է հանդիսացել Նիկոմախոսը կամ նրա սկզբունքով

<sup>1</sup> М. М. Меликсет-Бекоев, К истории точных наук в Армении и Грузии, Тбилиси, 1930, էջ 224—232.

<sup>2</sup> Հովհաննեսի այս աշխատությունը չի հիշված նաև պրոֆ. Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմության» մեջ, Հովհաննեսի երկերի թվաչափքում (Բ հատորում):

<sup>3</sup> Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր 11, էջ 249:

<sup>4</sup> Մատենադարանի «Գիտական նյութերի ծագումում», 1941, հատոր 1, էջ 53:

<sup>5</sup> Ա. Աբրահամյան, Անանիա Ծիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 68—71:

կազմված Յուդեոսի և ուրիշների աշխատութիւնները և դ) Հովհաննէսի այս և ճշգրիտ դիտութիւնների գծով գրած մի քանի այլ աշխատութիւններն ապացուցում են, որ նա «իր ժամանակի խոշոր գիտնականներից է ոչ միայն պատմութեան և գրականութեան բնագավառում, այլ նաև ճշգրիտ դիտութիւնների բնագավառում»<sup>1</sup>: Գոց. Գ. Պետրոսյանն իր հոդվածի հավելվածում հրատարակել է Հովհաննէսի նշված աշխատութեան աղյուսակները, վերջնելով այն Մատենադարանի № 1170 ձեռագրից:

Հովհաննէսի «Անկյունավոր թվեր»-ի ուսումնասիրութեան պատմութիւնն ամբողջացնելու համար ասենք, որ այդ տեքստը սոմարի հետ միասին հիշատակված է զոհու. Ե. Տեր-Մինասյանի «Հազրատի գալրոց և Հովհաննէս Սարկավազ վարդապետ» վերնագրով հոդվածում<sup>2</sup>, Մելիքսեթ-Քեկովի «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց» վրացերեն գրած աշխատութեան մեջ<sup>3</sup> և մեծանուն Լ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի մեջ<sup>4</sup>:

Նախքան նշված աշխատութեան պարունակութեան մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ անել նրա ձեռագիր ընդօրինակութիւնների վրա:

\* \* \*

Հովհաննէսի «Անկյունավոր թվեր»-ի ձեռագիր ընդօրինակութիւններից մինչև այժմ խոսվել է Մատենադարանի երեք ձեռագրի մասին—№ № 1770, 4150 և 8973: Առաջինի մասին խոսել ենք մենք, իսկ մյուս երկուսի մասին՝ զոց. Գ. Պետրոսյանը:

Մատենադարանի ձեռագրերում մեր կատարած ուսումնասիրութիւններից սրբազինց, որ մեզ են հասել Հովհաննէսի «Յաղագս անկիւնատր թուոց» աշխատութեան ոչ թե երեք, այլ ավելի քան տասը ձեռագիր ընդօրինակութիւնները, որոնցից երկուսն ամբողջական են, իսկ մնացածները՝ թերի կամ առանձին համվածներով:

1944 թվին նրուսաղեմում Ազգային պատրիարքարանի մատենադարանի մեզ հետաքրքրող մի քանի ձեռագրերը նայելիս տեսանք, որ այնտեղ եւ կա Հովհաննէսի «Յաղագս անկիւնատր թուոց»-ի մի ընտիր ընդօրինակութիւն, որը գրանցված է 157 թվահամարի տակ<sup>5</sup>:

Հետագա ուսումնասիրողների դործը հեշտացնելու համար անհրաժեշտ ենք համարում ստորև բերել Մատենադարանում եղած՝ Հովհաննէսի «Յաղագս անկիւնատր թուոց»-ի ձեռագիր ընդօրինակութիւնների համառոտ նկարագրութիւնը, դասավորված համարական կարգով.

1. № 437, թ. 126ա—127ա: Չունի հեղինակի անվան հիշատակութիւնը: Վերնագրված է «Խոստ եռանդիւնեացն»: Սկսվում է այսպես՝ «Անկիւնատր թուոցդ վախճան է. երեսկն է...»: Վերջանում է «...և միջինն սոցա հա-

<sup>1</sup> Գ. Պետրոսյան, Հովհաննէս Սարկավազի Անկյունավոր թվերը (տես Տեղեկագիրը Հայկ. ՍՍԹ Գիտութիւնների ակադեմիայի, Հասարակական գիտութիւններ), 1945, էջ 341:

<sup>2</sup> Տես «Արարատ», 1901, էջ 341:

<sup>3</sup> Տես Մելիքսեթ-Քեկովի նշված աշխատութիւնը, էջ 150—151:

<sup>4</sup> Լ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ հատոր, էջ 571—572:

<sup>5</sup> Նշված տեքստը մեզ համար արտագրեց նրուսաղեմի ժառանգավորաց վարժապետ Լ. Աճառյանը:



բիրն է: Եւ այսպէս. Ա. Փ. Ճ. Ռ. և հազարն բիր: Եւ միջինն սոցա հարբիրն է: Տեքստը թերի վիճակում է: Չունի հեղինակի ներածականը և աղյուսակները: Վերջում Հովհաննէսի «Յաղագս անկիւնատը թուոց»-ի բացատրական տեքստի վրա կատարվել է որոշ ավելացում: Չեռագիրն ընդօրինակել է Սաւրի Նշեցիի (մահացել է 1338 թ.) Գլածորում: Գրիչը խնդրում է հիշել համընթակ Ստեփանոսին, որից ստացել է ընդօրինակութեան նախազարգափար օրինակը:

2. № 1672 (1775), թ. 159ա—159բ: Հովհաննէսի աշխատութեան վերջին աղյուսակն է, շարադրված է ուղղահայաց և հորիզոնական շարքով: Աղյուսակի ներքին լուսանցքում բերված է մի քանի տող «Անկյունավոր թվեր»-ի աստիճանական մեծացման մասին. «Եռանգիւնուցն արմատն մին մին աճէ, իսկ քառանգիւնին՝ Բ. Բ. ...»: Չեռագրի հիմնական մասը XII—XIII դարերի ընդօրինակութեան է, իսկ Հովհաննէսի աղյուսակը նոր գրչութեամբ է, հավանական է XVII դարի: Մեջ առ մեջ աղյուսակները գրված են կարմիր թանաքով, որոնք ջնջվել են: Նմանվում է № 5619 ձեռագրի ընդօրինակութեանը:

3. № 1711 (1875), թ. 17ա: Հովհաննէսի տեքստի վերջին պատասխիկը միայն: Չեռագիրն ընդօրինակել է Գավթի արեղան ՋԺԲ (1463) թվին:

4. № 1716 (1889), թ. 347ա-բ: Համեմատ է № 4150 ձեռագրի բնագրին: Միայն «բողոք» թվերն են և նրան կցված «կոճաք», «դարք» և «կըրկնապատք» թվերը: Չունի «Անկյունավոր թվեր»-ի վերջին պատասխիկը: Չեռագիրն ընդօրինակել է Ստեփանոս քահանան Չիե (1276) թվին:

5. № 1743 (1882), թ. 463բ—464ա: Հովհաննէսի աշխատութեան վերջին երկու աղյուսակներն են: Տեքստի թվերը եղծված են և վատ է կարդացվում: Չեռագիրը XIII—XIV դարերի ընդօրինակութեան է: Համեմատ է № 5619 ձեռագրի ընդօրինակութեանը:

6. № 1770 (1708), թ. 390ա—391բ, 345ա-բ, 351ա-բ, 484ա: «Անկյունավոր թվեր»-ի պատասխիկը սխալմամբ ընդօրինակված է կամ դուցե սխալմամբ կազմված է Շիրակացու թվաբանական աղյուսակին նախորդող ներածութեան և «ընդունելութեան» (գումարման) աղյուսակների միջև: Վերնագիրը՝ «Յովհաննէոս Բահանայի Յաղագս անկիւնատը քուոց»: Սկիզբը՝ «Ձի ի յուսումնասէր մանկանց, որք կամեսցին և ախորժեն զվարժումն...: Ամբողջական տեքստն է. պակասում է միայն ներածականի երկրորդ մասը՝ «Յորժամ բազմապատկել սկսանի...», մինչև աղյուսակները: Չեռագիրը կազմելիս թերթերը խառնվել են՝ թ. 390ա—391բ-ի շարունակութեանը ընկել է թ. 345, 351բ և 484ա-ում: Չեռագիրն ընդօրինակել է Աստվածատուր գրիչը Հայրապետ Չուղայեցու պատվերով, 1598 թվին:

7. № 2595 (299), թ. 236բ: Վերնագիրը՝ «Յովհաննէոս Բահանայի Յաղագս անկիւնատը քուոց»: Սկիզբը՝ «Ձի ի յուսումնասէր մանկանց...»: Տեքստն ու աղյուսակներն ամբողջական վիճակում են: Վերջանում է թ. 240բ: Ընդօրինակել է Բրաբրոն գրչուհին, 1786 թվին: Ըստ ընդօրինակված նախորդ հիշատակարանի նախազարգափար օրինակն ընդօրինակել է Չեի (1298) թվին Արմենի Աստվածածին անապատում Վահրամ գրիչը իր ուսուցչի՝ Ստեփանոս Գույնեիցեանցի հանձնարարութեամբ, «անբարի» մի ժամանակ, երբ ռազմն իսմայելացուց... յափշտակեաց զյուսթի և զպարարտ մասն երկրիս մերոյ... և բազումք անկան ի սուր սուսերի... Նկեղեցիք քակելաք և քահանայք խողխողեալք, վանորայք ապականեալք և միանձնունք ցրուեալք,

Արարիչ	Բնական	Գրգռ	Մարտիրոս	Երանյան	Գրգռ	Մարտիրոս	Երանյան	Գրգռ	Մարտիրոս	Երանյան
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	
ա	գ	զ	ժ	ժե	կա	կը	լը	կա	ժե	
ա	դ	ե	է	թ	ժա	ժդ	ժե	ժե	ժթ	
ա	դ	թ	ժզ	կե	լը	կա	կդ	ժա	ժ	
ա	դ	է	ժ	ժդ	ժզ	ժթ	կը	կե	կը	
ա	է	ժբ	կբ	լե	ժա	ժ	ժբ	ժե	ժա	
ա	է	թ	ժդ	ժե	կա	կե	կթ	լդ	լե	
ա	զ	ժե	կը	կե	կզ	լա	ժե	ժե	ժե	
ա	զ	ժա	ժզ	կա	կդ	լա	լզ	կա	կզ	
ա	է	ժը	լդ	ժե	ժա	ժե	ժե	ժե	լլ	
ա	է	ժդ	ժթ	կե	լա	լե	կզ	կա	ժե	
ա	ը	կա	կ	կե	զզ	ժլ	ժլ	լլ	լլ	
ա	ը	ժե	կբ	կա	լլ	կա	ժ	ժե	կդ	
ա	թ	կդ	կզ	ժե	ժե	ժե	լդ	լլ	լլ	

Լեկ. 2. Իմաստների «Յարգագիտական» ինքնուր բուռը: ախարսուրյան  
 292Մ-ի № 4150 ներագրից (թ. 23ա):



մանկունք գերեացր և աղջկունք վաճառեալք ի ձեռաց անօրինաց...» (Թ. 240բ—241ա):

8. № 4150 (Տաթևի № 22), Թ. 23ա—27բ: Վերնագիրը՝ «Յովհաննու Բահանայի զանկիւնատը քուցն ի փոխաբերութենէ երկրաչափութեան ձեռք»: Թերի է. շունի հեղինակի ներածականը և բացատրական տեքստը: Աղյուսակները շարադրված են ոչ թև ըստ երկարության, ինչպես մյուս ընդօրինակութիւններին մեջ են, այլ՝ ըստ լայնության: «Անկյունավոր թիվ»-ը մեկուկ ալի է, փոխարեն 14-ի, 15 է: Վերջում ալի ունի «կոճատք», «ղարք» և «քուայք» թվերը, որոնք շարադրված են դարձյալ լայնությամբ: Թ. 26ա-ում որոշ աղյուսակներ սխալմամբ կրկնվում են: Վերջում ունի հետևյալ վերջաբանը. «Անկիւնատը թուոցս վախճան կենրեական է համար, իսկ այլքդ տելորդ գրեցան յաղագս կրթութեան մանկանց և վարժման յարուստ, որպէսզի աճեցուցեն յորժամ և կամեսցին ըստ արուստին խնդրոյ: Չեռագրի գրիչը Ղազարն է, ստացողը՝ Հակոբը («Ձատացող գրոցս զՅակովբոս յիշեսցիք տերամբ, ընդ նմին և գտառապեալ տարաշխարհիկ գրիչս Ղազար յիշեսցիք ով եղարք սիրելիք» Թ. 5բ): Գրչութիւնը XIV դարի է:

9. № 5254, Թ. 125բ—127ա: Ընդօրինակված են աղյուսակներն առանց վերնագրի և ներածականի: Բացատրական տեքստը համեմատ է № 437 ձեռագրի ընդօրինակութիւնը: Ունի ճիշտ այն հավելումները, ինչ որ № 437 ձեռագրումն են: Ընդօրինակել է ՉԻԹ (1280) թվին Գեորգ գրիչը, հաշենցի, Մահկանաբերդի Գեղձուտի վանքում, ուր եկած է եղել սովորելու: Չեռագրի նախագաղափար օրինակը տրամադրել են Վահրամ և Ստեփանոս անունով իր լծակից ընկերները (Թ. 54բ):

10. № 5619 (930), Թ. 3ա—4բ: Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի երկու աղյուսակներն են առանց վերնագրի և առաջաբանի: Բացատրական տեքստը սկսում է. «Ճոանկիւնուցն արմատն Ա. Ա. աճէ, իսկ չորեքանկիւնին՝ Բ. Բ. ...»: Վերջում կրճատված է: Չեռագրի հիմնական մասն ընդօրինակված է 1176 թվին Ավետիս գրչի կողմից, սակայն, Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի տեքստը ուշ շրջանի՝ ԺԴ դարի, հավանաբար 1351 թվի, ընդօրինակութիւնն է, որովհետեւ նույն ձեռագրում ընդօրինակված ժամանակագրութիւնը շարունակողը նույն անձնավորութիւնն է, վերջինս նոր ժամանակի դեպքերի հիշատակութիւնը հասցրել է մինչև այդ թվականը:

11. № 8716, Թ. 51ա—52ա: Հատված Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի «կոճատք», «ղարք», «քուայք» և «Գ. ապատիկք» թվերի և բացատրական համառոտված տեքստը (Հմմտ. № 8973 ձեռագրի ընդօրինակության): Չեռագիրն ախտարք է, ընդօրինակված ԺԹ դարում:

12. № 8973, Թ. 79ա: Չունի վերնագիր: Սկսվում է Հովհաննեսի վերջին պատասխկից, որը տարբերվում է մյուս ընդօրինակութիւններից: Շարունակության մեջ ընդօրինակված են «Ճոանկիւնի»-ների ընդարձակ աղյուսակները գեղեցիկ ձևավորությամբ, իսկ վերջում՝ «քողբոջ» թվերի աղյուսակն է և բացատրական տեքստը համառոտված: Չեռագիրն ընդօրինակել է Օգսենդ գրիչը Կաֆայում, ՊՂԴ (1445) թվին, Ա. Անտոնի վանքում, Կաֆայի աթոռակալ Սարգիս վարդապետի պատվերով (Թ. 58բ):

<sup>1</sup> Եղված ձեռագրերից 6-ի նկարագրութիւնը տրված է Կաթինյան ցուցակում, սակայն այնտեղ ոչ մի հիշատակութիւնն չկա Հովհաննեսի «Անկյունավոր թվեր» ի մասին:

13. Երուսաղեմի Հայոց ազգային պատրիարքարանի Ս. Հակոբյանց մատենադարանի № 157, Թ. 208բ—212ա: Վերնագրված է «Յովհաննու Բանանայի Յաղագս անկիրնատր թուոց»: Ակավում է «Զի ի յուսումնասէր մանկանց...»: Վերջը՝ «...բաւական տուա քեզ վասն աշտոցիկ» (Թ. 212ա): Ամբողջական տեքստն է աղյուսակների հետ միասին: Ընդօրինակել է Սարգիս Գրիշը ՌՄԷ (1758) թվին: Ընդօրինակութեան նախագաղափար օրինակի գրիշն է հանդիսացել Վահրամ սարկավազը, իսկ պատմիրատուն Հայ գրչութեան հայտնի դեմքերից մեկն է՝ Ստեփանոս քահանա Գույներիցանցը (ԺԳ դար):

14. Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի ժողովածուի № 136 ձեռագիրը, Թ. 229բ—232բ: Վերնագրված է «Յովհաննու Բանանայի Յաղագս անկիրնատր թուոց...»: Ամբողջական տեքստն է և աղյուսակները: Ընդօրինակել է Պոլսում Աստվածատուր Գրիշը ՌԿ (1611) թվին<sup>1</sup>:

Գծրախտարար մենք ձեռքի տակ չունենք և ոչինչ ասել չենք կարող և. Պոլսի Ազգային մատենադարանի № 69 և № 254 ձեռագրերի մասին, որոնք հիշում է Բ. Վ. Կյուլենբերյանը իր «Հայ աղու առաջին դասագիրքը» վերնագրով վերը նշված հոդվածում: Ոչինչ չենք կարող ասել նմանապես Վենետիկի այն ընդօրինակութեան մասին, որից օգտվել են «Հայկազյան բառաբան»-ի կազմողները:

Բերված ընդօրինակութեան համաստ նկարագրութեաններից երկուսն է, որ մեզ հասած Հովհաննեսի «Յաղագս անկիրնատր թուոց»-ի տասնչորս ընդօրինակութեաններից միայն երեքն են ամբողջական (№ № 1770, 2595 և Երուսաղեմի 157), իսկ մնացած տասնմեկը այս կամ այն չափով թերի են:

Եթե մեզ հասած այս տասնչորս ձեռագրերը գտնվորելու լինենք բաւ նրանց ընդօրինակութեան հնութեան, ապա հնագույնը կհանդիսանա Ստեփանոս Գրիշը, որն արտագրել է 1276 թվին: Բայց եթե նկատի ունենանք նաև որոշ ձեռագրերի նախագաղափար օրինակները, որոնց մասին կոնկրետ վաստացի հիշատակութեաններ ունենք, ապա ամբողջական տեքստերից հնագույնը Երուսաղեմի ձեռագիր ընդօրինակութեանն է, որի նախագաղափար օրինակը, ինչպես ասել ենք վերևում, XIII դարում ապրած մատենագիր Ստեփանոս Գույներիցանցի պատվերով է արտագրված: Նույն ընդօրինակութեանից է առնված նաև Բրաբրոն գրչուհու 1789 թվի ձեռագիրը, որի նախագաղափար օրինակը, ինչպես երևում է նախկին հիշատակարանից, 1298 թվից է: Ընդհանրապես ամբողջական ձեռվ մեզ հասած երեք ձեռագրերն էլ (№ № 1770, 2595 և Երուսաղեմի 157) ընտիր ընդօրինակութեաններ են: Չենք տեսել և ոչինչ ասել չենք կարող Բրիտանական թանգարանի օրինակի մասին:


Հովհաննեսի «Յաղագս անկիրնատր թուոց» աշխատութեան տեքստը և աղյուսակները ձեռագրերում մեզ հանդիպում են տարբեր կառուցվածքով և խառնված ուշ շրջանի ընդմիջարկութեանների հետ:

Ո՞րն է Հովհաննեսի հարազատ տեքստը և այն ի՞նչպիսի կառուցվածք է ունեցել: Նախապես անհրաժեշտ ենք համարում այդ մասին մի քանի խոսք ասել:

<sup>1</sup> M. A. Conybeare, A catalogue of the Armenian manuscripts in the British Museum, London, 1913, p. 328.



Ի ն ք ն ա զ ի ր  
ձ հ ա ա զ ի ր



Հովհաննեսի «Յաղագս անկինաւոր թուոց»-ի տերաւը սկսում է հեղի-  
նակի ներածական խոսքով, ուր նա հայտնում է, որ իր այդ աշխատութիւնը  
գրում է ուսումնասեր այն մանուկների համար, որոնք ցանկանում են վարժ-  
վել թվերի մեջ՝ դուրսուսելու ստեղծելով շարադրված ցանկի հիման վրա  
օգտվել նրանից. «Զի ի յուսումնասէր մանկանց, որք կամիցին և ախորժեն  
զվարժումն, որ ըստ բնութեան թուոց անաշխատք եղիցին, յայնոսիկ և  
զիրաւ հասցեն ըստ տուեցելոյ առաջի եղելոյ կանոնացդ, որում ախորժենն»:  
Այնուհետև, նա հայտնում է, որ շարադրված աղյուսակները երեք շարք ու-  
նեն. առաջին շարքի մեջ «արմատն» է և «բողբոջ»-ը՝ եռանկյանի կազմած, իսկ  
մյուս երկուսը՝ առանձին-առանձին իրենց արտադրյալներով:

Ներածականում նա նշում է նաև, որ ինքը եռանկյունի թվերը հասցրել է  
մինչ 26-ը, որից հետո ցանկութիւն ունեցողը, ըստ շարադրված սկզբունքի,

կարող է շարունակել որքան և կամենա. «Իսկ եթէ ախորժեացէ որ շարժել ևս յառաջ, գիրքին է ի տուեցելոցդ, որքան և կամեսցի»:

Ներածականին հաջորդում է բացատրական մի տեքստ անկյունավոր թվերը կազմելու սկզբունքի մասին, որը պահել են միայն № № 1770 և 8973 ձեռագրերը: Նա սկսում է. «Յորժամ սկսանի գն թիւ, աւելով Ե.իցս Ե, լինի Ին...» պարբերութեամբ և վերջանում է «...որպէս Ին, որ եղև բոլոր և քառանկիւնի» պարբերութեամբ:

Բացատրական այս տեքստին հաջորդում են արմատի և բողբոջների եռանկյունու աղյուսակները, որոնք ձեռագրերում մեզ հանդիպում են երկու տարրեր խմբագրութեամբ: Խմբագրություններից մեկում եռանկյունիները շարադրված են լայնքով, իսկ մյուսում՝ երկարութեամբ:

Մեզ թվում է, որ նախնականը, հարազատը, երկարութեամբ շարադրված եռանկյունիներն են (№ № 1770 և 2595 ձեռագրերի աղյուսակները):

Որ նախնականը, իրոք, երկարութեամբ շարադրված աղյուսակներն են, այդ երևում է հեղինակի ներածականում հայտնված այն տեղեկությունից, որ ինքը կանգ է առել միայն 14 անկյունների վրա և թվերի համարական կարգը, երկարութեամբ, հասցրել մինչև 26-ը. «Յեռանկիւնեաց մինչ ի շորեքտասան գրեցաւ... բաւական համարեցայ կացուցանել պքանակութիւն գորա մինչև ցրանկորոզ վեցերորդ համար»: № № 1770 և 2595 ձեռագրերի աղյուսակների անկյունների վերջին թիվը, իրոք, 14 է, իսկ երկարութեամբ շարադրվող թվերի համարակարգը՝ 26: Սակայն, այդպես չէ «Անկյունավոր թվեր»-ի լայնքով շարադրվող ձեռագրերում (№ 4150 և այդ խմբի ընդօրինակությունները): Այստեղ «շորեքտասան անկիւնի»-ի վրա ավելացած է «հնգետասան անկիւնի»-ն, ինչպես և «կոճատք»-ի, «քուայր»-ի ու «երեքկիւնք»-ի աղյուսակների առանձին շարքը:

Տույց տալու համար թե ի՞նչ սկզբունքով են կազմված Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ը, բերենք սկզբից մի փոքրիկ հատված.


Ե ո ս ա ն կ յ ո ն ի	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ՃԱ	ՃԲ
	Ա	Գ	Զ	Ժ	ՃԵ	ԻԱ	ԻԸ	ԼԶ	ԽԵ	ՄԵ	ԿԶ	ՀԸ
	ԺԳ	ՃԴ	ՃԵ	ՃԶ	ՃԷ	ՃԸ	ՃԹ	Ի	ԻԱ	ԻԲ	ԻԳ	ԻԴ
	ՂԱ	ձԵ	ձԲ	ձԼԶ	ձՄԳ	ձՀԱ	ձՂ	ՄԺ	ՄԼԱ	ՄՄԳ	ՄՀԶ	Յ
Ք ա ո ս ա ն կ յ ո ն ի	Ա	Գ	Ե	Է	Թ	ՃԱ	ՃԳ	ՃԵ	ՃԷ	ՃԹ	ԻԱ	ԻԳ
	Ա	Դ	Թ	ՃԶ	ԻԵ	ԼԶ	ԽԹ	ԿԴ	ԶԱ	ձ	ձԻԱ	ձԽԴ
	ԻԵ	ԻԷ	ԻԹ	ԼԱ	ԼԴ	ԼԵ	ԼԹ	ԽԱ	ԽԴ	ԽԵ	ԽԷ	
	ձԿԹ	ձՂԶ	ՄԻԵ	ՄՄԶ	ՄԶԹ	ՅԻԴ	ՅԿԱ	Ն	ՆԱԱ	ՆԶԴ	ՇԻԹ	ՇՀԶ

Յեռանկյունին այս սկզբունքով շարունակվում է մինչև 14-րդ անկյունը:




Գծաբանությամբ Հովհաննեսի «Անկյունափոք թվեր»-ի ոչ մի բնագործնագրի վրեժիան մեզ չ'աչտանարեղիկցին երկրաչափական գծաձևերը:

Յուրց տալու համար, թե հետո՞ «Անկյունափոք թվեր»-ը ի՞նչպիսի կեն երկրաչափական ձևով արտահայտում, ստիպված ենք բերել առաջին դարի հույն մաթեմատիկոս Նիկոմախոսի հոնարեն տեքստի «ճառակներ»-ների և «քառանկներ»-ների աղյուսակից մի քանի նմուշ՝ որք աստույզի հաճաղատասխանում է Հովհաննեսի «Անկյունափոք թվեր» հարվին:



Երկրաչափական գծաբանությամբ այդ թվերը կարելի է արտահայտել հետևյալ ձևով (վերցնում ենք Գոց. Փումանյանի գծաբանությունից):<sup>1</sup>



«Ճառակներ» թվերի աղյուսակներին հաջորդում են եռանկյան ուղղանկյան և բոլորոջի աղյուսակները՝ շարադրված առանձին-առանձին: Այս աղյուսակները ևս № 1170 խմբի ձևապահումը շարադրված են երկաբանությամբ, իսկ № 4150 ձևապահում՝ լայնուճկային:

Քերտեք այդ աղյուսակներին երկու փոքրիկ հատվածները № 1770 ձևապահից.

<sup>1</sup> Νικολάου Γεωργίου Πυθαγορείου Ἐπιπέδοι καὶ Ἐπιπέδοι ἑξ ἑσάρων ἑξ ἑσάρων. R. Hoche, Lipsiae, 1866, էջ 89—90:

<sup>2</sup> Մառնեպոլսի Գրեյսիանոսի Նյութերի ժողովածու, հատ. 1, էջ 58:

Արևս բլեր

Շարժարեւոյ Գ. աճիկիւնի ծնանիւն	Շարժարեւոյ Գ. աճիկիւնի ծնանիւն	Շարժարեւոյ Ե. աճիկիւնի ծնանիւն	Շարժարեւոյ Զ. աճիկիւնի ծնանիւն	Շարժարեւոյ Է. աճիկիւնի ծնանիւն	Շարժարեւոյ Ը. աճիկիւնի ծնանիւն	Շարժարեւոյ Թ. աճիկիւնի ծնանիւն	Շարժարեւոյ Ժ. աճիկիւնի ծնանիւն
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Գ	Ե	Է	Թ	ԺԱ	ԺԳ	ԺԵ	ԺԷ
Դ	Է	Ժ	ԺԳ	ԺԶ	ԺԹ	ԻԲ	ԻԵ
Ե	Թ	ԺԳ	ԺԷ	ԻԱ	ԻԵ	ԻԹ	ԼԳ

Բողոք բլեր

Եւանգիլիւնի	Քարանիկիւնի	Հիւրանիկիւնի	Վեցանիկիւնի	Երբնանիկիւնի	Ութանիկիւնի	Իննանիկիւնի	Տասնանիկիւնի
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ
Զ	Թ	ԺԲ	ԺԵ	ԺԸ	ԻԱ	ԻԴ	ԻԷ
Ժ	ԺԶ	ԻԲ	ԻԸ	ԼԳ	Ն	ՆԶ	ԾԲ
ԺԵ	ԻԵ	ԼԵ	ՆԵ	ԾԵ	ԿԵ	ՆԵ	ՉԵ





Երրորդ սյունակը քառանկյունու արմատն է, իսկ չորրորդը՝ քառանկյու-  
նու բողբոջը: Առաջինի թվաշարքն է՝ 1, 3, 5, 7, 9, 11 և այլն, իսկ երկրոր-  
դինը՝ 1, 4, 9, 16, 25, 36 և այլն:

Հինգերորդը՝ հինգանկյունու արմատն է, իսկ վեցերորդը՝ հինգանկյունու  
բողբոջը: Յոթերորդը՝ վեցանկյունու արմատն է, իսկ ութերորդը՝ վեցանկյու-  
նու բողբոջը: Իններորդը՝ յոթանկյունու արմատն է, իսկ տասներորդը՝ յոթ-  
անկյունու բողբոջը:

Ուշադրության արժանի է տասնմեկերորդ սյունակի «դարբ»՝ դույզ թվե-  
րը, որն սկսում է երկուսից և հաջորդ վանդակներում երկու-երկու ավելա-  
նում՝ 2, 4, 6, 8, 10, 12, 14 և այլն:

Տասներկուերորդը «ջումլադարբ» սյունակն է (որոշ ձևապրերում դա  
կոչվում է «միաճամու դարբ»), որն սկսում է դարձյալ երկուսից, ընդունում  
է չորսի ավելացում և յուրաքանչյուր հաջորդ վանդակի թվանշանի վրա ավե-  
լանում ևս երկու: Այսպես, նրա թվաշարքը սկզբից հետևյալ պատկերն ունի-  
2, 6, 12, 20, 24 և այլն:

Տասներեքերորդ սյունակը «կոճաարբ»-ն է՝ կենս թվերը. 1, 3, 5, 7, 9,  
11, 13 և այլն:

Տասնչորսերորդ թվերի սյունակը «ջումլակոճաարբ»-ն է, որը ունի միայն  
մեկ՝ N 8973 ձևապրի ընդօրինակությունը: Սկսում է մեկից, առաջին վան-  
դակում ավելանում է երեք, իսկ այնուհետև յուրաքանչյուր հաջորդ սյունա-  
կում երկու-երկու ավելանում: Նրա թվաշարքը սկզբից հետևյալն է. 1, 4, 9,  
16, 25, 36 և այլն: Այս սյունակը, մեր կարծիքով, ուշ շրջանում է ավելա-  
ցած:

Տասնհինգերորդը «քուայբ»-ն է: Նա սկսում է ութից և հաջորդ վանդա-  
կում ութ-ութ ավելանում՝ 8, 16, 24, 32, 40, 48, 56 և այլն:

Տասնվեցերորդը «երեքկինբ» սյունակն է (τρειπίσιον): Սկսում է մե-  
կից, բազմապատկվում երեքով և ստացված գումարը հաջորդ վանդակներում  
բազմապատկվում 1, 3, 9, 27, 81, 243 և այլն:

Տասնյոթերորդը «կրկինակբ» սյունակն է (διπλάσιον), երկուսի բազ-  
մապատկությունը՝ 1, 2, 4, 8, 16, 32, 64 և այլն:

Վերջին սյունակը «չորեքկինբ»-ի սյունակն է, չորսի բազմապատկու-  
թյունը՝ 1, 4, 16, 64, 256, 1024, 4096 և այլն:

Ազյուսակներին անմիջապես հաջորդում է բացատրական մի տեքստ,  
«Խուսա Բուկից» խորագրով: Որոշ ընդօրինակություններում, օրինակ  
N 5284, այդ տեքստը շարադրված է առանց վերնագրի:

«Խուսա Բուկից» գլխին հաջորդում են «Քուայբ կրկնակի», «Քուայբ երեք-  
կինի» և «Յաղագս Բաուկին և տասնե-եկին» վերնագրերով փոքրիկ գլուխ-  
ները:

Հովհաննեսի «Յաղագս անկիւնատր թուոց»-ի բուն տեքստը վերջանում է  
հետևյալ պարբերությամբ. «Քուսական աուա քեզ վասն այսոցիկ»:

\* \*

Ո՞րն է Հովհաննեսի «Յաղագս անկիւնատր թուոց»-ի սկզբնաղբյուրը,  
ումի՞ց է օգտվել նա: Այս հարցադրումը բնական է, և թե նկատի ունենանք, որ  
Հովհաննեսը թվաբանական և երկրաչափական նոր սիստեմ չի ստեղծել,  
այլ օգտվել է ձեռքի տակ պատրաստի եղած աշխատություններից:

Գոց. Քրոմանյանը, իր «О таблице полигональных чисел А. Ширакаши» վերնագրով հոդվածում, «Անկյունավոր թվեր»-ի աղբյուր մատնացույց է արել Նիկոմախոսին<sup>1</sup>: Գոց. Գ. Պետրոսյանը ևս Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի հավանական աղբյուրն է համարում «Նիկոմախոսի աշխատությունը կամ ըստ նրա կազմած Քոչեցու և ուրիշների աշխատությունները», շնչած մի այլ տեղ «Անկյունավոր թվեր»-ի աղյուսակներում գործածված մեկ-երկու բառերի հիման վրա ենթադրվում է, որ Հովհաննեսը կարող է օգտագործած լինել արարական մաթեմատիկական աշխատությունների<sup>2</sup>:

Նիկոմախոսի թվարանական աշխատության<sup>3</sup> և Հովհաննեսի «Ցաղագս սեկինատր թուոց»-ի նշված տեքստերի համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ Հովհաննեսի մի քանի աղյուսակները իրոք նմանվում են Նիկոմախոսի աղյուսակներին: Որպես նմուշ կարող ենք մատնացույց անել հետևյալ աղյուսակները:

Գ. անկյունի	Ա.	Գ.	Զ.	Ժ.	ժե	ԻԱ.	ԼԸ.	ԼԶ.	Խե	Ծե
Գ. անկյունի	Ա.	Գ.	Թ.	ժԶ.	Իե	ԼԶ.	ԽԹ.	ԿԳ.	ՁԱ.	ճ
ե. անկյունի	Ա.	ե	ժԲ.	ԻԲ.	Լե	ԾԱ.	Հ.	ՂԲ.	ճԺԷ.	ժԽե
Զ. անկյունի	Ա.	Զ.	ժե	ԻԸ.	Խե	ԿԶ.	ՂԱ.	ճԻ.	ճԾԳ.	ճՂ.
Է. անկյունի	Ա.	Է.	ժԸ.	ԼԳ.	Ծե	ՁԱ.	ճԺԲ.	ճԽԸ.	ճԶԹ.	ՄԼե

Ներկա աղյուսակը մենք վերցրել ենք Մատենադարանի № 1711 ձեռագրից<sup>4</sup>: Նա տառազրի համապատասխանում է Նիկոմախոսի հետևյալ աղյուսակին<sup>5</sup>.

τριτάγωνοι	α	γ	ς	ι	ε	κα	κγ	λς	μς	νε
τετρατάγωνοι	α	δ	θ	ις	κε	λς	μθ	ξδ	πα	ρ
πεντάγωνοι	α	ε	ιβ	χβ	λε	να	ο	ψβ	ριζ	ριμ
ἑξάγωνοι	α	ς	ε	κγ	μς	ξς	φα	ρλ	ργγ	ργ
ἑπτάγωνοι	α	ζ	ιγ	λδ	νε	πα	ιβ	ριμγ	ριθ	σλε

<sup>1</sup> Մատենադարանի «Գիտական աշխատությունների ժողովածու», էջ 88:

<sup>2</sup> Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, 1946, № 4, էջ 32:


<sup>3</sup> Նիկոմախոսը աղբյուր է մեր էրայի առաջին դարում: Նա է կազմել առաջին թվարանական ուսմունքը որպես ինքնուրույն առարկա, առանց երկրաչափական պատկերացման: Նրա էթվարանության ներածությունը կարեոր ձեռնարկ է հանդիսացել հետագա դարերում (տես այս մասին М. Е. Ващенко-Захарченко, История математики, т. I, Киев, 1883, էջ 122—126):

<sup>4</sup> ՀՊԶԲ, ձեռ. № 1711:

<sup>5</sup> Նիկոմախոսի հունարեն տեքստը, էջ 50:



Եռանկիւնի	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
	Ա	Գ	Զ	Ժ	ԺԵ	ԻԱ	ԻԸ	ԼԶ	ԽԵ



Մական աղյուսակների այս համեմատության հիման վրա մենք չենք կարող պնդել, որ Հովհաննէսի աղյուսակավոր թվերը նիկոմախոսի հայերեն տառացի թարգմանությունն է, որովհետև նախ՝ ոչ բոլոր աղյուսակների մեջ նմանություն կա, և ապա, բացատրական տեքստը միանգամայն տարբեր է:

Հովհաննէսի «Անկյունավոր թվեր»-ի ազդրյուրը պարզելու տեսակետից արժեքավոր է նրա կենսագրի մի հիշատակությունը: Վերջինս, խոսելով Հովհաննէսի օգտագործած ազդրյուրների մասին, այդ շարքում նշում է Փիլոնի մաթեմատիկական մի երկր. «Զթուականաչափ խարոցս Փիլոնի դարից և կուճատաց, և դառ ի նոցանէ գծնունդս և ի ներքոյ տասնեկին գծնունդս և թանց, և գանկատարութիւնս ի յատուկան ստուգակարգս, յաճունս և յանաճականս»<sup>1</sup>: Հիշելով Փիլոնի «դար» ու «կոճատ» թվերը և նրանցից սկիզբ առնող մյուս թվերի շարքը՝ կենսագիրն այստեղ, անկասկած, նկատի ունի մաթեմատիկական մի ինչ-որ տեքստ: Մեր ջանքերը՝ գտնել Փիլոն երբայցեղու մաթեմատիկական բովանդակությամբ այդ աշխատությունը նրա հրատարակված մատենագրության մեջ, տարողյուն անցան: Կրումբախի «Geschichte der Byzantischen literatur»-ի մեջ մաթեմատիկական նման բովանդակությամբ ոչ մի տեքստ չի հիշվում: Միայն Փիլոնի մատենագրության հին հայերեն թարգմանության մեջ, որը հրատարակել է բանասեր Ավգերյանը, զգար և կոճատ» թվերի և անկյունավոր այլ թվերի մասին խոսված է ստորև բերված երկու հատվածներում:

«Եւ երեքանկիւնիք են չորս այսոքիկ, Ա. Գ. Զ. Ժ. որ լինին Ի.: Չորեքանկիւնիք չորք, Ա. Գ. Թ. ԺԶ. լինին Լ.: Եւ հինգանկիւնիք չորք, Ա. Ե. ԺԲ. ԻԲ. լինին քառասուն: Վեցանկիւնիք չորք, Ա. Զ. ԺԵ. ԻԸ. լինին Ծ.: Եւ եօթնանկիւնիք չորք, Ա. Է. ԺԸ. ԼԳ. լինին վաթսուն: Այնոցիկ որ ի լինելութեանն ինդրոց և յուժմանց»<sup>2</sup>:

«Չորրորդ, բազկանայ յերեսուն և ի վեցէ և ի վաթսուն և ի չորից, որ է քուեայ՝ միանգամայն և չորեքանկիւնի: Հինգերորդ՝ բազկանայ ի մի քստ

<sup>1</sup> ՀՊԶԲ, ձեռ. № 2680 (տես այս մասին մեր ուսումնասիրությունը «Էջմիածին» ամսագրի անցյալ տարվա մայիս—դեկտեմբեր միացյալ համարում): Ի դեպ, վերջերս ծանոթանալով պրոֆ. Բեյլիբոսի-Բեկոյի «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց» վրացերեն լեզվով գրված աշխատությանը, իմացա, որ Հովհաննէսի նշված կենսագրական մեղնից առաջ ծանոթ է եղել պրոֆեսորին և նա մեջբերումներ է արել այդ տեքստից:

<sup>2</sup> «Փիլոնի երբայցեղույ մնացորդը ի հայտ», աշխատությամբ Ավգերյանի, Վենետիկ, 1826, էջ 58:

միտքէ կոճատացն յալացանէ, Ա. Գ. Ե. Թ. ԺԱ. ԺԳ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. ԺԹ. լինին ճ.: Վեցերորդ՝ բաղկանայ ի բառուց, ի միակայ կրկնակաց, և ի շորեքկնաց կրկնակաց, Ա. Բ. Գ. Ը. լինին ժԵ.: Եւ ի շորեքկնացն, Ա. Դ. ԺԶ. ԿԳ. լինին ԾԵ.՝:

Բերված հատվածների նմանությունը Հովհաննեսի նշված աշխատության հետ շատ ընդհանուր է և չի համընկնում Հովհաննեսի «Յաղագս անկիւնատը թուոց»-ի հետ:

Մենք փորձեցինք պարզումներ կատարել Փիլոնի թարգմանական այն տեքստերի մեջ, որոնք պահպանվել են Մատենադարանի գրչագրերում և հրատարակված չեն: Մեր աշխատանքը, բարեբախտաբար, հաջողությամբ պսակվեց. մեզ հաջողվեց պարզել, որ Հովհաննեսի «Յաղագս անկիւնատը թուոց» աշխատության բացատրական տեքստի աղբյուրն է հանդիսացել Փիլոն Երբայեցու «Յաղագս տասն բանիցն» մեկնությունը, որը պահվել է Մատենադարանի ձեռագրերում: Այդ տեքստի մասին հիշատակություն չկա Զարրհանալյանի մատենադրություն պատմության մեջ:

Ուշագրություն արժանի է, որ Փիլոնի «Յաղագս տասն բանիցն» աշխատությունը մեկնվել է հայ մի հեղինակի կողմից՝ ձևովմումե Եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Երբայեցոյ՝ վերնագրով: Հայ մեկնիչի անձնավորությունը հաստատագես հայանի չէ, բայց գրիչը, հիմնվելով այն փաստի վրա, որ այս մեկնությունը նախորդել է Հովհաննեսի «Յաղագս անկիւնատը թուոց» աշխատությունը, ենթադրել է, որ այս մեկնության հեղինակը Հովհաննեսը պիտի լինի: Գրիչն այդ մասին գրում է. «Ձեռմունք Եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Երբայեցոյ... Արարեալ ի մերոց վարդապետաց՝ որպէս ցուցանէ կերպն շարագրութեան: Այլ յումմէ գրչն՝ անյայտ, զի չկայր յօրինակին՝ անուն յումոզին: Բայց զի անկիւնատը թուոց խրատն, որ ի վերջ է, Սարկաւազ Յովհաննէս վարդապետն է արարեալ, և ես զայն ըստ սոյն գրոցս և սոյն դատութեամբ ի միում տփոջ գտի, վասն որոջ թուեցաւ ինձ՝ թէ և զայս յումմունք նա իցէ արարեալ, քանզի և բանն համանման երևի նորին շարագրութեանն»<sup>2</sup>:

Հովհաննեսն իր «Յաղագս անկիւնատը թուոց» աշխատության մեջ Փիլոնի «Յաղագս տասն բանիցն» աշխատությունից օգտվել է տառացի, ուղղակի պատճենահանել է այն: Անհրաժեշտ ենք համարում երկու հատված դուրսհան ձևով բերել այստեղ:

«Ժ. Եկի շարագրութիւն թիւ ծնանի գեւն և ԿԾ.ն: որանչիլի չինքեան ունելով զեղեցկութիւն: Քանզի նախ առաջին զոյացաւ ի բուէից, ի կրկնակէ և յԿ.կնակէ, յայնցանէ, որ մի ըստ միոջէ շարագրեցան: Երբու թէ որպէս ի կրկնակին՝ Ա. Բ. Գ. Ը, լինին սորա եժ.ան: Երեքկնոք և Գ.կնէն՝ Ա. Գ. Թ. ԻԷ, որ են Խ. և են սորա շարագրելով ԾԳ, (որոս և Պգատան ի Տիմէո-

«Իսկ որ ի նմանէ որպէս յարմատայ բուսեալ՝ հինգն և յիսունն, յալոցս տասնեյոժորդ ունի աստքինութիւնս: Առաջին՝ զի զոյացաւ ի բուէից, ի կրկնակէ, և յերեքկնէ, յայնոցիկ, որ մի ըստ միոջէ շարագրեցան: Ի կրկնակէ այսպէս՝ Ա. Բ. Գ. Ը, լինին սորա ժԵ: Երեքկնոք, և յերեքկնէն՝ Ա. Գ. ԻԷ. շարագրեալք սորա լինին ԾԵ:

<sup>1</sup> «Փիլոնի Երբայեցոյ մնացորդք ի հայ», աշխատությունը Ավգերյանի, Վեներիկ, 1826, էջ 281:

<sup>2</sup> ՀԳՁԾ, ձև. № 2595, թ. 241ր:



սին յիշէ յագագս ողեծնութեան, սկըսեալ աշտպէս. Մի՛ ի բաց երարձ յամենայնէ մասն և որ զհետ աշտորիկ):

Երկրորդ՝ Ծե թիւն ժ. եկին է շարագրութիւն, իսկ Գձ. ն, Զ և Ե. ն գորութեամբ ժ. եկին է, քանզի եթէ զԵրարարանչիւրք ի սոցանէ, ի միակէն մինչև ի ժ. եակն բազմապատիկ արարեալ շարեացես՝ զոցես գասացեալն թիւն զԳձ. ոցն զԶ և զհինգն: Իսկ Գձ, Զ և Ե. ն յԾ և Ե. ն՝ Է. պատիկ է: (Երիցս Ծե՛ Գ. անկիւնի է, որպէս Զ. ն և որպէս նոյն ինքն ժ. եակն):

Չորիցս եթէ թուեցես զմին՝ զոցես Զ բաւ բազադրութեանն տասնեակ, զյԾ և զԵ. ն: Հինգերորդ՝ սեռականագոյն, Ը. եակ Զ. եակ իմն բազմապատիկ ինքեան եզակի գորութիւն է, որ ծնանի զԸ և զԶ, որոյ է՝ երկրիցս չորք, սորա մասունք ծնեալ աշտպէս. երկիցս՝ Ը՛ և ժ, Գ՛ ժԲ, Գ՛ Թ, Զ՛ Զ, Թ՛ Գ, ժԳ՛ Գ, ժԸ՛ Բ, երեսուն և վեցիցս՝ մի. միանգամայն լինին մասունք Ը թիւն Ծ և Ե: Մակեաանի ինքն՝ Ե, որք մի բաւ միողէ ծնանի զյԾ և զԵ. ն... Իբրև թէ որպէս Գ, Զ, ժԵ, ԲԸ, լինի ԾԵ... 2:

Ը... Եւ վասն աշտորիկ որք յինկս վաշիչարք զարմացի ունկոզ (գոտաներեակն) յինքեանն զանպատն բնութիւն, և զգատականն, քանզի անագասն կարգեալ գասի բաւ նշանի միայն, իսկ գատականն բաւ երից տեսակաց, և վեր ի վերոյ՝ զծոյ և երեման, և հաստատոյ, քանզի որ երկուք նշանօք յանկեցեալ է զիծ, իսկ որ յերեսուն գատեալ է վեր ի վերոյ երեսուն ծորեալ ի լայնութիւն զմին: Իսկ որ յերիս ի հաստատուն երկայնութեան և լայնութեանն խորութիւն ստեալ, որովք զոյսնայ բնութիւն: Քանզի աւելի քան զերիս գատութիւնս ոչ ծնաւ: Եւ սկզբնապիպ սոցա թիւք են. անգատ նշանին՝ մի. և զմին՝ երկու. և վեր ի վերոյ երեսունն՝ երեք... 2:

Երկրորդ՝ Ծե թիւն տասնեկին շարագրութիւն, իսկ ԶԶ. ն, գաւրութեամբ տասնեկին է, քանզի թէ զԵրարարանչիւրք ի նոցանէ, ի միակէն մինչև ի տասնեակն, բազմապատիկ արարեալ շարագրեցես զերեք հարիւրցն զԶ և հինգին, իսկ յԶ. էն Ծե. ին եթնապատիկ է:

Երրորդ՝ եթէ թուեցես զմինն՝ զոցես Զ բաւ բազադրութեանն տասնեակ զԾ. ն:

Չորրորդ՝ սեռականագոյն վեցեակ՝ ինքն յինքեան բազմապատիկ եզեալ գաւրութիւն է, որ ծնանի զԸ, որոյ երկիցս չորք մասունքն ծնեալք աշտպէս. երկիցս Ը՛ և ժ, երիցս երկաստան, չորիցս՝ Ը՛նն, վեցիցս՝ վեց, իննիցս՝ չորք, երկաստանիցս՝ երեք, տասն և ութիցս՝ երկու, երեսուն և վեցիցս՝ մի: Միանգամայն մասունք ութ թիւն՝ ԾԵ:

Հինգերորդ զի ի մակեաանի կեանաց հնգից մի բաւ միողէ ծնանի ԾԵ, աշտպէս Գ, Զ, ժ, ժԵ, ԲԸ, լինի ԾԵ... 2:

Ը և թե երրորդ՝ քանզի աւելի յինքեան տասնեակի և յերկրաչափութեանէ գատնագասն բնութիւն և զգատականն Անպատն կարգեալ գասի բաւ նշանի միայն, իսկ գատականն բաւ երից տեսակաց մակերեակն զծոյ, երեման և հաստատոյ, քանզի որ երկուք նշանօք յանկացեալ է՝ զիծ է, իսկ որ յերկուցն գատեալ է, մակերեսութիւն ծորեալ ի լայնութիւն զմին, որ յերիս՝ հաստատուն, երկայնութիւն և լայնութիւն, խորութիւն անեալ, որովք զոյսնայ բնութիւն, քանզի գաւելի քան զերից գատութիւնս ոչ ծնաւ: Եւ սկզբնապիպ սոցա թիւք են. անգատ նշանին՝ մի, և զմին՝ երկուսն: Եւ վեր ի վերոյ երեսունն՝ երեք... 2:

Այսպիսով, պարզվում է, որ Հովհաննեսն իր «Յաղագս անկիւնաւոր թուոյ»-ի բացատրական տերտի մեջ օգտվել է Փիլոնի «Յաղագս տասն բա-

1 ՀՊԶՄ, ձեռ. № 2595, թ. 127ա—127բ:  
2 Վերջրի կնք մի քանի բնագործնակութեան հիման վրա մեր կազմած տերտից:  
3 ՀՊԶՄ, ձեռ. № 2595, թ. 128բ—129ա:  
4 Բերեկ կնք սեր կազմած տերտից:



նիցն» վերնագիր ունեցող աշխատությունից, ըստ որում օգտվել է հայերեն թարգմանությունից:

Մնում է, սակայն, պարզել ազյուսականների ազդյուրը: Դժվար չէ կոահել, որ Հովհաննեսն իր ձեռքի տակ, բացի Փիլոնից, ունեցել է երկրաշափահան ազյուսականներ, որոնք, հավանական է, շատ վաղուց հունարենից թարգմանվել էին հայերեն և որոնց փշրանքները դեռևս պահպանվում էին XII դարում: Ուշագրություն արժանի է, որ Հովհաննեսի «Յաղագս անկիւնատոր թուոց»-ի որոշ ընդօրինակություններ ունեն գրչի հետևյալ կարևոր հիշատակությունը. «Անկիւնատոր թուոցդ վախճանն չէ է, բայց այլքդ վասն կրթութեան մանկանց Յովհաննու քահանայի արարեալ զանգիւնատոր թիւսդ ի փոխարեբութենէ երկրաշափահան ձեոց»: Ուրեմն, ըստ հիշատակագրի, նախապէս «Անկյունավոր թվեր»-ի չոթերորդը եղել է, իսկ շարունակությունը Հովհաննեսն աշակերտների կրթության համար է պատրաստել:

Այս աեսակեաց ուշագրության արժանի է Հովհաննեսի վերջին ազյուսակը, որ շարադրված է միայն մինչև «է.անկիւնի»-ն: Այդ ազյուսակը մեզ պատահում է հաճախ առանձին և հին գրչագրերում: Այդ հանգամանքը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ այն կազմված է եղել Հովհաննեսից առաջ, վերջինս նրանից է օգտվել և այն կցել իր աշխատությանը որպէս հավելված: Գուցէ և ուշ շրջանում այդ ազյուսակն ընդօրինակողներից մեկն ու մեկը ամբողջացնելու նպատակով է կցել Հովհաննեսի տեքստին: Ի դեպ, դոց. Գ. Պետրոսյանը իր վերը հիշված աշխատության մեջ մեզ մեզադրել է այն բանում, որ մենք, իբր թէ առանց հիմք ունենալու, նշված ազդյուրը ավելի հին ենք համարել, քան Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ը: «Ըստ Արքահամբանի, — գրում է նա, — զուրս է գալիս, որ նոր հեղինակը (Հովհաննեսը) այդ նոր շարքերը ավելացրել է օգտվելով Ա. Շիրակացու «գար» և «կոճատ» թվերից: Միանգամայն ճիշտ է, որ VII դարում Ա. Շիրակացին գործ է ածել զույգ և կենտ թվերը... սակայն այդ բոլորը ոչ մի հիմք չեն տալիս վերևում հիշված եզրակացության համար» (էջ 29): Իրականում մենք նշված ազյուսակը ոչ միայն չենք համարել Շիրակացու հեղինակած գործը, այլև այդ խնդրում վիճել ենք դոց. Թումանյանի հետ: Ինչ վերաբերում է այդ ազյուսակների ավելի հին լինելուն, ապա այդ մասին վկայում է վերը բերված հիշատակությունը:

\* \* \*

Հովհաննեսի «Յաղագս անկիւնատոր թուոց»-ի վրա, ինչպէս ասացինք, հետադաշում այլ հեղինակների կողմից կատարված են որոշ լրացումներ: Դժվար չէ այդ լրացումները ճանաչել համեմատական ուսումնասիրության հիման վրա: Նկատելի է, որ այդ ավելացումների մի մասը ինքնուրույն է, իսկ մյուս մասը՝ ընդօրինակություններ անցյալից մնացած մաթեմատիկական որոշ տեքստերի, որոնք կցվում են Հովհաննեսի վերը հիշված աշխատությանն՝ ամբողջացնելու, ամփոփելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել, որ Հովհաննեսի «Յաղագս անկիւնատոր թուոց»-ի վրա կատարված հավելումներից մի բանիսը խիստ արժեքավոր են և հնարավորություն են տալիս մեզ որոշ պատկերացում ունենալ մաթեմատիկայի զարգացման վիճակի մասին և մոտ անցյալում:

Այդ տերտերից առանձնապես արժեքավոր են Պլուժագործատի բազմապատկության աղյուսակները, որոնցից մի նմուշը հրատարակել ենք մեր «Սնանիա Շիրակացու մատենագրություն» և «Հայկական հնագիտություն» աշխատությունների մեջ: Մասնատրիկայի պատմությամբ զբաղվող մեր մասնագետներին նյութ մատակարարելու նպատակով անհարժեշտ ենք համարում բերել այստեղ Պլուժագործատի բազմապատկման հունական աղյուսակներից մեկը, համեմատելով հայկական թարգմանության հետ.

α	β	γ	δ	ε	ς	ζ	η	θ	ι
β	δ	τ	η	ι	ιβ	ιδ	ις	ιη	κ
γ	ς	θ	ιβ	ις	ιη	κ	κδ	κζ	λ
δ	η	ιβ	ις	κ	κδ	κη	λβ	λς	μ
ε	ι	ις	κ	κς	λ	λς	μ	μς	ν
ς	ιβ	ιη	κδ	λ	λς	μβ	μη	νδ	ξ
ζ	ιδ	κ	κη	λς	μβ	μδ	γς	ξγ	ο
η	ις	κδ	λβ	μ	μη	νς	ξδ	οβ	π
θ	ιη	λζ	λς	μς	νδ	ξδ	οβ	πα	ϕ
ι	κ	λ	μ	ν		ο	π	ϕ	ρ

Nicomax, էջ 51

«Այս է դուռն Պիբագորային»

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ
Բ	Դ	Զ	Ը	Ժ	ԺԲ	ԺԴ	ԺԶ	ԺԸ	Ի
Գ	Զ	Թ	ԺԲ	ԺԵ	ԺԸ	ԻԱ	ԻԴ	ԻԷ	Լ
Դ	Ը	ԺԲ	ԻԶ	Ի	ԻԴ	ԻԸ	ԼԲ	ԼԶ	Խ
Ե	Ժ	ԺԵ	Ի	ԻԵ	Լ	ԼԵ	ԽԹ	ԽԵ	Ս
Զ	ԺԲ	ԺԸ	ԻԴ	Լ	ԼԶ	ԽԲ	ԽԸ	ՍԴ	Կ
Է	ԺԴ	ԻԱ	ԻԸ	ԼԵ	ԽԲ	ԽԹ	ՍԶ	ԿԳ	Հ
Ը	ԺԶ	ԻԴ	ԼԲ	Խ	ԽԸ	ՍԶ	ԿԴ	ՀԲ	Ձ
Թ	ԺԸ	ԻԷ	ԼԶ	ԽԵ	ՍԴ	ԿԳ	ՀԲ	ՁԱ	Ղ
Ժ	Ի	Լ	Խ	Ս	Կ	Հ	Ձ	Ղ	Ճ

ՀՊԶԲ, ձև», № 1711, թ. 14բ—15ա

Պլուժագործատի նման աղյուսակներ ունենք Մատենադարանի մի քանի ձեռագրերում, որոնցից հնագույն բնագործի նախնականությունը 1463 թվականից է (№ 1711, թ. 14բ—15ա):

Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց»-ի վրա կատարված նման արժեքավոր ավելացումներից է № 1711 ձեռագրի ավելացումը, որը բաղկացած է Պյոթագորասի աղյուսակից և գործնական խորհուրդներ պարունակող մի տեքստից բազմապատկութիւն կատարելու եղանակի մասին:

Քաղմապատկութիւն գործնական խորհուրդներ պարունակող տեքստը բարդ, բայց միաժամանակ հետաքրքիր տեքստ է: Տեքստը երկար է, շէնք բերում, բայց որոշ պատկերացում տալու համար անհրաժեշտ ենք համարում համատուտակի ծանոթացնել նրա բազմապատկութիւն եղանակի հետ:

Վերցնենք 8-ով 9-ը բազմապատկելու նրա օրինակը.

1) ութը գումարվում է իննին՝  $8+9=17$ , 2) 17-ի տասնավորը բազմապատկվում է միավորով՝  $10 \times 7=70$ , 3) 10-ից հանվում է առաջին գումարելին՝  $10-8=2$ , 4) ապա հանվում է երկրորդ գումարելին՝  $10-9=1$ , 5) երկու մնացորդները բազմապատկվում են՝  $2 \times 1=2$ , 6) մնացած թիվը գումարվում է երկրորդ գործողութիւն գումարի վրա՝  $70+2=72$ :

Կամ վերցնենք երեք այլ թվերի բազմապատկութիւնը.

$6 \times 7$	$4 \times 9$	$6 \times 8$
$6+7=13$	$4+9=13$	$6+8=14$
$10 \times 3=30$	$10 \times 3=30$	$10 \times 4=40$
$10-6=4$	$10-4=6$	$10-6=4$
$10-7=3$	$10-9=1$	$10-8=2$
$3 \times 4=12$	$6 \times 1=6$	$4 \times 2=8$
$30+12=42$	$30+6=36$	$40+8=48$

Եղ այս ձևով կարելի է միլիոնավոր թվեր բազմապատկել միայն այն պայմանով, որ մեծ թիվերն անպայման վերջնական գրուով և գումարելիների գումարը տասից ցածր չլինի: Միավորից բարձր թվերը բազմապատկելիս համապատասխան բանակով ավելացվում են գրոները:

Մաթեմատիկայի պատմութիւն մասնագետ Վիգորսկին իր դասընթացում գանգատվում է, որ մեզ չի հասել ոչ մի տեղեկութիւն այն մասին, թե ինչպես էին կատարում թվարանական գործողութիւնները<sup>2</sup>:

Ահա վասիկ բազմապատկման գործողութիւն կատարելու մի ձև, որը պահել է մեր ձեռագրերից մեկը և որը մաթեմատիկայի պատմութիւնը զբաղվող մասնագետների ուշադրութիւնն ենք ներկայացնում:

Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի վրա կատարվել են նման կարգի արժեքավոր այլ ավելացումներ ևս, որոնք ավելորդ ենք համարում բերել այստեղ:

Բացի հիշված աղյուսակներից Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց»-ի վրա հետագա հեղինակները կատարել են այլ «լրացում»-ներ ևս, որոշ դեպքում նշելով այդ մասին: Այսպես, օրինակ, № 5254 ձեռագրում, Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»-ի տեքստը վերջացնելուց հետո շարունակութիւն մեջ «Այլուտ» վերնագրի տակ շարադրված է մաթեմատիկական մի

<sup>1</sup> ՀՊԶԳ, ձև. № 1711, թ. 15բ—16ա:

<sup>2</sup> М. Я. Выгодский, Арифметика и алгебра в древнем мире, Москва—Ленинград, 1941, էջ 103:



տեքստ, որն անմիջապես չի կապվում Հովհաննեսի աշխատության հետ և բովանդակում է թվանշանների բացահայտությունն ըստ նրանց նշանակության (թ. 29բ):

\* \* \*

Վերջին հարցը, որի վրա ուզում ենք կանգ առնել, Հովհաննեսի «Յազագո անկիւնատր թուոց»-ի արժեքավորման հարցն է. ի՞նչ տեղ ունի նա գիտությունների պատմության մեջ Հայաստանում:

Հովհաննեսի «Յազագո անկիւնատր թուոց»-ի ամենամեծ արժեքը կայանում է նրանում, որ նա ապացուցում է, որ հայկական գիտական գրականությունը, մասնավորապես մաթեմատիկան, միջին դարերում բավականաչափ զարգացած է եղել Հայաստանում: Դրա անժխտելի ապացույցն են հունարենից հայերեն թարգմանված Պյութագորասի, Նիկոմախոսի և Էվկլիդեսի մաթեմատիկական աշխատությունները և տեղում գրված մաթեմատիկական ինքնատիպ տեքստերը (Շիրակացի և ուրիշներ): Փիլիսոփայության, ճարտասանության, տիեզերագիտության և գիտական այլ ճյուղերում համաշխարհային գիտական գրականության մեջ ներդրումներ ունեցող հայ ժողովուրդը, ինչպես տեսնում ենք, անմասն չի գտնվել իվարանության և երկրաչափության ասպարեզում:

Վերջապես, Հովհաննես Սարկավազի «Յազագո անկիւնատր թուոց»-ը արժեքավոր է նաև անցյալում մեզ մոտ դոյութունն ունեցող հաշվարկումների սխռտեմք, գործածվող տերմինները և իվարանական նշանները պատկերացնելու տեսակետից:

Դրական գիտությունների պատմության գծով համեմատաբար քիչ աշխատանք է կատարված հայագիտության մեջ: Գիտական արժեք ունեցող հայ մատենագրության մասնագիտական լուրջ ուսումնասիրությունը վերջերս է սկսվել և այն կապված է հայագիտության սովետական շրջանի հետ: Հովհաննեսի «Յազագո անկիւնատր թուոց» աշխատությունը, **անկասկած, մաթեմատիկոսի լուրջ ուշադրության առարկա կզարնա:** Անցյալից մեզ հասած այս աշխատությունը ևս իր համեստ տեղը կզտնի գիտության պատմության մեջ:

## Ե Ք Ր Ա Կ Ա Գ Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն

1. Հովհաննես Սարկավազի հեղինակությամբ հայագիտության մեջ հայտնի «Յազագո անկիւնատր թուոց» աշխատությունը տոմարական աշխատություն չէ, ինչպես անցյալում թյուրիմացաբար ենթադրել են հայագետներից ոմանք, այլ՝ մաթեմատիկական:

2. Հովհաննեսի նշված աշխատությունը մեզ հասել է ոչ թե հատվածներով, ինչպես կարծել են Ալիշանը, Զարրհանալյանը և ուրիշները, այլ ամբողջական ձևով: Զանազան մատենագրարաններում մեզ հայտնի են այդ տեքստի ավելի քան տասնհինգ ձեռագիր-ընդօրինակությունները:

3. Հովհաննեսի այդ աշխատության մեջ հասած ձեռագիր-ընդօրինակություններից լավագույնները ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական

ձեռագրատան (Մատենադարանի) № № 1770, 2595 և Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 157 ընդօրինակություններն են:

4. Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատության բացատրական տեքստի աղբյուրն է Փիլոն Երրայեցու «Յաղագս տասն բանիցն» աշխատության հայերէն թարգմանությունը, որը հայտնաբերվել է Հայկ. ՍՍԻ Մինիստրների Սովետին կից Պետական ձեռագրատանը (Մատենադարանում) և չի հրատարակված:

5. Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատության աղյուսակների աղբյուրն են հանդիսացել առաջին դարում ապրած հույն մաթեմատիկոս Նիկոմախոսի աղյուսակները, որոնք, ինչպես երեւում է, հունարենից հայերէն էին թարգմանվել Հովհաննես Սարկավագի շատ առաջ:

6. Հովհաննեսի նշված տեքստի վրա ընդօրինակող գրիչները կատարել են որոշ «լրացում»-ներ, որոնցից ուշագրութան արժանի են Պլոմազորասի աղյուսակները և բազմապատկություն կատարելու մասին անձանոթ մի տեքստ:

7. Այժմ կարող ենք հաստատապես ասել, որ հույն երեք կյաքիկ մաթեմատիկոսների՝ Պլոմազորասի, Էվկլիդեսի և Նիկոմախոսի աշխատությունները հատվածներով կամ ամբողջական թարգմանված են եղել հայերէն և մեկնվել են, լրացվել ու ընդարձակվել: Սրան զուգընթաց գրվել են ինքնաբերական, ինքնատիպ լուրջ մաթեմատիկական տեքստեր (Շիրակացի, Մխիթար Այրիվանեցի և ուրիշներ):

8. Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը նոր ապացույց է այն բանի, որ դրական գիտությունները զարգացած են եղել միջնադարյան հայ իրականության պայմաններում:

9. Հովհաննեսն աչքի ընկնող մատենագիր է ոչ միայն տոմարի, քերթողական արվեստի և փիլիսոփայության ասպարեզներում, այլև մաթեմատիկայի պատմության մեջ: Նոր հայտնագործությունները գալիս են լիովին արդարացնելու հանգուցյալ պրոֆ. Մ. Արեղյանի այն եզրակացությունը, որ համաձայն Հովհաննեսի մենք ունենք լուսավոր մտքով մի հեղինակ, «խուլախնդիր և որոնող» մի անձնավորություն, որ «բարձր է կանգնած եղել միջնադարյան թանձրամած խավարից»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայ հին գրականության պատմություն, Բ գիրք, Երևան, 1946, էջ 49:

#### 4. ՀՈՎՃԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննեսը հայ մատենագրության մեջ հայտնի է նաև որպես տոմարագետ: Նրա անվան հետ է կապված հայկական տոմարի բարեփոխությունը, նա է հայկական տոմարը շարժականից անշարժ դարձրել: Այս մասին խոսում են հետագա շրջանի գրեթե բոլոր հայ մատենագիրները: Բավական է թեկուզ հիշել Կիրակոս Գանձակեցու հետևյալ վկայությունը: «Սա (այսինքն՝ Հովհաննեսը — Ա. Ա.)... զանշարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատունոյն»<sup>1</sup>:

Գծբախտաբար հայագետներից ոչ մեկն իր առջև խնդիր չի դրել պարզելու՝ թե ո՞րտեղ են Հովհաննեսի տոմարական աշխատությունները: Այնպիսի լուրջ բարեփոխություն, ինչպիսին տոմարի բարեփոխությունն է, պարզ է, որ բանավոր հրահանգներով չէր կատարվի, անհրաժեշտ էր, որ Հովհաննեսը տեսական հիմնավորում տար իր բարեփոխությանը, բացատրական աշխատություններ գրեր, համապատասխան աղյուսակներ գծեր և այլն: Հայագետներից Զարբանալյանն է միայն, ինչպես երևում է նրա մի տեղեկությունից, որ ուշադրություն դարձնելով այդ հարցին ցանկացել է մոտից ուսումնասիրել Հովհաննեսի տոմարը, բայց հետո իրենց մատենագրանի ձեռագրերում բավականաչափ նյութեր չգտնելով ստիպված է եղել հրաժարվել իր մտադրությունից:

Հովհաննեսի տոմարական աշխատություններից մինչև այժմ հրատարակվել են նրա միայն երկու աշխատությունները, ավելի ճիշտ՝ մի աշխատության երկու հատվածները: Նրանք հրատարակել է բանասեր Բ. Սարգսյանը իր «Ազաթանգեղոս և յուր բազմադարյան գաղտնիքն» աշխատության ծանոթագրության մեջ<sup>2</sup>: Հատվածներից մեկն ունի «Յովհաննու Բանանայի և Խմատասիբի ասացեալ Յաղագս ամսոց հայոց և տօնից, և յաղագս չորեքտասանօրաց լուսնոյ գատկի», իսկ մյուսը՝ «Յովհաննու [Բանանայի] և Խմատասիբի, որ մականուանի Սարկաագ, ասացեալ յառաջ Բան գրուրին իւրոյ տումարին»: Այս տեքստերի բնագրերը, ինչպես երևում է Սար-

<sup>1</sup> Պատմութիւն հայոց Կիրակոսի Գանձակեցոյ, էջ 104:

<sup>2</sup> Բ. Սարգսյան, Ազաթանգեղոս և յուր բազմադարյան գաղտնիքն, Վենետիկ, 1880, էջ 353—355:



գրքանի տեղեկությունից, Փարիզի գրատան N 114 ձեռագիրն է հանդիսացել, որից արտագրել է Չ. Ալիշանը<sup>1</sup>:

Այնուհետև, Չ. Ասկյանը «Հովհաննես Սարկավազի գրություններ» մեզ ծանոթ աշխատության մեջ<sup>2</sup> հրատարակել է տոմարական մի փոքրիկ հաված էլ «Սարկավազ վարդապետին է բան» վերնագրով, ինչպես ասել ենք պատմության գլխում:

Հովհաննեսի տոմարական աշխատությունները ցայժմ հայանի բիրտ-գրաֆիան ամբողջացնելու համար պետք է ասենք, որ նրա տոմարական աշխատությունների վերնագրերը հայանի են եղել բանասիրության մեջ հավանարար կարիքյան կոշիղ ցուցակի միջոցով: Այսպես, հայանի են նրա «Մեկնություն տոմարի», «Բան վասն հինգհարիւրից» և «Տոմար ժամանակաց և րուակնաց» աշխատությունները: Այդ աշխատությունները հիշված են դեղատ. Ե. Տեր-Մինասյանի «Սանահինի և Հաղրատի վանքերը» հոդվածում՝ նրա կազմած Հովհաննեսի աշխատությունների ցանկի մեջ<sup>3</sup>: Հովհաննեսի տոմարական այս աշխատությունները հիշված են նաև անվանի հայագետ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի մոտ:

Հովհաննեսի անհայտ տոմարական մի աշխատության հետ ծանոթ են եղել նաև Հայկազյան բառարանի կազմողները: Այդ երևում է նրանց օգտագործած գրականության բիրտգրաֆիկ բաժնում Հովհաննեսի տոմարական աշխատությունների մասին հաղորդած հետևյալ տեղեկությունից՝ «Տոմարական բանք պարզ և խրթին»: Այստեղ կոնկրետ ոչինչ չի ասված, թե Հովհաննեսի տոմարական պարզ և բարդ ո՞ր գործերը նկատի ունի, ուստի դժվար է պարզել այդ, բայց պարզ է, որ նրանք Հովհաննեսի տոմարական մի քանի գործերն ունեցել են ձեռքի տակ, սակայն չցանկանալով մտնել Հովհաննեսի տոմարական, իրոք բարդ հաշիվների մեջ, անհրաժեշտ են համարել որոշ բաներ միայն օգտագործել՝ տալով նման ընդհանուր տեղեկություն:

Հովհաննեսի անշարժ տոմարի վրա միջանկյալ ձեռով կանգ են ասել հայ տոմարի հարցերով զբաղվող որոշ տոմարագետներ: Այսպես, Դյուլարյեն իր «Recherches sur la chronologie Arménienne» աշխատության մեջ Հովհաննեսի տոմարին նվիրել է մի ենթագլուխ՝ «Année fixe, Petite ère et Calendrier de Jean Diacre»<sup>4</sup>:

Հովհաննեսի տոմարին առանձին հատված նվիրել է նաև Մ. Օրմանյանն իր «Ազգապատում»-ի առաջին գլխում՝ «Սարկավազադիւ տոմար» վերնագրով<sup>5</sup>:

<sup>1</sup> Եռյն տեղը, էջ 353—355: Ըստ Մակլերի կազմած ձեռագրաց ցուցակի, Փարիզի Ազգային Գրադարանի հայկական ֆոնդի № 114 ձեռագիրը բովանդակութամբ «Տօնապատմա» է և ցուցակում չի հիշված Հովհաննեսի որևէ աշխատությունը: (Տես «Catalogue des Manuscrits arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, p. 56).

<sup>2</sup> «Հանդես ամսօրեայ», 1925, էջ 238—239:

<sup>3</sup> «Արարատ», 1901, էջ 341—342:

<sup>4</sup> Recherches sur la Chronologie Arménienne, par Ed. Dulaurier, Paris, 1859, p. 111—115.

<sup>5</sup> Մ. Արեպիսիկապոս Օրմանյան, «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, I հատոր, էջ 1308—1309:

Հովհաննեսի տոմարին մի հատված է նվիրել Գինցելը իր «Handbuch der Mathematischen und Technischen Chronologie» աշխատության մեջ<sup>1</sup>: Հովհաննեսի տոմարի վրա կանգ է առել հայկական տոմարի լավագույն մասնագետ պրոֆ. Լ. Լ. Սեմյոնովը իր «Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին» վերնագիրը կրող արժեքավոր հոդվածում<sup>2</sup>: Չենք հիշում այլ ուսումնասիրողներ, որոնք այս կամ այն կապակցությամբ կանգ են առել Սարկավագազի կոչվող թվականի վրա:

Կանգ առնենք Հովհաննեսի հայտնի և անհայտ տոմարական աշխատությունների վրա և աղբյուրադիտական համառոտ տեղեկություններ տանք նրանց մասին:

### ա) Տասնեկինգ ժողովուրդների ամիսների անունները և խառնախումբերը

Հայկական տոմարը շարժականից անշարժ դարձնելու առաջին ու հիմնական նախապայմանը նահանջ թվականը շորս տարին մեկ անգամ հաշվի առնելն էր: Հայտնի է, որ այդ սկզբունքը հայկական տոմարում մտցրեց Հովհաննեսը: Սակայն նահանջի թվականը հայկական տոմարի մեջ ընդունելուց և հայկական տոմարն անշարժ դարձնելուց հետո նորամուտ տոմարն ավելի հաստատուն դարձնելու նպատակով անհրաժեշտ էր կազմել համեմատական տախտակներ՝ զուգահեռելով հայկական տոմարը, հայկական ամսացյանքը հարևան ժողովուրդներին ամսացանկերի հետ: Այդ առանձնապես անհրաժեշտ էր անել հռոմեականի, ասորականի և երբայականի հետ, որոնք վաղուց անցել էին անշարժ տոմարին և տոմարական հաշիվների մեջ մեծ փորձ ունեին: Համեմատական այդ աշխատանքն իր ուսերի վրա է վերցրած եղել Հովհաննեսը: Նա կազմել է համեմատական այդ աղյուսակները, որոնք և հասել են մեզ:

Որ իրոք Հովհաննեսը կազմած է եղել համանման համեմատական տախտակներ, այդ երևում է առաջին հերթին հենց իր՝ հեղինակի հաղորդած մի տեղեկությունից: Նա իր տոմարական մի աշխատության մեջ, որը ունի «Յաղագս ամսոց հայոց և տօնից և յաղագս Գծ-աներորդաց լուսնոյ զատկի» վերնագիրը, զրա մասին գրում է. «Յայսմհետէ ոչ փոխանցեալ լինին եղանակք ատուրց, վասն զի կանովնեցաք համընթաց այլոց ազգաց ամսոց և մերոցն ունել զկարգ շարժմանց ամսոց...»<sup>3</sup>: Հովհաննեսն այստեղ հավաստիացնում է, որ այսուհետև եղանակներն ըստ ամիսների փոփոխվող վիճակ չեն ունենա. ինչո՞ւ — որովհետև հայկական ամիսները, այլ ժողովուրդների ամիսներին զուգընթաց, ըստ նրանց շարժման, այսինքն՝ ըստ հերթականության, ինքն արդեն կարգել է:

Հովհաննեսի կատարած այդ կարևոր աշխատանքի մասին վկայում են և այլ հեղինակներ: Այսպես, ըստ մի ձևադրում եղած տեղեկության, որը մեջ է բերում Զարրհանալյանը, ասված է. «ՇԼԳ. Ակիզբն նոր թուականին,

<sup>1</sup> F. K. Günzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie, Leipzig, 1914, III B, p. 314—321.

<sup>2</sup> Մասեհաղաբանի «Գիտական նյութերի ժողովածու», 1941, էջ 19—30:

<sup>3</sup> ՀԳՁԾ, ձեռ. № 2001, թ. 166ա:



որ կարգեցաւ ի Յովհաննէս վարդապետէ Հաղբատեցոյ որ Սարկաւազ կոչեցաւ: Սա արար անշարժ տոմար ըստ այլոց ազգաց...»<sup>1</sup>: Այստեղ «ըստ այլոց ազգաց» արտահայտութեան մեջ հիշատակագիրը նկատի ունի հայկական տոմարի հարաբերումը այլ ժողովուրդների տոմարներին:

Հայկական և այլ ժողովուրդների ամիսների համեմատական այդ ցանկը ինչպես պարզվում է, տոմարական գրականության մեջ կոչվել է «խառնախորան»: Այդ տերմինը մեղ հանդիպում է տոմարական մի շարք աշխատությունների մեջ: Այսպես, օրինակ, Մատենադարանի № 817 ձեռագրի մեջ, ուր ընդօրինակված են Հովհաննէսի նշված տոմարական խորանները, հանդիպում ենք այսպիսի մի ծանոթության. «Աղիւսակս այս բանալի պարզատոմարիս, որ կոչի խառնախորան»<sup>2</sup>:

Հովհաննէսի տոմարի մեկնիչներից մեկը խոսելով աստվածածնի ավետման օրվա մասին և քննադատելով այս հարցում եղած սխալները, որպես հեղինակավոր աղբյուր մատնացուցց է անում Հովհաննէսի «խառնախորան»-ը, որտեղ, նրա ասելով, բերված է բոլոր ժողովուրդների ամիսների զուգակցությունը: Աստվածածնի ավետումը, որ հերայական նիսան ամսի 17-ին է, ըստ զուգակցության համապատասխանում է հռոմեական ապրիլի 7-ին. «Խառնախորանացն,— գրում է նա,— յորս զուգաւորութիւն ամենայն ազգաց է, զի ի նոյն խորանին, որ նիսան ժէ է, ի նոյն խորանն ապրիլի է է»<sup>3</sup>:

Տոմարական մի այլ ժողովածուի մեջ, որտեղ ընդօրինակված է մի շարք ժողովուրդների ամիսների համեմատական տախտակը, նրանից օգտվելու կարգի հետ ծանոթացնելու համար արված է հետևյալ ծանոթությունը. «Մուտ խառնախորանաց քառանկիւնիս այս է, առաջին կարգն հռոմայեցուցն, երկրորդն՝ եբրայեցուցն և իւրոցն, երրորդն՝ եգիպտացուցն և իւրոցն, և չորրորդն՝ Սարկաւազին...»<sup>4</sup>:

Հետաքրքրական է, թե ինչո՞ւ են այդ աղյուսակները «խառնախորան» կոչվել: Այս տերմինը, անկասկած, «խառնված», «բարդ» տերմինի իմաստով չի գործածված, այլ զուգակցության, համադրության իմաստով:

Ի դեպ, «խառնախորան» տերմինը չպետք է շփոթել «խառնափնթոր» բառի հետ: Վերջինը նույնպես գործ է ածվել տոմարական գրականության մեջ, և գործ է ածվել դարձյալ աղյուսակի համար, բայց այլ կարգի՝ աղյուսակի: «Խառնափնթոր» կոչվել է այն աղյուսակը, որը ցույց է տալիս «գիր տարւոյն»: Այսպես, օրինակ, Մատենադարանի № 817 ձեռագրում դժազբրված է այդ աղյուսակը հետևյալ բացատրական տեքստով. «Աղիւսակս այս բանալիք պարզատոմարիս, որ կոչի խառնափնթոր»<sup>5</sup>:

Հովհաննէսի «խառնախորան»-ի հիման վրա ուշ դարերում կազմվել են նոր աղյուսակներ, որոնք կոչվել են «Յայսմատուրացոյց»-ներ: Այս աղյուսակների սկիզբը Հովհաննէսի անշարժ տոմարն է, որի մոտ նավասարդի 1-ը համապատասխանում է օգոստոսի 11-ին: Այս աղյուսակների սկզբում, սովորաբար, նշված է լինում՝ «Տարեմուտ [է] Սարկաւազի»: Էջում, վերից վար.

<sup>1</sup> Գ. Չարեհանալյան, Հայկական հին դպրության պատմություն, էջ 607:

<sup>2</sup> ՀՊՁՄ, ձեռ. № 1971, Թ. 123ա—124բ:

<sup>3</sup> Նույն տեղը:

<sup>4</sup> ՀՊՁՄ, ձեռ. № 6731, Թ. 228բ—229ա:

<sup>5</sup> ՀՊՁՄ, ձեռ. № 817, Թ. 448ա (հմտ. № 6731 ձեռ., Թ. 228բ):



զուգահեռ իջնում են հինգ վանդակներ, որոնցից առաջինի մեջ, սովորաբար, Հովհաննեսի ամսասհաշիվն է լինում գրված, երկրորդը՝ երրայեցոց, երրորդը՝ յոթ ազգի, հինգերորդը՝ պարսից և վերջինը՝ հոտմայեցոց: Յուրաքանչյուր օրվա գիմաց գրվում է, թե ո՞ւմ տոնն է: Անհրաժեշտ ենք համարում այդ աղյուսակը բերել այստեղ:

Յայտառուացոյց է բոյոս տարոյն ժե ազգի ամսով գրած

	Ստեփանապոլի	Երբայեցոց	է ազգի	Պարսից	հոտոց	
Տարե-մուս	Ա	ԻԳ	ԺԸ	Բ	ԺԱ	Նաւասարդ ամիս Յովհաննու կարապետին և Աթանգիւնեայ հայրապետին
Մար-կաւա-դի	Բ	ԻԴ	ԺԹ	Գ	ԺԲ	Անիկաոսի և Փոտինոսի
	Գ	ԻԵ	Ի	Դ	ԺԳ	Մարկեղոսի և սքանչելեացն հնարատու
	Դ	ԻԶ	ԻԱ	Ե	ԺԴ	Շողակաթին Էջմիածնայ
	Ե	ԻԷ	ԻԲ	Զ	ԺԵ	Փոփոխումն է Աստուածածնին
	Զ	ԻԸ	ԻԳ	Է	ԺԶ	Արգարու թաղաւորին
	Է	ԻԹ	ԻԴ	Ը	ԺԷ	Մեռոնի և պատկերի Աստուածամօրն
	Ը	Ի	ԻԵ	Թ	ԺԸ	Ստեփանոսի Ուլնեցոյն
	Թ	Ա	ԻԶ	Ժ	ԺԹ	Արեղակի կոյսն մտանէ Սրբոց Աստմանց և զօրավարաց Անդրէի և րանալի Իւր
	Ժ	Բ	ԻԷ	ԺԱ	Ի	Սրբուհոյն Վասայ և Գ. որդոց նորա և Մամուէլի մարգարէին
	ԺԱ	Գ	ԻԸ	ԺԲ	ԻԱ	Սրբոյն Յուստիանոսի
	ԺԲ	Դ	ԻԹ	ԺԳ	ԻԲ	Թումայի առաքելոյն
	ԺԳ	Ե	Ի	ԺԴ	ԻԳ	Երինոսի և Լևոտիոսի սքանչելեացն
	ԺԴ	Զ	Ա	ԺԵ	ԻԴ	Գանիէլի մարգարէին
	ԺԵ	Է	Բ	ԺԶ	ԻԵ	Արուսիմոսին և Սր. Աստուածածնին

ՀՊԶՄ, ձև. 3240, թ. 145ա—156բ:

Հովհաննեսի կազմած հայկական և այլ ժողովուրդների համեմատական այս աղյուսակները մեզ հասել են մի շարք խմբագրություններով: Որոշ աղյուսակներ բնագրծակ են, որոշ աղյուսակներ՝ համառոտված: Համառոտված խմբի խառնախորաններից է № 1999 ձևագրում պարունակածը: Նա կազմված է ուղղահայաց ներքև իջնող վեց խորաններից, որոնցից առաջինը հոտմեական ամսաթիվն է, երկրորդը՝ երրայական, երրորդը՝ եգիպտական, չորրորդը՝ Հովհաննեսինը, հինգերորդը՝ օրագյուտ է և վեցերորդը՝ լուսնացոյց: Խորանների կոդերում նշված են տվյալ ամսին համապատասխանող

այլ ժողովուրդների ամսի անունները: Օրինակ, հունվար ամսի կողքին ավել-  
յացված է հունական «Դիոս», ասորական՝ «Քանուն խրա»: Երբայական  
«Շբաթ» ամսվա կողքին ավելացված է արարական «Նզդոդ», մակեդոնացոց  
«Փեստոս» և այլն: Չեռագրում յուրաքանչյուր ամսվա համար հատկացված է  
մի էջ: Ամբողջ տարվա տոմարը կազմում է ընդամենը 12 էջ:

Մատենադարանի ձեռ. № 1999-ի խառնախորանից մասամբ տարբեր-  
վում է (նույն Մատենադարանի) № 1973 ձեռագրի պարունակած խառնա-  
խորանը: Այստեղ ամսաթիվերի ազյուսակների և օրագլուտի միջև տեղավոր-  
ված ընդարձակ զծվածքում գրանցված են կրոնական կարեւոր տոները, տար-  
վա շորս եղանակներից յուրաքանչյուրի սկսման ժամանակը, համաստեղու-  
թյան շարժումը ըստ ամիսների: Այսպես, օրինակ, հունվար ամսվա տախտա-  
կում նշված է մկրտութան օրը (քաղցի 29-ում), արարչության օրը (արաց  
1-ում), արեղակը ջրհոսը մտնելու օրը (արաց 10-ում), Թեոդոս թագավորի  
տոներ (արաց 12-ում): Խառնախորանը այս ձեռագրում էս 12 էջ է:

Հոտմոց յունուար				Յունաց Դիւնիոս	Ասորոց քանուն հրա	Աւրա- գիւտ	Լուս- նա- ցոյց
Ա	ՃԶ	Ձ	ԻԳ	Կաղանգ հոտմի		Ա	Ա
Բ	ՃԷ	Է	ԻԵ			Բ	
Գ	ՃԸ	Ը	ԻԶ			Գ	
Դ	ՃԹ	Թ	ԻԷ			Դ	Բ
Ե	Ի	Ժ	ԻԸ			Ե	
Զ	ԻԱ	ՃԱ	ԻԹ	Յայնութիւն տն հոտի ժ և աւրն Ե. շարաթ		Զ	
Է	ԻԲ	ՃԲ	Լ	և մկրտութեան աւրն կիրակէ		Է	Գ
Ը	ԻԳ	ՃԳ	Ա	Հայոց արանց: Արարչութեանն քաղցի Ի		Ը	
Թ	ԻԴ	ՃԴ	Բ			Թ	Գ
Ճ	ԻԵ	ՃԵ	Գ	և աւրն Բ. շարաթ:		Ճ	
ՃԱ	ԻԶ	ՃԶ	Դ			Դ	
ՃԲ	ԻԷ	ՃԷ	Ե			Ե	
ՃԳ	ԻԸ	ՃԸ	Զ			Զ	Ե
ՃԴ	ԻԹ	ՃԹ	Է			Է	
ՃԵ	Լ	Ի	Ը			Ա	
ՃԶ	Ա	ԻԱ	Թ	Երբ շարաթ: արար. Եզդոդ: մակ. Անթեսարիսն:		Բ	Զ
ՃԷ	Բ	ԻԲ	Ճ	Այսաւր արեղակն Ի ջրհոտն:		Գ	
ՃԸ	Գ	ԻԳ	ՃԱ	Տաւն Անտոնի Եզիպտացւոյ:		Դ	
ՃԹ	Դ	ԻԴ	ՃԲ	Տաւն Թէոդոսի թագաւորին:		Ե	Է
Ի	Ե	ԻԵ	ՃԳ			Զ	
ԻԱ	Զ	ԻԶ	ՃԴ			Է	
ԻԲ	Է	ԻԷ	ՃԵ			Ա	Ը
ԻԳ	Ը	ԻԸ	ՃԶ			Բ	
ԻԴ	Թ	ԻԹ	ՃԷ			Գ	
ԻԵ	Ճ	Լ	ՃԸ	Եզիպտ. մեքիբ: Եթիոպ. Եմքաթիթ:		Դ	Թ
ԻԶ	ՃԱ	Ա	ՃԹ			Ե	
ԻԷ	ՃԲ	Բ	Ի			Զ	
ԻԸ	ՃԳ	Գ	ԻԱ			Է	Ճ
ԻԹ	ՃԴ	Դ	ԻԲ			Ա	
Լ	ՃԵ	Ե	ԻԳ			Բ	
ԼԱ	ՃԶ	Զ	ԻԴ			Գ	

Ավելի ընդարձակ և, մեր կարծիքով, նախնական են Մատենադարանի № № 817 և 2068 ձեռագրերի պարունակած «խառնախորաններ»-ի ընդօրինակությունները: Հովհաննեսի կազմած խառնախորանի այս ընդարձակ ընդօրինակությունը հետագայում, հավանորեն դժման դժվարությունների պատճառով, անդամահատման է ենթարկվել, որոշ գրաֆիկներ կրճատվել են, գրանով հենց որոշ ժողովրդի ամիսների անուններ դուրս արվել:

Մատենադարանի վերը հիշված ընդօրինակությունների մեջ համեմատության մեջ են գրված 15 ժողովուրդների ամիսների անուններ՝ ա) հոռմեական, բ) հունական, գ) ասորական, դ) պարսկական, ե) հայկական, զ) երբայական, է) արաբական, ը) մակեդոնական, թ) եգիպտական, ժ) եթովպական, ժա) ասիական, ժբ) բյութանիական, ժգ) կապադովկիական, ժդ) վրացական, ժե) աղվանական: Եղված բոլոր ամիսների անունները կան Հովհաննեսի խառնախորանում:

Տոմարական հաշիվները խառնախորանում հեշտացնելու նպատակով խառնախորանների ընդօրինակություններից առաջ սովորաբար արվում են խառնախորանի մեջ համեմատվող ամիսների անունները: Պետք է ասել, որ այդ ձևը կիրառվել է նաև Շիրակացու տոմարական գործերում: Հավանական է, որ Հովհաննեսն այդտեղ հետևում է Շիրակացուն:


Խառնախորաններում օգտագործվող ժողովուրդների ամիսների մի ցանկ մենք հրատարակել ենք «Շիրակացու մատենագրության»<sup>1</sup> մեջ՝ վերցնելով Մատենադարանի № 1973 ձեռագրից: Տեղ-տեղ օգտվել ենք նաև № 1999 ձեռագրից, սակայն հրատարակված ամիսների անունները բավականաչափ ազդված լինելով: Ընդօրինակող գրիչները չկարողանալով ձիշտ պատճենահանել իրենց անձանոթ բառերը թույլ են տալիս բազմաթիվ ազդվածություններ, կարելի է ասել ամսանուններ չկան, սրտեղ մեկ-երկու տառ ազդվածված չլինի: Երբեմն բառը միանգամայն անընթեռնելի է:

Մատենադարանի № 2068 ձեռագրում, որը պարունակում է Հովհաննեսի խառնախորանը, ժողովուրդների ամսանունները զատված են հինգ խմբի մեջ՝ հաշիվ անելով նրանց տոմարական սիստեմները: Առաջին շարքում հոռմեական սիստեմն է, որի մեջ մտնում են հոռմեականը, հունականը և ասորականը: Երկրորդ շարքում առանձին, միջնադարյան արաբական է: Երրորդ շարքում երբայական սիստեմն է, որի մեջ մտնում են երբայականը, հին արաբականը և մակեդոնականը: Չորրորդում պարսկականն է, հինգերորդում՝ եգիպտականը, որի մեջ մտնում են եգիպտականը, եթովպականը, ասիականը, բյութանիականը, կապադովկիականը, վրացականը և աղվանականը: Բոլոր ամիսների անուններն օգտագործված են ձեռագրում ընդօրինակած Հովհաննեսի խառնախորանում, բացի միջնադարյան արաբականից: Տոմարագեանների ուսումնասիրությունը հեշտացնելու համար անհրաժեշտ ենք համարում Մատենադարանի № 2068 ձեռագրի ամիսների ցանկը համեմատության գնել տվյալ ժողովուրդների ամիսների անունների հետ և շտկել հավանական տեքստային ազդվածությունները: Ստորև բերված ամիսների համեմատության համար օգտվել ենք Գինցելի եռահատոր տոմարական ուսումնասիրությունից՝ «Handbuch der Mathematischen und Technischen Chro-

<sup>1</sup> Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, էջ 116—122:



nologie» վերատուփյամբ, որը լույս է ածել 1914 թվին: Ամիսների նախնական տեքստը ճիշտ վերականգնելու համար մենք օգտագործել ենք նաև Մատենադարանի № 2001 ձեռագրի ընդօրինակությունը: Խուսափել ենք Գինցելի բերված անունները տատացի վերականգնելուց, որովհետև հավատացած չենք, որ բոլոր դեպքերում նրա օգտագործած սկզբնաղբյուրը ճիշտ է: Ինչպիսիք, անհրաժեշտ է, որ հայկական տեքստի հիման վրա հետազայում վերանայվեն մեզ չհասած լեզուներում գործածված ամսանունները և վերացվեն այն հարցականները, որոնք գրվում էին աղավաղված ձևով մեզ հասած ամսանունների վրա: Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ Հովհաննեսը տատացի ընդօրինակել է Շիրակացու բերած անունները, իսկ Շիրակացու՝ VII դարի անունների բերած ձևը, հատկապես փոքրասիական որոշ ժողովուրդների ամսանունների համար, կարող է անշափ արժեքավոր լինել:




Մ	Ե	Օ	Ա	Խ
Բ	Ն	Ը	Լ	Տ

Ի աշարատա լինուս ր եղական որոշ հա  
 շարատա եշինուս դաս հն՝ անգ

Նկ. 3. Արեգակի ժամացույց ՀՊՁՄ-ի № 1973 ձեռագրից (թ. 72ա):

Նշված ձեռագրի դժգոհությունների մեջ ուշադրության արժանի է արեգակի ժամացույցի սովերազիրը, որի արտանկարն անհրաժեշտ ենք համարում հրատարակության հանձնել:



Աստղաբաշխութեան երկր- թիքս յալ և յալ տարեանկաց եցան պղատնի:

«Աստղաբաշխական երկրաչափութեան» քարտեզ ՀԳՁՄ-ի № 1973 ձեռագրից (թ. 77ա)»





1. ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՄԻՍՆԵՐ

Գինգեյի մաս	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Մեր կարծիքով պետք է լինի
1. Thoth	Թոզթ	Թոզթ	Թոզթ	Թոզթ
2. Pthaophi	Թոպլի	Թոֆիբ	Փոպլի	Փոֆիլ
3. Athyr	Աթոզբ	Աթուբ	Աթոզբ	Աթոզբ
4. Choiak	Քուակ	Քուակ	Քուակ	Քուակ
5. Tybi	Տուբի	Տուբի	Տուբի	Տուբի
6. Mechir	Մեքիբ	Մեքիբ	Մեքիբ	Մեքիբ
7. Phaimenoth	Պեմենոզթ	Պեմէթոզթ	Պեմենոզթ	Պեմենոզթ
8. Pharmuthi	Պարմոֆի	Պարմուի	Պարմոֆի	Պարմոֆի
9. Pachon	Պաքու	Պաքու	Պաքու	Պաքու
10. Payni	Պոնի	Պոնի	Պոնի	Պոնի
11. Epiphi	Եպեֆ	Եֆեֆ	Եպեֆ	Եֆեֆ
12. Mesori	Մեսուրի	Մեսուի	Մեսուրի	Մեսուրի
(Ginzler, I, 200)	(թ. 16բ)	(թ. 353բ)	(թ. 33ա)	

2. ԵԹԻՊԱԿԱՆ ԱՄՈՒՆԵՐ

Գինգեյի մաս	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Պետք է լինի
1. Maskarem	Մակբուան	Մաբարամ	Մաբուան	Մաբարամ
2. Tekemt	Դեկեմեմէթ	Դետեմբեթ	Դեկեմէթ	Դեկեմեթ
3. Hedar	Քեզար	Քեզա	Քեզար	Քեզար
4. Tachsas	Թաքսար	Թասթա	Թաքսար	Թաքսար
5. Ter	Թեր	Թերա	Թեր	Թեր
6. Jacatit	Իմբաթիթ	Եմբաթիթ	Եմբաթիթ	Եմբաթիթ
7. Magabit	Գամաիթ	Գամիթ	Գամաիթ	Գամաիթ
8. Mijazta	Միջադի	Միջադի	Միջադի	Միջադի
9. Ginbot	Գեմբոթ	Գեմբութ	Գեմբութ	Գեմբոթ
10. Sene	Սանի	Պոնակի	Սանի	Սանի
11. Hamle	Քաղմղի	Պամլի	Քաղմղի	Քամլի
12. Nahasse	Նհասսի	Նհասի	Նհասսի	Նհասսի
(Ginzler, III, 324—325)	(թ. 16բ)	(թ. 358բ)	(թ. 34ա)	

3. ԱՔԵՆԱԿԱՆ ԱՄՈՒՆԵՐ

Գինգեյի մաս	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Պետք է լինի
1. Μουσρων	Մոնոբրոն	Մենլբրոն	Մոնոբրոն	Մոնլբրոն
2. Θαρραίων	Թերրեդրոն	Թերրելլրոն	Թերրեդրոն	Թերրելլրոն
3. Σιπροφοριών	Սիպոֆորոն	Կիկեֆորոն	Սիպոֆորոն	Սիկեֆորոն
4. Έλατορβαίων	Եկատտոնրոն	Եկամրոն	Եկատտոնրոն	Եկատտոմրոն
5. Μεταφαιτιών	Մեֆաիթոն	Մեֆակիթոն	Մեֆաիթոն	Մեֆաիթոն
6. Βορροριών	Բուրրոն	Բեզրեմիոն	Բուրրոն	Բուրրոն
7. Πρανεφίων	Պրանեֆիոն	Պրանեպիոն	Պրանեֆիոն	Պրանեպիոն
8. Μαριατροών	Մեմակտրոն	Մեկակտրոն	Մեմակտրոն	Մեմակտրոն
9. Ποσειδεών	Պոսոդեբրոն	Պիսիդոն	Պոսոդեբրոն	Պոսոդեբրոն
10. Γαριλιών	Գեմադրոն	Գալիմիոն	Գեմադրոն	Գեմալլոն
11. Άνθεστριών	Անթեստրոն	Անթեստրոն	Անթեստրոն	Անթեստրոն
12. Έλαφιβαίων	Ալաֆիբրոն	Ալաբրոն	Ալաֆիբրոն	Ալաֆիբրոն
(Ginzler, II, 335)	(թ. 17ա)	(թ. 358բ)	(թ. 34ա)	

\* Գինգեյի ցուցակում Έλατορβαίων ամիսն է ամբողջ առաջին ամիսը:

4. ԲՅՈՒԹԱՆԻԱԿԱՆ ԱՄԻՄՆԵՐ

Գինգելի մաս	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Պետք է լինի
1. Dionysios*	Դեսիոս	Դէսոս	Դեսիոս	Դեսիոս
2. Heraklaos	Երակլիոս	Երակլիոս	Երակլիոս	Երակլիոս
3. Dios	Դիոս	Դիոս	Դոս	Դիոս
4. Bendidaos	Մենդիտէս	Մենեդիոս	Մենդիտէս	Մենդիդիոս
5. Strategios	Կարատէս	Սարատէս	Կարատէս	Կարատիոս
6. Periepios	Պերեպիոս	Պերէտիոս	Պերեպիոս	Պերեպիոս
7. Areios	Արէոս	Արէոս	Արէոս	Արէոս
8. Aphrodisios	Ափրոդէոս	Աֆրիկոս	Ափրոդէոս	Ափրոդիոս
9. Demetrios	Դեմետրէոս	Դէմէտրիոս	Դեմետրէոս	Դեմետրիոս
10. Heraios	Էդիոս	Բելէոս	Էլէոս	Էդիոս
11. Hermatos	Էրմէոս	Հերմէս	Էրմէոս	Էրմէոս
12. Metroos	Մետրոսիոս	Մետեմիոս	Մետրեսիոս	Մետրոսիոս
(Ginzel, III, 22)	(թ. 17ա)	(թ. 358բ)	(թ. 34բ)	

5. ԿԱՊԱԳՈՎԿԻՍԱԿԱՆ ԱՄԻՄՆԵՐ

Գինգելի մաս	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Պետք է լինի
1. Artania	Արտանայ	Արտանայ	Արտանա	Արտանայ
2. Artaestin	Արուստայ	Աթրիստրակտայ	Արուստայ	Արուստայ
3. Aratata	Արուստայ	Արուստադատա	Արուստայ	Արուստայ
4. Tirix	Տիրիք	Տիրիք	Տիրիք	Տիրիք
5. Martata	Արմարտայ	Ամարտա	Ամարտա	Ամարտայ
6. Xhantiri	Քանիթիստրայ	Քանիթիքիսթէ	Քանիթիքիսթէ	Քանիթիքիստրայ
7. Mithiri	Միկիրիայ	Միկիրիա	Միկիս	Միկիրիայ
8. Apomenama	Ապրոմոսայ	Ապրոմոսա	Ապոննիթոս	Ապրոմոսայ
9. Arthra	Աթրայ	Աթա	Աթրա	Աթրայ
10. Tethusia	Դասուքայ	Դասուգա	Դանուք	Դասուքայ
11. Osmonia	Պոմենայ	Ոսմենա	Ոմոնա	Ոսմոնայ
12. Sondara	Պունդուրայ	Տուդարա	Սոնդանարա	Պոնդարայ
(Ginzel, III, 26)	(թ. 17ա)	(թ. 358բ)	(թ. 34ա)	

6. ՎՐԱՆ ԱՄԻՄՆԵՐ

№ 2001 ձև.	№ 2068 ձև.	№ 1971 ձև.	№ 1999 ձև.
1. Ախալձեղի	Ախալձեղի	Ախլձէլի	Ախալձիլիլի
2. Աթելի	Աթելի	Աթելի	Ջիթուելի
3. Տիրիսդի	Տիրիսդի	Տիրիսդի	Տրիսդիոս
4. Տիրիսդիանի	Տիրիսդիանի	Տիրիսդիանի	Տրեականի
5. Ապանի	Ապանի	Ապանի	Ապանի
6. Նուձկնի	Նուձկնի	Նուձկնի	Սաձկաց
7. Միրաբանի	Նիկրանի	Նիկրանի	Մեհիկանի
8. Իգրիկայ	Իգրակա	Իգրակայ	Եկրիկանի
9. Ջարդոս	Ջարտուգա	Ջարդոսայ	Ջարդոսայ
10. Մարելի	Մարելի	Մարելի	Իմարելի
11. Քուրա	Քուրա	Քուրայ	Թեքանի
12. Քուրիուրա	Քուրիուրա	Քուրիուրայ	Բուինթուրա
(թ. 41բ)	(թ. 358բ)	(թ. 17բ)	(թ. 56)

\* Գինգելի ցուցակում Dionysios ամիսը չարքարդ ամիսն է, իսկ մյուսները՝ քառարգի:

7. ԱԿՂԱԿԱՅԻՆ ԱՄԲՈՒՆԻՐ\*

№ 2001 ձև.	№ 2068 ձև.	№ 2180 ձև.	№ 1971 ձև.
1. Կաւասարցուն	Կաւասարցուն	Կաւասարցուն	Կաւասարցուն
2. Տուէն	Տուլի՛նի	Տուէն	Տուէն
3. Կամոց	Կամա	Կամոյ	Կամոյ
4. Յիւէ	Յիւի	Յիւէ	Յիւէ
5. Բոկաւոն	Բոկաւոն	Բոկաւոն	Բոկաւոն
6. Մարէ	Մարէ	Բոճոյիւն	Բոճոյիւն
7. Աճազոճէ	Բոճկոն	Մարիւի	Մարիւի
8. Մախուէն	Մախուիւն	Մախուիւ	Մախուիւ
9. Բոնդոկէն	Բոնդոկէ	Պոնտուկ	Պոնտուկէ
10. Որէլին	Որիլին	Արիլին	Արիլին
11. Երնա	Էրնէա	Երնեայ	Երնեայ
12. Պեքնա	Քոքա	Պեքնայ	Պեքնայ
(Ք. 41բ)	(Ք. 358բ)	(Ք. 265բ)	(Ք. 17բ)

8. ԵՐԲԱՅԻՆ ԱՄԲՈՒՆԻՐ

Պիճիքի ձև	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Պիսի է լիկի
1. Nisan	Նիսան	Նիսան	Նիսան	Նիսան
2. İhtar	Իար	Իար	Իար	Իար
3. Siwan	Սիւան	Սիւան	Սիւան	Սիւան
4. Tammuz	Քամուզ	Քամուզ	Քամուզ	Քամուզ
5. Ab	Ա.	Ա.	Աբ	Աբ
6. Ebul	Իլուլ	Իլուլ	Իլուլ	Իլուլ
7. Tisri	Քշրի՛ն	Քշրի՛ն	Քշրի՛ն	Քշրի՛ն
8. Masheswan	Մի՛նքլեան	Մի՛նքլեան	Մի՛նքլեան	Մի՛նքլեան
9. Kislev	Քուսղև	Քուսղև	Քուսղև	Քուսղև
10. Tebet	Տփէթ	Տփէթ	Տփէթ	Տփէթ
11. Şetar	Շէրաթ	Շէրաթ	Շէրաթ	Շէրաթ
12. Adar	Ազար	Ազար	Ազար	Ազար
(Ginzel, II, 37)	(Ք. 13բ)	(Ք. 358բ)	(Ք. 15բ)	

9. ՆԻՆ ԱՐԱՐԱՅԻՆ ԱՄԲՈՒՆԻՐ

№ 2001 ձև.	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.
1. Նիսան	Նիսան	Նիսան	Նիսան
2. Իար	Իար	Իար	Իյար
3. Ազար թիբա	Ազար թիբայ	Ազար թիբա	Ազար թիբա
4. Ազար գաւար	Ազար գաւար	Ազար գաւար	Ազարգաւար
5. Երթամուզ	Եր՛ թամուզ	Երթամուզ	Երթամուզ
6. Ելամաբ	Ել ամաբ	Ելամաբ	Ելամաբ
7. Ազար թարսիլ	Ազար զ՛ աթ	Ազար	Ազար թար
8. Ազար թարսաթ	Ազար զ՛ աթ	Ազար թ	Ազար թարսաթ
9. Երգնա	Եր գոն	Երգնոն	Եր գոնա
10. Արոնայ	Արոն	Աարոն	Արոն
11. Կազանդիս	Կազանդիս	Կազանդիս	Կազանդի
12. Երգոբ	Երգոբ	Երգոբ	Երգոբ
(Ք. 32ա)	(Ք. 16ա)	(Ք. 358ա)	

\* № 1969 ձևադիւրը չի սպանի աղանից ամբաների անհնճեցը:



10. ՄԱՍԵԿՆ ԵՎԱԿՆ ԱՍԻՄՆԵՐ

Գինգիլի մաս	№ 1973 ձև.	№ 2068 ձև.	№ 1971 ձև.	Պեճի է լինի
1. Կնիստրոն	Գեմեղրոն	Գզմիւն <sup>6</sup>	Գեմեղրոն	Գեմեղրոն
2. Ելաֆթալիւն	Եզրարբոն	Երարբոն	Եզրարբոն	Եզրարբոն
3. Մունաթիւն	Մոնոթրոն	Նորթոն	Մոնոթրոն	Մոնոթրոն
4. Պարթեւոն	Թերթեղրոն	Թերթեղրոն	Թերթեղրոն	Թերթեղրոն
5. Տարթեւոն	Սիկեթիթրոն	Սիկեթիթրոն	Սիկեթիթրոն	Սիկեթիթրոն
6. Ելատրիւն	Հոկատրոն	Հարարթրոն	Հոկատրոն	Հոկատրոն
7. Մատրիւն	Մեատրոն	Մեատրոն	Մեատրոն	Մեատրոն
8. Պարթեւոն	Բեզրեղրոն	Բեթրեղրոն	Բեզրեղրոն	Բեզրեղրոն
9. Սարթեւոն	Էզրեղրոն	Էզրեղրոն	Էզրեղրոն	Պեւթրոն
10. Մարթեւոն	Մարթրոն	Մարթրոն	Մարթրոն	Մարթրոն
11. Պարթեւոն	Թեատրոն	Թեատրոն	Թեատրոն	Թեատրոն
12. Գարթեւոն	Պարթրոն	Պարթրոն	Պարթրոն	Պարթրոն

(Ginzell, II, 334)

(թ. 15ր)

(թ. 358ա)

(թ. 16ա)

11. ՀՈՒՆԱԿՆ ԱՍԻՄՆԵՐ

Գինգիլի մաս	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Պեճի է լինի
1. Դարթ	Դրարթ	Դրարթ	Դրարթ	Դրարթ
2. Եանիւթ	Բանիթրոն	Բանիթրոն	Բանիթրոն	Բանիթրոն
3. Կարթեւոն	Արարթրոն	Արարթրոն	Արարթրոն	Արարթրոն
4. Դարթ	Դարթ	Դարթ	Դարթ	Դարթ
5. Կարթեւոն	Պարթրոն	Պարթրոն	Պարթրոն	Պարթրոն
6. Դարթ	Դարթ	Դարթ	Դարթ	Դարթ
7. Կարթեւոն	Կարթրոն	Կարթրոն	Կարթրոն	Կարթրոն
8. Կարթեւոն	Հարթրոն	Հարթրոն	Հարթրոն	Հարթրոն
9. Դարթ	Դարթ	Դարթ	Դարթ	Դարթ
10. Կարթեւոն	Արարթրոն	Արարթրոն	Արարթրոն	Արարթրոն
11. Կարթեւոն	Կարթրոն	Կարթրոն	Կարթրոն	Կարթրոն
12. Կարթեւոն	Պարթրոն	Պարթրոն	Պարթրոն	Պարթրոն

(Ginzell, III, 20)

(թ. 12ա)

(թ. 357բ)

(թ. 34ա)

12. ԱՍԻՄՆԱԿՆ ԱՍԻՄՆԵՐ

Գինգիլի մաս	№ 1971 ձև.	№ 2068 ձև.	№ 1973 ձև.	Պեճի է լինի
1. Nisan	Նիսան	Նիսան	Նիսան	Նիսան
2. Ijar	Իար	Իար	Իար	Իար
3. Haziran	Հարթան	Հարթան	Հարթան	Հարթան
4. Tammuz	Թամուզ	Թամուզ	Թամուզ	Թամուզ
5. Ab	Ապ	Ա.	Այապ	Ա. (Կամ ար)
6. Hul	Իլու (լ)	Իլուլ	Իլուլ	Իլուլ
7. Tesrin I	Թերթին զարթ	Թերթին կարթ	Թերթին զարթ	Թերթին զարթ
8. Tesrin II	Թերթին հարթ	Թերթին իրար	Թերթին հարթ	Թերթին հարթ
9. Kanun I	Բանուն զարթ	Բանուն կարթ	Բանուն զարթ	Բանուն զարթ
10. Kanun II	Բանուն հարթ	Բանուն իրար	Բանուն հարթ	Բանուն հարթ
11. Šebat	Շեբաթ	Շեաաթ	Շեբաթ	Շեաաթ (Կամ Շեբաթ)
12. Adar	Ադար	Ատար	Ադար	Ադար

(Ginzell, III, 31)

(թ. 10բ)

(թ. 357բ)

(թ. 34ա)

\* Հայկականում, ինչպես աեսնում ենք, մահեղանական ամիսները սարբեր զատա-  
փրութիւն ունեն, բան հայկականում է:

13. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՄԻՍՆԵՐ\*

Գիցցելի մոս	№ 1973 ձեռ.	№ 2068 ձեռ.	№ 1971 ձեռ.	Պեխ է լինի
1. Ferverdîn	Փրուարտի	Փարարաիւ	Փարվարդին	Փրուարդին
2. Ardebehesht	Արտպեհեհշտ	Արտարեհեհշտ	Արտահեշ	Արտարեհեհշտ
3. Khordad	Խուրտատ	Խուրտադ	Խուրդար	Խուրդադ
4. Tîr	Տիր	Թիրմահ	Տերի	Տիր (Կամ Տիրմահ)
5. Mordâd	Մուրդատ	Մուրդատ	Ազուզաթ	Մուրդատ
6. Sharîr	Շահրիր	Շահրիար	Շահրիե	Շահրիր
7. Mîhr	Միր	Միրահ	Մէհր	Միր
8. Abân	Ապան	Արան	Ապանի	Արան
9. Âder	Ադար	Ադար	Ադար	Ադար
10. Deï (Dae)	Դիմահ	Դահ	Դահե	Դահ
11. Bahman	Պեհման	Բահման	Բահման	Բահման
12. Asfendârmed (Ginzl, I, 278)	Ասֆանդար	Ասֆանդար	Ասպնդար	Ասֆանդար
		(թ. 358ա)	(թ. 19ա)	

14. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՄԻՍՆԵՐ

Գիցցելի մոս	№ 1973 ձեռ.	№ 2068 ձեռ.	№ 1971 ձեռ.	Պեխ է լինի
1. Moharrem	Մուհամատ	Մուհամատ	Մուհամատ	Մուհամատ
2. Safar	Սաֆեր	Սաֆար	Սաֆար	Սաֆար
3. Rebi I	Ռապիլալ աւալ	Ռարի աւալ	Ռարիլ աւալ	Ռարիլ աւալ
4. Rebi II	Ռապիլալ ախիր	Ռարի ախիր	Ռարիլ ախիր	Ռարիլ ախիր
5. Dschumâdâ I	Ճմէտալ աւալ	Ջամաթի աւալ	Ջամալ աւալ	Ջամաթիլ աւալ
6. Dschumâdâ II	Ճմետալ ախիր	Ջամաթի ախիր	Ջամալ ախիր	Ջամաթիլ ախիր
7. Redscheb	Ռաջալ	Ռաջալ	Ռաջար	Ռաջալ
8. Schabân	Շալաան	Շալան	Շահաան	Շալաան
9. Ramadân	Ռամադան	Ռամադան	Ռամադան	Ռամադան
10. Schawwâl	Շաւալ	Շաւալ	Շալուալ	Շահուալ
11. Dhul-kade	Տիլդալատ	Չիլդալ	Չիլթատե	Չիլ դատե
12. Dhul-hiddsche (Ginzl, I, 253)	Տիլհեհա	Չիլհադ	Չիլդիլե	Չիլ դիլե
	(թ. 34բ)	(թ. 357բ)	(թ. 19ա)	

Վերը բերված ամսացանկերից արանձնապես արժեքավոր են վրաց և ազվանից ամիսների անունները, որ մենք բերել ենք 3—4 լավագույն ձևազրկերից: Թէ տարբեր խմբագրություններ մեզ հասած այդ ամսացանկերից ո՞րն է ավելի հարազատ վերարտադրում հին վրացական և ազվանական ամսանունները, մենք դժվարանում ենք ասել և թողնում ենք վրացական և ազվանական մատենագրությունները զբաղվող մեր գիտնականներին և բերելով շորս տարբեր բնօրինակություններ ցանկանում ենք նրանց հնարավորություն տալ համեմատական ուսումնասիրություն կատարել կոնկրետ նյութի վրա:

Ի դեպ, այս տեսակետից հետաքրքիր է պրոֆ. էդ. Աղաջանի լեզվագիտական ուսումնասիրությունն առաջին փորձը՝ ուղիերնի ամսանունների հի-

\* Պարսկական այս ամիսների անունները ղենդական շեն և ոչ պահլավական: այլ միջնադարյան պարսկական: Մատենագրարանը № 2180 ձեռագրում այս ամսանուններն ունեն հետեյալ վերնագրերը: «Եմիսք պարսից, որ ասի շալալի» (թ. 267ա):

ման վրա ցույց տալու նրանց իմաստավորված լինելը. պրոֆ. է. Աղայանի կարծիքով աղվանական ամիսների անուններն ունեցել են բառային որոշ իմաստ, ինչ որ մյուս ժողովուրդների մոտ է: Նա ուղիադես Քուշմանյանի օգնությամբ փորձում է վերծանել աղվաներեն հետևյալ ամիսների անունները՝

Տուլեն — խաղողարեր  
Յիլէ — սերմանելու  
Ի՞ոկաուն — այրեցող  
Խիրնա — երրորդ  
Եխնա — հնձի

Ամիսների անունների մեկնաբանությունները չնայած շատ են տառացի և դժվար է համաձայնել նրանց հետ (այսպես, տուլեն ամիսը, որ ընկնում էր մոտավորապես ապրիլին, հաղիվ թե «խաղողարեր» ասեին), սակայն համեմատական ուսումնասիրության փորձն ինքնին հետաքրքրական է: Աղվաններեն լեզվով մեզ ոչինչ չի հասել, և իրավացի է պրոֆ. էդ. Աղայանը, երբ գրում է. «Այդ ամսանունները պետք է դիտել իբրև թանկագին մնացորդներ՝ աղվանից լեզվի մեզ անծանոթ բառապաշարից»<sup>1</sup>:

Վերին աստիճանի հետաքրքրական է նաև վրոնցական և աղվանական տոմարական սիստեմների պատկանելության հարցը: Այդ երկու հնագույն կուլտուրա ունեցող ժողովուրդների տոմարը, ինչպես երևում է Հովհաննեսի խառնախորանից, պատկանել են եգիպտական սիստեմին: Մեր հրատարակած նյութերը, կարծում ենք, հնարավորություն կտան այդ հարցով զբաղվող կովկասագետ մեր մասնագետներին ուղեցույց ունենալ Հովհաննեսի այս արժեքավոր տեղեկությունները և ավելի խորանալ այդ ուղղությամբ:

Հովհաննեսի խառնախորանը մենք հրատարակում ենք Մատենադարանի N 817 (857) և N 2068 (2106) ձեռագրերից: N 817 ձեռագիրը պարունակում է Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գիրք»-ը և նրա հավելվածում է ընդօրինակված խառնախորանը (թ. 451բ—463ա): Ձեռագիրն ընդօրինակված է 1411 թվին: Գրել սկսվել է Վայցց Չորի Հերմոնի վանքում («Եղև սկիզբն ի դատարին Եղեգեաց, որ կոչի Վայու ձոր, ի վանս Հերմոնի») (թ. 446բ) և ավարտվել Եղվարդի Սուրբ Հակոբա վանքում: Գրիչն է Գրիգորը («Գրիգոր սիրող բանի բառատպեցի»): Նա իր անունը հայտնում է և հետևյալ ծածկագրում՝ «1 2 բ 1 ց 2», որ փոխարինագիր ծածկագրով կարելի է վերծանել՝ «Գրիգոր»: Գրված է գեղեցիկ բոլորագրով:

N 2068 ձեռագիրը հիշատակարան չունի: Ըստ պալեոգրաֆիկ տվյալների ձեռագրի ժամանակը կարելի է որոշել XV դարը: Գրիչն է հանդիսացել Հորը («Ձանարժան Յոբս յիշեա յազալթս: Ընդ նմին և զՍգ. եպիսկոպոս», թ. 359բ): Ձեռագրի բովանդակությունը Տաթևացու «Քարոզգիրք»-ն է, որից հետո ընդօրինակված է խառնախորանը (թ. 360բ—372ա):

Մեր հրատարակած խառնախորանը, ինչպես ասել ենք արդեն, մեզ ծանոթ խառնախորաններից ամենից ընդարձակն է: Այստեղ համեմատու-

<sup>1</sup> էդ. Աղայան, Աղվանից ամսանունները (Տեղեկագիր Հայկ. ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի, Հասարակական գիտություններ, 1946, № 5, էջ 61—64):



Յլան մեջ են գրված այն բոլոր ժողովուրդների ամսացանկերը, որոնք սովորաբար բերված են լինում խառնախորաններից առաջ: Բացի այդ, այս խառնախորաններում կան մի շարք գրաֆիկներ, որոնք բացակայում են մյուս խմբագրությունների մեջ:

Խառնախորանի առաջին գրաֆիկում հստակապես վերագրին է, որը, ըստ հերթականության, մի ամսի համար 30 օրով է, իսկ մյուս ամսի համար՝ 29 օրով (հունվարի համար 30-ով, փետրվարի՝ 29-ով, մարտի՝ 30-ով, ապրիլի՝ 29-ով և այլն):

Երկրորդ գրաֆիկում լուսնի կիսակն է, որը երեք օրվա աղյուսակով է նշված: Այն գեպում, երբ ամսի վերագրիչը 29-ով է սահմանափակվում, կիսակը ունենում է երկու աղյուսակ:

Երրորդ գրաֆիկում յոթներյակն է, որը տրվում է յոթական օրով անփոփոխ հաջորդականությամբ: Հունվարի առաջին օրվա յոթներյակը տրված է է-ով, աշնուհետև Զ է և այլն:

Չորրորդ գրաֆիկում շաբաթագիրն է, որը տրված է դարձյալ յոթական օրով ըստ հաջորդականության: Հունվարի առաջին օրվա շաբաթագիրը Ա է, երկրորդը՝ Բ և այլն:

Հինգերորդ գրաֆիկում շարադրված են հստակապես ամիսների օրերը, վեցերորդում՝ նրանց համապատասխան երբաշական ամիսների օրերը, ութերորդը՝ եգիպտական, իններորդը՝ հայկական և տասներորդը՝ պարսկական: Բոլոր գեպերում, երբ վերևում այս կամ այն ժողովրդի ամսանունների հետ գործ է ածվում «իրոց» բառը, նկատի ունի այդ նույն տոմարական խմբի ամսանունները. այսպես «երրաշեցոց և իւրոց», «այսինքն՝ երբաշականը և նրա խմբին պատկանող ամիսները:

Տասնմեկերորդ գրաֆիկում տրվում են շաբաթվա օրերի տասնուտերները հետևյալ հաջորդականությամբ՝ Արեգակը, Լուսինը, Հրատը, Փայլածուն, Լուսնիազը, Լուսաբերը, Երևակը:

Տասներկուերորդ գրաֆիկում արեգակի այբբենական կոշվող գիրն է: Նա սկսում է գեկտեմբերի 16-ից և ամեն մի հինգ օրվան հատկացնում հայկական այբուբենի մի տառը՝ անցնելով, իհարկե, հաջորդ տարվան: Հունվարի 1-ին արեգակի այբբենական կետը Գ է:

Այբբենական գիրն ըստ հայկական այբուբենի տառերի հետևողականության շարունակվում է մինչև հունիսի 19-ը ներառյալ, վերջանում է «Ք»-ով, ապա՝ հունիսի 20-ից սկսում է հետագարձ հաջորդականությամբ, սկսում է «Ք»-ից պակասել մինչև գեկտեմբերի 16-ը հասնելով «Ա»-ի:

Տասներեքերորդ գրաֆիկում տրվում են արեգակի գոտիները, որ սահմանվում է 10 օրով և նշվում ավյալ տասնօրյակի կենդանակերպը: Հունվարի առաջին տասնօրյակի կենդանակերպը Հրատն է:

Տասնչորսերորդ գրաֆիկում տրվում են արեգակի աստիճանները: Հստ գոյություն ունեցող պատկերացման արեգակը մի օրվա ընթացքում (գիշեր-ցերեկ) անցնում է 200 աստիճան: Նրա սկիզբը սկսում է հաշվել գեկտեմբերի 16-ից և օրական 200-ական աստիճան ավելացումով հաջորդ տարվա հունիսի 19-ին հասնում է 36.000 աստիճանի: Հունիսի 20-ից արեգակի աստիճանները 200-ով սկսում են պակասել, մինչև որ գեկտեմբերի 16-ը վերջանում է:

Տասնհինգերորդ գրաֆիկում արվում են արեդաչի հոլովները: Արեդաչք մի օրվա ընթացքում կատարում է մի հոլով: Նա իր հոլովն սկսում է դեկտեմբերի 16-ից՝ ունենալով նախապես 270 միավոր և յուրաքանչյուր օր մի միավոր ավելանալով հունիսի 19-ին հասնում է 450-ի (180 օրվա ընթացքում), իսկ այնուհետև հետադարձ հաշվով սկսում է պակասել:

Տասնվեցերորդում արված է արեդաչի անցած ճանապարհը ասպարեզներով: Գեկտեմբերի 16-ին արեդաչի անցած ասպարեզների թիվը ամենից ցածրն է, նա ունի 135.000 ասպարեզ, իսկ այնուհետև օրական 500 ասպարեզ ավելացումով հունիսի 19-ին բարձրանում է մինչև 225.000 ( $180 \times 500 + 135.000 = 225.000$ ): Հունիսի 20-ից սկսում է օրական 500-ական միավորով պակասել:

Վերջին գրաֆիկում արվում են օրվա և գիշերվա տեղումայունն զստ ժամերի և մասերի (ժամը ունի 30 մասունք): Գեկտեմբերի 16-ը ամենակարճ օրն է: Այդ օրը ցերեկն ունի 9 ժամ, իսկ գիշերը՝ 15 ժամ: Այնուհետև օրական մի մասնիկի ավելացումով ցերեկվա ժամերի վրա և մի մաս կարճացումով գիշերային ժամերից հունիսի 19-ին ցերեկվա ու գիշերվա տեղումայունը հակադիր պատկեր է ստանում. ցերեկն ունենում է 15 ժամ, իսկ գիշերը՝ 9 ժամ:

Յուրաքանչյուր ամսվա համար խառնախորանում հատկացված է երկու էջ, մեկի վրա վերև թվարկված գրաֆիկներն են, իսկ մյուսում՝ 15 ժողովուրդների ամիսներն ըստ խմբերի: Երկրորդ էջում արված են անշարժ կարևոր տոները և կենդանակերպը:

Ամիսը է ազգի զուգաօրին տարեմաիք և ամսամաիք

Եգիպտացի	Եթեոսացի	Աթենացի	Բաթանիացի	Կապադոկացի	Վրաց	Ադուանից
Թովթ	Մա(ս)բարամ	մենիբիոն	Գեսոս	արտանա	ախածէլի	Նոսարդոն
փսաւի	դեկեմբեթ	թերգեղիոն	երակլիոս	աթրիստրակաս	աթելի	տուլինի
աթուր	իեզա(ր)	սիկեբիոն	զիոս	արուստատաս	աբրիտզի	նամա
քուակ	թարսաս	կա(տո)մբիոն	բեզգեղիոս	աբրի(քս)	աբրիտզինի	ցիլի
տուբիլ	թեր	մետակիտոն	ստրատէզիոս	մարատա	ապանի	բոկաւոն
մեթիլ	եմքաթիթ	բեարեմիոն	պերիփիոս	քսանթրիլի	նունկինի	մարէ
պեմենովթ	մազաւիթ	պիոնեպսիոն	արիոս	միտրիա	նիկրանի	բոնկոն
պարմուլի	միազի	մեմակտիոն	ափրոդիոս	ապրոմ(են)ոմ	իգրակա	ժախուլէն
պաբու	դեմբութ	պիսիդոն	դեմետրիոս	ա(ր)թ(ր)ա	վարուպա	բոնտոկէ
պոնի	եկանի	դոմելիոն	երակիոս	դասուս	մարիլի	օրելին
եփեփ	խամլի	անթեսարիոն	հերմիոս	ոսմենա	քուբա	էխնէա
մեսուրի	ննասի	ադրարիոն	արսեմիոս	Սոնդարա	քուրալուպա	խարա
աւելիաց	աւելաց	աւելիաց	աւելիաց	աւելիաց	աւելիաց	աւելիաց



Ամիսք Դ աղգի դուգաւորին տարեմտիք և ամսամտիք

Երբայեցոց	Արարացոց	Մակեդոնացոց	Կենդանակերպարեզականն	Բնոց սովորեցումք գլխով Ծոստ միտումք Երեմիայի զգրքի	Հայոց	Պարսից
նիսան	նիսան	գեմզիոն	խոյ		Նաւասարգի	Փարսաբ-տին
իւր	ի(յ)ւր	ելլարիոն	ցուլ		հոռի	արասբէնէշու
սիւան	ազազթիբաս	(մո)նոբիոն	եկաւոր		սահի	խուրտազ
թամուզ	ազազարար	թեբրեզիոն	խեցգետին		արէ	թիբման
աւ	ելթամուզ	սիկերիփարիոն	առիւծ		քաղոց	մուրդաս
իլուլ	ելլամար	հրաքեմիոն	կոյս		արաց	շահրիար
թշրին	ազազ	մեսաղեալիոն	կշիւ		մեհեկի	միհրան
միհրշիւան	ազազթարաս	բեթրեմիոն	կարիճ		արեղ	արան
քասդե	ելիթոն	էսմիոն	աղեղնաւոր		ահեկի	ազար
տրեթ	ասորոն	մամա(կե)րիոն	այծեղջիւր	մարերի	զաս	
շրաթ	կաղանդիոն	(ան)թեսարոն	ջրհոս	մարգայ	բանման	
ազար	երզոց	պիսիդիոն	ձուկն	հրոտից	ասիանդար	
աւելեաց	աւելեաց	աւելեաց	մոլորակք	աւելեաց	աւելեաց	

ՀՊԶՄ, ձեռ. № 2068, Թ. 358ա:

Հոտմոց	Յունաց	Ասորոց	Քանիք	Բնոց սովորեցումք գլխով Ծոստ միտումք Երեմիայի զգրքի	Տաճկաց	Քանիք
Յունուար	Դիւստ(ք)ոս	քանուն խրա	1Ա		մուհաւամ	1
Փետրվար	Քսանթիկոս	շաւաս	ԻԸ		սաֆար	ԻԹ
Մարտ	Արտեմէոս	ազար	1Ա		նարի աւալ	1
Ապրիլ	Դէսէոս	նիսան	1		նարի ախր	ԻԹ
Մայիս	Պաննոս	իւր	1Ա		ջամաթի աւալ	1
Յունիս	Ղարիոս	հրաքեմ	1		ջամաթի ախր	ԻԹ
Յուլիս	Գրոպէոս	թամուզ	1Ա		աջասպ	1
Քուրտոս	Հի(ւ)պիթարիոն	աւ	1Ա		շապան	ԻԹ
Սեպտեմբեր	Դիոս	իլուլ	1		ոսմատան	1
Հոկտեմբեր	Ապել(1)իոս	թշրին կարիմ	1Ա	շաւայլ	ԻԹ	
Նոյեմբեր	(Ա.)դենիոս	թշրին խրա	1	դլլայ	1	
Դեկտեմբեր	Պերետիոս	քանուն կարիմ	1Ա	դլլաջ	ԻԹ	

ՀՊԶՄ, ձեռ. № 2068, Թ. 357բ:



բ) Հովհաննէս Իմաստասերի ՇԼԹ աղյուսակը

ՇԼԹ աղյուսակը, ինչպես հայտնի է, 532 տարիների համար կազմված մի ցանկ է, որն իր մեջ ամփոփում է լուսնի 19-ամյա և արեգակի 28-ամյա շրջանները, կոնկրետ նշում՝ թե 532 տարիների շրջանի յուրաքանչյուր տարվա կարևոր տոները երբ են, ինչ վերադիր ունեն և այլն: Նա ՇԼԹ է կոչվում այն պատճառով, որ կազմված է 532 տարիներից, և հայկական տառերով գրելիս նրա թվական գումարը հավասար է ՇԼԹ-ի:

ՇԼԹ-ի այդ աղյուսակը առաջին անգամ կազմվել է Անանիա Շիրակացուց առաջ, սակայն նա վերջնական մշակման է ենթարկվել Շիրակացու կողմից: ՇԼԹ-ն 971 թվի թղթյա նշանավոր ձեռագրից վերցնելով հրատարակել ենք Շիրակացու մատենագրության մեջ<sup>1</sup>: Որ այդ աղյուսակը Շիրակացունն է, մեր կարծիքով անկասկածելի է: Այդ վկայում է հենց ինքը, Շիրակացին. «Եւ քանզի շին տեղեակ բազումք թուոց,— գրում է նա,— մանավանդ շինականք... վասն այսորիկ հինգ հարիւր երեսուն և երկուց ամաց միանգամայն համարեաց... կազմեցի ես Անանիա որդի Յովհաննիսի Շիրակացուց»<sup>2</sup>:

Շիրակացու ՇԼԹ-ն, որ սկսվել էր 552 թվականին, վերջացավ 1084 թվին: Առանց այդ տոմարի անհնար էր անսխալ վարել կրոնական տոները: Նա էր տոմարական հաշիվների ուղեցույցը: Շիրակացու ՇԼԹ աղյուսակի վերջանալուց հետո, պարզ է, որ պիտի լիներ մի գիտակ անձնավորություն, որը Շիրակացու ՇԼԹ աղյուսակի հետևողականությունը բաց աներ տոմարական նոր հաշիվը: Այդ աշխատանքը կատարել է Հովհաննէս Իմաստասերը, նա է կազմել ՇԼԹ-ի նոր աղյուսակը:

Հովհաննէսի կազմած ՇԼԹ աղյուսակը, բարերախտարար, հասել է մեզ: Նա սկսում է 1084 թվից և հասնում մինչև 1615 թվականը: Նա իր բովանդակությամբ և գրաֆիկների թվով զգալի շափով տարբերվում է Շիրակացու աղյուսակից: Հայտնի է, որ Հովհաննէսը հայկական տոմարը շարժականից անշարժ դարձրեց՝ ավելյաց 5 օրվա վրա նահանջի տարին ավելացնելով մի օր, նահանջի տարին ավելյաց ամիսը հաշվելով 6 օր:

Շարժականից անշարժ տոմարի անցնելուց հետո, բնական է, ավելորդ էր դառնում ՇԼԹ աղյուսակի մեջ հոտմեական տոմարական հաշիվների համեմատումը, որն ունի Շիրակացու ՇԼԹ աղյուսակը: Այդ նկատառումով էլ հոտմեական բոլոր գրաֆաները՝ թվով 28 հատ, Հովհաննէսի ՇԼԹ-ում դուրս են նետված: Որոշ շափով կրճատված է և հայկական գրաֆաների շարքը. Շիրակացու 28 գրաֆաներից Հովհաննէսի ՇԼԹ աղյուսակում մնացել է 20-ը:

Հովհաննէսի ՇԼԹ աղյուսակը սկիզբ հանդիսացավ նոր թվականության: Ինչպես որ Շիրակացու ՇԼԹ աղյուսակը սկիզբ դրեց հայկական մեծ կոչվող թվականության, այնպես էլ Հովհաննէսի ՇԼԹ աղյուսակը սկիզբ դրեց մի նոր թվականության, որը տոմարական գրականության մեջ հայտնի է՝ «Փոքր թվական», «Մտրուկ», «Սարկավագիր թվական», «Քննիկոն» և այլ անուններով: XIII—XIV դարերում գրված շատ հիշատակարաններ կան, որոնց մեջ հայոց մեծ թվականի կոչքին հիշվում է նաև փոքր թվականը:

<sup>1</sup> Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 263—282:

<sup>2</sup> Տես նույն տեղը, էջ 299:



Հովհաննեսի ՇԼԲ աղյուսակի առաջին տարին, ինչպես ասացինք, սկսվում էր 1085 թվականից: Ըստ հաջորդականության Հովհաննեսի ՇԼԲ աղյուսակի առաջին տարին պետք է լիներ ոչ թե 1084-ը, այլ՝ 1085-ը. սակայն Հովհաննեսը 1084 թվականը կրկնեց դուրս նետելու համար եկամուտ այն տարին, որը մտել էր հայկական թվականության մեջ: Հովհաննեսի հայկական տարվա ամանորը մարտի 20-ից է հաշվում: Ելնելով այդ հաշվից, նա առաջին ՇԼԲ աղյուսակի սկիզբը ահեկան ամսի 13-ին է դնում, ինչպես այդ իրապես ունի Շիրակացու ՇԼԲ աղյուսակը: Հովհաննեսն իր մի նամակում՝ ուղղված Սարգսին, այդ մասին հետևյալն է գրում. «Յորժամ անարուեստ պատճէն[ն] այն կարգեցաւ, ասի հասարակ լինել գարնանոյն յահի ամսոյ ժԳ»<sup>1</sup>: Հետագա տարիներին շորս տարին մեկ օրով առաջ ընկնելով, հայոց 452—455 թվերին մի տարում երկու նոր տարի տոնեցին, այլ խոսքով՝ մեկ տարով առաջ ընկան: Ահա այս եկամուտ տարին դուրս նետելու նպատակով է, որ Հովհաննեսը 1084 թվականը կրկնել է:

Հովհաննեսն իր այդ նամակում մանրամասն խոսելով տոմարական իր բարեփոխության մասին ցույց է տալիս, որ ոչ տոմարական պատճեն կազմողները և ոչ էլ հետագայում այդ տոմարով առաջնորդողները չեն իմացել եկամուտ տարվա մասին. «Եւ ոչ որ կարաց իմանալ ո՛չ ի կարգողացն զառաջինն՝ թէ այս լինիցի յաւարտման ամին, և ո՛չ ընդունողացն ի նոցանէ որ՝ թէ եղև թիւ եկամուտ, և կամ զպատճառն՝ թէ վասն է՞ր եղև: Զի թէ ոչ զմտանելն ծանեան, զիա՞րդ զպատճառն քննել արգեօք կամ իմանար»<sup>2</sup>: Բայց երբ տոմարում տեսնում էին սխալներ, շարունակում է Հովհաննեսն իր նամակում, անկարգ և անպատշաճ ձևով մի կերպ կարկատում էին՝ նմանվելով այն մարդուն, որ մտթ գիշերը, գավազանով խարխափելով կոտորեն առաջ է գնում՝ առանց ծանոթ լինելու ճանապարհին եղած վիհերի, դուրված քարերի հետ, որոնք տանում են նրան խորտակման:

Ուշադրության արժան է Հովհաննեսի տոմարական բարեփոխության երկրորդ կարևոր կողմը՝ նավասարդի 1-ը զուգընթաց դնելը հոռմեական օգոստոս ամսի 11-ին: Ի՞նչ սկզբունքից էլնելով է Հովհաննեսը կատարել իր այդ բարեփոխությունը: Շիրակացու ՇԼԲ աղյուսակի առաջին տարին, այսինքն 552 թվին, հունվարի 1-ը, ինչպես հայտնի է, արաց ամսի 25-ին էր համապատասխանում, իսկ ՇԼԲ աղյուսակը վերջանալու տարին՝ նահանջի տարիների կուտակման պատճառով հունվարի 1-ը համընկավ մարգաց ամսի 8-ին, այսինքն՝ նավասարդի 1-ի օրը փետրվարի 28-ն էր: Հովհաննեսի ՇԼԲ աղյուսակում, ըստ վերը բերված հետևողականության պետք է համապատասխաներ փետրվարի 29-ին: Սակայն Հովհաննեսն այդ հետևողականությունը պահպանելու փոխարեն նավասարդի 1-ը փետրվարի 29-ից վերցնում և տանում հասցնում է օգոստոսի 1-ը, վեց ամիս և 11 օր օրինական համարվածից հետո:

Այս հարցին, դժբախտաբար, հայագետներից ոչ ոք չի փորձել պատասխանել: Մ. Օրմանյանը, որը հայկական տոմարի բավական գիտակ մեկն է, գեմ առնելով այս հարցին, ոչ մի պատասխան չգտնելով ստիպված է լինում խոստովանել՝ «Բայց չենք գիտեր, թե ինչ ձևով (Հովհաննես-

<sup>1</sup> ՀԳՁԾ, ձեռ. № 1971, թ. 95ա:

<sup>2</sup> Նույն տեղը, թ. 95բ:



սր) նավասարդի մեկը հասցրել է փետրվարի 29-են մինչև օգոստոսի 11 տարին, ինչ որ Հայկա շրջան կոչված 1460 տարիներու դրուխյան»<sup>1</sup>: Տամարագետ պրոֆ. Լ. Սեմյոնովը իր «Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին» հոդվածում անդրադառնալով այս հարցին, պոտասխան շի գտնում. «Սարկավագը, — գրում է նա, — նավասարդ մեկը փետրվարի 29-ից տանում հասցնում է օգոստոսի 11-ին: Ահա նրա այդ երկրորդ «բարեփոխության» իմաստը և նրա իրականացումը մինչև օրս մնում է անհասկանալի»<sup>2</sup>:

Վերջերս այդ հարցին անդրադարձել է բանասեր Հ. Ն. Ակինյանը իր «Հայոց եկեղեցական տարին յոթներորդ դարու սկիզբը» վերնագրով հոդվածում և այն կարծիքն է հայտնել, որ իբր Հովհաննեսի արածը կամայական է և տոմարագիտական որևէ սկզբունքի վրա հիմնված չի եղել. «Հովհաննես Սարկավագ վարդապետի (1085) հավասարակշռությունը, որ կամայական է և չէ հեցած տոմարագիտական ունե հիման վրա»<sup>3</sup>:

Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ մեր հայապետների տարակուսանքներն այդ հարցում անհիմն են: Հովհաննեսն այդ բարեփոխությունը կամայական ձևով չի կատարել, նա ունեցել է սկզբունք և հաշվի է տուել տոմարագիտական ամենանուրբ հաշիվները: Մենք ծանոթ ենք Հովհաննեսի տոմարական-տեսական մի քանի աշխատություններին ու նամակներին, որոնք մեզ հնարավորություն են տալիս այդ հարցը դնելու և վերջնականապես լուծելու:

Հովհաննեսի ելման կետը տվյալ խնդրում գարնանամուտն է հանդիսացել. և՛ որ է եղել հնում գարնանամուտը հայկական ամիսների հաշվով:

Հովհաննեսն այդ հարցը պարզելու համար դիմել է հին հայկական թարգմանական գրականությանը՝ հունարենից, ասորերենից թարգմանված աշխատություններին, որտեղ հունական, ասորական, երբայական անշարժ ամիսների կողքին նշանակված են լինում և հայկական ամիսների անունները, որի հիման վրա կարելի է ասել՝ թե հոռոմեական, ասորական և երբայական անշարժ տոմարով երբ է եղել նավասարդի մեկը: Եվ նա հին թարգմանական մատենագրությունից մի շարք փաստեր բերելով ապացուցում է, որ հայկական ամանորը, այսինքն նավասարդի 1-ը, համապատասխանում էր օգոստոսի 11-ին: Սարկավագի մեջբերումները տվյալ հարցում շատ են. անհրաժեշտ ենք համարում նրանցից միայն մի քանիսը բերել:

Հովհաննես իր «Յողագս ամսոց հայոց և տօնից և յաղագս Դժաներորդաց լուսնոյ Զատկի» աշխատության մեջ հայկական ամիսների համապատասխան զուգակցությունը ցույց տալու համար մեջբերում է անում եղբի և Զաքարիայի մարգարեությունից: Եղբից նա մեջբերում է կատարում հետևյալ հատվածը. «Յամին վեցերորդի Դարեհի կատարեցաւ տաճարն սուրբի Ի. երորդ ամսոյն ադար, որ է մհհեկանի ԻԳ»: Իսկ Զաքարիայից մեջբերում է անում. «Ի Ի. երորդի և Դ. երորդի մետասաներորդ ամսեանն, որ է ինքն արաց յԲ ամի Դարեհի, եղև բան տեսան առ Զաքարիա մարգարէ, Բարաքիայ որդի Ազովայ»: Այս երկու մեջբերումների հիման վրա Հովհաննեսն եզրակացնում է, որ այդ հաշվով երբայական ավելյաց ամիսը համապատասխանում է հայոց արեգ ամսին, իսկ երբայական ավելյաց շորսին գարնանամուտն է<sup>4</sup>:

<sup>1</sup> Մ. Օւմանյան, Ազգապատում, հատոր 1, էջ 1308:

<sup>2</sup> Մատենագրանի «Գիտական նյութերի ժողովածու», № 1, էջ 27:

<sup>3</sup> «Հանդէս ամսօրեայ», 1947, № 3, էջ 173:

<sup>4</sup> ՀԳՁՄ, ձեռ. № 2001, Բ. 164ա—164բ:



Նույն աշխատության մեջ Հովհաննեսը մեջբերում է անում Կյուրեղի Կոստանդինոս կայսրին ուղարկած թղթից՝ «Վասն խաչին պատուականի», որ տալիս է որ՝ «Երևել (խաչին) չէ մաչիս ամսոյ, այսինքն դուիս անկանոյ»: Մարկավագը Կյուրեղի այս տեղեկությունն ամենից հավաստին է համարում և նշում որ՝ «հաւանեալ ընտրեցաք կանովնել ըստ երանելոյն Կյուրղի»<sup>1</sup>: Եթե մաչիսի 7-ը համապատասխանում էր անկանի վերջին օրվան, ապա նավասարդի 1-ը համընկնում է օգոստոսի 11-ին, իսկ գարնանամուտը լինում է արեգ ամսի 12-ին:

Հովհաննեսն իր մի այլ աշխատության մեջ, որը ունի «Նորին Յոհաննու» վերնագիրը, մեջբերում է անում Եվսեբիոսի Եկեղեցական պատմությունից. «էր, ասէ, յամին Թժերորդ թագաւորութեան Գիողղեաթիանոսի և յարեգ ամսեանն, ի ժամանակի, իբրև մերձ էր արն տանի շարշարանաց»<sup>2</sup>: Այստեղից էլ երևում է, որ գարնանամուտը արեգ ամսումն էր, երբ զատիկն է տոնվում:

Ավելի կոնկրետ է Եվսեբիոսից բերած մի այլ տեղեկություն. «Երկիցս անգամ հաւասարել տունջեան և գիշերոյ յարեգ ըստ գարնան և զաշնանն չեղանակի ի հոռի ամսեանն: Եւ պատահէ ըստ յունաց Աժ.երորդ ամսեանն, որ կոչի Գորպէոսի, ըստ ասորոց յԹ.աներորդ ամսեանն որ է իլուլ ի Թժ.երորդ ատար ամսոյն և ըստ հոռոմին նմանապէս յԼ և ի Ժ.իններորդ ամսեանն սեպտեմբեր կոչեցելոյ և Գերմանիկոս, և ըստ եգիպտացոցն առաջին ամսեանն, որ է թովթ, որ ար ԻԱ է ամսոյն և հոռի ամսոյն յԹ»<sup>3</sup>: Ըստ այդ հաշվի, աշնանաչին հավասարությունը եղել է հոռոմեական սեպտեմբերի, հունաց գորպիոս և ասորական իլուլ ամիսների 18-ին, եգիպտական թովթ ամսի 21-ին և հայոց հոռի ամսի 9-ին: Եթե այդ հավասարությամբ որոշելու լինենք նավասարդի 1-ը, ապա նա ընկնում է հոռոմեական օգոստոս, հունական լոչոս, ասորական արամ ամիսների 11-ին, երբայական ար ամսի 23-ին և եգիպտական մեսուրի ամսի 18-ին:

Հովհաննեսն իր այս հաշիվն ամրացնելու համար հին մատենագրերից բերում է այլ մեջբերումներ, որոնք ավելորդ ենք համարում այստեղ մեջբերել: Բայց բերած փաստերը ցույց են տալիս, որ Հովհաննեսը նավասարդի տեղաշարժը կամայական ձևով չի կատարել և պարզ շարադրել է իր սկզբունքը տոմարական իր անտիպ մի շարք աշխատությունների մեջ, որոնք այժմ մենք հրատարակում ենք: Այժմ դառնանք նորից Հովհաննեսի ՇԼԹ աղյուսակին:

Հովհաննեսի ՇԼԹ աղյուսակը մեզ հասել է մի քանի խմբագրությամբ: Նրանք իրարից տարբերվում են գրաֆաների թվով: Ըստ երևույթին ՇԼԹ աղյուսակն ընդօրինակող ամեն մի գրիչ իրեն իրավասու է համարել առանձին գրաֆաներ ավելացնել՝ ելնելով իր ձեռագրի թերթերի ծավալից: Այսպես, Մատեն.-ի № 1973 ձեռագիրն ունի հետևյալ գրաֆաները. բերում ենք մի էջ:

<sup>1</sup> ԶԳՁԲ, ձեռ. № 2001, Թ. 164ր:

<sup>2</sup> ԶԳՁԲ, ձեռ. 1973, Թ. 244ր:

<sup>3</sup> Նույն տեղը, Թ. 245ա:

ՀԱՎՀԱՆՆԵՍ ՍԼԵՐԿԱՎԱԳԻ ՇԼԲ ԱՂՅՈՒԹԱԿԸ

Քանական	Մարման	Մարման	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ
Ա	Բ	Փհեա	Թ	Փհեա	ԻԷ	ապր	ԺԳ	Ա	ապր	Ի	յուհի	Ը	յուհի
Բ	Գ	յուհի	ԻԷ	Փհեա	ԺԷ	ապր	Բ	Ե	ապր	Ե	ժայ	ԻԳ	յուհի
Գ	Դ	յուհի	ԺԷ	Փհեա	Է	ժայ	ԻԲ	Բ	ժայ	ԻԸ	ժայ	ԺԶ	յուհի
Դ	Ե	յուհի	Լ	Փհեա	ԻԱ	ապր	Ժ	Բ	ապր	ԺԶ	յուհի	Դ	յուհի
Ե	Ը	յուհի	ԻԱ	Փհեա	ԺԴ	ժայ	Լ	Զ	ապր	Ա	ժայ	Ի	յուհի
Զ	Ա	Փհեա	Ժ	ժայ	Ե	ապր	ԺԸ	Ե	ապր	ԻԱ	յուհի	Թ	յուհի
Է	Բ	Փհեա	Բ	Փհեա	ԻԳ	ապր	Է	Բ	ապր	ԺԳ	յուհի	Ա	յուհի
Ը	Գ	յուհի	ԺԸ	Փհեա	Թ	ժայ	ԻԷ	Է	ժայ	ԻԸ	ժայ	ԺԶ	յուհի
Թ	Ե	Փհեա	Զ	ժայ	Ա	ապր	ԺԵ	Զ	ապր	ԺԷ	յուհի	Ե	յուհի
Ժ	Զ	յուհի	ԻԹ	Փհեա	ԻԱ	ապր	Դ	Դ	ապր	Թ	ժայ	ԻԸ	յուհի
ԺԱ	Է	յուհի	ԺԳ	Փհեա	Զ	ժայ	ԻԴ	Է	ժայ	ԻԵ	ժայ	ԺԳ	յուհի
ԺԲ	Ա	Փհեա	Դ	Փհեա	ԻԵ	ապր	ԺԲ	Է	ապր	ԺԳ	յուհի	Ա	յուհի
ԺԳ	Գ	յուհի	ԻԵ	Փհեա	ԺԵ	ապր	Ա	Դ	ապր	Ե	ժայ	ԻԴ	յուհի
ԺԴ	Դ	յուհի	ԺԷ	Փհեա	Է	ժայ	ԻԱ	Ա	ժայ	ԻԸ	ժայ	ԺԶ	յուհի
ԺԵ	Ե	յուհի	Լ	Փհեա	Ի	ապր	Թ	Է	ապր	Ժ	ժայ	ԻԹ	յուհի
ԺԶ	Զ	յուհի	ԻԲ	Փհեա	ԺԱ	ժայ	ԻԹ	Ե	ապր	Ա	ժայ	Ի	յուհի
ԺԷ	Ա	Փհեա	Ժ	ժայ	Դ	ապր	ԺԷ	Դ	ապր	ԻԱ	յուհի	Թ	յուհի
ԺԸ	Բ	Փհեա	Բ	Փհեա	ԻԳ	ապր	Զ	Ա	ապր	ԺԳ	յուհի	Ա	յուհի
ԺԹ	Գ	յուհի	ԺԹ	Փհեա	Ը	ժայ	ԻԵ	Դ	ժայ	ԻԹ	ժայ	ԺԷ	յուհի

Ա թ և ժ երբեմնի:  
 ՀԳՁՄ, ձև. № 1973, թ. 24 ա:



Այս ընդօրինակությունից շատ քիչ տարբերվում է Մատենադարանի № 2001 ձեռագրի պարունակած ընդօրինակությունը: Նա ունի ավելի միայն մի գրաֆա՝ զատկի լրումից առաջ «Ք լրման է ի լրումն» վերնագրով: Համեմատաբար ավելի ընդարձակ է Մատենադարանի № 6731 ձեռագրի պարունակած ՇԼԲ աղյուսակի տեքստը: Նա ունի հետևյալ գրաֆաները. ա) նահանջ, բ) թվական, գ) յոթներյակ, դ) վերագիր, ե) օր հայտնության, զ) առաջավորաց բարեկենդան, է) բուն բարեկենդան, ը) լրմունք, թ) օր լրման, ժ) զատիկ, ժա) պենտեկոստե, ժբ) վարդավառ:

Սակայն բոլոր ընդօրինակություններից ամենից ընդարձակը Մատենադարանի № 1999 ձեռագրի ընդօրինակությունն է:

Բնականաբար հարց է առաջանում, տարբեր խմբագրությամբ մեզ հասած ՇԼԲ-ի տեքստերից ո՞րն է նախնականը, ո՞րն է ավելի հարազատ հեղինակի նախնական բնագրին: Այդ հարցը, բարերախտաբար, հնարավոր է լուծել շնորհիվ Հովհաննեսի մի ակնարկի, որ նա անում է Սարգսին ուղարկած իր նամակներից մեկում. «Ըն արդ, — գրում է Հովհաննեսը, — դու իմ Յովսէփ քաջասունդ և պարկեշտագեղ, թէ այդ քեզ ոչ իցէ հաճոյ վասն ստուգի լինելոյ առ ի յինէն իրաւացի պատճառաւ, կալչիր զագնականոնն, որ անմոլարունի զամենայն սահմանեալն վասն տանի և յղանակաց տարոյ, և լրմանց լուսնոյ, զատկաց, վերագրաց, և կթներեկաց, և զառաջաւորաց պահոց և զայլոցն ամենեցուն»<sup>1</sup>:

Հովհաննեսի այս տեղեկությունն ամենից առաջ հետաքրքրական է այն տեսակետից, որ նա ցույց է տալիս, որ ՇԼԲ աղյուսակը կոչվելիս է եղել և «ագնավականոն»: Եզ ապա Հովհաննեսի այս տեղեկության հիման վրա մենք այժմ կարող ենք ասել, թե ինչ աղյուսակներ պետք է ունենար Հովհաննեսի ՇԼԲ-ն: Եթե այդ տեսանկյունով նայելու լինենք ՇԼԲ աղյուսակի ընդօրինակություններին, ապա կարելի է ասել, որ մեզ հասած՝ Հովհաննեսի նախնական բնագրի ամենահարազատ ընդօրինակությունը Մատենադարանի № 1999 ձեռագրի ընդօրինակությունն է, ուր հաջորդական գրաֆաներով տրված են լրումը, վերագիրը, յոթներյակը, առաջավորաց պահրը և այլն՝ այն հետևողականությամբ, ինչ հետևողականությամբ նշված է Հովհաննեսի վերը բերված նամակում:

Մեզ հասած ՇԼԲ աղյուսակներից ոչ մեկը չունի կոնկրետ վերնագիր: Որևէ տեղ չի հիշվում նաև Հովհաննեսի անունը: Բացառություն է հանդիսանում միայն Մատենադարանի № 2001 ձեռագրի ընդօրինակությունը, ուր առաջին երեսի, առաջին գրաֆայի վերևում, մյուս ընդօրինակությունների սովորական «թուական» բառի փոխարեն, ունի «Սկիզբն քուականի հայոց, որ կոչի Սարկաազի» վերնագիրը: Նույն ընդօրինակության հաջորդ էջի վրա «լրման քանիք» աղյուսակի «ԽԱ» թվահամարի վրա խաչանիչ ծանոթության նշան է գրված և ներքին լուսանցքում նշված՝ «Իր տօմարին բառ Սարկաազի»<sup>2</sup>:

Հովհաննեսի ՇԼԲ աղյուսակի տեքստը մեծ մասամբ մեզ հանդիպում է առմարական ժողովածուներում, գլխավորապես Հովհաննեսի առմարական

1 ՀԳՁԹ, ձեռ. № 1971, Թ. 96ա:

2 ՀԳՁԹ, ձեռ. № 2001, Թ. 77ա:

3 Նույն տեղը, Թ. 77բ:



աշխատությունների շարքում, որը նույնպես ապացուցում է այդ աշխատության Հովհաննեսինը լինելը: Հովհաննեսի տոմարական աշխատությունները են, Ծիրակացու աշխատությունների նման, հավաքված են եղել առանձին տոմարական ժողովածուի մեջ, դրանք բոլորը Հովհաննեսի հեղինակությանը պատկանող աշխատություններ են ճանաչված եղել և ավելորդ է համարվել ամեն մի աշխատության, հատկապես ազյուսականների ու բոլորակների վերնագրում Հովհաննեսի անունը կրկնելը:

Մատենադարանի № 1999 (2019) ձեռագիրը, որից մենք հրատարակում ենք Հովհաննեսի ԾԼԲ-ն, բովանդակությամբ տոմար է, հիշատակարան շունի, բայց պալեոգրաֆիկ ալյալներով նրա ժամանակը կարելի է որոշել XIII դարը: Ձեռագիրը գրված է երեք տարբեր գրչություններով, որոնցից առաջին մասի պիրմանը երկաթգրից բոլորագրի անցնող գրչությունն է, իսկ ձեռագրի միջին և վերջին մասը գրված է բոլորագրերով: Ինչպես երևում է, ձեռագրի վրա աշխատել են երեք գրիչներ:

Ձեռագրի առաջին մասում թողված երկու փոքրիկ հիշատակագրություններից երևում է, որ ձեռագրի պատվիրատուն է հանդիսացել ոմն Գրիգոր. «Տր. Յս.Քս.,— կարգում ենք հիշատակագրություններից մեկում,— որդմեաց Գրիգորի և ծնողաց իւրոց, ստացողաց գրոյս» (թ. 59բ):

#### գ) Հովհաննես Իմաստասերի «Պատճէն տոմարի» և «Մեկնութիւն տոմարիս հայկազնեայ» աշխատություններ

Տոմարական բովանդակություն ունեցող ձեռագրերում հաճախ կարելի է հանդիպել «Պատճէն տոմարի» վերնագրով մի աշխատության, որը գործնական խորհուրդներ ու հաշիվներ է պարունակում վերագիրը, յոթներյակը, կիսակը, ՔՓ. երյակը և տոմարական այլ հաշիվներ գտնելու համար: Դա յուրատեսակ տեղեկատու է տոմարով զբաղվող մասնագետի համար: Գուցե և այդ նկատառումով էլ նա կոչվում է «պատճէն»՝ մեկնելու, բացատրելու իմաստով:

Հայկական տոմարական ձեռագրերում մի քանի տեսակ «Պատճէն տոմարի» աշխատություններ են հանդիպում՝ «Պատճէն տոմարի հայոց», «Պատճէն տոմարի հոռոմոց», «Պատճէն տոմարի սաւրոց», «Պատճէն տոմարի երալեցոց», «Պատճէն տոմարի Սարկաւազի» և այլն: Այդ «Պատճէն»-ներից յուրաքանչյուրը, բայց բովանդակած տոմարի, աշխատում է մեկնել, խորհուրդներ տալ տվյալ տոմարական սիստեմի վերաբերյալ: Տոմարական ձեռագրերում բազմաթիվ են ոչ միայն «Պատճէն»-ների տեսակները, այլև նրանց խմբագրությունները: Մենք փորձեցինք Մատենադարանի ձեռագրերում եղած պատճէնները որոշ սիստեմի բերել, խմբագրությունները որոշել, սակայն պարզվեց, որ նրանք այնքան շատ են և իրարից այնքան են տարբերվում, որ այդպիսի կարգումն անհնարին է: Իրավացի է «Պատճէն տոմարի» ընդօրինակող գրիչներից մեկը, երբ իր արտագրած «Պատճէն»-ի կապակցությամբ տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Գոն յայլ օրինակ ալլատարազ պատճէնագրութիւնը, բայց աղէկ է և պարզ, և այս է հասկանալի»<sup>1</sup>:

<sup>1</sup> ՀՊԶԲ, ձեռ. № 1973, թ. 8ա:



«Պատճէն տոմարի» բոլոր աշխատութիւնները, անկախ նրանց տեսակներից ու խմբագրական տարրերութիւններից, բաժանվում են երկու խմբի, որոնցից մեկը հին հայկական տոմարի պատճենագրութիւնն է, իսկ մյուսը՝ նոր հայկականի: Առաջինը կազմել ու խմբագրել է Անանիա Շիրակացին, իսկ երկրորդը՝ Հովհաննեսը: Կան ձեռագրեր, ուր պատճենների վերնագրում հիշվում է Շիրակացու կամ Հովհաննեսի անունը. «Պատճէն տոմարի ըստ հայերէն բուականի, գոր կարգեալ է Անանիայի Շիրակունոյ վարդապետի» Մատենագարան, № 6731, ք. 166ա—179ա, № 2036, ք. 1բ—26ա և այլն), «Պատճէն տոմարի հայոց Սարկաւազին» (ՀՊՁՄ, № 1999, ք. 243ա—248բ, 254ա—276ա) և այլն: Նշված խմբի պատճենագրութիւնը հեշտ է տարրերել իրարից, որովհետև նրանցից յուրաքանչյուրը տարրեր տոմարական հաշվի վրա է կառուցված: Առաջինը շարժական տոմարի հաշիվներով է շարագրված, իսկ երկրորդը՝ անշարժ: Հովհաննեսի մոտ զարնանամուտը սահմանված է մարտի 20-ին, իսկ նավասարդի 1-ը՝ օգոստոսի 11-ին: Տարրեր է նաև հանապազորդը՝ առաջինինը 40 է (ե), իսկ երկրորդինը՝ 46 (ե2) և այլն:

Հովհաննեսի «Պատճէն տոմարի»-ի մասին հիշատակութիւն ունի ինքը՝ հեղինակը: Նա իր մինամակում այդ մասին գրում է. «Եւ ըստ այսմ հանդիպի հասարակատրութիւն գարնանային չերկոտասան արեգ ամսոյ, ըստ որում և մեր կանոնագրեցար և գրովանդակ պատճէն տոմարին»<sup>1</sup>:

Հովհաննեսի՝ վերը բերված տեղեկութիւնից երևում է, որ նա, իրապես, կազմել, կամ ինչպես ինքն է ասում, կանոնագրել է՝ բովանդակ տոմարի պատճենը: Բովանդակ ասելով այստեղ Հովհաննեսը նկատի ունի և՛ հայկական, և՛ հռոմեական, և՛ երբայական ու ասորական պատճենների վերաձշակումն ըստ տոմարական նոր հաշիվների: Շիրակացուն վերագրվող «պատճէն»-ների և Հովհաննեսի «պատճէն»-ների համեմատութիւնից պարզ երևում է, որ Հովհաննեսն իր պատճենագրութեան համար ատաղձ է ունեցել ու մշակել է Շիրակացու «Պատճէն տոմարի»-ն: Հովհաննեսի պատճենագրութեան մեջ ինքնուրույն, հեղինակի սեփական ստեղծագործութիւնն է վերջին գլուխը, որը, սովորաբար, վերնագրված է լինում «Պատճէն տոմարի հայոց Սարկաւազին» ձևով: Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել մի էջ Մատենագարանի № 1999 ձեռագրից.

Ձկրկնակ ամսոցդ այսպէս արա: Կալ զամիսն և զիւր կրկնակն և երբ է է որ մնայ, առաջիկա ամսոյն կրկնակ է: Եւ այլոց ազգացդ այսպէս արա: Իսկ զամսամուտ և զարագիտ. զձնունդ յուսնի և զլուսնն. և զաւտւր յուսնի որպէս զաւագ հայոյն արա:

Թուական այսպ[էս արա]. կալ զմեծ բուական հայոյն, շլբ ի բաց երբ, որ մնա[լ], այն է բուականն:


Վերադիր այսպ[էս արա]. կալ գրուականն և երբ ժբ ժբ, զմնացեալն մետասանապատեա, դ րիս ի բաց երբ և զայլն երբ և և, որ մնա[լ], վերադիր է: Բայց ի նահանջիցն նահանջի գ երբ զյարակայդ:

Հովհաննեսն իր այս աշխատութեան մեջ մեկնում, բացատրում է իր տոմարական սխառմը և ծանոթացնում նրանից օգտվելու ձևի հետ:

<sup>1</sup> ՀՊՁՄ, ձեռ. № 1971, ք. 93բ:



Հովհաննեսի տոմարի պատճենագրության մասին որոշ տեղեկություններ հայանի են եղել հայագիտության մեջ. նա հիշված է ձեռագրերի մի քանի ցուցակներում: Սակայն նրանով առանձին ոչ ոք չի զբաղվել և մնում է դեռ շուտումնասիրված:



Նկ. 4. Խմաստների վառնացոյցի-ի բոլորակը ՀՊԶՄ-ի № 1973 ձեռագրից (բ. 71ա):

կում, ուրեմն պետք է ենթադրել, որ նրա «Պատճէն տոմարին»-ը Հովհաննեսի բնագրից պետք է սկիզբ առնել և ոչ ուրիշ մեկնությունից: Տվյալ ձեռագրում Հովհաննեսի աշխատությունները պատահական ձևով հավաքված ու կազմված գործեր չեն, այլ մեկն առնչվում է մյուսի հետ, մեկը շարունակությունն է հանդիսանում Հովհաննեսի մյուս աշխատությանը:

2. Այդ նույն աշխատությունից մի հատված՝ ժամանակագրական բովանդակությամբ, մտա երկու էջ ծավալով (սկսում է «ՅԱղամայ մինչև ի ջրհեղեղն մեծ, որ առ նոյիս՝ ամբ ՍՄԽԹ...»), տառացի վերցված է Մատենադարանի № 1495 ձեռագրից, որ հատվածի վերնագրում կոնկրետ նշված է, որ դա Հովհաննեսի աշխատությունն է:

3. Եվ, վերջապես, նշված ձեռագրի պատճենագրության մեջ բերված տոմարական հաշիվները, նրանց շարագրանքի հերթականությունը պարզ ցույց են տալիս, որ դրա հեղինակը ուրիշ ոչ ոք լինել չի կարող, քան Հովհաննեսը:

Հարց է առաջ գալիս, Հովհաննեսի անունով հրատարակվող ներկա տերատում չկա՞ն արդյոք հետամուտ հատվածներ, ընդմիջարկություններ: Մեր կարծիքով կան նրա ապացույցը թ. 20բ-ում բերված գրչի հետևյալ հի-

Հովհաննեսի մատենագրությանը նրվիրված ներկա հատորում մենք հրատարակում ենք մատենագրանի № 1973 ձեռագրի պարունակած «Պատճէն տոմարին» աշխատությունը, ենթադրելով, որ նա մեզ ծանոթ պատճենագրություններից ամենահարազատը պետք է լինի Հովհաննեսի նախնական բնագրին: Մեր մեջ այդ համոզմունքը ստեղծվել է հետևյալ փաստերի հիման վրա.

1. № 1973 ձեռագիրը ժողովածու է և մեծ մասամբ Հովհաննեսի տոմարական գործերն է պարունակում:



շատակագրութիւնն է. «Յետ այսր գրեցից և գտանց նահանջիցն ըստ գրութեան մեծին Սարկաւագի՝ համառօտ և դիւրին զուգակարգութեամբ: Ընկալեալ դու, եղբայր իմ տէր Արրահամ, լցեալ ի հոգոյն շնորհաց, ընթերցցես և զիս անարժան ու անուանակիցս քո, գտտանուն գրիշս զՅովհաննէս թէ և արժանի համարեսցիս յիշելոյ զիս»: Այս հատվածը, անկասկած, գրչի հիշատակագրութիւնն է, որը մտել է տեքստում և նրա օրգանական մասն է գառել:

Մատենադարանի № 1973 ձեռագիրը, ըստ վերջում եղած հիշատակարանի, գրված է հայոց ՉՂԱ. (1342) թվին Երզնկայում, Գրիգոր գրչի կողմից, Արրահամ քահանայի պատվերով: Հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Գրեցաւ դիրքս այս, որ է տումար, ի հայոց թեականիս ՉՂԱ, ի ղեկտեմբեր Գ, ձեռամբ մեղուցեալ և անարժան հոգոյ հաւասար ծառայի Գրիգորիս սուտանուն քահանայի... ի քաղաքիս Երզնկայի, ի խնդրոյ սրբամարտի և առաքինազարգ, շնորհաշուք քահանային Արրահամո» (թ. 327բ):

Այս Գրիգոր գրիչը, ինչպես պարզվում է, Հովհաննէս Երզնկացու աշակերտն է եղել: Ինքը, Հովհաննէս Երզնկացին մասնակցել է ձեռագրի գրելու գործում և թողել է իր փոքրիկ հիշատակարանները. «Ազաշեմ գրեղ Տէր, յիշեալ զիս, զմեղաւոր գրչիկս զՅովհաննէս» (թ. 38):

Ուշագրութեան արժանի է, որ տոմարական որոշ ազդուականներ ըստ հիշատակարանում պահված տեղեկութեան, բերվել են Անիից. «Այս բոլորքս են Դժ.ան, յԱնդրէասէն են հանած. գայտաբիկը յԱնոյ մեղ Արմազան երեք մեր սուրբ վարդապետն, Տրագն ճշմարիտ և արեգակն լուսաւորիչ խաւարեալ սզոց մերոց Յովհաննէս»: Հիշատակագրի խոսքն այստեղ, անշուշտ, Հովհաննէս Երզնկացու մասին է: Հավանական է, այդ ձեռագիրը Հովհաննէս Սարկավագի իրեն կամ զուցե իր աշակերտներից մեկի ընդօրինակած ձեռագիրն է եղել, պահվել է Անիում, ուր և ապրել ու ստեղծագործել է մեր հեղինակը, ապա XIV դարում բերվել է Երզնկա Հովհաննէս Երզնկացուն:

Ձեռագրի պատվիրատուն, ինչպես երևում է մի շարք հիշատակագրութիւններից, Արրահամն է հանդիսացել, տոմարական գիտութիւնը սիրող և ինքն անձամբ տոմարով գրագլոյ մեկը:

Հովհաննէսի «Պատճէն»-ին կից ներկա հատորում մենք տեղավորում ենք նաև տոմարական մի այլ տեքստ ևս, որն ունի «Մեկնութիւն տոմարին հայկազնեայ» վերնագիրը: Չնայած Սարկավագի անունն այդ աշխատութեան վերնագրում չկա, սակայն մենք տոմարական այդ տեքստը համարում ենք Հովհաննէսինը և տեղավորում նրա մատենագրութեան մեջ հետեւյալ փաստերի հիման վրա.

ա. Տոմարական այս աշխատութիւնը, որը պահել է Մատենադարանի № 1973 ձեռագիրը, մեծ մասամբ Հովհաննէսի տոմարական աշխատութիւններից է բաղկացած, ուստի անհէղինակ այս տեքստը ևս, ամենայն հավանականութեամբ, պիտք է պատկանի Հովհաննէսին:

բ. Նույն ձեռագրում ընդօրինակված՝ Հովհաննէսի մի քանի նամակներում, որոնք ուղղված են Սարգիս անունով մեկին, ակնարկվում է այս աշխատութիւնը գրելու մասին: Այսպես, նա իր «Յարագս եզանակաց և աանից...» աշխատութեան սկզբում գրում է. «...յարագս հայ ամսոց, և լեզանակաց և այլոց, զորս խնդրեցերն, յառաջնումն մատենի անդ գրեալ



տառքեցի առ քեզ, զոր բառական կարծելով, թէպէտ և էր համաջօտ...» (№ 1973, թ. 238ա): Հովհաննեսն այստեղ, մեր կարծիքով, ակնարկում է իր վերը հիշված աշխատությունը, որի ներածական մասից ևս երևում է, որ վերջին աշխատությունը գրած է եղել նույն պատվիրատուի հանձնարարությամբ. «Պահանջեցեր լինէն ուսումնասէր, վասն հայկազնեան տումարիս տանից տարեկանաց շրջաբերութեան, որ ոչ ընդ այլազգ[ե]ացց գիւղեալ նահանջիցն շարաթանալով զգարծն վերստին անու» (№ 1973, թ. 158բ): Երկու աշխատությունն էլ, մեր կարծիքով, Հովհաննեսը գրած է եղել Սարգսի պատվերով:

դ. «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» աշխատության լեզուն, տոմարական արվեստի հմտությունը և առաջադրվող տոմարական սկզբունքները դարձյալ ապացուցում են տոմարական այդ աշխատության՝ Հովհաննեսի հեղինակությունը պատկանելը: Այդ կապակցությամբ բերենք գարնանային գիշերահավասարի խնդիրը, որը հայ տոմարական գրականության պատմության մեջ, առաջին անգամ, արեւոյ ամսի 12-ին է դնում Հովհաննեսը՝ զուգադրելով այն հռոմեական մարտի 20-ին, իսկ երբայականով՝ նրանց ավելյաց ամսի վերջին: Այդ նույն սկզբունքը շեշտված ձևով գրված է ներկա աշխատության մեջ:

Մեզ թվում է, որ Հովհաննեսի այս աշխատությունը վերջից պետք է թերի լինի: Բացի ներածական խոսքից Հովհաննեսն իր պատվիրատուին ուղղված որոշ խոսքեր պետք է ունենար իր աշխատության վերջում, ինչպես որ ունեն նրա մի քանի այլ աշխատությունները: Հավանական է, այդ վերջին մասը ընդօրինակողները կրճատել են:

«Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» աշխատության տեքստը մեզ հայտնի է միայն № 1973 ձեռագրից, որից կազմել ենք նրա տեքստը:

#### դ) Հովհաննես Խնաստասերի «Յաղագս Ե.Եկի» աշխատությունը

Հովհաննեսի այս աշխատությունը մեզ հայտնի է գարծել հինգ ձեռագրերում՝ № № 1971, թ. 60ա—63բ, 2762, թ. 3ա—5ա, 2180, թ. 430ա—432ա, 1973, թ. 237ա—238ա և 2001, թ. 159ա—162ա: Առաջին երեք ձեռագրերը պատկանում են մի խմբի, իսկ մյուս երկու ձեռագրերը՝ այլ: Առաջին խմբի ձեռագրերում Հովհաննեսի այս աշխատությունը վերնագրված է. «Յովհաննեսու արաբեալ մեկնութիւն, որ մականուն Սարկաուգ կոչի. Յաղագս Ե.Եկին», իսկ մյուս ձեռագրերում՝ «Սարկաուգ վարդապետի ասացեալ» և «Սարկաուգին ասացեալ» ձևով:

Մեր կարծիքով, առաջին խմբի վերնագիրը երկու մասի պետք է բաժանել՝ «Յովհաննեսու արաբեալ մեկնութիւն, որ մականուն Սարկաուգ կոչի» և «Յաղագս Ե.Եկին»: Առաջին վերնագիրն ընդհանուր է և վերաբերում է Սարկավագի տոմարական-տեսական բոլոր այն աշխատություններին, որոնք մտել են տվյալ ժողովածուի մեջ, իսկ երկրորդը՝ այդ աշխատության միայն մի գլխի՝ առաջին գլխին, ուր իրապես խոսվում է հինգհարյուրյակ բոլորակի մասին: Առաջին, այսինքն՝ ընդհանուր վերնագիրը գրված է ուշ շրջանում, որովհետև Հովհաննեսի տոմարական այդ ժողովածուն, ինչպես հետո կտեսնենք, մի ամբողջականություն չի կազմում և գրված է Հովհաննեսի կողմից տարբեր



ժամանակներում, տարրեր կապակցություններ: Այդ ժողովածուի մեջ մտել են նույնիսկ Հովհաննեսի գրած նամակները առժամի մասին Սարգիս անունով մեկին՝ տարրեր ժամանակներում: Ուշ շրջանում տոմարական արվեստով հետաքրքրվող և սիրող մեկը Սարկավագի տոմարական աշխատությունները հաժապել է մի ժողովածուի մեջ ու վերնագրել այն՝ «Յովհաննու արաբեալ մեկնություն, որ մակնուն Սարկավագ կոչի»: Անկասկած ուշ շրջանում են գրված մյուս երկու վերնագրերը ևս՝ «Սարկավագ վարդապետի է ասացեալ», կամ՝ «Սարկավագին ասացեալ»: Մեր կարծիքով, նախնականն է միայն «Յարգագա Շեկին» վերնագիրը, որը կոնկրետ վերաբերում է շարագրվող տեքստի բովանդակությանը:

Հովհաննեսի այս աշխատության ձեռագրական համեմատությունից պարզվեց, որ նա պատկանում է երկու տարրեր խմբի: Առաջին խմբին են պատկանում № № 1971, 2762, 2180 ձեռագրերը, իսկ երկրորդին՝ № № 2001 և 1973 ձեռագրերը: № 1973 ձեռագրի տեքստը թերի է. նա վերջանում է՝ «Նոր վասն զի ժամանակն այնպէս պատեհ է գոլ, պարտ է կարծել յառաջագոյն զնել Շեկին, քան զԼԹ Յուստիանոսի» պարբերություն (թ. 238ա):

Հովհաննեսն իր այդ աշխատության մեջ զխավորապես կանգ է առել հինգհարյուրյակ կոչվող բոլորակի պատմության վրա և աշխատել է հերքել այդ հարցում եղած սխալ տեսակետները: Այսպես, նա սխալ է համարում այն տոմարագետների հաշիվը, որոնք գտնում են, թե իբր ՇԼԲ բոլորակը, այսինքն՝ լուսնի 13-ի և արեգակի 28-ի բազմապատիկ թիվն ստեղծվել է հոռմեական 252, երբայական 100 և 180 հանապազորդ կոչվող թվերի գումարից: Հովհաննեսը ցույց է տալիս, որ մինչև Հուստինիանոս կայսեր 34-րդ տարին, այսինքն՝ 562 թվականը, ՇԼԲ բոլորակ, ընդհանրապես, գոյություն չի ունեցել: 562 թվականից առաջ ընդունված է եղել ղեկավարվել 25-ամյա և 200-ամյա աղյուսակներով: Այս կապակցությամբ Հովհաննեսը քննադատում է նմանապես այն տոմարագետներին, ովքեր փորձում են իբր թե նոր ՇԼԲ-ի սկիզբը զնել Փիլիպոս կայսեր երկրորդ տարին: Հովհաննեսը կոնկրետ փաստերով ցույց է տալիս, որ Փիլիպոսի երկրորդ տարին ոչ թե նոր ՇԼԲ բոլորակի սկիզբը գրվեց, այլ հոռմեական թվականի երկրորդ հաղարամյակի. լրացել էր Հոռմի կառուցումից սկիզբ առնող տրադիցիոն թվականի հազար տարին, որը, որպես կրոն հազարամյա մի շրջան, զեն զնելով նոր հազարամյակի սկիզբը սկսվեց: Այդ թվականից մինչև ՇԼԲ բոլորակի ստեղծումը անցավ 313 տարի, ուստի ՇԼԲ-ի տարեթիվը գտնելու համար անհրաժեշտ է գումարել 313 թիվը:

Հովհաննեսի «Յարգագա Շեկ» աշխատության տեքստը մենք կազմել ենք № 1971 ձեռագրի ընդօրինակության հիման վրա, որը, ինչպես մեր համեմատությունից պարզվեց, լավագույնն է: Սակայն այս ընդօրինակությունը ևս ուներ թերություններ, նկատվեցին մի քանի տողերի բացթողումներ, Հովհաննեսի մի քանի դարձվածքները պարզված են, երբեմն նախագաղափար օրինակի գծվար հասկանալի բառերը բաց են թողնված: Հաշվի առնելով այս հանգամանքը, մենք անհրաժեշտ համարեցինք № 1971 ձեռագրի տեքստում որոշ ուղղումներ կատարել № 2001 ձեռագրի հիման վրա՝ նշելով այդ մասին, իհարկե, տողատակ ծանոթության մեջ:



## 2. Հայկական ամիսների զուգընթացության վերաբերող աշխատությունը

Մասենադարանի № 1971 ձեռագրում Հովհաննեսի «Յազազա Շեկի» աշխատությունից հետո ընդօրինակված է նրա հայկական ամիսների՝ հոտմեական և երբաշական ամիսների հետ ունեցած զուգընթացությանը վերաբերող աշխատությունը: Նույն հաջորդականությամբ է ընդօրինակված նաև № 2180 և № 2762 ձեռագրերը:

Հովհաննեսի այս աշխատությունը № 1971 ձեռագրում վերնագիր չի ունեցել: Ուշ շրջանի գրչությանը միայն գրված է «Նորին Յովհաննու Սարկաազ վարդապետի» վերնագիրը: Հետագա № 2180 և № 2762 ձեռագրերի ընդօրինակությունների մեջ ուշ շրջանում ավելացված այս վերնագիրն ընդօրինակվել է վերջին երկու ձեռագրերում և նրա օրգանական մասը դառել: Հավանական է, որ № 1971 ձեռագրի ընդօրինակողն այդ վերնագիրը դնելիս ծանոթ է եղել հին ընդօրինակության հետ: Ուշագրության արժանի է, որ № 1973 հին ձեռագրում ևս այդ տեքստը վերնագրված է «Նորին Յովհաննու» ձևով: Ուրեմն, այդ աղճատումը կատարվել է հին ձեռագրերում: Մեր կարծիքով Հովհաննեսի այդ աշխատությունը վերնագիր չպետք է ունենար, որովհետև նա օրգանական շարունակություն է կազմում «Յազազա Շեկի»-ի Աղճատումը հավանաբար կատարված լինի հետևյալ հանդամանքում. նախագազափար օրինակում վատ ընթերցվելու պատճառով ընդօրինակող գրիչը մեկ-երկու տող բաց է թողել: Երրորդ ձեռքն ընդօրինակելու ժամանակ անհրաժեշտ է համարել տողերով բաժանված՝ Հովհաննեսի աշխատության երկրորդ մասը ու նրա հեղինակության պատկանելը շեշտելու նպատակով վերնագրել «Նորին Յովհաննու» ձևով:

Հովհաննեսն իր այս աշխատության մեջ նախ կանգ է առել զարնանային գիշերահավասարի վրա: Նա բերում է գոյություն ունեցող տարբեր տեսակեաները և դանում, որ գոյություն ունեցող տեսակեաներից ամենից հիշար մարտի 20-ն է, որը համապատասխանում է եգիպտացոց պեմենովթ ամսի 24-ի, երբաշեցոց ավելյաց 4-ին, իսկ հայոց՝ արեգի 12-ին: Մարտի 20-ին զարնանային գիշերահավասարը գնելով՝ իր տեսակետը հաստատելու համար նա մեջբերումներ է անում վաղ քրիստոնեական աշքի ընկնող հեղինակներից, որոնց աշխատությունների հայկական թարգմանությունների մեջ, երբաշական ու հոտմեական ամիսներին զուգընթաց հայ թարգմանիչների կողմից տրված է նրանց զուգընթացությունը հայկական ամսաթվերով: Մեջբերումներ են արված Փիլոնից, Հովսեպիոսից, Անատոլիս Աղեքսանդրացուց և այլն: Մեծ ուշագրություն է դարձված եվսեբիոսի եկեղեցական պատմության վրա, որից բերված են բազմաթիվ մեջբերումներ: Մարտի 20-ը զարնանային հավասարության հիմք ընդունելով, այն համապատասխանեցնելով արեգի 12-ին և այդ հեռուդականությամբ զուգադրելով հայկական ամսաթիվը հոտմեականին, նավասարդի 1-ը ընկնում է օգոստոսի 11-ին: Այս մասին մենք խոսել ենք վերևում և շենք ցանկանում կրկնել այստեղ:

Հովհաննեսի տոմարական այս աշխատությունը մենք կազմել ենք № 1973 ձեռագրի ընդօրինակության հիման վրա, որը, մեր կարծիքով, լավագույնն է: Նկատվող առանձին սխալները մենք ուղղել ենք № 1971 ձեռագրի ընդօրինակության հիման վրա:



3. «Յաղագս ըստ հոռոմոց ամսոց, և Գժեհորդին լուսնոյ զատկաց, և փոփոխմանց իրաց և յարակայից»: Հովհաննեսի հաջորդ տամարական աշխատությունը № 1971 ձեռագրի խմբին պատկանող ընդօրինակություններում վերնագրված է: «Յաղագս հոռոմայեցոցն ամսոց և Գժեհորդն լուսնոյ զատկաց և փոփոխմանց իրաց և յարակայից» (№ № 1971, թ. 64բ—72բ, 276Զ, թ. 10ա—15բ, 2180, թ. 436ա—441ա): Փոքր ինչ տարբերվում են № № 2001 և 1973 ձեռագրերի ընդօրինակությունները: Այստեղ նա ունի՝ «Յաղագս ըստ հոռոմոց ամսոց, և Գժեհորդին լուսնոյ զատկաց, և փոփոխմանց իրաց և յարակայից» վերնագիրը (№ № 2001, թ. 167ա—178ա, 1973, թ. 255բ—260ա):


Տեքստերի համեմատությունից պարզվեց, որ մեկ հասած ընդօրինակություններից լավագույնը № 2001 ձեռագրի ընդօրինակությունն է: Նա լավագույնն է ոչ միայն այն տեսակետից, որ պահպանում է ընթերցանության հին և ընտիր ձևեր, այլև որ այդ ընդօրինակությունը պահպանել է հեղինակի մասնավոր խորհուրդը Սարգիս անունով մեկին գիտությունը հետևելու մասին: Եյս հատվածը, որը տվյալ աշխատության վերջաբանն է, անդամահատվել է մյուս բոլոր շրջս ընդօրինակությունների մեջ:

#### Սակայն № 2001

ձեռագրի ընդօրինակության վերջից, առանց վերնագրի, կրցվել է վերագրին վերաբերվող մի տեքստ, որը ոչ մի կապ չունի տվյալ աշխատության հետ: Հավանական է, նախագաղափար ձեռագրում թերթեր են ընկած եղել կամ գուցե թերթերը խտոնրվել են և դա տեղիք է տվել շփոթության: Այդ հավելված տեքստը սկսում է թերթ 175բ-ից՝ «ի նահանջի ամի եկամուտյաւրն»,

որ ի՞նչ ամիս յաւելու...» պարբերությունում և վերջանում թերթ 178ա-ում՝ «Արեգակն ընթանայ ի կէտէ ի նոյն կէտ»:

Հովհաննեսն իր «Յաղագս ըստ հոռոմոց ամսոց...» աշխատության մեջ կանգ է առնում հոռոմեական թվականի առաջացման վրա և Փիլիպոսի կայսրության երկրորդ տարին համարում երկրորդ հազարամյակի սկիզբը: Փիլիպոսի կայսրության առաջին տարուց մինչև Անդրեասի 200-ամյակը հաշվում է 104 տարի, որը երկուհարյուրամյա շրջանի հետ 304 է անում,



Նկ. 5. Արեգակի և լուսնի հեռավորության բոլորակ ՀՊՁՄ-ի № 1973 ձեռագրից (թ. 71բ):



որը և գումարում ենք հաշվական թվականը գտնելու համար: Այնուհետև Հովհաննեսը կանգ է առնում «չորեքտասան» կոշիկով տոմարական հաշվի վրա և գտնում, որ ՇԼԲ բոլորակը կարգելու առաջին տարին լուսնի շորեքտասանը 13 էր: Այս կապակցությամբ նա քննադատում է մի շարք տոմարագետների, որոնք սխալ հաշիվ են առաջարկում: Հովհաննեսը բավական ընդարձակ կանգ է առել ամիսների փոփոխականության փաստի վրա և ցույց տվել, որ նրանք ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվել: Այսպես, օրինակ, փոփոխվել են երբայական տոմարի մեջ երեք ամիսները: Հռոմեական ամիսները նույնպես փոփոխվել են: Նախկին զկվինտալիոս ամիսը փոխվել և Հուլիոս Կեսարի անունով օգոստոս է կոչվել: Վերջում Հովհաննեսը կանգ է առել հարակալի վրա և ցույց տվել, որ նախկինում հարական 40-ն է հանդիսացել, բայց իր տոմարական բարեփոխությունից հետո նոր հարական սահմանվել է 46:

Հովհաննեսի «Յաղագս ըստ հոռոմոց...» աշխատությունը հրատարակում ենք № 1973 ձևագրի հիման վրա: Աննշան փոփոխություններ կատարված են ըստ № 1971 ձևագրի:

#### 4. «Յաղագս եղանակաց և տօնից և քանոսութեան ամսոց դիպարանութեամբ ի նոյն տեսութիւն»

Հովհաննեսի այս աշխատությունը մեզ հասել է հինգ ձևագրերով: Նա հայանի է երեք տարբեր վերնագրերով: № 1971 խմբի ձևագրերում նա ընդօրինակված է որպես Հովհաննեսի «Յաղագս ըստ հոռոմայեցոցն ամսոց և Դեկրորդաց լուսնոյ...» աշխատության հավելվածը և ունի «Յաղագս երից ժամուց» վերնագիրը: Ըստ որում, Հովհաննեսի անունը աշխատության վերնագրում հիշված չէ: № 2001 ձևագրում Հովհաննեսի այս աշխատությունն ունի միանգամայն այլ վերնագիր՝ «Սարկաւազի սակս երկուցն ապրիլի և չորիցն անմիաբանութեան» (թ. 154ա—159ա): Այս աշխատությունը միանգամայն այլ վերնագիր ունի № 1973 ձևագրում: Նա այնտեղ վերնագրված է. «Յոհաննու քահանայի Յաղագս եղանակաց, և տօնից և քանոսութեան ամսոց դիպարանութեամբ ի նոյն տեսութիւն» (թ. 238ա):

Հովհաննեսի՝ երեք տարբեր վերնագիր կրող աշխատության ընդօրինակությունները նույնն են, ունեն միայն գրչական տարբերություններ և որոշ ընդօրինակությունների մեջ տեքստը կրճատված է: Նշված ընդօրինակություններից, համեմատաբար, ամենից լրիվը № 1973 ձևագրի ընդօրինակությունն է: Այս ընդօրինակությունը պահել է Հովհաննեսի ներածական մասը, որից երևում է, որ նա այս աշխատությունը գրել է ինչ-որ մեկի պատվերով, որի համար գրած է եղել նաև մի այլ աշխատություն: Նա այդ մասին պարզ գրում է. «Յաղագս հայ ամսոց և յեղոնակաց և այլոց, զորս խնդրեցերն, յառաջնումն մատենի անդ գրեալ առաքեցի առ քեզ, զոր բաւական կարծելով, թէպէտ և էր համառօտ, այլ գերկորոզն քո հատուցանել խնդիր, որ վասն երկուցն և չորիցն ապրիլիոս ամսոյ անմիաբանութիւն» (թ. 238ա):

Հավանական է № 2001 ձևագրի գրիչը Հովհաննեսի այս նամակի բովանդակության հետ ծանոթ լինելով պատշաճ է համարել վերնագրել՝ «Սարկաւազի սակս երկուցն ապրիլի և չորիցն անմիաբանութեան», այսինքն, այն, ինչ որ Հովհաննեսի նամակում ասված է:



Հովհաննեսն իր ներկա աշխատության մեջ նպատակ է ունեցել, հիմնականում, ապացուցել, որ լուսնի լրումը Շեկի սկզբին պետք է հաշվել, ո՛չ թե ապրիլի 2-ը, ինչպես ոմանք պնդում են, այլ ապրիլի 4-ը: Իր այդ թեզն ապացուցելու համար համոզիչ հաշիվներ է անում և բազմաթիվ փաստեր բերում:

Հովհաննեսի ներկա աշխատությունը մենք կազմել ենք № 1973 ձեռագրի ընդօրինակության հիման վրա: Տեղ-տեղ աննշան փոփոխություններ են կատարված ըստ № 1971 ձեռագրի տեքստի:

№ 1971 ձեռագրում Հովհաննեսի այս աշխատությունը շարունակվում է երեք այլ գլուխներով՝ «Յաղագս յարակայի», «Յաղագս վերադրաց» և «Յաղագս ըսպէից», որոնց Հովհաննեսին պատկանելն անկասկած է, ուստի և այդ գլուխները մենք բերում ենք՝ վերցնելով № 1971 ձեռագրից:

## 5. Հովհաննեսի նամակն ամիսների անշարժության մասին

№ 1971 ձեռագրի տոմարական ժողովածուի մեջ Հովհաննեսի՝ վերը հիշված «Յաղագս ըսպէից»-ից հետո ընդօրինակված է նաև մի նամակը, որը տոմարական բովանդակություն ունի: Նա ընդօրինակված է հետևյալ ձեռագրերում՝ № № 1971, թ. 84ա—85ա, 2762, թ. 22բ—23ա և 2180, թ. 447բ—448բ: Հավանական է, որ տոմարական արվեստով զբաղվող մեկը, իր ձեռքն ունենալով այդ նամակը կամ նրա ընդօրինակությունը, տեղավորել է Հովհաննեսի աշխատությունների շարքում:

Նամակը երեք ընդօրինակություններում ունի «Նորին առ Սարգիս» վերնագիրը: Չեռագրում ընդօրինակված նախորդ աշխատությունները, ինչպես տեսանք, Հովհաննեսինն են, ուստի և կասկած լինել չի կարող, որ այստեղ «Նորին» ասելով նկատի ունեն Հովհաննեսին:

Սարգիսը, որին ուղղված է Հովհաննեսի նամակը, մեզ ծանոթ անձնավորությունն է: Հովհաննեսն այդ նույն Սարգիսն է նվիրել իր մի բանաստեղծությունը, որի մասին մենք խոսել ենք սկզբում: Այս նույն Սարգիս հանձնարարությամբ Հովհաննեսը պետք է գրած լինի տոմարական այն աշխատությունների մեծ մասը, որոնք հայտնի են մեզ № 1973 և № 1971 ձեռագրերի խմբերում:

Հովհաննեսն իր նամակն սկսում է Սարգիսն ուղղված մի բացատրականով. «Զքո՛ւ ո՛վ պատուականդ ինձ և փափագելի, լուեալ և յոյժ ախորժեալ զինդիր հրամանի՛ վերստին երկրորդել զառ ի յինէն գրեալ վասն հայկական ամսոց շարժութեան պատճառս» (թ. 84ա): Հովհաննեսի խոսքերից երևում է, որ ավյալ հարցի մասին նա էլի աշխատություն է գրել և այժմ «վերստին երկրորդել» է կամենում: Ո՞րն է եղել նրա առաջին աշխատությունը, դրա մասին խոսք կլինի հետո:

Հովհաննեսն իր այս նամակում գլխավորապես կանգ է առել իր կատարած տոմարական բարեփոխության վրա և աշխատել է ապացուցել իր վերջրած սկզբունքը: Խոսելով հայկական ամիսների շարժական լինելու մասին նա ցույց է տալիս, թե ինչպես ինքը հայկական տոմարն անշարժ դարձնելով վերացնում է այն շփոթությունը, որ հաճախ լինում էր անցյալում: Այստեղ էլ Հովհաննեսը բացատրում է հայկական ամիսների անշարժությունը դարձանային գիշերահավասարի, մարտի 20-ի վրա հիմնվելու իր սկզբունքը: Նա մեղքերումներ է անում Եզրից, Զաքարիայից, հունական թարգմանություն-



ներից և ցույց տալիս, թե ինչպես հնում դարնանային գիշերահավասարը լինում էր հայոց արեգ ամսին, որը զուգադիպում էր եբրայական ավելյաց և հռոմեական մարտ ամիսներին: Հովհաննեսն այնուհետև կանգ է առնում հայկական շարժական տոմարի կիրառման ընթացքում նահանջի օրերի կուտակման փաստի վրա: Հիմնվելով Շիրակացու կազմած ՇԼԲ բոլորակի վրա ցույց է տալիս, որ ՇԼԲ բոլորակի առաջին տարին դարնանային գիշերահավասարը ահեկի ամսի 13-ին էր, իսկ հետագայում, շորս տարին մեկ անգամ առաջ բնկնելով, մի ամբողջ տարի առաջ բնկավ: Հովհաննեսը գատապարտում է այն հայ տոմարագետներին, որոնք ո՛չ նոր տարու մտնելն են իմացել և ո՛չ էլ նրա պատճառը քննել. «Եւ ոչ որ կարաց իմանալ, ոչ ի կարգոդացն պատաշինն՝ թէ այս լիցի յաւարտման ամին, և ոչ յընդունողացն... զի թէ ոչ դմտանելն ծանեան, զիս՝ որդ կարէին զպատճառն քննել...» (№ 1971, թ. 95բ): Հովհաննեսն այնուհետև շարունակում է, թե ինչպես երբ տեսնում էին բացահայտ սխալներ, մի կերպ կարկատում էին և այդպես յուր գնում՝ «Բայց միայն յորժամ տեսանէին զսխալմունս որ պատահեալ լինէին, յաւզէին և կարկատէին բանս անոճս և անըմբոսս» (№ 1971, թ. 95բ): Հովհաննեսն այնուհետև կանգ է առնում իր սկզբունքի վրա և հանձնարարում Մարգարի օտվել իր կազմած «ազնվականոն»-ից, ուր անմոլար ձևով կազմված են տոմարական հաշիվները: Նամակի վերջում Հովհաննեսը խոստում է նաև դատկի հանապազորդի, յոթներյակի, վերադրի մասին և ծանոթացնում նոր տոմարով հաշվելու ճիշտ ձևի հետ:

Հովհաննեսի այս նամակի տեքստը մենք կազմել ենք № 1971 ձևագրի ընդօրինակութայն հիման վրա և աննշան ուղղումների կատարել № 2762 ձևագրի տեքստով:

## 6. Մարկավագի տոմարական պատառիկը

Հովհաննեսի տոմարական այն պատառիկը, որի մասին մենք ցանկանում ենք խոսել ստորև, պահել են Մատենադարանի շորս ձևագրերը՝ № № 1973, թ. 262—263բ, 2762, թ. 27բ—28ա, 1971, թ. 97ա—98բ, և 2180, թ. 452բ—453ա: Բոլոր շորս ընդօրինակություններում էլ այն ունի «Նորին Յովհաննու» վերնագիրը:

№ 1973 ձևագրում այս տեքստն անդամահատված է: Վերջինիս մեջ նա սկսում է՝ «Այլ թէպէտ յուովս ինչ ածաք ի վկայութիւն» պարբերությունից, իսկ նրանից առաջ նախադասությունն անդամահատվել և տեքստի վերջն է բնկել:

Պատառիկի բովանդակությունը հայկական ամիսների նույն աշխատություն մասին է: Հովհաննեսի կողմից բերվում են եկեղեցական աշքի բնկնող հին հեղինակների աշխատություններից մեջբերումներ, աշխատելով ապացուցել ճշտությունն այն զուգորդության, որը նա իր տոմարում ստեղծել է:

Պատառիկի տեքստում սակայն ընդօրինակողների կողմից կատարվել են տեքստային կոպիտ աղավաղումներ. այսպես՝ դարնանային հավասարություն տեքստում գրված է «զիններորդ արեգ ամսոյ», մինչդեռ պետք է լինի «երկուսասներորդ արեգ ամսոյ»: Աղավաղումը, հավանական է, կատարվել է հետևյալ ձևով. սկզբնական բնագրում եղել է «ԸԹերորդ արեգ ամսոյ»,



որը սխալ ընթերցանություններ են հղում և «Թերթիկ» արեգամային «Ժ»-ն «Ե»-ի տեղ է ընդունվել և դուրս ընկել, իսկ «բ»-ն աղավաղվել «թ»-ի: Հովհաննեսի պատահական տեքստը մենք վերցրել ենք № 1971 ձեռագրի ընդօրինակությունից և մի քանի տեղ ուղղումներ կատարել № 1973 ձեռագրի տեքստի հիման վրա:

## 7. «Յաղագս Թժերեկ ամացն»

Հովհաննեսի այս աշխատությունը մեզ հասել է միայն № 1971 ձեռագրի խմբին պատկանող երեք ձեռագրերում: Նա ունի՝ «Նորին Յովհաննու Յաղագս Թժերեկ ամացն» վերնագիրը (№ № 1971, Թ. 93ա—95բ, 1973, Թ. 260—263բ, 2762, Թ. 28բ—30ա և 2180, Թ. 453ա—455ա):

Հովհաննեսն իր այս աշխատության մեջ նպատակ է դրել պարզ, հասկանալի լեզվով շարադրել լուսնի շորեքտասան լրումը 19 օրով առաջ ու հետ խաղալու մասին: Նա նշում է այդ իր աշխատության հենց սկզբում. «Քտգիտաց ոմանք տարակուսին յաղագս Դժաներորդաց սրբոյ զատկի, որ Թժամօք յառաջ և վերջ խաղայ զատիկն: Արդ՝ թէպէտ և գիտնոց յայտնի է ստուգապէս, յաղագս տգիտաց սուղ ինչ բանիւ նշանակեսցուք» (Թ. 100ա):

Հովհաննեսի այս աշխատությունը շարունակվում է հետևյալ երեք գլուխներով՝ «Պատճառ խանգարման զատկին» (№ 1971, Թ. 95բ—97ա), «Պատմութիւն սրբոյ զատկին» (նույնը, Թ. 97բ—106բ) և «Յաղագս Ծեկին» (նույնը, Թ. 106բ—107ա), որոնց՝ Հովհաննեսի հեղինակությունը պատկանելը կասկածելի է: Նախ՝ այս գլուխների լեզուն շատ հեռու է Հովհաննեսի լեզվից: Այսպէս՝ Հովհաննեսը քննադատական վերաբերմունք ունի, ընդհանրապես, դեպի բնագիրը, իսկ այդ չի նկատվում ներկա գլուխներում: Եվ, վերջապես, Հովհաննեսը օրիգինալ հեղինակ է, իսկ այս տեքստը կազմող հեղինակը «Պատմութիւն սրբոյ զատկին» գլխում ծայրե ի ծայր արտագրել է Շիրակացու զատկի մասին գրած ճառից (հմմտ. Շիրակացու մատենագրությունը, էջ 292—293):

Զնայած Հովհաննեսի աշխատության հավելվածում եղած այս երեք գլխի նկատմամբ մեր ունեցած տարակուսանքին, այնուամենայնիվ մենք նպատակահարմար համարեցինք այն զետեղել Հովհաննեսի մատենագրության մեջ բանասիրության քննությանը ներկայացնելու համար: Մենք շքանկացանք մեր տարակուսանքն անվիճելի ճշմարտություն ներկայացնել, մանավանդ որ այս երեք գլուխներից հետո ընդօրինակված նյութը Հովհաննեսին է «Նորին Յովհաննու» վերնագրով: Գուցէ և Հովհաննեսի այս աշխատությունն արտագրողին հայտնի է եղել այս գլուխների իրոք Հովհաննեսին պատկանելը, որի պատճառով և նա անհրաժեշտ է համարել հաջորդ նյութը վերնագրել «Նորին Յովհաննու» ձևով:

Հովհաննեսի այս աշխատությունը մենք կազմել ենք № 1971 ձեռագրի ընդօրինակության հիման վրա: Տեղ-տեղ ուղղումներ ենք կատարել № 2762 ձեռագրի տեքստով:

## 8. Հովհաննեսի՝ լուսնի լրման և խավարման մասին գրած պատահիկը

Հովհաննեսի այս աշխատության մասին խոսք եղավ սկզբում: Նա № 1971 ձեռագրում Հովհաննեսի տոմարագիտական վերջին տեքստն է: Վեր-



նագրից չի երևում տեքստի բովանդակությունը: Նա վերնագրված է «Նորին Յովհաննու» ձևով միայն:

Հովհաննեսի այս գործը փոքրիկ աշխատություն է, ավելի շուտ՝ պատահիկ երկու և կես էջի ծավալով: Տեքստում խոսված է լուսնի լրման և մի խավարման մասին, որը տեղի է ունեցել 1115 թվականին:

Հովհաննեսի այս փոքրիկ աշխատությունը մեզ հայտնի է երեք ձեռագրում միայն՝ № № 1971, թ. 107ա—111բ, 2762, թ. 37ա—39ա և 2180, թ. 461բ—464ա:

Հովհաննեսի այս աշխատության տեքստը մենք կազմել ենք № 1971 ձեռագրի ընդօրինակության հիման վրա՝ համեմատելով № 2762 ձեռագրի տեքստի հետ:

### 9. «Յաղագս ամսոց հայոց և տօնից և յաղագս Դժաներորդաց լուանոյ գատկի»

Հովհաննեսի այս աշխատությունը մեզ հայտնի է միայն երկու ընդօրինակությամբ՝ Մատենադարանի № № 1973 և 2001 ձեռագրերի ընդօրինակություններով, որոնք իրարից քիչ են տարբերվում և պատկանում են մի խմբի: № 1973 ձեռագրում նա ունի՝ «Յովհաննու քահանայի Յաղագս տանից և Դժաներորդաց լուանոյ գատկի» վերնագիրը, իսկ երկրորդը՝ «Նորին Յաղագս ամսոց հայոց և տօնից և յաղագս Դժաներորդաց լուանոյ գատկի» վերնագիրը: Վերջին վերնագրում «Նորին» բառը գործ է ածվել Հովհաննեսի համար, որովհետև նախորդ աշխատությունները Հովհաննեսին են և այստեղ նրանք անունը շարունակարգով չկրկնելու համար, վերնագրել են «Նորին» ձևով:

Հովհաննեսն իր այս աշխատության մեջ խոսում է այն շփոթության մասին, որը գոյություն ունի հայկական տոմարի մեջ՝ վերջինիս շարժական լինելու պատճառով: Չորս տարին մեկ անգամ նահանջ տարիների համար մեկական օրվա կուտակումը անցնելով տվյալ տարվա շրջանակից շփոթության պատճառ է հանդիսացել: Հովհաննեսը մեջբերումներ անելով Նորից և Զաքարիայի մարգարեության հայկական թարգմանություններից, իր նախորդ աշխատություններում կատարած եղանակով, ցույց է տալիս, որ տարվա սկիզբը զարնանային դիշերահավասարն է, իսկ V դարում, զարնանային դիշերահավասարը եղել է արեգ ամսի 12-ին, երբայական ավելիաց ամսի վերջին օրը, իսկ ըստ հռոմեականի՝ մարտի 20-ին: Հովհաննեսը հաշվում է նահանջ օրերի քանակը և գտնում, որ 1460 օրերի ընթացքում հայկական տոմարի մեջ մուտք է գործել ուղիղ մեկ տարի նահանջ, որը ինքն անհրաժեշտ է համարել դուրս նետել: Ահա այդ նկատառումով էլ նա խորհուրդ է տալիս, որ ՇԼԹ թվականի հիման վրա տարին գտնելու համար հայկական թվականից պետք է դուրս գալ ո՛չ թե ՇԼԹ, այլ ՇԼԳ՝ հաշվի առնելով եկամուտ տարին:

Հովհաննեսի ներկա աշխատության բնագիրը վերցրել ենք № 2001 ձեռագրից և ուղղումներ կատարել № 1973 ձեռագրի հիման վրա: Վերջին ձեռագրի ընդօրինակությունն ունի տասը տողի չափ և ավել մի տեքստ, որը հեռագայի ընդմիջարկություն է:

## 5. ՀՈՎՆԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԵԼՍԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննեսի բանաստեղծություններից հայագիտության մեջ հանրաժանոթ է նրա «Բան իմաստութեան ի պատեառս զքօսանաց առ ձագն, որ զաղօքանցաւ նորա հոռուղէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ» վերնագրով տաղը: Հովհաննեսի այս տաղը պահել է Մարավանի դպրոցի մատենադարանի մի ձեռագիր աղօթագիրքը: Տաղի տեքստը, դպրոցի վարչության հանձնարարությամբ, արտագրվել և ուղարկվել է Վենետիկյան Մխիթարյաններին, որ և Հ. Ղ. Ալիշանի կողմից հրատարակվել է 1847 թվին «Բազմավէպ»-ում<sup>1</sup>: Հովհաննեսի այս տաղը, Ալիշանից առնելով, երկրորդ անգամ, 1944 թվին հրատարակել է պրոֆ. Մ. Աբեղյանը իր «Հովհաննես Սարկավագ վարդապետ» վերնագիրը կրող հոդվածի հավելվածում<sup>2</sup>:

Հովհաննեսի այս քերթվածն առանձնահատուկ ուշադրության է արժանացել ու բարձր գնահատվել հայագիտության մեջ: Այսպես, Ալիշանը գրանում է, որ Հովհաննեսի այս տաղը «մեր գրականության մեջ աննման գրվածոց մեկն է»<sup>3</sup>: Պրոֆ. Մ. Աբեղյանը Հովհաննեսի այս տաղը համարում է նշանակալից նորություն հայ մատենագրության մեջ. «Սարկավագ վարդապետի բանաստեղծություններից, — գրում է նա, — մնում է միայն մեկը՝ «Բան իմաստութեան ի պատեառս զքօսանաց առ ձագն, որ զաղօքանցաւ նորա հոռուղէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ»: Այս մեծ (188 երկայն տողերով) քերթվածն իր ձևով և բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության պատմության մեջ: Եթե դա պատահամբ փրկված շիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»<sup>4</sup>: Եվ նա ցավելով ավելացնում է. «Եվ ո՞վ գիտե՞ քանի՞ այդպիսի արժեքավոր բանաստեղծություններ ոչնչացել են»<sup>5</sup>:

Ի դեպ, «Սարեակ»-ի մի ընդօրինակություն, նոր գրչությամբ, մենք տեսել ենք Երուսաղեմի Հայոց Ազգային պատրիարքարանի մատենադարանի ձեռագրերից մեկում<sup>6</sup>:

<sup>1</sup> «Բազմավէպ», 1847, էջ 221—225:

<sup>2</sup> ՏԵՍ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր, 1944, № 1—2, էջ 53—58:

<sup>3</sup> Ղ. Ալիսան, «Յուշիկ», Բ հատար, էջ 295:

<sup>4</sup> Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր, 1944, № 1—2, էջ 39:

<sup>5</sup> Նույն տեղը:

<sup>6</sup> Այդ ձեռագիրը գրանցված էր № 1527-ի տակ:



Քացի «Սարեակ»-ից հայազիտության մեջ մատնացույց են արվել Հովհաննեսի երեք տաղը՝ «Յոհաննու փահանայի առ Սարգիս վասն տաղիցն», «Նորին վասն միտոյ ողբականին» և «Նորին Յոհաննու առ կոյրն աչեղագոյն և լուսաւոր» վերնագրերով: Հովհաննեսի այս տաղերի մասին տեղեկութուն հաղորդել է Ոսկյանն իր «Հովհաննես Սարկավագի գրութիւնները» հոդվածի մեջ՝ հիմք ունենալով Քեշիշյանի կազմած Զմմատի ձեռագրերի ցուցակը: Ոսկյանի տեղեկութունից երևում է, որ նշված տաղերն ընդօրինակված են Զմմատի մատենագարանի № 195 ժողովածուի մեջ հետևյալ հերթականութեամբ.

ա. Թ. 136բ, «Յոհաննու սուրբ վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց...»:

բ. Թ. 138ա, «Վասն մաշկեկին, յորոյ վերայ թանաքն վայլեցաւ...»:

գ. (անդ), «Յոհաննու քահանայի առ Սարգիս վասն տաղիցն...»:

դ. Թ. 138բ, «Նորին վասն միտոյ ողբականին»:

ե. (անդ), «Նորին Յոհաննու առ կոյրն աչեղագոյն և լուսաւոր...»<sup>1</sup>:

Զմմատի մատենագարանի № 195 ժողովածուի խմբին պատկանող հին գրչութեամբ մի ձեռագիր, բարբախտաբար, գտնվեց Հայկ. ՍՍԻ Մինիստրներին Սովետին կից Պետական ձեռագրատանը (Մատենագարանում), որտեղ ընդօրինակված են Հովհաննեսի վերը հիշված բոլոր աշխատութիւնները, բացի «Սարեակ»-ից: Սակայն, մեր ուսումնասիրութիւնից պարզվեց, որ Հովհաննեսի վերը հիշված երեք տաղերի խնդրում Ոսկյանը բացարձակ թյուրիմացութեան մեջ է. նշված երեք աշխատութիւնները՝ «Առ Սարգիս վասն տաղիցն Յոհաննու փահանայի» (Մատենագարան, ձեռ. № 7, Թ. 91բ—92ա), «Նորին վասն միտոյն ողբականին» (նույնը, Թ. 92ա—92բ) և «Առ կոյրն աչեղագոյն և լուսաւոր Յոհաննու փահանայի» (նույնը, Թ. 92բ—93ա) ո՛չ թե տաղեր են, այլ Հովհաննեսի նամակները:

Հովհաննեսն իր այս նամակներից առաջինում, որն ուղղված է Սարգիս անունով մեկին, բացատրում է իր տաղերի նպատակադրումը՝ «Առ Սարգիս, Վասն տաղիցն»:

Հովհաննեսի առաջին նամակի մեջ արված մի ակնարկից երևում է, որ նա իր տաղերը գրել է կրօնական աշխատութիւնների հավելվածում. «Վրստահութիւն կարծեմ և ո՛չ ինչ նուազութիւն երջանիկդ հոշակելոյ,—գրում է նա,—ամփոփել ո՛չ միայն զաղաթականդ, որ է և յառաջացելոյ, այլ և զանճառագոյնսն, զոր պատահ է առնուլ»<sup>2</sup>:

Հարց է առաջանում, թե Հովհաննեսն իր ո՞ր տաղերը նկատի ունի վերը բերված ակնարկով: Մեր կարծիքով նա նկատի ունի «Սարեակ» տաղը: Մենք այդ ենթադրում ենք հիմք ունենալով հետևյալը. Հովհաննեսի այս նամակը տեղավորված է որպէս հավելված «Սարեակ»-ի Զմմատի մատենագարանի աղոթագրքում: Սկզբում Հովհաննեսի աղոթքներն են, ապա ընդօրինակված է «Սարեակ»-ը և հետո՝ այս նամակը: Պարզ է, որ Հովհաննեսի նամակը և տաղը պատահական ձևով իրար մոտ շէին կարող բերվել: Կասկածելի կարող է այստեղ երևալ այն, որ այս նամակը միայն մի տաղի կապակցութեամբ չի գրվել, այլ երկու և ավելի տաղերի՝ «Վասն տաղիցն»: Դրա բացատրու-

<sup>1</sup> «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 236—237:

<sup>2</sup> ՀՊՁԳ, ձեռ. № 7, Թ. 91բ:



թյունը հեշտ է տալ, եթե մենք նկատի ունենանք, որ Հովհաննեսի «Մարեակ»-ը ձեռագրում երկու տարբեր տաղ է համարվում՝ ա) «Քան իմաստութեան ի պատճառս գրօսանաց...», և բ) «Վասն մաշկեկին, յորոյ վերայ քանակն վայրեցաւ»:

Ուշադրության արժանի է Հովհաննեսի մյուս նամակը, որը վերնագրված է. «Նորին (Յոհաննու), վասն միւսոյն՝ ողբականին»: Ուրեմն, առաջին նամակը մի տաղի մասին է եղել, իսկ երկրորդը՝ մյուսի, որի վերնագիրը, բարեբախտաբար, նա հիշում է «Ողբ» («Վասն ողբականին»): Առաջինը, ինչպես տեսանք, «Մարեակ»-ին է վերաբերում, իսկ ինչի՞ մասին է երկրորդը: Հասել է արդյոք Հովհաննեսի անունով «Ողբ» վերնագրով այսպիսի մի տաղ:

Մատենադարանի վերը հիշված ձեռագրում մեզ հաջողվեց հայտնաբերել Հովհաննեսի երկրորդ նամակում ակնարկված այդ տաղը: Նա վերնագրված է՝ «Նորին (Յոհաննու) առ Սարգիս, Ողբ»<sup>1</sup>:

Հովհաննեսի այս տաղը բաղկացած է 40 տողից: Տողերի առաջին տառերը ակրոստիկոսով հոգվում են. «Յովհաննէս Բանանայ Սարգիս Մեծի ինզպա Ած կենդանի»: Այսպիսով, և՛ վերնագրում, և՛ տների առաջին տառերի ակրոստիկոսում նշված է տաղի՝ Հովհաննեսի հեղինակությանը պատկանելու փաստը: Կասկած չի կարող, որ այստեղ խոսքն առաջին նամակի վերնագրում հիշված Սարգիսին է վերաբերում: Ի դեպ, Հովհաննեսը ժամարի կապակցությամբ այդ Սարգիսին գրել է այլ նամակներ, որի վրա մենք կանգ կառնենք իր տեղում:

Հովհաննեսի այս տաղի շափր նույնն է, ինչ որ «Մարեակ»-ինը, այսինքն այն, ինչ ընդունված է հայկական անվանել: Տաղը միահանգ չէ: Բովանդակությամբ կրոնական է:

X—XIII դարերում հայ բանաստեղծական գրականությունը, ինչպես հայտնի է, բավականաչափ զարգացած է եղել: Այդ շրջանից մեզ հասած արժեքավոր աշխատությունների շատ կան: Սակայն, մեր կարծիքով, բանաստեղծական իր վարպետ կառուցվածքով, իր շնչով, իր խոհական բովանդակությամբ Հովհաննեսի այս տաղը միջնադարյան հայ բանաստեղծական գրականության զուտ գործոցներից մեկը կարելի է համարել:

Հովհաննեսի «Ողբ»-ի մանրամասն վերլուծումն ու քննությունը թողնելով տաղերգուներով զբաղվող մեր մասնագետների քննությանը բնթերցողներին փոքր ինչ ծանոթացնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել միայն չորս տող.

«Դեղ կենաց քնձեռեա աշխատելոյս ի յոլովից մահացուցչաց զեղարբութեանց. Առնուլ ինձ շնորհեա զմախթանաց իմոց խնդիրս առատարաշխ և ողորմած. նախ ընկալ փառատրութեամբ արժանացո զիս մարդասէր ընդ զերակայսն. Ի նոյն ձայն գովողաց բզբեղ օրհնել անլուսի միշտ յախտեան»<sup>2</sup>:

Մատենադարանի ձեռագրում Հովհաննեսի «Ողբ»-ի լուսանցքում գրված է «ԲԿ», որ նշանակում է «երկրորդ կողմ»: Շարականները, ինչպես հայտնի է, ունեն ութ ձայն, այսինքն ութ եղանակ, որոնցից չորսը «ձայն» են կոչվում, իսկ չորսը՝ «կողմ»: Ուրեմն Հովհաննեսի այս տաղը կրգվել է «չորրորդ

<sup>1</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 6, թ. 89ա—91բ:

<sup>2</sup> ՀՊԶՄ, ձեռ. № 7, թ. 90բ—91ա:



կողմ»-ի եղանակով: Հովհաննեսի այս տաղի եղանակի մասին ձեռագրի լուսանցքում պահված այս նշումը լիովին տրամաբանվում է Կիրակոս Գանձակեցու հետևյալ տեղեկություններով, «Արար (Յովհաննէսն) շարականն Ղևոնդեանց եղանակաւ և յարմար բանի»<sup>1</sup>: Ուրեմն, Հովհաննէսը ո՛չ միայն բանաստեղծ է եղել, այլև ձայնագրող: Այս կարևոր փաստի վրա հրավիրում ենք հայ երաժշտության պատմությունները գրողվող մեր մասնագետների ուշադրությունը:

Ուշադրության արժանի է նաև այն, որ Հովհաննէսի այս տաղից հետո գրված է եղել տասներկու տող ծավալով մի այլ աղոթք-բանաստեղծություն՝ երկու բառից բաղկացած մի վերնագրով՝ «Փոխ ասա»: Ըստ երևույթին, Հովհաննէսի «Ողբ»-ը գրված էր եկեղեցում երգելու նպատակով, որից հետո մի ուրիշը փոխ պետք է ասեր վերջին տասներկու տող բանաստեղծությունը:

Ո՞ւմ է ուղղած եղել Հովհաննէսն իր երկրորդ նամակը, որի վերնագիրն է՝ «Առ կոչուն աշեղագոյն և լուսաւոր»: Արդյոք այստեղ նրա ականարկը նորից Սարգսի մասին չէ՞, որը աչքով կույր է եղել, բայց մտքով հարուստ, լուսավոր: Դժվարանում ենք առայժմ հաստատապես որևէ բան ասել:

Այիշանք Հովհաննէսի անունով հիշում է նրա մի այլ տաղը՝ «Տաղ ի յարութիւն Քրիստոսի» վերնագրով<sup>2</sup>, որը դեռ չի հրատարակված:

Մասենադարանի՝ տաղերգուների թեմատիկ ցուցակում Հովհաննէսի անունով գրանցված են նաև երկու այլ տաղեր, որոնց մասին մինչև այժմ խոսք չի եղել հայագիտության մեջ: Նրանցից մեկն ունի «Կանայք որ եկին ի սուրբ գեեզման» վերնագիրը, իսկ մյուսը՝ «Վիզել մի տեսայ»: Առաջինն ընդօրինակված է միայն մի ձեռագրում — № 2191, Թ. 92ա: Ընդօրինակել է Իգնատիոս գրիշը 1684 թվին Մերսինում: Երկրորդն ընդօրինակված է մի շարք ձեռագրերում (№ 4328, Թ. 75ա—77ա, 1737 թվի ընդօրինակություն, № 3417 (1903), Թ. 49—50, XVIII դարի ընդօրինակություն, № 5614 (925), Թ. 18բ, Գրիգոր գրչի կողմից Քանաքեռում, ձեռագիրը 1543 թվի է, բայց մեր կողմից վերը հիշված տաղը ուշ ընդօրինակություն է, № 7708 (384), Թ. 50ա, XVIII դարի ընդօրինակություն, № 8605, Թ. 116ա—117բ, 1676 թվի ընդօրինակություն, № 7707 (383), 1611 թվի ընդօրինակություն, № 8968 (599), Թ. 271ա—273բ, 1556 թվի ընդօրինակություն և № 8740, Թ. 53ա, XVIII դարի ընդօրինակություն): Վերջին տաղն ունի և այլ վերնագիր՝ «Տաղ», «Տաղ ազնիւ և գեղեցիկ», «Տաղ սիրոյ և գովասանութեանց» և այլն:

Այս երկու տաղերից ո՛չ մեկը Հովհաննէսինը լինել չի կարող. ո՛չ տաղերի ոճը, ո՛չ լեզուն և ո՛չ տաղի կառուցվածքը Հովհաննէսինը չեն: Հավանական է, Հովհաննէս Սարկավագը շփոթված է Սարկավագ Բերդկացու կամ Սարկավագ Սարաձորցու հետ, կամ, գուցե, և որևէ՛ սարկավագ կոչում ունեցող հեղինակի անձնավորության հետ: Երկրորդ տաղը որոշ ձեռագրերում վերագրված է Քուչակին ու Կիրակոսին<sup>3</sup>:

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 105:

<sup>2</sup> Ղ. Ալիբեկ, «Յուշիկը», Բ հատոր, էջ 300:

<sup>3</sup> Այս տաղի վրա հանդ ենք տեսել մենք մեր «Ռուս ժողովուրդը և Մոսկվան միջնադարյան հայ մասենադրության մեջ» հոդվածում, որը հրատարակվել է Վ. Մ. Մոլոտովի անվան երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ» մեջ 1949 թվին:



Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանում, ըստ Բառնարաս Եսայանի կազմած ձեռագրերի համառոտ ցուցակի, կան Հովհաննեսի հեղինակությունը դրված Գրիգոր Լուսավորչի, Մահակ-Մեսրոպի և Ներսես Մեծի ներբողները:

2. Ոսկյանն իր վերը հիշված աշխատության մեջ մատնացույց է անում Հովհաննեսի անունով մի տաղ ևս՝ «Սարկաազ վարդապետի է առացեալ Մարտ ընդ առտոմ(ոյ)» վերնագրով: Այդ տաղը պահել է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 797 ձեռագիր տաղարանը: Նա բաղկացած է 54 տներից, որոնցից Ոսկյանը միայն չորս տունն է հրատարակել՝ երկուսը սկզբից և երկուսը վերջից: Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել հրատարակված այդ մասը.

«Երբ խաչեցար վասն աշխարհի  
Եւ երախտիւք զմարդկան ազգի  
Արբեր քացախ դառն և լեղի,  
Առեր ապտակ թըքով ի լի,  
Է՞ր թաղեցար դու ի յերկրի,  
Եւ խիպն ի սիտն (?) շանկանի  
Եւ զկէս աշխարհ սատանայի» (սկիզբը):

«Իմ տէր արա պատասխանի,  
Եւ քեզ մեղաւոր զայս ասի.  
Զի ո՞վ եմ ես մարդ աղտեղի,  
Համարձակել քո առաջի:  
Բայց ինձ ներեա, ով հայր բարի,  
Դասեա ի գունդս քո հօտն  
Եւ քեզ պատիւ ամենայնի  
Այժմ և յաւէտ անլռելի» (վերջը):

Զնայած այս տաղի ընդօրինակությունը մենք չունենք Մատենադարանում և ամբողջական տեքստը մեր ձեռքի տակ չի եղել, սակայն վերը բերած տների լեզվին ու չափին նայելով զգվար չէ ասել, որ այդ տաղն էլ Հովհաննեսինը լինել չի կարող: Հովհաննեսի լեզուն նուրբ բանաստեղծական լեզու է, խոհական-փոխաբայական, տեղ-տեղ գործ է ածում հունական տերմիններ, իսկ վերը բերած տաղի լեզուն ուշ դարերում գործածված լեզու է: Այնուհետև, Հովհաննեսի տաղերին հատուկ չէ միահանգությունը: Հովհաննեսը, ընդհակառակը, միահանգությունից խուսափելու համար հաճախ փոխում է տաղի վերջին բառերը: Պրոֆ. Մ. Աբեղյանը Հովհաննեսին վերագրվող այս տաղի հարադատության վրա, հավանական է, այնքան է կասկածել, որ ավելորդ է համարել նույնիսկ կանգ առնել նրա վրա:

Ինչպես պարզվում է, նշված տաղը պատկանում է Ֆրիկին և թյուրիմացությունը է վերագրվել Հովհաննեսին: Այդ տաղն ամբողջությամբ հրատարակվել է Ֆրիկի բանաստեղծությունների ժողովածուում և ունի «Գանգատ առ Քրիստոս յաղագս տարբեր վիճակաց մեծատան և աղքատի»<sup>2</sup>:

<sup>1</sup> 2. Ոսկյան, Հովհաննես Սարկավազի գրությունները, «Հանգէս ամսօրեայ», 1925, № 237:

<sup>2</sup> Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 247—255:



Մատենագիրները հիշում են Հովհաննեսի հեղինակած ներբողները, որոնք նվիրված են եղել Տրդատին, Ներսեսին, Սահակին, Մեսրոպին և Ղևվոնդյանց: Կիրակոսն այս մասին գրում է. «Սա (այսինքն Հովհաննեսը) գրեաց ճառս ներբողականս ի մեծազօր արքայն Տրդատ, ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելի Սահակ և Մեսրոպ. արար շարական Ղևոնդեանցն և յարմար բանիւ»<sup>1</sup>:

Ղևոնդյանց տաղի, ինչպես և մի բանի այլ տաղերի՝ Սարկավագի հեղինակությանը պատկանելու մասին հիշում է նաև Ստեփանոս քահանան իր «Յազագս շարականացն՝ թէ յումմէ՛» են երգեալ» շափածո աշխատության մեջ: Նա այդ մասին գրում է.

«ԸզՂևոնդեանց մանկունքն մին.

Մեծ Սարկաւագն՝ որ Աղբատին.

Զհայրապատացն զսուրբ Յակոբին.

Նոյն Յովաննէսն սուրբ Ակոբին»<sup>2</sup>:

Գծրախտարար Հովհաննեսի բոլոր ներբողները մեզ չեն հասել: Այժմ հայտնի է նրա «Ղևոնդյանց» ներբողը, որը բարձր գնահատականի է արժանացել հայագիտության մեջ այն բանի համար, որ այստեղ մեր մատենագրության մեջ առաջին անգամ արտահայտվել է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու գաղափարը. «Հեղմամբ արեան քո հօտապետաց, զեկեզեցույ քո ցրեալ մանկունս ժողովեա յուրախութիւն, զվտարեալս արամութեամբ և արտասուաց յորդահոս բըղխմամբ փրկութեան մերոց, պարգեաց մերոց բաշխող»<sup>3</sup>: Պրոֆ. Մ. Արեղյանը նշելով Հովհաննեսի ներբողի արժեքն այս տեսանկյունով գրում է. «Սարկավագ վարդապետի այս ազոթքը շատ փոքր, իր ձևով շատ հասարակ բան է, բայց իր բովանդակությամբ մեծ և վնաս է և անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է, մանավանդ երբ իր «քաղցր եղանակ»-ով երգվում էր եկեղեցում առտապալ հավատացյալներից, առանձնապես նրանցից, որ ղեռ երկար դարեր զգում են իրենց վարատած լինելը և աչքերը կարոտով դարձնում ղեպի իրենց բնիկ երկիրը՝ Հայաստան»<sup>4</sup>:

Բայց այնուամենայնիվ հարց է առաջանում՝ մի՞թե «Պոետիկոս» մականունը կրող Հովհաննեսի մյուս բոլոր տաղերը կորել են: Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ բոլորը չեն կորել: Մատենագրարանի ձեռագրերում կատարած պրպտումների ժամանակ 1954 թվին մեզ հաջողվեց հայտնաբերել Հովհաննեսի արժեքավոր մի արձակ բանաստեղծությունը՝ մոտավորապես ութ հարյուր տող ծավալով: Չնայած Սարկավագի այս աշխատությունը չունի ոչ վերնագիր և ոչ էլ հեղինակի անունը, սակայն բնօրինակող գրիչն իր հիշատակարանում հայտնում է, որ այդ բանաստեղծությունն անվիճելիորեն պատկանում է Հովհաննեսի գրչին: «Այս բանք քերթողականք ասացեալ մեծի պէտիկոսին Սարկաւագին, որ ի տիեզերահոշակ ուխտին Հաղբատ, զտի ես նուսատ ոմն ի մանկունս եկեղեցույ»<sup>5</sup>:

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 105:

<sup>2</sup> ՀՊՁԹ, ձեռ. № 1424, թ. 250ա:

<sup>3</sup> Շարական հոգևոր երգոց, էջմիածին, 1861, էջ 581:

<sup>4</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, II հատոր, էջ 51:

<sup>5</sup> ՀՊՁԹ, ձեռ. № 7, թ. 51բ:



նույն հիշատակարանից երևում է, որ ձեռագրի նախագագափար օրինակը Հովհաննեսի ինքնագիրն է հանդիսացել: Այդ նկատառումով էլ հիշատակագիրը խնդրում է ընդօրինակող գրիչներին, որպեսզի նրանք չավելացնեն և չպակասեցնեն Հովհաննեսի այս բանաստեղծությունը, նրա տները և արվեստը. «Արդ՝ մի՛ որ յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից, կամ ի տանց և յարուեստից, զի և մեք ոչ իշխեցաք յաւելուլ կամ պակասեցուցանել, զոր ինքն իւրով ձեռամբն գրեալ էր» (թ. 51բ): Հիշատակարանի վերը բերված պարբերությունից հետո ավելացված մի ակնարկից՝ «ըստ այսմ օրինակի էր կտակն», երևում է, որ հիշատակագիրը իր ձեռքի տակ ունեցել է Հովհաննեսի կտակ-հիշատակարանը:

Հիշատակագրի տեղեկություն մեջ ուշադրության արժանի է նրա խնդրանքի այն կետը, որ վերաբերում է Հովհաննեսի բանաստեղծության տները չավելացնելուն և չպակասեցնելուն՝ «Մի՛ որ յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից, կամ ի տանց (ընդգծումը մերն է.— Ա. Ա.) և յարուեստից»: Հովհաննեսի ներկա աշխատությունը արձակ բանաստեղծություն է, չափ չունի, ուստի և անհասկանալի է մնում՝ թե ի՞նչ իմաստով է գործածված «տուն» բառը:

Գծրախտարար Հովհաննեսի այս բանաստեղծությունը մեղ հասել է թերի միձեակում: Տեքստը պակասավոր է սկզբից և վերջից: Հիշատակագրի տեղեկությունից երևում է, որ Հովհաննեսի այս աշխատությունը պակասավոր է եղել զեռ ընդօրինակման ժամանակ: Հիշատակագիրը հայանում է այդ մասին և խնդրում ընդօրինակողներին, որ եթե որևէ մեկին հայանի լինի Հովհաննեսի այդ բանաստեղծության ամբողջական տեքստը, ապա թող լրացնի պակասը. «Մկիզրն և կտտարածն եղծեալ [է].— գրում է նա,— եթէ դացես ուրեք, գրովանդակն գրեա» (թ. 51բ):

Հովհաննեսի այս բանաստեղծության բովանդակությունը կրոնական է: Նա ուղղված է քաղկեդոնականության դեմ: Հովհաննեսը մեծ վարպետությամբ, սպանիչ քննադատության է ենթարկում քաղկեդոնականությունը և աշխատում ապացուցել հայ եկեղեցու առաքելական անաղարտությունը: XII դարում Բյուզանդիայի՝ Արևելքում վարած ազդեալ քաղաքականության պայմաններում այդ վեճը հայ հատարական շրջանների համար հուզող կարևոր հարց է եղել: Նա ուներ նաև քաղաքական իմաստ: Մեղ համար այժմ, իհարկե, կարևորը կրոնական սխոլաստիկ բովանդակությամբ վեճերը չեն, այլ այն հարուստ լեզուն, ճարտասանական այն բարձր արվեստը, որ գործ է ածում Հովհաննեսը հակառակորդի գաղափարախոսությունը եղծելու նպատակով: Հովհաննեսի այս աշխատությունն իր բովանդակությամբ շատ նման է Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ին:

Յույց տալու համար, թե Խմաստասերը ինչպիսի վարդապետությամբ ու համարձակությամբ է քննադատում իր հակառակորդին, անհրաժեշտ ենք համարում բերել միայն երկու փոքրիկ մեջբերում չափի վերածված.

«Ընդէ՛ր ոչ թշնամանես, և խոտես, զորս և աստուած:

Հի՛մ գհրամաչեալս աստուծոյ ի դատապարտութիւն զնես սրբոց:

եւ հրածարեցելովքն պատեալ զու փարիս.

Ձատելիս տեսոն սիրես յարգանաւք

եւ զսիրելիս նորս անարգես թշնամանաւք:



Որո՞ց արդեք մասն իցէ, ասողն բարի զչար,  
եւ ընդդէմ նմին շար գրարին,  
Զլոյսն խաւար և խաւարն լոյս» (թ. 5բ):

Յոյց ինձ և զքոյսն,

Զո՞րս արդեք շնու հրաշագործութիւնս:

Որո՞վ միով և դու բերես առ նա զնմանութիւն:

Եւ որո՞ց սքանչելեաց հանդիսականք երեւունք,

Ետուն քեզ համարձակութիւն,

Ասել զոր ինձ կամիսդ առանց ամաւթոյ:

Երկնչիմ և հայհոյութենէ, որ ծնանի ի քումմէ առաջարկութենէ:

Եթէ իցէ ի քեզ բան իմաստութեան, աո՛ր պատասխանի,

Ապա թէ ոչ, ափ քո եղիցի ի վերայ բերանոյ քո» (թ. 14ա):

Հովհաննէսի՝ մեզ հասած հայտնի աշխատութիւնների շարքում մատենագրութեան մեջ հայտնի է նրա «Ընդդէմ երկարնակաց» աշխատութիւնը: Այդ նույն աշխատութիւնը հիշված է նաև Սաղմոսավանից մատենադարանի մեջ հասած ձեռագրերի ցուցակում, որը հրատարակել է Խաչիկ վարդապետը «Շոդակաթ»-ում: Այդ ցուցակում հիշված են հետևյալ աշխատութիւնները. «Ա (1) գիրք ևս մեր վարդապետաց ընդդէմ երկարնակաց: Ա (1) գիրք ևս Յովհաննէս վարդապետի, ոտանաւոր սկիզբն»<sup>2</sup>: Հովհաննէսի վերը նշված աշխատութիւնը այլ վերնագրով հիշված է նաև Բառնարաս Եսայանի կազմած Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանի ցուցակում: Այնտեղ նա կրում է «Ճատ ընդդէմ նեստորականաց» վերնագիրը<sup>3</sup>: Հովհաննէսի «Ընդդէմ երկարնակաց» կամ «Ճատ ընդդէմ նեստորականաց» աշխատութիւնը նրա վերը հիշված բանաստեղծութիւնն է, միայն որոշ ընդօրինակութիւններում խմբագրվել և զգալի փոփոխութիւն է ենթարկվել: Նրա նշված աշխատութեան նախնական տեքստը բանաստեղծութիւնն է, իսկ խմբագրված, փոփոխված տեքստը արդեն վեր է ածվել զուտ աստվածաբանական պոլեմիկ աշխատութեան:

Մի բանի խոսք Հովհաննէսի նշված բանաստեղծութիւնը պարունակող ձեռագրի մասին: Այն գրանցված է Մատենադարանի N 7-ի տակ: Ձեռագիրը հիշատակարան շունի, բայց գրչութեանը նայելով մոտավոր ժամանակը կարելի է որոշել XIII դարը: Ձեռագիրը չի պահել գրչի անունը. մի տեղ միայն ակնարկվում է, որ գրիչը «Ճեկեղեցու մանուկ» է հանդիսացել: Ձեռագիրը սկզբից, ինչպես ասել ենք, թերի է: Առջևից պակասում է 21 պրակ. պահվածը սկսում է «Ն» տետրից: Պրակների թվահամարը հաշված է ըստ թվագումար հաշվի, այսինքն «Ժ»-ից հետո եկող տառերը տասնավորներ չեն, այլ սովորական միավորներ, այսպես «Ժ»-ն հավասար չէ 20-ի, այլ 11-ի:

<sup>1</sup> Կարինյան ցուցակ 513, Հմմտ. Սամուել Անեցու ժամանակագրութեան էջ 292-ի շորերով ծանոթագրութիւնը:

<sup>2</sup> Խաչիկ Թ. Վ., Նորայրուտ մազազաթ ցուցակ Սաղմոսավանից մատենադարանի («Շոդակաթ», 167):

<sup>3</sup> Բառնարաս Եսայան, Վենետիկի Մխիթարյանց հայ գրչագրաց համառոտ ցանկ (տես «Մարկավազ վարդապետ» ըստ այբբենական ցանկի): Այս ցուցակը կազմված է 1888 թվին, իսկ նրա պատճենը Ամատունու՝ 1896 թվի արտագրութեամբ կա մեզ մոտ:

Այդ հաշվով, ձեռագրի սկզբից պակասում են «Ա»-ից «Յ» պրակները, ընդամենը 21 պրակ: Տվյալ ձեռագրի յուրաքանչյուր պրակը բաղկացած է տասը թերթից, ուրեմն, սկզբից պակասում է 210 թերթ: Յավալի է պատկերացնել այն խոշոր կորուստը, որ մենք ունենք այստեղ: Ձեռագիրը գրված է միասուն խոշոր բոլորագրով:

Հովհաննեսի նորահայտ բանաստեղծությունների մեջ գործ են անվում մի շարք նոր բառեր, որոնք շիան Հայկազյան բառարանում: Այսպիսի բառերից կարելի է նշել՝ «սպիտակացան ձիւն», «շիխնմ վաղվաղակի», «Քոռաբու թողուլ», «սաստեաց պղնձեայ», «ստրատառ», «շրջրնրաց», «ստուգակարգ», «խոզամարտ», «խոզամարտիբոս», «յառաջդիմեցումն», «վաղածամեայ» և այլն: Անշուր շատ են այնպիսի բառերը, որոնք մեկական օրինակներով են նշված Հայկազյան բառարանում:

Մատենագարանի № 45 ձեռագրում, որն ընդօրինակել է Սարգիս Եղևսացին 1642 թվին լիմ անսպասում (տե՛ս թ. 295ա), բերված է անխորագիր խրթնարան մի բանաստեղծություն, որի առաջին տառերը հոգում են «Յոհանէս»: Ո՞ր Հովհաննեսինն է այս բանաստեղծությունը — Սարկավա՞գ Հովհաննեսինը, Երզնկացո՞ւնը, թե ուրիշ մեկինը, զժվար է հաստատապես որևէ բան ասել: Եկատի ունենալով, որ բանաստեղծությունը փոքր է, ուստի անհրաժեշտ ենք համարում բերել ստորև.

«Յումարտութիւն խիպառական,  
Խախիծացեալ սղնաբերան.  
Ոհութիւն շամառացեալ,  
Սուտակասպաս վառ երևեալ.  
Հնչումն ուխից պեռպեռոտող,  
Խումբ բաղասաց բնաւից հետտող.  
Աղիբար կուրծ քստակեալ,  
Վեհ խստափիտ մենեղաւեալ.  
Նգոյր օտն եռակի,  
Զրահիտ պանծումն ունայն և լի.  
Էկոնաբող զօշ ուրացեալ,  
Բանից բոլոր մախիղացեալ.  
Սա քեզ ձիւաղ զոհ ճենճերի,  
Թոնձառական պէզէկ սեռի»<sup>1</sup>:

Այսպիսով Հովհաննեսի մեզ հասած ձեռագիր բանաստեղծությունների ուսումնասիրությունից պարզվում է հետևյալը.

1. Մատենագարանի նորահայտ մի ձեռագրից երևում է, որ Հովհաննեսի հեղինակությունը հայադիրություն մեջ հայտնի «Առ Սարգիս վասն տապիլեցն», «Վասն միտոյ ողբականին» և «Առ կոյրն աշեղագոյն և լուսաւոս» տաղերը իրապես ոչ թե տաղեր են, այլ Հովհաննեսի երեք նամակները:

2. Հովհաննեսի առաջին նամակի մեջ եղած մի տեղեկությունից պարզվում է, որ նա իր «Սարեակ» տաղը գրել է Սարգսի համար:

3. Հովհաննեսի երկրորդ նամակի մեջ ակնարկված է նրա մի տաղը՝ «Ողբ» խորագրով, որը հայտնաբերված է Մատենագարանի № 7 ձեռագրում:

<sup>1</sup> ԶԳՁՄ, ձեռ. № 47, (31), թ. 312բ:



Այս տաղը, որը միջնադարյան տաղերգության գլուխ գործոցներից մեկն է, բաղկացած է 20 տողից, և նվիրված է վերը հիշված Սարգսին. տաղի տողերի առաջին տառերը ակրոստիկոսով հողվում են «Յովհաննէս քահանայի Սարգիս Մեծի խնդալ Ած կենդանի»:

4. Հովհաննեսի անունով հայկական մատենագրության մեջ հիշված մի շարք տաղեր, «Կանայք որ եկին ի սուրբ գերեզման», «Կիւզէլ մի տեսայ» և այլն, Հովհաննեսինը չեն: Հովհաննեսինը չէ նաև Ոսկյանի հիշած «Մարտ ընդ Աստուծոյ»-ն: Այս տաղը Ֆրիկի նշանավոր գանգատի իմբացրություններից մեկն է և թյուրիմացութեամբ է Հովհաննեսին վերագրվել:

5. Մատենադարանում հայտնաբերվել է Հովհաննեսի մի նոր արձակ բանաստեղծությունը՝ մոտ 800 տող ծավալով: Նա կրոնական-պոլեմիկ բովանդակություն ունի և իր արժեքով չի դիչում Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ին:

6. Մատենադարանի № 43 ձեռագրում Հովհաննեսի անունով հայտնաբերվել է խրթնարան մի փոքրիկ բանաստեղծություն, որի՝ մեր հեղինակ Հովհաննեսին պատկանելու մասին վիճարկություններ չկան և հաստատապես ոչինչ ասել չենք կարող:

Հովհաննես Սարկավագի բանաստեղծությունների մեջ տեղ ենք տալիս նրա հեռու աշխատություններին.

1. «Յովհաննէս Սարկավագի իմաստասիրի և վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատնոս գրօսանաց առ ձագն որ զաղօբանոցաւ նորա հռուողէր Բաղցրածայն, որ կոչի Սարիկ»: Վերցրել ենք Գ. Ալիշանի «Բաղմալէպ»-ում 1847 թվի հրատարակությունից և համեմատել Զմմասի ընդօրինակության հետ:

2. «Նորին (Յովհաննու) առ Սարգիս՝ Ողբք» (Մատենադարանի № 7 ձեռագրից):


3. «Առ Սարգիս. վասն տաղիցն. Յոհաննու քահանայի» (Սարկավագի նամակը), (Մատենադարանի № 7 ձեռագրից):

4. «Նորին, վասն միւսոյն ողբականին» (Սարկավագի նամակը), (Մատենադարանի № 7 ձեռագրից):

5. «Առ կոյրն աչեղադոյն և լուսատր. Յոհաննու քահանայի» (Սարկավագի նամակը), (Մատենադարանի № 7 ձեռագրից):

6. «Կանոն սրբոց Ղեոնդեանց» («Շարակնոց»-ի 1861 թվի էջմիածնի հրատարակությունից):

7. «Ընդդէմ երկարնակաց» (Մատենադարանի № 7 ձեռագրից):



## 6. ՀՈՎՏԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՅԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԵԿԸ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննես Սարկավազը հայ մատենագրության մեջ հայտնի է որպես իմաստասեր, այսինքն՝ փիլիսոփա: Նրա մի քանի աշխատությունների վերնագրերում նա նույնիսկ հիշվում է «Սոփեստոս» մականունով: Այս մականունը գործ է ածում նաև Ալիշանը «Յուշիկը»-ում տեղավորած իր հոդվածում՝ վերնագրելով այն «Սարկավազ Սոփեստես»: Սարկավազը «Սոփեստոս» է հիշված իր տապանաքարի վրա:

Փիլիսոփա իմաստը հայ մատենագրության մեջ ընդհանրապես արտահայտվել է երեք բառով՝ «փիլիսոփա», «իմաստասեր» և «սոփեստոս»: Այսպես, Գավրիլ Անհաղթը հիշվում է «Փիլիսոփա» մականունով, Հովհան Օձնեցին՝ «Իմաստասեր», իսկ Սարկավազը՝ «Սոփեստոս»: Սոփեստոս բառը հունական σοφιστής-ն է, իհարկե, լավ իմաստով՝ «փիլիսոփա», «գիտնական», «իմաստուն» նշանակությամբ:

Երբեմն պատահում է, որ Հովհաննեսն իր աշխատությունների վերնագրում հիշվում է նաև «իմաստասեր» ձևով: Օրինակ՝ «Յովհաննու քահանայի և իմաստասիրի յաղագս ամսոց...», «Յովհաննու Սարկավազի իմաստասիրի և վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառ զբօսանաց առ ձագն...» և այլն: Այս կոչումները ցույց են տալիս, որ Հովհաննեսը իրապես պարզվել է իմաստասիրությամբ:

Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Հովհաննեսի աշխատությունները, ընդհանրապես, իմաստասիրական ոճով են գրված. «Սորա բանն ամենայն իմաստասիրական ոճով է, որպէս զԳրիգոր Աստուածարանի»<sup>1</sup>: Եվ, իրոք, ինչպես քիչ հետո կտեսնենք, Հովհաննեսի բոլոր աշխատությունները, նույնիսկ նրա տոմարական աշխատությունները պարունակում են որոշ շահով իմաստասիրական հատվածներ:

Որ Հովհաննեսն իրոք գրել և դասավանդել է իմաստասիրություն, այդ կոնկրետ վկայում է նրա կենսագիրը: Հովհաննես Սարկավազը, գրում է նա, «կրթէր, արականէր ի գիրս նուրբս զժուարալուրս»<sup>2</sup>: Հնում «նուրբ» գիրք ասելով հասկանում էին տեսական, փիլիսոփայական բովանդակություն ունեցող աշխատությունները:

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 64:

<sup>2</sup> Մխիթարայ Աճեցոյ Պատմութիւն (Հմմտ. Անեցու ՀՊԶՄ № 582 ձեռագրի ընդ-օրինակությամբ):



Մխիթար Անեցին իր ժամանակագրութեան մեջ թվարկում է «նուրբ» կոչված այն գրքերը, որոնք խմբագրել է Հովհաննեսը և որոնք հետագայում ինքն արտագրել է. «Կարգապարտութիւնս զրոց սրբոց,— գրում է նա ցուցակի վերնագրում,— որք ստուգարանեցան ի Սարկաւազ վարդապետէն և գրեցան յինչն, ի աէր Մխիթար վարդապետէս»<sup>1</sup>: «նուրբ» կոչվող գրքերի շարքում Մխիթար Անեցին հիշում է՝ Գավթի «Մահմանք»-ը, Պրոկղի «Լուծմունք»-ը, Հերմեսի փիլիսոփայական աշխատութիւնը, Արիստոտելի «Տաս ստորագութիւնք»-ը, «Պերի արմենիաս»-ը, «Առաքինութեանցն» (այսինքն՝ «Յազագս առաքինութեան»), «Աշխարհացն», (այսինքն՝ «Յազագս աշխարհի»), «Կերլուծութեանցն» (այսինքն՝ «Յազագս վերլուծութեան»), Գավթի «էականց գիրք»-ը և ուրիշները: Այդ ցուցակում հիշված են նաև Հովհաննեսի կողմից այդ աշխատութիւններից մի քանիսը խմբագրելու մասին: Կոնկրետ հիշված են հետևյալ հեղինակների գրքերի խմբագրումը՝ Փիլոնի 9 գիրքը, Գրոնիսիոսի 5 գիրքը, Գրիգոր Նյուաացու 7 գիրքը, Գրիգոր Նազիանզացու 4 գիրքը, Բարսեղ Կեսարացու 4 գիրքը, Եվագրի 2 գիրքը և այլն:

Ի դեպ, Հովհաննեսի կողմից նշված հեղինակների աշխատութիւնների մշակման փաստի մասին խոսել է նաև բանասեր Ն. Ակիւնյանը<sup>2</sup>:

Մատենագարանում գտնվում է մի ձեռագիր ժողովածու, որն ընդօրինակված է հանրածանոթ պատմիչ Քովմա Մեծոփեցու կողմից և պարունակում է Կյուրեղ Աղեքսանդրացու, Հովհաննես Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու, Եպիփանոս Կիպրացու ու մի շարք այլ հեղինակների փիլիսոփայական-աստվածաբանական աշխատութիւնները: Մեծոփեցու հիշատակարանում պարզ ասված է, որ ժողովածուն կազմվել և խմբագրվել է Հովհաննես Սարկավազի ձեռքով. «Յիմաստնոյն Սարկաւազ վարդապետէ մտառեալ է,— կարդում ենք այնտեղ,— սակաւ ինչ յամենեցունց մասնաւորեալ զպատշաճաւորն, իբր իմաստուն մեզու թուշլով ի մարգ և ի լերինս և ի ծաղկաւէտ բուրաստանս, ժողովելով զպիտանիսն առ ի նոցանէ ի յազուտ և ի շահ փրկութեան մարդկան...»: Հայ փիլիսոփայութեան պատմութեամբ զբաղվող մեր մասնագետների ուշադրութիւնն ենք հրավիրում այս ժողովածուի վրա:

Ղ. Ալիշանը հայտնում է, որ Իտալիայի Պավիայի համալսարանի գրադարանում նա տեսել է Գավթի Անհաղթի փիլիսոփայական աշխատութիւնների XIII դարի մի ձեռագիր, որը խմբագրված է Հովհաննես Մոփեստեսի ձեռքով: Ձեռագիրն ունեցել է հետևյալ հիշատակարանը. «Իմաստութիւն հօր և բան, սիրող իմաստութեան, վարդապետին Սարկաւազ կոչեցեալ՝ աշխատանաց յուղղութիւն տառիս, գարժանն հատո յանյաչաղ ձրիցդ»<sup>3</sup>:

Հովհաննեսի ինքնուրույն փիլիսոփայական բովանդակութիւնն ունեցող աշխատութիւններից Մատենագարանում մեզ հաջողվեց հայտնաբերել երկու փաթեթիկ տեքստեր միայն՝ «Յովհաննու քահանայի Յազագս խրատու մանկանց սուղ ինչ բնախատութեամբ» և «Նորին (Յովհաննու), երէ զիս՝ ող ասի մի բնութիւն բանին Աստուծոյ մարմնացելայ ըստ ճշմարտութեան»: Ըստ

<sup>1</sup> Մխիթարայ Անեցույ Պատմութիւն (Հմմտ. № 582 ձեռագրի ընդօրինակութեամբ):

<sup>2</sup> Ղ. Ակիւնյան, Մատենագրական հետազոտութիւններ, 1-ին հատոր, Վիեննա, էջ 1—84:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Յուշիկք, էջ 287:



որում դրանք մաքուր փիլիսոփայական աշխատություններ չեն: Այնտեղ զգալի տեղ է արված կրոնա-բարոյական հարցերին:

Հովհաննեսն իր «Յաղագս խրատու սուղ ինչ բնախաւսութեամբ» աշխատությունն սկսում է գոյի հարցով՝ ո՞րն է որին հաջորդել՝ Աստված նյութին, թե՞ նյութը Աստծուն: Հովհաննեսը հարում է առաջին, այսինքն՝ իգեալիստական տեսակետին: Նա առանց անունները տալու քննադատում է այն փիլիսոփաներին, որոնք գտնում են, թե «յարակայէ և յանեղէ, բոս փիլիսոփայիցն որպէս զի գոլ յաւէտակից զնիւթն աստուծոյ» (ՀՊԶՄ № 5619, թ. 119ա): Նա գտնում է, որ աստված լինելով արարիչ, ստեղծել է ամեն բան: Նույն աշխատության մեջ նա պարզ ասում է, որ աստծու ստեղծագործությունից առաջ «նիւթ գոյական ոչ էր» (ՀՊԶՄ № 5619, թ. 120ա):

Հովհաննեսն իր կրոնական անտիպ աշխատություններից մեկում խոսելով աստծու և մարդու նմանության ու տարբերության մասին գտնում է, որ աստված պարզ է, անորակ, անքանակ և առանց տարածության, իսկ նրա էություն քննությունը վեր է մարդու մտածության սահմանից. «Արդ՝ պարզից և խառնեցելոց մարդոյ և իմանալոյ էութեան ինքն մէ արարիչ միայն, անյօդական և պարզ գոյով բնությամբ, անորակ, անքանակ, ոչ ի տեղջ, քանզի սոքա (այսինքն՝ մարդիկ — Ա. Ա.) ի նիւթոյ և ի տեսակէ հաստատելոց յարմարեալ տուան, իսկ ամենասուրբ բնութիւն երրորդութեանն զեր ի վերոյ ամենայնի է, վասն որոյ միտք ամենայն և բան տկարանան իմոնալ ինչ կամ ասել յաղագս նորա ստուգութեամբ» (ՀՊԶՄ № 2751, թ. 142ա):

Հովհաննեսն իր տոմարական աշխատությունների մեջ, որոնք մեր կարծիքով ավելի վաղ էն գրված, քան նրա կրոնական աշխատությունները, փաստորեն ընդունում է մարդու գիտակցությունից անկախ, օբյեկտիվ մատերիալի գոյությունը: Նա գտնում է, որ պատշաճահարմար խոսքը չի կարող ցույց տալ մաքուր և իրական ճշմարտությունը, ինչպես պատկերահանված նկարը՝ շարժուն կենդանուն, որովհետև նա կեղծ տարրեր ունի: Հովհաննեսի կարծիքով մեծ աշխատանք է հարկավոր ճշտելու խոսքի և իրի ստուգությունը. «Դիպաբանութիւն,— գրում է նա,— ցուցանել զյստակ և զյայտնի ճշմարտութիւն ոչ զարէ, որպէս ոչ պատկեր կենդանագրեալ և ստեղծեալ՝ շարժուն կենդանի, քանզի մերձ է յառասպել և վկայութիւն սուտ... աշխատութիւն և տքնութիւն ոչ դուզնաբեալ պէտք են առ ի գիտել զստուգութիւն բանից և իրաց» (էջ 219):

Հովհաննեսն իր տոմարի մեջ քննադատելով տգետ այն «գիտուն»-ներին, որոնք խուսափում են իրողությունը ճշմարտորեն ներկայացնելուց, արհամարհանքով նկատում է, որ ի՞նչ օգուտ ունի իրն իր իսկական կացությամբ չներկայացնելը, որովհետև անկախ նրանից՝ մենք ներկայացնում ենք այն իր իսկական կացությամբ, թե ոչ, իրն իր սեփական հատկությունը պահում է անկախ մեր կամքից: «Արդ՝ զի՞նչ օգուտ բերէ բանիւն ոչ ասել իրին հաստատապէս կացելոյ,— գրում է նա,— քանզի ասէ բան և եթէ ոչ, իրն անսխալ ունի զիրոյ յատկութիւն» (էջ 222):

Նույն աշխատության մեջ, մի այլ տեղ, Հովհաննեսը խոսելով խոսքի և իրի փոխհարաբերության մասին, գտնում է, որ մենք հակառակ շաղակրատ խոսակցությամբ զբաղվող «գիտուն»-ներին, ոչ թե խոսքը պիտի հակադրենք իրին, այլ, ընդհակառակը, իրը ուշադիր քննությամբ, հարադատ ձևով բացահայտենք. «...Ոչ է պարտ,— գրում է նա,— հայլի ի բանից շաղակրատ



տանս, թէպէտ և հաւանական թուեսցի, քանզի եթէ բանն նշանակ իրին է (այսինքն՝ խոսքը արտահայտիչն է իրին:— Ա. Ա.), ոչ է իրաւացի հակառակ իրացն արտաբերել, այլ մանաւանդ ստուգութեամբ առաւել բնութեանէ առանց մոլորութեան գնոյն յանդիման կացուցանել» (էջ 219):

Հովհաննէսը մեր հրատարակած՝ վերը հիշված երկու տեքստերում, ինչպէս և իր մշուս աշխատութիւնների մեջ հատուկ շեշտվածութեամբ դնում է փորձի և կրթութեան նշանակութեան հարցը հասարակական կյանքում: Այսպէս, օրինակ, նա իր տոմարական աշխատութեան մեջ խոսելով գիտութեանների ու արվեստների աստիճանարար առաջ գալու մասին գտնում է, որ նրանց զարգացումը տեղի է ունենում առավելագոյն վարժման և աշխատասիրութեան շնորհիվ, իսկ սխալները աստիճանարար ուղղվում են կրթութեան միջոցով. «...ամենայն մակացութիւն և արուեստ,— գրում է Հովհաննէսը,— մի ըստ միոջէ ի յալտ գան յառաւելագոյն վարժմանէ, և ի ջերմ աշխատասիրութեանէ աճեալ գեղեցկանան: Նա և ուղղել սխալման լինի ի կրթասիրութեանէ» (էջ 222):

Հետաքրքրական է Հովհաննէսի կարծիքը մարդու ունակութիւնների աղբյուրների մասին: Հիմնվելով Արիստոտելի տեսակետի վրա նա գտնում է, որ մարդկային ունակութիւնների աղբյուրը երկու է՝ մեկը բնածին է, գտնվում է մարդու մեջ, իսկ մշուսը՝ ներգործական: Ներգործումը մեծ արդյունքներ է տալիս հատկապէս փոքրահասակների նկատմամբ, ուստի նա անհրաժեշտ է գտնում փոքրահասակների կրթութեան վրա առանձնահատուկ ուշադրութիւն դարձնել: Այսպէս, Հովհաննէսն իր «Յաղագս խրատութեան կանց սուղ ինչ բնախաւտութեամբ» աշխատութեան մեջ գրում է. «Արիստոտելէս գերկուս ախորժէ անուանել, զոր ի մեղ բանականն՝ ըստ զարութեամբ գոմն և զմիւսն՝ ըստ ներգործութեամբ... Եւ զարութեամբ բնատրական (այսինքն՝ բնածին— Ա. Ա.) զու, իսկ ներգործութեամբ ի գրուստ մտեալ, որ է ուսմամբ և կրթասիրութեամբ առաքինալործել և լինել տարեկայմիտ... Զառաջին հասակն ոչ տալ ինչ արտաքս ընդ զգալութիւնս ցնդել մտացն, այլ որպէս ի մամուլս, խելամտութեամբ մեծաւ, առանց յապաղման, յամենայն կողմանց շարայլնդել ի զանազան ուսման իմաստութեան... զի հոսանուս և մշտայաս՝ յառաջմունք ամանակաց քարշին տանին, առանց հասնելոյ զանցեալն...» (ՀՊԶՄ № 2751, թ. 120բ—121ա):

Ուշադրութեան արժանի է Հովհաննէսի աված նշանակութիւնը գիտութեանը. ինչո՞ւ համար ենք ուսումնասիրում գիտութիւնը: Հովհաննէսը գրան պատասխանում է, որ մերձավոր ու արդի ժամանակը առաջնորդ ընդունելով և անցյալը գիտականորեն ավելի ուշադիր ուսումնասիրելով մենք հնարավորութիւն ենք ստանում ապագան ավելի հմտորեն հանաչել. «Մերձաորս գայս և գներկայ տուալ առաջնորդ,— գրում է Հովհաննէսն իր տոմարական աշխատութեան մեջ,— և կյանցելոյն ևս իմաստասիրել նկրտիմք և զճանգերձեալն արուեստապէս հանաչեմք» (նույնը, էջ 219):

Հովհաննէսը, սակայն, բոլոր տեսակ փիլիսոփաներին ու գիտնականներին չէ, որ վստահում է և խորհուրդ տալիս նրանց մոտ գնալ սովորելու: Նա գտնում է, որ կան շինծու գիտուն և իմաստուն» համարվածներ, որոնցից, ընդհանրապէս, հետու պետք է կանգնել, որ շինի թէ մարդը փուշ աշխատանքով իր կյանքը մաշի և փոխանակ շահ բերելով վնաս բերի: Այդ մասին

նա գրում է. «Ի ստույթնէ ամենկին հետի լիցուք, և յանուանելոյն պիտակարար իմաստակա կամ մակացու խոյս տացուք, զի մի՛ ընդ վայր և նանիր աշխատութեամբ մաշեսցուք զկեանս, և փոխանակ շահից, տուգանս ժողովեսցուք» (էջ 225):

Չնայած Հովհաննեսի վերը բերած սուաջավոր մտքերին, այնուամենայնիվ, նա դուրս չի գալիս կրոնա-միստիկական մտածողութեան շրջանակներից և մնում է նրա կղերական մտածող: Այդ տեսակետից բնորոշ է մի երիտասարդի ուղղած նրա նամակներից մեկում աված խորհուրդը. այստեղ նա դրվատելով դիտութունը, վերջինս բարձր դասելով ոսկու և արծաթի գանձներից, գիտութեան դերը համարում է սպասարկուի դեր, որը մարդկանց հնազանդութեան է տանում ասածու առջև և սանձարձակ միտքը մշանջենապես սանձահարում: Նա իր նամակում գրում է. «Արդ՛ զգոյշ լիք մանուկ դու ուսումնասէր, քանզի ամենայն բազում ուսումնութիւն նուազ և անարգ է առանց երկիրդին և սիրոյ աստուծոյ: Տարբացեն նովաւ նախակրթեալ յամենայն ժամ և մի՛ բարուք վարժից ուսմանց արացես անփոյթ, քանզի նիւթէ իմաստութիւն հնազանդութիւն հրամանաց աստուծոյ և խստերախ մտաց սանձակոծութիւն հանապազորդական» (էջ 260):


Ուշադրութեան արժանի է սակայն այն, որ Հովհաննեսը բացի կրոնական աշքի ընկնող տեսարաններից իր աշխատութեանների մեջ մեկ-մեկ մեջբերումներ է անում Արիստոտելից, Պլատոնից և հին հունական այլ փիլիսոփաներից: Նա իր «Երատու մանկանց սուղ ինչ բնախաւսութեամբ» աշխատութեան մեջ մեջբերում է արեւ նուշնիակ Զենոնից, իսկ այս հանգամանքը կարևոր է այն տեսակետից, որ ցույց է տալիս Զենոնի փիլիսոփայական ուղղութեան՝ հայ իրականութեան մեջ հող ունենալու փաստերը և գործունեութեան բնույթը:

Կրոնա-փիլիսոփայական բովանդակութեան ունի Հովհաննեսի «Նորին, երէ զիա՛րդ ասի մի բնութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ ըստ եղմարտութեան» աշխատութեանը, որը բաղկացած է երկու գլխից և որը հարկավոր համարեցինք հրատարակել:

Հովհաննեսի «Երատու մանկանց սուղ ինչ բնախաւսութեամբ» աշխատութեանը հրատարակում ենք № 5619 (930) ձեռագրից, որը երկու տարբեր գրչութեան ունի: Ձեռագրի առաջին մասը գրված է 1176 թվին Կամբջաձորում (թ. 108ա), իսկ երկրորդ մասը՝ XIII կամ XIV դարում: Մեր բերած տեքստը երկրորդ մասում է: Երկրորդ մասը հիշատակարան շունի. գրիչը ինչու է միայն մի սուղ հիշատակութեան պատվիրատուի մասին. «Ո՛վ եղբայր Յովհաննէս, ընկալ զսակաւ գիրս և յիշեա ի տէր» (թ. 133ա): Ո՛վ է այս Հովհաննեսը, արդյոք նա Հովհաննէս Երզնկացին չէ՞, գժվար է այժմ որեւէ բան ասել: Ձեռագիրը գրված է բոլորագրով: Տեքստում կատարված են բազմաթիվ ուղղումներ: Երևի ընդօրինակելուց հետո համեմատել են նորից բնագրի հետ և ինչ արված սխալներն ուղղել: Համենայն դեպս, բնագրում կամ լուսանցքում կատարված բոլոր ուղղումներն էլ հիշա են:

Հովհաննեսի՝ «Երէ զիա՛րդ ասի մի բնութիւն...» աշխատութեանը հրատարակութեան համար պատրաստել ենք № 2751 ձեռագրի հիման վրա, որն ունի XVIII դարի գրչութեան:





SEPT





## 1. ՀՈՎՀԵՆՆԵՍ ԻՄԸՍՏԸՍԵՐԻ ԿԵՆՍԸԳՐՈՒԹՅՈՒՆՔ

579ա // ՀԱՆԳԷՍ ԲԱՆԻ ՎԱՍՆ ԵՐԱՆՆԱԿ ԱՌՆՆ ԱՍՏՈՒԹՈՅ ՍԱՐԿԱԻԱԳԻՆԵ  
ԿԵՆԱՅ ԵՒ ՄԱՀՈՒՆ ԵՒ ԱՅԼՈՅ ՍՐԲՈՅ ՀՈՒՊ ՅԱՅՆ ԺԱՄԱՆԱԿՄ՝

Յետ վարելոյ զքաղաքականութիւն երկնաքաղաքական վարուց,  
պատկերն ճշմարտութեան և քանոնն աւրինաւոր կարգաց, երիցս  
5 երջանիկ վարդապետն Յովհաննէս, և անուն բարդ՝ Սարկաւազն,  
եհաս ի կէտ և յաւարտ բարոք կենաց ճանապարհին ի ՇՀԸ (1129)  
թուականին և եղաւ պատուով ի քնարանի հանգստեան ընդ ամե-  
նայն սուրբս:

Բայց պարտ և պատշաճ է՝ սակաւօք զվարձս կենաց նորս  
10 գրել և ծանուցանել ի մերոց ազգատմաց և ի սուղ բանից, զի  
լաւրինակէ նորին դաղափար աննուցօք բարոք նախանձաւորք  
և նորո՛րցիք հայկեցուածով ոգւոց յարեզակնափայլ գործնական  
և արգիւնական նորայն ճառագայթից:

Սա՛ ի մանկական տիոց և ի խանձարրոց, ըստ սրբոյն Սա-  
15 մուէլի, նուիրեալ աստուծոյ և կուսութեան, յարենէ և յարզանդէ  
քահանայից, սնեալ և դաստիարակեալ առ սրբասնունդ քեռոյն  
խրոյ ի վանսն Հաղբատ՝ դաւառաւ ի Փառխոսոյ՞: Յառաջագոյն  
սուտա ի վարժս երաժշտական հոգեոր ուսմանց և տպա յերեման  
մեծին ի նմա ծածկելոյ դանձին, աւանդեցաւ և յանձնարարաւ ի  
20 քեռոյն իրմէ Ուռճացի վարդապետին: Եւ ի աղայական տիոց ան-  
տի եցոյց զանհաւատարութիւն առ նմանիս իւր: Եւ յամենայն փո-  
փոխման հասակաց զերազանցեալ գտաւ առ հասակակիցսն յա-  
ռաջատուութեամբ աստեղրական, արտաբոյ զբաւանաց և ընդ  
վայրայած աղայական խաղուց, պիտառացեալ զպէտս արտաքին  
25 մարդոյն՝ անտեսարար յարդարելով ի պիտանութիւն ներքին  
մարբութեանն: Ամենայնի, որ վայրաքարշ և երկրի է՝ բարեաւ  
մնալ ասացեալ՝ ողջախոհ իմն մոլութեամբ մոլեալ: Քաղցրացան  
ի քիմս նորա, և համեղացան իմաստութեանն խոկումն և սէր  
սրբութեան: Եւ կոխան արարեալ նախնագոյն զբոնութիւն որովայ-  
30 նի, սակաւ ինչ հացիւ բուականացեալ: Ի խոխոմս լերանց միայ-  
նացեալ ատուրխ յոլովս ի մանուկ հասակին կարգայր և ուսա-



նէր: Եւ սակաւ սակաւ յառաջ մատուցեալ նատէր առ ոտս վարդապետաց, առնոյր ի նոցանէ զմեկնութիւնս և զառակս խորինս: Եւ առ յոյժ սիրոյ և ըզձից, զաւուրս ութ արգել զանձն զազտագործի յարկեղս գրոց յայրի անդ, պարարեալ զանձն ի զբաւսանս զանազան երանգոց և համագամ կերակրոց, որ անդն զանձեալ էին հոգեոր կերակրոց խորակեր:

Առ ի մանկական անտի տիոց, մինչև ցվերջին որոշումն հոգւոյն, յերկրորդէն ո՛չ երբէք շեղեալ սայլաբեցոյց երբէք զուշ ոգւոյն ի նպատակէ ընթերցման՝ ուսանելոյ և ուսուցանելոյ, գրբելոյ և ընթեռնելոյ, հսկելոյ և յ ազաւթելոյ՝ զտիւ և ըզգիշեր, արտաբոյ ամենայն զբաղանաց և վայրաբարշ իրաց: [է]ր և բարեբարոյ, քաղցրահայեաց և զուարթատեսիլ, պարկեշտազրնաց և համեղախաւս, առ մեղուցեալս զըթած և առ ծանրաբեռնիս իմաստուն բլծիշկ: Այնչափ համբաւել ի բարիս, մինչ զի զըտոթ տուեալ ի բացագոյն սահմանաց՝ առնուլ սպեղանիս ըստ իւրաքանչիւր խըղխայթեալ վիրի:

Այլ և որք իմաստութեանն զանձու վաճառականք և տենչացողք էին, եկեալ մակագէին առ ոտս երջանիկ համեղաբան իմաստնոյն և շնուին ըստ շափոյ մեծութեան զքակս մտաց: Եւ զառնային ցնծացեալք, բարտք արգասիք և յուսատու ակամբք և զանձուք: Եւ ամենայն նսեմացեալ և խամբացեալ գիտութիւնք, որ ի տղիտութենէ և ի ծուլայելոց և խաւարելոց մտաւք ծածկեալ ազաւաղեցան՝ որ ի նախնեացն, սորին աշխատաջան երկովք և արագութեամբ մտաց զարգարեցան և ցնծացան անձինք տեսաւք և յասէր արանց:

Յամենայն զէմս բանի և գործոյ, տեսութեան և յառաջբերութեան, գրբելոյ և ընթեռնելոյ, պատմագրութեան և վարդապետական վերլուծութեան, մարգարէականին և առաքելականին աչնպէս կատարելագոյն գտաւ, որպէս և ո՛չ ոք ի մինն միայն համբաւեալ՝ կամ ի գործս կամ յարգիւնս: Եւ զետք յորովայնէ նորա բղիսեալ՝ արբուցին գտուն տէրունական և զնորատունկ մանկունս յարկաց աստուծոյ: Եւ զի՞ ևս պիտոյ է ինձ յերկարել զտողս բանից, ուր և վկայութիւն յայտնագոյն նորայն առասացութիւնք, լցին զսրորոս Հայաստանեայց, ըստ իւրաքանչիւր պիտոյից և ախորժակաց: Ելին յարմատոյ և ի շառաւելէ նորին բարունակք յո՞ննապտուղք՝ ուսուցիչք և յուսաւորք ոգւով, աստեղք անմոլարք և ջահք յուսալազանթք, և լցին զտիեզերս բանին կենաց և իմաստայեղց՝ տրամախո՞ ներհունական իմաստիք, որպէս և նախնագոյնն Երեմիա, անդրանիկն երկոց հոգեւորաց և ծնունդն սրբութեան: Որ իբրև զիմաստուն մեղու՝ բարձեալ յանդամս մտաց զծագիկս յերանգոց գունոց, և հոտոց և համոց, բերէր ի քաղաք իւր և տեղի անդեան՝ ի քաղաքամայրս Անի, և լի առնէր ըզտունն ի փարթամութենէ անտի: Առատապէս և աննախանձ սեղանաւորեալ զհաւատացեալ տաղանդն, ի տաննեակն շահավաճառ մընաս: Եւ ծագկաւեւեալ արձակեաց բողբոջս, և բուսոյց բոյսս ար-

գիւնարար: Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիրեաւ՝ խոնարհարար  
և ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին և զխորին իրս: Նախ՝  
80 զքերականութիւն, զբանալին գիտութեան և զգաստարական վերծա-  
նութեան, և զաղբերն տասնեակ անողանութեանց, յորմէ և որով  
580ա ունկնդրացն, տեղեկանան երկայնագունիցն և սղիցն սիլլորա-  
յից, երկամանակացն և անձայնիցն: Եւ արամախոհ անկեցելոյ  
նշանին, ըստ վերաստութեան շեշտի, և ըստ պարբեկութեան պա-  
85 րուկի, և յարանոցելոյ ապաթարցի, զի մի՛ ծիծաղելի շար խոհա-  
կերի նմանեալ, զտուն առ միջակ և զսրտատառ (!) աւարտ եղեալ  
ի կատարեալ մտաց, տարորոշ զբանն առնիցեն:

Որոյ և զկնի կրթէր, արկանէր ի գիրս նուրբս և գծու-  
րալուրս, և ըստ անողանութեանց խրատու ի վար արկեալ պատրաս-  
90 տարար խուզելով զմիտս, և զբա և զբառս, առելով համարս, ըս-  
տուզի: պահանջէր:

Յետ այսորիկ ի խոյզ և ի քնին ընթացից լուսատրացդ մըտ-  
եալ, տայր գումարել ի միատեսակ և յանստերիւր թիւս տոմարի,  
զուշ և զակն ոգոց: Եւ տեղեակ առնէր տօնից կարգաւորաց, և  
95 փոփոխմանց ամսոց և ամանակաց, և եղանակաց քառարածին տա-  
րատմամբ: Եւ որ ինչ ի քառեակս և ի բոլորս եղեալ են երկասի-  
րացն կաճառք, զպիտանիս և զարդինարար իրս, ի նըհանջաւոր  
յառաջգիմեցմունս և զետեղաւոր անշարժ կառուցմունս: Եւ ի շրջըն-  
թաց իւրակի կողսն՝ ինն և տասնեակաց, և քսան և ութեակ բո-  
100 լորատարր պարունակաց, զառակախուս բանս Արիստոտէլի, և  
զթուականաչափ խորոցս Փիլոնի<sup>3</sup> զարից և կոճատաց՝ և զառ ի  
նոցանէ ծնունդս, և ի ներքոյ տասնեկին զծնունդս իմանց, և զան-  
կարութիւնս ի յատուկսն ստուգակարգս, յաճունս և յանաճականս:  
Յայսոսիկ և ի սոցին ազգական իրաց կրթարանս, մղէր, կրթէր զա-  
5 մանս իրաց, զբաակ մտաց մանկանց, մարդիչ և մաքրիչ և հայիչ՝  
լալին և վատթարին պատրաստելով: Եւ արկեալ ի ժամանակի անդ՝  
զբարտք նախանձուն փափագումն ի վար: Ահա եռայր ոգով ամե-  
նայն ոգի, ելեկս միմեամբք առնելով: Եւ այնչափ հլութիւն և  
հնազանդութիւն ունէր առ վարդապետն իւր, մինչ զի վասն զոյզն  
10 մի բանի առ նմա սաստելոյ և ասելոյ՝ «Լուս լեր», զամս երիս լը-  
ռեալ կայր ասիբերան, ընդ միտս և ընդ աստուծոյ խաւսելով խո-  
նարհարար՝ ունկնդրութեան պարապելով: Եւ զամս է |30| լիով ոչ  
լուծեալ զբերան, այլ սանձեալ կրթէր և հնազանդէր զամհճու-  
թիւն անձին, շորարեկ սեղանաւ հացիւ և բանջարով շատացեալ՝ ե-  
15 րանելին Երեմիայ, որ և Անձրեն<sup>4</sup>:

Ունէր վարդապետն վարդապետաց պարզ և հոգւոյն սրբոյ,  
մարգարէութեան և սքանչելեաց, զորս ի բազմացն սակաւ ինչ ծա-  
նուցից՝ բազմաց վկայեալ:

Ա. Նախ այս, զի ի ժամու միայնաւոր ազաւթից, իբրև ըզ-  
20 բոց բորբոքեալ փայլատակունք հոգւոյն զնովաւ փայլէր, զոր  
տեսեալ բազում անգամ մերձակայք նմին:



25 Եւ երկրորդ, ոմն մի անառակ գնացիւք, մտանէք զրբարար և  
 մատուցանէք զանարիւնն պատարագ՝ փառամով կամուք աներկե-  
 580բ ղապէս լրբենի երեսուք: Եւ բազում անգամ ազգ եղև նմա յերկեղա-  
 ծաց արանց, զի շոեցուցէ զանաւրէնն ի յանդգնագոյն գործոյն, և  
 ազատես/լցէ զեկեղեցի ի նմանէ: Իսկ սուրբն աստուծոյ ըստ իւ-  
 րում իմաստութեանն ի խորհորդ այնր խորհրդոյ ասաց բան սոս-  
 կացուցիչ: Եւ ոչ լուաւ: Մինչև յայտնեալ զծածկեալն, ասաց ա-  
 րանձինն: Եւ ոչ այնմ ունկնդիր եղեալ: Ապա յայնժամ առաջի ե-  
 30 կեղեցուցն ամենայն յայտնապէս խրատեալ զնա սուրբն, զի յոյժ  
 յանդգնեալ կոխան առնէր զբան հրամանին, մինչև լուեալ դադա-  
 րէր: Ապա՝ զիտեալ ար մի, զի ելեալ վարդապետն յայլէ անտի՝  
 նստէր ի տաղաւարս վանիցն: Եւ աշկալեալ ի խոր գիշերին, զի ել  
 արտաքս ի յայլէն այլն աստուծոյ ուր ննջէրն, յարձակեցաւ ի վե-  
 35 րայ նորա սուսերամերկ և եղեալ զսուրն ի փողս նորա, կամէր  
 փողոտել զնա: Իսկ նորա հեղաբար հարցեալ, թէ՛ «Ո՞ ես, և ընդէ՞ր  
 կամիս սպանանել զիս»: Պատասխանի ետ և ասէ. «Ես եմ Բար-  
 սեղն<sup>5</sup>, որ ի քէն ամբաստանեցայ առաջի բազմութեանն, կամիմ աս-  
 տանար ստակել զքեզ, զի՞ արգելիք զիս ի պատարագելոյ»: Պա-  
 40 տասխանի ետ նմա հանդարտարար և ասէ. «Մի՞ սրբեակ, մի՞ դոր-  
 ձևը զայդ, եթէ հրապարակաւ յանդիմանեցի, հրապարակաւ բժշ-  
 կեմ»: Եւ արձակեաց զնա՝ եղեալ երզումն առնել զայն: Եւ այնպէս  
 սուրբն ազատեալ յանսրբոյ պղծէն, ապրեցաւ ի սպանմանէն: Եւ ոչ  
 եհան ումեք ի վեր՝ զբանն ծածկեալ: Եւ ի ժամու վարդապետութեանն  
 45 յատենի կացեալ՝ քաւեր զայլն, ասելով. «Ներա՛րք, դուժով Բարսե-  
 ղէն ամբաստանեցին ոմանք և ես արգելի զնա յեկեղեցույ, արգ՛  
 իբրև քննեցի, սուտ էր ամբաստանութիւնն, զնա և գժրիստոս  
 չիրար թողէք»: Զայս իբրև լուան երկեղածք և ընտիր արք, ան-  
 գունեցին զնա ի միտս իրեանց, զի ոչ էին տեղեակ ծածկեալ խոր-  
 50 հրրդոյն: Եւ իբրև արձակեցան ի ժամու առաւառուն, շուրջ  
 պատեալ զայլն արդար՝ յանդիմանէին վասն քաւելոյն: Իսկ նորա  
 զայլրազնեալ ետ բանալ զդուռն եկեղեցուցն և դռնեալ առ նշանն  
 Քրիստոսի, որ կայ յեկեղեցուցն, ասելով. «Ո՞վ նշան սուրբ Քր-  
 55 րիստոսակիր, ես խոզամարտիրոս ոչ կամեցայ լինել, զո՛ւ զատեա  
 զդատաստան քո»: Եւ գնացին յարկս իրեանց: Իսկ յանդուզն  
 այն պատրաստեաց առնել ժամ ընդ այլ արժանաւորսն: Եւ առեալ  
 նշխար: Իբրև հարին ժամ և ժողովեցան, եկն ի մէջ առնին, զի  
 մտցէ պատարագեցէ: Եւ իբրև բացաւ դուռն յարկին աստուծոյ,  
 սուրբ վարդապետն հայլեր ընդդէմ նշանին և պաղատէր անմոռն<sup>6</sup>  
 60 իբրև զԱննա ի հընոսմն: Իսկ իբրև կամեցաւ այլն այն մոլեգ-  
 նեալ մտանել և հացն նուիրեալ ի ձեռս նորա, վերացուցեալ զնա  
 ողոյն մոլութեան, իբրև զպարկ լի աւդով զարկուցեալ առաջի  
 բեմին, լըլկեաց զնա խաչատառակարար: Եւ յայն նշան ահարկու դո-  
 զաց անձն ամենայն: Եւ հանէին փառս աստուծոյ, որ զկամս եր-  
 65 կեղածաց իրոց առնէ Տէր և աղօթից նոցա լսէ: Իսկ սուրբն աս-

58 ԲՆ. պատարացեցէ:

ստուծոյ երջանիկ վարդապետն փառաւորելով զՔրիստոս, եւ հրաման  
581ա արտաքս քարշել զգարյ/շելիին ի սուրբ տեղեացն եւ զգոհութեանն  
մատուցանել պատարագ: Իսկ այրն անմիտ կրեալ յանձին զշար  
հարուածն, դողդոջմամբ եւ սգորմելի կենաւ զամս Իկ (21): Եւ ի  
70 կրանաւորաց ոմն Զէթ անուն զայնքան ամս սպասաւորեալ անսրբ-  
բոյն, զնէր հաց ի բերան նորա եւ ի շալակ բարձեալ տանէր յար-  
տաքին տեղին: Եւ վախճան նորա՝ եւ շարագոյն: Զայս ինչ գրով  
խնդրեալ իմ, ե նոցա, ի բերանոյ անն, որ ականատեսն էր եւ ըս-  
պասաւոր, ստուգեալ գրեցին առ մեզ, զոր գրեցաքս:

75 է եւ այլ ինչ յոլով սքանչելիք անն աստուծոյ, զոր դանդաղե-  
ցի գրել եւ պատերազմ տոնել լսելեաց, մանաւանդ զի մախացող է  
ազգս եւ անգոսնող:

Ի միում ատուր սա Կտես զայր ոմն ի կրանաւորաց, զիմեալ  
յանապատն առ նա ի զղջումն եւ ի խոստովանութիւն: Տեսա-  
80 նէր յայնապէս, իբրև ի վերայ գրաստու՝ զաստանայ հեծեալ յուս  
նորա: Իբրև մերձ լինէր ի դուրս խցին, զարձոյց զայրն եւ սու-  
սերաւ մերկ, զոր ոնէր ի ձեռս, մոթխոթեալ իբրև զէշ ի վազս  
հանեալ, անդրէն զարձուցեալ վարէր սաստկապէս: Զայն տեսեալ  
առաքինութիւն արձակեաց զաշակերան եւ բնաբար ետ բերել առ  
85 ինքն: Եւ հարցանէր, թե՛ «Ընդէ՞ր իբրու եկիր մերձ, զարձար  
անդրէն»: Եւ նա ասէ. «Ոչ գիտեմ, այլ զայի զղջացեալ առ  
սուրբ ոտս քո, ե յանկարծակի անկաւ ի միտս իմ սէր մոլեկան  
սիղխին, անդր պնդեալ երթայի»: Իսկ այրն աստուծոյ պատմեաց  
նմա զոր Կտեսն եւ ազաւթեալ սրբոյն ազատեաց զնա: Այս հաւատ-  
90 ախ պատմութիւն պատմեցաւ յաշակերտէ նորին կրանաւորի սքան-  
չելանշան յերիցս երանեալ վարդապետէն Յովհաննու Սարկաւագին,  
զոր գրեցիս, որով պայծառանայր նովաւ փառաբանութիւն բանին  
աստուծոյ: Որպէս եւ վարդապետն Պաւղոս ի Տարսն<sup>5</sup>, եւ աշակերտք  
նորա՝ Սարգիս Հարբացին, ե Ստեփաննոս եւ այլք բազումք: Սա  
95 գրեաց զիր հաւատոյ ի Հոռմ եւ սանձեաց գրերանս հերձուածողացն:

Էին արք անուանիր ի միում ժամանակի յերկրին Տարսնաց-  
ուց ի լեանն Սեաւ, ե ի լեանն Կարմիր եւ ի Խորին անապատն,  
Գրազարկն՝ Քարսեղ Պիաւեցին, որ հոշակելին էր եւ սքանչելին  
100 վարուք, որ կարգաւորէր զուխան իւր, ոչ հաշակեալ միս բնաւ՝  
ե ոչ կիթ, բայց ի տանի եւ ի կիրակէի շիթ միայն: Եւ կարգեալ  
ցալգապաշտաւն յամենայն կիրակամտի, որ կայ դեռս կարգաւոր-  
ութիւն կանոնին ի նմա:

Եւ զինի նորին լուսաւորք ողում վարդապետք ի նմա՝ Գէորգ,  
5 ե Կրակոս, ե Բզնատիոս<sup>8</sup> հոշակեալն, որ արար զմեկնութիւնն  
Ղուկայ ի խնդրոյ տեսն Գրիգորիսի: Եւ այլք երանելի հանապար-  
հաւ վիճակեալք բարեք կենաց՝ անձանաւթք ի մէնջ եւ ծանուցեալք  
Աստուծոյ, ե զովեալք ի ճշմարիտ յարգողէն:

Անէր այս հարցուի գուտար զլիսուորի քաղաքիս մերոյ ե  
581բ ոչ որ ի բահանայից // իշխէր մտանել, ազաւթել ի վերայ նորա,  
զի զամենայն գործս գործեալ ի դէմս բերեալ խալտառակագոյժ առ-



- նէր: Յայնժամ մայր նորա՝ աիկինն Հրանդոյ, բեկոտն ընթացեալ առ սիւնքն լուսոյ և արտասուաւք աղաչէր՝ դալ յայցելութիւնս գտներն շարշարեցելոյ: Իսկ սուրբքն նոյնժամայն յարուցեալ սաղ-  
 15 մոսելով մտանէին ի աուն անդր: Ոչ ինչ եղիտ ոգին մոլորութեան պարտաւանս զնել պարկեշտ և պատկառելի արանցն, այլ ասէր՝ ի քաղցրագոյն մրգաց շատանալ և լընուլ զկարաւտութիւն: Յայնժամ ամուլքն հաւատոյ ամբարձամբ մտաց և ձեռաց սկըսան ի սաղ-  
 մոսն Դաւթի՝ արտասուելով և պաղտաւելով: Իսկ զին յառաջին  
 20 Գործոյցէ անտի ի մաղթանս անկեալ՝ խնդրէր արձակել, զի երթիցէ ելցէ և զնասցէ ի բաց: Առ որ բարբառեալ սրբոցն. «Ձէ հնար մինչ ի կատարած երգոցս, բէպէտ և յոյժ նեղիս»: Այսպէս կատարեցին զբժշկութիւն արքն սքանչելիք և ընտրեալք ի փառս աստուծոյ:
- 25 Գրեցաւ ի բազմացն սակաւ պատմութիւնս ընտիր արանցս ըզկընի երիցս երանեալ ամեներջանիկ վարդապետին Սարկաւագ, զոր պատմեցաւ յոմանց զիտողաց՝ թէ մինչ սկիզբն առնէր ի մէջ զիշերոյն աղաւթից ի խցկանն իւրում, ճառագայթ լուսոյ և հրոյ ընդ լուսանցոյցս խցին, եռանդամբ արտաքս հեղոյր անսպասապէս:
- 30 Եւ այսպէս բարեք կացեալ ի ժիր մշակութեան, շոգաւ առնուլ զվարձն ի յաւերժականն ժառանգութեան: Եւ եղաւ ի հանդատարանի սրբում ի Հաղպատ, ուր սընաւ և վարժեցաւ ի փառս տեառն աստուծոյ թվ[իւն] Ծ[լ]Ը (1129):

**ՇԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Հովհաննէս Իմաստասերի ներկա կենսագրությունը հրատարակվում է ՀՊՁԻ-ի № 2680 (106) ձեռագրից, որ բովանդակութեամբ «Հարանց վարք» է, զբովանդակում է Միսիսիանի շրջանի Անդեղաթիթ գյուղում 1378 թվին Մատթեոս երեցի կողմից: Ձեռագրի նութը թուղթ է, զբովանդակում է միասյուն բոլորագրով: Ձեռագիրը հետագայում կազմվել է վարպետ Գրիգորի և նրա աշակերտի՝ Հովասափի կողմից Գեղամի շրջանի Մաղրա գյուղում 1580 թվին ընդհանուր և ի նեղ ժամանակի, զի տարածում մահ էր, և հարկապահանջութիւն, սով էր և հեծելաշարժութիւն» (Թ. 583ա—583բ):

2. Փառխոսը Արցախի գավառներից մեկն է, Սեանս լճից զեպի հյուսիս-արեւելք (Փառխոսի մասին տես Թ. Հակոբյանի «Հայաստանի պատմական աշխարհագրություն», պրակ II, Երևան, 1952 թ., էջ 109, 113):

3. Փիլոն Աղեքսանդրացի կամ Երրայեցի (մոտավորապես 20 թ. նախքան մեր թվակ. և 50 թ. մեր թվականությունից հետո), ազգութեամբ՝ հրեալ Հանդիսացի է Աղեքսանդրիայի հելլենիստական կուլտուրայի ակնավոր զեմբերից մեկը և իր փիլիսոփայական հայացքներով խոշոր ազդեցություն գործել ըրիստոնեական առաջնադարանության վրա: Զբաղվել է նաև մաթեմատիկայով և իր աշխատությունների մեջ բազմաթիվ օրինակներ բերել «Անկյունավոր թվերի» մասին, որից և օգտվել է Հովհաննէս Իմաստասերը:

4. Երմիա Անձրիիկ—Հովհաննէս Իմաստասերի աշակերտներից, Սամուել Անեցու աշակերտը, որին և հիշել է իր ժամանակագրութեան մեջ (էջ 128):

5. Նիշտ Բարսեղի վարբով մեկի մասին մի մանրավիպ պատմում է կիրակոս Գանձակեցին, բայց տարբեր անունով՝ Սահփանոս Զոզոմ (էջ 65): Արդյոք նրանք նույն անձնավորութեանը չե՞ն:

6. Պոզոս վարդ. Տարոնեցի—Հովհաննէս Իմաստասերի ժամանակակից մասնագիր, որը միաբան է հանդիսացել Մշո Ս. Դազարի վանքի միաբանութեանը Սասունի Չորտուանի իշխանի հանձնարարութեամբ գրել է «Թուղթ ընդդէմ Թէոփիս»:

ակս հայ-հոռոմ գիրխտիայի: Հայ մասենացրության մեջ հիշվում է որպես բնած-  
խմաստաւեր, այլ հրաշալի, երկրորդ լուսաւորիչ» (Տես Մատթեոս Առնայեցի,  
Փամանակագրութիւն, էջ 179, 355):

7. Իդնախոս վարդապետ Աւրեանեցի, դասընկեր Գրիգոր Գ. Պահլավունի կա-  
թողիկոսի, որի հանձնարարությամբ էլ նա գրել է Պուկասի ավետարանի մեկնու-  
թյունը (տես Հ. Աւարյան, Հայոց անձնանունների բառարան, Բ հատոր, էջ 379):

8. Ջեսայրի բնագրում գրված է ՇԷ, բայց լուսանցքում ուղղված է ՇԷԷ՝ ձեռագ-  
որը և համապատասխանում է Հովհաննէսի մահվան թվականին:





## 2. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀՈՎՏԱՆՆԵՍԻ ՄԱՍԻՆ՝

Եւ դժեցաւ սաչ ձեռամբ իմ յետին անարժան և մեղաւարտ  
 Մարկոսի, և զի էի անարհեստ յիմաստութեան և ի զիծ և տկար  
 մարմնով, աչխնքն՝ մի ոտանի, որ հոգւով երկու ոտս կաղամ ան-  
 252ա բժշկելի, որ ի հարկէ սորայ և յօժար կամաց իմոց գրեցի փա-  
 5 նաք գրով յընտիր ՚| և յազնիս օրինակէ, զոր Սարկաւագ քահա-  
 նայ, սպասաւոր սուրբ Կաթողիկէի Մեծի՝ որ յԱնի, ի բազմաց  
 օրինակաց, ի ձեռն և աչոց զիանականաց զօգտակարսն առեալ  
 հաւաքեաց ի մի զիր, և շարագրեաց իւրով ձեռամբ, ի զիրա-  
 լուր մտաց և զիտութեան, զոր սխալեալ թիրեցին անհանձա-  
 10 րութեամբ գրիչք, որ միայն սղորկութեան գրի ուշ եզեալ և ոչ  
 ստուգութեան մտաց և բանից, ըստ օրինակի շարխոհակերի՝ անըն-  
 251բ դել գրով տրոհութեանց: Գրեցի զսա յանապատ Քարան/ձաի, որ  
 է մերձ ի վանս Սաղմոսի ըստ շափոյ խարմանի ձանապարհի: Եւ  
 արդ հայցեմ մեծաւ մաղթանօք յամենեցունց ի ձէնչ, որք լուսա-  
 15 տրիք և շահաւետիք ի սմանէ, յիշել ի սուրբ յաղօթս ձեր և ասել.  
 Քրիստո՛ս, որդի աստուծոյ, յորժամ զսա հայրական փառօք, թող  
 զյանցանս ստացողի սորա Յոհաննիսի և ծնողաց իւրոց, ամէն,  
 ամէն:

Արդ և ես տառապեալ զժողս հայցեմ հանել մասնի փշրանաց  
 20 և յիշել զիս և զեղբարս իմ, և զծնողս և զամենայն միարանեպսն  
 ընդ մեզ հոգեւոր և մարմնաւոր մասամբ: Եւ զՅովհաննէս սրբաւեր  
 քահանայ, որ զընտրեալ գաղափարս ես՝ որ ի վանիցն Յովհան-  
 նու, յիշեալիք ի Քրիստոս ի Ոե՛ր (1195), իսկ ի սկսմանէ ի մեզ  
 ծագման քաղցրութեան աստուծոյ լոյս ծանօթութեան իւրոյ բո-  
 25 վանդակի մինչև առ մեզ ամք ՊՄԵ (1406) և վերադիտողք այսր  
 կարգի կէ... (այստեղ ընդհատվում է տեքստը—Ա. Ա.):

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Եւերկա հիշատակարանը մենք հրատարակում ենք ՀՊԶՄ-ի № 666 ձեռա-  
 գրից, որ բովանդակում է Եղոշումն ընծայութեան Կիրղի Երուսաղեմցւոյ՝ աշխա-  
 տությունը: Նախադրողափար ձեռագիրն ընդօրինակված է 1195 թվին, իսկ նոր ձե-  
 ապգիրը 1709 թ. Բջնիում (թ. 362ա-բ): Զեռագրի պատվերատուն է Հովհաննես  
 քահանան (թ. 251բ): Ղեռագրի նյութը թուղթ է, գրված է միասյուն բոլորագրով:

3. «ՆՈՐԻՆ (ՅՈՎՀԱՆՆՈՒ) ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԶԱՆՉՆԷ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝

Ո՛վ անզգայութեան, ի՛նչ մոլորութեան իմոյ բարութք, ո՛չ անդիտութեամբ ինչ գայթազեալ սխալեցի, և ո՛չ խաբեալ յումեքէ ըստ որում յուրվք մոլորեցան. ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, ձեռաադէմ գործեցի, որք սնուցին զիս  
69ա արին//աւք հոգ[ւ]ոյն կենաց՝ առաւել քան զընտրութեանն տածիւք խնամոյ առ մանկոձնս, որովք յառաջնում հասակին դաստիարակեալ յոյս տալի քաջութեան: Եւ հանդիպեցաւ այլ ընդ այլոյ շար ուսմանցս և վատարարոյից ընդունելութեամբ և յարութեամբ խեղկեալ զնոյն մակատաբանութիւն, քանզի ընդ սուրբս ի մանկութենէ կենցաղավարեալ զարգանալի: Եւ արդ՝ ընդէ՛ր պատահեաց ինձ անուրինութիւնք գործուց:

Աւա՛ղ շարաշար ընդրութեանն, ընդ իմաստունս կելով անմըտացայ և տրդարոց քաղաքակից հղեալ գտայ անիրաւ:

Ո՛չ ողջախոհացայ ըստ պարկեշտիցն և ո՛չ քաջութեան նոցա  
15 եղէ նախանձատր և աշակերտ: Յաղթահարեցայ յարինացն մեղաց և մահու որպէս անարի ի հզարտէ ումեքէ: Առ ամենայն առաքինիս ակարն և արհամարհեալն ինձ գտաւ հերքիչ և կործանագործ,  
69բ և տգեղաց//ոյց, և զպատկերին քաջաշնորհութիւնն որ յիս:

Աւա՛ղ գործոյս՝ որոյ վերասին ստացումն յետ ւազանին  
20 գեղեցկագործութեանն ոչ է այժմ: Եւ ի դիրքապատեհ փարթամութենէն, զոր ճոխացայ ազգատանալով որդւոյն աստուծոյ, դարձեալ կողոպտեցայ իմաւք ակործակաւք, և ոչ ունիմ, զիա՛րդ շահեցայց զնոյն:

Ի բաց վերակացուքն սարտեն հրեշտակք սուրբք, վասնզի որքան զուարճանան վասն ապաշխարողաց, այնքան հեռանան և խոտվին ի գործողաց զվատթարս: Եւ շէն ինչ զարմանք, քանզի ընդանէգունան սիրեն խրախանալ ըստ որում նոցայն արարիչն, այլ և ճշմարտապէս գթածին և մարդասիրին զերեսս ի բաց գործուցանելով զիա՛րդ ոչ և նորա:

Արդ՝ եթէ միայն թուական այսու կենաւք էր տխրութիւնն ընդ երկարութիւն չափեալ, ոչ թերես այսպէս վարանեալ տառապանաւք  
70ա հարկանէի // զանձն, բայց վասնզի յետ անցաւորի յաւիտենիս զի-



նեն արձանագրութիւնն շարեաց և նախատ լինելոյ ունիմ և անդ կրել ամալթ, որ ոչ քան զտանջանացան բոնութիւնն է ինձ փոք-  
35 րագոյն և անտանելի: Եւ ոչ գիտեմ արդեք զի՞նչ իցէ հնար մեծ և քաջազար յայնցանէ ի բաց զիս յափշտակելոյ:

Եւ արդ՝ գիտեմ զապաշխարութեան ընծայարութիւնն յոյժ առ ի փրկութիւն և յաներկուանալի զոլ զաւրտոր, այլ զպատուի-  
րանաց տեանն իմոյ ցանկ ըստգտանութիւն. և զի կրբէք նո-  
40 քաւք ոչ պարկեշտացալ] առ ժամանակ մի զղջանալ նմանութիւն ցուցանել կամեցալ], և զնամ կորակոր և ամաշեցեալ առաջի աս- տուծոյ: Սակայն սովորութիւն անդրէն բոնաբար արինացն մեղա- նաց զինելոց յանգամս իմ քարշելով զիս: Եւ թուիմ առնել ոչ զբա- րին, զոր կամիմ, այլ զոր ատեմն: Բայց ո՞րպէս հաւանեցու-  
70 ր ցանեմ զանձն իմ ի գիտակ/ցութեանէ մտաց իմոց վկայեալ. զիս ուրեմն, և որոց ցանկամ կամ յորմէ ոչ զգուշանամ, առնեմ, ալ- սինքն զկամս մարմնոյ և մտաց, վասն որոյ քարկութեանն ևղէ և անուանեցայ որդի:

Եւ արդ՝ վասնզի վիճակեցաւ ինձ յահեկէ՛ ընդ այծիսն մաս-  
50 նաւորիլ ընդդութեամբ և ախորժակաւք կամաց իմոց:

Եւ արդ, ոչ գիտեմ զի՞նչ արարից, տարակուսեալ եմ մոլո-  
րապէս, որ կորուսի զփարթամութեանն իմոյ ինձէն զգիրագիրտն մաղթանս: Սակայն գիտելով ճշմարտապէս զտեանն իմոյ յամե-  
նայնի առատկամութիւն, և զուարթութիւն առ աղաչանս մեղաւո-  
55 րաց, զորս և կոշել իսկ եկն առ նա զիմել որքան և իցէ հնար և զաւրութիւն, խոստովան լինել զգործոցն անառակութիւն, և զան- ձին ստգտանելով կամաւոր մոլորութիւն:

Անկայց առաջի նորա ըստ շափոյ պարգևասիրութեանն և  
71 ւ զբաղցրութիւն // զանշափական առ նոյն ինքն ունելով ընծայ և  
60 պատարագ հաշտեցուցիչ և ընդանի, թերևս խոնարհեալ ոչ իրա- ւամբք և դատաստանաւ առ իս զնայցէ՛ արդարութեամբ շափելով ինձ ըստ գործոցն վատթարութեան, այլ զողորմութիւն ի ժամա- նակի բարեբարութեան զբնածին և զընդաբոյս, և մանաւանդ որ վա- յելուչն է նմա, յիշէ և ոչ իսպառ պարտաւորեալ մատնեսցէ տար-  
65 տարոսական պատուհասին, անողորմ դահճին ի ձեռն տալով, ան- րանին և բանաւորապէս սպանողին, անքուն և անվախճան որ- դանն:

#### ՄԱՆՈՒԹԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննես Իմաստասերիը կենսագրութեան վերաբերող ներկա տեքստը հրատարակուած ենք ՀՊՁԹ-ի № 7 (6) ձեռագրից, որ բովանդակութեամբ աղոթամատուց է: Մեծ մասամբ պարունակուած է Հովհաննես Իմաստասերի աղոթքները: Ձեռագիրը գրված է Քրիստոսոստոսը գրչի կողմից 1111 թվին Միծառն քար կոշվող անպատում: Գրչի անունը գրված է հապավված ՔՔ ձեռով և մենք ենթադրաբար ենք վերծանում «Քրիստոսոստոս»: Ձեռագրի նյութը թուղթ է, գրված միասյուն խոշոր բոլորագրով:

#### 4. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՔ ԸՆԹՈՒՆԵԼ ԱՆԵՑՈՒՑ՝

Աստանար գլխատացեալ պարտան հատուցից զմնացուածս քանից, զոր եթող հարկ տեղոյն այնորիկ, այսու պատշաճեալ ամանակի, զի ասէ Իմաստասէրն աստուածային, թէ իբրև տոնոյք զփառս իշխանութեանն՝ բարեբախտն Մելիքաշահն, զկնի հարն մահուան՝ Ալփալսան կոչեցելոյն, // մեծապէս կարգաւք յարինէր զթագաւորութիւնն, ըստ անուանն արդարև եղեալ արքայ արքայից։ Ոչ հետևեալ հարն բարուց և կամաց, այլ յաւէա մանաւանդ զընդդէմն ախորժեալ, մինչ զի և մտահաճ եղեալ՝ զնորայն բասրէր իմացմունս, իբր եղեալ հակառակ խաղաղութեան և կենաց մարդկան՝ արեամբ և զրկմամբ խնդացեալ։ Իսկ ինքն իմաստաբար քաղաքալարութեան կարգաւք հանդերձէր զամենայն։ Արդ՝ խոհմն այն և արի քան զյուզիս ի թագաւորաց և քան զամենեանս որ առ մեք, ոչ այնքան տանէր հող, որքան արգարութեամբ առ ամենեսին վարիլ, զի մի՛ ոք լիցի տրտամ ի զրկելոց և հպարտ ի դոտուաց։ Էր և ազատաբարոյ և մեծախորհուրդ. այլ և տեսիլ մարմնոյն՝ արժանի թագաւորութեան։ Ընդ որում հեզութիւն ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ առնէր սիրելի ամենեցուն, զոր միայն կոչեցի թագաւոր և փարթամ։ Ու ի զոյգն ժամանակի փոքր ինչ նուազ զբոյրս

98բ  
10  
15  
99ա  
20  
25

Տնազանդէր զտիեզերս, զոր այլք // ի թագաւորաց կամ ի բազում ժամանակս, կամ և ոչ բնաւ, բայց ոչ այնքան պատերազմաւ և բռնութեամբ, որքան սիրով և քաղցրութեամբ։ Զի թէ սակաւ ժամանակաւ այնքան զարեաց, կարծեմ թէ և ոչ Եւրոպէ կարէր ոչ տալ մուտս արքայութեան նորա, եթև յուզեալ էին կենաց նոր ժամանակք...<sup>2</sup>

Արդ՝ ասաց զայս զկենաց նորա, որ տիրեաց ամս Ի։ Իսկ գրեցից՝ զոր ինչ վասն մահուն է ասացեալ...

Իսկ վասն զի յաւուրս թագաւորութեան սորա առաւել խաղաղացաւ աշխարհ ամենայն, մանաւանդ երկիրս Հայոց, որ ի նախկի[ն] բռնակալացն իսպառ սպուռ զկործանման բաժակ արբեալ էր յանցեալ ժամանակս ախորժելի եղև բանիւ դրուատիրք

100ա

վարդապետին սրբոյ գրիլ և խոստանալ զարձեալ // գրել արուեստաբան և երկայն պատմութեամբ։ Եւ յորժամ զկենացն վճարէ զասացուած, զմահուանէն ապա այսպէս գրեալ թե...



35 Ի ՇեԱ թուականին սպանաւ մեծ հազարապետն արքային պար-  
 սից Մելիքաշահի, որում անուն էր Հասան, իսկ ըստ պատուոյ աշ-  
 տիճանին՝ վզրով խառայ: Եւ զկնի աւուրց քսան և ութից մեռանի  
 և ինքն Մելիքաշահն, զորմէ համբաւէր յոմանց՝ զեղակուր ի կնո-  
 ջէն լնալ. որ էր հեզ առ ամենեսեան և քաղցր բարուք յաւէտ  
 40 խոտվութիւն ամենայն ազգաց զամս շորս, զի եզբայր նորա Դըգուշն  
 և որդի նորա Բէքիարուքն՝ զայսոսիկ զամս մարտիւ պատերազմաց  
 զբարեյարմարութիւն զամենայն ի բաց կտրեցին, վասն ոչ ընդիսոյ՞  
 միոյ ի նոցանէ տիրելոյ. հուսմունս արեանց իբրև զուղխից լի-  
 նէր ո՛չ միայն զինակիր նահատակաց, այլ առհասարակ ազանց  
 45 և զաւառաց, և նեղութիւնք վշտաց սովոյ և գերութեան: Եւ  
 100բ այսպէս բարիքն ի բաց վճարեցան ընդ խզման // կենաց թագաւո-  
 րին, որոյ երկք և աշխատութիւնք թագաւորականք՝ ուրոյն, և շահն  
 և աւգուան՝ հասարակ ամենեցուն, մեծամեծքն և ընդրելիքն մանա-  
 ւանդ, զխաղաղականն ասեմ զկեանս և զանկարատս և զանհա-  
 50 կառակս, զի սիրէր զազգս մեր այնքան, մինչև զի աղաթս հայցէր  
 և արհնութիւն. յորմէ և անդ երբեմն շոգաւ հայրապետն: Ա՛ւշ, թե  
 միայն էր աշակերտեալ քրիստոսական կրանից և կարգաց: Արդ՝  
 ի քաղաքին, յորում նստաւ և թագաւորեաց՝ յԱսպահան, որ է մայր  
 քաղաքացն Պարսից, մեռանի անդ:

(Մատենադարան, ձեռ. № 5619)

## 5. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԻՆ [ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆՈՅԻ]

- Եթէ կամրիցիս յեկանելոյն Ադամայ ի դրախտէն գիտել զժամանակն, կալ ԲՃԼԸ (5138) և զամս՝ որ ի ծննդենէ Փրկչին ի վերայ բեր. և մի՛ հաւատար՝ որոց ասեն զլինելութիւնն աշխարհի գիտել զժամանակ, զի գիտէ միայն՝ որ ստեղծն: Իսկ մեզ յայտնի թերևս է, յետ յանցանաց մարդոյն ժամանակն ըստ մեծին Մովսէսի, որ համարի մինչև յինքն ամս ՎՉԻԹ (3829) ըստ Եւթանասնիցն թարգմանութեան: Եւ մի՛ որոց ասենն ԲՆԻ (5420) լինել ի սկզբանէ աշխարհի մինչև ի ծնունդ կենարարին հաւատացես: Զի թէպէտ և յազեալ թՎոցն ըստ դիպարանելոյ այնպէս կըշտեալ հանդիպեցուցանէ զհինգհարիւրեակն ընդ կրուին]կն դարձուցանել, ալ ոչ այնպէս ստուգիւ վարկանելի է զչափ ժամանակացն. և ոչ աւելի քան զգրեալսն հոգւով աստուծոյ իմանալ կամ ասել պատշաճ է, քանզի մանկագունից ոմանց և անշշանից արանց թուցաւ հաճոյ ըստ անըջից իմն տեսութեան արուեստակել այնպէս:
- Իսկ անուանիք և բազմահմուտք որեար և աշխատասէր հարցրն, ժողովեցին զյայտնի ժամանակագրութիւնն այսպէս:
- 3 Ադամայ] մինչև ի փոխիլն Ե//նովքայ]՝ ամք ՌնՁէ (1487):  
Ի փոխմանէն Ենովքայ] ի ջրհեղեղն՝ ամք ՉՄէ (757):  
3 Ադամայ ի ջրհեղեղն՝ ՍՄԽԲ (2242):
- 20 Ի ջրհեղեղէն ցաշտարակն՝ ՍՉԿէ (2767):  
Ի ջրհեղեղէն ի ծնունդն Արրահամու՝ ԶԽԲ (942):  
Անտի յիսն յեգիպտոսէ՝ ՇԵ (505):  
Անտի մինչև ցՍողոմոնի շորորդ ամն և ցտաճարին շինութիւնն ամք ՆՁ (480):
- 25 Անտի մինչև ցնորոգումն տաճարին ի Զաւրաբաբելէ և ի Դարեհի Բ ամն՝ ՇԺԲ (512):  
Անտի մինչև ի ծնունդն Քրիստոսի՝ ՇԺԸ (518):  
Միանգամայն՝ ԲՃՂԸ (5198):  
Անտի մինչև ի հայ թուականին դիր՝ ՇՄԳ (553):
- 30 Ինն ամս զկնի հինգհարիւրեակն եղաւ՝ ի ծննդենէն՝ յետ



ՇԿԲ (562) ամաց:

Ի մկրտութենէն մինչև ցրսան ամեակն Կոստանդիանոսի՝ ամք 3 (300):

Անտի մինչև ցհայ թուականն՝ ՄԻԳ (224):

35 Եւ ի քսան ամէն Կոստանդիանոսի մինչև ցերկուշարիւրեակին զիւտ յԱնդրեասա[յ]՝ ամք ԻԳ (23):

Անտի մինչև ցհայ թուականն՝ ամք Մ (200):

196բ Ոչք ասեն ի լինելութենէն աշխարհի մինչև ի ծնունդն Քրիստոսի ամք ԲՆԻ (5420) լինել, մեծապէս փրթին՝ յուելլով զտգիտութեանն կարծիս, ալլոսանց ճշմարտութեան, վասնզի ի յարարչութենէն զժամանակս ոչ ոք կարասցէ զիտել ի մարդկանէ, բաց յարտաքելոյն Աղամայ ի դրախտէն:

Ի քսան ամէն Կոստանդիանոսի մինչև ի դիբ Երկհարիւրեկին ԻԳ (23) ամք են՝ ՁԱ (81) թուականին հոտոմոց:

45 Յերկրորդ ամէն Փիլիպպոսի մինչև ի քսանամեակն Կոստանդիանոսի, և անտի ԻԳ (23) լինի ՚Գ (104)՝ Մ (200) Անդրեասին, միանգամայն ՅԳ (304) մինչև ի հայ թուականն: Հերովդէս ալլազգի՝ ամս ԼԵ (35): Ի սորա ԼԲ (32) ամին ծնանի Քրիստոս:

Ի ծննդէնէն Քրիստոսի մինչև ցսուրբ Գրիգոր՝ ամք ՅԴ (304):

50 Ի սրբոյն Գրիգորէ մինչև ցսուրբն Մահակ՝ ամք ՃԸ (109):

Ի սրբոյն Գրիգորէ մինչև ի հայ թուականն ամք ՄԾԲ (552): Մինչև ի տէր Մուսէս կաթողիկոս՝ ԻԳ (24), յորո[յ] տասն ամի թուականն Հայոց եղաւ:

ՅԱղամայ ի հայ թուականն՝ ԲԶԾԲ (5752):

55 Ի ջրհեղեղէն ի հայ թուականն ՎՇԺ (3510): ՅԱբրահամէ ի հայ թվականն՝ ՎՇԿԸ (3568): Ի Մովսէսէ ի հայ թվականն՝ ՄԿԳ (2063):

Ի Սողոմոնէ ի հայ թվականն՝ ՌՇԿԳ (1563):

Յերկրորդ շինութենէն ի հայ թուականն՝ ՈՁԸ (688):

197ա //Ի ծննդէնէն Քրիստոսի ի հայ թուականն՝ ՇԾԳ (553):

Ի Քաղէս[տէ] ի հայ թուականն՝ ՇԺԲ (512):

Ի ծննդէնէն Քրիստոսի ի հայ թուականն՝ [ՇԾ]Գ (553):

Յառաքելոյն Քաղէսէ ի սուրբ Գրիգոր՝ ՄԿՁ (266):

Ի ծննդէնէն Քրիստոսի ի Նիկիա ժողովն՝ ամք ՅԻԳ (323):

65 Անտի ի Կոստ[անդ]ինուպաւլոսի ժողովն՝ ամք 2Գ (73):

Անտի յնիկեսոսի առաջին ժողովն՝ ամք Մ (50):

Անտի Քաղկեդոնի ժողովն՝ ամք ԻԷ (27):

Անտի ի Դվնա[յ] ժողովն՝ ի Հայք՝ ամք ԼՁ (36):

Անտի ի քաղաքի ժողովն՝ ի սուրբ Կաթողիկէ՝ ամք Գ (90):

70 յորում որոշեցին Յոհան Տիկորեցի: Եւ իր թուականն Հայոց ՃՂԳ (173):

Եւ յելիցն ի Վիրապէն սրբոյն Գրիգորի՝ ամք ՇԼԳ (533):

Եւ ի թարգմանութենէ Հայոց գրոյս՝ ամք Յ (300):

Յառաջին թուականին սուրբն Յիզաբուլիա վկայեաց: Հոտ- 75 մայեցոց՝ Յուստիանոս, Պարսից՝ Խոսրով, Հայոց՝ մարգպան Մէծէժ,

- կաթուղիկոս՝ Մուսէս: Յուստիանոս և Խոսրով հաշտեալ: Եւ ծագ-  
կէր ուխտ եկեղեցոյ:
- Ի տասն թուականին եղաւ հինգհարիւրեակն:
- Ի ժԱ. (11) թուականին Իոսն պատառեաց զկանոն Զատկին:
- 80 Ի ժԳ (14) թուականին՝ աջ աստուածային երևեցաւ ի սուրբ  
197բ //մատրանն և նշան ահեղ հրաշափայլ և արիւնատեսիլ չերկինս:
- ԼԱ (31) թուականին յուզէր խոտվութիւն վասն ժողովոյն Քաղ-  
կեղոնի:
- Լէ (37) թուականին Հոռիան Պարսից զօրավար առ զԵրուսա-
- 85 դէմ:
- ՉԳ (73) թուականին ի բաց կացին վիրք ի միաբանութենէն  
հայոց ի ձեռն Կիրոնի:
- ՉՁ (76) թուականին մեծ պատր[խ]ա[ր]զն Կոմիտաս շինէ  
զսուրբ տիկնոջն Հոբիսիմեայ զվկայարանն:
- 90 Չէ (87) թուականին Հերակլ ժողով արար ի Կարնո[յ] քաղաք.  
կոչէ և զԵզր, որ տգիտաբար հաւանեցաւ:
- ՉՐ (88) թուականին՝ ելն տաճկաց ի հայս:
- ՃԲ (102) թուին հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր,  
և զսուրբ Սարգիս ի Դվին, և զՎիրապն:
- 95 ՃԺ (110) թուականին խաչ երևեցաւ ի Վարազ:
- ՃԺԸ (118) թուականին հայրապետն Անաստաս կոչէ առ ինքն  
զմեծ Անանիա՝ անշարժ կարգել զսոսմար մեր: Եւ արարեալ մեծաւ  
ջանիւ: Եւ իբրև կամեցան ժողով ասնել, վախճանի սուրբն Անաս-  
տաս:
- 100 ՃՉԱ (171) թուականին սուրբ իմաստասէր Յոհան Ունեցի  
պայծառ կարգաբ զարդարեաց զեկեղեցի: Երթեալ առ ամիրապետն  
դարձաւ պատուով:
- 198ա // ՄԻԳ (223) թուականին տէր Եսայի ի Նիզ գաւառէ, ի զեղջէ  
Նդապա[տ]րուշա[յ]: Սայ էր որդի կնոջ այլո[յ], շրջէր մուրացիկ առ  
5 դուռն կաթողիկոսին: Եւ սա եհաս աստիճան հայրապետութեան:
- ՄԼէ (237) թուականին՝ տէր Սողոմոն Մաքենացոց:
- ՄԽն (245) թուին Սահակ և Յովսէփ կաթարեցան վկայութեամբ:
- ՄԾԵ (255) թուին՝ սով սաստիկ:
- ՅԽԱ (341) Մաշդոց ճգնաւորական հանգիսիւ պայծառանայր:
- ՇԽԲ (542) թուին սկիզբն շրջանի Շեկին:
- ՇԾ (550) թուին՝ պատաստումն զատկին:
- ՇՉԸ բուին՝ փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սաբկա-  
ւագն:
- ՇՁԸ (588) թուին շարժմամբ կործանեցաւ Գանձակ:
- 15 ՇՂէ (597) թուին՝ շինեցաւ Գանձակ:
- ՆԺէ (417) թուին շինեցան Հաղրաք և Սանահին:
- ԺԱ (11) ամաւ յառաջ շինեցաւ Հաղրատ ի կնոջէն Աշոտոյ Շա-  
հինշահի և ապա՝ Սանահինն:

<sup>2</sup> պատուով բառից հետո հիւսուակացուրչուն՝ «Շատ բաներ կա ստա»:

<sup>3</sup> ԲԳ. հան հանգիսիւ:



- ՆԻԸ (428) թագաւորն Սմբատ պարսպէ զԱնի և հիմն արկանէ
- 20 կաթողիկէին:
- ՆԾԷ (457) կինն Գագկա[յ] Կատրըմիոէ շինէ զկաթողիկէն յԱնի:
- ՆԾԹ (459) թուին Սմբատ Մագիստրոսն շինէ զԲ[ա]զնայր տունն Աստուծոյ:
- ՇԺԳ (513) թուին Ալիասլանն առ զԱնի:
- 198բ // ՇԽԲ (542) թուին սկիզբն շրջանին Շեկին:
- ՇՀԱ (571) թուին Գաւիթ թագաւորն առ զՏփլիսիս:
- ՇՀԳ (573) թուին թագաւորն Գաւիթ առ զԱնի: Առնու ի նոյն ամին զԳագ:
- ՈԳ (603) թուին Դեմետրէ թագաւորն Ափխաղաց Էհար զՍալ-
- 30 դուխն, զտէրն քաղաքին Կարնոյ՝ յԱնոյ դրանն, և կալաւ:
- ՈԼ (607) թուին վախճանի Դեմետրէ: Եւ զկնի Բ (2) ամսոց մեռանի որդին նորա Գաւիթ և թագաւորէ կր[ա]յսեր որդի նորա Գաւրգի:
- ՈԺ (610) թուին Գաւրգի առ զԱնի և Էհար զՇահիարմէնն, զտէրն Խլաթայ ի դրանն Անոյ:
- 35 ՈԺԷ (617) թուին՝ շարժն Ե[ր]զնկային:
- ՈԻԹ (629) թուին վախճանի Գաւրգի և թագաւորէ Թամարն:
- ՈԼԶ (636) թուին զԵրուսաղէմն էառ զթուրքն:
- ՈԽԳ (643) թուականին Թամարն կոտորեաց զթուրքն սաստիկ յոյժ ի դուռն Շամբորոյ:
- 40 ՈԽԶ (646) թուականին խանդարեցին զգատիկն և ընդ աստուածասպանսն տանեցին այլազգքն: Ի գլուխ կատարման ատուրց չարութեան բերին յեղբարց մերոց զաւետիս լուցման կանթեղի ի զերեզմանն ի մեր գատիկն և յամաթ եղեն հակառակողքն:
- 199ա ՈԽԷ (647) թուին // Չարարիա և Իւանէ որդիք մեծին Սարգսի
- 45 առին զամուրն Անրիրգ:
- ՈԿԹ (669) թուին եկն թաթարն առաջին:
- ՈՀԳ (674) թուին եկն սուլտանն ի Խորասանա[յ] և եհար զղաւթս, վրացիք առնի և քարահոս արար:
- ՈՁ (680) թուին առաւ Գանձակ քաղաք ի թաթարէն և կոտորեցաւ անշափ մարդ, և կանայք և մանկունք գերիցին քրիստոնեայք և պարսիկք առհասարակ:
- 50 ՈՁԵ (685) թուին անառիկ բերդն, որ կոչի Կայեան, և Լաւոէ քաղաք, և Անի մայրաքաղաք հայոց և այլ բնաւ աշխարհքս Հայոց, զաւառք և անառ բերդորեայք, և քարայրք և անմուտ մայրիք ի միում ամ առան. և կոտորեցան անհամար և անթիւ արք և կանայք և մանկունք: Եւ ո՛վ կարէ պատմել զնեղութիւնս և զաւաւանս, որ Էհաս մեզ յանողորմ ազգէն նետողաց: Որպէս ասաց՝ սուրբ հայրապետն Ներսէս տեսեալ հոգոյ ակամբքի ժամ վախճանի իւրոյ, ասէ՝ Քակեցցին Հայք ի հիմանց յազգէն նետողաց, գատարկացին ճանապարհք բազմագնացք առ ի // շոյ մարդկան, և այնպէս եղև, որպէս հրամայեաց:
- 198բ

1. Հովհաննես Իմաստասերի ներկա տեքստը մենք հրատարակում ենք ՀՊՁՄ-ի № 1973 ձեռագրից, որ ընդօրինակված է 1342 թ. Երզնկա քաղաքում Գրեզոր քահանայի կողմից: Տեքստի համաստ խմբագրությունը հրատարակել է Հ. Ոսկյանը «Հանդես ամսօրեայ» ամսագրում (1925 թ., էջ 238—239)՝ «Սարկաւազ վարդապետին է բանս խորագրով: Ամբողջական տեքստը հրատարակել է Վ. Հակոբյանը «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.» առաջին հատորում «Յոնաննու Բանանայի» վերառույթյամբ (էջ 22—26): Ժամանակագրության հետագա զարեքում կրած փոփոխության մասին մենք մանրամասն խոսել ենք մեր ուսումնասիրության մեջ՝ «Հովհաննես Սարկավազի պատմական աշխատություններ», որը հրատարակել ենք «Էջմիածին» ամսագրում (1950 թ., № 7—8):

Հովհաննես Իմաստասերի ներկա աշխատությունը, ինչպես ասել ենք մեր ուսումնասիրության մեջ, իրականում, ժամանակագրությունն չէ ներկա հասկացողությամբ, այլ նրա «Պատճէն տոմարի» մի հատվածը. խոսելով գործածվող թվականների հաշվումների մասին, Իմաստասերը ժամանակագրական այդ ցանկով կամեցել է օրինակներ բերել իր առաջարկած հաշվումների համար: Ըստ որում, Իմաստասերի նշված աշխատության ընդօրինակությունները կան ոչ միայն ՀՊՁՄ-ի № 3260 (թ. 426բ—432ա), № 1495 (թ. 162ա—163ա) ձեռագրերում, այլ ամառական «պատճէն»-ների պարունակող ձեռագրերի մեծ մասում:

Հովհաննես Իմաստասերի ներկա տեքստը մենք հրատարակում ենք միայն № 1973 ձեռագրից, նկատի ունենալով, որ մյուս տարբերակները ուշ շրջանի խաթարումներ են և առանձնապես ոչինչ չեն ավելացնում վերև նշված բնագրի վրա:

Հովհաննես Իմաստասերի ներկա աշխատության հիմքում, ինչպես ասել ենք ուսումնասիրության բաժնում, բնկած է Անանիա Շիրակացու տոմարի «Պատճէն»-ի նման մի հատվածը, որը հայտնի է մեզ, իսկ Իմաստասերի ժամանակացանկի լրացնողը, ինչպես ցույց է տվել Վ. Հակոբյանը, օգտվել է Սամուել Անեցու ժամանակագրությունից (անս «Մանր ժամանակագրություններ», I, էջ 20):

2. ՇՂԷ (1129) թվականից սկսած, տեքստի շարունակությունը պատկանում է Հովհաննես Իմաստասերի ժամանակագրությունը լրացնողին:



## 6. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՔ ՀԱԳՐԱՏԻ «ՔՅՈԹՈՒԿ»-ՈՒՄ

### ՎԱՍՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՅ ՍՈՒՐՔ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

- էր և պատահումն ի վանսն Սանահին կոչեցեալ, զոր տայ մեզ գրով իմաստուն Պետրիկոսն Սարկաւագ և ասէ ա[յ]սպէս՝ թէ յորում ամի թուականն Հայոց ՇՄԹ՝ (559) էր ազուտոտս ամսոյ Գժանն, որ է նոյն ինքն իդոս, միով ասուրք յառաջ քան զտան հանգստեան
- 28ա Աստուած//ածինն Մարիամաւ, յատր շարաթու, ընդ առաւառտանալն, մինչդեռ կային եզրարքն ամենեքեան ի սուրբ պաշտմանն, և թագաւորն Գուրգիս, որդի Կիրիկէ ընդ նոսա՝ ի վանսն աստուծոյ, կոչեցեալ Սանահին: Ոչ ուրուք զգուշութիւն արարեալ և ոչ գուշակաւք ուսաւք եղեալ, յանկարծակի յարեան և կալեալ զգուրս և
- 19 զկողմանս ազաւթարանին շուրջ պատեալ ամբարշտոցն պարսկային սկիւթացոցն, մերկ զինուք պատրաստականաւք, խժարան ձայնիւ զազաղակ եղեալ՝ անդերձ զամենեսեան ի բուն առնուլ, և
- 28բ մանպանց //զարքայն կարծէին, և շէր հնար բնա գտանելոյ փրկութեան և կամ թարչել անց ումեր. յայնժամ աղաղակեն առ
- 15 Տիսուս, որ հաճեցաւ լինել մարգ: Վասն մարդկան խնայեալ լեկեղեցի իւր ապրեցուցանել զթագաւորն ամենեքումբք հանդերձ ի բարեխաւսութիւնն ծնաղի իւրոյ սուրբ կուսին Մարիամու: Եւ ընդ մէջ նոցա անցեալ զնացին խաղաղութեամբ, որպէս և ինքն երբեմն ընդ մէջ նազարացոցն, բայց սակաւք ոմանք ըմբռնեցան յեղբարցն. և
- 20 կուր ոմանք մեռան սրով:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներկա հատվածը մենք հրատարակում ենք ՀՊՁԹ-ի № 3031 ձեռագրից, որը Հաղբատ—Սանահինի «Քյոթուկ» կոչվող ձեռագիրն է: Այս ձեռագիրը բնագործնակված է XVII—XVIII դարերում: Ձեռագիր կազմողներն իրենց այդ ժողովածուում գեանեղել են ոչ միայն ժամանակակից նյութեր, այլև Հաղբատ—Սանահինին վերաբերող հին վավերագրեր, ակքստեր, վիճադիր արձանագրություններ, այդ շարքում նաև՝ Հովհաննեսի Պատմության ներկա հատվածը: Հովհաննես Իմաստասերի ներկա հատվածը մեզնից առաջ հայտնի է եղել պատմական գիտությունների թեկնածու Լ. Պաշխիյանին:

## 7. ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ

ՅԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՉՈՐ ԵՐԿՐՈՐԴԵԱՆ Է  
ՍԱՐԿԱՒԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ

- Ի յարութենէն Քրիստոսի մինչև ցԲեկտոր հոռմայեցոց եպիս-  
կոպոսն, որ էր երեքտասաներորդ ի Հոռմ քաղաքի չեա Պետրոս[ի],  
նորայ առաքելոցն ընկալան և ուսան և պահեցին զճճարտութիւն  
ամս ՄԶԳ (283): Ի նիկոմիդա[յ] կայսերէ Ժ (10) ամ Բեկտոր կա-  
5 շաւ զպաշտան եկեղեցոյն Հոռմայ, որ զԹէղատոսն մերժեաց ի կր-  
ցորդութենէ, որ նախ Թէոդոտոս ասէր վասն Քրիստոսի թէ մարդ  
զուզնաքեայ էր, իսկ Զիփիթիզ նախնի աղանդոյն Արտեմոնեան, որ  
համարձակեցան եղծանել զգիրս սուրբս Արտեմոն յետոյ քան զժա-  
մանակս առ/արելոցն ԲԸ (200) ամաւր սուղ ինչ նուազ, որ շրջեայ  
-372բ 10 կղծաւ յառաքինի հովուաց եկեղեցոյ Քրիստոսի, ի Բեկտորէ և  
Զիփիթիանոսէ, որ զինի նորա կալաւ զաթոռն: Եւ զիտասցես զու՝  
թէ կարի յոյժ ազիտութեամբ ստեն, որք ասեն զԱրտեմոնն զայն  
լինել աշակերտ Յովհաննու աւետարանչի: Եւ ծանիցես զարձեայ՝  
թէ յառաջագոյն է հեր[ձ]ուած երկարնակացն, քան ժամանակ Յու-  
15 լիայ, որ է Սեղբեստրոս Հոռմայ Հայրապետին, որ առ Կոստան-  
ախանոսի լեալ: Իսկ ի Բեկտորէ Հոռմայ եպիսկոպոսէ՝ ամբ ԶԹ (79)  
մինչև ցՊաւղոս Տ[ե]րեաթիկոս Սամոսացի: ԻԺ (10) ամին Կղերիոսի՝  
Վագերիոս եկաց եպիսկոպոս: Հինկնտասներորդի յեկեղեցոջ յԱն-  
ախորացոց՝ Պաւղոս Սամոսացի, որ զատողջ կանոնս որոշեաց, և  
20 զԱրտեմոն հերձուածն նորոգեաց, և արտաբոյ եկեղեցոյ խորհե-  
ցաւ ի վերայ Քրիստոսի զուզնաքեայ մարդ ասելով, կամելով խոս-  
տովանել որդի աստուծոյ իջեալ յերկնից: Եւ ասաց վասն Քրիս-  
տոսի՝ թէ ի ներքուստ է և խա[յ]տառակե[ա]ց զնայ պեղծ աղանդովն  
-373ա Արտեմոն: // Ինքն անգաւ ի հաւատոց անդի ճճարտութեանն և  
25 եպիսկոպոսութենէ անախ: Եւ ծանիցես զՆեստոր և զվարդապետաց  
նորա և ժողովոյն Քաղկեդոնի ի միասին զհերձուածապետան, քան-  
զի իմօրն ապականագործ և շար լեալ մայր ի շարութենէ ի յա-  
ւուրց անտի Բեկտորի: Եւ զարութիւն առնոյր սաստկակոյն ի ձեռն  
Սամոսացի զազանին և արաժանէր դժնակապէս ի յուլով: Եւ  
-30 զայր հասանէր ի Նեստորիոս մշակ որոմանն սերմանելոյ, զի ըն-  
դունելով նորա ի Մեմփոսեայ Թէոտորիկոս կոչեցելոյ, որ էր աշա-



կերտ թէոզոլնի, որ վարժեալ ուսմամբն նեստորիոս ընդարձակա-  
գոյն զհերձուածն իւր շնոր տարածանէր ի հոգիս բազմաց: Իսկ ի  
տարազրիչն անարժանին աստուծոյ նեստորի, սուղ ինչ ժամա-  
35 նակի վերայ անցանելոյ, Փղերիանոս համախոհ նորին և ծանաթ  
շարին, նորին ամառութեամբն ունէր զաթոռ եպիսկոպոսութեանն  
373բ քաղաքին Կոստանդինու: Եւ լինէլ հակառակութեան և թեքի վանա-  
պետի || քաղաքին առ նա լինել զաւանակից երկու բնութեանց ի  
վերայ Քրիստոսի: Եւ ո՛չ ինքն ուղղապէս զաւանէր, քանզի առ աշաւք  
40 զմարմին բանին աստուծոյ խոստովանէր և ո՛չ ճշմարտապէս շար-  
շարի ախոյեան, և ընդգիմամարդ պատահալք, ո՛չ միշտ ի նմա-  
նութիւնն միմեանց խոնարհէին: Յաղագս որոյ և ժողով երկրորդ ի  
Թէոզոսէ արքայէ ի յնփեսոս՝ զխաւորութեամբ Մեծին Գեոսկորո-  
սին Աղեքսանդրի եպիսկոպոսապետին, որպէս քաջայայտ իսկ է:  
45 խորհեցան երկրքեանն կողմանքն: Բայց նախ քան զայս, պատճառ  
վիճարանութեան Փղերիանոս գրեաց առ ամբարշիշտն Հոռմա[յ] Լե-  
ւան, առնուլ վիճիո ի նմանէ ի նահանջումն հակառակութեանցն՝  
զթիւնս կարճի, աւճի՝ թիւնաւք բժշկել կամեցեալ: Իսկ Լեւոն զախոր-  
ժելին նմայ գրեաց այլ հայհոյութիւն ժԳ (14) զլուխ՝ առ նա առա-  
50 քեալ, զոր նդովելին զաւանդառուն և զաւանդողն ժողովեալքն յնփե-  
սոս, անզի իսկ Լեւոնն այն, թէ ի Թէոզորէն ընկալաւ, թէ ի գրոց  
անտի Արտեմոնեանց, որ ի վազնջուց քաղա[քի] անդ արմատացեալ  
էին, ամենեցուն հասարակաց նոցա սահման մի էր սկսեալ, տա-  
զաւար բանին զմարմինն կոչէին, բաժանելով զմիաւորութիւնն և  
55 բաժեալ նկրտին, սակա[յ]ն կտակ շարին պահեցաւ ի շարաց աշ-  
խարհին, ի գործումն կործանման, քանզի ժողովք ամբարշտացն,  
որ ի Քաղկեդոն Բիւթանացոց, քարոզեցին զտնաւթնութիւնն  
անաստուածութեան հաւատոյ արձան յրեցան յանդգնութեամբ,  
հակառակ աստուծոյ և աւծելոյ նորա և որոց հոգին սուրբ կար-  
60 գե[լ]աց տեսուչս և վարդապետս եկեղեցոյ սրբոյ: Արդ՝ շափաւորեաց  
և պարզամտաց քաջայայտ են իրք անպարշտութեան ժողովոյն  
Քաղկեդոնի, զի հարք նոցա կաշառաւք յԱնատալայ սամկէ առին  
ձեռնադրութիւն, որ ինքն յայտնեաց ամենեցուն զտանջումն հրեշ-  
տակին առ նա: Եւ նորա կամեցան զողանալ զճշմարտութիւնն, որ-  
պէս երբեմն ծերքն հրէից զչարութիւն Քրիստոսի գրանն և զ[ս]քան-  
65 չիլի տեսին, որ կշտամալումն էր անհաւատութեանն նոցա, բացին  
զգրուեա ականջաց և աշաց || և միջինք՝ նոցա քանիք հայհոյութեան  
374բ յանդիմանեալ են, և գործովք զազրութեան ի պողոց անտի և ի գոր-  
ծոյն ճանաչին: Քանզի որդիս իւր ճանաչի հայր, և ծառ՝ ի պողոց  
70 իւրոյ, զի նոյն կամք և ձայնակցութիւն նոցա ամենեցուն մի է և  
ոչ կարեն ստել. թէպէտ և կախարդական բանիւք և հաւանեցող,  
որպէս են իսկ սովոր, բաղում անզամ հնարեցին մարդ ստորին և  
հասարակաց Մամոստացին հայհոյելով զՔրիստոս համարձակա-  
պէս, նմանապէս և որ զկնի նորա, Թէոզորիտեանքն և այլքն նոցին  
75 համախորհքն, որոց վարժեալ ուսմամբն նեստորիոսի, ընդ ար-

ձակագոյն զհերձուածն տարածանէր ի հոգիս բազմաց բաժանելով  
 զմիաւորութիւն սրբոց հարցն, զոր ընկալեալ զկնի ժողովեալքն ի  
 Քաղկեդոն արձան հաւատոյ անուանեցին շինելով ի վերայ  
 80 այնր ապականիչ և հայհոյական հիման զնրեթ իւրեանց իմացու-  
 375ա ծոյն, և աւանդեալ կանկնեցաւ անազան ուրեմն աստուածամար-  
 տութեան աշտարակն, և մի շուրթն ամպարշտացն և ծիծաղելի շա-  
 85 բացեալքն սուղ անբձակելի և ան//հնարին էր բարեպաշտիցն  
 աւանդութիւն: Եւ զաստուածասիրեաց անձանց զժողովելոց ի վերայ  
 տարածեցին մինչև ցայսար և ժամանակի, որ զաստասանքն ի

Արդ՝ նոցին հերձուածողացն կցորդն, և հետեոյն, և կրկին  
 շարն քան զնոսա, ի ԿԹ (69) թոսականիս հայոց և ի ՈԹ (620) շար-  
 շարանացն Քրիստոսի, երևեցաւ ի պիղծն անապատին արաբաց-  
 90 ւոց, անդրանիկն սատանային և կարապետն Նեոխն և ստու-  
 թեան, մարգարէն, կոչեցեալ կամակոր վիշապին, յառնթաց որդ-  
 ւոյն կորստեան, Մահմետ, որ ասի ստուգապէս՝ մահու ետ: Եւ  
 կորստեան ճանապարհ հնազանդելոց իւրոց, Քրիստոսամարտն, որ  
 պատգամավոր աստուծոյ զինքն անուանէր ստութեամբ, խաբելով  
 95 զբազումս տիեզերապատիր աշխարհակործան, խաբերայ և պատ-  
 րոզ: Չոր ասաց Քրիստոս յառաջագոյն, թէ գայցեն յանուն իմ և  
 զբազումս մոլորեցուցանեն, և հալածումն մեծ յարուցանեն ի վե-  
 րայ եկեղեցոյ, որպէս Սիմոն, և Կերինթոս, և Մանի, և Թէոդոտոս,  
 375բ և Արամեոն, // և Սամոստացին, և Նեստոր և նմանք սոցին: Արդ՝  
 այս ալսքան:

Բայց ժողովն հերեսիովտացն զԱկորբաւ զանց արաբեալ, որ  
 եղբայր տեանն կոչեցաւ, և զվկայ, որ ալանատես էր ծննդեանն  
 Քրիստոսի ի Բեթղէեմ, և յամենայն տեղիս ընդ նմայ էր յեզիպ-  
 100 տոս, և Յորդանան: Եւ զկնի Լ (30) ամի, որպէս ասացաք, նոյն  
 ար ծննդեանն և մկրտութեանն հանդիպի: Եւ զիտէր զարն ստու-  
 105 գապէս զյղութեան ժամանակն և զծննդեան և ճշմարտիւ գրեաց ի  
 յունտարի ի վեցն զյայտնութիւնն և զծնունդն: Եւ վկայէ աստուա-  
 ծարան հայրապետն, ասելով. Այժմ աստուծոյ յայտնութեանս  
 տան է, քանզի երևեցաւ աստուած մարդ ծննդեամբ: Եւ մեր ի  
 մի տան և ոչ յերիս բաժանեմք, զի յորում ասուր ծնաւ Քրիս-  
 10 տոս, ի նոյն ասուր, յետ Լ (30) ամի, ի Յորդանան մկրտեցաւ, և  
 ոչ փոխեալց Քրիստոս զարն: Եւ ստուգէ ինքն զմիութիւն, իւրոյ  
 ծննդեանն և զմկրտութեան խորհուրդն:

**ՄԱՆՈՒԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հովհաննես Իմաստասերի ներկա տեքստը հրատարակվում է № 2013 (2055)  
 ձեռագրից, որը բովանդակվում էր Վարդանի «Տօնապատճառն» է: Չեռագիրը՝ թուղթ  
 է, գրված է միասուրն, բուրմազիր, XV—XVI գաբերում:



8. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ «ՀԱԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՆՆԱԳԻՑԱԿԱՆ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

2008 // ՆՈՐԻՆ [ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ] ՀԱԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ  
ՀՆԱԳԻՑԱԿԱՆ ԸՆԴԳԷՄ ԱՆԳԻՏԱԿԱՆ ՈՄԱՆՅ ՅԻՐՍ  
ԳԻՏՈՒԹԻՒՆ, ՈՐ ՍՏԱՅՕԳ ՃԱՌԻՔ ՀԱԻԱՆԵՅՈՒՅԻՆ  
ԶՈՄԱՆԱ Ի ՎԱՅՐԱԳԱՅ ԵՒ ՊԱՐԶԱՄՍԱՅ  
ՀԱԻԱՏԱԿ ԱՆՀԱԻԱՍՏԻ ԻՐԲԱՆՅ ԿԱՐԳԵԱՅ:

5 ԳԼ. ԺԳ

1. Քէպէա և դիտաւորութիւն իրին առաջիկայի բազում անգամ  
ի մակագրութիւնէ բանին դիւրածանօթադէս կարէ որ ի միտ առնուլ  
համառօտագոյն, սակայն սուանց զժամանակն դիտելոյ և զտեղին,  
5 ոչ պահի օրէն հաւաստութեանն յեղանակին և պատճառին հանդերձ  
զիմօքն առաջի կացելոյ: Յազադս որոյ կամեցայ քեզ և զայս ըն-  
ձեռել սիրելի և աւլ տեղեկութիւն՝ թէ յորո՞ւմ արդեօք ժամա-  
նակի կալաւ սկիզբն հայհոյութիւն ժողովոյն Քաղկեդոնի և կամ  
10 ո՞ւ նախահաւակ և գոռիչ կորստականին այնորիկ ուսմանս և ո՞չք  
ազանդապետացն այնոցիկ ընդդիմասացք յաւուրս իրեանց ի սրբ-  
բոցն կամ զինչպիսի՞ յայտնութիւն զառաջինն յաստուծոյ եղև առ  
15 իմանալ ամենեցուն զդատնութիւն հերձուածոյն: Եւ ի մէջ այսոցիկ  
զբազազկոտաց ոմանց խալտառակեսցուք զգիտութիւն և զառաս-  
պելական կարծիս՝ զճշմարտութիւն անդասին իսկ յանդիման ի գրոց  
կացուցանելով, և զժամանակին հեռաւորութիւն ի ներքոյ գրոշ-  
15 մելով անուար դիտրճուրդս բազմաց ի հաւաստոցն ուսմանէ կա-  
201ա ցուսցուք: Եւ զկնի այսոցիկ զհամաձայնութիւն // միմեանց առա-  
ստութիւնն հեռեղաց նոցին, նեստորի ասեմ և Լեոնի, և ժո-  
ղովոյն Քաղկեդոնի և այլոց ոմանց վատափառաց՝ զորոց քակ-  
տեալ կործանեսցուք զօրութեամբ աստուծոյ ի հարցն բանից և  
20 աւանդութեանց զանօրէն իմացմունս:

2. Բայց զարմանալ ինձ և կարի յոյժ՝ թէ զիա՞րդ ոչ զարհու-  
րին ստութիւն ոմանք ի վկայութիւն ճշմարտութեան ի ներքս բե-  
րել և այն յոչ ունողացն փառս ճշմարտութեան չիր և ի բան, յոր  
ձեռնարկել համարձակ և ոչ կատարելոցն անգամ և բոլորովմբ զի-

- 25 տութեամբ, յորմէ և հրեշտակք սարսափին: Կամ զիս՝ որ անուամբ  
ուղղափառութեան պաճուճին խառնակ և տգէտ խոստովանութեամբ,  
մանաւանդ եթէ հերձուածողականաւ, վասն զի ոչ զժամանակացն  
միայն և զարանց, այլ և զհաւատոյն բան ստեն յանդգնութեամբ՝  
յաղագս անուանի բանիս զոչ տալոյ կարծիս: Եւ եթէ յանդիմանես-  
30 ցի որ երբէք ուրեք, կամ արտունջ յոմեքէ աջնպիսի կրեսցէ, որ  
ոչ և եթ բանիս, այլ և զրով արձան թիւութեանն կանգնեաց,  
բազումք սաստեն և նա ըմբոստանայ յայտմանէ հպարտութեան:  
Վասն որոյ մեք մի՛ շրթամբք, այլ զրով տացուք արձան ընդդէմ ար-  
ձանի և ճշմարտութիւն ընդդէմ ստութեան, արդեօք իսկ շնորհօք  
35 ճշմարտութեանն միայնոյ և մեծի մերձ զիցուք ի զոմարութենէ:  
զառ ի սրբոցն բա: Եւ նախ՝ թէ յո՛ր ժամանակս և կամ առ որո՞վ  
ոլիմպիսդաւ Արտեմոնականն սկսաւ աղանդոյ բոց շաշորի և  
ո՞յք ի ժամանակին թագաւորք և կամ քաղաքաց կայսկոպոսք: Եւ  
սկսցուքս այսպէս:
- 40 3. Առ Մե (240) ոլիմպիական, յառաջնումն ամի, թագաւորէ  
201ր Հոռոմայեցոց Կոմոդոս՝ ամս ԺԳ (13), որ հին/զեասաներորդ էր  
Յուլիայ կայսերէ, յորմէ և ուստի կայսերք հոռոմայեցոցն, որ  
ըստ նմանէ թագաւորք անուանեցան, որ զառաջին կալաւ միահեծան  
հոռոմայեցոց իշխանութիւնն՝ ամս Գ (4) և ամիսս Գ (4): Աս և  
45 Փայիոս կոչէր և՛ կայսեր առաջին: Զէնի որոյ Օգոստոս, որ և  
Սերաստոս Հորտաիոս, թագաւորէ ամս ԾՁ (56) և ամիսս Զ (6),  
յորոյ եթ (42) ամի ծնանի որդին աստուծոյ Յիսուս Քրիստոս ի  
Բեթղէմ Հրէաստանի: Եւ լինի աստի մինչև ի թագաւորելն Կո-  
մոդեայ ոլիմպիագք եՁ (46), ուստի ժողովին ամք ճՁԳ (184): Ի  
50 սորա տանկերորդ ամին յաչորդէ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն  
Հոռոմայեցոց Բեկտոր, որ էր առաքելոյն Պետրոսէ երեքասասնե-  
րորդ: Ի սոյն սուրս էր և նարկէչոս սքանչելի՝ երեսներորդ ի Յա-  
կոբայ կայսկոպոսէ եկեղեցւոյն Երուաղէմացոց: Եւ կայեալ  
զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյ հոռոմայեցոց Բեկտորի զամս  
55 երկոտասան մինչև յիններորդ յամն Սեերեայ: Եւ Զեփարինոս կա-  
լաւ զկնի նորա զեպիսկոպոսութիւնն: Եւ առնեն ի ծննդենէ Փլըրկ-  
չին մինչև յամն իններորդ Սեերեայ և ցյաչորդել զեպիսկոպոսու-  
թիւնն Հոռոմայեցոց Զեփարինոսի ամք ՄՁ (206): Եւ այնմ ժամանա-  
կի՝ հերձուածոյն Արտեմոնի սկիզբն: Եւ զիս՝ որ ի ստոց ոմանց  
60 և համարձակաց արանց իշխի ասել զաշակերտ Յովհաննու աւետա-  
րանչի զոլ Արտեմոն, և այն՝ զի ոչ նա, այլ այլք ոմանք առ  
Բեկտոր և եղեն գլուխք այնր հայհոյութեան, զորս ընկէց Բեկտոր  
ի հաւասարութենէ եկեղեցւոյ, թէպէտ և կրէ զրպարտու-  
թիւն առ ի նոցանէ զկամակցութեամբ աղանդոյն, որպէս հնոյ ըս-  
202ա կըզընականի ուսման և առաքելականի // և ի Զեփարինոսէ միայն  
այնուհետեւ արհամարհեցելոյ, որպէս և ի զրոց անտի գոյ ուսա-  
նել. իսկ Արտեմոնի զկնի ուրեմն գոյ աշակերտեալ աղանդոյն  
մարգագաւանութեանն զՔրիստոսէ, այսր քան զժամանակնն Բեկ-



- տորի աճեցոյց զնոյն որպէս Մարկիոն զԿարգոնին, զնոյն իսկ  
70 զբանսն, որ զնոցանէ առընթեր եզից:
- Եւ եւրիայ Կեսարու յեկեղեցոյ պատմութենէ, ի հինգերորդ  
դպրութենէ՝ վասն այնոցիկ, որ եղևն ի սկզբանէ յազանդոյ անտի  
\* Արտեմոնի, և որով արիւնակաւ էին նոքա, և թէ որպէս համարձա-  
կեցան նոքա եղծանել զգիրս սուրբս:
- 75 4. Եւ յիմաստնոց աստի յայսցանէ, վասն որոց ասացաք մեր  
խօսս, զորս եղևալ է մեծաւ հոգարարձութիամբ ընդդէմ ազանդին  
Արտեմոնիա[յ], այն որ հնարեցան նորոգել զնա ընդդէմ մեր Պօղ  
Շմշտացի: Գոյ ի նմա պատմութիւնն, որ պիտոյ է այսմ ճառից, զոր  
արկեալ է մեր: Զի այս ազանդ ասէ վասն Փրկչին մերոյ՝ թէ մարդ  
80 է դուզնաբեալ: Բայց յանդիմանեալ կշտամբէ զնա, թէ ոչ յառաջ  
քան զբազում ժամանակ սպառեաց յեկեղեցոյ, քանզի հպարտա-  
ցեալ պարծէին այնոքիկ, որ վերակացուն են նորա՝ թէ կանխագոյն  
է նա և եթ: նա և այլ բազում վասն յանդիմանութեան սուտ բանից  
հայհոյութեան նոցա, պատմէ իսկ բանիւք իւրովք այսպէս: Ասեն  
85 եթէ ամենայն առաջինքն և նոքա [յ]առաքելոցն ընկալան և ուան  
զսոյն զայս, զոր ասացաւ և պահեցաւ, ասէ, ճշմարտութիւնն մին-  
չև ի ժամանակս Բեկտորի, որ էր նա և պիսկոպոս երեքտասաներորդ  
ի Հոռոմ քաղաքի՝ յետ Պետրոսի ի Զեփրիանէ իսկ, այն որ կալաւ  
202բ զկնի // նորա, գործեցաւ ստութիւն ի վերայ ճշմարտութեան:
- 90 Բայց այս թերևս արժանի էր հաւանութեան, եթէ ոչ զի նախ  
զիրք սուրբք կան հակառակ ընդդէմ նոցա:
- Բայց են և զիրք ոմանց եղբարց մերոց, որ հին են և քան  
զժամանակս Բեկտորի, որք գրեցին ընդդէմ հեթանոսաց վասն ճշ-  
մարտութեան և ընդդէմ ազանդից, որ էին յայնմ ժամանակի. ասենմ  
95 իսկ Յուստինոսի և Մեղաեղոսի և Տելրտիանոսի և Կղե-  
մենտեայ և այլոց բազմաց, զի ամենքին սորա ասեն վասն աս-  
տուածութեանն Քրիստոսի: Իսկ զԵրիմիոսի և՞ զՄեղիտովի և զայ-  
լոց, ով է որ ոչ գիտէ զգիրս նոցա, որ քարոզեն վասն Քրիստո-  
սի՝ թէ աստուած է և մարդ: Բայց վարդապետութիւնք և երգք,  
100 որք գրեցան ի հաւատացեալ եղբարց անտի ի սկզբանէ փառաւորեն  
զՔրիստոս զբանն աստուծոյ և ասեն վասն աստուածութեան նորա:  
Արդ՝ զիա՞րդ իբրև յայս ամենայն ամա աւետարանի ճշմարտու-  
թիւն եկեղեցոյ մարթինշ է լինել այսմ, որ ասեն նոքա. թէ  
մինչ ի ժամանակս Բեկտորի քարոզէին այս միտք, կամ զիա՞րդ ոչ  
5 ակնածեն զբարտեյ զԲեկտոր այսուիկ՝ իբրու գիտեն ճշմարտու-  
թեամբ՝ եթէ Բեկտովք զԹէադատոս, որ էրն և հայր այսր խոտոր-  
ման, որ ուրանայ աստուծոյ, տարագրեաց զնա ի հազորգութենէ  
կցորդութեան, որ նախ նա ասէր վասն Քրիստոսի՝ թէ մարդ էր  
զուզնաբեալ: Զի եթէ Բեկտովք, որպէս ասեն, հաւատայր ըստ ու-  
10 մանն հայհոյութեան նոցա, զիա՞րդ ընկենոյր նա զԹէադատոս,  
այն, որ նա եղև զտիշ այսր ազանդի: Եւ զայս ասաց վասն Բեկտորի:
5. Իսկ իբրև եկաց ի պաշտման իւրում զտասն ամ, կալաւ զկնի  
203ա նորա զԵփրիանոս յամին իններորդի Սեբերիայ: Եւ յաւելու և ասէ.

Այն, որ եղ զայս խօսս վասն այնորիկ, որ սկսաւ այս ազանդ,  
 15 վասն որոյ ասացաք զնմանէն: Եւ այլ միւս ևս գործ, որ եղև  
 ամս զՄփրիանոսի, և զրէ այսու բանիւք: Այսպէս յիշեցուցից,  
 ասէ, եղբարց իրս մի՛ որ յաւուրս մեր գործեցաւ, այն՝ որ ակն  
 ունիմ, որ եթէ գործեալ էր ի Սողոմ, թերևս իմաստնացուցանէր  
 զնա: Այր մի էր, զի անուն նորա Անտեղիոս և էր նա խոստովա-  
 20 նեալ. բայց ոչ յառաջագոյն էր նա, այլ ի մեր ժամանակս: Զսա  
 մոլորեցուցին երբեմն Ասկոպիդոտէս և Թէոդոտոս միւս ևս: Եւ  
 էր սա տրապիզիդ: Եւ էին իսկ երկոքին նոքա աշակերտք Թէադա-  
 տոսի, այն որ ասացաքն զնմանէ յառաջագոյն, թէ վասն այսր մտաց  
 յիմարութեան որոշեաց զնա ի Հաղորդութենէ կցորդութեան Բեկ-  
 25 տոր եպիսկոպոս, որպէս կանխեցի ասացի: Հաւանեցուցին իսկ  
 զանտեղիոս, զի եղիցին նմա տալ յայտնի սոսկ, և կոշեացի եպիսկո-  
 պոս այնր ազանդի, և եղիցի նա առեալ ի նոցանէ Հարիւր և տասն  
 դահեկան: Իսկ իբրև ընտանեցաւ նոցա բազում ժամանակս ի ձեռն  
 տեսչեան խրատեալ լինէր՝ նա ի տեսանէ իւրմէ, զի աստուած  
 30 ողորմած և տէր մեր Յիսուս Քրիստոս ոչ կամեցաւ թէ լիցի նա  
 արտաքս քան զեկեղեցի և կորիցէ: Քանզի եղև նա վկայ շարչա-  
 րանաց նորա, քանզի լքեալ մտօք հայէր նա ընդ տեսիլսն, քանզի  
 որ ասացեալ լինէր նա ի ձեռն գլխաւորութեանն, որ առ նոսա և  
 զօշաբաղութեանցն, որ կորուսանէ զբազումս: Իսկ ի չետոյ տան-  
 35 ջեցաւ ի յիշատակաց սրբոց: Եւ զամենայն շարչարեցաւ մեծապէս:  
 Եւ նոյն ժամայն կանխեաց ընդ առուաւան և զգեցաւ քուրձ և  
 203բ ցանեաց զիւրև մոխիր: Եւ բազում փութով // պնդութեամբ և  
 :անգին արտասուաւք անկաւ առ ոտս Զեփրիանոսի եպիսկոպոսի և  
 ընկենոյր զանձն իւր առաջի ամենայն մարդոյ՝ ոչ առաջի այնոցիկ  
 40 միայն, որ էին յաստիճանի անդ եկեղեցւոյ, այլ և առաջի ժողո-  
 վրբդեանն: Եւ հեղոյր նա զարտասուս առաջի ողորմած եկեղեց-  
 ւոյ Քրիստոսի: Եւ յոյժ աղաչէր և խնդրէր ի նոցանէ, և ցուցանէր  
 զկեղս վիրացն, զոր ընկալաւ: Եւ հազիւ ետուն նմա զհաղորդու-  
 թիւն կցորդութեան:

45 6. Եւ ընդ յայս բանս յարեալ են և այլ բանք սորին այս օրի-  
 նակագիր, զի են այսպէս: Զգիրս, ասէ, սուրբս աներկիւղ հա-  
 մարձակ եղծին, ապականեցին և զկանոնս գառաջին հաւատոցն  
 զրկեցին, և զՔրիստոս ոչ ճանաչեն և ոչ քնեն՝ եթէ զի՞նչ ա-  
 սեն զիրք աստուծոյ, այլ թէ որպիսի կերպարան մաքառման զբո-  
 50 ցեն, որ կրէ զաստուածութիւնն որդոյ և թեակոխեն ի նմա փու-  
 թով պնդութեամբ: Եւ եթէ որ հարցանէ զնոսա բան ի գրոց աստու-  
 ծոյ, նախ նոքա հարցանեն՝ թէ այս բանս զո՞րպիսի կերպարանս  
 մաքառման կարէ առնել՝ զխառնումն թէ որոշումն:

55 Բայց թողին զգիրս սուրբս աստուծոյ, և կրթին և ուսա-  
 նին զչափս երկրի, իբրու թէ՛ որդիք իցեն երկրի, և երկրէ խօ-  
 սին: Եւ զայն, որ եկն ի վերուստ, ոչ գիտեն, զի Ավդիդէս առ  
 ոմանս ի նոցանէ փութով պնդութեամբ ուսանի: Արիստատեղէս և  
 Թէոփրատոս՝ յոյժ սքանչելի են առ նոսա, զի Գաղիոս առ ոմանս ի



նոցանէ իբր այն թէ երկրպագելով երկրպագի: Իսկ նոքա յա-  
 60 րուեստ պիտու թիւնն այնոցիկ, որ ոչն հաւատան պաշտին ի խոր-  
 204a հուրդս ազանդին նոցա և ի խորամանկութիւնն այնոցիկ, որ առանց  
 այն են խառնեալ են ընդ // պարզ հաւատան գրոց աստուծոյ. իբր  
 ոչ մերձենալով մերձենային որ առ հաւատան, զի՞նչ պիտոյ է մեզ  
 ասել զնոցանէ: Վասն այսորիկ աներկիւղ համարձակ ձեռնամուխ  
 65 եղեն ի գիրս աստուծոյ և ասեն բամ ուղղելով ուղեմք զնոսա-  
 Եւ զի ոչ գրպարտելով գրպարտեմ ինչ զնոսա. այն որ կամին՝ կա-  
 րէ.ուսանել, եթէ որ կամի հանել զօրինակ զմիոյ զմիոյ ի նոցա-  
 նէ և ընթեռնուլ զնոսա ընդ միմեանս, գտանէ զնոսա՝ զի երկմտեալ  
 և բաժանեալ են ի միմեանց, զի բաժանեալ են Ասկզապիղիայն  
 70 Ի.Թէադոտիսեայն: Բազում իսկ գտանի ի գրոց անտի նոցա, քան-  
 զի փութով պնդութիամբ գրեն զնոսա աշակերտք նոցա զուղեալսն  
 միոյ միոյ ի նոցանէ, որպես և նոքա կոչին զնոսա: Բայց են նո-  
 քա եղծեալք և ապականեալք, բայց դարձեալ Հերմապոլսին սոցա  
 ոչ միարանին, իսկ Ապոդիինդեայն և ոչ նոքա նոցայոյն միարա-  
 75 նին: Զի եթէ որ ընթերցցի զայնոսիկ, որ յառաջագոյն ուղղեցան  
 ի նոցանէ ընդ այնոսիկ, որ յետոյս ապականեցին, գտանէ՝ թէ ոչ  
 միարանին ընդ միմեանս: Այլ թէ քանի է ժպրհութիւնն այսր մե-  
 դաց, թուի թէ և նոքա ճարտար գիտիցեն, կամ թէ ոչ հաւատան թէ՝  
 ի հոգւոյ սրբոյ ասացան զիրք սուրբք: Եւ են նոքա առանց հա-  
 80 ւատոց կամ զանձինս իրեանց համարին իմաստուն, քան զհոգին  
 սուրբ: Զի՞նչ ևս այլ ինչ են նոքա, բայց եթէ դիւահարք, զի  
 ոչ կարեն նոքա օրանալ՝ եթէ չիցէ նոցա յայս ժպրհութիւնն. իբ-  
 րու ձեռօք իրեանց գրին, յայնցանէ, ուստի աշակերտեցան նոքա,  
 ոչ ընկալան նոքա զգիրս այսպէս: Եւ չիք նոցա ցուցանել՝ եթէ  
 85 ուստի գրեցին նոքա զօրինակսն իրեանց, իսկ ոմանք ի նոցանէ  
 204p ոչ զի փոխելով փոխել զնոսա կամեցան միայն // այլ սպառ սպորտ  
 ուրացան յօրինաց և մարգարէից ուսմամբն իրեանց, այն որ ա-  
 ռանց ուսման օրինաց և առանց աստուծոյ է, և ի պատճառս մո-  
 լորութեան ընկեցան:

90 Եւ վասն այսորիկ մինչ ցայս վայր:

7. Արդ՝ այս յանուն Արտեմոնի անուանեալ ազանդ անազան է  
 քան զժամանակս առաքելոցն երկերիւր ամօք սուղ ինչ նուազ, որ-  
 պէս ճառեցաւդ վերագոյն: Իսկ նոյն ինքն Արտեմոն ևս անազան:  
 Եւ շիջեալ եղծաւ ի հօտասէր և առաքինի հովուաց եկեղեցւոյ Քրիս-  
 95 տոսի և առաջին ի Բեկտորի հոռմայեցւոյ մինչև ի ժամանակս  
 Պօղոսի Սամոսացւոյ:

8. Արդ՝ լինին ի ծննդենէ Փրկչին մինչև յամն շորորդ Կո-  
 մողեայ կայսեր ամբ՝ ՄԳ (204), իսկ ի շարժարանաց և ի յարու-  
 թենէ Տեառն մինչև ցնոյն ամ՝ ՇԶԳ (173) ամբ և ցեկտոր  
 100 եպիսկոպոս հոռմայեցւոց, առ որով զուլիս և հայր մոլորութեան  
 Արտեմոնեանցն Թէոփրոս երեէք, զոր մերժեաց ի կցորդութենէ  
 եկեղեցւոյ Բեկտոր, ամբ ՇԶ (180), որ կալաւ զեպիսկոպոսութիւնն  
 մինչև ցիննեքորդ ամն Սեբեայ, իսկ ըստ այլոց՝ մինչև ցեօթնե-  
 քորդն: Զկնի որոյ Զեփրիանոս կալաւ զեպիսկոպոսութիւնն զեր-

5 կոտասան ամ, զորոյ ամբաստանեն Արտեմոնեանքն իբր իւ նա առաջին սկսաւ խոտել զուսումն նոցա: Զի յետ երեքասան ամին Կոմոզեայ, թագաւորեաց եղև Իոսպիրտինաքս ամ մի. և ապա՝ Սեերիոս ամս Ը (8), առ տասամբ միով, յորոյ իններորդ ամի ասի զաթոն ունել հոռմայեցոց եկեղեցւոյն զեպիսկոպոսութենէ նմա, 205ա ալսինքն՝ յերկերիւր քառասուն և հինգ ուրիմպիա||դին կացին թագաւորք հոռմայեցոց Վաղերիանոս և Փաղղիանոս: Եւ յերրորդ ամի անդ շոգաւ գերի ի պարսս Վաղերիանոս յաղագս յարուցանելոյ հալածանս ի վերայ քրիստոնէից:

Իսկ ի վեցերորդ ամին Փաղիենոսի, եկաց նպիսկոպոս հինգե- 15 տասաներորդ յեկեղեցւոյն Անտիոքացոց Պօղոս Սամոստացի՝ որ զատողջ կանոնսն որոշեաց, և զԱրտեմոնի հերձուածսն նորոգեաց, և որպէս բանն է ալ տաքոյ եկեղեցւոյ աստուծոյ խորհեցաւ ի վերայ Քրիստոսի խորհուրդ տնանկութեան և ազքատութեան, իբրև ի վերայ դուզնաքեայ մարդոյ, ոչ կամի խոստովանել որդի աստու- 20 ծոյ և իջեալ յերկնից: Եւ ալս ոչ դուզնաքեօք ասացաքս ի նմանէ, ալ ի խօսից անտի, զոր առաքեաց ճանաչև, թէ քանիցս անգամ ասաց վասն Յիսուսի Քրիստոսի՝ թէ ի ներքուստ է: Յանկուն ի թխթի անդ և ասեն: Իսկ զայն, որ ձաղեցան զխորհուրդ եկեղեցւոյ և խալատակեաց զնա պիղծ աղանդովն Արտեմոնեայ, զի՝ 25 պիտոյ է ցոցանել զհայրն նորա, ոչ ալսուհեան պիտոյ է յետ ալսր ամենայնի պահանջել ի նմանէ զայս յայտ է թէ՛ վասն գործոցն պղծութեան ակնարկելով:

Ասեն դարձեալ՝ իբրև անկաւ Պօղէ ի հաւատոյ անտի նըշմարտութեանն և ընդ նմին յեպիսկոպոսութենէ անտի, որպէս յա- 30 ռաչագոյն կանխեցաք ասացաք, Դոմնոս կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն Անտիոքացոց: Եւ երեի շաբին ալսորիկ կալեալ Պօղոսի զանուն եպիսկոպոսութեանն զեօթն ամ, ի վեցերորդէն Փաղղիենոսի թագաւորութեանն մինչև ցերկոտասանն ՄԿԱ (261) ուրիմ պիտադին ցշորրորդ ամն, և լի||նին ի ծննդենէն Փրկչին ուրիմ- 205բ պիտադ Կէ (67), որ էն ամբ ՄԿԸ (268): Իսկ ի տասներորդ ամէն Կոմոզեայ կայտեր, յորում Բեկտոր կալաւ զպաշտօն եկեղեցւոյն հոռմայեցոց, որ զԹէոդորն մերժեաց զնախնի աղանդոյն Արտեմոնական, ուրիմպիադք քսան, պակաս միով ամաւ, իսկ ամբ՝ 2Թ (79): Եւ ցՊօղոսի հերեախկոսի զաթոն եպիսկոպոսութեան սկիզբն ամբ 40 2Թ (79) ի Բեկտորայ: Առ Սամոստացւովն զեկեղեցին հոռմայեցոց Դիոնիսիոս հովուէր, որ քսաներորդ շորրորդ էր ի Պետրոսէ առաքելոյ, և կալաւ զեպիսկոպոսութիւնն զինն ամ:

9. Արդ՝ զրեցան սորա ոչ վայրապար ինչ՝ կամ ժամանակ կամ անուանք առաքինեաց արանց և վատթարաց, ալ և թագա- 45 տրաց ոմանց հանդերձ ողոմպիադեօք: Բայց զի գիտացես թէ՛ կարի յոյժ ի տգիտութենէ ստեն՝ որք ասեն զԱրտեմոնն զայն լինել աշակերտ աւետարանչին Յովհաննոս: Եւ ծանիցես դարձեալ՝ թէ

38 Մի շարք տեղերում ուրիմպիանք գրված է ուրիմպիանք ձևով, ամենուրեք ուղղում ենք բնագիրը: 10 բն. հոռմայեցվոց, 21 բն. խօսից փոխ. խօսից, 33 բն. ուրիմպիադին, 38 բն. ուրիմպիանք:



կանխագոյն է հերձուածդ երկաբնակաց և քան զժամանակս երանելոյն Յուլեայ Հոռմայ եպիսկոպոսի, առ որ Կոստանտինիւ կայսերր լեալ ասի, քանզի ոմանք անտի կարծեն և յայնմհետէ զբաժանական հերձուածդ հանդերձ այսոքիւք, զի և զնեստորի, և զվարդապետաց նորա և զժողովոյն Քաղկեդովնի իմասցիս հերձուածապետս և զառաջնորդ:

Քանզի խմորն ապականազործ և շոր, լուեալն ի զօրութենէ յաւուրցն Բեկտորի, զօրութիւն վերստին սաստկազոյն առնոյր ի ձեռն Սամաատացոյ գազանին, և տարածանէր զժնդակապէս ի յո-  
206ա լովս և ըստ փոխանցութեան կարդի արժա/նաւոր ժառանգօք գայր հասանէր ի նեստորիոս մշակօղ որոմանն սերմանեցելոյ, զի ընդունել սմա տսեն յումմնէ Մոփսէկատացոյ Թէոդորոս կոչեցելոյ, որ էր աշակերա Դիողորի:

Իսկ ի տարազրիլ անարժանին աստուծոյ նեստորի, սուղ ինչ ի վերայ անցելոյ ժամանակի, Փղարիանոս ոմն համախոհի նորին և ծանօթ շարի նորայն աւանդութեան, ունի զաթոռ եպիսկոպոսութեան քաղաքին Կոստանդինու: Եւ ի լինել հակառակութեան և  
65 տիքի վանապետի քաղաքին առ նա վասն շառնլոյ յանձն ընդ նմա լինել դաւանակից երկու բնութեանց ի վերայ Քրիստոսի և ոչ ճշմարտապէս բանին մարմին լինել դաւանիւք: Եւ շար՝ շարի ախոյեան և ընդդիմամարտ պատահալք, ոչ ի հաւանակցութիւն միմեանց խոնար[ը]հէին, յաղագս որոյ և ժողով երկրորդ յեփեսոս

եղեալ ի Թէոդոսէ արքայէ գլխաւորութեամբ մեծին Դէոսկորոսի Աղեքսանդրացոյն եպիսկոպոսի, որպէս քաջայայտն իսկ է, խոտեցան կողմանք երկոքին: Բայց նախ քան զայս զպատճառն վիճարանութեան, գրէ Փղարիանոս առ ամբարիշտն Աեոն առնելով  
70 վիճիո ի նմանէ՝ խնդրելով ի նահանջումն հակառակութեանցն,

զի՞նչս կարձի, օձի կամեցեալ բժշկել թիւնիք: Իսկ նորա զախորժելին նմա գրեալ հայհոյութիւն և բաժանեալ շորեքտասան զլուխ-  
75 սըն՝ առաքէ առ նա, զոր նզովեցին աւանդողնան աւանդառուան հանդերձ ժողովեալք յեփեսոս: Սակայն պահեցաւ կտակ շար ի շարաց աշխարհի ի գլորումն կործանման և ոչ իւր ուղղապէս խոստովանեցելոյ, քանզի առ աշօք: Քանզի ժո/ղով ամպարշտացն, որ ի Քաղկեդովնի Բիւթանացոց քարոզեցին զանօրէնութեանն և անաստուածութեանն հաւատոյ արձանն, յորոց բանից և իմացուածոց հանդերձելոց ելանել իմատեան գրոցդ համառօտիւ ճանաչելոց ևս զսրբութիւն յանդգնելոցն հակառակ աստուծոյ և օձելոյ նորա և  
85 որոց հոգին սուրբ կարգեաց տեսուչս և վարդապետս և կեղեցոյ սրբոյ:

10. Արդ՝ զիա՞րդ ոչ և շափաւորաց և պարզամտաց քաջայայտ ամբարշտութեան ժողովոյն քաղկեդովնի իցեն իրք, զի հարք նոցա կաշառօք կամեցան զողանալ ճշմարտութիւնն, որպէս երբեմն ձերք հրէիցն զբան յարութեանն: Եւ ի սքանչելի տեսլեանցն, որ առ կշտամբանս անհաւանութեանն նոցա՝ խրին զղրունս աշաց և ականջաց, և միջինք նոցա առ բանիւք հայհոյութեանց, սոզը-

տեալ են և գործովք զագրութեան: Եւ նորին ինքեանք ի պողոց  
անտի, այլ և յարմատոցն պահանջին, ըստ որում և ի սոցանէ՝  
95 նորա, քանզի յորդիս իւր ծանիցի այր և ծառ ի պտուղ իւր: Եւ զի  
նոյն կամք և ձայնակցութիւն ամենեցուն նոցա են, ոչ կարեն  
ստել, թէպէտ և կախարդական բանիւք և հաւանացուցանողօք, որ-  
պէս և են իսկ սովոր, բազում անգամ հնարեցին: Մարդ ստորին և  
հասարակական Սամուսացին հայհոյելով համարձակապէս զՔրիս-  
100 տոս անվանել, նմանապէս և որք զկնի նորա Թէոդորիտեանքն և  
այլ նոցին համախոհք, որոց վարժեալ ուսմամբ նետորիտոս, ըն-  
դարձակագոյն զհերձուածսն չնոյր տարածանէր յոգիս բազմաց:  
Իսկ Լեոնն այն, եթէ ի սոցանէ ընկալեալ և եթէ ի գրոց անտի  
207ա Արտեմոնեանցն՝ որ ի քաղաքին, որ ի վազըն/չուց արմատեցելոյ  
5 ի հասարակաց ամենեցուն նոցա հիմանէ և սկսմանէ, տաղաւար  
բանին զմարմինն կոչէ, և շորեքտասնեկումբք գլխովք մատենին  
իւրոյ հայհոյութեանն բաժանել զմիաւորութիւնն և քակտել նկրտի:  
Զոր ընկալեալ զկնի ժամանակի դուզնաքեայ ժողովեալքն ի Քաղ-  
կեղոն, արձան հաստոյ անուանեցին՝ շինելով ի վերայ այնր  
10 ապականիչ և հայհոյական հիման զնիւթ իւրեանց իմացուածոց, և  
աւարտեալ կանգնեցաւ անագան ուրեմն ստտուածամարտութեանն  
աշտարակ ի միաշուրթն ամպարշտաց: Եւ ոչ ծիծաղելի շարաց  
եղեն, այլ և սուղ անբերելի և անհնարին բարեպաշտիկ աւանդու-  
թեանն և զաստուածսիրողաց անձանց և ժողովոց՝ ի վերայ տարա-  
15 ծեցին մինչև ցայսօր ժամանակի, որոց ոչ դատարկասցի ի բնէ  
դատաստան:

**ՉԵԱՆՈՒԹԱԳՐՈՒՅՈՒՆՆԵՐ**

1. Հակարանութիւն հնազիտականի ներկա տեքստը մենք հրատարակում ենք  
ՀՊՁԹ-ի № 2751 ձեռագրից, որ պարունակում է միջնադարյան 3 օկանազոր մատե-  
նագիրները աշխատութեաններ՝ Անանիա Նարեկացու, Խոսրովիկ թարգմանիչի և  
Հովհաննէս Իմաստասերի: Տվյալ ձեռագիր-ժողովածուում գետեզված են Հովհաննէս  
Իմաստասերի 19 աշխատութեանները, որոնք մեծ մասամբ կրօնական-սոցիմիկ  
աշխատութեաններ են: Տվյալ ժողովածուների մեջ «հերձուածոցական» շարժումնե-  
րի մասին ունի երեք աշխատութեան, որոնցից մեկն այս է, որ հրատարակում  
ենք, իսկ մյուս երկուսը՝ «Նորին յայտարարութիւն զանագան ներձուածոց յայլ և  
յայլ ժամանակա յարանց բզջխտեաց» (թ. 221բ—235) և «Նորին դարձեալ»  
(թ. 235բ—243ա), որոնք ավելի կրօնական բովանդակութեան ունեն, բաց ենք  
թողնում զեանգիլու այն հատորում, որը կպարունակի Իմաստասերի կրօնական  
գործերը:

2. Տվյալ ձեռագիրը թուղթ է, գրված է նոսր գրով միասյուն: Ձեռագրի  
գրիչն է Առկիանոս Տէր-Ստեփանոսյանը 1840 թվին: Պատվիրատուն է հան-  
գիտացել Տայբի և Վրաստանի հոգևոր առաջնորդ կարապետ Կախկոպոսը  
(թ. 286բ):



## 9. ՅՈՎՀԵՆՆՈՒ ՔԸՀԸՆԸՅԻ ՅԸՂԸԳՍ ԸՆԿԻՆՆԸԽՈՐ ԹՈՒՈՅ

Զի ի յուսումնասէր մանկանց՝ որք կամիցին և արտօժեն զվարժումն, որ ըստ բնութեան թուոց անաշխատք եղիցին, յայնոսիկ և դիւրաւ հասցեն ըստ տուեցելոյ առաջին եղելոյ կանոնացդ,  
5 որում արտօժենն:

Արդ՝ առաջի կարգ խորանոյդ՝ յեռանկիւնեացն սկսեալ մինչ ի շորեքտասան անկիւնիսն թիւ ունի՝ ընդ բողոքսն և զարմատան կարգ ըստ կարգի դասեալ, զի անաշխատ եղիցիս: Իսկ այլ երկու կարգքն ոչ այսպէս, այլ մին՝ արմատն և միւսն ձնունդքն՝ զանազանեալք ըստ խորհրդոց: Եւ որ այլ ի դոսա բերի խորհուրդ՝  
10 գրեալ է ահա: Յեռանկիւնեաց մինչ ի շորեքտասանն գրեցաւ: Ո՛չ թէ զի այդքան որոշմունք անկեանց անկիւնաւորաց թուոցդ պէտք ինչ էին, այլ վասն կրթութեան մանկանց միայն. որչափ զարթուցանել զմիտս խնդրոցաց և ո՛չ որքան խնդրէ բնութիւն թուոց:

15 Վասն որոյ բաւական համարեցայ կացուցանել զբանակութիւն դորա մինչև ցբաներորդ վեցերորդ համար: Իսկ եթէ արտօժեսցէ որ շարժել ևս յառաջ՝ դիրին է ի տուեցելոցդ՝ որքան և կամեսցի:

Յորժամ բազմապատկել սկսանի զՅ թիւ, ասելով ճիցս Ե՝ լինի ԻԵ, որ է բոլոր և բառանկիւնի, զի և Ենէ սկսաւ և ի Ե աւարտեցաւ: Դարձեալ նոյն թիւս է և բառանկիւնի: Բայց պարտ է զիտել զարուստ քառանկիւնի թուոցն: Զի սկիզբն ամենայն քա-

1. a թուոց

2. a կամեսցին

4. a և առաջի եղեալ

6. խորանացդ

7. a անկիւնիս

8. a կարգսն

9. a արմատքն

10. a խորհրդոյ

16. a որք արտօժեսցէ

17. a կամեսցես

18. Մեջ բերված հաւաքածը՝ «Յորժամ բազմապատկել սկսանի...», մինչև «որ եղև բոլոր և քառանկիւնի», պահել է միայն № 1770 գրչագիրը, որից և բերում ենք: Աղաւակ ձեռք պահել է նաև № 8973 ձեռագիրը, որից աննշան ուղղումներ ենք կատարել մեջբերված տեքստում:

20. a նույնպէս է հիւսէ

անկիրնից, և հինգանկիրնից, և վեցանկիրնից, և եռանկիրնից և  
 ամենայն թուոց՝ միակն է. և յորժամ կամիս քառանկիրնի թիւ  
 առնել, այսպէս է: Նախ զնել զմիակն և թողուլ ընդ մէջն Բ, և առ-  
 25 նուլ զԳն և թողուլ ընդ մէջն Դ, և առնուլ Թ և թողուլ Զ, և առնուլ  
 ժԶ և թողուլ Ը, առնուլ ԻԾ: Եւ այսպէս քսանուհինգ քառանկիրն է  
 և բոլոր: Այսպէս է բոլոր և քառանկիրնի ԼԶ, զի սկսեալ է Զէ, ի  
 Զ աւարտեցաւ. և քառանկիրնի՝ յորժամ ի ԻԾէն ժ թողուս և առ-  
 նուս զԸՁն՝ Զն, ըստ առաջին թողուածուն, որ ի մէկէն մինչև ի Դ  
 30 թողեր: Քանի կամենաս երկարել զքառանկիրնի թիւն, Բ Բ աւելցու  
 ի թողուլն, որ թողուի: Ի միակէն մինչև ի չորս՝ Բ, և ի Դէն մինչև  
 ի չինն՝ Դ, և չննէն մինչև ի ժԶ՝ Զ և ժԶէն մինչև ԻԾ՝ Ը, և ԻԾէն  
 մինչև ԼԶ՝ ժ: Այսպէս, յորժամ Բ Բ աւելցնես ի թողուլն ըստ ա-  
 35 առաջին թողոյն, որ ի մէկէն մինչև ի չորս, որքան կամիս, եր-  
 կարես զքառանկիրնիդ: Դարձեալ և եռանկիրնին այսպէս՝ որ զնես  
 առաջին զմիակն, որ թողուս մէկ մի, և առնուս զԳն և յետ Գին  
 կրկնեալստեալ զթողոյն և առ զԶն և թող Գն և առ զԺն և  
 այսպէս մի մի յաւելլով ի թողուլն ըստ առաջին միոյն, ի մէ-  
 կէն մինչև Գ: Այսպէս հինգանկիրնին զքնէ զմեկն և թողու Գ,  
 40 և առնու զԵ և թողու Զ, և առնու ժԲ: Եւ այսպէս ի կարգին՝ Գ Գ  
 աւելցնէ ի թողուլն: Այս արուչստ է ի վեցանկիրնիքն, և ի կարգն բե-  
 րէ: Եւ այսր ազագու պատուական համարեցաւ զտարրորշ քանակն,  
 քան զշարունակն, որպեսզի ի միում ժամու զանազան կերպարանդ,  
 որպես ԻԾ, որ եղև բոլոր և քառանկիրնի:

Եռ- ան- կիրնի	Ա Ա	Բ Գ	Գ Զ	Դ Ժ	Ե ԺԵ	Զ ԻԱ	Է ԻԸ	Ը ԼԶ	Թ ԽԵ	Ժ ՄԵ	ԺԱ ԿԶ	ԺԲ ՀԸ
Քառ- ան- կիրնի	ԺԳ ՂԱ	ԺԴ ՃԵ	ԺԵ ՃԻ	ԺԶ ՃԼԶ	ԺԷ ՃՄԳ	ԺԸ ՃՀԱ	ԺԹ ՃՂ	Ի ՄԺ	ԻԱ ՄԼԱ	ԻԲ ՄՄԳ	ԻԳ ՄՀԶ	ԻԴ Յ
Հինգ- ան- կիրնի	Ա Ա	Գ Դ	Ե Թ	Է ժԶ	Թ ԻԵ	ԺԱ ԼԶ	ԺԳ ԽԹ	ԺԵ ԿԴ	ԺԷ ԶԱ	ԺԹ Ճ	ԻԱ ՃԻԱ	ԻԳ ՃԽԴ
Վեց- ան- կիրնի	ԻԵ ՃԿԹ	ԻԷ ՃՂԶ	ԻԹ ՄԻԵ	ԼԱ ՄՄԶ	ԼԳ ՄՁԹ	ԼԵ ՅԻԴ	ԼԷ ՅԿԱ	ԼԹ Ն	ԽԱ ՆԽԱ	ԽԳ ՆՁԴ	ԽԵ ՇԻԹ	ԽԷ ՇՀԶ
Տասն- ան- կիրնի	Ա Ա	Դ Ե	Է ժԲ	Ժ ԻԲ	ԺԳ ԼԵ	ԺԶ ՄԱ	ԺԹ Հ	ԻԲ ՂԲ	ԻԵ ՃԺԷ	ԻԸ ՃԽԵ	ԼԱ ՃՀԶ	ԼԴ ՄԺ
Յոթն- ան- կիրնի	ԼԷ ՄԽԷ	Խ ՄՁԷ	ԽԳ ՅԼ	ԽԶ ՅՀԶ	ԽԹ ՆԻԵ	ՄԲ ՆՀԷ	ՄԵ ՇԼԲ	ՄԸ ՇՂ	ԿԱ ՈՄԱ	ԿԴ ԶԺԷ	ԿԷ ԶԶԲ	Հ ՊՄԲ
Ութն- ան- կիրնի	Ա Ա	Ե Զ	Թ ժԵ	ժԳ ԻԸ	ժԷ ԽԵ	ԻԱ ԿԶ	ԻԵ ՂԱ	ԻԹ ՃԻ	ԼԳ ՃՄԳ	ԼԷ ՃՂ	ԽԱ ՄԼԱ	ԽԵ ՄՀԶ
Յոթն- ան- կիրնի	ԽԹ ՅԻԵ	ՄԳ ՅՀԸ	ՄԷ ՆԼԵ	ԿԱ ՆՂԶ	ԿԵ ՇԿԱ	ԿԹ ՈԼ	ՀԳ ԶԳ	ՀԷ ԶԶ	ԶԱ ՊԿԱ	ԶԵ ՁԽԶ	ԶԹ ՌԼԵ	ՂԳ ՌՃԻԸ
Յոթն- ան- կիրնի	Ա Ա	Զ Է	ժԱ ժԸ	ժԶ ԼԴ	ԻԱ ՄԵ	ԻԶ ԶԱ	ԼԱ ՃԺԲ	ԼԶ ՃԽԸ	ԽԱ ՃԶԹ	ԽԶ ՄԼԵ	ՄԱ ՄՁԶ	ՄԶ ՅԽԲ
Յոթն- ան- կիրնի	ԿԱ ՆԳ	ԿԶ ՆԿԹ	ՀԱ ՇԽ	ՀԶ ՈԺԶ	ԶԱ ՈՂԷ	ԶԶ ԶԶԳ	ՂԱ ՊՀԴ	ՂԶ ՁԼ	ՃԱ ՌՀԱ	ՃԶ ՌՃՀԷ	ՃԺԱ ՌՄԶԸ	ՃԺԶ ՌՆԴ

23. a ամեն տեղ «թուոց» ձևով

25. a Գ փոխանակ Դ-ի

26. a ժԵ փոխանակ ԻԾ-ի

Ձեռագրի աղյուսակը սկզբում ունի հետևյալ խորագիրը. «Յովհաննու քահանայի զանկիրնաւոր թուոցն՝ ի փոխարեքութենէ երկրաչափութեան ձեոց» (թ. 23ա):



Ութ- ան-	Ա Ա	Է Ը	ԺԳ ԻԱ	ԺԹ Խ	ԻԷ ԿԷ	ԼԱ ՂԶ	ԼԷ ՃԼԳ	ԽԳ ՃԶԶ	ԽԹ ՄԻԵ	ԾԷ ՍԶ	ԿԱ ՅԽԱ	ԿԷ ՆԸ
Կիւնի	ԶԳ ՆՁԱ	ԶԹ ԾԿ	ՁԵ ՈՒԵ	ՂԱ ՉԼԶ	ՂԷ ՊԼԳ	ՃԳ ՋԼԶ	ՃԹ ՌԽԵ	ՃԺԵ ՌՃԿ	ՃԻԱ ՌՄՁԱ	ՃԻԱ ՌՆԸ	ՃԼԳ ՌՇԽԱ	ՃԼԹ ՌՌՁ
Ինն- ան-	Ա Ա	Ը Ք	ԺԵ ԻԴ	ԻԲ ԽԶ	ԻԹ ԶԵ	ԼԶ ՃԺԱ	ԽԳ ՃԾԴ	Ծ ՄԴ	ԾԷ ՄԿԱ	ԿԴ ՅԻԵ	ԶԱ ՅԴԶ	ԶԸ ՆԶԴ
Կիւնի	ՁԵ ՇԾԹ	ՂԲ ՈԾԱ	ՂԹ ԶԾ	ՁԶ ՊԾԶ	ՃԺԳ ՋԿԹ	ՃԻ ՌՅԹ	ՃԻԷ ՌՄԺԶ	ՃԼԴ ՌՅԾ	ՃԽԱ ՌՆՂԱ	ՃԽԸ ՌՈԼԹ	ՃԾԵ ՌՉԴԴ	ՃԿԲ ՌՋԾԶ
Տասն- ան-	Ա Ա	Թ Ժ	ԺԷ ԻԷ	ԻԵ ԾԲ	ԼԳ ՁԵ	ԽԱ ՃԻԶ	ԽԹ ՃԼԵ	ԾԷ ՄԼԲ	ԿԵ ՄԴԷ	ԶԳ ՅԶ	ՁԱ ՆԾԱ	ՁԹ ՇԽ
Կիւնի	ՂԷ ՈԼԷ	ՃԵ ՉԽԲ	ՃԺԳ ՊԾԵ	ՃԻԱ ՋԶԶ	ՃԻԹ ՌՃԵ	ՃԼԷ ՌՄԽԲ	ՃԽԵ ՌՅՁԷ	ՃԾԳ ՌՇԽ	ՃԿԱ ՌԶԱ	ՃԿԹ ՌՊԶ	ՃԶԷ ՍԽԷ	ՃՁԵ ՍՄԼԲ
ԺԱ- ան-	Ա Ա	ժ ԺԱ	ԺԹ Լ	ԻԸ ԾԸ	ԼԷ ՂԵ	ԽԶ ՃԽԱ	ԾԷ ՃԴԶ	ԿԴ ՄԿ	ԶԳ ՅԼԳ	ՁԲ ՆԺԵ	ՂԱ ՇԶ	Ճ ՌԶ
Կիւնի	ՃԹ ԶԺԵ	ՃԺԸ ՊԼԳ	ՃԻԷ ՋԿ	ՃԼԶ ՌՂԶ	ՃԽԵ ՌՄԱԱ	ՃԾԴ ՌՅԴԵ	ՃԿԳ ՌՇԾԸ	ՃԶԲ ՌԶԼ	ՃՁԱ ՌՋԺԱ	ՃԴ ՍՃԱ	ՃԴԹ ՍՅ	ՍԸ ՍԵԸ
Բժ- ան-	Ա Ա	ԺԱ ԺԲ	ԻԱ ԼԳ	ԼԱ ԿԴ	ԽԱ ՃԵ	ԾԱ ՃԾԶ	ԿԱ ՍԺԷ	ԶԱ ՍՁԸ	ՂԱ ՅԿԹ	ՂԱ ՆԿ	ՃԱ ՇԿԱ	ՃԺԱ ՌԶԲ
Կիւնի	ՃԻԱ ՉԴԳ	ՃԼԱ ՋԻԴ	ՃԽԱ ՌԿԵ	ՃԾԱ ՌՄԺԶ	ՃԿԱ ՌՅԶԷ	ՃՂԱ ՌՇԽԸ	ՃՁԱ ՌՉԻԹ	ՃԴԱ ՌՋԻ	ՍԱ ՍՃԻԱ	ՄԺԱ ՍՅԼԲ	ՄԻԱ ՍԾԾԳ	ՍԱ ՍՁԶԴ
Գժ- ան-	Ա Ա	ԺԲ ԺԳ	ԻԳ ԼԶ	ԼԴ Զ	ԽԵ ՃԺԵ	ԾԶ ՃՂԱ	ԿԷ ՍԼԸ	ԶԸ ՅԺԶ	ՂԸ ՅԺԶ	Ճ ՇԵ	ՃԺԱ ՌԺԶ	ՃԻԲ ՉԼԸ
Կիւնի	ՃԼԳ ՊԶԱ	ՃԽԴ ՌԺԵ	ՃԾԵ ՌՃԶ	ՃԿԶ ՌՅԼԶ	ՃՂԷ ՌՇԺԳ	ՃՁԸ ՌԶԱ	ՃԴԹ ՌՋ	ՍԺ ՍՃԺ	ՄԻԱ ՍՅԼԱ	ՄԼԲ ՍԾԿԳ	ՄԽԳ ՍՊԶ	ՄԾԴ ՎԿ
Դժ- ան-	Ա Ա	ԺԳ ԺԴ	ԻԵ ԼԹ	ԼԷ ԶԶ	ԽԹ ՃԻԵ	ԿԱ ՃՁԶ	ԶԳ ՍԾԹ	ՂԷ ՅԽԴ	ՃԵ ՆԽԱ	ՃԾԸ ՇԾ	ՃԻԱ ՌԶԱ	ՃԼԳ ՊԳ
Կիւնի	ՃԽԵ ՋԽԹ	ՃԾԷ ՌՃԶ	ՃԿԹ ՌՄԶԵ	ՃՁԱ ՌՆԾԶ	ՃԴԳ ՌՈԽԹ	ՍԵ ՌՊԾԴ	ՍԺԷ ՍՂԱ	ՍԻԹ ՍՅ	ՄԽԱ ՍԾԽԱ	ՄԾԳ ՍՁԴԴ	ՄԿԵ ՎԾԹ	ՍԶԷ ՎՅԼԶ
Եժ- ան-	Ա Ա	ԺԴ ԺԵ	ԻԷ ԽԲ	Խ ՁԲ	ԾԳ ՃԼԵ	ԿԶ ՍԱ	ԶԹ ՍԶ	ՂԲ ՅԶԲ	ՃԵ ՆՂԷ	ՃԾԸ ՇԴԵ	ՃԼԱ ՉԻԶ	ՃԽԳ ՊԶ
Կիւնի	ՃԾԷ ՌԻԷ	ՃՂ ՌՃԶԷ	ՃՁԳ ՌՅԶ	ՃԴԶ ՌՇԶԶ	ՍԹ ՌՉԶԵ	ՍԻԲ ՍԷ	ՍԼԵ ՍՍԽԲ	ՍԽԸ ՍԾԴ	ՄԿԱ ՍՁԾԱ	ՍԶԴ ՎԻԵ	ՍՁԷ ՎՅԺԲ	Յ ՎՈԺԲ
Կո- ճատք	Ա ԻԵ	Գ ԻԷ	Ե ԻԹ	Է ԼԱ	Թ Ծ	ԺԱ Զ	ԺԲ Ղ	ԺԳ Ճ	ԺԷ Յ	ԺԹ Շ	ԻԱ Չ	ԻԳ Ձ
Դարք	Բ ԻԶ Ն	Դ ԻԸ Ո	Ջ Լ Պ	Ը ԼԲ Ռ	Ժ ԼԴ Ս	ԺԲ ԼԶ Տ	ԺԴ ԼԸ Ց	ԺԶ Խ Փ	ԺԸ Կ	Ի Ձ	ԻԲ Ճ <sup>1</sup>	ԻԴ Մ
Քու- այք	Ը	ԺԶ	ԻԴ	ԼԲ	Խ	ԽԸ	ԾԶ	ԿԴ	ԶԲ	Ձ	ՁԸ	ՂԶ
(Կըր- կը- նակք)	ՓՃԴԲ		ժՁՌՅՁԴ		ԼԲՌԶԿԸ		ԿԵՌՇԼԶ		ՃԼԱՌՇԲ			
Երեք- կիւնի	Թ	ԻԷ	ՁԱ	ՄԽԳ	ՉԻԹ	ՍՃՁԷ	ՑԶԿԱ	ԺԹՌ- ԿՁԳ	ԾԹՌԽԹ			

Անկիւնաւոր թուոցդ վախճան կիւներեակն է նամար, իսկ այլքդ աւելորդք գրե-  
ցան յաղագս կրթութեան մանկանց և վարժման յարուեստ, որպէսզի անկուցանե-  
յորժամ և կամեցիր:

Վժման անկիւնի-ն և նրանից ներքե բերված աղյուսակը բնոյժիջարկություն է:

Նա բերված է Ը ձեռագրից:

<sup>1</sup> Եձ-ն կ' գար, կ' կոճատ լինել չի կարող, անշուշտ սխալ կա այստեղ:





(Մտորեն բերված աղյուսակները «Անհյուսնավոր թվեր»-ի արտադրյալն է) որը հոշ-  
վում է «բարոյն»):

Խոսն- կիւնի	Ա ՂԱ	Գ ՃԵ	Ջ ՃԻ	Ժ ՃԼՁ	ԺԵ ՃԾԳ	ԻԱ ՃՀԱ	ԻԸ ՃՂ	ԼՁ ՄԺ	ԽԵ ՄԼԱ	ԾԵ ՄԾԳ	ԿՁ ՄՀՁ	ՀԸ Յ
Քառ- ան- կիւնի	Ա ՃԿԹ	Դ ՃՂՁ	Թ ՄԻԵ	ԺՁ ՄԾՁ	ԻԵ ՄՁԹ	ԼՁ ՅԻԴ	ԽԹ ՅԿԱ	ԿԴ Ն	ՁԱ ՆԽԱ	Ճ ՆՁԴ	ՃԻԱ ՇԻԹ	ՃԽԴ ՇՀՁ
Հինգ- ան- կիւնի	Ա ՄԽԵ	Ե ՄՁԷ	ԺԲ ՅԼ	ԻԲ ՅՀՁ	ԼԵ ՆԻԵ	ԾԱ ՆՀԷ	Հ ՇԼԲ	ՂԲ ՇՂ	ՃԺԷ ՌԾԱ	ՃԽԵ ՁԺԵ	ՃՀՁ ՁՁԲ	ՄԺ ՊԾԲ
Վեց- ան- կիւնի	Ա ՅԻԵ	Ձ ՅՀԸ	ԺԵ ՆԼԵ	ԻԸ ՆՂՁ	ԽԵ ՇԿԱ	ԿՁ ՈԼ	ՂԱ ՁԳ	ՃԻ ՁՁ	ՃԾԳ ՊԿԱ	ՃՂ ՁԽՁ	ՄԼԱ ՌԼԵ	ՄՀՁ ՌՃԻԸ
Եւթն- ան- կիւնի	Ա ՆԳ	Է ՆԿԹ	ԺԸ ՇԽ	ԼԴ ՌԺՁ	ԾԵ ՌՂԷ	ՁԱ ՁՁԳ	ՃԺԲ ՊՀԴ	ՃԽԸ ՁՀ	ՃՁԹ ՌՀԱ	ՄԼԵ ՌՃՀԷ	ՄՁՁ ՌՄՁԸ	ՅԽԲ ՌՆԴ
Ութ- կիւնի	Ա ՆՁԱ	Ը ՇԿ	ԻԱ ՌԽԵ	Խ ՁԼՁ	ԿԷ ՊԼԳ	ՂՁ ՁԼՁ	ՃԼԳ ՌԽԵ	ՃՀՁ ՌՃԿ	ՄԻԵ ՌՄՁԱ	ՄՁ ՌՆԸ	ՅԽԱ ՌՇԽԱ	ՆԸ ՌՌՁ
Ինն- ան- կիւնի	Ա ՇԾԹ	Թ ՌԾԱ	ԻԴ ՁԾ	ԽՁ ՊԾՁ	ՀԵ ՁԿԹ	ՃԺԱ ՌՁԹ	ՃԾԴ ՌՄԺՁ	ՄԴ ՌՅԾ	ՄԿԱ ՌՆՂԱ	ՅԻԵ ՌՌԼԹ	ՅՂՁ ՌՁՂԴ	ՆՀԴ ՌՁԾՁ
Տասն- ան- կիւնի	Ա ՈԼԷ	Ժ ՁԽԲ	ԻԷ ՊԾԵ	ԾԲ ՁՀՁ	ՁԵ ՌՃԵ	ՃԻՁ ՌՄԽԲ	ՃՀԵ ՌՅՁԷ	ՄԼԲ ՌՇԽ	ՄՂԷ ՌՁԱ	ՅՀ ՌՊՀ	ՆԾԱ ՄԽԷ	ՇԽ ՄՄԼԲ
Ժիւ- ան- կիւնի	Ա ՁԺԵ	ԺԱ ՊԼԳ	Լ ՁԿ	ԾԸ ՌՂՁ	ՂԵ ՌՄԽԱ	ՃԽԱ ՌՅՂԵ	ՃՂՁ ՌՇԾԸ	ՄԿ ՌՁԼ	ՅԼԳ ՌՁԺԱ	ՆԺԵ ՄՃԱ	ՇՁ ՄՅ	ՈՁ ՄԾԸ
ԺԳ- ան- կիւնի	Ա ՁՂԳ	ԺԲ ՁԻԴ	ԼԳ ՌԿԵ	ԿԴ ՌՄԺՁ	ՃԵ ՌՅՀԷ	ՃԾՁ ՌՇԽԸ	ՄԺԷ ՌՁԻԹ	ՄՁԸ ՌՁԻ	ՅԿԹ ՄՃԻԱ	ՆԿ ՄՅԼԲ	ՇԿԱ ՄՇԾԳ	ՈՀԲ ՄՁՁԴ
ԺԴ- ան- կիւնի	Ա ՊՀԱ	ԺԳ ՌԺԵ	ԼՁ ՌՃՀ	Հ ՌՅԼՁ	ՃԺԵ ՌՇԺԳ	ՃՀԱ ՌՁԱ	ՄԼԸ ՌՁ	ՅԺՁ ՄՃԺ	ՆԵ ՄՅԼԱ	ՇԵ ՄՇԿԳ	ՌԺՁ ՄՊՁ	ՁԼԸ ՎԿ
ԺԵ- ան- կիւնի	Ա ՁԽԹ	ԺԴ ՌՃՁ	ԼԹ ՌՄՀԵ	ՀՁ ՌՆԾՁ	ՃԻԵ ՌՌԽԹ	ՃՁՁ ՌՊԾԳ	ՄԾԹ ՄՀԱ	ՅԽԴ ՍՅ	ՆԽԱ ՄՇԽԱ	ՇԾ ՄՁՂԴ	ՌՀԱ ՎԾԹ	ՊԴ ՎՅԼՁ

Ը ձևապարուն կրկնված է 129-րդ էջում բերված բնագմբջարկութունը, ուստի այն-  
լորդ ենք համարում այն բերել այստեղ:







ԽՐԱՏ ՔՈՒԷԻՅ

Տէ՛ս զի ի միակէ հինգերորդն ցանգ բերէ, զհինգն՝ յամենայն-  
անկիւնաւորս: Նոյնպէս և վեշտասաներորդն ի միակէ՝ զվեցերեակն,  
և քսաներորդ առաջներորդն ի միակէ՝ զմիակն, և քսան  
5 և հինգերորդն ի միակէ՝ զքսան և հինգն: Եւ թէ շարագրեսցես  
զսոսա մի ըստ միոջէ, քառանկիւնիս ծնանին. երկիցս՝ Բ, երիցս՝  
Գ, չորիցս՝ Դ, հնգիցս՝ Ե, վեցիցս՝ Զ, և թնիցս՝ Է: Եւ որք միան-  
գամայն աշտպիտարար խաղացուցես յառաջ զքանակութիւնս թուոց,  
ամենեքեան չորեքանկիւնիս ծնանիլ առհասարակ բնաւորեցան, որ-  
պէս և այլքն՝ այլազգ զայլսն անկիւնաւորս՝ ըստ յարաձգութեան  
10 շարժման թուական արուեստարութեանն: Եւ է այսպէս. երկիցս  
Բ՝ չորք, երիցս Գ՝ Թ, չորիցս Դ՝ ԺԶ, հնգիցս Ե՝ ԻԵ, վեցիցս  
Զ՝ ԼԶ, և թնիցս Է՝ ԽԹ, ութիցս Ը՝ ԿԳ, իննիցս Թ՝ ԶԱ, տասնիցս  
Ժ՝ Ծ, մետասանիցս ԺԱ՝ ԾԻԱ, երկուտասանիցս ԺԲ՝ ԾԽԴ, երեքա-  
15 սանիցս ԺԳ՝ ԾԿԹ, չորեքտասանիցս ԺԴ՝ ԾՂԶ, հնգետասանիցս ԺԵ՝  
ՄԻԵ: Եւ որքան աշտպիտի տրինակաւ, ըստ սմին ձևոյ, աճեցու-  
ցանես զհամար կարգիդ՝ զոցես զքառանկիւնաց շարս ըստ յարա-  
գրութեան յաւելուածոցն, որպէս ահա ցուցանի ի յատակիցդ և ի  
բարդեցելոց: Եւ սկսեալ յուղղանկիւնեացն, որք ի միակէ մի ըստ  
20 միոջէ միով ծնանին, յաւելցելով զամենայն տեսցես ի կարգի  
զանկիւնաւորսդ, քան զնախադասեալն յանձնիրս զիրս միով յա-  
ւելցեալս: Եւ զի պարզարար ասացից: Եռանկիւնիքն միով ըստ  
ամենայնի, իսկ քառանկիւնիքն՝ երկուաւք, և հինգանկիւնիքն՝ ե-  
րիւք, իսկ վեցանկիւնիքն՝ չորիւք և և թնանկիւնիքն՝ հնգիւ: Եւ այս-  
25 պէս յոճ անկեալ զանաւարտն աւարտեն: Բնութիւն յԱրարչին ամե-  
նայնի գովեստ:

ՎԱՍՆ ՔՈՒԷԻՅ

Քուսայլ կրկնակի՝ Դ, Ը, ԺԶ, ԼԲ, ԿԳ, ԾԻԸ, ՄԾԶ, ՇԺԲ, ՌԻԴ,  
ՍԽԸ, ՏՂԶ, ՓճՂԲ, ԱՅՅԶԳ, ԳՍԶԿԸ, ԶՐՇԼԶ, ԺԳՌԷԲ, ԻՂՍԾԽԴ:  
30 Քուսայլ երեկիւնի՝ Գ, Թ, ԻԷ, ԶԱ, ՄԽԳ, ԶԻԹ, ԱՃԶԷ, ՅՇԿԱ,  
ԱՔՈՁԳ, ԵՔԽԹ, ԺԷՌԻՃԽԷ, ԾԳՌՆԽԱ, ԾԾԹՏՅԻԳ, ՆՂԼՍԶԿԹ: Եր-  
կիցս՝ Դ, չորիցս՝ ԻԳ, երիցս՝ Դ, հնգիցս՝ Կ, չորիցս՝ Ե, վե-  
ցիցս՝ ԾԻ, հնգիցս՝ Զ, և թնիցս՝ ՄԺ, վեցիցս՝ Է, ութիցս՝ ՅԼԶ:  
35 Յաղագս քառակիւն և տասներեկիւն: Է զարութեամբ ժ չորրեակն,  
քանզի իբրովք նախակայիւք բարդեալ ծնանի զԺ. և այսպէս ո՛չ

1 ձ առանց վերնագրի	17 ձ յարմարագրութեան
2 օ և թէ վնս. եւ թէ	20 շ յաւելլով
3 օօ ծնանել	21 շ առակելալս
4 շ աշտպէս, ք աշտպէսարար	22 ք միով ըստ ամենայնի չիլ անցիւն ձևով միշտ
5 ք թուոցն	24 ք վեցանկիւնիքն չիլ
10 ք յանկիւնաւորս	24 շ հնգիւն
14 օ տասանց, օ տասն և երիցս	25 ք քութեան արարչին
15 շ Դժան, շ Եժան	27 ձ զասն բաւից չիլ
16 շ նմին կարգի վնս. սմին ձևոյ	28 ք Յաղագս քառակիւն և տասներեկիւն չիլ
	30 շ բարդեալ չիլ



միայն ի միակս, այլ և ի տասնեակս, և ի հարիւրեակս, և ի հա-  
 զարեակս: Վասնզի որպէս տասնեակն ի շորից, այսպէս հարիւրն  
 ի քառասնէ, և հազարն ի շորս հարիւրոց ծնանիլ է բնաւորեալ  
 և բիրն՝ ի հազարաց շորից: Եւ կատարումն թուոց ամենայնի  
 40 զլիաւորեալ բովանդակի տասամբ, վասն որոյ կոչի սուրբ և ամե-  
 նակատար: Միակաւք տասամբք ինքն գոյացեալ և տասանց տա-  
 սամբք՝ հարիւրեակն, իսկ հարիւրեկաւք տասամբք՝ հազարեակն, և  
 բիրն՝ ի հազարաց տասանց: Եւ կացեալ զազարէ յանդականաւ շո-  
 րեկին, զի որպէս ծնանի, սոյնպէս և ասարտեալ եղերէ շորեակն,  
 45 քանզի բնութիւն ունի ծննդական, հաստատուն և կենդանասէր: Եւ և  
 քաջայարմար առ գոյացութիւն էիցս: Եւ չափ ամենաբաւութեան  
 թուոց, որոյ շարադրութիւն ծնանի զԾնն, որ է հոանկիրնի, և տաս-  
 ներորդ ի միակէ հոանկիրնեացն, միանգամայն և ևթնանկիրնի: Հինգ-  
 50 երորդ ի միակէ, յորում զարից և կոճատաց սկզբնաւորագոյն են,  
 զարից երկուց, և կոճատաց երից և զարակոճատաց հնգից: Նաև՝  
 քուէից կրկնապատկաց և երեքկնաց, ըստ որում՝ շորքն, և ութն, և  
 երեքն, և ինն: Իսկ որ ի նմանէ որպէս յարմատոյ բուսեալ՝ հինգն,  
 և յիսունն, յորովս առասացելովք ունի առաքինութիւնս:

Առաջին՝ զի գոյացաւ ի քուէից, ի կրկնակէ և յերեքկնէ,  
 55 յայնպիսիկ, որ մի ըստ միոջէ շարադրեցան: Ի կրկնակէ այսպէս՝ Ա,  
 Բ, Դ, Ը, լինին սոքա ժն: Երեքկինք, և յերեքկնէն՝ Ա, Գ, Թ, Իէ.  
 շարադրեալք սոքա լինին Ծն:

Երկրորդ՝ Ծն թիւն տասնեկին շարադրութիւն, իսկ յԾնն  
 զաւրութեամբ տասնեկին է, քանզի թէ զիրաբանչիւր որ ի սոցա-  
 60 նէ, ի միակէն մինչ ի տասնեակն, բազմապատիկ արարեալ շարա-  
 դրեցես զերեքհարիւրոցն զԳ և հնգին, իսկ յԾնն Ծնին՝ ևթնապատիկ է:  
 Երրորդ՝ ևթն թուեցես զմինն՝ գոցես Զ ըստ բազադրութեանն  
 տասնեակ զԾնն:

Չորրորդ՝ սեռականագոյն վեցեակ՝ ինքն յինքեան բազմապա-  
 65 տիկ եղեալ զաւրութիւն է, որ ծնանի զԸ, որոյ երկիցս շորք մա-  
 սունքն ծնեալք այսպէս: Երկիցս՝ Ը և Ժ, երիցս՝ երկուսասան, շո-  
 րիցս՝ ինն, վեցիցս՝ վեց, իննիցս՝ շորք, երկուսասանիցս՝ երեք, տասն  
 և ութիցս՝ երկու, երեսուն և վեցիցս՝ մի: Միանգամայն մասունք

38 Շ քառակն է փոխ. քառասնէ  
 39 Շ է բնաւորիլ ծնանիլ  
 40 Շ թուոյ  
 41 Շ տասնամբ  
 42 Օ հազարն  
 43 Շ տասանց չիք  
 44 Շ արարեաց զերրէ  
 45 Շ ամենայն անբաւութեան թուոյ

47 Շ Ծն  
 48 Շ ի հինգերորդ  
 53 Շ բուսեալն  
 54 Շ յորում  
 55 Շ և չիք  
 56 Օ շարադրեալ  
 58 Շ թիւ փոխ. թէ  
 60 Շ արացես շարադրելով  
 61 Շ իմն փոխ. ինքն

70 //ութ թիւ՝ ԾԵ:

Հինգերորդ՝ զի ի մակեդանիկունեաց հնգից մի ըստ միոջէ ծնանի ԾԵ, այսպէս՝ Գ, Զ, Ժ, ԺԵ, ԻԱ, լինի ԾԵ:

Վեցերորդն՝ զի և ի քառանկիւնեաց զարձեալ հնգից ծնանի ԾԵն, իբրու թէ որպէս՝ Ա, Գ, Թ, ԺԶ, ԻԵ, լինի ԾԵ:

75 Եւթներորդ՝ քանզի ունի յինքեան տասնեակ և յերկրաչափութենէ՝ զանագատն բնութիւն և զգատական: Անաղատն կարգեալ դասի ըստ նշանի միայն, իսկ զատականն ըստ երից տեսակաց մակերեւական գծոյ, երևման և հաստատնոյ, քանզի որ երկուք նշանաւք յանկացեալ է՝ զիժ է, իսկ որ յերկուցն զատեալ է, մակերևոյթ է՝ ծորեալ

80 ի լայնութիւն գծին, իսկ որ յերիս՝ հաստատուն, երկայնութիւն և լայնութիւն, խորութիւն արեալ որովք գոյանայ բնութիւնս, քանզի աւելի քան զերից զատութիւնս ոչ ծնաւ: Եւ սկզբնատիպք սոցա թիւք են, անզատ նշանին՝ մին, և գծին՝ երկուն: Եւ վեր ի վերոյ երևման՝ երեքն և հաստատնոյն՝ չորքն, որոց շարադրութիւնք՝ միոյ և երկուց, և երից, և չորից կատարեն տասնեակն: Այսր ամենայնի ազգաւ և սոցուն յանկակցաց և նմանից՝ յառաջնոց իմաստնոց, որք սովորեցին զնել զանուանս ոչ վայրապար, այլ ըստ իրացն անուանեցաւ տասնեակ վայելչապէս, քանզի առ ի տանելոյ զամենայն ազգս թուոց և բաւելոյ առ ամենեսեան, թէ՛ թիւք իցեն, և թէ՛ բանք,

90 որ ըստ թուոց են, կամ համեմատութիւնք և յարմարութիւնք, և շարածայնութիւնք, անուանեցաւ տասնեակ: Որպէս տարի, զի զաւուրս և զշարաթս և զամիսս և զեղանակս յինքեան բերելոյ աղագաւ և ինքեամբ: Նաև գծնունդս ամենայն ազգաց, շնչաւորաց և անշնչից և պատճառաց սոցա կոչեցաւ տարի: Բաւական տուաւ քեզ վասն այսոցիկ:

71 միակ եռանկիւնից

75 Ը տասնեակդ

79 Օ յանկեցեալ է

79 ԸՀԱ մակերևութիւն

80 ԸՕ երկայնութեան

81 ԸՕ լայնութեանն

81 Ը որովք չիք

85 Օ յանգակցաց

85 Ը առաջագնոց

88 Ը ազգ թուոյ

90 Ը համեմատութիւն

91 Ը եւ զի փոխ զէ

92 Օ գլեղանակս

92 Ը նաև չիք





10. ՀՈՎՏԱՆՆԵՍԻ ԿԱԶՄԱԺ ԽԱՌՆԱԽՈՐԱՆՔ





Հոռոմոց՝ յունգար ամիս առաջի, որ է կաղանդ և տարեմուտ նոցա,  
յունաց՝ դիւստրոս ամիս Ե, ասորոցն՝ քանուն խրա ամիս շորորդ:  
Պարսից [շահրիար ամիս Զ]:

Յայանութիւն Քրիստոսի ի մեծ հռութեւ, որն Ե: շր և մկրտութեան աւրն կիրակի:

Հայոց արաց ամիս Զ:

Եբրայեցոց՝ շրաթ, արարացոց՝ կաղանդիոս, մակեդոնացոց՝ թեստոն: Ամիսք. Ա.Ժ.  
Էրորդ: Արեգակն ի ջրհոսն է:

Եգիպտացոց՝ մեքիր, եթէոպացոց՝ Ե. թաթիթ, արեւնացոց՝ բեղբեմիոն,  
բիւթանացոց՝ պերէպիոս, կապադոկացոց՝ բասնթիոն: Ամիսք՝ նունկնի,  
աղուանից՝ մարի: Ամիսք. Զ. Էրորդ:





Հստակաց փեարվար ամիս երկրող, յունաց քսանթիկոս ամիզ Զ, ասորոց շրաթ  
 ամիս Ե:  
 Պարսից մեհրան ամիս Է:

Հայոց մեհեկի ամիս Ե: Եւ շող անկանի ի յաւիտ:

Տեաննրնդստաջ:

Երբայեցոց՝ ազար, արարացոց՝ եղզոզ, մակեդոնացոց՝ պիսիդոն: Արեզական՝ ի  
 ձուկն և շողք անգանի ի ջուրն:

Շող անգանի գետինն:

Եզիպտացիքն և իւր. Է ազգն դաւել ամիս աստ զնենն:

Եզիպտացոց՝ պեմեթովթ, Եթէոպացոց՝ դմաւիթ, աթենացոց՝ պիոնեպտինն, բիւ-  
 թանացոց՝ արէոս, կապադոկացոց՝ միկրիայ, վրաց՝ նիկրանի, ազուանից՝ բոնկոնն:  
 Ամիսք Է.բդ:





Մ ա թ ա

Հոտումոց մարտ ամիս երրորդ, յունաց արտեմիոս ամիս (6), ասորոց աղար ամիս  
Ջ.բ.դ.:

Պարսիկք գաւր նահանջին աստ զնհնէ:

Պարսից ասպանգատ ամիս Ը:

Հայք գավելորդ նահանջին աստ զնհնէ:

Հայոց արեգ ամիս Ը:

Երբայեցիք գաւր նահանջին աստ զնհնէ:

Այս Եւաբս աւել աւուրք են երբայեցւոցն և իւրոցն: Եւ են աւուրք արաբչութեան,  
որ յառաջ քան՝ զկազմութիւն մարդոյն: Եւ արեգակն ի կարգ ոչ մտանէ, այլ և  
մոլորակս հետեի:

Գարնանամուտ հասարակած:

Երբայեցոց և արաբացոց՝ նիսան, մակեդոնացոց՝ զեմեդիսն: Արեգակն՝ ի խոյն:  
Տարեմուտ սոցա և աւր ստեղծման Աղամայ:

Եգիպտացոց՝ պարմութի, ևթէոպացոց՝ միազի, ևթենացոց՝ մեմակայիրոն, բիւթանա-  
ցոց՝ աֆրիկոս, կապագոսկացոց՝ ամպրոմոտա, վրաց՝ իղրակա, ազուանից՝ ժախուլէն:  
Համայնից ամիս Ը.բ.դ.:





Հոստոնց ապրիլ ամիս Դ, յունաց զհետս ամիս Ը, ասորց նիսան ամիս Է.բդ:

Պարսից ազար ամիս Թ:

Աւետմն:

Հայոց անկի ամիս Թ:

Աւր իաշկու թեան:

Ակնասեղ:

Երբայեցոց և արարացոց՝ իար, մակեդոնացոց՝ եղբարիոն: Ամիսը եկրորդ: Արե-  
զական՝ ի ցուրն:

Եգիպտացոց՝ պարու, և թեոպացոց՝ զեմբութ, օթենացոց՝ պիսիդոն, բլեթանացոց՝  
զեմեարիոն, հապոզոկացոց՝ օթրա, վրաց՝ վարդուպա, ազուանից՝ բոնասեկ ա-  
միսը Թ:





Մ ա յ ի ս

Հասմոց մայիս ամիսն, յունաց պանեմուս ամիս թ, ասորոց՝ իար թ:

Պարսից զահ ամիս ժ:

Երևումն խաչին:

Հոյոց մարերի ամիս ժ:

Երբալիցոց՝ սիւան, արարացոց՝ ազաղ թիրաս, մակեդոնացոց՝ մոնորինն: Արե-  
զակն՝ ի յեկաւորն: Ամիրս Երրորդ:

Ելաստեղ:

Եղիպտացոց՝ պոնի, Եթէոպացոց՝ պոնակի, Եթենացոց՝ դալեմ(եղ)նն, Երևմանացոց՝  
Ներես, Կապադոկացոց՝ դասուգալ, վրաց՝ մարելի, ազուանից՝ որելին: Ամլօբ ժ:





Հոստմոց յունիս ամիս Զ, յունաց զուիոս ամիս Ժ, ասորոց չրիզան ամիս Թ:  
Պարսից բանման ամիս ԺԱ:

Հայոց մարգաց ամիս ԺԱ:

Տուն Զարթրիա մարգարէին:

Տուն եզիա մարգարէին:

Ամսամուտ:

Երբայեցոց՝ թմաւոյ, արարացոց՝ ազազ զասար, մակեդոնացոց՝ թերեղիոն: Արե-  
զակն ի խեցդետին և զարձի խոնարհ: Ամիսք չորրորդ:

Եզրիպտացոց՝ եփեփի, եթէնացոց՝ խամլի, արիւնացոց՝ անթեստ(եր)ուն, բիւթանա-  
ցոց՝ հերմէս, կապպոկացոց՝ ոսմենայ, վրաց՝ բուբայ, աղսանից՝ էրնեայ: Ամիսք  
ԺԱ:





Հոստոց յուրս ամիս է: յունաց դորակնս ամիս ժի, ասորաց թամուզ ամիս ժ:  
Պարսից ասփանդար ամիս էժ:

Յեսեայ մարգարէին:

Հայոց հրօտից ամիս էժ:

Ծնունդ Եւջաննու Մկրտչի:

Երբայեղոց՝ աւ, արարողոց՝ ելթամուզ, մակեդոնացոց՝ սիկերփօր(ի)նն: Այլեզակն-  
ի ասիւծն: Ամիսը Ե.բզ:

Եզիպտացոց՝ մեսորի, եթէոպոսոց՝ նճասի, արմենացոց՝ ադրաբլոնն, բիթանացոց՝  
արսեմիսս, կապտղոհաչոց՝ սունդարայ, վրաց՝ շուրալուդա, աղսուանից՝ խարայ-  
Ամիսը Բժ, վերջինը:





Հասնաց օգոստոս ամիս Ը, յունաց հիպերոս ամիս ԲԺ, ասորոց աւ, պարսից աւե-  
լիացն և տաւն մակարայեցոցն: Ամիս ժԱ:

Հայոց՝ աւելիացն, պարսից՝ փար[ւ]արտին ամիս առաջին և տարեմուտ:

Հայոց Նաւասարդ, ամիս առաջին և տարեմուտ Սարկաւադին:

Փոթոււմն սուրբ աստուածածնին:

Երրայեցոց՝ իւուլ, արարացոց՝ հլամար, մակեդոնացոց՝ հարաբեմ[ր]ինն: Արեգակն՝  
ի հոյսն: Ամիսք Զ.բդ:

Եզիպտացոց և իւրույն աւելիացն:

Եզիպտացոց՝ թովթ, և թէոպացոց՝ մաբարամ, արթնացոց՝ մենեքինն, բելթանացոց՝  
դէսոս, կապադոկացոց՝ արտանա, վրաց՝ ախլածելի, ադուանից՝ նաւասարդին: Ամիսք  
առաջինը և տարեմուտը սոցա:





Հոտոնց սեպակեմքեր ամիս թ, յունաց արօս ամիս ասաջին և ասրեմուտ, ասորաց իլուլ ամիս ԲԹ և վերջ:

Պարսկց արտաբէնէշտ ամիս երկրորդ:

Հայոց հոսի ամիս երկրորդ:

Խաշի վերացումն:

Երբայեցոց՝ թշրին, արարացոց՝ ալադ, մակեդոնացոց՝ մետագետիոն: Արեղակն՝ ի Կշիւն: Ամիսք է և աշնանային հասարակ:

Սուրբ Գէորգայ բարեկենդան:

Օր սոսյ վասն յանցանաց սրթոյն:

Օր բուսեթեան և պապանձումն Չարարիայի:

Եղիպտացոց՝ թօֆիր, ևթէոպացոց՝ դեկեմբէթ, ասթենացոց՝ թերզելիոն, բիւթանացոց՝ երակլիոս, կապադովացոց՝ ակրխատրասայ, վրաց ակէլի, աղուանից՝ տուլինի: Ամիսք երկրորդ և տան վարագայ խաշի:





Հուսմոց հոկտեմբեր ամիս ժ, յունաց ազեկիոս ամիս երկրորդ, ասորաց թըշին  
բախմ: Առաջին ամիս և տարեմուտ:

Տաղաւարահարաց սկիզբն:

Պարսից խուրդատ ամիս երրորդ:

Կատարումն տաղաւարահարացն:

Հայոց սահմի ամիս երրորդ: Յզութիւն եղիսարեթի:

Երբայեցոց՝ մեհրշուան, արարացոց՝ ազազ թաղբաթ, մակեդոնացոց՝ ր[ո]եղբեմիոն:

Արեգակն՝ ի կարիճն: Ամիսք ութերորդ:

Քաշի գիւտ:

Եգիպտացոց՝ աթուր, Եթէոպացոց՝ խեղայ, ամենացոց՝ կիկէտփորոն, բիթանացոց՝  
դիսս, կապտգոկացոց՝ արուստղատս, վրաց՝ տիբիսդի, աղուսնից՝ նամայ: Ամիսք  
երրորդ:





Հոսումոց՝ նոյեմբեր ամիս Աժ, յունաց զէնէսիոս ամիս երբորդ, ասորոց թշրին  
խրա ամիս երկրորդ:

Պարսից թիբմայ ամիս չորրորդ:

Հայոց՝ արէ ամիս չորրորդ:

Եբրայեցոց՝ քասդե, արարացոց՝ ելիթոն, մակեդոնացոց՝ էսդիոն: Արեգակն՝  
ի յաղեղնաւորն: Ամիս իններորդ:

Յիսնակամուտ:

Ըմբոնադ:

Եգիպտացոց՝ քուակ, եթէոպացոց՝ թայոսիա, օթենացոց՝ եկամբինոն, ըբթանացոց՝  
մեաէդիոս, կապադոկացոց՝ միհր, վրաց՝ տիրիսդինի, աղուանից՝ ցելի: Ամիսք  
չորրորդ:





Հոսումոց զեկանեմբեր ամիս Իժ, յունաց՝ պէրէտիոս չորրորդ, ասորոց՝ քանուև  
բախմ, ամիս երրորդ:

Պարսից մուրղազ ամիս Ե.բ.դ:

Հայոց բազոց ամիս Դ.բ.դ: Եւ սուրբ Յակոբայ բարեկենդան:

Եբրայեցոց՝ արէթ, աքարացոց՝ սսորան, մակեդոնացոց՝ մակարիոն: Արեգակն՝  
Ի յայժեզջիւսն և դարձ ի բարձրութիւն: Ամիսը Ժ:  
Չմեռնամուտ:

Եգիպտացոց՝ սուրիլ, Եթէպոցոց՝ թերամ, աթենացոց՝ մեկակիսոն, բիւթանացոց՝  
սորթաէս, կապտղեկացոց՝ ամարասա, վրաց՝ սպանի, ազուանից՝ բոկաւոն: Ամիս  
Յայտնութեան բարեկենդանն: Ե.բ.դ:



Հովհաննես Իմաստասերի ներկա «Խառնախորան»-ը մենք հրատարակում ենք ՀՊԶՄ № 2068 ձեռագրից, որը մեզ ծանոթ «Խառնախորաններ»-ից առկանից բնագործակն ու հարուստն է: Չեռագիրը՝ գիտական նյութերի ժողովածու է, գրված է XV դարի գրչության մր: «Խառնախորան»-ը բնագործակված է ՏՏԾբ թերթից մինչև 372ա թերթը:

«Խառնախորան»-ում յուրաքանչյուր ամսվա համար հատկացված է երկու էջ, որից ձախ էջը բաժանված է 19 սյունակի հետևյալ հաջորդականությամբ.

«Վերադիրք հոռոմոց»:—Այս սյունակի թվանշանները ձեռագրում նշանակված են ոչ բոլոր ամսաթվերի առջև. հավանական է, որ այդ արվել է ավելորդ աշխատանքից խուսափելու նպատակով: Տպագրության մեջ մենք հարազատ ենք մնացել բնագրին:

«Կիսակի լուսնի»:—Տեքստը բերված է հարազատորեն, միայն փետրվարի սյունակի վերնագրում ձեռագրում գրչական սխալ է թույլ տրված, որն ուղղել ենք. այնտեղ փոխանակ «Կիսակի լուսնի» գրվել է «Ժամք գիշերոյ»:

«Նրսնեակի հոռոմոց»:—Բնագիրը բերված է հարազատորեն:

«Նարբարսոյի»:—Բնագիրը բերված է առանց փոփոխության:

«Հոռոմոց և իւրոց»:—Հոռոմեական և նրա տոմարական սխառեմին պատկանող հունական և ասորական ամսաթվերն են՝ համեմատության մեջ գրված այլ ժողովուրդների ամսաթվերի հետ: Տեքստը բերված է առանց փոփոխության: Ամսաթվերի առաջին օրերը այստեղ և այլ ժողովուրդների ամսանունների մեջ աղյուսակում գրված են կարմիր թանաքով, իսկ այնուհետև սև և կարմիր թանաքներով. տպագրության մեջ մենք արվել ենք բնագրի պատանիչերով:

«Նրալեցոց և իւրոց»:—Նրալեական և նրա տոմարական սխառեմին պատկանող արարական և մակեդոնական ամսաթվերն են՝ հարաբերված այլ ժողովուրդների ամսաթվերի հետ:

«Նգիպտացոց և իւրոց»:—Նգիպտական և նրա տոմարական սխառեմին հարող եթովպական, ավենական, բյութանական, կապադովկիական, վրացական և աղվանական ժողովուրդների ամսանուններն են: Մեզ համար առանձնապես արժեքավոր են վրացական և աղվանական տոմարական ամսանունները և նրանց հարակցությունը մյուս ժողովուրդների տոմարական սխառեմների հետ:








«Ամիսի հայոց Սարկաւագի»:—Հայկական անշարժ տոմարի ամսաթվերն են՝ հաստատված Հովհաննես Իմաստասերի կողմից:

«Ամիսի պարսից»:—Տրված են միայն պարսկական ամսաթվերը՝ համեմատված մյուս ժողովուրդների ամսաթվերի հետ: Այս ևս տոմարի պատմության համար անչափ արժեքավոր է:

«Տանուաւրք արեգականն»:—Այս վերնագիրը սյունակների խորագրում ձեռագրի մեջ չորս տարբեր ձևով է գրված՝ «Տանուաւրք ատուրց», «Տանուաւրք ատուրց», «Տանուաւրք ատուրց շարաթու» և «Տանուաւրք շարաթու»: Միատեսակության համար մենք ընտրել ենք երկրորդ ձևը:

Այս սյունակների մեջ շարաթվա տանուաւրդները գրված են գաղափարագրերով: Ըստ սրում, շարաթվա յոթ տանուաւրդները հաջորդաբար գրված են սև գույնով, յոթը՝ կարմիր: Տպագրության մեջ մենք գաղափարագրերը փո-

խարինել ենք հայկական տառերով՝ պահելով բնագրի շարքը: Գաղափարագրերը մենք փոխել ենք հայկական հետևյալ տառանիշերով.

ա -  - արեգակն	լթ -  - լուսնթագ
լ -  - լուսին	լբ -  - լուսաբեր
հ -  - հրատ	ե -  - նրևակ
փ -  - փայլածու	

Հովհաննեսի «Խառնախորան»-ում հունվարի մեկի տանուտերը լուսաբերն է, հունվարի երկուսինը՝ երևակը և այլն: Գեկտեմբերի 31-ին տարին փակվում է լուսնթագ տանուտերով:

«Այբուբենի արեգականն»:—Այս սյունակի վերնագիրը գրված է 6 տարբերակով՝ «Այբուբեն արեգականն», «Այբուբենը արեգականն», «Գիր այբուբենից արեգականն», «Գիր աստիճանաց արեգականն», «Գիր այբուբենից արեգականն» և «Գիր արեգականն»: Միտտեսակության համար մենք ընտրել ենք երկրորդ ձևը:

Հայկական այբուբենի «ա» տառը սկսում է դեկտեմբերի 17-ին և 5 օրից հետո փոխարինվում «բ»-ով, և այդպես, հնգական օրով, շարունակվում: Գեկտեմբերի 31-ը վերջանում է «գ» տառով և հունվարի 1-ը սկսվում «գ»-ով: Նույն կարգով հայկական այբուբենի տառերը հաջորդում են իրար մինչև «բ» տառը, որը վերջանում է ամառնամտին՝ հունիսի 19-ին: Այնուհետև հայկական այբուբենի տառերը, հետագարձ հաջորդականությամբ, 5-ական օրով, սկսում են պակասել, մինչև որ նորից հասնում են «ա»-ին, որը համապատասխանում է դեկտեմբերի 16-ին:

«Խառնախորան»-ի տերստում մենք ուղղել ենք ապրիլի 21-ին ընկնող բնագրի «շ» տառը «ծ»-ով, որը բնագրում բացահայտ գրչական սխալ է:

«Գոտիկի արեգականն»:—Հովհաննես Իմաստասերի «Խառնախորան»-ի այս սյունակում տրված են տարվա 35 գոտիներն ըստ ամսաթվերի: Նկատի ունենալով, որ տպագրական ղեկավարությունների պատճառով հնարավոր չի եղել տալ գոտիների բաժանումը, ուստի անհրաժեշտ ենք համարում ծանոթագրության մեջ գոտիների ժամանակը տալ ըստ ամսաթվերի.






Հրատը—դեկտեմբերի 25-ից՝ հունվարի 5-ը,  
 Արեգակը—հունվարի 6-ից՝ հունվարի 15-ը,  
 Լուսաբերը—հունվարի 16-ից՝ հունվարի 25-ը,  
 Փայլածուն—հունվարի 26-ից՝ փետրվարի 4-ը,  
 Լուսինը—փետրվարի 5-ից՝ փետրվարի 14-ը,  
 Երևակը—փետրվարի 15-ից՝ փետրվարի 24-ը,  
 Լուսնթագը—փետրվարի 25-ից՝ մարտի 6-ը,  
 Հրատը—մարտի 7-ից՝ մարտի 16-ը,  
 Հրատը (նորից)—մարտի 22-ից՝ մարտի 31-ը,  
 Արեգակը—ապրիլի 1-ից՝ մարտի 10-ը,  
 Լուսաբերը—ապրիլի 11-ից՝ մարտի 20-ը,  
 Փայլածուն—ապրիլի 21-ից՝ ապրիլի 30-ը,  
 Լուսինը—մայիսի 1-ից՝ մայիսի 10-ը,

Երևակը—մայիսի 11-ից՝ մայիսի 20-ը,  
 Լուսնթագը—մայիսի 21-ից՝ մայիսի 30-ը,  
 Հրատը—մայիսի 31-ից՝ հունիսի 9-ը,  
 Արեգակը—հունիսի 10-ից՝ հունիսի 19-ը,  
 Լուսաբերը—հունիսի 20-ից՝ հունիսի 29-ը,  
 Փայլածուն—հունիսի 30-ից՝ հուլիսի 9-ը,  
 Լուսինը—հուլիսի 10-ից՝ հուլիսի 19-ը,  
 Երևակը—հուլիսի 20-ից՝ օգոստոսի 29-ը,  
 Լուսնթագը—հուլիսի 30-ից՝ օգոստոսի 8-ը,  
 Հրատը—օգոստոսի 9-ից՝ օգոստոսի 18-ը,  
 Արեգակը—օգոստոսի 19-ից՝ օգոստոսի 28-ը,  
 Լուսաբերը—օգոստոսի 29-ից՝ սեպտեմբերի 7-ը,  
 Փայլածուն—սեպտեմբերի 8-ից՝ սեպտեմբերի 17-ը,  
 Լուսինը—սեպտեմբերի 18-ից՝ սեպտեմբերի 27-ը,  
 Երևակը—սեպտեմբերի 28-ից՝ հոկտեմբերի 7-ը,  
 Լուսնթագը—հոկտեմբերի 8-ից՝ հոկտեմբերի 17-ը,  
 Հրատը—հոկտեմբերի 18-ից՝ հոկտեմբերի 27-ը,  
 Արեգակը—հոկտեմբերի 28-ից՝ նոյեմբերի 6-ը,  
 Լուսաբերը—նոյեմբերի 7-ից՝ նոյեմբերի 16-ը,  
 Փայլածուն—նոյեմբերի 17-ից՝ նոյեմբերի 26-ը,  
 Լուսինը—նոյեմբերի 27-ից՝ դեկտեմբերի 6-ը,  
 Երևակը—դեկտեմբերի 7-ից՝ դեկտեմբերի 16-ը,  
 Լուսնթագը—դեկտեմբերի 17-ից՝ դեկտեմբերի 26-ը:

Չեռագրի «Փօտիկը արեգականն» սյունակում գրչի կողմից թույլ են տրված հետևյալ սխալները, որոնք մենք ուղղել ենք տպագրութայան մեջ.

Հրատը—մայիսի 31-ից՝ հունիսի 9-ը (փոխ. հունիսի 10-ը),  
 Արեգակը—հունիսի 10-ից՝ հունիսի 20-ը (փոխ. հունիսի 19-ը),  
 Լուսինը—սեպտ. 18-ից՝ սեպտ. 26-ը (փոխ. սեպտ. 27-ը),  
 Արեգակը—հոկտ. 28-ից՝ նոյեմբ. 7-ը (փոխ. նոյեմբ. 6-ը),  
 Լուսինը—նոյեմբ. 28-ից՝ դեկտ. 7-ը (փոխ. նոյեմբ. 27-ից):

Արեգակը ձուկ կենդանակերպից դուրս գալուց հետո, մարտի 17-ից մինչև մարտի 21-ը, 5 օր, ընթանում է 5 մոլորական կոչվող աստղերի շրջանակով, որոնցից ամեն մեկն իշխում է մեկ օրվա վրա հետևյալ հաջորդականությամբ.

	— լուծ	Լուծը մարտի 17-ին,
	— Եղջերու	Եղջերուն՝ մարտի 18-ին,
	— Ծկրաւորի	Ծկրաւորը՝ մարտի 19-ին,
	— Փարապնտի	Փարապնտին՝ մարտի 20-ին,
	— Արտախոյր	Արտախոյրը՝ մարտի 21-ին.



**«Աստիճանք արեգականն»:**—Չեռագրում գրված է գրչական երեք տարրերակով՝ «Աստիճանք արեգականն», «Աստիճան արեգականն», «Աստիճանք բարձրանալոյ արեգականն»: Տպագրության մեջ, միատեսակության համար, նախընտրեցինք առաջին ձևը:

Արեգակի աստիճանների բարձրացման սկիզբը «Խառնախորան»-ում ղեկտեմբերի 16-ից է. յուրաքանչյուր օրում բարձրանում է 200 աստիճան: Գեկտեմբերի 31-ին արեգակը հասնում է 3000 աստիճանի, իսկ հունվարի 1-ին՝ 3200 աստիճանով շարունակվում:

Արեգակի ամենաբարձր կետը հունիսի 19-ին է, երբ հասնում է 36 000 աստիճանի: Այնուհետև նա սկսում է օրական 200 աստիճանով պակասել, մինչև որ ղեկտեմբերի 16-ին հասնում է 0-ի:

**«Հոլով արեգականն»:**—Չեռագրում վերնագրված է երկու ձևով՝ «Հոլովք արեգականն» և «Հոլովք ատուրց արեգականն»: Միատեսակության համար մենք գործ ենք ածել առաջին ձևով: Արեգակի հոլովումների աճը տրված է ղեկտեմբերի 16-ից՝ առկա ունենալով 270 հոլովում, իսկ այնուհետև օրական մեկական միավորով աճելանում է: Գեկտեմբերի 31-ին հոլովումների թիվը հասնում է 285-ի, իսկ հունվարի 1-ին շարունակվում 286-ով: Հունիսի 19-ին հոլովումները հասնում են բարձրագույն աստիճանի՝ 450-ի, իսկ այնուհետև մեկական օրով սկսում են պակասել՝ մինչև ղեկտեմբերի 16-ը հասնելով 270-ի:

**«Ասպարէզ արեգականն»:**—Չեռագրում սյունակները վերնագրված են երեք ձևով՝ «Ասպարէզք ընթացից արեգականն», «Ասպարէզք ընթացից ատուրց արեգականն» և «Ասպարէզք արեգականն»: Միատեսակության համար մենք ընտրեցինք երրորդ ձևը: Արեգակի ընթացքի աճը սկսում է ղեկտեմբերի 16-ից՝ առկա ունենալով 135 000 ասպարէզ, իսկ այնուհետև օրական 500 ասպարէզով սկսում է աճելանալ: Գեկտեմբերի 31-ին ասպարէզների թիվը հասնում է 142 500-ի և հունվարի 1-ին շարունակվում 143 000 ասպարէզով: Հունիսի 19-ին նա հասնում է 225 000-ի, իսկ հետո, հունիսի 20-ից, 500-ական միավորով պակասում, մինչև որ ղեկտեմբերի 16-ին հասնում է 135 000-ի:

**«Ժամ ատընջեան, ժամ գիշերոյ»:**—Վերջին շորս սյունակների մեջ տրված են օրվա և գիշերվա տեղողությունները տարվա տարրեր օրերին: Առաջին երկու սյունակները օրվա տեղողությունն են ցույց աալիս, իսկ վերջին երկուսը՝ գիշերվա: Նախ տրվում է օրվա տեղողությունը ժամերով, իսկ հաջորդ կից սյունակում՝ «մասերով»: (Հնում ժամի մանր մասերը կոչվել են ո՛չ թե րոպեներ, այլ ուղղակի «մաս»-եր: Ըստ որում ժամը ունեցել է 30 մաս. յուրաքանչյուր մասը հավասար է ներկայիս 2 րոպեի): Տարվա ամենից կարճ օրն է սեպտեմբերի 16-ը. այստեղ օրն ունի 9 ժամ տեղողություն, իսկ գիշերը՝ 15: Այնուհետև ցերեկը օրական մեկական մասով (2 րոպե) սկսում է երկարել: Գեկտեմբերի 31-ին ցերեկվա տեղողությունը հասնում է 9 ժամ 15 մասի, իսկ գիշերվանը՝ 14 ժամ 15 մասի: Հունվարի 1-ից՝ օրվա տեղողությունը նույն կարգով շարունակում է փոփոխվել, մինչև որ հունիսի 19-ին ցերեկվա տեղողությունը հասնում է 15 ժամի, իսկ գիշերվանը՝ 9-ի: Ապա ցերեկվա տեղողությունը սկսում է պակասել, իսկ գիշերվանը աճելանալ մինչև ղեկտեմբերի 6-ը:

Հայկական տոմարը Հովհաննես Իմաստասերի կողմից շարժականից անշարժ դարձնելուց հետո ևս, ինչպես ասել ենք ուսումնասիրության մասում, շարունակել է գործածվել շարժական կամ «Մեծի Հայոց» տոմարը: Բերենք XIV և XV դարերի մեր հիշատակարաններից մի քանի փաստեր՝ շարժական և անշարժ տոմարների զուգահեռ գործածության մասին:

1. Կարապետ գրիչն իր ընդօրինակված ձեռագիր ժողովածուն ավարտել է Գլխաձորում 1317 թվի քաղոց ամսի 10-ին, դեկտեմբերի 18-ին (ՀՊՁՄ, № 6897, թ. 183ր: Հմմ. Խաչ. I, էջ 128): Ձեռագիրը ընդօրինակված է անշարժ տոմարով քաղոց ամսի 10-ին, որն իրոք համապատասխանում է դեկտեմբերի 18-ին:

2. Փրյուն երբայեցու աշխատությունների ընդօրինակությունը ավարտվել է 1342 թվի մարտի 7-ին սահմի 12-ին (ՀՊՁՄ, № 2102, թ. 154ա: Հմմ. Խաչ. I, էջ 332): Ձեռագիրը ընդօրինակված է հին հայկական շարժական տոմարով: 1342 թվի հայկական տարեմուտը եղել է նավասարդի 7-ին, այդ հաշվով մարտի 7-ը, իրոք, կհամապատասխանի սահմի 12-ին:

3. Սուլթանխայտ (Քաղղաղ) մի աստվածաշունչ է ընդօրինակվել 1354 թվի սեպտեմբերի 25-ին, մարտի 7-ին («Մատենադարան Հայկ. թարգ.», էջ 145, 146): Աստվածաշունչն ընդօրինակված է եղել հին հայկական շարժական տոմարով: 1354 թվին հայկական տարեմուտը եղել է նավասարդի 10-ին, այդ հաշվով՝ սեպտեմբերի 25-ը, իրոք, համապատասխանում է նավասարդի 10-ին:

4. Հովհաննես գրիչն իր ընդօրինակած տոմարագիրը ավարտել է 1384 թվի օգոստոսի 27-ին՝ «Մեծ Հայոց» ահկի 16-ին, երբայեցոց իլուպի 9-ին և Սարկավագի նավասարդի 17-ին (ՀՊՁՄ, № 6815, թ. 8ա: Հմմ. Խաչ. I, էջ 551): 1354 թվի հայկական տարեմուտն եղել է նավասարդի 17-ին, այդ հաշվով՝ օգոստոսի 27-ը կհամապատասխանի ահկի 16-ին: Անշարժ տոմարով օգոստոսի 27-ը համապատասխանում է նավասարդի 17-ին և երբայական իլուպ ամսի 9-ին:

5. Աղոթգրքի պատվիրատուն՝ Կարապետը հիշատակագրություն է թողել 1384 թվի մեհեկի 8-ին, փետրվարի 14-ին (ՀՊՁՄ, № 8280, թ. 639: Հմմ. Խաչ. I, էջ 552): Հիշատակագրությունը անշարժ տոմարով է. մեհեկի 8-ը ճիշտ համապատասխանում է փետրվարի 14-ին:

6. Վարդան գրիչը նարեկացու «Մատենան ողբերգութեան»-ն ընդօրինակել է Ղրիմի Սուրխաթ քաղաքում 1390 թվի տրե ամսի 16-ին, նոյեմբերի 24-ին (ՀՊՁՄ, № 2090, թ. 291ր: Հմմ. Խաչ. I, էջ 586): Ձեռագրի ընդօրինակման ավարտելու ամսաթիվը անշարժ տոմարով է. տրե 16-ը համապատասխանում է նոյեմբերի 24-ին:

7. Հովհաննես գրիչն իր ընդօրինակած ձեռագրում հիշատակագրություն է թողել 1391 թվի նավասարդի 13-ին, դեկտեմբերի 26-ին (ՀՊՁՄ, № 1980, թ. 40ր: Հմմ. Խաչ. I, էջ 594): Հիշատակագրության ամսաթիվը շարժական տոմարով է. 1391-ին հայկական տարեմուտը եղել է նավասարդի 19-ին, հետևապես, նավասարդի 13-ը կհամապատասխանի դեկտեմբերի 26-ին:

8. Նույն ձեռագրի գրիչը իր չափածու հիշատակարանում ձեռագրի ավարտման թվականի մասին հետևյալն է գրել.



«Ի հայոց մեծ թուականի  
Ի ութհարիւր և քառասնի,  
Յուլիս ամսոյ տասն և եթի,  
Եւ ի յարեգ՝ վեցերորդի,  
Եւ յեկեղեացս գաւառի,  
Ի տիրաշէն մենաստանի,  
Ընդ հովանեա տէր ներսէսի,

Գրեցաւ լուծմունքս Բախճալի» (ՀՊԶՄ, № 1980, Բ. 244բ: Հմմ.  
Խաչ. I, էջ 594):

Ձեռագիրը ընդօրինակված է շարժական տոմարով. 1391 թվին հայկական տարեմուտը նավասարդի 19-ին է եղել, այդ հաշվով հուլիսի 17-ը նավասար է արեգ ամսի 6-ին:

9. Թումա գրիչը Մատթեոս վարդապետի քարոզգրքի մեջ թողել է մի հիշատակագրություն 1404 թվի տրե ամսի 5-ին, մարտի 14-ին (ՀՊԶՄ, № 5232, Բ. 56բ: Հմմ. Խաչ. II, էջ 33): Հիշատակագրությունը հին հայկական շարժական տոմարով է. 1404 թվի հայկական տարեմուտը նավասարդի 21-ին է եղել, ուստի տրե 5-ը համապատասխանում է մարտի 14-ին:

10. Թավրիզեցի Ստեփանոս անունով մի վաճառական իր ձեռագիր ավետարանը վաճառել է 1410 թվի արաց ամսի 19-ին, մայիսի 26-ին (ՀՊԶՄ, № 2538, Բ. 134ա: Հմմ. Խաչ. II, էջ 109): Այս հին հայկական շարժական տոմարով է. 1410 թ. հայկական տարեմուտը նավասարդի 24-ին է եղել, այդ հաշվումով մայիսի 26-ը համապատասխանում է արաց ամսի 19-ին:

11. Կարապետ գրիչն իր ձեռագրի ընդօրինակությունը ավարտել է.

«Ի յութ հարիւր հայոց թվի,  
նթանասուն և եթեակի (1428),

Ի քանվեց ամսո հոռի,

Եւ ի քսան և ինն յունվարի...» (ՀՊԶՄ, № 5971, Բ. 274ա: Հմմ.  
Խաչ. II, էջ 388):

Ձեռագիրը ընդօրինակված է շարժական տոմարով. 1428 թվին տարեմուտը եղել է նավասարդի 28-ին, հետեապես հոռի 26-ը համապատասխանում է հունվարի 19-ին:

Ավելորդ ենք համարում այլ օրինակներ բերելը: Վերահիշված փաստերը անվիճելիորեն ապացուցում են, որ Հովհաննես Իմաստասերի կատարած բարեփոխությունից հետո ևս, անշարժ տոմարին զուգընթաց, օգտագործում էին հին հայկական շարժական տոմարը:

\* \* \*

«ժառանգորան»-ի յուրաքանչյուր ամսվա աղյուսակի դիմացի էջում տրվում է ավելի աղյուսակի տոմարական կարևոր թվերի բացատրությունը, այսինքն՝ տարբեր ժողովուրդների ամսաթվերի սկիզբը, ամիսների համարակարգը, ավելի ամսվա բնորոշ եղանակները և կարևոր անշարժ տոները: Բնագրում այդ բացատրությունները գծիկներով միացված են ձախ էջի աղյուսակներին: Տպագրության մեջ այդ հնարավոր չի եղել, բայց աշխատել ենք աղյուսակների զուգահեռ ուղղությունը պահպանել:



Նշված էջերում կատարված են բնագրային հետևյալ փոփոխությունները:

Ա. Քաց են արված բոլոր գաղտփարագրերը և հասպտումները:

Բ. Ուղղված են բացահայտ սխալ գրված ամսանունները: (Մենք ավելորդ ենք համարել սխալաշատ ձևով տալ, նկատի ունենալով, որ առջևում նույն ձևագրի ամսանունների տարբերակներն արդեն տրված են):

Գ. Բոլոր տեղերում բնագրի «եթէօպացոց» բառն ուղղված է «եթէոպացոց» ձևով:

Աղյուսակներում վրիպել է տպագրական հետևյալ սխալը՝ մտրտ ամսում պարսից «արան» ամիսը տպվել է «ասպանգատ» ձևով:



























Նախնական	Քրիստոս	Չնկալի	Նախնական	Տառնական	Սուրբ Երանանք	Սուրբ Երանանք	Քանիք	Բուն բարեկերպան	Քանիք	Լրբուն	Քանիք	Սուրբ Երանանք	Քանիք	Քանիք	Քանիք	Քանիք	Քանիք	Քանիք	Քանիք	
նծգ	ժե	ա	աղի	է	յուն	լա	փես	ժա	մար	խթ	ե	այդր	ա	մայ	խ	յուն	խ	յուն	խ	յուն
նծդ	խր	բ	ալծ	ա	փես	ժ	փես	դ	այդր	ժե	ք	այդր	իա	յուն	խ	յուն	խ	յուն	խ	յուն
նծե	խթ	դ	չրհ	բ	փես	բ	փես	իդ	այդր	դ	ա	այդր	ժդ	յուն	ա	յուն	ա	յուն	ա	յուն
նծզ	խա	դե	ձու	բ	յուն	ժբ	փես	բբ	այդր	ժդ	դ	այդր	խե	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նծը	ժդ	ե	ցու	դ	յուն	խթ	փես	դ	մար	խթ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նծթ	խդ	ա	եկա	ե	յուն	ժդ	փես	դ	մար	խթ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկ	խդ	բ	բեց	ա	փես	դ	փես	իդ	մար	ժ	ե	այդր	ե	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկա	ժդ	դ	առ	դ	յուն	իե	փես	ժե	մար	լ	բ	այդր	ե	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկբ	խե	ե	կոյ	դ	փես	ժդ	մար	ե	այդր	ժբ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկդ	խր	բ	կշ	դ	յուն	լ	փես	լ	այդր	ե	ա	այդր	ա	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկե	լ	բ	կար	դ	փես	խր	փես	ժբ	մար	խե	դ	այդր	ա	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկզ	լ	բ	աղե	ա	փես	ժ	մար	դ	այդր	ժե	բ	այդր	խա	յուն	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկը	ժա	դ	ալծ	բ	յուն	իդ	փես	ժդ	այդր	դ	դ	այդր	դ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկթ	խր	դ	չու	դ	փես	ժբ	փես	բ	այդր	խդ	դ	այդր	խթ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկա	խդ	դ	առ	դ	յուն	ե	փես	լբ	այդր	ժբ	դ	այդր	ժե	յուն	ա	յուն	ա	յուն	ա	յուն
նկբ	խդ	ե	կոյ	դ	յուն	խր	փես	ժբ	այդր	ա	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկդ	խդ	ա	կշ	դ	յուն	ժե	փես	ժե	այդր	խե	ե	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկե	լ	բ	կար	ա	փես	դ	փես	իե	այդր	ժդ	ե	այդր	ժդ	յուն	ա	յուն	ա	յուն	ա	յուն
նկզ	ժա	դ	աղե	բ	յուն	իդ	փես	ժդ	այդր	բ	դ	այդր	դ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկը	խր	դ	ալծ	դ	յուն	ժբ	փես	բ	այդր	խր	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկթ	խե	ե	չրհ	դ	յուն	լա	փես	լա	այդր	ժ	ե	այդր	ժա	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկա	խդ	դ	առ	դ	փես	ժ	փես	իդ	այդր	լ	ա	այդր	բ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկբ	խդ	ե	կոյ	դ	փես	ժբ	փես	իբ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկդ	խդ	ա	կշ	դ	փես	լ	փես	լ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկե	լ	բ	կար	ա	փես	ժա	փես	իա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկզ	ժա	դ	աղե	բ	յուն	իդ	փես	ժդ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկը	խր	դ	ալծ	դ	յուն	ժբ	փես	բ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկթ	խե	ե	չրհ	դ	փես	լա	փես	լա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկա	խդ	դ	առ	դ	փես	ժ	փես	իդ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկբ	խդ	ե	կոյ	դ	փես	ժբ	փես	իբ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկդ	խդ	ա	կշ	դ	փես	լ	փես	լ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկե	լ	բ	կար	ա	փես	ժա	փես	իա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկզ	ժա	դ	աղե	բ	յուն	իդ	փես	ժդ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկը	խր	դ	ալծ	դ	յուն	ժբ	փես	բ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկթ	խե	ե	չրհ	դ	փես	լա	փես	լա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկա	խդ	դ	առ	դ	փես	ժ	փես	իդ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկբ	խդ	ե	կոյ	դ	փես	ժբ	փես	իբ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկդ	խդ	ա	կշ	դ	փես	լ	փես	լ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկե	լ	բ	կար	ա	փես	ժա	փես	իա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկզ	ժա	դ	աղե	բ	յուն	իդ	փես	ժդ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկը	խր	դ	ալծ	դ	յուն	ժբ	փես	բ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկթ	խե	ե	չրհ	դ	փես	լա	փես	լա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկա	խդ	դ	առ	դ	փես	ժ	փես	իդ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկբ	խդ	ե	կոյ	դ	փես	ժբ	փես	իբ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկդ	խդ	ա	կշ	դ	փես	լ	փես	լ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկե	լ	բ	կար	ա	փես	ժա	փես	իա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկզ	ժա	դ	աղե	բ	յուն	իդ	փես	ժդ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկը	խր	դ	ալծ	դ	յուն	ժբ	փես	բ	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն
նկթ	խե	ե	չրհ	դ	փես	լա	փես	լա	այդր	լ	ա	այդր	խ	մար	խ	յուն	ա	յուն	ա	յուն



Նախնական	Թուական	Վերադիր	Ելքի քանակ	Տասնուներ	Աւար լայնուլի բան	Առաջադիր	Քանիք	Բուն բարեկենդան	Քանիք	Լրումն	Քանիք	Աւար լրման	Չտակ	Քանիք	Պնդակատե	Քանիք	Վարդավառ	Քանիք
ն	2ձ	ձ	բ	կոյ	ա	յուն	ի	փետ	ժ	մար	իթ	դ	մար	լա	մայ	ժթ	և	է
ն	2ձա	թ	դ	կ2	բ	փետ	թ	մար	բ	ապր	ձէ	հ	ապր	լ	յուն	բ	և	թէ
ն	2ձբ	թ	դ	կար	դ	փետ	ա	փետ	ը	ապր	դ	դ	ապր	ժա	մայ	լ	և	թէ
ն	2ձգ	թ	դ	աղե	ե	յուն	ժ	փետ	դ	մար	իհ	դ	մար	իէ	մայ	ժե	և	թէ
ն	2ձդ	թ	ե	այծ	դ	փետ	ե	փետ	ի	ապր	ժ	ե	ապր	ժ	յուն	դ	և	թէ
ն	2ձե	ժ	ա	ջրհ	է	յուն	ը	փետ	ժ	ապր	բ	բ	ապր	բ	մայ	իէ	և	թէ
ն	2ձէ	ե	դ	խոյ	դ	փետ	ա	փետ	ի	ապր	ժ	դ	ապր	ժ	մայ	լա	և	թէ
ն	2ձբ	ժ	դ	յու	դ	յուն	ը	փետ	ժ	մար	լ	դ	ապր	դ	մայ	իդ	և	թէ
ն	2ձթ	ի	դ	եկա	ե	փետ	ժ	մար	դ	ապր	ժ	բ	ապր	ի	յուն	ժ	և	թէ
ն	2ի	բ	է	խեց	դ	յուն	իթ	փետ	ժթ	ապր	է	է	ապր	բ	մայ	իէ	և	թէ
ն	2իա	ժ	բ	առ	ա	յուն	ի	փետ	ժ	մար	իէ	դ	մար	լա	մայ	ժթ	և	թէ
ն	2իբ	լ	դ	կոյ	բ	փետ	թ	մար	բ	ապր	ժե	դ	ապր	ի	յուն	բ	և	թէ
ն	2իգ	ժ	ա	կ2	դ	յուն	ի	փետ	ժե	ապր	դ	է	ապր	ի	մայ	իդ	և	թէ
ն	2իդ	ի	բ	կա	դ	յուն	ժէ	փետ	է	մար	իդ	է	մար	իէ	մայ	ժ	և	թէ
ն	2իե	դ	է	աղե	դ	փետ	ե	փետ	ի	ապր	ժ	բ	ապր	ժ	յուն	դ	և	թէ
ն	2իզ	ժ	ա	այծ	է	յուն	ի	փետ	ժ	ապր	ա	ա	ապր	բ	մայ	իէ	և	թէ
ն	2իէ	ի	բ	ջրհ	ա	յուն	ժ	փետ	դ	մար	լա	ա	մար	իդ	մայ	ժ	և	թէ
ն	2իբ	դ	դ	ձու	բ	փետ	բ	փետ	ի	ապր	թ	դ	ապր	ժ	մայ	լա	և	թէ
ն	2իթ	ժ	ե	խոյ	դ	յուն	ի	փետ	ժ	մար	իթ	բ	ապր	դ	մայ	իդ	և	թէ
ն	2լ	ի	բ	յու	ե	փետ	ժ	մար	դ	ապր	ժէ	ա	ապր	ի	յուն	ժ	և	թէ
ն	2լա	ի	ե	եկա	դ	յուն	իթ	փետ	ժթ	ապր	դ	ե	ապր	ի	մայ	իթ	և	թէ
ն	2լբ	ի	ա	խեց	է	յուն	ի	փետ	ժա	մար	իե	բ	մար	լա	մայ	ժթ	և	թէ

ՅԱՆՈՓԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհաննես Իմաստասերի ՇԼԲ աղյուսակները մենք հրատարակում ենք ՀՊՁՄ-ի № 1973 ձեռագրից, որն ընդօրինակված է 1342 թվին Գրիգոր քահանայի կազմից: Այս ընդօրինակության մեջ բացակա չէին երեք սյունակներ՝ «Վերադիր», «Ելքի քանակ» և «Տասնուներ», որոնք մենք լրացրել ենք ՀՊՁՄ-ի № 1999 ձեռագրից, որը XII դարի ընդօրինակություն է:

Չեռադիր ՇԼԲ աղյուսակները, սովորաբար, ընդօրինակված են լինում 19-ամյակներով ՇԼԲ շրջանն իր մեջ ընդգրկում է 28 հատ 19-ամյակի: Չեռագրերում, սովորաբար, յուրաքանչյուր 19-ամյակին հատկացվում է մի էջ: աշգրիս է օրինակ № 1973 ձեռագրում (թ. 94ա—107բ): Կրկնակի ծավալ ունի ՀՊՁՄ-ի № 1999 ձեռագիրը. աշտակ սյունակները շատ լայն են, հնարավոր չի եղել 19-ամյակը մի էջում տեղափոխել, ուստի և հատկացվել է երկու էջ, ամբողջ ՇԼԲ-ին՝ 56 էջ (թ. 234ա—248բ, 254ա—276ա): Ըստ որում № 1999 ձեռագրի ՇԼԲ աղյուսակները կազմելու ժամանակ խառնված են:

2. Հայ տամարի վիճելի հարցերից մեկն է հայկական ինքնիշխանության սկզբնավորության հարցը. ե՞րբ է եղել այն՝ 552-ի՞ն, թե 553-ին: Հայագետների մեծ մասը հայկական ինքնիշխանության սկիզբն է ընդունում 552-ը: Այդ կարծիքն են պաշտպանում Մ. Չամչյանը, Մ. Օրմանյանը, Լ. Սևմյունովը, Ն. Ալիկյանը և ուրիշները: Վերջերս մենք հանդես եկանք մի հողվածով և պաշտպանեցինք այն տեսակետը, որ հայկական ինքնիշխանության սկիզբը պիտի համարել ս՛լ թե 552-ը, այլ 553-ը (տե՛ս «Տարեթվերի և ամսաթվերի գործա-

ժուլյունը հայ մատենագրության մեջ» խորագիրը կրող մեր հոդվածը, «էջ-միածին», 1956 թ., Մ Մ 1—3):

Ի՞նչ կովաններ ունենք մենք այս պնդման համար:

Ամենից առաջ այդ մասին են վկայում միջնադարյան մեր գրեթե բոլոր պատմիչները՝ Հովհաննես Կոզեմեր, Հովհաննես Դրասխանակերտցին, Սահփանոս Ասողիկը, Սամուել Անեցին, Սահփանոս Օրբելյանը և ուրիշները:

Երկրորդ, հայկական թվականության սկիզբը 553-ն են ընդունում մեզ հասած հնագույն բոլոր «Պատճէն տումարի» հեղինակները, որոնք տոմարագետներ են և լավատեղյակ հայկական տոմարական հաշվումների մեջ: Այսպես, օրինակ՝ ՀՊՁՄ-ի № 1999 ձեռագրում առաջարկվում է հայկական թվականը բրիտանականի վերածելու համար դումարել ո՛չ թե 551, այլ 552. «Եթէ կամիցիս գրեւի՛ ի ծննդենէ Քրիստոսի մինչև ուր ես՝ եթէ քանի ամ է, կալ ՇԼԲ (552), զհայ թուականն ի վերայ բեր և այն է (Թ. 22ա):

Եվ, վերջապես, վիճելի այս հարցը մեր կարծիքով վերջնական լուծում է ստանում Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի ՇԼԲ աղյուսակների միջոցով, որոնց հետ դժբախտաբար ծանոթ չեն եղել վերը հիշված հայագետներից և ոչ մեկը:

Շիրակացու ՇԼԲ աղյուսակի առաջին տարին սկսում է քրիստոնեական 553-ին: Այդ նույն տարում, ինչպես երևում է Շիրակացու ՇԼԲ աղյուսակից, վերագիրը եղել է երեք, հայտնությունը՝ արաց ամսի 30-ին, օրը՝ երկուշաբթի, գարնանային գիշերահավասարը եղել է ահկի ամսի 13-ին, լուսնի լրումը՝ մարերի 7-ին, ցերեկվա ժամը 8-ին, օրը՝ կիրակի: Այդ տարում դատիկը եղել է մարերի 14-ին: Հռոմեական հաշվով ՇԼԲ-ի առաջին տարում վերագիրը եղել է 30, հայտնությունը՝ հունվարի 6-ին, գարնանային գիշերահավասարը՝ մարտի 20-ին, լուսնի լրումը՝ ապրիլի 13-ին, դատիկը՝ ապրիլի 20-ին:

Հայկական հին կամ, ինչպես տոմարական ձեռագրում ասվում է, «Մեծի հայոց» թվականը շարժական էր. նա շորս տարին մեկ օրով առաջ էր շարժվում: Եթե 428—431 թվերին հայկական տարեմուտը դանվելիս է եղել օգոստոսի 11-ին, ապա հայկական մեծ թվականի սկզբնական տարում նա հասնում է հուլիսի 11-ին: Եվ այսպես առաջ ընթանալով, 1003—1006 թվերի ընթացքում մի տարվա մեջ երկու գարնանային հասարակավորություն է ընկնում, մեկը՝ հունվարի մեկին, իսկ մյուսը՝ գեկտեմբերի 31-ին: Եվ քանի որ հայկական տարեմուտը հայկական հին թվականության սկիզբն է համարվել, ապա մի եկամուտ տարի մտնում է հայ թվականության մեջ: Հավելյալ այդ տարվա մասին հանգամանորեն խոսել է միջնադարյան հայ ականավոր մատենագիր Հակոբ Արմեցին իր տոմարական մի աշխատության մեջ, որը գրել է Գեորգ ռաբունապետի պատվերով: Այս աշխատությունը ամփոփումն է հանդիսացել Հովհաննես Իմաստասերի տոմարական մի ընդարձակ աշխատության, այդ պատճառով էլ նրա մի հատվածը մենք հրատարակում ենք Հովհաննես Իմաստասերի տոմարական աշխատությունների հավելվածում:

1003 թվին հայկական գարնանամուտը մի տարի կրկնվելուց հետո տոմարական ողջ հաշիվները խտոնվում են իրար: Նախ՝ որ առաջ նահանջի տարիները միշտ լինում էին շորսի բաժանվող գույզ թվականներին՝ 4, 8, 12 և այլն, այժմ փոխվում են կենտ թվականների. այդ փոփոխությունից հետո



հայկական թվականով նահանջի առաջին տարին լինում է 457 թվին, այնուհետև՝ 461 թվին և այլն: Խառնվում են նաև վերագրերների, յոթներյակների և տոմարական մյուս բոլոր հաշիվները: Բայց ամենից անպատեհն այն էր, որ քրիստոնեական օրենքով զատիկը անպայման պիտի տոնվեր զարնանային գիշերահավասարից հետո, իսկ այժմ ընկնում է գիշերահավասարից առաջ: Ահա այս ավելադիր տարին է, որ հետագայում Հովհաննես Իմաստասերը իր ՇԼԲ աղյուսակը կազմելիս դեն է նետում և հայկական փոքր թվականը սկսում 1085-ից:

3. Բնչպես Անանիա Շիրակացու, այնպես և Հովհաննես Իմաստասերի ՇԼԲ աղյուսակները մեզ համար ունեն ս'չ միայն տեսական, այլ գործնական կարևոր նշանակություն:

Իմաստասերի ՇԼԲ աղյուսակներով հայկական թվականության հաշիվները ստուգելու ժամանակ պիտի նկատի ունենալ հետևյալը: Իմաստասերի ՇԼԲ-ի առաջին տարին՝ «ա»-ն, համապատասխանում է քրիստոնեական 1085 թվին, «բ»-ն՝ 1086-ին, «գ»-ն՝ 1087-ին և այլն: Այստեղ նկատի պիտի ունենալ, իհարկե, որ Իմաստասերի հաշվումներով հայկական տարեմուտը, այսինքն՝ նավասարդի 1-ը, օգոստոսի 11-ից է սկսվում, ուտի և հայկական 7 ամիսները փոխանցվում են հաջորդ տարին:

Հովհաննես Իմաստասերի ՇԼԲ աղյուսակները վերջացան 1616 թվին (Հովհաննեսագիր կամ մարտի թվականով 552-ին) և 1617-ին սկսվեց Ազարիա Զուղալեցու թվականը. Ազարիա Զուղալեցու թվականը դանելու համար նրա թվականի վրա պիտի գումարել 1616:

4. Մեր ձեռքի տակ ունենալով Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի ՇԼԲ աղյուսակները, որոնք ընդգրկում են 553 թվից մինչև 1616 թվը, մենք այժմ հնարավորություն ենք ունենում ստուգելու և ճշտելու պատմական բազմաթիվ անախրոնիզմներ: Յուրջ տալու համար՝ թե այդ աղյուսակները գործնական ի՛նչ նշանակություն ունեն, անհրաժեշտ ենք համարում մի քանի օրինակներ բերել մեր մատենագրությունից:

Բանասեր Գ. Հովսեփյանի «Հիշատակարանների ժողովածուի» մեջ հրատարակված Հալեպի Քառասուն Մանկանց եկեղեցու № 130 ձեռագրի գրչության ժամանակի մաշին ասված է, որ նա գրված է «Թվականիս հայոց ՈԶ, յամսեանն մայիսի Ա, որ է համարձման ար» (էջ 872): Այս թվականը ստուգելով Հովհաննես Իմաստասերի աղյուսակի հիման վրա, մենք գտնում ենք, որ հիշատակարանը գրված է 1231 թվին, քանի որ հայկական ՈԶ թվին (քրիստոնեական 1231-ին) զատիկը եղել է մարտի 23-ին, այդ հաշվով նրա 40-րդ օրը, այսինքն՝ համարձումը, կլինի մայիսի 1-ին:

Պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանի «14-րդ դարի հիշատակարանների» մեջ ՀՊՁՄ-ի № 7447 ձեռագրի հիշատակարանը գրվել է քրիստոնեական թվականի 1390-ին, իսկ հայկականը՝ ՊԼԷ թվականին «նահանջի ամի»: Իմաստասերի ՇԼԲ աղյուսակներից երևում է, որ նահանջ տարին եղել է 1388 թվին, ուրեմն վերև հիշված երկու թվականներից հիշտը՝ հայկականն է: Իսկ թե ինչո՞ւ հայկական թվականը քրիստոնեական թվականի համեմատությամբ երկու տարի տարբերություն է առլիս, այդ մասին խոսք կլինի № 25 տեքստի ծանոթագրության մեջ:

Լ. Խաչիկյանի կազմած հիշատակարանների նույն ժողովածուում հրա-

տարակված է ՀՊՁԲ-ի № 1980 ձեռագրի հիշատակարանը, ուր գրչության ժամանակի մասին ասված է. «Փուտականիս հայոց Պե, ի սեպտեմբեր 1, տանուէր՝ կշիւ» (էջ 593): Իմաստասերի աղյուսակներից երևում է, որ մոտիկ թվականների մեջ կշիւը տանուտեր է եղել 1391 թվին, ուրեմն՝ հայկական թվականին պիտի գումարել 551, ինչպես որ ճիշտ վարվել է կազմողը:

Լ. Խաչիկյանի կազմած «15-րդ դարի հիշատակարանների» առաջին հատորում հրատարակված է Կարապետ գրչի ընդօրինակած Շնորհալու «Յիտուս որդի» աշխատության շարժած հիշատակարանը, ուր գրիչը թվականի մասին հետևյալն է գրում.

«Ի յով հարչուր հայոց թվի,  
Եթանասուն և եթնեկի,  
Ի քսանվեց ամսո հոսի,  
Ի քսան և ինն հունվարի,  
Վհարեցաւ երգ սրբալի» (էջ 388):

Այստեղ հրատարակիչը կատարել է գրչական որոշ սղզում՝ բերված նախաձեռքին տողից «քսան և ինն» իջեցրել է տողատակ ծանոթություն, իսկ այն փոխարինել «ի տասն և իննը» բառերով: Ճիշտն այստեղ ընագրի «քսանն և ինն» է, որովհետև 1428 թվին, ըստ Իմաստասերի աղյուսակների վրա շարժական տոմարով կատարված նահանջ օրերի հաշվման, հայկական տարեմուտը եղել է նավասարդի 28-ին, այդ հաշվով հոսի 26-ը կհամապատասխանի ո՛չ թե հունվարի 19-ին, այլ 29-ին (Նավասարդի 30—28—3+26=29):

Հովհաննես Իմաստասերի ժամանակագրության մեջ, որը հրատարակել է պատմական գիտությունների թեկնածու Վ. Հակոբյանը, ծուղատիկի մասին կարգում ենք. «ՇԾ (1001) թուին՝ պատառումն դասկին» («Ժամանակագրություններ»), I հատոր, էջ (25): Իրականում, ըստ Իմաստասերի տոմարական աղյուսակների, ծուղատիկը եղել է ո՛չ թե 1001-ին, այլ 1002-ին:

Անանուն Սերաստացու Տարեգրության մեջ (որը հրատարակել է պատմ. գիտ. թեկնածու Վ. Հակոբյանը) երգնկալի երկրաշարժի թվականի մասին կարգում ենք. «Ի թվին 29 (1254) շարժ եղև երգնկալն և ի Սևասա յուտը կիրակէի ի ԻԸ (28) աճկի և ժև. (11) հոկտեմբերի օրն կիրակի («Ժամանակագրություններ»), II հատոր, էջ 141):

Հայկական ամսաթիվն այստեղ շարժական տոմարով է: 1254 թվի հոկտեմբերի 11-ին, ըստ Իմաստասերի տոմարական աղյուսակների, իրոք եղել է կիրակի. կատարում ենք հետևյալ հաշիվները. յոթներյակը 4-ն է + ամսաթիվը՝ հոկտեմբերի 11-ը + հոկտեմբերի կիսակը 0=15:7, մնացորդ 1= կիրակի:

Կարելի է նման բաղձաթիվ այլ փաստեր բերել, սակայն բերված մի քանի օրինակները բավական են պատկերացնելու Իմաստասերի ՇԼԹ աղյուսակի գործնական նշանակությունը հայկական տարեթիվերի և ամսաթիվերի հաշվելու գործում:



12. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ «ՊԵՏՃԷՆ ՏՈՄԱՐԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՔ

Պատճեն տուժարի բոս հայերէն Քուռյ.ամիւր	Կրկնակը	Կիսակը	Տանուաւէրը տա- բոյ այս է	Եւ կրկնակըն	Մոտրակը զոր դաւ- տիկը այս են
Նաւասարդի	շկա	շկա	Նոյ	շկա	
Հասի	բ	Ը	Տուլ	բ	Կրկնակ
Սակճի	դ	ա	Եկաւոր	դ	
Տրէ	դ	աԸ	Նեղղեակն	դ	լոյսնթազ
Քաղոց	ա	բ	Առիւծ	ա	
Աքոց	դ	բԸ	Կոյս	դ	հրատ
Իհեկկի	ե	դ	Կշեւ	ե	արեղակն
Արեղ	շկա	դԸ	Կարիճ	շկա	նճ
Ահկի	բ	դ	Աղեղնաւոր	բ	լուսարեբ
Մարեբի	դ	դԸ	Այծեղջիւր	դ	
Մարգոց	դ	ե	Ջրհոյս	դ	փայլածաւ
Հրտարից	ա	եԸ	Չուկն	ա	լուսին
Նեւիկայ	դ	դ	Մոտր	դ	

2բ // Կրկնակը ամսոց այսպէս արա. կալ զնաւասարդի ամիսն և երթ է (7) է (7), մնա Բ (2), այն կրկնակ է հոռի ամսոյ: [Կ]ալ զհոռի ամիսն և զիր կրկնակն և երթ էէ, մնա Դ (4), [ա]ն կրկնակ է սահմի ամսոյ: Նոյնպէս և զայլսն:

Կիսակ ամսոց այսպէս արա հայոցն. կալ զնաւասարդն և երթ ԻԹԸ (29 1/2) և մնա Ը (1/2), այն կրկնակ է հոռոյ: [Կ]ալ զհոռի և զիր կիսակսն և երթ ԻԹԸ (29 1/2) և մնա Ա (1), այն կիսակ է սահմոյ: Նոյնպէս և զայլսն իմասցիս:

Տանուաւէր տարոյ այսպէս արա, կալ զթվականն զմեծ, է ի վերա ած և երթ ԺԲ (12) ԺԲ (12), որ մնա՝ զսկիզբն ի խոյն արա և տուր կենդանակիրպան Ա Ա (մի մի), ուր թիւն սպառի, այն է տանուաւէր: Կամ Գ (3) ած և զսկիսրն յառիւծէն արա: Գարձեալ կալ զփոքր թվականն՝ թիւ մի պակաս, և երթ ԺԲ (12) ԺԲ (12), որ մնա՝ սկիսրն ի խոյն արա, և այն է:

Յաղամայի ծնունդն Վրիտասի ԲՃՂԸ (5198) ամ է:

Չամս ծնընդհան Քրիտոսի այսպէս արա. կալ ՇԾԳ (553) ամ, զհայ թուականն ի վերա բեր և այն է:

3ա // Թուական այսպէս արա. կալ թիւ մի յարանց ամսոյ, թուա մինչև ցյայտնութիւնն, շորեքպատկեա և այն է: Թէ յառաջին ամին ես՝ Գ (3) երթ ի բաց, յերկրորդին՝ Բ (2), յերրորդին՝ Ա (1), ի շորրորդին լիով կալ՝ նահանջ է:

Ի մեծ թվականէն ՇԼԳ (533) ի բաց երթ՝ փոքր է:

Դարձեալ կալ յերեքասանէն մարդաց ամսոյ, թուա մինչև ցյայտնութիւնն, շորեքպատկեա՝ նոր թվական է: Թէ յառաջին ամին ես՝ Գ (3) երթ, եթէ յերկրորդին՝ Բ (2):

Կալ զթվականն և բաժանեա ի Գ (4), մին մասն նահանջ է:

Դարձեալ կալ զթուականն և երթ ժԹ (19) ժԹ (19), որչափ ժԹ (19) է, այնքան իննեւասաներեակ է:

Վերադիր այսպէս արա. կալ զթուականն և տես թէ քանի նահանջ կա ի նմա կամ քանի իննեւասաներեակ, ապա բազմապատիկ արա զԱ (1) ժԱ (11), ըստ նահանջիցն պակասեցո, ըստ իննեւասաներեակացն յաւել, Ը (8) թիւ հանապաղ երթ և զայն լ (30) լ (30), որ մնա՝ վերադիր է:

3բ Եւ եթէ նոր թուականն կամիցիս առ/նել, հանապաղորդն երթ ԻԱ (21):

Եւթներեակ այսպէս [արա]. կալ զթուականն, Գ (3) ի վերայ ած կամ Դ (4) ի բաց երթ և զայն երթ է (7) է (7), որ մնա՝ ևթներեակ է:

Ամսամուտ այսպէս արա. կալ զթիւ մի, զկրկնակ նորին և զեթներեակ տարոյն և երթ է (7) է (7), որ մնա՝ այն է. թէ մի մնա՝ կիրակի է, թէ Բ (2)՝ երկուշաբթ, թէ Գ (3)՝ երեք շաբթ:

Արագիւտ այսպէս արա. կալ զաւուրս ամսոյն, զկրկնակ նորին, և զեթներեակ տարոյն և երթ լ (30) լ (30), որ ի խոնարհ մնա՝ այն է. թէ Ա (1) մնայ՝ կիրակի է, թէ Բ (2)՝ երկու շաբթ:

Մնունդ լուսնի այսպէս արա. կալ հանապաղ լ (30), զվերագիրն և զկիրակսն երթ, որ մնա, յայնքան աւուրս ամսոյն է:

Աւուրք լուսնի այսպէս արա. կալ զաւուրս ամսոյն, զվերագիր տարոյն և զկէսն ի նաւասարդէ, և երթ լ (30) լ (30), որ խոնարհ մնա, [աւուր լուսնի է]:

Լրումն լուսնի այսպէս. կալ նՅ, զվերագիրն և զկիրակսն երթ, որ մնա, յայնքան աւուրս ամսոյն է:

4բ // Գարնանամուտ այսպէս արա. կալ ժԳ (13) և զնահանջն տուր ահկի ամսոյ յառաջ, ուր թիւն յանկի, անդ է:

Դարձեալ կալ ԻԱ (21) և զնահանջն որ թուականին, տուր նաւասարդի ամսոյ և դտանես:

Ամսոնամուտ այսպէս. կալ ժԴ (14) և զնահանջն, տուր հրոտից ամսոյ կամ ԻԲ (22) և նոր նահանջն տուր տրէ ամսոյ, ուր սպառի, ամսոնամուտ է:



Աշնանամուտ այսպէս. կալ Ժ (10) և զնահանջն, տուր սահմի ամսոյ, կամ ԻԳ (13) և զնոր նահանջն տուր մեհեկի ամսոյ, ուր աւարտի, աշնանամուտ է:

Ձմեռնամուտ այսպէս. կալ Ժա (11) և զնահանջն տուր արանց ամսոյ, կամ ԻԴ և զնոր նահանջն տուր մարերի ամսոյ, ուր վաղձանի թիւն, ձմեռնամուտ է:

Յիսնակամուտ այսպէս. կալ ԺԱ (11), և զնահանջն տուր քաղոց ամսոյ կամ ԻԴ (24) և զնոր նահանջն տուր ահկի ամսոյ և դաանես:

4բ // Յայանութիւն այսպէս. կալ զնահանջն, տուր մեհեկի ամսոյ կամ ԺԳ (13) և զնոր նահանջն տուր մարդաց ամսոյ և գտանես:

Տեառնդառաջ այսպէս [արա]. կալ զյայտնութիւնն, Թ (9) ի վերայ ած, տուր յաջորդ ամսոյն և անդ է:

Առաջաւորաց բարեկենդան այսպէս [արա]. կալ հանապազ Լ (30) զվերադիրն, և զաւելիսն երթ, զմնացեալն արագիւտ արա և ի կիրակէն տուր, և թէ կիրակէի հանդիպի՝ ի միւս կիրակէն և այն է:

Առաջաւորաց բարեկենդանին ԻԱ (21) ած, բուն բարեկենդան է:

Լրումն զատկի այսպէս [արա]. կալ ԽԶ (46), զվերադիրն երթ, թէ քան զհասարակածն աւելի է, ի նմին ամսեան է, ապա թէ պակաս է, յառաջիկա ամիսն ելանէ, արագիւտ արա և ի կիրակէն տուր, զատիկ է. և թէ կիրակէի հանդիպի՝ ի միւս կիրակէն տուր:

Ձատկի լրումն այսպէս արա. կալ Խ (40), զհին վերադիրն և զաւելիսն երթ, որ մնա, արագիւտ արա և ի կիրակէն տուր:

5ա // Կալ զզատիկն, Թ (9) ի վերայ ած՝ համբարձու՛մն է, ԺԹ (19) ած՝ պենդակոստ է, Ը (8) ած, և տուր ի շարրորդ ամիսն՝ վարդավառ է:

Աստուածածին այսպէս արա. կալ զնահանջն, Զ (6) ի վերայ ած, տուր հոռի ամսոյ կամ ԺԹ (19), և զնոր նահանջն տուր արանց ամսոյ և գտանես:

Սուրբ խաչ այսպէս արա. կալ զնահանջն, Զ (6) ի վերայ ած, տուր սահմի ամսոյ, կամ ԺԹ (19) և զնոր նահանջն տուր մեհեկի ամսոյ՝ և այն է:

Եթէ կամիցիս զիտել՝ եթէ արեգակ յորում կենդանակերպի է, կալ ի զարնանային հասարակածէն մինչ ուր ես Բ (2) թուով պակաս և տուր կենդանակերպացն Լ (30) Լ (30) սկսեալ ի խոյէն, ուր սպառի թիւն, յայնմ կենդանակերպուջ է:

5բ Եթէ կամիցիս զիտել՝ եթէ լուսինն յորում կենդանակերպի է, կալ քանիք լուսինն, երկոտասանապատկեա, և լից զթիւ կենդանատեսակին յորում արեգակն է և անդ յառաջ տաց||ես այլոց կենդանակերպացն Լ (30) Լ (30), ուր սպառի թիւն, անդ է:

Ամենայն կենդանատեսակք, ի փոխիլ արեգական Ե (5) ար յառաջ և Ե (5) ար յետոյ ոչ երևին: Արեգակն Լ (30) ար կայ ի կենդանակերպւոջն և լուսինն Լ (30) արն զամենայն կերպսն վճարէ:

Շաւիղ այսպէս արա. կալ զքանիք լուսինն, երկոտասանապատկեա, և տուր յարէն յառաջ ամսոյցն, և ասա այս անուն ամսոյ, որոյ այսչափ ինչ էր ընդ որ յայնմ ատուր արեգակն երթեալ է, յայսմ գիշերի լուսինն ընդ նոյն շաւիղ երթա. ի տեղւոջն կենդանապեսակ արա և արագիրա:

Դարձեալ կալ զնոյն քանիք շաղւին և ասա այսչափ մասն հետի է լուսինն արեգակէն, վասն զի յամենայն ատուր երկոտասան մասն հեռանայ լուսինն արեգակէն և ի ԺԵ (15) արն ՃԶ (180) մասն, և ասա զկնի լրմանն յամենայն ատուր երկոտասան մասն մերձ զայ և ի լրմանէն յառաջ խաւարի:

6ա Եթէ կամիցիր գիտել՝ եթէ լուսինն // քանի ժամ լոյս տա ի գիշերի կամ քանի ընդ խաւար հետեի, կալ զատուրս իւր, շորեպատեա, Ե (5) Ե (5) թիւ ժամս արա, և զմնացեալն կրկնեա, և հան զհինգն ի կէս ժամ և զաւելորդն ի մասունս կիսամասու, բայց յընծա(յ)մանէն զլոյսն գիր առաջի, իսկ ի լրմանէն՝ զխաւարն:

Եթէ կամիցես գիտել՝ եթէ արեգակն քանի՞ աշտիճան բարձրացեալ է կամ ի խոնարհեալ, զբարձրանալն յայրէն արա և յայժեղջերէն, զխոնարհիլն ի քէէն արա և ի խեցգեանոյն. կալ զիրաքանչիւր թիւ, երկուհարիւրապատկեա և տուր ամենայն զորս հազար հազար, քանզի ԼԶԹ (360,000) աշտիճան բարձրանա և նոյնքան խոնարհի:

Եթէ կամիցես գիտել՝ եթէ արեգակն յորում կիրտի է, կալ ԲԶԶԶ (5976), զհայ թուականն ի վերա բեր, և երթ 345 (365) 345 (365), որ մնայ՝ ՂԱ (91) և Գ (3) ժամ ՂԱ (91) և Գ (3) ժամ ի կէսան տուր: Եւ կէտքն են այսոքիկ.

Կէտ երկնամիջակ՝ գարուն:

6բ //Կէտ ժամագիտակ՝ ամառն:

Կէտ եթերական՝ աշուն:

Կէտ սուզական՝ ձմեռն:

Ձանկաստեղն այսպէս արա. կալ զնա[հ]անջն, Ը (8) ի վերայ ած, տուր մարերի ամսոյ, զաւելիսն հան, ուր թիւն յանգի, անդ է:

Դարձեալ կալ զնահանջն, ԺԸ (18) ի վերայ բեր, տուր մարգաց ամսոյ, զաւելիսն հան, ուր սպառի թիւն, անդ է կէստեղն:

Վերագիրով վերագիրն այսպէս արա. կալ զանցեալ վերագիրն, ԺԱ (11) ի վերայ ած, ի նահանջի ամի Ժ (10) ած, յիննտասներեկի ամին ԺԲ (12) ած, ի նահանջի և յիննտասներեկի ամի ԺԱ (11) ած:

Լրմամբ լրումն այսպէս արա. կալ զանցեալ լրումն, ԺԹ (19) ի վերայ ած կամ ԺԱ (11) ի բաց երթ, որ մնա՝ լրումն է:

Զխաւարումն լուսինն այսպէս. կալ զտէրունեան լրումն և համարեա ՃՀէ (177) յառաջ կոյս ատուրս, և լուսինն խաւարի, եթէ ի տուրնջեան և թէ գիշերի:



7ա // Դարձեալ կալ ՏՂէ (177) և տուր յայգմ խաւարմանէ յա-  
ռաջ և գտանես: Ի խաւարմանէ ի խաւարումն համարեա ՃՂէ  
(177) լինի:

Բովայէ ըստ հայ ամսոյ այսպէս արա, որով ընծայումն լու-  
նին և գիւտ ժամուց և մասանց. կալ զաւուրս ամսոյն, յորում  
ընծայումն է, և զամենայն աւուրսն ի յայտնութենէն ի վերա բեր և  
զհնգեակ ամին և Ե (5) թիւ հանապազ, և երթ վաթսուն վաթսուն,  
որբան զվաթսունն ի խոնարհ մնա՝ բովայէ է: Կալ զբովայէն և  
կրկնեա, թէ զվաթսունին ելանէ, վաթսուն տուրնջեան տուր և  
գտանես ի գիշերի, և կամ գիշերոյ տուր և գտանես ի տուրնջեա:

Իսկ աւրագիւտ այսպէս արա լուսնի. կալ զբովայէն և ած  
ի վերայ զվեցեակն և զթիւ վաթսունիցն և կարես գտանել զքանիս  
ժամուցն և զթիւս մասանցն: Բայց ըստ փոփոխմանն հանցես  
7բ զժաման յառ աւելուցն և ի նուազելն տուրնջեան և յգիշերոյ, քանզի  
ընդ տիւ և ընդ գիշեր ԻԴ (24) ժամք են միանգամայն և հաւասարին  
միմեանց գարնանային և աշնանային ժամանակի: Եւ անհաւասարք  
զոն ըստ ամառան և ձմերան յեղանակի, աւր ըստ աւուր մա-  
սանցն թուովք և ըստ ամսոյն ժամուքն, վասն որոյ գիտել պարտ  
է զանումն տուրնջեան և զնուաստանալ գիշերոյն, սկսեալ ի ձմե-  
րանն յեղանակէ և յայծեղջիւր կենդանակերպէն մինչև յամառ-  
նայինն յեղանակ և ի խեցգետին կենդանատեսակ, յորմէ յաջ կոչս  
ի խոնարհի անգրա[ղա]րձ ի արեգակնոյն քանեաւք թուովք ըստ աւուր  
և ըստ ամսոց, յորմէ հետէ մինչ ի նոյն տեղի նուաստանա աւր  
և զարգանա գիշեր. և այս է փոփոխմանն իրք: Իսկ թէ կամիցիս  
գիտել վասն երեսնամասնեայ ժամուց լուսնի, կալ զաւրս լուսնի և  
և արա զժամն Լ (30) մասն, և սոյնչափ լոյս տա գիշերոյն:

8ա Առաջի աւրն կալ ԻԴ (24) և գտանի Զ (6) պլլակաս ի ժամէ,  
Բ (2) աւրն ԽԸ (48) արա զերեսունինն ժամ մի և զԺէ (17) կի-  
սաժամ և ալլ Գ (3) մասն Գ (3) աւրն ԼԲ (72) արա զԿԲ (62)  
ժամ և մնա ԺԲ (12) մասն: Դն ՂԶ (96) որ է Գ (3) ժամք և  
Զ (6) մասն, հինգն ՇԻ (120), որ լինի չորս ժամ: Այսպէս արա  
մինչև յաւր լրմանն, բայց յընծայմանէն զլոյսն գիր առաջի, իսկ ի  
լրմանէն՝ զխաւարն:

Այս են ընթացք աւուր միոյ ընթացից լուսնի: Այս են ժամք  
ամսոյ միոյ ընթացից լուսնի: Աւրն մասունք 3ՄԴ (354)՝ Զ (6) պա-  
կաս քան զարեգակն: Ամիսն ժամք՝ 3ՄԴ (354), Զ (6) պակաս, քան  
զարեգակն: Տարին աւուրք 3ՄԴ (354), Զ (6) պակաս, քան զա-  
րեգակն:

Գոն յայլ աւրինակ ալլատարաց պատճենագրութիւնք, բայց ուղիղ է և պարզ և այս է հաւանելի: Բայց ի նահանջական արարուածոցն, զոր յազագս զկարծիս ոմանց շահելոյ և հաւանութեամբ մտաց զրեցի:

Պատճառ տուժարի բոս հաստոց. ամիսքն է	Քանիք	Կրկնակք	Մեծ բովս	Միջին բովս	Բարձր բովս	Կիսակք
Յունուար	լա	չկ	ժա	գ	դ	չկ
Փետրուար	իբ	դ	ժբ	ե	ե	աԸ
Մարտ	լա	դ	ժ	ժբ	դ	չկ
Ապրիլ	լ	դ	ժա	ժա	դ	աԸ
Մայիս	լա	ա	ժա	ժա	դ	բ
Յունիս	լ	դ	է	ժ	չկ	դԸ
Յուլիս	լա	դ	է	ժ	չկ	դ
Աւգոստոս	լա	բ	բ	թ	ա	եԸ
Սեպտեմբեր	լ	ե	թ	բ	բ	է
Հոկտեմբեր	լա	չկ	թ	բ	բ	էԸ
Նոյեմբեր	լ	դ	ժ	է	դ	թ
Գեկտեմբեր	լա	ե	ժ	է	դ	թԸ

9ա // Յաղագս կրկն[ակ]աց. կալ զյունուարի ամիս ԼԱ. (31), երթ է (7) է (7), որ մնայ՝ կրկնակ է փետրուարի ամսոյ: Կալ փետրուարի ամիս իւր կրկնակովն և երթ է (7) է (7), որ մնայ՝ կրկնակ է մարտոյ: Կալ զմարտի ամիս իւր կրկնակովն և երթ է (7) է (7), որ մնայ՝ կրկնակ է ապրիլի:

Յաղագս մեծ յարակայից. յառաջին թուականին հայոց յունուարի ամսոյ է (7) մուտ էր մեհեկի ամսոյ, 2 (6)՝ այն, որ յառաջն էր յունուարի և Ե (5) աւելիքն եղև ԺԱ. (11), զոր կոչեցին յարակայ յունուարոյ: Կալ զյունուարի իւր յարակովն, զերեսուն երթ, որ մնայ՝ յարակայ է փետրուարոյ: Կալ զփետրուար իւր յարակովն, զերեսուն երթ, որ մնայ՝ յարակա է մարտի ամսոյ, բայց զմայիսն աւելեալքն երթ. ըստ այսմ են և այլ[ի]քն:

9բ Յաղագս միջնայարակայիցն: Որպէս ասացաւ ի սկզբան թուակ(ան)ին հայոց՝ յեթանոս յունուարի ամսոյ զիսլ[ի]ցաւ ամսամուտն մեհեկի ամսոյ, 2 (6) աւր աւագ էր յունուարի, և վասն այնորիկ ասէ զյարակայն յունուարոյ 2 (6) և ի փետրուարի ի 2 (6) եղև կազանդ արեգ ամսոյ և զԵ (5) յարակայն ասեն, փետրուարի, նոյն և դու ասա: Իսկ ի մարտի Բ. (8) մուտ ամսոյն ահկի է (7), զի յառաջ էր և Ե (5) աւելիքն, որ լինի յարակա ամսոյն մարտի ԺԲ. (12) և այնպիսի կարգ անկեալ մինչև ցղեկտեմբերի ամիս, զյաւելուած ամսոցն և զաւելիսն համազուգեալ արտայայտէ զյարակա իւրաքանչիւր:

Յաղագս փոքր յարակայիցն: Այսոքիկ են պատճէն բանիս ի մեծ յարակայն. զեոթ ի բաց առ, որ մնայ՝ կոչի փոքր յարակայ, որով գտցես զուզաւորութիւն ազգացն:

Յաղագս կիսակացն: Յունուարի ամիս կիսակ ոչ ունի, որ-

10ա պէս ոչ կրկնակ, վասնզի սկիզբն է ամսոյն: Կալ դշոնուարի ԼԱ (31) զԻՅՇ (29<sup>1/2</sup>) // գնայ, որ մնա՝ կիսակ է փետրուարի ամսոյ: Կալ զփետրուար իւր կիսակովն ԻՅՇ (29<sup>1/2</sup>) գնա, կիսակ է մարտի ամսոյ: Կալ զմարտի ամիս իւր կիսակովն, զոր ոչ ոնի, բսան և ինն ու կէս գնայ, որ մնայ՝ կիսակ է ապրիլի, բսա ալսմ արինակի և այլքն:

Ջուգաւորութիւն հայոց ընդ հոռոմի ալսպէս արա. կալ զաւուրս հայ ամսոյ, և թէ շիցէ բաւական զանցեալ ամիսն՝ ի վերայ բեր, զհայ հասարակածն և զմեծ յարակա հոռոմին աւելեալքն հանդերձ երթ, որ մնայ՝ աւուրք են հոռոմի ամսոյ:

Դարձեալ կալ զաւուրս հոռոմի ամսոյ, զհայ հասարակածն և զմեծ յարակա հոռոմին աւելեալքն հանդերձ ի վերայ բեր՝ աւուրք են հայ ամսոյ, բայց ի մարտի, և յապրիլի և ի մայիս զաւելիսն մի՛ ի բաց երթար և մի՛ ի վերայ բերեր:

10բ Այլ զուգաւորութիւն. կալ զաւուրս հայ ամսոյ, զմիջնայարակա հոռոմի ի վերայ բեր, զյայտնութիւնն հան՝ աւուրք են հոռոմի ամսոյ:

Դարձեալ կալ զաւուրս հոռոմի ամսոյ, զյայտնութիւնն ի վերայ բեր, զմիջնայարակայն ի բաց երթ՝ աւուրք են հայ ամսոյ:

Այլ զուգաւորութիւն. կալ զաւուրս հայ ամսոյ, զամսանահանջն և զփոքր յարակա հոռոմին ի բաց հան, որ մնա՝ աւուրք են հոռոմի ամսոյ: Բայց յունիսի ամսոյ մինչև ի մարտի զաւելիսն ի բաց առ ի հայտն:

Դարձեալ կալ զաւուրս հոռոմի ամսոյ, զամսանահանջն և զփոքր յարակա հոռոմին ի վերայ բեր, աւուրք են հայ ամսոյ:

Թուական հոռոմի ալսպէս արա. կալ չեթն ամէն Փիլիպոսի կայսեր մինչև յերևոտն և շորս ամն Յուստիանոսի կայսեր և ի ԻՊն (24) Եսաւրովոս պարսից արքայի, որ լինին ամբ 3Գ (304), զհայ // Թուականն վերայ բեր և երթ զըրջանն ՇԼԳ (533), որ մնայ՝ Թուական է հոռոմի:

Կալ զհոռոմի Թուականն, ՄԻԹ (229) ի վերայ բեր, Թուական է հայոց: Կալ զհայ Թուականն, ՄԻԹ (229) ի բաց երթ, Թուական է հոռոմի:

Վերադիր հոռոմի եթէ կամիցես առնել, կալ զԹուական հոռոմին և երթ ԺԹ (19) ԺԹ (19), զմնացեալն մետասանապատկեա, Թ (9) Թիւ հանապաղ երթ և զայլն երթ Լ (30) Լ (30), որ մնայ՝ վերադիր է: Բայց ի մարտի ԻԵԻն (25-ին), որ է նահանջից նահանջ, Ը (8) երթ զհանապաղորդն:

Դարձեալ կալ զհինգեակն և զվեցեակն՝ որ ի շորիցն ապրիլի, և ած Թիւ Ա (1) և երթ Լ (30) Լ (30), որ մնայ՝ վերադիր է:

Նից տարոյն պատկեր աւուրն եոթներեակ է ամենայն ազգաց և քանիք լուանին վերադիր:

11բ Իսկ ի նահանջի ամի կրկին լինի եոթներեակ հոռոմին, [մին] մտանէ յունու/արի մինչև յելսն փետրուարոյ, և մին ի մարտի մինչև յելս տարոյն և փետրուարի ամիս ԻԹ (29), լինի ի նահանջի



ամի, վասնզի սոյն ամի հասարակածն հայոցն յառաջ խաղա և զմին ի հայ վերադրացն պակասեցուցանէ և զփետրուարի ամիս ԻԹ (29) առնէ և զեռօրեանակ հոռոմին կրկնապատիկ աճեցուցանէ:

Եւթներեակ այսպէս արա. կալ զհոռոմ թուականն և երթ ԻԸ (28) ԻԸ (28), որքան զքսան և ինն ի խոնարհ մնայ, չորիցն չորիցն մի մի յաւել թիւ, և երթ եոթն եոթն, որ մնայ՝ եոթներեակ է:

Յորժամ զհոռոմի զչորեքտասաներորդն լուանոյ զատկաց կամիցիս գիտել, կալ ԽԶ (46), զվերադիրն երթ, եթէ զքսանինն ելանէ՝ ի մարտի լինի, և եթէ ի խոնարհ մնայ՝ յապրիելի. և Գ (3) լրմունք ոչ միաբանեն ընդ այլ լրմանցն: Յորժամ երթաս զվերադիրն, Ա (1) թիւ այլ երթ ընդ նոսա. և որք ոչ միաբանին, են այստօրիկ՝ ապրիլի ժէ (17), ապրիլի ժԸ (18), ապրիլի ժԵ (15):

12ա // Կիսաւք լուսին յորժամ առնես, կալ զատուրս հոռոմի ամսոյ, զվերադիր նորին, և զկէսան ի յունուարի ամսոյ, և երթ ԻԹԸ (29<sup>1/2</sup>) ԻԹԸ (29<sup>1/2</sup>), որ մնայ՝ ատուրք է լուսնի:

Ամսանահանջ այսպէս արա. կալ զգարնանային հասարակածն, ԺԲ (12) ի վերայ ած և թէ սխալ է՝ է (7), թէ զերեսնինն ելանէ զերեսուն երթ, որ մնայ, այն է:

Ակիզքն հնգեկի և վեցեկի յապրիլի չորիցն արա, տուր մինչև ցլրումն տարոյն հինգեկինեա՝ հինգեակ է, վեցեկինեա՝ վեցեակ է:

Բոպէիւ լուսին յորժամ առնես, ժողովեա յունուարոյ ամսամտէն մինչև ուր ես, և ած ի վերայ զհինգեակին, և երթ վաթսուն վաթսուն, որքան զվաթսուն ի խոնարհ մնայ, բովալ է: Կալ զբոպէն և զթիւ վաթսունիցն ի վերայ, և ած զվեցեակին և երթ ԻԹԸ (29<sup>1/2</sup>) ԻԹԸ (29<sup>1/2</sup>) կամ Է (30) Է (30), որ մնայ՝ ատուրք են լուսնոյ:

12բ Եթէ կամիցես զլրումն իմանալ՝ եթէ տուրնջեան է թէ ի գիշերի, զբովալէ ատուրն կրկնեա, եթէ զվաթսունինն ելանէ // զվաթսուն տուրնջեան տուր և ի գիշերի գտանես, ապա թէ քան զվաթսուն պակաս է, ի տուրնջեան է, Ե (5) Ե (5) թիւ ժամս արա և գտանես եթէ յորում ժամու է, կամ ի քանիերորդ մասին: Եւ եթէ զծնունդն կամիցիս գիտել, նախ գիշերոյ տուր զվաթսուն, այլ ըստ փոփոխմանն հանցիս զժաման յառաւելուլն և ի պակասելն ըստ տուրնջեան և գիշերոյ:

Արեգակն կատարէ զտարին չորիւք տարբերութեամբ՝ ամառնային և ձմեռնային եղանակաւք, զարնանային և աշնանային հասարակաւորութեամբ, որ լինի միահամուռ ատուրք ՅԿԵ (365) և ժամք Գ (3). և ժողովին Գ (3) ժամքն ի Գ (4) մասն և լինի արմի, անզանելով արն այն ի ներքս թիւ Ա (1), ի հայ վերադրացն պակասեցուցանէ, և զփետրուարի ամիս ԻԹ (29) առնէ և զեթերեակ հոռոմին կրկնապատիկ աճեցուցանէ:

13ա Գարնանային յեղանակն մարտի Ի (26) առնէ սկիզբն, ունի ատուրս ՂԱ (91) և // ժամս Գ և Գ կենդանակերպս՝ խոյ, ցուլ, եկաւորի: Տիւն ունի ժամս ԺԲ (12), գիշերն ժամս ԺԲ (12): Տիւն ունի մասունս ՅԿ (360), գիշերն՝ մասունս ՅԿ (360):

Ամառնային յեղանակն յունիսի ԺԹ (19) առնէ սկիզբն: Ունի Գ (3) կենդանակերպս՝ խեցգետին, առիծ, կոյս. և պարունակէ յինքեան աուրս ՂԱ (91) և ժամս Գ (3): Տիւն ունի ժամս ԺԵ (15), գիշերն ժամս Թ (9), տիւն մասունս ՆԾ (450), գիշերն՝ մասունս ՄՀ (270):

Աշնանային յեղանակն սեպտեմբերի ԺԸ (18) առնէ սկիզբն. ունի Գ (3) կենդանակերպս՝ կշիռ, կարիճ, աղեղնատը. և ժողովէ յինքեան աուրս ՂԱ (91) և ժամս Գ (3): Տիւն ունի ժամս ԺԲ (12): Տիւն ունի մասունս 3Կ (360): Գիշերն ունի ժամս ԺԲ (12): Գիշերն ունի մասունս 3Կ (360):

13բ Չմեռնային յեղանակն դեկտեմբեր ԺԸ (18) առնէ սկիզբն: Ունի երիս կենդանակերպս՝ այծեղջիւր, ջրհոս և ձուկն: Տիւն ունի ժամս Թ (9), գիշերն ժամ ԺԵ (15): || Տիւն ունի մասունս ՄՀ (270), գիշերն՝ մասունս ՆԾ (450) և պարգակէ յինքեան աուրս ՂԲ (92) գի Գ (3) Գ (3) ժամք յեղանակացն ժողովեալ ի տարոջն մտանէ ի ձմեռային յեղանակն: Իսկ ձմեռային յեղանակն ի նահանջի ամի ՂԳ (93) ար լինի, զի Գ (4) ամացն Գ (3) Գ (3) ժամքն որ յարեգակնէն ժողովեալ լինի ար եկամուտ և այն է որ յառաջ շարժէ զհասարակածն հայոյ:

Լուսինն ընթանայ ի տարին աուրս 3ԾԳ (354)՝ մետասան ար պակաս յարեգակնէ և այն է, որ կոչի վերագիր լուսնի և նա է հինգեակ և վեցեակ. հնգեակն ար արարչութեանն, իսկ վեցեակն կէսք լուսնի. և կէսքն ժողովեալ ի տարոջն լինին աւարք վեց և նա է վեցեակ:

14ա Բարեկենդան այսպէս [արա]. կալ զզատիկն, տաս ի վերա ած՝ բարեկենդան է: Թէ բազմանա թիւն քան զերեսուն՝ եթէ ի մարտի ամսեան և, զատիկն հան ի բաց յուն//ուարի, ապա թէ յապրիլի լինի զատիկն, և քան զԺԹ (19) յառաջ անցանէ, հան ի բաց զփետրուարի և գտանես ի մարտի: Իսկ ի նահանջի ամի[ն] ԺԱ (11) թիւ ած ի վերայ զատիկն, և զփետրուարի ԻԹ (29) հան ի բաց:

Յորժամ ըստ յունաց տաւնախմբութեանն՝ զպապանձումն Զաքարիայի, և զյղութիւնն Եղիսաբեթի, և զաւետիսն, և զծնունդն, և զմկրտութիւնն կամիցես զիտել, այսպէս արա. ի սեպտեմբերի ԻԷ (27)՝ զպապանձումն Զաքարիայի, և ի նմին աուրս՝ զյղութիւնն Եղիսաբեթի առնեն: Եւ անտի մինչև ի մարտի ԻԾ (25) համարեն 2 (6) ամիս: Եւ անդ ասեն զաւետարանումն Գաբրիելի առ կոյսն Մարիամ: Եւ ի մարտի ԻԾն (25) մինչև ի դեկտեմբերի ԻԾն (25) համարեն Թ (9) ամիս և Ե (5) ար: Եւ անդ ասեն զծնունդն Քրիստոսի: Եւ ի փետրուարի Բ (2) գտեառնընդառաջ կատարեն և բազում անգամ ջանան զար ծնընդեանն ի հինգ շաբաթի ածել և ոչ կարեն և ոչ զաւետիսն չորեքշաբաթի:

14բ || Այլ մեզ այսպէս իմանալի է. ի թշրին ի Ա. (1) նուիրեալ ար սուրբ կոչեացի, որ է սեպտեմբեր ԺԸ (18) և թշրին ի տասն միշտ քառութիւն, յորում մտանէր քահանայապետն ի սրբութիւն

սրբութեանցն, որ է պապանձումն Զաքարիայի և լինի սեպտեմբերի Իէ (27): Իսկ թշրինի ժնն (15-ն)՝ տան տաղաւարահարացն, որ լինի հոկտեմբեր Բ (2) և թշրինի ԻԲ (22) տանիցն կատարումն, որ լինի հոկտեմբեր Թ (9):

Արդ՝ աստի մինչև ի նիսանի ժէ (17) և յապրիլի է (7) կատարի Զ (6) ամիս, յորում առաքեցաւ Գարբիէլ առ կոյսն Մարիամ յաւոր շորեքշարաթի. և աստի մինչև ի տրեթի ԻԱ (21) և յունուար Զ (6) կատարի Թ (9) ամիս և հինգ ար:

Աստ ծնեալ յայտնի ի բանն աստուած յաւոր հինգշարաթուղ: Եւ ի փետրուարի ժԳ (14) տեառնընդոտաչն կատարի: 15ա նոյեմբերի Զ (6) յիսնակամուտ է հանապազ ըստ յունական թուոյ, և ի ժ (10) վերյալ ամ՝ սուրբ Պորզ է հանապազ: Իսկ ըստ հայտմս՝ ի ժԸ (18) յիսնակամուտ է հանապազ:

Ի մարտի ժէ (17) ասաց աստուած եղիցի լոյս և եղև լոյս, և ի Ի (20)՝ հասարակած և ի ԻԲ (22)՝ մարդոյն լինելութիւնն և նիսան ամսամուտ և արեգակն ի խոյն եմուտ և արն էր ուրբաթ հոթնեքեակ հոռոմին Բ (2), երբանցոյն Ե (5), որ ցուցանէ զար արորչութեանն յաւոր կիրակէի:

Յորժամ կամիցիս դիտել զլրումն ազգաց, ի մարտի լինելով լրմանն, Գ (4) ի վերայ ամ՝ ե[զ]իպտացոց է, Թ (9) ամ՝ երբանց[ւ]ոց է: Իսկ եթէ յապրիլի լինի, Ե (5) ամ՝ եզիպտացոց է, ժ (10) ամ՝ հերբանցոց է, եթէ ի մարտի լինի՝ ԻԱ (21) ի բաց հան, երբանցոց է. և թե շահնդիպի՝ յաւելիսն է լրումն ազգացդ երբայեցոց:

Ամիսը երբայեցոց և կըրկնակը ազգաց		Ամիսը արբացոց և յարակայր երէց ազգաց		Ամիսը մակեդոնացոց և կիսակը երէց ազգաց	
Նիսան	չկ	Նիսան	ժ	Գեմեղիոն	չկ
Իսր	բ	Իյար	ժ	Եղարիոն	Ը
Սիւան	դ	Ադադ թիբաս	ժա	Մոնոբիոն	ա
Թամուզ	զ	Ադազ զասար	ժա	Թերզեղիոն	աԸ
Աւ	ա	Եղթամուզ	ժբ	Սիկերփիոն	բ
Իլուլ	գ	Եղասմար	ժգ	Հոկտոմբիոն	բԸ
Թշրին	ե	Ազազթազ	ժգ	Մետագիտոն	գ
Մեհրշու	չկ	Ազադ թաղրաթ	ժգ	Բեղբենիոն	գԸ
Քասկե	բ	Եղզոնա	ժգ	Էպէսիոն	դ
Տրեթ	դ	Ասրոն	ժե	Մակարիոն	դԸ
Շրաթ	զ	Կազադի	ժդ	Թեսարիոն	ե
Ադար	ա	Եղզոզ	ժդ	Պիսիզոն	եԸ
Աւելեաց	զ	Աւելեաց	ժդ	Աւելեաց	զ

Ամենայն ինչ ժի է Գ ազգացս՝ կըրկնակը և կիսակը և յարակայր:

16ա Յաղագս հերբայեցի յարակայր: Ի մարտի ամսոյ ԻԲն (22) նիսան ամսոյ մուտ է, ուստի լինի մինչև ցելսն մարտոյ ժ (10),



զոր յարակայ կոչեցին նորին ամսոյ նիսանայ և այնպէս ամենայն ամսոյ յաւելուածքն յարակա նոցին հղան: Այլ կալ զնիսան յարակային զերեսուն, երթ, որ մնայ՝ յարակա է իարա: Կալցես և զայլոցն ոչ նոյնպէս, այլ ըստ առաջնոյ ամսոյ յարինակէ:

Իսկ զեղիպտացոյն այսպէս զիտեա. յունուարի ի վեցն և ասորիլի ժԱ (11), յայտնութիւն տեառն Ե (5) ար աւելիքն նոցա յարակայ յազոստոսի ԻԹ (29), տարէ՛մուտ է երեք ասուրք յառաջ քան ըզմուտն սեպտեմբերի, զոր ասեն յարակայ թովթ ամսոյ. և այս որպէս երրանցոյն գրեցաւ:

Զի՛նչ է ժամանակ կամ զինչ հոլով ժամանակաց. ժամանակ է անզուգաւոր ընթացք երկահաւասար պատահման երկայնից:

16բ Զի՛նչ է զոմբիադն. քառամասնութիւն ժամանակագրութեան և առ հինոն՝ կարգ էր ըմբշամարտաց:

Զի՛նչ է զիկուտն. երկաթի շարաթացեալ ժամանակաց կամ հինգետասան ամբ, որով հոռոմք վարին:

Զի՛նչ է յովբելեան. յիսուն ամ, որով երբայեցիք վարին՝ ազատութիւն կոչելով:

Արդ՝ ակեր աստուած տուր շնորհս և իմաստութիւն ուսուցողի առմարիս Յովանէս քահանայ և սրբազան Աբրահամ քահանայ և սրբախրի և այնոցիկ որք ընթեանուն դոսյ և սրտի մտաւք յիշեն զիս. Զբաղմամեղ ծառայս աստուծոյ զՅոհանէս զրիչս յիշեալիք ի սրբազան աղաթս ձեր և Քրիստոս բարեաց տուալքն զձեզ յիշէ յիւր բարութիւնս ամէն. ևս առաւել զսոացաւզ սորա զսրբազան քահանայ զԱբրահամն, որ բազում աշխատեցաւ հետ առմարիս այսորիկ ուսմարք և բազում աշխատութեամբ, զի ով աշխատեսցի նայ ուսանի:

17ա Զուզաւորութիւն հայոց ընդ հերրանցոյ այսպէս արա. կալ զաւուրս հայ ամսոյ, զանցեալ ամիսն ի վերայ բեր, թիւ Ա (1) և զհասարակածն հան, ասուրք են երրանցոց, արարացոց, մակեդոնացոց:

Զուզաւորութիւն հոռոմի ընդ յերրանցոյ այսպէս [արա]. կալ զաւուրս հոռոմի ամսոյ ժԱ (11) և զփոքր յարակայն ի վերարեր, այն են ասուրք հերրանցի ամսոյ:

Գարձեալ կալ զաւուրս երրանցի ամսոյ ժԱ (11) և զփոքր յարակայն հան, ասուրք են հոռոմի ամսոյ, այլ զնիսան և զիար աւելեալն հանդերձ կալ:

Թուական երբայեցոյ այսպէս արա. կալ ԲՊԻԴ (5824), զհայ թուականն ի վերայ բեր, և երթ զըրջանսն ՇԼԳ (533) ՇԼԳ (533), որ մնայ՝ թուական է երրանցոց:

Եւթներեակ այսպէս արա. կալ զեթներեակ հոռոմին, Գ (3) ի վերայ բեր, և թերեակ է երրանցոց, արարացոց և մակեդոնացոց:

17բ Գարձեալ կալ զվերագիր հոռոմին, ԻԱ (21) ի վերայ բեր, կամ Թ (9) ի բաց հան, որ մնայ՝ վերագիր է: Տրէթ Բ (2) ձմեռնամուտ է հանապազ: Եւ շրաթ Լ (30) տեառքն զառաջ է: Սիւան Լ (3) դարձ է արեգական: Աւ ի Իէ (27)՝ սուրբ աստուածածին է:

Իլուզ Ի է (27)՝ սուրբ խաչ է: Թշրին Ա (1)՝ աշնան հասարակած է: Մեհրշուանի ԻԳ (24)՝ սուրբ Գորգ է ըստ յոյն թուոյ:

Թ է կամիցիս հոռովմի վերադրան և ևթնհրեկան զամենայն ազգաց զտանել, կալ զհոռովմի վերադիրն, Բ (2) ի բաց առ յունաց է, Գ (3) առ՝ ասորոց է, է (7) առ՝ եթովպացւոց է, եգիպտացւոց է, Թ (9) առ՝ երբայեցւոց է, արարացւոց և մակեդոնացւոց:

Կալ զեթերեակ հոռովին, Բ (2) ի վերա ած՝ յունաց է, Զ (6) ած՝ ասորոց է, Ա (1) ած՝ եգիպտացւոց, Եթովպացւոց է, Գ (3) ած՝ երբայեցւոց, արարացւոց և մակեդոնացւոց է:

Ի մարտի ԻԲ (22) տարէմուտ է երբայեցւոց, արարացւոց, մակեդոնացւոց:

18ա || Յաւոյնոսոսի ԻԹ (29) տարէմուտ է է (7) ազգաց՝ եգիպտացւոց, Եթովպացւոց, աթենացւոց, բիւթանացւոց, կապուղակացւոց, վրաց և աղուանից:

Հոկտեմբերի Ա (1) տարէմուտ է ասորոց:

Նոյեմբերի Ա (1) տարէմուտ է յունաց:

Զթուական ազգաց այսպէս միատրեա:

Կալ ՅՄՂԹ (6299) և զհայն, երբայեցւոց է, որով նոքա վարին:

Կալ Յ (300) և զհայդ՝ հոռով է:

Կալ ԼԶ (36) և զհայդ՝ եգիպտացւոց է:

Կալ Ժ (10) և զհայդ՝ Եթովպացւոց է:

Կալ զհայդ, Ա (1) առ՝ յունաց է:

Կալ ԶԶ (76) և զհայդ՝ ասորոց է:

Կալ Ա (1) և զհայդ՝ արարացւոց է:

Կալ Բ (2) և զհայդ՝ մակեդոնացւոց է:

Կալ ՇԾԳ (553) և զհայդ՝ կենարարին է:

Կալ Ո (600) և զհայդ՝ Անդէասին է:

Կալ ԲԶԺԶ (5716) և զհայդ՝ Եսեբին է:

Կալ ԶԼ (930) և զհայդ՝ կիկղոնին է:

Կալ Կ (60) և զհայդ առ՝ տաճկաց է:

18բ Լրմամբ վերադիր այսպէս արա. ամենայն ազգաց. կալ զհանապազորոս զատկաց Լրմանն և զլրումն ի բաց առ, որ մնայ՝ վերադիր է հոռովի, երբայեցւոց, արարացւոց, մակեդոնացւոց: ԽԶ (46) կալ, և յունաց՝ ԽԴ (44), իսկ ասորոց և եգիպտացւոց՝ ԽԳ (43), և հայոց՝ ԽԶ (46): Հոռովմայեցւոց յունուարի ի Զ (6)՝ յայտնութիւն է: Մարտի ի Ի (20)՝ հասարակած: Յունաց դինէոսի Զ (6)՝ յայտնութիւն է: Ի դիստրոսի Ի (20)՝ հասարակած:

Ասորոց քանուն հրայի Զ (6)՝ յայտնութիւն է: Ագարի Ի (20)՝ հասարակած:

Եգիպտացւոց սուրբիլ ի ԺԱ (11)՝ յայտնութիւն է: Պեմենովթ ի ԻԳ (24)՝ հասարակած: Եթովպացւոց թեր ի ԺԱ (11)՝ յայտնութիւն է: Գմաթ ի ԻԳ (24)՝ հասարակած:

Երբայեցուց տրեթ ի ԻԱ (21)՝ յայտնութիւն է: Տաւելեացն ի Գ (4) հասարակած: Արարացուց արսոն ի ԻԱ (21)՝ յայտնութիւն է, յաւելեացն ի Գ (4)՝ հասարակած: Մակեդոնացուց մակտրոն ի 19ա ԻԱ (21)՝ // յայտնութիւն է, յաւելեացն Գ (4)՝ հասարակած: Եթէ կամիցիս գիտել՝ եթէ նահանջի արն յոր ամիս անգանի ազգաց: Հոռոմք ի փետրուարի ամիս արկանեն, և յոյնք ի պերիտոս, և ասորիք ի շրաթ և առնեն ԻԹ (29) ար, իսկ երբայեցիք, արարացիք և մակեդոնացիք ի վերջին ամիսն արկանեն և առնեն ԼԱ (31) և ապա թուն զաւելիսն: Իսկ եգիպտացիք, եթովպացիք ի վեցերորդ ամիսն արկանեն և առնեն Լ (30) ար, և ապա սկսանին զպեմենովթ և զգմելիթ:

Չգիր վերին խորանին այսպէս արա. Թէ յապրիլի լինի լրումն, 2Գ (84) ամ ի վերայ և Թէ ի մարտի՝ ԾԳ (53) գիր է:

Կալ զգիրն և զնահանջն ի վերայ բեր, զաւելիսն հան և երթ Լ (30) Լ (30), որ մնայ՝ լրումն է հայոց: Իսկ եթէ զհոռովմին կամիցես գիտել՝ Թէ յապրիլի է լրումն՝ 2 (6) ամ, և Թէ ի մարտի՝ է (7) ամ: // Եւ եթէ ըստ երբայեցուցն կամիցիս գիտել՝ ԻԱ (21), և Թէ ըստ եգիպտացուցն՝ ԺԱ (11), և զասորոցն Թէ ի նիսան լինի՝ 2 (6) ամ և եթէ յադար՝ է (7):

Չգիր միջոցին որ երկոտասան ազգաց լրումն առնէ, այսպէս արա. Թէ յապրիլի է լրումն՝ ԺԱ (11) ի վերա ամ, և եթէ ի մարտի՝ Ի գնայ, որ մնայ՝ միջոց կոչի:

Կալ զգիր միջոցին և ազգի, զոր և կամիս, զհասարակածն ի վերայ բեր, և Թէ զերեսնին ելանէ՝ զերեսուն երթ, որ մնայ՝ լրումն է հոռովին և զյունացն. և զասորոցն ԼԱ (31) երթ և զայլ ազգացն Լ (30) Լ (30), իսկ զերբայեցուցն՝ զաւելիսն հան:

Եթէ կամիցիս գիտել՝ եթէ ո՛ր տարի լուանեայ է երկոտասան կամ ո՛ր տարի երեքտասան լուանեայ, յանցեալ լրմանէն մինչև ի միս լրումն համարեա, եթէ 3ԾԳ (354) է՝ երկոտասան լուանեայ է, եթէ 3ԶԳ (384) է՝ երեքտասան լուանեայ:

20ա // Զուգաւորութիւն է (7) ազգաց՝ եգիպտացուց, եթովպացուց, աթենացուց, բիւթանացուց, կապուղիացուց, վրաց և աղուանից այսպէս արա. կալ զաւորս հայ ամսոյ, ԼԱ (31) ի վերայ ամ, զամսանահանջն հան, աւորք են եթն ազգաց: Իսկ ի նաւասարդէ մինչև ցրաղոց հանապազորդն ԼԶ (36) բեր:

Առաջաւորաց բարեկենդան ըստ հոռովմայեցուց այսպէս արա. կալ հանապաղ ԼԵ (35), զնոր վերադիրն երթ, որ մնայ՝ Թէ քան զտաս ի վերջ է, Ա (1) ի յունուարի տուր և ի փետրուարի գտանես: Եւ եթէ ի վեր է քան զտաս, ի յունուարի է, արագիւտ արա և ի կիրակէն տուր, բայց ի նահանջի ամի Ա (1) յաւել:

Բարեկենդան ըստ հոռովի այսպէս արա. կալ ՄԶ (56), զնոր վերադիրն երթ, արագիւտ արա և ի կիրակէն տուր: Իսկ ըստ հայոյ կալ ԾԱ (51), զվերադիրն երթ, արագիւտ արա, և ի կիրակէն տուր:

20բ // Կալ զբարեկենդանն, ԺԹ (19) ամ՝ գատիկ է:



Եթէ կամօրցես յեկանելոյն Ադամայ ի դրախտէն գիտել զժամանակ, կալ ՐՃՂԸ (5198) և զամսդ ի ծննդենէ փրկչին ի վերայ ամ, և այն է: Եւ մի հաւատար որոց ասեն զլինելութիւն աշխարհի գիտել զժամանակս, զոր գիտէ միայն որ ստեղծն:

ՅԱդամայ մինչև ի շրճեղեղն մեծ՝ որ առ նոյիւ՝ ամբ ՍՄԽԲ (2242): Ի շրճեղեղէն յաշարակն՝ ամբ ՇԻԾ (525): Եւ անտի մինչև ցծնունդն Աբրահամո՝ ամբ ՉԽԲ (942): Եւ անտի՝ յԱբրահամէ ամբ՝ ՆԺԷ (417): Եւ անտի մինչև յեկան յնգիստոսէ՝ ամբ ՇԾ (505): Եւ անտի մինչև ի Սողովմոնի շորորդումն և ցառճարին շինութիւնն ամբ նՁ (480): Եւ անտի մինչև ի նորոգումն տաճարին ի Զարաբարէլէ ի Դարեհի Բ (2) ամն՝ ամբ ՇԺԱ (511): Եւ անտի մինչև ի ծնունդն Քրիստոսի՝ ամբ ՇԺԸ (518): Միանգամայն՝ ՐՃՂԸ (5198): Եւ անտի մինչև ի հայ թուականին դիր՝ ամբ ՇԾԳ (553) Թ (9) ամաւ զկնի հինգհարիւրական ևզաւ: Ի ծննդենէն յետ ՇԿԲ (562) յամաց, ի մկրտութենէն մինչև ի քսան ամեակն Կոստանգիանոսի, մինչև ցերկուհարիւրեկին գիւտ յԱղբէասէ՝ ամբ ԻԳ (23): Եւ անտի մինչև ի հայ թուականն ամբ Մ (200):

21ա

Որք ասեն ի լինելութենէ մինչև ի ծնունդն Քրիստոսի ամբ լինել ՐՆԻ (5420), մեծապէս փրթե[ա]ն՝ յաւելլով զտգիտութեան կարծես առանց ճշմարտութեան, վասնզի յարարչութենէն զժամանակս ոչ որ կարաց կամ կարասցէ գիտել ի մարդկանէ, բայց միայն յարտաբերոյն Ադամայ ի դրախտէն:

[Յետ այսր գրեցից և զառանց նահանջիցն ըստ զբութեան մեծին Սարկաւազի, համառաւ և զիւրին զուգակարգութեամբ: Ընկալեալ զու ևզբայր իմ աէր Աբրահամ, լրցեալ ի հոգւոյն շնորհաց, բնթերցիս, և զիս՝ զանարժան անուանակիցս բո, զսուտանուն գրիչս զՅովնաննէսս՝ թէև արժանի համարեսցիս յեշելոյ գիս]:

Ամիսք հոտանոց և յարակայք		Որք զուղին ընդ հայոց այսպէս
Յունուարի	է	Նաւասարդ և աւգոստոս
Փետրուար	դ	Հոսի և սեպտեմբեր
Մարտի	ը	Մահմի և հոկտեմբեր
Ապրիլ	է	Տրէ և նոյեմբեր
Մայիս	է	Քաղոց և գեկտեմբեր
Յունիս	դ	Արանց և յունուար
Յուլիս	դ	Մեհեկի և փետրուար
Աւգոստոս	ժ	Արեգ և մարտ
Սեպտեմբեր	թ	Ահիլ և ապրիլ
Հոկտեմբեր	թ	Մարտի և մայիս
Նոյեմբեր	ը	Մարդաց և յունիս
Դեկտեմբեր	ը	Հրոտից և յուլիս
Կրկնակը և կիսակը	Քրկուց	ազգացդ տաաջն է գրած

22ա

|| Կալ զհայ ամիսն և զյարակայդ ի վերա բեր, ցուցանէ զքանիս հոռովմի ամսոյն: Իսկ ի հոռովէն ի բաց երթ, մնացեալն զհայ ամսոյն բանիսն ցուցանէ:

Քուական այսպէս արա. կալ զհոռով թուականն 37 (304) ի բաց երթ, թուական է հայոց:

Վերադիր այսպէս արա. կալ զվիվականդ և երթ ժԹ (19) ժԹ (19), մնացեալն մետասանապատկեա, Գ (4) թիւ ի բաց հան և զայլն երթ 1 (30) 1 (30), որ մնայ՝ վերադիր է. բայց ի նահանջից նահանջ Գ երթ զարակայդ: Գարձեալ կալ զվերադիր հոռովմին, Ե (5) ի վերայ ած, և այն է: Իսկ չերբայեցուց վերադրին ժԳ (14) ի վերայ ած կամ ժԶ (16) ի բաց երթ:

Եթներեակ այսպէս արա. կալ թուականդ, երթ ԻԸ (28) ԻԸ (28), որ ի խոնարհ մնայ՝ շորիցն շորիցն մի մի յաւել և երթ ևթն ևթն, որ մնայ՝ ևթներեակ է, թիւ մի այլ երթ հանապազ ի հոռովմի ևթներեակէն, Բ (2) ի բաց առ, կամ Ե (5) ի վերայ ած. իսկ չերբայեցուց ևթներեակին || մի ած՝ հայոց է: Իսկ հայուոյն մի ի բաց հան՝ երբայեցուց է: Եւ լինի այդ յամսամաէն յունուարոյ մինչև ի մետասան աւգոստոս ամսոյ, որ է մուս նաւասարդոյ և անտի յառաջ ժԱ (11) թիւ ի վերադիրն յաւել և թիւ մի՝ չևթներեակն է:

22բ

Իսկ զաւրաքիտ և զլուսին և զայլ ամենայն ըստ առաջին պայմանին արասցես, բայց ի մասնէ:

Այլ շորեքտասաներորդս լուսնոյ գատկաց, կամ ևթէ վեշտասաներորդս որպէս ունի ճշմարտութիւնն, ըստ ինն ու տասնեակ կանոնացդ արասցես:

Իսկ ևթէ վերադրաբն կամիցիս առնել, կալ ԵԶ (46), երթ ի բաց զվերադիրն Գ (3) կիսակաւք և մի Գ (4), թէպէտ և ութերորդ ամիս է արեգ:

Արեգի ժԲ (12) զարնանամուտ է հանապազ:

Մարաց ի ժԳ (13) ամառնամուտ է հանապազ:

Հոռի ի Թ (9) աշնանամուտ է հանապազ:

23ա

Քաղոց ի ժ (10) ձմեռնամուտ է և ի ԵԹ (29) || յայտնութիւն է:

Մեհեկի Ը (8) տեսողնգոտաց է:

Տրէի ժ (10) յիսնակամուտ է յայտնութիւնն:

Սահմի Ա (1) և թշրին ի ԵԳ (23) և հոկտեմբերի ի ժ (10) յլուսին է Եղիսաբեթի:

Եւ չերեսուն արեգ ամսոյ և յապրիլի է (7) և Եիսան ի ժէ (17) աւետիք կուսին Մարիամու:

Նաւասարդի Ե (5), յաւգոստոսի ի ժԵ (15)՝ տան Մարիամու աստուածածնի:

Հոռի Ե (5) սեպտեմբեր ժԳ (14)՝ տան սրբոյ խաչին:

Առաջաւորաց բարեկեանդանն զոյգ ընթանա լրմանցդ, ի միում ամի զկարգն ունի իննտասներեկաւդ, յորժամ գտանես զաւուրն պատկերն, ի կիրակէն թուեա, և ևթէ կիրակէի հանդիպի, ի միւս կիրակէն:

ի նահանջի ամի ամիսն մեհեկանի ԼԱ. (31) լինի և յաւելու է (7) թիւ մի, որպէս այլոց ազգաց:

Իսկ զպատկեր արուրն գացես ի կանոնս Ի (20) և ութնկայ:

23ր Այլ կանոնք շորեքտասաներորդ լուանոյ զպտկաց զուղին ընդ հոռովմայեցոց այսպէս: // Քանզի վասն զիրահասութեան զերկոսին ի միասին եղաք: Չամին, յորում ես, զկանոն այսպէս գիտ: Ի հայ թուականէն ի նորոյ՝ Թ (9) երթ և զայլն երթ ԺԹ (19) ԺԹ (19) և ի վախճանին զոցես խնդրելին:

Տանուտէր արուր այսպէս արա. կալ ուստի խոյն մտանէ մինչև յարն ուր ես և երթ է (7) է (7), որ ի խոնարհ մնայ՝ ի հրատէն յառաջ տուր և գտանես:

Տանուտէր ժամոց այսպէս արա. կալ ի հասարակածէն մինչև ուր ես, ած ի վերա Ժ (10) և երթ է (7) է (7), որ ի խոնարհ մնա, այն է:

Յամի իննևտասաներեկի ար յաւելու ի վերադիրն. որ է ի մարտի ԻԵ (25), ուստի յաւելու արն այն յամենայն տարի ԺԹ (19) մասն յաւելու ի լուանէն և ի ԺԹ (19) տարին 34Ա. (361) մասն լինի 34 (360) ար մի լինի և ի վերադիրն անկանի և մի մասն ժողովի և ի 3ՊԵ (6840) ամին լինի ար մի և այն է արն զատաստանին և զարուստ փրկչին, ըստ բանի մարգարէին, որ ասէ.

24ա ծագեաց ի յաւուրս նորա արդարութիւն բազում խաղալ/զութիւն մինչև կատարեսցի լուսին:

Իսկ մասունք, որ ժողովին ի տարոյն 2 (6) մասն 4 (60) ամին ար մի, 3 (300) ամին 5 (5) ար, ի վեց հարիւր ամին՝ Ժ (10) ար, ՌՄ (1200) ամին Ի (20) ար, ՌՊ (1800) ամին՝ ամիս մի, Ի (7000) ամին ամիսք շորք: Եւ այն է, զոր տէրն ասէր, թէ այլևս չորեք ամիսք և հունձք գան և յաւելուն մասունքն ի ժամանակս երկու հարիւր ամ:

### ՅԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննես Իմաստասերի «Պատճէն տոմարի» ներկա աշխատութեանը մենք հրատարակում ենք ՀՊԶՄ-ի № 1973 ձեռագրից: Այս ձեռագրի մասին մենք խոսել ենք առջևում. նա ընդօրինակված է Հովհաննես և Գրիգորիս քահանաների կողմից Երզնկայում 1342 թվին:

Հայկական ձեռագրերում տոմարի բազմաթիվ պատճենագրութեաններ կան: Հնագույն այդ պատճենագրութեաններից կարելի է մատնացույց անել ՀՊԶՄ-ի № 3082 ձեռագիրը՝ 1267 թվից (թ. 378ր—388ր), № 2901 ձեռագիրը՝ 1373 թվից (թ. 3ա—61ա), № 1114 ձեռագիրը՝ 1425 թվից (թ. 5ա—26ա), № 1849 ձեռագիրը՝ 1440 թվից (թ. 127ա—158ր) և այլն: Մեզ ծանոթ ավելի բան 40 տոմարական պատճենագրութեաններից ո՛չ մեկը, զժրախտարար, նման չէ մյուսին. նրանք տարբերվում են իրենց բովանդակությամբ, կառուցվածքով և խմբագրական տարբերակներով, ուստի և հնարավոր չի եղել նրանցից կազմել համահավաք մի տեքստ:

Հովհաննես Իմաստասերի անունով հրատարակության հանձնված ներկա



«Պատճէն տոմարի» աշխատութեան վերնագրում բացակայում է հեղինակի անունը: Մենք այդ տեքստը, ինչպես ասել ենք ուսումնասիրութեան մասում, նրան ենք վերագրել և նրա անունով հրատարակել հետեւյալի հիման վրա.

Ա. ներկա «Պատճէն տոմարի» աշխատութեանն ընդօրինակված է № 1973 ձեռագրում Հովհաննէս Իմաստասերի աշխատութեաննէրի շարքում. թիւ հավանական է, որ այստեղ այլ հեղինակի տոմարական աշխատութեաննէրից մուծումներ անեին:

Բ. «Պատճէն տոմարի»-ի այս խմբի ընդօրինակութեաննէրի 4-րդ մասը, տվորարար, վերնագրված է լինում՝ «Պատճէն տոմարի Սարկաւագի», իսկ ներկա ձեռագրի ընդօրինակող գրիչը նշված մասի առջև թողել է մի հիշատակագրութեան հետեւյալ բովանդակութեամբ. «Յետ այս գրեցից և դառանց նահանջիցն ըստ գրութեան մեծին Սարկաւագի համառատ և դիւրին զուգակարգութեամբ» (թ. 21ա): Գրիչն այստեղ, ուրեմն, խոստանում է շարագրել մի տեքստ, որն իրոք պատկանել է Սարկավագին:

Գ. № 1973 ձեռագրում «Պատճէն տոմարի» աշխատութեանը վերջանալուց հետո ընդօրինակված է տոմարական մի այլ տեքստ՝ «Նորին Վասն յարակալիցն» վերնագրով: Այլ ձեռագրերից մեղ հայտնի է, որ տվյալ տեքստը, առանց կասկածանքի, պատկանում է Հովհաննէս Իմաստասերին, ուստի և անվիճելի է, որ ընդօրինակողը «Նորին» ասելով նկատի է ունեցել Հովհաննէս Իմաստասերին:

«Պատճէն տոմարի»-ի առաջին մասերը՝ «Պատճէն տոմարի հայոց մեծաց», «Պատճէն տոմարի հոռմայեցոց» և «Պատճէն տոմարի երբայեցոց», մեր կարծիքով, գրված են եղել հնագույն շրջանում, և հավանական է, որ նրանց հեղինակն է հանդիսացել Անանիա Շիրակացին, իսկ ինչ վերաբերում է աշխատութեան 4-րդ մասին, ապա այն գրած և լրացրած պիտի լինի Հովհաննէս Իմաստասերը: Նկատի ունենալով, սակայն, որ տվյալ տեքստը ամբողջական մի գործ է և անգամահատել չի կարելի, ուստի և մենք հրատարակութեան ենք հանձնում ամբողջութեամբ:

Հովհաննէս Իմաստասերի ներկա աշխատութեան մեջ նկատվում են ուշ շրջանի երկու կարգի միջամտութեաննէր, որոնցից մեկը № 1973 ձեռագրի գրիչն է կատարել, իսկ մյուսը՝ նրանից առաջ: Գրչի կատարած միջամտութեաննէրը մենք աշխատեցինք անջատել՝ շարելով այն շղատառ, իսկ մյուսները, որոնք արդեն ձուլված են տեքստի հետ և գժվար էր նրանք սահմանագծել, թողնում ենք առանց միջամտութեան:

Ձեռագրի մեջ Հովհաննէս Իմաստասերի «Պատճէն տոմարի»-ի առջևում ընդօրինակված է «Աեղուք 2Բ (72)» խորագրով մի տեքստ՝ գրականութեան ունեցող 12 ժողովուրդնէրի մասին (թ. 3բ), որը ոչ մի կապ չունի Իմաստասերի տվյալ աշխատութեան հետ, ուստի և շենք հրատարակում: Նույն ձեռագրում Իմաստասերի մեր հրատարակած «Պատճէն տոմարի»-ի տեքստի շարունակութեան մեջ կցված է Հովհաննէսի «Յարակալ»-ի մասին աշխատութեանը և տարբեր ժողովուրդնէրի ամսանունները, որոնք մենք հրատարակել ենք առանձին: Այնուհետև ձեռագրում ընդօրինակված են մի շարք ժողովուրդնէրի պատճենագրութեաննէր, որոնք մենք բաց ենք թողնում, նկատի ունենալով, որ նրանք Շիրակացու «Պատճէն տոմարի» աշխատութեան մասերից են:

Մեր հրատարակության հանձնած Հովհաննես Իմաստասերի ներկա «Պատճէն տամարի»-ի բնագիրը պարունակում է անցման շրջանի ուղղագրական հետաքրքիր ձևեր և տարբերակներ, որոնք արժեքավոր են հայոց լեզվի և հայ ուղղագրության պատմության համար: Այդ նկատի ունենալով է, որ մենք ավյալ տեքստը ապրիս ենք գրեթե առանց փոփոխության: Ցանկանում ենք այդ տարբերակներից առանձնապես մատնացույց անել հետևյալները.

1. Հայոց, ասորոց բառերը, ձեռագրում գրված է հայոյ, ասորոյ ձևերով:

2. Ա-ով վերջացող բառերը չ շին ընդունում՝ կա, երբա, յարակա, մնա և այլն: Եվ, հակառակը, դերանուններից սայ, նայ չ են ընդունել:

3. Կան բառեր, որոնք նույն տեքստում, երբեմն նույն էջում, գրված են լինում երկու ուղղագրությամբ՝ քվական—քուական, տարոյն—տարույն, կի-րակէ—կիրակէ, կամիցիս—կամիցես, փոխիլ—փոխել, ապրիլի—ապրիլի, Լքնեբեակ—Լոքնեբիակ, բոպէ—բովպէ, աունջեան—աուրնջեան, տարոջ—տարուջ, հնգեակ—հինգեակ, եբրայեցոց—եբրայեցոց, հեբրանցոց—եբրանցոց, Անդէաս—Անդրէաս, տարեմուտ—տարէմուտ և այլն: Առանց փոփոխության թողել ենք նաև սկիսբն, աշտինան, միայնամուտ և ջրնոյս բառերի ուղղագրությունը:

Քվականների նշանակությամբ գործածված հայկական տառերի վրայից վերցրել ենք պատվի նշանները և հետացրել կողքերում գրված կետերը: Ետուոջ, հնգեակ—հինգեակ, եբրայեցոց—եբրայեցոց հեբրանցոց—եբրանցոց, Անդէաս—Անդրէաս, տարեմուտ—տարէմուտ և այլն: Առանց փոփոխության թողել ենք նաև սկիսբն, աշտինան, միայնամուտ և ջրնոյս բառերի ուղղագրությունը:

### 13. «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻՍ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՐ

Պահանջեցիր յինէն ուսումնասէր վասն հա[յկա]զնեան տումարիս տանից տարեկանաց շրջաբերութեան՝ որ ոչ ընդ այլազգացդ զիւզեալ նահանջիցն շարաթանալով զդարձն վերստին առնու, այլ միշտ անցեալն զվախճ[ան] աւնլով լրմանցն, ի ներկայումս միշտ և յապագայսն ներդործէ մեզ, այլ տանից տեսութիւն յարափոփոխ անցելովք նահանջիւք և հասարակաւորութեանն զնալով, ընդ բոլոր ատուրս տարւոյն ի հարկէ ընդ իւր շարաբերելով զըրութիւն տանից խաղացմամբ, ի բոլոր ամին կատարէ ԹՆԿ (1460) ամ և ոչ ամիսն շարժի որպէս զայլազգացդ:

10           Զի որպէս այլոց ազգաց ամիսք փոխին, հայոց հասարակածն փոխի և հայ ամիսք անշարժք և անխաղացք են: Վասն որոյ հարկ լինի ի նահանջի ամի ի հայ վերադրէդ մի ի բաց առնուլ, զի ի  
159ա       հասարակածին չառաջ խաղայն՝ թէ վերադիրն ո՛չ պակ[[ասի, լրումն ընդ այլոց ազգաց ոչ զուգի, այլ ատուրք միով չառաջ անցանէ: Իսկ որ յամի ինն և տասներեկի մի յաւելումք ի վերադիրն, զի նա ինքն է նահանջ, աւր տելի լուանիդ, որ յաւելու ի վերադիրս ազգացդ:

              Որպէս նահանջդ՝ աւր տելի արեգականն է, որ յաւելու յեթներեակս ազգաց, բայց ի հաչդ ո՛չ, վասն որոյ ամիսք նոցա շարժին, այլ ոչ տանք: Զոր եթէ ի մերումս էր եղեալ, որպէս զերբայեցւոցն ի նահանջի ամի զաւելեացն վից ունելով, և զաւրն աւելի յեթներեակ տարոյն յաւելեալ՝ անաշխատ մեզ զգիտութիւն արուեստիցդ ցուցանէր: Զի եթներեկիդ յաւելուած ըստ ընթացից արեգականդ է, իբրև զվերադիրդ, որ՝ յաւելուած լուանի, զոքա ցուցանեն մեզ յայտնապէս զընթացս լուանի և արեգական և զանցեալ ժամանակս:

159բ       Իսկ որ հայ վերադիրք և լրմունք՝ ի բոլորս ոչ մտանեն որպէս զայլոցդ, զի շփոթումն յերկուց կողմանց // ունի՝ ի նահանջէ և յինն և տասներեակէ. եթէ ի միողէն՝ քր, որպէս զայլոց ազգացդ,

2 A շրջաբերութեան           3 A վերջսին           7 A տարոյն           15 A ինն և տասներեակի  
18 A յեթներեակս           22 A յեթներեակ           23 A եթներեակի  
29 A տասներեակէ



30 մտանէր և նա ի բոլոր, զի այլոց ազգացոյ բոլորք լինն և տասներ-  
բնակէ շփոթին և ի նահանջէ՝ ոչ, իսկ հայոցոյ՝ յերկոցունց:

Ձնահանջ ասեն լինել զլուս երից ատորց արարչութեանն ան-  
մարմին, և արեգակն լինել երեք ժամքն արինակ անմարմին,  
անակիզրն և անմատոյց լուսոյ երրորդութեանն, որ ի շորս ամի  
ժողովեալ, լինի կատարեալ ար մի. և ի ԻՔ (28) ամի ևնն ար  
կատարէ, և շարաթացեալ զկարգ ևններեակին ի նոյն դարձուցանէ:

Որպէս լուսինն ի տասնեկնն ամի յաւելու ար մի ի տասներորդ  
կանոնին, ի վերագիրն յաւելեալ դքսան, ԻՒ (21) առնէ, զլրումն  
պակասեցուցեալ զմարտի ԻԶ.ն (26-ն), Իէ (27) առնէ, և ի դմին

40 ամի լցեալ լինի իննևտասներեակ հայոցոյ և յաւելուն ի վերագրիդ  
դէպ ուղիդ ընդ հայոցոյ և այլազգացոյ՝ դուգաւորեալ պատշաճիւ:  
160ա նւ զի՝ ասեն ոմանք՝ թէ ի զր//ախտին ո՛չ էր տիւ և ոչ զիշեր. ևթէ  
յերկրի է, ի ներքոյ արեգական է, զիա՛րոյ ոչ լինէր տիւ և զիշեր,  
զի յառաջ որոշեաց աստուած զտիւ և զգիշեր և ապա զդրախտն  
արար: Եթէ ի վեր քան զարեգակն է դրախտն, որպէս Որոզինէս  
ասէր, ապա ո՛չ էր զրեալ՝ թէ ազրեր ելանէր յԴդեմայ, այլ ի դէպ  
էր ասել՝ թէ ազրիւր իջանէր: Դարձեալ ասէ լուան զձայն գալոյ  
տեառն աստուծոյ ի դրախտէն ընդ երեկս:

Արդ՝ զշարժումն ամսոցն երրայեցոց և զանշարժութիւն հայ  
50 ամսոցոյ սահմանեաց բարձրեալն, զի հաւատ, և զիր և տումար այս  
երկու ազգիս միայն ետ աստուած, և այլոց ազգացոյ՝ մարդկան են  
արարեալ. զիրս հայոց՝ աստ ի վերայ վիմի հրեղէն աջով, անդ՝ ի  
տախտակս քարեղէնս, զտովմարս՝ անդ Մոսկէս, աստ՝ Հայկն,  
յառաջ քան զնա, զհաւատս՝ անդ ի լեռնէ՝ ի վայր պատգամաւ,

160բ աստ՝ ի վերայ վիմի ոսկի ուռամբ ինքն աստուած: Ձայն հաւատ  
աւարտեաց ինքն ի վեր//նատանն, յորժամ կնքեաց զհին զատիկն  
արեամբ զառինն և սկսաւ զնոր զատիկս արեամբ իւրով, և զայս  
աւարտէ, յորժամ գայ ինքն Քրիստոս: Իսկ այլազգք, յորժամ կա-

մեցան, առին զտուրք հաւատս ի ձեռն մարդոյ և յորժամ արտաքս  
ընկեցին, զմարդոյ եղեալ հիմն յատակեցին և ոչ զաստուծոյ: Եւ

60 այսպէս, վայելուչք են ամիսք երկաքանչիւր, քան զամենայն ազ-  
գաց: Չի երրայեցոց ամիսք ցուցանեն զյեղափոխ լրմանց արտա-  
դարձումն, և զախտարաց և ժամուց տուրեառիկ զեղազանակս և  
հայ ամիսք՝ անցեալ ժամանակի ցուցանակ: Այլ զայս՝ զի գրեցի  
սակաւուր զպատճառ անշարժութեան ամսոցոյ և վասն շարժման  
տանիցոյ՝ բաւական համարեալ խոհեմական մտաց ըստ այնմ՝  
եթէ տուր պատճ[առ]ք իմաստնոյ:

Եւ քանզի բազումք յառաջնոց վարդապետաց անտի գրեցին  
161ա ըստ իւրաքանչիւր զիպման քննութեամբ ի // կիրառեալ վասն  
70 ստուգելոյ ամացն անցանելոց, սակայն անմիարան հանդիպին  
միմեանց: Եւ[կ] նաերի վկայէ վասն ոչ զիտելոյ ստուգիւ զան-

30 Ա նայ 36 Ա ևններեակին 37 Ա լուսին 40 Ա իննևտասներեակ  
62 Ա ցուցան 62 Ա արաայգարձումն 68 Ա անդի 69 զիտման փոխ.  
դիպման

ցեալ ժամանակսն՝ գրանն Տեառն վկայութիւն անլով, որ ասաց եթէ՝ «Ո՛չ [է] գիտել զժամս և զժամանակս, զոր հայր եղ յիրում իշխանութեանն»: Եւ զայս ոչ ասէ վասն հանդերձեւոցն միայն, այլ և վասն անցելոցն: Զի ըստ Անդրէասայ ժամանակագրութեանն լինի յԱղաձայ մինչև հայ թուականն ՅՃԾԻ (6155), և ըստ կայսերական պատմութեանն՝ ՐՉԿԱ (5761), և ըստ Անանիայ Շիրակունայ՝ ՐՃՂԸ (5198), [Եւ ըստ Եպիփանու՝ ՅԾԳ (6053)] և ըստ Երրայայականին՝ ՅՄԶԹ (6289), և ըստ հրէիցն, որով մեք վարիմք՝ ՐՊԽԳ (5824), և ըստ շարմուացոցն՝ ՐՊԼԲ (5832), և ըստ Շ.եկին թուականին՝ ՐՁԶՁ (5976): Նա և այլ բազումք գրեցին վասն ժամանակացն անցելոց և ամենեքեան անմիաբան հանդիպին դոյ: 161բ Զի որպէս արուեստ բժշկութեան ո՛չ ի սկզբանցն ճշդիւ ամ//ենայն գիտացեալ եղև, այլ առ սակաւ սակաւ, նոյնպէս և շրջաբերութիւն արեգական և լուսնի առ սակաւ սակաւ գիտացեալ եղև ի ձեռն Շ.եակ բողոքիդ, այլ ո՛չ թուականն յԱղամայլի:

Բայց վասն արուեստիդ տումարի յառաջագոյն նախ Մովսէս գրեաց Երրայեցւոցն հրամանաւ աստուծոյ՝ ի շորեքտասաներորդ ատուր ամսոյն նիսան տաւնել յԵգիպտոս զտաւն ելիցն ի գարնանային հասարակարութեանն, յորժամ տին սկսանի յաղթահարել զղիշերն: Եւ որպէս ծաղկունք սկսանին երևել, նոյնպէս և աստուածգիտութիւն բուսանել սկսաւ:

Յետ նորա դարձեալ վերստին նորոգի ի ձեռն Եզրի դպրի, յետդարձի գերութեանն, յորում արար զատիկն Եզրաս ի շորեքտասան նիսան: Այլ յառաջ քան զՄովսէս ո՛չ ուրեք էր գիտութիւն արուեստիս, բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսէս, քանզի ասեն թէ ի ձեռն հոգոյն, որ ազգէր ի նահապետսն, Հայկին, առաջին նահապետն Հայկոց, զամիսքդ կարգեաց և զանուանս ուստերաց և դատերաց իւրոց ամսոցդ կոչեաց: Յետոյ 162ա բազումք ի վարդապետաց իւրաքանչիւր ազգաց եղին տաւնա: Նախ Արիստագէս, հետևող առաքելոցն, Անատալի, և Որոգինէս, Եստերի և այլք բազումք:

Իսկ Անդրէաս երկարածգեալ, ամաց երկուհարիւրից (200-ից) դներ տաւնա: Եւ ի կատարեալ ամացն երկհարիւրից, ժողովեալ յԱղեքսանդրիայ ԼՁ (86) փիլիսոփայք կարգեցին զհինգհարիւրեակ բողոքդ, որ ընկալեալ եղև յեկեղեցւոյ աստուծոյ, քանզի յինքեան բերէ զկատարումն մասանց լուսնի, և զշրջանս արեգական նահանջից հաւասարել միմեանց ի ԻԸ (28) ինն և տասներեակի և ի իննևտասն ԻԸ.եկի: Եւ բողոք ասի, զի սպառուած ոչ ունի՝ ո՛չ 10 սկիզբն և ո՛չ վաղձան, զարէն անուոյ՝ անեղր բողոքեալ: Եւ որք մտապոյնք են արուեստիս, առանց արիւնակի յաշտնի է նոցա, զի յամենայն գրոյ կրեք ածելով, ի նահանջիցն՝ երկու, այդ անսխալ 162բ է, և զի ի խաչելութեան աստուածն բանի ինն էր // թուականն, և

74 A այս 77 A Շիրակունոյ 78 A անկյունավոր փակագծի տեղս չունի  
բերված է B նոսազից 81 A նալ և 88 A թուական 91 A երևեալ 93 վերջոստին  
8 A ինն տասներեակի 10 A վտիջան 12 A անսղալ



ի կարգել հինգհարիւրեկին նոյնպէս ինն էր, զի անցեալ էր շրջան մի, և յետ տասն ամի, ապրիլի շորս, արն երեքշաբաթ, զայն եզին սկիզբն բուրին:

Արդ՝ պարտ է զնել հիմն շինուածոյ արուեստիս զեբրայեցոցն, զի հասարակածդ յեբրայեցոց աւելեացն շորիցն հանդիպի, յայտ է՝ թէ առաջին ար աւելեացն է արարչութեան սկիզբն, և վերջին 20 աւտրն պատկերն և թնեբեակ և տարոյն, որ է հինգշաբթի, և յաւտր ուրբաթու նիսան մտանէ, և լինելութիւն մարդոյն, և արեգակն ի խոյն մտանէ:

Այլ վասն լուանի ստեղծման ոմանք ասացին հնդեասանաւրեայ, ոմանք՝ մետասանաւրեայ, ոմանք երկու արեայ, բայց մեզ չէ՝ փոյթ վասն այդր ինչ հակառակելոյ, այլ միայն ստուգիւ գիտել զառաջին լրումն լուանիդ: Զի տէր Եփրեմ յԱրարածոց մեկնութեանն ասէ մետասանաւրեայ զլուսինն, որ յաւելաւ լուանի 163ա յամին առաջնում: Սորա են, զի յամենայն ՚| ամի յաւելուն նմա մետասան ար և այն լինի վերագիր լուանի, և մետասան ժամն 30 արեգական յամենայն ամի լինի և թնեբեակ արեգականն: Քանզի ոմանք ասացին յապրիելի երկուան լինել զառաջին լրումն, և ոմանք՝ երեքտասան և ոմանք՝ շորս: Իսկ որք ասեն յերկուցն ապրիլի, որ է նիսան ժԲ (12), վերագիրն՝ շորս: Իսկ որք ասեն երեքտասանիցն, որ է նիսան ԻԳ (23), վերագիրն՝ ԻԳ (23): Եւ որ ասեն ի շորս ապրիլի, որ է նիսան շորեքտասան, վերագիրն՝ շորս: Եւ այս անմարթ է յառաջին ամին լինել վերագիրն երկու, կամ շորս, կամ ԻԳ (23), զի կիսակր երկուտասան ամսոցդ և հինգ աւելեացն լինին վերագիր առաջիկայ ամին: Իսկ առաջին ամին, մինչև ևս 40 ընթացեալ լուսինն ընդ երկուտասան ամիսքդ, և ոչ հինգ աւելեացն յաւելալ, զի ա՞րդ լինի վերագիր: Եւ զևթնեբեակ եբրայեցոցն պարտ է զնել հիմն այլոց ազգացդ: Եւ զի այլազգացդ, յետոյ ժամանակաւ, յոր և գտին զարուեստ, ի նմին և սկիզբն թուականին 163բ կարգեցին. ոմանք ՚| յամառնալյին ժամանակի գտարեմուտն եզին, ոմանք աշնանալյինք, որպէս ասորիք և յոյնք, կէսքն ի ձմեռնալյին, որպէս հոռովմք և ի նմին տեղոջ զևթնեբեակն և զվերագիրն որպէս հանդիսեցաւ, եզին: Այլ մեծին Մովսէսի հրամայէ աստուած տաւնել յնգիսպտոս ի շորեքտասան նիսան զառնագէն, զոր Տէրն ի վերնատանն աշակերտաւ ճաշակիտց զգառն խորհրդոյ և զազարեցոյց զառամբ զգատիկն՝ սկսեալ զառամբ: 50 Այսմ վկայէ Աստուածարանն՝ յանելն իւրում՝ Տեսցես անդանար զաստուածային գիշերն և մերձակայ կենացս ցնդելոց այսմ գիշերի հակառակամարտ, յորում նախածինն լուծանի խաւար:

Արդ՝ ասելով «աստուածային գիշեր», զնգիսպտոսին յայտնէ, իսկ «մերձակայ կենացս» զշարշարանն տեառն, իսկ «նախածին

19 Ա արարչութեան 20 Ա և թնեբեակ 20 Ա հինգշաբթի 29 մետասանան 30 Ա և թնեբեակ 39 Ա լուսին Ա զևթնեբեակ 42 Ա յարուեստ 43 Ա գտարեմուտ Ա զևթնեբեակ 49 Ա իւրով արեամբ վիս. զառամբ



խաւարք՝ զի սկզբանէ խաւարն, որ ի վերայ անդնոց, որ լուծանի ի ձևն շարշարանաց միածնին:

Արդ՝ մի ար Տանդիպի եգիպտոսի լումանն, և եզրին, և շարշարանացն տեսնն և հինգհարիւրեկին զնելոյ, որպէս ծննդեանն, 164ա // և աւետեացն, և արարչութեանն, զոր Անդրէաս գրէ յերկուհարիւրեակ բոլորակին: Վասն որոյ պարտ է մեզ ճշմարիտ համարել 60 գտէր եփրեմ, որ մետասանարեայ ստեղծեալ ասէ զլուսին արգեանցն վկայութեամբ և այսի գտանել զլուսմն արարչութեան, զի այլ ոք ի հոգեկիր վարդապետացն ոչ գրեաց ինչ վասն լուսնի ստեղծման:

Իսկ վասն թուականիդ հոռովոց այսպէս գիտացար. ԸԶ (180) հանապազ յաւելու: Եւ այս է պատճառն, զի մուտ բոլորին յապրիելի շորիցն է և արն երեքշարթի, և հոռովմ թուականն յապրիելի երեքսասանիցն և արն ուրբաթ, թուեա ինն խորան և ի տաս կանոնին ասրիելի շորս և արն հինգշարթ, որ է բուն թուականին 70 սկիզբն, ինի ի ծննդեանն Քրիստոսի Բնի (5420), քստ Շ.եակ թուականի, իսկ զԸԶ (180) յաւելեալ լինի ԲՈ (5600) որ են Շ.եակք տաս և ամբ ՄԶ (280):

Իսկ 3Գ (304) ի վերայ թուականին զնելոյ այս է պատճառն. ի սկզբանէ հոռովմ թուականին մինչև սկիզբն հայ թուականին 164բ է ԺԶ խորան, որ լինի ամբ 3Գ (304), և ի հայ թուակ/լանէն ի հոռովմ ԺԲ խորան, որ է ՄԻԸ (228) ամ: Լինի ի ծննդեանն Քրիստոսի հայոց թուականն ՇԸ (508) և հոռովմն՝ ՄԶ (280): Եւ քանզի երբայեցուցն յայտնի է յիսկզբանն և թներեակն և վերադիրն:

Իսկ զայլազգացդ այսպէս արա. կալ զեթներեակ երբայեցուցն հինգ, Գ (3) ի բաց երթ՝ հոռովմի է, Ա (1) երթ՝ յունաց է, 80 Գ (3) երթ՝ ասորոց է, Բ (2) երթ՝ եգիպտացուց է:

Եւ զվերադիրս այսպէս գիտ. քանզի առաջին ամն անվերադիր է: Բայց վասն այլոց ազգացդ վերադիր առնելոյ՝ կալ Լ (30) զերբայեցուցն հին վերադիրն ինն ամ՝ հոռովմի է, և թն ամ՝ յունաց է, վեց ամ՝ ասորոց է, երկու ամ՝ եգիպտացուց է:

Իսկ եթէ հոռովմ թուական կամիցիս գտանել և այնիս առնել վերադիր և և թներեակ, այսպէս արա. կալ զեթներեակ երբայեցուցն և Գ (3) ի բաց երթ՝ հոռովմի է: Կալ Ա (1) զառաջին ամն, ԸԶ (180) զհանապազորդն, լինի ԸԶԱ (181), զայդ ունելով արա որպէս իւր կարգն է, ԻԸ (28) ԻԸ (28) հան, զմնացեալսն կալ ԺԳ (13), 90 զշորիցն յաւել Գ (3) և երթ ՚ի է (7) է (7), մնայ Բ (2): Գարձեալ 165ա կալ զնոյն թուական ԸԶԱ (181), երթ է (7) է (7), մնայ Զ (6), որ է հայոց: Կալ ԸԶԱ (181), երթ ԺԹ (19) ԺԹ (19), մնայ Ժ (10), բազմապատիկ արա, ԸԺ (110) երթ, Ղ (90) մնայ, Ի, Ա յաւել, զի նահանջից նահանջ է, լինի ԻԱ (21), որ է վերադիր հոռովմի և հին վերադիրն Թ (9): Կալ ԸԶԱ (181), զհոռովմ թուականն ամ ՄԻԸ (228), լինի ՆԹ (409), որ է թուական հայոց արարչութեան

58 A ծննդեան \* 65 A թուականիս 66 A յապրիելին 67 A երեքշարթ  
72 A Շ.եակին 78 A զեթներեակ 83 A զեգիպտացուցն փոխ. զերբայեցուցն  
84 A վերադիր

ամին, արա բազմապատիկ և երթ Լ (30) Լ (30), մնայ ԻԹ (29), որ է վերադիր, ոչ նահանջ, ոչ իննևտասներեակ, զի առաջին ամ է, 100 գեո ո՛չ արեգակն զնահանջս գումարեալ է, ոչ լուսին՝ զիննևտաս ներեակս, հին վերադիրն Ժէ (17), զի նահանջից նահանջ է՝ Ա (1) յաւելու Բայց լրմանն՝ ի քառասունէն մին այլ երթ. լրումն՝ յարեգ Ժէ, հասարակածն՝ յարեգ ԺԲ, արարչութիւնն՝ յարեգ Թ, հոռովմ լրումն՝ մարտի ԻԵ, երբայցեւոցն՝ նիսան չորս, վերադիրն՝ երկո- 165բ տասան, հին վերադիրն՝ երեսուն և արն երկու/շաբաթ:

Լինի յԱղամայ մինչև ցըրհեղեղն ամբ ՍՄԽԲ (2242): Եւ ջրհե- ղեղէն մինչև ծնունդն Աբրահամու՝ ԶԽԲ (942): Յակոբ կեցեալ ՃԽէ (147) ամ, էառ ծառայէն եգիպտացոցն ամս ՃԽ (140): Եւ լինի յԱղամայ ՎԶԻԵ (3725) մինչև յԵԼԱՆ, ամ ՃԶ (180), լինի 10 ՎԶԵ (3905), երթ ԼԽն բոլոր, մնայ ՃԶԱ (181), որ է թուականն հոռովմի: Աժ ՄԻԸ (228) զհանապազորդն, լինի ՆԹ (409), որ է թուականն հայոց յԵԼԱՆ:

Կալ ՆԹ (409) զհայ թուականն, ՆԸ (408) երթ, մնայ Ա (1), որ է բուն թուական յԵԼԱՆ յԵգիպտոսէ: Այդ՝ անսուտ վկայութիւն՝ վասն հայ և հոռովմ թուականացոց և մուտ բոլորիդ՝ ըստ արարչութեանն: Զի եթէ լուսինն մետասանարեայ ստեղծաւ ըստ Եփրեմի ի մարտի Ի.Ն.Ն, ի մարտի ԻԵ.Ն գտանի վեշտասանարեայ, որ է նիսան չորս, և արեգ ԼԽնևտասն, եթէ միաշաւիղ ընթացան և ստեղծան արեգակն և լուսինն, յապրիելի չորս լինի լրումն: Եթէ 20 իշխել տուրնջեան և գիշերոյ ստեղծան ի մարտի ԻԵ (25): Արդ՝

166բ յաւուր ուրբաթու եղև ԵԼԱՆԵԼ նոց//ա յԵգիպտոսէ՝ խորհրդարար ազատեալք ի շար ծառայութեանն, յորում ատուր նախահայրն դայ-թակղեցաւ լարծող մեղաւք ի ծառայութիւն ապականութեան: Գեղեցկապէս ի նմին ատուր փրկեցաք արեամբ գառինն, որպէս նոքա՝ յԵգիպտոս արեամբ գառինն: Զի որպէս վերագոյնն ասացաք, միևնոյն ար հանդիպի արարչութեանն, և աւետեացն և մկրտու-թեանն, սոյնպէս և յանցանացն Աղամայ, և շարշարանացն փրկչին, և Ելիցն Իսրայելի, և արարչութեանն, և յարութեանն փրկչին: Եւ Ելիցն ի ծովէն Մոսկէսի միևնոյն ար հանդիպի, զոր գուշակեաց 30 Եսայի, թէ որ Եհան յերկ[ր]է զհովին հատից, որ է Մոսկէս. և մեծն արեամբ ուխտին ըստ առաքելոյ, որ է Քրիստոս: Գործեցաւ խորանն զԼԽն ամիս և կացին յանապատին քառասուն ամ: Սո-ղովմոն յութերորդ ամի թագաւորութեանն իւրոյ տաճարին սկիզբն արար շինելոյ և կատարեաց զութ ամ: Եւ լինի յԵլիցն ՆԶ (480)

167ա ամ: Ազարիա, որ է Ոզիա երկոտասաներորդ // թագաւորեաց Հրէաստանի ամս ՄԲ (52): Ի սորա ԽԹ (49) ամին Եղան զիմպիադքն: Եւ թէպէտ և յայլ թիւս անմիարան հանդիպի ժամանակագրութիւնք առաջնոցն, սակայն յայսմհետէ անսխալ կարգին ժամանակագրութիւնք մինչև առ մեզ ի ձեռն զիմպիադացոց, որ 40 է թուական ամենայն ազգաց, որ գիտեն զղապրութիւն:

10 A ՎՃԵ փոխ. ՎՃԵ      10 A թուական      16 A լուսին      19 A լուսին  
25 A լարծող      26 A արարչութիւն      27 A յանցանաց      33 A թագաւորութեան  
35 A բեկիզբն      38 A անսղալ



Լինի բուն թուական մինչև յառաջին զիմպիադն ամբ ՏՈՅ (4640), որ ուղիղ բերել զկարգ հինգարիւրեկիդ: Եւ ըստ Եւսեբիոսի (4424), յԱդամայ մինչև ի Մովսէս՝ ՎՉԻԵ (3725) ամ, և հինգհարիւրեակիդ ԼԹՆ յեկիցն. և ի Մովսիսէ մինչև ի սկիզբն զիմպիադացն՝ ՋԺԵ (915): Եւ ըստ Եւսեբիոսի՝ ՉԼԵ (735), և յԱդամայ՝ ՏՈՅ (4640): Հերովդէս թագաւորէ ամս ԼԲ (38): Ի սորա առաջին ամին կատարին ԼԹՆերորդքն Դանիէլի, զի ի ԿՁ (66) զիմպիադին ասացաւ նմա թէ՛ ԼԹՆերորդք՝ ԼԹՆ և ԼԹՆերորդք՝ ԿԲ (62), որ լինին ԿԲ (69): Համառատեացին ի վերայ ժողովրդեանն և բարձցին ամուսնիւնք սրբութեանցն: Քանզի Հերովդէս 50 ալլազգի տիրեալ ի վերայ // սրբութեանց տաճարին կաշառաւք կացուցանէր ամենայն ամի քահանայապետ և եղծեալ, շփոթեալ լինէր կարգ սրբութեանցն:

Արդ՝ ԿՁ (66) զիմպիադքն համառատեացան ԼԹՆերորդքն: Եւ ի ՃՁՁ (186) զիմպիադին թագաւորէ Հերովդէս ալլազգի, որ լինի զիմպիադք ՃԻ (120) և ամբ ՆՁԳ (483): Այս է թիւ ԼԹՆերորդացն Դանիէլի: Եւ յԼԲ (32) ամին Հերովդի ծնաւ Քրիստոս, որ լինի զիմպիադք ՃԼ (130) և բուն թուական՝ ԲՆԻ (5420), զի ժամանակ ամաց հինգհարիւրեկիդ ուղիղ գայցէ, քանզի գիտութիւն սորա է 60 ո՛չ միայն գտանել զաւուրս լրմանց լուսնի, այլ բազում գոյ գիտութիւն ի ձեռն նահանջմանց քանութեկին, որ ի բազմաց դանխու և միայն յայտնի այնոցիկ է, որ կարող են հմտաբար հոյովեցուցանել յետաբարձութեամբ ընդ կրկնումն, և այնպէս կարեն տեսանել իբր ի հայելոջ զանցեալ ժամանակս:

Արդ՝ վեց զիմպիադին շինեցաւ Հոովմ: Եւ յուր զիմպիադին՝ առաջին գերութիւնն Իսրայելի՝ տաս ցեղին ի Սաղմանասարայ Ի 168ա Երեքտասան զիմպիադին՝ հիւանդութիւնն Եղեկիա[ձ], և Սենեքերիմ ել ի վերայ Երուսաղէմի, և հրեշտակն կոտորեաց ՃՁԹ (180,000): Ի հնդկասան զիմպիադին Նեմիաս երկու ամիս յաւել 70 ի տարին՝ զչունուարի և զփետրուարի, զի յառոջ տասն ամիս էր: Ի ԽԵ (45) զիմպիադին գերութիւն հրէից ի Նաբուքոդոնոսորայ և մահ Սեղեկիայ: Նարուզարդան աչրեաց գտաճարն տեկ ամս Նեթ (442): Ի ԿԷ (67) զիմպիադին զարձ գերութեանն: Ի ՉԳ (84) զիմպիադին Նեմի շինեաց զպարսպ քաղաքին Երուսաղէմի: Ի ՃԺԼ (111) զիմպիադին Մեծն Աղեքսանդր թագաւորէ ամս երկոտասան: Ի ՃԻԳ (124) զիմպիադին Պտղոմէոս զհրէից գիրս ի յոյն լեզու յԱղեքսանդրիայ կազմեաց: Ի ՃԼԲ (132) զիմպիադին Հայոց թագաւորէ Արշակ: Ի ՃՄԳ (153) զիմպիադին՝ մակարէացիք նահատակք: Ի ՃՂԵ (195) զիմպիադի ծնաւ Քրիստոս: Ի ՄԿԹ (269) 80 [զիմպիադին] սուրբ Հոսիոսիմիանքն եկին ի Հայք: Ի ՄՂ (270) զիմպիադին սուրբ Գրիգոր ձեռնադրի հայրապետ Հայոց: Ի ՄՂԷ (277) զիմպիադին սուրբ ժողովն Նիկիայ եղև:

168բ Եւ արդ՝ եկեցուք ի կարգապարտութիւն տասնիցն երբ/այից-

44 A հինգ յեկիցն 47 A ԼԹՆերորդքն 48 A ԼԹՆերորդք 52 A քահանայապետ 56 A ԼԹՆերորդացն 60 A ՃՁԲ ի ԼԹՆասան փոխ. հինդկասան



ւոց, քանզի ամենայն տունախմբութիւնք նոցա կթն ամբք բացակատարին աւուրքք և շաքաթիւք և ամսաւք:

Արդ՝ է սկիզբն տանից նոցա հրամայեալ յաստուծոյ շաքաթ հանգստեան յետ վեց աւուր գործոյ: Զոր և մեծացոյց յաշս նոցա կոչելով զնա սուրբ և դատարկանալ ի նմա ի շարեացն հրամայէ խորհրդաբար մեզ յայտնելով զկատարեալ հանգիստն ութերորդ

90 անվախճան դարուն կենսասիրաց անձանց, յորում զետեղեալ զկայ անունն բոլոր արարածք ի բաց զնկով զլամոր ապականութեան, որ է աճելութիւն և նուազութիւն արարածոց. զգնելով զլոյսն ապականութեան, լինի երկիր կենդանեաց կատարեալ շաքաթ, որ է հանգիստ, ար աներեկ մեծ, յորմէ փախչին ցաւք և տրամութիւնք և անէծք: Եւ զայլք հրեղէնք զետովք խորասուզեալք մաքրին ի միջոյ գառանց՝ զարէն խաարի ի լուսոյ հալածեալ: Եւ կատարելապէս հանդչին արդարքն աստուածատեսակ կերպիւ զարդարեալք, յորս բնակի Քրիստոս սուրբ հոգի/ւովն, զի եղիցի աստուած յամենայնի:

100 Եւ տան երկրորդ Բաղարջակերացն՝ տան փրկութեան ի ծառայութեանէ փարատնի: Զատիկ, որ է ելք, ի խորհուրդ ելանելոյ մեզ յաստի, որպէս չնգիպտոսէ ի վերին դաւան, ազատ ի ծառայութեանէ ազտեղութեան մարմնոյ, որ բռնանայ ի վերայ որպէս փարատն: Եւ տան երրորդ, որ կատարի յեթն շաքաթս կթիցս կթ աւուրքք, որ լինի ԽԹ՝ (49), և Ա ի վերայ բերեալ, որ կոչի յորելեան ար պարապոյ ընթեռնուլ զգիրս, զի ի նմա բնկալան դատուածագիծ տախտակսն ի լերին անդ, յորում դէմքն Մովսիսի լուսաւորեցան յայսմ աւուր, և առաքեալքն լուսաւորեցան հրեղէն լեզուաք՝ ընկալեալք զարէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս: Եւ տան չորրորդ սկիզբն տարւոյն ար նուիրեալ: Եւ տան հինգերորդ յամսեանն կթներորդի, զի նա ինքն է թշրին Ա (1), ար ամսոյն կոչի զոհութեան ար՝ նուիրեալ և սուրբ: Զատուցանելով զերախայրիս կալոյ և հնձանի յառաջին արմտեաց: // Եւ չիններորդ աւուր նորին ամսոյ սուգ տրամութեան պահաւք յաղագս յանցանաց որթուն: Եւ ի տասներորդին է ար քաւութեան, յորում քահանայապետն մտանէր ի սրբութիւն սրբութեանցն և ի նմա ժողովէր ամենայն ազգն հրէից տանել՝ ազգ առնելով փողով ի նոր ամսեան յաւուր նշանաւորի: Այսար եղև պապանձումն Զաքարիայի: Եւ ի հնգհտասան աւուր նորին ամսոյ լինի տան տա-

10 զաւարահարաց, յորում ամենայն ազգն հրէից ի տանէ արտաքս ելեալ, ի տաղաւարս բնակէին՝ յիշելով զբնակութիւն անապատին: Այսպէս տանելով զեթն ար տաղաւարահարացն մինչև ԻԲ (22) ար ամսոյն, արձակէր քահանայապետն զժողովուրդն: Ապա յեթն ամին լինէր ամ թողութեան, ազատութիւն ծառայից և հանգիստ երկրի: Դարձեալ յեթնից կթ ամի, որ լինի յիսուներորդ, զոր կո-

88 A Գորեացքն      89 A ութերորդ      90 A անվախճան      92 A զլոյս  
97 A զարդարեալ      4 A երկրորդ փոխ. երրորդ      6 A յորելեայ      9 A բնկալեալ  
9 A տախտակ      10 A ամսոյն      11 A կթներորդի      13 A տասներորդին  
17 A Նմաջ      25 A յիսուներորդ

- չեն յորեկեան կատարեալ բոլոր ազատութիւն ամենայն հարկաւոր  
 170ա ծառայութեանն անդուց և հլիւյրենեաց, ի վաճառիկ ստացողաց: Այս են տանք հրէից նշանագրութեամբ մատենագրեալ յարէնս նոցա:
- 30 Արդ՝ որպէս սկիզբն տանից նոցա սկսանի ի նիսան ամսեան ի հասարակել տուրնչեան և գիշերոյ գեթն ար տանեն անխմոր գաննադէն արիւնաշաղախ դրաւք, արինակ արեան գոտինն տուածոյ ի սեամս շրթանց մերոց: Նոյնպէս գարձեալ թշրին ամսեանն, ի հասարակել տուրնչեան և գիշերոյ, լինի տանախմբութիւն, յորում գեհոյր զուարակ վասն մեղաց, զորոյ գարինն քահանայապետն ոչ ի սեամս տանց, այլ ի սրբութիւն սրբութեանցն մուծանէր առաջի սեղանոյն, որպէս և տէրն մեր եմուտ իւրով արեամբն ի բուն իսկ յերկինս յանդիման լինել երեսացն աստուծոյ:
- 40 Յայսմ ատր ամենայն Իսրայէլ ժողովէր յՆրուադէմ ի տաճարն և շէր ումբ հնար երթալ ի տուն իւր մինչև կատարումն տանի տաղաւարացն: Արդ՝ ի տասներորդում ատր || ամսոյն մտեալ 2արարիա ի սուրբան, ընկալեալ զաւետիս ի հրեշտակէն, այլ ոչ ի նմին ատր կարող էր երթալ ի տուն իւր: Զի ոչ իսկ էր յՆրուադէմ տուն նորա, այլ սպասել հանդերձ ամենայն ժողովրդեամբն կատարմամբ տանին: Եւ վկայէ այսմ Ղուկաս աւետարանագրութիւնն յասել անդ իւրում, թէ իբրև լցան ատրք պաշտաման նոցա, զնաց 2արարիա ի տուն իւր, և ո՛չ եզական անուամբ պաշտաման, այլ ատրք պաշտամանց բազմաւորական անուամբ, զորոնց ատրք յայտ առնէ, զի ամենայն ատրք տաղաւարահարացն ի հնգեասան արէ ամսոյն մինչև ի ԻՍ (21) արն, ապա կատարի տանն: Եւ ի ԻԲ (22) արն զնաց 2արարիա ի տուն իւր: Եւ յայնմ գիշերի սաղմնառութիւնն եղիսարեթի և ոչ ոք կարէ ճշգրտել թէ՛ ի տասներորդին, յորում զաւետիսն ընկալաւ, ի նմին և յղութիւն եղիսարեթի եղև: Նաև ընթերցուածոց տանակարգութեան ի յունուարի վեցին Յակոբայ զասակարգութեան զար ծննդեան վկայէ աստի սկսանի վեց ամսեան:
- 171ա || Արդ՝ Ա թշրին ն[ս]իրեալ ար սուրբ, որ է սեպտեմբերի ժԸ, և մարերի ԻԵ, և արն ուրբաթ: Եւ ի տաս թշրին՝ ար քաւութեան և պապանձումն 2արարիա[յ], որ է սեպտեմբերի ԻԷ, և մարգաց շորս և արն կիրակի: Եւ ի ԺԵ թշրին՝ տաղաւարահարք, որ է հոկտեմբեր երկու, և մարգաց ինն, և արն ուրբաթ: Ի ԻՍ թշրին կատարումն տանին տաղաւարահարաց, որ է հոկտեմբեր Ը, և մարգաց ԺԵ և արն հինգշաբաթ:
- 60 Արդ՝ արասցես ևթներեակ. կալ զբուն թուականին ԲՆԺԸ (5418), հան ի բաց տաս Ե[ԼԲ] բոլոր, մնայ ՂԸ (98), երթ ԽՎ (28) ԻԸ (28), որպէս իւր կարգն է, մնա[յ] շորեքտասան, զշորիցն յաւել երեք, լինի ԺԷ (17) արարչութեան ամին, ևթներեակն ի վերայ:



բեր, միով պակաս զիւրաքանչիւր ազգի անսխալ ցուցանէ, զի  
70 երբայեցտչն եթներորդ է և հոտովմին՝ երկու:

Արդ՝ կալ զմնացեալսն ժէ, շորս ի վերայ բեր, լինի ԻԱ (21),  
երթ եթն եթն, մնայ եթն, որ է երբայեցտչ, մին ի վերայ ած,  
լինի ժԸ, երթ եթն եթն, մնայ շորս, որ է հոտով: Իսկ հայտց  
այսպէս արա, յորժամ ԻԸ ԻԸ գնաս, մնայ ժԳ, զշորիցն մի յաւելցես,

171բ մի/ւայն զեթներեակ արարչութեանն, զի վեց էր, զմինն թողով,  
զն ի վերայ ած և երթ եթն եթն, մնայ է և արասցես զուզաւորու-  
թիւն: Կալ զթշրին տաս, որ է քառթեան ար, զանցեալ ամիսն ի  
վերայ բեր, լինի ե (40), զյարակայն երթ ժԳ (13), մնայ ԻԷ (17),  
որ է սեպտեմբեր: Կալ զթշրին տաս, կրկնակ եթն, եթներեակն

80 եթն, լինի ԻԲ (22), ԻԱ (21) երթ, մնայ Ա: Իսկ զհայտց այսպէս  
արա. զի հասարակածն ի արէի ԻԳ (23) էր, զշորսն ի բաց առ,  
մնայ ժԹ (19), որ է յարակայ: Արդ՝ կալ զթշրին տաս, ժԹ (19)  
զյարակայն, և հինգ զաւելիցն, լինի ԼԳ (34), զերեսուն երթ, մնայ  
շորս մարդաց: Կալ զսեպտեմբերի ԻԷ (28), երեսուն զամսանա-  
հանջն, երկու զյարակայն, հինգ զաւելեացն, լինի ԿԳ (64), զվաթ-  
սունն երթ, մնայ շորս, որ է մարդաց շորս. եթներեակն հինգ և  
կրկնակն վեց, լինի ժն (15), երթ եթն եթն, մնայ մին, որ է  
քառթեանն ար կիրակէի: Արդ՝ ի հնգետասան ատուր թշրին ամսոյ  
սկիզբն տանին և արն ուրբաթ: Ի ԻԱ՝ կատարումն տանին և

90 արն հինգշաբթի, զի վերջին արն յոյովագոյն էր մատուցումն  
172ա զսհիցն և պատարագաց, և ոչ ժամամեկը քահանայապետն եր-  
թալ ի տուն իւր ի ԻԲ (22) ատուր ամսոյն, երթայր այր ի տուն իւր  
յաւուր ուրբաթի և լինի թշրին ԻԳ՝ և եթներեակն եթն, և հոկտեմ-  
բեր ժ՝ և եթներեակն շորս, և մարդաց ժն՝ և եթներեակն եթն, և  
արն շաբաթ:

Յայսմ արէ թուել պարս է զատուրս մինչև յաւաիս կուսին,  
որ լինին ատուր ՃԶ (180) և հանդիպի նիսան ժէ, և ապրիելի  
եթն և քաղոց մեռասան: Լրումն յապրիելի մին, և ի նիսանի մե-  
տասան և եթներեակն մին և հոտովմին եթն, ի քաղոց հինգ և

100 եթներեակն վեց և արն հինգշաբթի: Բուն թուականն ԲնժԸ (5418),  
հոտովմն՝ ՄՀԹ (279), և հայ թուականն Շն (505):

Արդ՝ արասցես արագիտ այսպէս. կալ նիսան ժէ (17),  
եթներեակն մին, լինի ժԸ (18) [քաղոց՝ ժԱ, կրկնակ՝ մին և] երթ  
եթներեակն վեց, լինի ժԸ (18), երթ հինգ, եթն [եթն], մնայ շորս,  
զի սկիզբն տարոյն լեալ է, և մին յաւելու եթներեակն: Եւ այսպէս,  
աւետիքն հանդիպեալ շորեքշաբթի, զի և յիսկզբանցն անդ լոյսն  
որպէս պաշտեաց, զերիս ատուրս անժարմին և անարեգակն յա-  
ուր շորեքշաբաթու ժողովեցաւ ի տարր/կեղէն անաթ արեգակն՝

172բ իբրև մարմնազգեաց եղեալ: Նախ՝ ի շորորդում զարում անդ  
10 աւետիւր պարզեական զաւակին առ Սասայ եկաւորեալ, անդ ծա-  
նեալ գնա Արրա՛համ և ասա ամենայն երկիր: Նա և՛ յաւուր շորեք-

69 A անսղայ 83 A ԼԳ փոխ. ԼԳ A 85 A զվաթսուն 101 A ՇԷ փոխ. ՇԷ



շարքի իջանէ ի կոյսն անբաւանդակելի լոյսն, բաւանդակելի մարմնով պարգևեալ: Որ տասց ցՌ.գամ. Ահա եղեր իբրև զմեզ: Արդ՝ ինքն եղև իբրև զնա, զանէ՛ծան նորա յարհնութիւն փոխեաց և զմահ ի կեանս: Եւ քանզի բողկացութիւն մահու և ապականութեան մարդկան յարմատոյ անտի սկսաւ, յասին աստուծոյ կթէ՛ Յաւաւք և տրտմութեամբ ծնիցիս: Եւ բազմացոյց զցաւս ի ստունդանել առաջին կնոջն: Վասն այսորիկ ընթացաւ ողորմութիւն նորա բժշկել զվերս հարուածոց արեգականդ ի սկզբնամարն:

- 20 Արդ՝ յառաջ քան զարեգակն երեք արն անմարմինք արինակ երրորդութեանն էր, որպէս ասաց հրեշտակն ցկոյսն՝ Հոգի՛ սուրբ 173ա եկեոցէ ի քեզ և զարութիւն բարձրելոյ, որ է || հայր և որ ծնանելոցն է՝ սուրբ է, որ է որդի: Ահա զերրորդութիւնն ի նա բնակիլ ասաց: Եւ որպէս անդ բազմութիւն լուսոյն յարեգականն և այլն ի յուսինն և այլն յաստեղան, աստ լուսոյ երրորդութեանն բազմութիւն նորա ի սուրբ կոյսն, յորմէ արեգակն և այլ յառաքեալսն և ի մարգարէան և այլն ի քահանայս և ի հաւատացեալս: Ինձ թուի ըստ իւրոյ մաքրութեանն իւրաքանչիւր, զի ամենայն աման, որչափ տանի փոր նորա, այնչափ աոցէ ջուր յանսպառ գետս: Անդ արեգակն ի տուէ զերկիր լուսաւորէ, աստ՝ Քրիստոս, որչափ յաշխարհի էր, լոյս էր աշխարհի, լուսին յետ արեգական զնսեմ գիշերոյ զարդարէ, և առաքեալքն յետ Քրիստոսի զերկիր հաւասարաբոր ի ճաճանշ լուսոյ ձգեցին: Լուսինն բաւանդակ գիշերն ոչ լուսաւորէ: Եւ նորա զամենայն երկիր յաստուածգիտութիւն ոչ ամին: Արեգակն ի վերայ աստեղաց ճեմի և Քրիստոս սքանչելի ի վերայ սրբոց իւրոց: Աստեղք նաւորաց առաջնորդեն և քահանայք՝ երկրի: Որ || 173բ զարէն ծովու անդադար ալեկոծէ, կթէ մէկ զաստեղս ծածկեացէ, վտանդ ոչ սակաւ նաւելոցն հակաճառէ: Եւ առաջնորդք կթէ մառախլազատ կենցաղավարին՝ քողասուղել կամելով զանարժան լուսոյ զգործս իրեանց, զայլթակղութիւն երկրի ոչ սակաւ լինի, որք տայոց իսկ ևն զանհնարին վրէժս ո՛չ միայն ընդ անձանց կորստեան, այլ և ընդ զայլթակղութիւն բազմաց փոխանակ միոյ ի փոքրկանց. զի անուն տեառն վասն նոցա հայհոյի:

Ահա այս ամենայն խորհուրդ չորեքշաբթին է աւետեաց կուսին, զի յաւուր չորեքշաբթի ստեղծաւ արեգակն և յայսմ ատուր սկզբնաւորեալ անսկզբնական բանին հար իննամսեայ ժամանակաւք և հինգ ատուրք, որպէս եղին ի կարգ ծննդեան զանդրանկան այսչափ ամսոք ծնանիլ: Եւ հանդիպի յունուարի վեց, և տրէթ ԻԱ. (21) և հոսի տաս, որ լինին ատուրք ՄԶն (275) և արն հինգշաբթի:

- 50 շաբթի:  
 174ա Արդ՝ արասցես արագիտո: Կալ զյունուարի վեց, կթնեբեակն վեց, || զի սկիզբն է ամի, լինի ժԲ (12), երթ կթն, մնայ հինգ: Կալ զտրէթ ԻԱ. (21), կթնեբեակն մին, զի ի նոյն ամի է և կթնեբեակն նոյն է, կրկնակն շորս, լինի ԻԶ (26), երթ կթն կթն, մնայ հինգ:

23 Ա նայ      25 Ա լուսին      25 Ա լուսնոյն      41 Ա կորստեան  
 48 Ա ամաւք փոխ. ամսոք

Կալ զհոռի տաս, կրկնակքն երկու և Լթնեքեակն Լթն, լինի իննև-  
տասան, երթ Լթն Լթն, մնայ հինգ: Գարձեալ կալ յաւետեացն  
մինչև ի ծնունդն աւուրս ՄՁԵ (275), բեր զպատկեր վերջին աւուրն  
երեքշաբաթ, երթ Լթն Լթն, մնայ հինգ: Նոյնպէս կալ ի յղութենէ  
Նղիսաբեթի որ էր յաւուր շաբաթու ճՁ (186), երթ Լթն Լթն,

60 մնայ չորս, որ է աւետեաց կուսին:

Այլ Լթէ կամիցիս հոռովմ թուական առնել և այնիս առնել  
Լթնեքեակ և վերադիր, այսպէս արասցես. կալ զթուական հինգհա-  
րիւրեկին ի ծնունդն փրկչին ԲնԻ (5420), զհանապազորդն ի վերայ  
բեր ճՁ (180), լինի ԲՈ (5600), որոշեալ հինգհարիւրեակ շրջանիւզ,  
մնայ ՄՁ (280), որ է թուական հոռովմ, այդիւ արասցես Լթնե-  
քեակ որպէս կարգն է: Կալ ՄՁ (280), ած ի վերայ ՄԻԸ (228)

174բ զթուական ԲնԻ (5420), հան տաս Շ.բոլոր, մնայ || հարիւր, ած ի  
վերայ ՆԸ (408), զհանապազորդն, լինի ՇԸ (508), որ է թուական

70 հայոց, ծնընդեան փրկչին. և այդիւ արասցես Լթնեքեակ որպէս  
կարգն է: Արդ ի ծննդեանն վերադիր հոռովմ ԻԵ (25), Լթնեքեակն  
Լթն, լրումն ի մարտի ԻԱ (21) աւրն երեքշաբաթ: Իսկ երրայնցոց  
վերադիրն հինգ, լրումն յաւելեացն Լթնէն և ամն նահանջի: Կալ  
հանապազ քառասուն, ԻԳ (23) զհին վերադիրն, և հինգ զաւե-  
լեացն և վեց կիսական երթ, մնայ հինգ, որ է աւելեացն հինգ, զի  
աւել աւուրքն անցեալ տարոյն է, անցեալ վերադրան լինի: Կալ  
հինգ զաւելեացն, վերադիրն հինգ, կիսական վեց, լինի վեշտասան,  
որ է քանիք լուսնին լրմանն: Կալ հինգ զաւելեացն, կրկնակն երեք  
և Լթնեքեակն երկու, լինի տաս, երթ Լթն, մնայ երեք, որ է ար

80 լրման, և զի հինգհարիւրեկին թուականն ԲնԻ (5420) էր, ի բաց  
տրոհել տաս շրջան, մնայ հարիւր, որ լինի հինգ իննևտաս-  
նեքեակ, որ մնայ, հինգ թիւ տուր ի հինգհարիւրեակն յիւր մտէն  
յառաջ և գտցես մարտի ԻԱ (21) և զաւրն երեքշաբաթ: Տուր զնոյն  
թիւազ ի յայտնութեանն՝ Շ.եակն միով պակաս, զի յայտնութեանն  
175ա ի միւս տարին ելանէ յետ լրմանն և զտ||անես զաւր ծննդեանն  
հինգշաբաթ, թուեա Լ (30) զիր և գտանես զաւր մկրտութեանն  
կիրակէ:

Իսկ հայ լրումն ի տրէ ի ԻԵ.ն, հասարակածն ԻԳ (24), վերա-  
դիրն տաս, և Լթնեքեակն Լթն, նոր վերադիրն քսան, զի ամն նա-  
հանջի է, արս զուզաւորութիւն: Կալ զմարտի ԻԱ (21), երեք զյա-  
րակայն և մին ամսանահանջն լինի ԻԵ (25):

Տեսցուք՝ Լթէ կամիք և զկարգ տաւնիցն քաղկեդոնականացն,  
զի սեպտեմբերի ԻԷ.ն էր պապանձուսն Զաքարիայ: Ի նմին աւուր  
և զյղութիւնն Նղիսաբեթի ասացին և անտի մինչև ի մարտի ԻԵ.ն  
համարեն վեց ամիս, և անդ ասեն զաւետիսն Գաբրիելի առ կոյսն:  
Եւ անտի մինչև ի գեկտեմբերի ԻԵ.ն համարեն ինն ամիս և հինգ  
ար, և անդ ասեն զծնունդն Քրիստոսի: Եւ ի փետրուար ԻԲ.ն



100 ղՏեանընդառաջ կատարեն և բազում անգամ շանան զար ծնըն-  
 դեան հինգշաբթ ամեկ և ոչ կարեն, և ոչ զաւեախան շորեքշաբթի-  
 նորա այսպէս կատարեն զտունս իւրեանց: Զի խորհրդակիցք  
 175բ նեւինն են, որպէս Պաւղոս ասէ խորհուրդ անալիքինն արդենիս  
 զարանայ: Եթէ առ Պաւղոսի զարանայք, առ մեոք եկեալ հասեալ  
 իսկ է, զի և Տիբէ, և Արաւմոն և Ն/և/ստոր այսպիսի սամամբ  
 հորդեցին ճանապարհ նեոինն: Նա և ոչ իսկ պարս է ի քաղաքին  
 յորում նա թաղաւորելոց է պատարագիլ Քրիստոսի, այլ խմոր և  
 քացախ ջրով լուացեալ անուղ զպատան Յուդայի, փոխանակ  
 անապահան մարմնոյ և արեան կենարարին, այլ մեզ մի՛ լիցի  
 փոխանակել զճամարտութիւնն աստուծոյ ընդ սառութեան:

10 Գարձեալ տեսցուք և զսկիզբն հաւատոյն Քաղկեդոնի: Ոչ ահա  
 բողք առ Կոստանդիանոսի. եղեն սկիզբն հաւատոյ նոցա, որք  
 պոռնկէին ընդ ՀԲ (72) լեզուի, զի յայլում քաղաքի ոչ գտանին  
 ՀԲ (72) լեզուք, բայց անդ միայն՝ ի մեծ Սողոմ: Նոյնպէս հաւատն  
 նոցա պոռնկեցաւ ընդ ՀԲ (72) լեզուի և ՀԲ (72) լեզուի շարիք ի  
 նոսա գումարեցաւ:

176ա Ահա և սկիզբն սուրբ հաւատոյ մերոյ եղեն սուրբ կուսանք  
 առ մեծին Տրդատաւ[չ]. նոքա բերին զհիմն սուրբ հաւատոյն Պեա-  
 րոսի և Պաւղոսի, եղին//ի Հայք, զայս հիմն ամենայն տիեզերք ոչ  
 կարացին խախտել: Ահա սուրբ կուսանքն եղին զսուրբ կոյս հա-  
 ւատոյ զայս հարսն Քրիստոսի: Եւ պիղծ շարագործ պոռնկի եղին

20 զպիղծ շարագործ հաւատն մեծ Սողոմայ հարսնացեալ նեոինն,  
 զոր տէր Յիսուս սատակեցել զհարսն և զիսեայն հոգով բերանոյ  
 իւրոյ և խախտեցել զայստեամբն իւրով: Եթէ որ ասիցէ՝ թէ մեծ  
 Կոստանդիանոս սուղափառ էր, նա և բողքն այն զատուրս տղայու-  
 թեան իւրեանց կուսանք էին և հաւատ նոցա եկաց ի կուսութեան  
 զատուրս Կոստանդիանոսի միայն, բայց որդիք նորա արիանոսք  
 եղեն: Յետ նոցա և տիբեանիտք և փղարիանիտք եղեն, ապա նես-  
 տորականք եղեն, ապա և զորիանիտք, և նիկողականք և յոր-  
 նաղանիտք եղեն, ապա քաղկեդոնիտք եղեն, և կան և մնան զերս-  
 րիստին մինչև սկիզբն լինին:

30՝ Արդ՝ ի մկրտութեան տեան բուն թուականն ԲՆԾ (5450),  
 176բ գնա զըրջանսն. մնայ ՃԼ (130), ամ ՃԶ (180) հանապազորդն, լինի  
 ՅԺ (310) հոռոմ թուականն, ամ ՄԻԸ (228), մնայ վեց հայ/ոց  
 թուականն, լրումն յապրիելի ԺԸ և ևթներեակն երկու ի նիսանի ԻԸ և  
 ևթներեակն հինգ, ի քաղոց երեսուն և ևթներեակն երկու և արն  
 հինգշաբթի:

Իսկ խաչելութեանն աստուածն բանի ի բուն թուականն ՃԼԳ  
 (133), հոռոմն ՅԺԳ (313), հայն ինն, խաչելութիւնն յապրիելի ԺԵ. և  
 ևթներեակն վեց, ի նիսանի ԻԵ. և ևթներեակն երկու, ի քաղոց  
 ԻԸ, ևթներեակն հինգ և արն ուրբաթ, որ յաւետարանն գրեալ է

4 A նայ և 11 A պոռնկ էին 13 A լեզու 17 A ի շի 19 A խ-  
 րած փոխ. հարսն 19 A պոռնկի 20 A պիղծ 22 A ևթներեակն  
 34 A ևթներեակն



- 40 և թէ ուրբաթն զատիկ և այդ այսպէս զխաւորեցաք զբանն լինել  
 զար մկրտութեանն ի վեց յունուարի և արն կիրակէի: Եւ զչոր-  
 177ա Թին Եղիսաբեթի ի տաս հոկտեմբերի և ի ԻԳ (23) թշրին և ի ԺԷ  
 (17) մարգաց, և արն շաբաթ, զի գատարկութիւնն անգործ և զան-  
 պտղարեութիւն ատարն ի գործ և ի պտղարեութիւն յորդորեցէ  
 ձայնիւ Կարապետին բանին աստուծոյ, այսինքն է զանպտուղ և  
 զանրեղուն անխայր ի տոհմէն հրէից, այլարցապարք նախնել յա-  
 րածագապէս ի ծանաթութիւն եկեալ փրկութեանն ճահ || ահա-  
 50 գործեցէ և յատր շորեքշաբթի զաւետիս կուսին, զի գոր արի-  
 նակին ի նախագործս անդ զգայական արժով անորակ աննիւթա-  
 կան լուսովն, անքանակ, զեռական ատուրցն ըստ երրորդութեանն  
 ձեացել թուոյ: Ի շորիցն ար տարբացոյց ի կափասիս թափանցիկ  
 հազազահրատ թաղանթիցն ամփոփել և ծերքել զփոռմն լուսին  
 նիւթական պարածածկեալ ծագեալ յերկիր, մեկնել զմթականն ան-  
 ջրպետել առ առաւատիւ: Այսպիսի վեցհազարեան գարու աստ  
 անսահման և անպարագրելի լոյնն ճառագայթ փառաց հար բունն  
 յատր շորեքշաբթի փոխիւ քառանիւթ երկրակոխ նիւթական մար-  
 60 մին զնսեմականն բախլ, արտամեքծելով զստուեր խաւարային մե-  
 177բ զաց, որոց ոչ բշշակնել և բթել տեսանելիքն ի նա հայել: Եւ յատր  
 հինգշաբաթի զձնունգն: Զի որպէս յառաջնումն հինգշաբաթին  
 60 զսեստ հողանիւթեայ զեանոց և զհոյս քառտանեաց ի չորս ծնի-  
 177բ ցեալս || կոշեաց ի գեռեղս ցամարայինս հողարշաւիցս թեարուսիւք  
 հանդերձ աւգապարիկ պէս պէս ազդար վերաշուեոց: Այսպէս և  
 յերկրորդում աստ, ի սոցն ատր, բանայ դուն լուսաւոր ծննդեան  
 վերստին նորոգման բազմահոյ ժողովոց, ի ձեռն իւրոյ արինակի,  
 մտին յաշխարհն վերին, զգրունս երաց և ձայն հար և հողին հե-  
 70 դա ի ջուրս: Եւ որպէս յատր յուրբաթի անդ առաջին մարգն փայ-  
 աի և հաս աղականութեան, սոցնպէս և յարբաթայեայ դարս՝ աստ:  
 Յատր ուրբաթու ի փայտակերտ սեղանոյ ճաշակեցաք զանապա-  
 կանացու կերակուրն, ի շաբաթու անդ հանգստի գործոց և աստ  
 արձակումն ի զժոխոց թաղմամբ յարուցչին մերոյ պահելոյ վի-  
 70 մին, զվէմն, որ հատաւ առանց ձեռին: Այսպէս և առաջին միա-  
 շաբաթն լինելով մեզ սկիզբն գործոյ և աստ սկիզբն արգարու-  
 թեան, զագարումն յանմարուր վարուց և հանգիպումն յարու-  
 178ա ցելոյն ի մեռելոյ: Զի միեռնուց խորհուրդ կատարի յարութեան և  
 մկրտութեանն անանջրպետ միութեամբ, թաղումն ի ջուր միածնին  
 լուսահեղձ և վերարեութիւն յանուանսն, որով թաղեցաք ըստ  
 զուշակելոյն առաքելոյ՝ թաղելիք ընդ նմին մկրտութեամբն ի մահ:  
 Զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառուք հար, նոցնպէս և  
 մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք: Եւ ինքն ամբն զարշաբանս  
 80 մահուն մկրտութիւն կոշեաց և զսոժումն իւրոյն ի թաղումն՝ խոր-  
 հըրդարար ներգործելով ի մեզ զխորհուրդ անարեւնութեան թաղ-  
 մանն և յարութեանն: Զի ծնունդ կուսական յարգանգի տաղանին  
 զարինակ բերէ մեզ մարբափայլ ծննդեան սկզբնալոյս կենացն՝  
 նոր ջրոյն և ի հոգւոյն կատարի:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Իմաստասերի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» ներկա աշխատութիւնը մեզ է հասել երկու ձեռագրով՝ Հայաստանի Պետական մատենադարանի № 1973 և № 2017: Առաջին ձեռագրի մասին մենք խոսել ենք ուսումնասիրութեան բաժնում և մեր մի շարք ծանոթագրութիւնների մեջ, ուստի և ավելորդ ենք համարում նրա վրա նորից կանգ առնել: Իսկ ինչ վերաբերում է ՀՊԶՄ-ի № 2017 ձեռագրին, որը հայանի եղավ մեզ ավելի ուշ՝ ուսումնասիրութեան մասը տպագրվելուց հետո, բնօրինակված է 1637 թվին Մարիանոս զրչուհու կողմից իր եղբոր՝ Հովհաննես արեղայի պատվերով:

Հրատարակութեան հանձնվող ներկա տեքստը կազմված է № 1973 ձեռագրի հիման վրա, իսկ № 2017 ձեռագրի բնօրինակութեան հիման վրա կատարված են որոշ ուղղումներ: Տողատակ ծանոթագրութիւնների մեջ № 1973 ձեռագիրն օգտագործված է A նշանագրով, իսկ № 2017-ը՝ B նշանագրով:

# 14. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ «ՅԱԳԱԳՍ Շ.ԵԿԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

// ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԱՐԱՐԵԱԿ ՄԵԿԵՌԹԻԻՆ, ՈՐ ՄԱԿԱՆՈՒՆ  
ՍԱՐԿԱՆԱԳ ԿՈՉԻ

## ՅԱԳԱԳՍ Շ.ԵԿԻՆ

Համարձակեցան ոմանք յաննշանից ստույթեան պատճառս  
5 ինչ յաւգուածոյս և կարկատուն ասել վասն սքանչելի աւրինակին  
կոչեցելում հինգհարիւրեակ՝ յկղամայ մինչև ի դրոյթին յայն՝  
եթէ քա՛նիցս անգամ ևկեալ զանձամբ՝ զարձաւ անդրէն ի նոյն:  
Թէպէտ՝ և գիցարանութեամբ յարմարի, այլ ստույթին ո՛չ է ընդու-  
նելի: Գարձեալ և վասն ՃԶ (180) հանապազորդին ի գիւտ թուա-  
10 կանին հոռոմոց, զոր բերեմք ի վերայ երբայեցոցն, որպէս կամե-  
3ր ցաւ որ սահմանաւրէն ասաց, այլ ո՛չ ճշմարտութեամբ, // քանզի ան-  
գիտացան կողմանք երկաքանչիւրոցն, թէ մինչև ի գիւտ նորուն  
բոլորակի յկղեքսանդրացոց քաղաքի՝ առ Յուստիանոսի կայսերը՝  
ո՛չ որ վարեցաւ այնու կանոնիւ Եւ վասն այնորիկ ոմանք երկու  
15 հարիւրեկաւ և ոմանք ինսուն հինգեկաւ սահմանեցին վարիլ: Քան-  
զի ո՛չ զատա առ նախնեալքն բոլորակդ այդ մինչև յԼԳ (34) ամն  
Յուստիանոսի կայսեր, <յորմէ> մինչև ի գիր մատենիդ այգորիկ  
լինին ամք ԵԼԲ (532): Իսկ նորա սխալեալք ի ստույգ գիտութենէ  
իրացո՞ յետ յոլովակի շրջմանցդ բովանդակաց ժամանակաց բո-  
20 լորիդ, կարծեցին սկիզբն այլոյ հինգհարիւրեկի գոլ զերկրորդ ամն  
Փիլիպպոսի կայսեր: Եւ ո՛չ իմացան թէ՛ յորժամ լցաւ հազար ամ  
շինութեան քաղաքին Հոռոմայ, յառաջնում ամին Փիլիպպեայ,  
զերկրորդ ամն նորուն կայսեր ո՛չ հինգհարիւրեկի, այլ երկրորդում  
հազարեկի սկիզբն կարծել պարտ է գոր: Եւ լինին անտի մինչև ի  
25 գիւտ հինգհարիւրեկի ամք ՅԺԳ (313): Բայց ոչք ասեն եթէ ՄՄԲ  
(252) ի ծննդենէն Կենարարին մերոյ մինչև ի սկիզբն թուականին  
հոռոմոց: Եւ թուական երբայեցոց ի ծննդեանն հարիւր, և հանա-  
պազորդ թուականին հոռոմոց ՃԶ (180), և միաւորեալ զսոսա լինին

1 A վարդապետի չիք      10 B երբայեցոց      13 A Յուստիանոսի      16 A ԼԳ  
17 AB յորմէ չիք      25 A ՄՄԲ ամ էք      26 A թվականին      27 A թվական  
28 գոսոսայ



30 ՇԼԲ (532), և զայն զոյ թուական հոտամոց լցեալ՝ և ալլում հինգ-  
 հարիւրեկի սկիզբն լեալ/զերկրորդ ամն Փիլիպպեայ՝ ստեն. Քանզի  
 թէպէտ այնպէս պատահէ ըստ նոցա, ալլ ո՛չ յայնմ ժամանակի էր  
 կանոնեալ բողոքանին այն. և ո՛չ այնու վարի կեկեղեցի Աստուծոյ,  
 որպէս վերագոյնդ ասացաւ: Արդ՝ ո՛չ պատահէ, վասն զի ժամա-  
 նակն այնպէս զոյ՝ պարտ է կարծել յառաջագոյն եղեալ հինգ-  
 35 հարիւրեկին, քան զթագաւորութիւն Յուստիանոսի ժամանակին:  
 Քանզի զիպարանութիւն զլստակ և զլայտնի ճշմարտութիւն ցու-  
 ցանել ո՛չ զարէ: Որպէս ո՛չ պատկեր կենդանազրեալ և ստեղծեալ՝  
 զշարժուն կենդանին, քանզի մերձ և յառասպել և ի վկայութիւն  
 սուտ: Այսպիսի միտք են և ոմանց ժամանակազրաց, որք յաւե-  
 40 լուն՝ անփոյթ առնելով զհաստատութեան ատուրց և ամաց ժամա-  
 նակաց: Որպէս բազում ուրեք բազում անգամ հանդիպեցաք. քանզի  
 աշխատութեան և տքնութեան պէտք են՝ առ ի զիտել զստուգու-  
 թիւն բանից և իրաց, վասն զի ո՛չ բանն զիրս հաստատէ, ալլ իրն՝  
 զբանն, որոյ սովոր են խնդրել զճշմարտութիւն: Ապա ոչ է պարտ  
 45 հայել ի բանիցն շաղակրտտանս, թէպէտ և հաւանական թուեսցի:  
 Քանզի բանն նշանակիչ իրին է՝ չէ իրաւացի հակառակ իրացն  
 տրտարերիլ: Ալլ միայն ճշմարտութեան հետեւել: Արդ՝ ո՛չ եթէ  
 48 խաւեմք այլմենեկն զկարծիս զիպարանութեամբ ի հեռուտ, յոր-  
 ժամ միաբանի ընդ այժմոյս երևութիւն հաստատութեանն՝ է ըն-  
 50 դունելի: Թէ և ո՛չ այնպէս իցէ. քանզի այնպէս ի բազում իրս  
 սովորեցաք հետագատութեամբ գնալ: Որպէս յորժամ ասիցեմք՝  
 ատուրս որոշելով զատուրս ի սկզբանն ըստ երբայեցոցն, և ամիսս  
 ըստ ազգաց ազգաց: Եւ առ նոսա թէպէտ ո՛չ ամիսք և ո՛չ յեղա-  
 նակ տարոյ և կամ անուանք իմացեալ էին ի լեզուս կամ յազգս,  
 55 զի առ աշտարակին շինութեան՝ այս գործեցաւ յաստուծոյ: Բայց  
 զմերձաւոր զայս և զներկայ առեալ առաջնորդ, և զանցելոցն ևս  
 իմաստասիրել նկրտիմք, և զհանդերձեալն արուեստապէս ճանա-  
 չեմք զատուրց և զամօտցն անուանս: Եւ զի ի նոսա պահեալ տանս  
 և յեղանակս տարեկանս: Բայց զստութեամբ յայտնիսն՝ ո՛չ ար-  
 60 ժանի ընդունելութեան վարկանիմք:

Ասեն ոմանք և զայս եթէ սկիզբն արարչութեան վեցերորդ  
 արեղ ամսոյ էր, մերձաւորաբար յայն հայելով. և ասեն ա՛յնօրիկ,  
 որք զատուրս նահանջիցն արեղական՝ ի յատուրս տարոյ ո՛չ արկա-  
 նեն, որպէս բազումք ազգ: Իսկ զիններորդ նորին ամսոյ, որոց ո՛չ  
 65 է սիրելի, զնոյն կարծել և ասել: Որոց և ես ընդ զիպարանու-  
 թեան հազորեցայ և կանոնեցի զամենայն անտի սկսեալ: Թէպէտ  
 58 իրն, // և բան և անուանք յայնմ ժամանակի ո՛չ յայպէս և ըստ  
 այսմ ունէին: Բայց քանզի հանդիպի այժմուս և ի ճշմարտութեան  
 մասինն՝ խոտելոյ արժանի ո՛չ եղաք, ալլ ուղեորեալք ի կատա-

31 B պէպէտ և 31 A յայն 36 B գյրտակ 44 B որոց 46 A ոչ է  
 48 A խաւեմք փոխ. խաւեմք 49 A ընդունելի է կանոնն 52 A գաւեկաց  
 փոխ. գատուրս 56 A մերձաւոր 61 A արարչութեան աստուծոյ 63 A որ  
 փոխ. որք 66 B գամի A գամենայն

- 70 բաժէ ի սկիզբն կոչաւ Արդ՝ արհամարհեցաք այսպէս կանոնել և կարծեմ ո՛չ աղարատելի և անարժան գոյ յաշս իմաստնոց: Եւ ո՛չ եթէ ըստ արուեստին գիւտս կամ զշանասիրութիւն ոմանց աղարտեցաք, ալլ զկարծեացն ո՛չ են ճշմարիտ, ալլ ստութեամբ կերպարանեալ: Քանզի առանց վկայութեան ի հաւատարմացման որպէս ի յաննշանից ոմանց անարուեստաբար ճառեալ ո՛չ հաւատարմացի յաշս և ի լսելիս խորհրդականաց: Զի թէ առներ պարսաւանաց և զանուանս իւրեանց ինքեանք ո՛չ իշխեցին գրել, զոր բարիոք ասեմ գործել, որպէս զի թափեացեն զանձինս ի կարի յայտանախատն լինելոյ: Ո՞ հաւանեացի յուսումնասիրաց և ի ճշմարիտ բանից հետևողաց առնուլ ինչ ի նոցունցն: Վասն զի յոլով են յեղանակք վարդապետութեան, որպէս ունի բանն, յորոց և ո՛չ զմի գոյ գտանել ի կարկատուն և յանհամ յայնպիսեացն արբաշանս:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննէս Իմաստասերի «Յաղագս Շ.եկի» ներկա աշխատութիւնը մեզ հայտնի է Հայաստանի Պետական մատենադարանի հինգ ձեռագրով՝ № 1973-ը (թ. 237ա—238ա)՝ 1342 թվի ընդօրինակութեամբ, № 2001-ը (թ. 159ա—162ա)՝ 1373 թվի ընդօրինակութեամբ, № 1971-ը (թ. 53ա—56բ)՝ 1633 թվի ընդօրինակութեամբ, № 2180-ը (թ. 430ա—432ա)՝ XVII դարի ընդօրինակութեամբ և № 2762-ը (թ. 3ա—5ա)՝ XVIII դարի ընդօրինակութեամբ:

Ներկա մեր հրատարակութեան համար բնագիր ենք ընտրել № 2762 ձեռագիրը և գրչական փոքրիկ ուղղումներ կատարել № 1971 ձեռագրի հիման վրա: Տողատակ ծանոթութեան մեջ № 1971 ձեռագրի տարբերակները տրված են Ա նշանադրով, իսկ № 2762-ինը՝ Ե նշանադրով:

71 Ա յիմաստնոց      73 Ա որ ոչ են      74 Ա հաւատարմացման բան      76 Ա  
աս երկիւղի փոխ. առներ

15. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՅԿԵԿԱՆ ԸՄԻՍՆԵՐԻ ԶՈՒԳՔՆԹԱՅՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԻՆ ՅՈՂԱՆՆՈՒ

Ասացաք յառաջագոյն՝ թէ զիա՞րդ բաժանեալ են կարծիք եր-  
րայեցւոցն և հոռոմոց վասն կարգի ամսոց || հայոց: Գարձեալ և  
հոռոմոցն ո՛չ նմանապէս, քանզի ոմանք հանդէտ հասար մի-  
մեանց զսկիզբն մարտի ամսոյ ի մեհնկանոյ ասին զոյ: Որպէս զի  
5 յերկաքանչիւրոցդ ամսոց ի նոյն աւուրս և քանիս հասարա-  
242բ կաւորութեանն զարնայնոյ կշիռ զոյդ հանդիպել ի քսան || եր-  
կոցունց, կամ յերկու և ի քսան. ըստ որում ասին ոմանք այլք:  
Իսկ կէսք ի մետասան արեկ ամսոյ և ի ԻԲ (22) աղար ըստ  
10 ասորոց, որ է վեցերորդ ամիս նոցա: Եւ ըստ յունաց՝ նոյնպէս ԻԲ  
(22) զիւտարոս ամսոյ, որ է հինգերորդ՝ նոցա: Իսկ ըստ եգիպ-  
տացւոցն ի ԻԶ (26) և ի Լեթներորդի ամսոյն, որ կոչի պեմենովթ:  
Եւ են այսոքիկ զոյդ ի ԻԲ. ուցն երրորդ ամսոյն ըստ հոռոմոց,  
անուանեցելումն մարտի: Եւ լինին սոքա, որ աւր մուտ է նիսան  
15 ամսոյ ըստ երրայեցւոցն, որ է առաջին ամսոց նոցա, յորոց  
հրաման առին տաւնել զզատիկն յաւուր շորեքտասաներորդի:

Իսկ որպէս այժմ կանոնեալն ունի յամենայն եկեղեցիս հա-  
ւատացելոց երից ազգաց՝ ի քսանն յառաջագոյն ասացելոցդ ամ-  
սոց զիւտարոսի և աղարա[յ] և մարտի ամսոյ, որ լինի ԻԳ (24)  
20 պեմենովթայ ըստ եգիպտացւոց, և աւել աւուրցն երրայեցւոցն ի  
չորսն, որ և զերկուտասան ութերորդի ամսոյն ըստ հայում կա-  
նոնեցաք պատահել, ո՛չ առանց վկայութեան առաջնոց և հնոց  
արանց իմաստնոց, որպէս վերագոյնն ասացաւ:

Գարձեալ զնոյն պարզաբար անցուք ասել: Յառաջին աւուր  
25 ըստ նիսան ամսոյ, և ի ԻԲ (22) երից ազգացդ ամսոց, զիւտարոսի  
ըստ յունաց, և ըստ ասորոց՝ յաղար, իսկ ըստ հոռոմի ի մարտի  
ամսո[յ] ասին զսկիզբն հասարակաւրէին զարնայնոյն և ի ԻԶ. ն  
(26) պեմենովթայ՝ ըստ եգիպտացւոց: Եւ ասին զայս այլք անուա-  
նիք յիմաստութեան և փառաւորք, յորոց մի է սքանչելին Անա-



30 տոլիս Աղեքսանդրացի եպիսկոպոս Լաւորիկեցոց, որ ինն և տաս-  
 ներկան վարի կանոնաւ: Եւ զնոյն իսկ զգի/ր յիշեցելոյ անս  
 243ա գրոշմեացոյք ի սկսման բանիս: Յիշատակէ զնմանէ ժամանակա-  
 գիրն Եսեբի յեկղէստիատտիկէ գիրսն յեթնորոգ զպրովեանն:  
 35 Եւ ասէ այսպէս. Բազում խաւսս եղեալ է Անատոլեայ մեծաւ և  
 բազում փութով պնդութեամբ, քանզի կորովի է նա բանիւք իւրովք,  
 մանաւանդ վասն զատկի, զի ի նոցանէն արժան է մեզ յիշեցու-  
 ցանել սակաւիկ մի այժմ: Եւ ապա, ասէ, այս ի կանոնաց անտի,  
 զոր եզ Անատոլէս վասն զատկի: Արդ՝ ի նմին ասէ՝ ի տարուջ անդ  
 է նախ ամասալուիս առաջին ամսոյն, զի նա է սկիզբն ԺԲ (12)  
 40 ամսոց, որ ըստ համարոյ եզիպտացոց է նա ԻԶ (26) պեմենով-  
 թայ, իսկ ըստ Թուոյ ամսոյ ասորոց՝ ԻԲ (22) ազարայ, այսինքն  
 մետասաներորդ արեզ ամսոյ: Բայց գտանի արեզակն ի ԻԶ (26)  
 պեմենովթայ, զի նա է ԻԲ (22) ազարայ, ո՛չ միայն զի մտանելով  
 մտանէ նա, ի հատածն առաջին, այլ զի և ունի նա շորս աւորս,  
 45 որով հաւասարի տիւն ի զիշերոյ: Եւ սա ինքն է սկիզբն ամսոց և  
 գլուխ ժամանակաց, որ գայ և շրջի ի տեղուջ իւրում յիննետասն  
 ամ: Եւ որպէս սովոր են ասել բազումք, ի նմա լուծանին բազումք  
 աստեղացն, որ կոչին մոլորականք, վասն զի շեն յայտնի: Իսկ այն  
 ամիս, որ առաջի նորա է, վերջին է նա ամսոցն և հատած երկո-  
 50 տասաներորդ, և մասն առաջին երկոտասանիցն, և կատարած  
 շրջանին աստեղացն, որ կոչին մոլորեալք: Վասն այսորիկ, որք  
 միանգամ յայսմ մասին զենն գամիսն առաջին, և զշորեքտասանե-  
 րորդն զատկի, յայսմ ժամանակի համարին զնա: Ո՛չ սակաւ ինչ է  
 հանձար իմաստութեան նոցա:

55 21 իսկ մեզ բանս այս, զի հրէայքն այնորիկ, որ յառաջն էին  
 243բ քան զԲրիստոս, զիտէին զ/խա և պահէին զսա: Եւ կարեմք մեք  
 ուսանել մանաւանդ վասն այսորիկ յայնցանէ, որ ասացին Փիլոն և  
 Յովսեպոս և Մովսէս: Եւ ո՛չ ի սոցանէ միայն, այլ և յայնցանէ,  
 որ յոյժ կանուխք են քան զսոսա, յերկուց մարդոց անաի, որք  
 60 երկուքին բարեփոզվք յորջորջեալք էին, այնքիկ, որ անուանեալ  
 կոչէին զպիքք Արիստարտուեայ, այն, որ ի Պեննադայ քաղաքէն  
 էր, որ ընդ կեանատունն էր, որք թարգմանեցին զգիրս սուրբս  
 հերբայեցոց Պաղովեայ Փիլադիզիոսեայ և հար նորա: Եւ զմեկ-  
 նութիւնս զգրոց արինացն Մովսէսի արարին սոքա թագաւորացն:  
 65 Եւ իբրև լուծանէին նորա, որ միանգամ ինքնին մտանէին ի զպրու-  
 թեանն կ/ից, ասացին, թէ պարտ է, ասեն, ամենայն մարդոյ զե-  
 նույ զատկին հաւասարութեամբ, յետ հասարակելոյ տուրնջեան և  
 զիշերոյ ազար, յորժամ ընդմիջի ամիսն առաջին, զի սոյն այս ժա-  
 մանակ գտանի, որ է սա հատած առաջին արեզական: Արիստա-  
 70 րուլոս յաւելու և ասէ, եթէ է, ասէ, տան զատկի ի հարկէ ո՛չ  
 միայն մինչ զնայ ի հատածն առաջին, յորժամ հաւասարի տիւն  
 զիշերոյ: Բայց հաւասարի երկիցս անգամ յազար և յիւլու, այ-

32 A սկզբման 34 A Անատոլիայ 38 A Անատոլէս 43 A նայ 49 A նորայ  
 A նայ 53 A զնայ 60 A բարեփոզվք 64 A նորայ

75 սինքն՝ յարեզ և ի հոռի: Եւ չափեալ են ժամանակքն կշռով ընդ միմեանս հաւասարութեամբ: Տուա իսկ արն զատկաց ի չորեք-

244ա աասաներորդ ամսոյն, զկնի յերեկորոյն, զի ի նմա կայ լուսինն ընդզէմ արեգական հաւասարութեամբ չափով կշռով, որպէս կարեմք տեսանել: Իսկ յորժամ ընոյ լուսինն, լինին այնուհետե կալ հանդէպ միմեանց արեգակնն յայն հատածն առաջին, յորժամ

80 հաւասարի տին զիշերոյն յադար, և լուսին ընդ ի հարկէ ի միւսն

244ա ևս հատած, յորժամ // հաւասարի տին զիշերոյն չիլու: Գիտեմ ևս և այլ բազում, զոր ասացեալ է նորա հաւանութեամբ և արինակաւք ցուցանելեաւք, որ վասն տեսոն մերոյ է, զի նորաւք կամեցաւ ցուցանել վասն տանի բաղարջակերաց զատկին՝ եթէ

85 պիտոյ է լինել զկնի հասարակելոյ տուրնջեանն և զիշերոյ: Բայց թողում անդր, որ իբրև զայսպիսի առակս արինակաց: Այսորիկ երկրորդեցան ի պատուական սրբոյն Անատուիայ:

Բայց գիտել պարտ է, թէ ոչ իննետասներեակ կանոնաւք միայն վարեցան առաջինքն վասն չորեքտասաներորդին զատկաց,

90 այլ և տասնամեայ կանոնաւք, որպէս դրոշմեաց Հիպոդիոտոս եպիսկոպոս մասին ուրումն կողմանցն արարացուց, և ութամեայ կանոնաւք, ըստ որում մեծն Դիոնէսիոս եպիսկոպոս Աղեքսանդրացուց, վասն զի երկու ատուրքն նահանջի, երկից ժամուց արեգական, ի

95 Դ ամ ժողովեցելոց անկանին ի վերայ 28 (88) ատուրցն, որոյ գումարին ամի ամի ի մետասան ատուրցն աւելեաց, քան զընթացան լուսնոյ ատուրս: Եւ առնեն իննսուն երիս ամիսս բովանդակ և դարձեալ ի նոյն կարգ ընթացիցն զառածանին և լինի ամս 18 (32), որչոյն բովանդակ, ո՛չ առանց ատուրց հնգից աւելեացն: Իսկ այլք՝

100 1 (30) կանոնեալք ատուրքք ամաց, զոր գտին ի նիկիմիդոս քաղաքի ի Ի (20) ամէն Կոստանդիանոսի արքայի մեծի և քրիստոսասիրի: Եւ ոմանք յեա այսորիկ, յատուրս որդոց նորա, կանոնեցին հինգ իննետասներեկս ամաց, և լինի 25 (95) ամ: Ի նմին ամի և Անդրէաս, եղբայր Մագնոսի եպիսկոպոսի, Մ (200) ամաց ստեղծանէ կանոնս չորեքտասաներորդի լուսնոյ զատկաց: Եւ իբրև կատարեցաւ թիւ ամացն Մ.ոց (200-ոց), և շիաղայր յառաջկանոնեալն ըստ կարգի, ինն ևս // ամեաց ի վերայ անցելոց, զտաւ բազում քննութեամբ անտարակուսելի արինակ հինգհարիւրեկին

244բ լԱղեքսանդրիայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաստութեան, որպէս ինքեանք իսկ վկայեն՝ յեա 548 (562) ամաց զալստեան

10 փրկչին մերոյ և աստուծոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ զորա հանդերձ այլովք բազմաւք յայտնի են իմաստասիրութեան փափազողաց և կրթասիրաց: Բայց մեք ի սկիզբն բանիս և ի դիտատրութիւն անդր դարձցուք, քանզի կամէր բանս ցուցանել՝ եթէ յարեգամսեան հարքն մեր ասեն լինել զհաւասարութիւն տուրնջեան և զիշերոյ:



- 15 Զի թէպէտ և կանխեն և անազանեն ոմանք զսկիզբն նորա, ի ժամանակէ անտի ոչ հեռացուցանեն:
- Լո՛ւր դարձեալ նմին ինքեան Եւեբեայ, զինչ ասէ յութերորդ դպրութեան անդ իրում պատմութեանն վասն շարեացն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի: Էր, ասէ, յամին իննևտասներորդի
- 20 Թագաւորութեան Դիոկղետիանոսի և յարեգ ամսեան, ի ժամանակի, իբրև մերձ էր արն տանի շարշարանաց փրկչին մերոյ հասանել, և սփռեցան ընդ ամենայն աշխարհս յանկարծակի հրովարտակք թագաւորութեան: Եւ առեալ հրաման ունէին քակել, և իջուցանել զեկեղեցիս մինչև ի հիմն, և գիրս սրբութեան այրել
- 25 հրով: Այլ և յայնմ դպրութեան հինգերորդի ասաց, երկիցս անգամ հաւասարիլ տուրնջեան և գիշերոյ, յարեգ զըստ գարնանն և զաշունն յեղանակի ի հոռի ամսեան: Եւ պատահէ այս ըստ յունաց ի մետասաներորդի ամսեանն, որ կոչի գերպիոսի ժԲ (12), իսկ ըստ ասորոց յերկոտասաներորդ ամսեանն, որ է իլով՝ յիննևտասներորդ
- 245ա աւուր ամսոյն, // և ըստ հոռոմին նմանապէս՝ յութ և ի տասնիններորդ ամսեանն, սեպտեմբեր կոչեցելոյ և գերմանիկոս, և ըստ եգիպտացոց յառաջին ամսեանն, որ է թովթ, որ ար ԻԱ (21) է ամսոյն, և հոռի ամսոյն չինն: Եւ տե՛ս զիա՛րդ հանդիպին միմեանց ամիսքդ, որպէս քաջիմաստն պատմէ Անատոլիոս: Է և
- 35 Յովսեփոսէ գտանել վկայութիւն ասացելոցս, զոր յիշատակէ ի նոյն գիրս երեքում դպրութեան ութերորդ ճառին Եւեբիոս՝ յորժամ վասն ապստամբին Իսրայելի ժամանակս վրէժխնդրութեան ի կիր առնու պատմել: Եւ ասէ. Արդ՝ ա՛ռ դու և ընթերցիք զոր ինչ ասացեալ է վասն նորա ի վեցերորդ դպրութեան անդ նորա: Ասելն սորա այսպէս. Եթէ ժողովրդեանն, ասէ, շար ի խարեբայն այնորքիկ, որ վկայեն ստութիւնն ի վերայ աստուծոյ, հաճէին և հաւանեցուցանէին զնա յայնմ ժամանակի, եթէ նշանաւոր երևելի նշանացն, որ կանխէին, ցուցանէին վասն աւերածոյն, որ լինելոցն է առ յապա, ոչ հայել և ոչ հաւատալ, այլ իբրև մարդք, որ
- 40 բարձեալ միտքն նոցա և շիք նոցա աշք և շունչ, այսպէս անփոյթ առնէին քարոզութեամբն աստուծոյ: Եւ սպա՛ յետ առաջնոյ նշանին պատմութեան, ասէ այսպէս: Եւ դարձեալ մինչև ապստամբեալն էր, զի դարթիցէ ի վերայ նոցա մարտ պատերազմին, ի ժամանակին իբրև ժողովեալ էր ժողովուրդն ամենայն,
- 50 յարն տանի բաղարջակերացն, որ ար ութ էր արեգ ամսոյ ինն ժամ գիշերոյն, այսպէս փայլատակմունք հատանի ի վերայ սեղանոյն և ի վերայ տաճարին, որպէս զի համարէր մարդ՝ թէ տիւ լուսաւորէ // և յամեաց անդ իբրև կէս ժամոյ: Այլ դու մի՛ զարմանայր վասն յութն արեգ ասելով տան բաղարջակերացն, քանզի
- 245բ ո՛չ զնոյն թիւ բերեն երբայեցիք և յոյնք, նա և նոքին իսկ, որք ի յունաց ճարտարք և անուանիք իմաստութեամբ ի սոյն յայս իբս, որպէս և յայլս բազումս, երկբանեն ո՛չ միայն արտաբին մերոց կրանից ի նոցանէ, այլ և ոմանք ի մերոց անտի քաջք և առա-



- քինիք դիտութեամբ և վարուք, զի վասն հասարակելոյ տուրնջեան
- 60 և գիշերոյ, յամիսս ազգաց ազգաց, այլափոխ կարծիք են նոցա, որպէս վերագոյնդ ասացան: Նա և պատճէնի անդ երեսնեկին, որ է գիւտ լաւաց հանճարոյ, այս ինչ ասի: Ի ժամանակագրութեանն Հիւմենեայ, ասէ, գտի զայս, իններորդի հիւպատոջըն Մաքսիմիանոսի և յերկրորդումն Մաքսիմիանոսի դիպեցաւ չորեքտասաներորդն
- 65 լուանի, յառաջ քան զուրբ ամսամտին ապրիլի: Եւ յամին, որ յառաջ քան զայս ամ էր, ամիսն նահանջ էր, և յամին, որ յետ սորուն էր ի հիւպատոջ Մաքսիմիանոսի, և Անիկոսի, Փեստրոսի, և Պերիոսի, և Գաղիոսի դիպեցաւ չորեքտասաներորդն զատկաց յառաջ քան զԷփն և տասն ամսամտին ապրիլի ի չորեքշաբաթոյ:
- 70 Զի թէպէտ և որ յառաջ քան զուրբ ամսամտին ապրիլի է ԻՅ (25) մարտի, զոր ունի և իննևտասներեակն կանոն, սակայն ստեղծ յառաջ քան զԷփնևտասան ամսամտին ապրիլի, ցուցանէ պահել չորեքտասանին ի երեքտասան մարտի ամսոյ, յառաջ քան զհասարակելն տուրնջեան և գիշերոյ: Եւ զայս այժմ ոչ առնէ եկեղեցին
- 75 Քրիստոսի և ոչ իննևտասներեկն ի կանոնաց այսպիսի բաժին յամսն առաջինս տեսանեմք լեալ || ի բազումս, մինչև ամենեքեան ի միողէ կամաց և խորհրդեմէ ընտրեցին զկանոնս իննևտասներեկին ամաց հաւանեալք վկայութեանն իմաստնոց և հաւատարմի առն Անատողեայ և այլոց սրբոց հրամայողաց՝ ո՛չ առնել զչորեքտասաներորդն լուանոյ զատկաց յառաջ քան զհասարակարեան ժամանակ գարնայնոյ: Արդ՝ մի՛ ամբոխեսցուք մտաւք և լեզուաւք յաղաղս մերոցն ամսոց զոյզն մի զանազանութեան ի գիրս առաջնոցն և մի՛ եղիցուք նհանջաժողովք առանձնակի՝ հատանելով յատուրցն տարույ, որով լինի սխալումն կանոնելոց հարցն յիրս
- 85 բազումս և անմիաբանութիւն առ ազգս ամենայն հաւատացելոց և ընդդիմակցութիւն սահմանաց յաւագունիցն երիցանց և որոց ուղղականին գիտեն իմաստասիրել, այլ լիցուք անհաւանել զուզնաբայց արանց անտեղեկաց յստակագոյն և ի ճշմարիտ իմաստութեան: Պատմագիրն, որ անուանի Յովսեպոս, զոր վերագոյնդ
- 90 յիշեցաք, յետ պասեքի տանին, յարեզ ամսէն գրէ այսպէս. Վլասն միւս ևս սքանչելեաց և յիտ սակաւ աւուրց տանին, որ ար ԻԱ (21) էր ահեկանի ամսոյ, տեսիլ երեւցաւ: Եւ կարծել թուի՝ եթէ գժուարին է ի հաւատալ, եթէ ոչ զի պատմեն զնմանէ, որք տեսին զնա, զի յառաջ մինչև արեգակն մտեալ էր, երեւցան կառք
- 95 ի վեր յամենայն աշխարհն և զարք վառեալք ի վեր յամզս եկին յանկարծակի և պատեցին զբաղաբն: Ասէ և ժամանակագիրն Եւսեբի ի կատարած կոյս կանոնացն, յորում ամի իննևտասն էր թագաւորութեանն ամբարշտին Դիոկղիտիանոսի, յամսեանն ||
- 246բ 246բ 100 ահականին, յաւուր պասեք տանին եկեղեցեաց քաղտումն բովանդակեցաւ: Արդ՝ զի բազումս թողաք վկայութիւն բազմաց վասն այսր իրաց: Քայց բաւական են ասացեալդ, ցուցանել թէ՛ յարեզ ամսոյ հաւատարի տին գիշերոյ և զարուն ժամանակի ստուգապէս:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Իմաստասերի հայկական ամիսների զուգրնթացությունը վերաբերող ներկա աշխատությունը մեզ հայտնի է ՀՊՁՄ-ի № 1973 (թ. 242ա—246բ), № 1971 (թ. 56բ—64բ), № 2180 (թ. 432ա—436ա) և № 2762 (թ. 5ա—10ա) ձեռագրերում:

Այս ձեռագրերի մասին մենք խոսել ենք մի շարք անգամներ և այժմ ավելորդ ենք համարում կրկնել:

Ներկա հրատարակության մեջ մենք բնագիր ենք բնդումել № 1973 ձեռագրի տեքստը և համեմատել այն № 1971 և № 2762 ձեռագրերի տեքստի հետ և աննշան ուղղումներ արել:

**16. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ «ՅԱՂԱԳՍ ԸՍՏ ՀՌՈՐՈՅ ԸՄՍՈՅ,  
ԵՒ ԳԺ.ԵՐՈՐԳ ԼՈՒՄՆՈՅ ԶԱՏԿԱՅ, ԵՒ ՓՈՓՈՍՄԱՆՅ ԻՐԱՅ,  
ԵՎ ԱՆՈՒԱՆՅ ԵՒ ՅԱՐԱԿԱՅԻՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

- 2 Ձթուականէն անուանեցելոյ՝ թէպէտ և ոմանք ըստ կարծեաց մտաց իւրեանց թուեցան իմաստասիրել և արդարապէս հանդիպեցուցանել, սակայն ըստ ճշմարտութեան ունի այսպէս: Առ Փիլիպպոսի կաշսերբ, յառաջնում ամի թագաւորութեան նորա, շինութեան քաղաքին Հոռմայ յՌոմիդեայ, լցաւ հազար ամ և զերկրորդ ամն թագաւորութեան նորա եղին սկիզբն այլոյ թուականի՝ յետ մեծապէս տանելոյ զնաւակատիս շինուածոյ քաղաքին ի լրման հազարեկին: Քանզի ունի բանն այսպէս, թէ ի սկզբան թագաւորութեան Փիլիպպեայ/յ/ հանդերձ որդովն հազար ամ լցաւ Հոռվմայ: 167բ Եւ գաղանք կոտորեցան ի մե/|ծին կրկիսի, թատերք ի գաշտին Արեա/յ/, զցայգ զերիս ատուրս եղան: Եւ զցայգ վախճան զերիս ատուրս առնէին, թէատրոն Պոմպէի կոչեցաւ: Եւ հարիւր սիւն, քառասուն ասպարէզք, ըստ նաւակատեացն Հոռմայ քաղաքին ընթանային: Եւ էր Փիլիպպոս քսաներորդ չորրորդ ի Յուդեայ կայսերէ յառաջնոյ, որ նախ քան զՕգոստոս կալաւ միահեծան զիշխանութիւնն հոռմայեցոց: Եւ լինին յերկրորդ ամէն Փիլիպպեայ մինչև ցքսանամեակն Կոստանդինի Մեծի ամք ՁԱ (81): Եւ յետ այսորիկ, յաւուրս որդոյ նորա Կոստանդեայ, մեաասաներորդ ամի թագաւորութեան նորա, եղաւ կանովնեակն յԱնդրէասէ Մ (200) 20 ամաց բերող գորս ի նմայն: Որպէսզի լինել յերկրորդ ամէն Փիլիպպոսի մինչև զկարգուած երկուհարիւրեկին՝ ամք ՇԴ (104): Եւ լինին մինչև ի յանկումն երկուհարիւրեկին՝ յերկրորդէն Փիլիպպեայ/յ/՝ 168ա ամք՝ // 3Դ (304), յորոյ վերայ ածելով զհայոցն թուականն, գտանի հոռվմոցն:
- 25 Եւ է սկիզբն երկուհարիւրեկին՝ ի չորիցն ասպրիելի չորեքտասաներորդն լուսնոյ զատկաց. և վախճան ԻԵ.Ն (25-ն) մարտի: Յետ տաս իննետասներեկաց և տասանց ամսոց, թագաւորէ Կոստանդիանոս ի ԼԴ (34) ամս: Եւ ի քսանամեկէն նորա մինչև ի վախճան երանելոյն, ունին ամք չորեքտասանք, և ասպս որդոյ նորա 30 տաս ևս ամ, որպէսզի յառաջին ամէ Փիլիպպոսի և անդր ի լինել հազար ամ մինչև ի սկզբան քաղաքին շինելոյ: Իսկ յերկրորդէն



մինչև ի քատերորդ ամ որդոյն Կոստանդնի Մեծի՝ ԺԳ (14) ամք, և  
ապա յԱնդրեասէ կանովնեցելոցն միանգամայն ՅԳ (304) ամք:  
Քանզի սկիզբն զրովեան այսր թուականի էր ամն, յորում շորեք-  
35 տասաներորդն լուանոյ զատկաց պատահէր, երեքտասաներորդում՝  
աւուր ամսոյն ապրիլի, և վեշտասան անգամ կկեալ զանձամք  
168թ իննեատասներեկիցն բոլորակի աննէ // զՅԳ (304) թիւ: Յանգեալ  
ամի՝ յորում էր լրումն լուանոյ զատկաց ի ԻՅ (25) մարտի ամսոյ:  
Քայց երկուհարիւրեակն ի շորից անտի ապրիլիոս ամսոյ սկսանի և  
40 սոնու վախճան ի մարտիս ամսոյ ի քսան և հինգին, ասս անգամ՝  
կատարեալ զբոլորն, և տաս ևս այլ ի վերայ ամս: Եւ սկիզբն լինի  
թուականին, որ ըստ հայտմ ի նոյն երեքտասանէն ապրիլի, և յետ  
ՇԼԲ (532) ամաց դարձեալ վախճանի ի քսան և հինգն մարտի  
լրմանն ամի, և միւս անգամ սկսանի երեքտասանէն ապրիլիոս  
45 ամսոյ լրմանն: Քայց վասն զի յաւելուած եզև թիւ մի, որպէս ասա-  
ցաք յառաջագոյն և ցուցանէր յերկուցն ապրիլի զինքեամբ զյա-  
ռածանիչն, թողաք զթիւն վասն ոչ ի ճշմարիտ արուեստէ գալոյն ի  
սխալ գամենայն կանոնեալան առաջնոցն աճլոյ: Եւ արդ՝ ըստ որում  
ի սկսմանն իրում կանոնեցա՝ հանդիպել ի նոյն դարձուցաք դար-  
169ա ձեալ: Իսկ վասն հոռոց զի սկիզբն // լրմանցն լուանոյ զատկաց,  
զերկուսն եզին նախագոյնքն և առաջինքն, և անտի հրամային առ-  
նել սկիզբն հնգեկի և վեցեկի, ոչ կարէ որ հակառակել, քանզի բերէ  
չորեքտասան գատրն լուանոյ և ըստ անուանն, ամենայն ուրեք  
յամենեցունց յաճախագոյն: Քայց վասն զի գտանի անդ և յամե-  
55 նայն իսկ քանիս լրմանցն լուանոյ զատկաց աւելի քան զչորեք-  
տասան լուանին, ըստ որում տեսանեալն լինի և իմացեալ, թէպէտ  
և անուն նոյն պահեցաւ և պահեցի յախտեան: Եւ մի՛ որ հա-  
մարձակեացի հակառակել: Սակայն ժողով իմաստասիրացն յԱզեք-  
սանդրացուց քաղաքին եզին սկիզբն հինգհարիւրեկին ո՛չ զերկուսն,  
60 այլ զչորս ապրիլիոսի ամսոյ, զի թէպէտ զնոյն ոճ կարգին կալան  
և պահեցին ամբողջ զիննեատասներեկին, և ոչ նորաձեւել ինչ ասա-  
ցին զառաջինն, բայց սակայն ոչ անտի սկիզբն արուեստին արա-  
րին, քանզի հանապազ երկու թուով պակաս // գտանին ո՛չ միայն  
169թ աւուրը լուանին, այլ և վերագիրք, և նոքին ինքեանք լուանացոյց  
65 կանոնք: Քայց և այլ ևս ազգ, ըստ իմաստասիրովեան տեղոյդ երկի  
ճշմարիտ գոլ ի շորիցն ապրիլի սկիզբն հինգհարիւրեկին, զի եթէ  
հաւանել պարտ իցի զիպարանութեան, քանզի ասեն զԺԷ (17)  
մարտի ամսոյ առաջին ար գոլ, իսկ զքան արարչութեանն, յորում  
եզեն երկինք և երկիր, և այլ տարերք, և լոյս: Եւ զքսան ար շոր-  
70 րորդ, յորում լուսաւորքդ երկնայինք, ուր հասարակին և զուգին  
չափովք ժամուց, և մասանց, տիւ և գիշեր, ըստ վերագոյն ասա-  
ցելոցդ: Իկա ուրեմն զիպոզագոյն ասասել ևս է, զարն շորս ապ-  
րիլի ամսոյ կարծել զիպիւ լրմանն լուանոյ: Քանզի ի ներկայէ  
երկնի երկոքին ոչ միայն անցեալն, այլ և ապառնին: Զի և այժմ,  
75 յորժամ լինի ծնունդ ընծայութեան լուանոյ ի քսանն մարտիս ամ-  
170ա սոյ, ընդ // երեկս գտանեմք զար լրմանն ի շորս ապրիլի: Վասրն-

զի և յայնժամ զէպ էր, որպէս վարկանիմ, այդոյն արեգական  
 ստեղծանիլ ի հատածն առաջին, և երեկուն՝ լուսնոյ ի միա ևս  
 հատածն, հետի ի միմեանց վեցիւք կենդանատեսակաւք, որպէսզի  
 80 յայնմ զիշերի մասն խաւարի մի եղիցի: Այլ ընդ մտանել արեգա-  
 կան առջէ ի ձեռն լուսնին զիշխանութիւն զիշերոյ և տացէ առ  
 վաղիւն ի ձեռն արեգական զտուրնջեանն դաձեալ իշխանութիւն:  
 Արդ՝ զիա՛րդ մարթ Վ՝ ասիցէ ոք, արդեւք այդ լինել, քանզի և լու-  
 սին կատարեալ ստեղծաւ բնութեամբ իւրով, որպէս և ամենայն  
 85 արարածք աստուծոյ: Եւ եթէ այդպէս իցէ, որպէս վկայեն առաջինքն  
 ի սրբոց իմաստնոց և ի ճշգրիտ մեկնչաց, ի ժողով ամենեկին դառ-  
 նալ լուսնոյ նորապատկեր ի շորրորդումն ապրիլի: Արդ՝ զիտութիւն  
 զորա թողցուք աստուծոյ, որ ստեղծ զամենայն և հաւաստապէս  
 170բ ճանա||չէ՞ զբնութիւնս իւրոցն արարածոց բովանդակ, և միայն:  
 90 Այլ և փոփոխէ զիւրաւ, յորժամ ըստ անձառելոյ տեսութեան և  
 մատակարարութեան իւր ամենակատար և գերամբարձեալ իմաս-  
 տութեան: Եւ զայս ասացուք ըստ մերում տկարագունի և ազ-  
 քատ հանձարասիրութեան մտաց, եթէ անվայելուչ էր մեծ արար-  
 շութեանն և արուեստաւոր բանին զկատարեալ իւր գործն անզէն  
 95 վազվազակի առարին զարձուցանել յանկատարութիւն և ի նուա-  
 զութիւն: Այլ պատշաճ և ի զէպ էր անսալ, թողուլ զնա մինչև  
 յարն հինգետասաներորդի նմին լուսալրութեան, որպէս և արդ զի  
 ի հնգետասաներորդէն սկսանի դառնալ ի ժողով: Եւ այդ բաւա-  
 կանասցի վասն այդորիկ: Բայց երկրորդումն կարծել ատուր ապրիլի  
 100 զլրումն զայն երկրայելի և անհաւանական երևի, քանզի թէ ընդ  
 171ա երէկս ատ||րն շորրորդի ըստ վայելուչ գոլոյ արարաւ լուսին ի  
 քսանն մարտի ամսոյ, որպէս ասեն, զիա՛րդ մարթի մինչև զեր-  
 կուն ապրիլի հինգետասան կամ չորեքտասան ատուրց լնուլ, քանզի  
 առնին ատուրք երկրտասան և զիշերք երկու աւելի, քան զթիւ երկո-  
 տասանիցն: Եւ ահա տեսանեմք յամենայն լրմունս լուսնոյ զատ-  
 կաց աւելի քան զհինգետասան ատուրս, թէպէտ և չորեքտասանե-  
 րորդ անուանի: Եւ այս առաջնոյ հրամանին վասն զատկի: Քանզի  
 յառաջնում ամսեանն առնել զելիցն տան ի շորս և ի տաս ամսոյն  
 ընդ երեկս պատուիրեցան. և էտո վաղիւն ար հինգետասաներորդ  
 10 սոքա զիպարանապէս ասացան, յաղագս սնտաի խնդրողաց զժամս  
 զժամանակս:

Իսկ զկալարսոնեացն և զՓիղաքսոնեացն առասպելախաւու-  
 171բ թիւն՝ վասն երկուց ամսոցդ, և ի || դոսա լրմանցն զատկաց լուսնոյ՝  
 ամենեկին պատահմանց արհամարհեալ անարգեսցուք, որովք խա-  
 15 բեալ ոմանց անխուզից զճշմարտութիւնն և անտեղեկաց, յիշատակի  
 վկայութեան ի բանս իւրեանց արարին արժանի, որպէսզի և  
 ինքեանք ևս ընդ նոսա կրեսցեն նախատինս այսպանութեան:

Քանզի յառաջ իսկ քան զնոսա բազում ժամանակաւք սահ-  
 մանեալ ի պատուական և ի սքանչելի արանց իմաստնոց որոշե-  
 20 ցան և այդորիկ: Եւ ամենայն կարգք բարեպաշտութեան՝ նախ ի  
 մեծէն և յաստուածայնոյն Մովսիսէ արկնսդրէ տանն Բարայելի



հրամանաւ աստուծոյ: Զի զտան պասեքին արասցեն յամսեանն  
 առաջնում ի շորեքտասաներորդում աւուր ամսոյն, յետ հաւասարե-  
 րելոյ տունջեան և զիշերոյ: Ապա եթէ զհոռոմայեցոցն որ մեզ  
 172ա յտուաջ բերիցէ՝ թէ ո՛չ ի Մովսիսէ կամ յայլմէ || ումեքէ, ալ ի  
 նոցանէ ամիսքն երկոքին ընկալան զանուանս, որպէս անդ գրեալ  
 է, և զլրմանցն լուանոյ զատկաց կարծել առ ի նոցանէ վերստին  
 բերեալ կամ գտեալ ըստ շամբշական և յիմար պատմութեանն,  
 30 զի՛նչ ասիցեն առ հնագիտականսն յոյժ, քան զնոսա առաջինս,  
 ոչք ասեն զտղգն հոռոմայեցոց տասն միայն ամսաբ յառաջագոյն  
 վարիլ: Եւ վկայ իրացն անուն ամսոյն վերջնոյ, որ է այժմ երկո-  
 տասաներորդ ամիս, քանզի կոչի զեկտեմբեր, որ նշանակէ զտաս-  
 ներեկին թիւ, որպէսզի ունել զարութեան անուանն ըստ յայտնոյ  
 բանի տասներորդ ամիս: Ապա ուրեմն յետոյ թագաւորն հոռոմ-  
 35 յեցոց նումաս Պոմփիլիոս, որ էր երկրորդ յետ Ռովմիդոսի, որ  
 զքաղաքն շինեաց և անուանեաց իւր անուն Հոռոմ, յաւելու զյու-  
 նուարիոս՝ և զփեպ||բուարիոս ի սկիզբն ամսոցն տասանց, քանզի  
 յառաջագոյն էր ամիս առաջին նոցա մարտիս և ուր էին անդ շե-  
 40 զեալքն բնաւ Մարտինն այն և ապրտն, կամ մղոնահամար երթե-  
 կութիւն նոցա: Զի առ Աքազու թագաւորաւ Ռովմիդոս զքաղաքն շի-  
 նեալ կոչեցաւ թագաւոր հոռոմայեցոց, իսկ նումաս Պոմփիլիոս,  
 որ զերկուս ամսին յաւել երեի, առ Մանասէիւ հարստացեալ: Արդ՝  
 մի անասացուք առասպելայաւոյ բանիցն այնոցիկ: Եւ յայսպիսի  
 իրս, և ի բազումս ալլս, և յանուանս, յորովակի եղեն փոփոխումնք  
 45 և յաւելումաժք ո՛չ միայն ի մէջ նոցա և ալլոց յունաց և բարբարո-  
 սաց, ալլ և ի մէջ երբայեցոց: Որպէս իբուզ ամիս՝ առ նախ-  
 նեաւքն, կամ անթանի, և զիու, և որ ալլն, այժմ ոչ ասին յամիսս  
 երբայեցոց, քանզի ալլափոխեցան անուանք նոցա յետոյ յոմանց  
 173ա ալլոց: Որպէս || Անատոնինոս արքայ առ Յուլեաւ առաջնով կայ-  
 50 սերբ հոռոմայեցոց, պաշտան իմն առնելով նմա, զկիւիւնտիդոս  
 ամիս անուանեաց յուլիոս, վասն յայնմ ամսեան ծննդանելոյ  
 Յուլեայ: Ալլ և որ յետ նորայն ի նոյն անուան յորջորջեցաւ կայսր  
 Աւգուստոս, յորժամ Սերաստոս անուանեցաւ և ամիսն ևս, որ  
 կոչէր սեքստիոս՝ յազոստոս փոխադրեցաւ: Որպէս սեպտեմբեր,  
 55 որ յառաջագոյնն գերմանիկոս, և պարթիկոս՝ հոկտեմբեր կոչեցան:  
 Բայց ո՛չ ի դուզնաբեայց ոմանց և յաներեւելեաց ալլապիսիք լինէին  
 մուտք և փոխգործութիւնք անուանց, ալլ ի ճոխագունից և նշան-  
 տոր մարդոց՝ ըստ որում յորոց յիշատակեալքոյ այժմ եղեն:

Ալլ յազազս յարակային, զի ոչ ԽԴ (44), ալլ ԽԶ (46) ունիմք,  
 60 ո՛չ յանդգնութեամբ ինչ զայս իմանալով, որպէս թէ՛ հակառակ իսկ  
 սմանէ կանոնեցելոցն մի լիցի: Բայց քան||զի տեսանեմք, զի  
 173բ թէպէտ և շորեքտասաներորդն զատկաց ճշգրիտ գտաւ, ըստ անու-  
 անն պատահ է այնու ածիլ պակաս թիւն առաջին վերադրուքն, սա-  
 կայն երկու աւուրբք ի քանակութենէ լուանին ի բաց անկանին,  
 65 զանուանն ճշմարտութիւն ի վերայ պահեմք պատկառելով ի հրա-  
 մայողացն, և զիրն հաւաստապէս ախորժեմք գտանել, դոյն պատ-



ճառէ և երկուցն, զոր յաւելումք ի վերագիրսն յառաջինս: Զի թէ ոչ  
 սկսանիցիմք ի գլխոյ բոլորին կոչեցելոյ հինգհարիւրեակ ի շորիցն  
 ապրիելի ունել զվերագիրսն մեռասան, ալլ ո՛չ ինն հանապաղ իսկ:

70 Եւ ո՛չ միայն ի լրմունս գատկի թիւն քանիամութեան լուսնոյ կո-  
 րուսանէ զերկուսն, և ալսպէս նորն և հինն խառնեալ կարգաւորա-  
 պէս ընդ միմեանս ողջ ածեն զթիւն: Է՛ ալս ո՛չ միայն յալսմ, ալլ

174ա և յամենեան կանոնեալսն վասն զիւտի աւուրցն լուսնոյ, քանզի ||  
 վարիմք իննետասներեկաւք, բայց ոչ անփոյթ առնեմք զանցանել

75 զերեսնեկան, քանզի ունիմք զաւուրս ամսոցն ի խորանս անգ և  
 գտանեմք զպատկեր աւուրն ո՛չ չինն և տասնեակ կանոնովսն, ալլ  
 քսան և ութեկի, իսկ զքանիս լուսնոյ չերեսնեկի անգ: Եւ ալսպէս

ոչինչ ունայնացեալ լինի ի գիւտից իմաստնոցն, և ըստ արուեստի  
 քննողացն առաջնոցն: Իսկ զանարուեստ և զանիմաստ ձեռնարկու-

80 թիւնս ոմանց խրոտեմք: Վասն զի ալս սովորութիւն է եկեղեցեաց  
 աստուծոյ զճշմարտութեանն վարել զհետ, և զնոյն խնդրել, և ընդ  
 նոյն ընթանալ շաւիղ: Եւ տուեալ ի տեսնել ընդարձակութեամբ և  
 առատապէս աշխատասիրաց և խնդրողաց ի նմանէ զհաւաստա-

85 բախողաց և հարցողաց, գտեալ և ինքն իսկ լինի, ընդ իւրում  
 174բ քաղցր պարգեհին, ոչ ձանձլրանայ ի ստէպ և յաճախագոյն խընդ-  
 րուածոյ: Ո՛չ ընդ ահամբ հայի, որք ազահ են ի նորայսն, զե-  
 զու յորդութեամբ, առանց խնայելոյ: Ակն առնուլ երեսաց ոչ զիտէ

90 հոգիս և ո՛չ ի մարմին: Եւ ի մարմնոյսն հայի ի ջերմութիւն սրտից  
 պաղատողացն, ոչ ի տողանս երկայն րանից, և ի ձայն բարձր  
 ազազակի: Բայց և սերմանէ յանդատան ամենայն, քանզի պար-  
 զեատէր և առատ է: Եթէ առ ապարին և ապառաժից է և փոշեհոզ,

և եթէ ճանապարհին կուռ և կոկ, անընդուն սերմանն բարոյ ոչ և  
 փշալից ազարակէ անփոփէ զձեռն սովոր բարեբարութեան և առատ

95 ի բաշխումնս անթիւ և մեծամեծ պարգեաց: Բայց երկիւղ է ոչ  
 ի փոքր ինչ, քանզի խնդիր ոչ զչափ սերմանն և եթ, ալլ և զտոհ-  
 մական բազմաբերութիւնս: Ո՛չ զկշիռ և զթիւ քանքարացն և տա-  
 ղանդաց, կամ զմնասից միայն, ալլ մանուսանգ զվաճառաշահու-

175ա թեանն և զանձուց յոլովութեանս թարսցանողաց սաստէ, զանաշ-

100 խատասէրս և զծոյլսն ի զործն արքունի տանջանաց մատնէ: Պա-  
 հանջէ համար զամենայնի, որոց ընկալանն որ ի նմանէ: Եւ թէ  
 զտցէ պակասեալ, յանդիմանէ սրամտութեամբ: Բայց եթէ ազա-  
 չիցեմք, այժմ թողու, թէպէտ և բիւր ինչ պարս իցեմք, քանզի

մարդասէր է և ողորմած առ որս զուգրին իցեն պաճուճեալ: Միայն

5 մի՛ ամարզի և անգութ առ ծառայակիցս բամբասիցեմք յականջս  
 տեսնն: Թողցուք զնոցայն զսակաւս, զի մի՛ վերստին զբազ-  
 մութիւն մերուցն պարտուց հրամայիցեմք հատուցանել ի վաճա-  
 րումն և ի բանգ մտտնեալք: Արդ՝ զզոյշ լիւր մանուկ զու ուսում-

նասէր, քանզի ամենայն բազում ուսումնութիւն, նուազ և անարգ

10 է առանց երկիւղին և սիրոյ աստուծոյ. տարբացին նովաւ նա-  
 խակրթթեալ յամենայն ժամ և մի՛ զբարութ վարժից ուսմանց

արասցես անփոյթ: Քանզի նիւթ է իմաստասիրութիւն հնազանդութեան հրաժանաց աստուծոյ և խստերախ մտաց սանձակոծութիւն հանապազորդական. և լաւ է զվաճան զայն բազմախոնջ և 15 աշխատեցուցիչ մտաց և մարմնոյ գտանել, քան զբովանդակ զանձսուկոյ և արծաթոյ:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննէս Իմաստասերի «Յազագս ըստ հոռոմոց ամսոց...» աշխատութիւնը մեզ հաշտնի է Հայաստանի Պետական մատենադարանի № 1973 (թ. 255բ—260ա), № 2001 (թ. 167ա—178ա), № 1971 (թ. 64բ—72բ), № 2180 (թ. 436ա—441ա) և № 2762 (թ. 10ա—15բ) ձեռագրերից:

Նշված ընդօրինակութիւններից լավագույնը մենք համարել ենք № 2001 ձեռագրի բնագիրը և նրա հիման վրա էլ կազմել մեր ներկա հրատարակութիւն տեքստը:

# 17. ՀՈՎՏԱՆՆԵՍԻ «ՅԱՂԱԳՍ ԵՂԱՆԱԿԱՅ...» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՅՈՂԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ ՅԱՂԱԳՍ ԵՂԱՆԱԿԱՅ ԵՒ ՏԱԻՆԵՅ ԵՒ

ՔԱՆԻԱԲՆՈՒԹԵԱՆ ԱՄԱՅ

ԳԻՊԱՐԱՆՈՒԹԵԱՄԲ Ի ՆՈՅՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

2 Զնախնեաց կարծիս և ասացուածս ի ձեռն քննութեան և երկա-  
5 սիրութեան ի դէմս բերել և որքան ինչ չինէն գիւտ արժանի է, բայց  
վասն զի յաղագս հայ ամսոց և յեղանակաց և այլոց, զորս խնդրե-  
ցերն, յառաջնումն մատենի անդ գրեալ առաքեցի առ քեզ, զոր  
բաւական կարծելով, թէպէտ և էր համառատ, այլ զերկրորդն քո  
հատուցանել խնդր՝ որ վասն երկուցն և չորիցն ապրիլիոս ամսոյ  
10 անմիարանութիւն կամ զանազանութիւն իմաստից խնդրողաց  
զայնոսիկ և գտողաց:

Արդ՝ թէպէտ և սկիզբն թուականին ասացելոյ ըստ հոռմանցոց  
զերեքտասանն ապրիլիի ի լրմանցն զատիկի ասեն, այլ զնա գոյ  
լրումն առաջին լուսնոյ չինն և տասներեակ լրմունսն ոչ կարծեն, քան-  
15 զի զերկուսն պատշաճեցուցանեն նորին ամսոյ առաջնոյն լրման,  
որ է նիսան ամսոյ երկրորտասան ըստ երրայեցուցն, զոր և սկիզբն  
վերադրաց, և հինգեկի և վեցեկի կարգեն այսպիսի իմն պատճառաւ:

Առաջին ար յաւուրս տարոյ և սկիզբն արարչութեան զըստ  
238բ երրայականին աւել աւուրց զառաջինն ար, || որ է հնգետասան  
20 մարտի ամսոյ, իսկ ի չորսում աւուր անելեացն, որ լինի Ի մարտի  
ամսոյ զլուսաւորացոյ գոյանալ՝ յայլով՝ զարեգական և ընդ երեկս՝  
զլուսնոյ հանդերձ աստեղաւբ և համարեան յերեկ, որ է անախ մինչև  
ցերկուն ապրիլիի և յերկրտասան նիսան, աւուրս երեքտասան և  
գիշեր մի, և ասեն լրումն առաջին: Եւ վարեցան այսու եղանակաւ  
25 մինչև ի գիւտ հինգհարիւրեկ բոլորին յԱղեքսանդրիա քաղաքին  
յաւուրս Յուստիանոսի արքայի: Եւ էր լրումն լուսնոյ զատկաց  
չորրորդն ապրիլիի, որ է չորերտասան նիսան ամսոյ՝ զսա կշռեալ  
ի վերջ ընդ չորրորդի աւուր արարչութեանն, յորում լուսաւորացոյ  
եղելութիւն գտանին հնգետասանաւրեայ զլուսինն՝ աւելի միով գի-  
30 շերաւ, որ կոչի կէս աւուր, որպէս գտանեմք իսկ զամենայն լըր-  
մունսն իննետասներեկի ամաց լուսնո՝ չ հանգէտ և զոյգ այլոց լըր-  
մանցն բովանդակ ամին, այլ միով կամ կէս աւուրբ աւելի՝ է՝ եր-



րէք զի և այլովք ևս մասամբք: Զի թէպէտ և կոչեմք չորեքտասաներորդս ըստ հնոյ սովորութեանն, բայց պատահ է այսպէս:

35 Եւ սոքա ոչ քամահանս ինչ կանոնեցելումն յառաջագոյնարարեալ, որպէս թէ գալնասիկ աղարտելով, այլ զնոյն կարգ ստուգապէս քննասիրութեամբ հաստատեալ միարանեն ամենայնիւ նոցա: Բայց միայն զի ճշգրիտ է զչորրորդն ապրելի ասել և կարգել լրումն լուսնոյ առաջին և սկիզբն գնել հնգեկի և վեցեկի և վի

40 րադրաց: Եւ մի՛ ծանր ինչ և դժուարին այս ումեք թուեցի, և մի՛ ամբոյսեալ խոտվեսցին որպէս ընդ նորոգածն ինչ իր կամ աւտար, քանզի ամենայն մակացութիւն և արուեստ մի ըստ միոջիցն առ

238ա որ աւելագոյն վարժմանէ և ջերմ աշխատութենէ աճել և գեղեցկանալ բնատրեաց, նա և ուղղել սխալմանն՝ ի կրթասիրութենէ: Եւ

վկայեացեն առաջինքն քան զսոսա ո՛չ զվմի յեղանակ կանոնող զլուսնացոյցոյ, այլ սմանք տասեկաւք ամաց, և կէսք հնգետասանաւք և վեշտասանեկաւք, և ոմն՝ երկուհարիւրաւք մինչև ի գիտ

հինգհարիւրեկից վարեցան, և այլք՝ նուագագոյնիւք այլովք, որպէս և յայտնի իսկ է:

50 Արդ՝ որպէս ի քսանէն մարտի ամսոյ թուեալ մինչև ի չորանապրիլէի հնգետասան ար ասացին լրումն ճշգրիտ և առաջին, թէ և ունիցի մասունս աւելի, որպէս դէպ է լրմանցոյ զատկի, սոյնպէս և զյարակայնն, որ կոչին հանապազորդք: Եւ զվերագիրսոյ

լուսնոյ ծանեան հաստատեալ և փոփոխեցին զքառասուն և չորսն ի

55 ԽԶ և զվերագրացոյ զինն ի մետասան, ըստ որում և հնգեակն՝ հինգ և վեցեակն՝ վեց: Եւ որպէս աւել է չորրորդն ապրիլի, քան զերկուսն իւր Բ թուով, սոյնպէս և յարակային և վերագրացն պարտ էր առաւելով՝ զոչոյ թուով: Եւ գիտեա զսխալումն առաջնոյն այսպէս: Յորժամ յերկուցն ապրիլի առնեն հնգեակ և վեցեակ և ապա լուսին րոպէիւք

60 ածէ պակաս երկու թուով և յերեսնեկի անդ, որ կոչի քառագին, թէ առաջնովքն արասցեն զմուսն վերագրաւք, ածէ սխալ զաւուրսն լուսնոյ երկու թուով և յերեսնեկի անդ, վասն որոյ յաւելիալ զերկու թիւք ամենայն երկուսն ապրիլի: Եւ ի հանապազորդն, զի ԽԳ է առաջինն և ի վերագիրսն ուղղեցաւ ոմն, քանզի և ըստ ճշմարտու-

65 թեան այսպէս ունի, զի եթէ ի քսանն մարտի ստեղծաւ լուսինն չեղսն ի մտանել արեգական, որ զիպեցուցանեն, զիա՛րդ յերկուսն ապրիլէի իցէ լրումն, վասն զի երեքտասան ար միայն առնէ, մետասան ար զմարտոյ և երկու ար ապրիլի ամսոյ, զոր ոչ է գտանել ո՛չ միայն յինն և տասն լրմուսնոյ յատկացեալս յայլոց,

70 այլ և բովանդակ իսկ տարւոյն չորեքտասաներորդս լուսնոյ: Բայց թուի ինձ թէ վասն աւելին տեսանելոյ քան զչորեքտասանն յիննետասան լրմութեան կամեցան զառաջասացեալ երկու թիւսոյ պա-

238բ կասեցուցանել նախնիքն ի յարակայիցն և ի վերագրաց, որպէս զի մի՛ վեշտասան կամ ԵԺ.ան ասացին ԴԺ.երորդքն լուսնոյ

75 ընդդէմ հնոյ կարգին և աւանդութեան: Այլ զի՛նչ աւուտ բերէ բանին ոչ ասիլ իրին հաստատապէս կացելոյ, քանզի եթէ ասէ քան և եթէ ոչ, իրն անսխալ ունի զիրութեանն իւրոյ յատկութիւն:

- Արդ՝ զհերբաշեցուցն ևս և զայլոց ոմանց ազգաց նմանապէս  
անհեցուցանել պարտ է զվերագիրս և յարակալս, վասն զի և այլքն  
80 նոցա(յ)ոցն զուգադրեցան ի սկզբանէ յարակալք և վերագիրք:  
Եւ պակաս զոչք թուով ածեն զլուսնականս, իսկ զնոյն թիւս յաւե-  
լեալ ճշմարտապէս ցուցանեն: Բայց թէպէտ և այսպէս այսոքիկ  
կանոնեցան յԱզգեսանդրացոց անդ կարգ Թժ. երեկին, ոչ այլայլե-  
ցաւ ի նոցանէ:
- 85 Այլ նոյնպէս յԹժ. անէն ապրիլի մինչև ի Իճ մարտի զյառա-  
ջաշարժութիւնն ունի, որ կոչի նրճանջից նճանջ՝ վասն է ամսոցն  
յանդման աւելիացն: Եւ է պատճառ այսոքիկ, որպէս ասացան՝ թէ  
յառաջնումն ամի թագաւորութեանն Փրիպպոսի շինութեան քաղաքին  
Հոռմա լցաւ Թ ամ և ի միուսում ամին առնեն սկիզբն այլում Տա-  
90 մարոյ, զոր և թուական անուանեցին: Եւ էր Թժ. աներորդ լուսնոյ  
յայնմ ամի յԹժ. ան ապրիլի, յորմէ սկսեալ ժողովել զաւուրս աւե-  
լեացն լուսնոյ Իճ. ն մարտի ամսոյ և զմասունս Թժ. անց աւարտեն  
զընթացիցն լուսնոյ արշաւանս և նրճանջեալ գարձուցանեն ի նոյն:  
Եւ այսոքիկ կալցին այսպէս:
- 95 Բայց վասն կարծեաց ոմանց տարբերութեան վասն լուսնոյ՝  
թէ որպիսում արգիւր ստեղծաւ հասակի, ոմանց եռաւրեայ, և այլոց  
239ա միաւրեայ իսկ ո//մանց Աժ. անաւրեայ ասացեալ զնա գոյանալ, և  
ըստ իւրաքանչիւրոցն կարծեաց զլրումնն առաջին: Մի՛ խարիցուք  
պատրեալք, քանզի ամենայն արարածք աստուծոյ, որպէս վայել է  
100 իսկ ունի ըստ բանի և ըստ որում քաջացն է սիրելի, կատարեալ ի  
սկսմանն ստեղծման: Մի՛ զսուրբսն զբազարտեացն, զայն որ ասաց  
Աժ. ան աւուրքք երկց գոլ զլուսին քան զարեգակն, զի ո՛չ եթէ վասն  
յայլզպիսում գոլ ձև ի լուսնոյ ի ստեղծմանն ասէ զայս, այլ վասն  
զի երկոքին լուսաւորք ի շորորդում աւուրն գոյացան: Եւ էր լու-  
5 սինն կատարեալ ձևով, որպէս յաւուրս լրման իւրոյ զԴ աւուրսն  
հասարակ ունել ասէ նոցա, զառաջինս, զերինս և զշորորդն, յո-  
րում գոյացանն, իսկ շորք և մետասան միաւորեալք լինին Եժ. ան:
- Արդ վասն Եժ. անաւրեայ գոյոյ նմա ի շորորդում աւուր  
ստեղծման իւրոյ, մետասան աւուրք երկց զնա ասէ, քան զարե-  
10 գակն զԴ թիւ աւուրց առաջնոց ոչ անձնակի կամի տալ լուսնոյ,  
քանզի հասարակ ունին զայն արեգակն և լուսին, զի վասն ի շո-  
րորդում աւուր ստեղծման միահասակք և աւուրքք հանգիտաթիւք  
գոն երկոքին: Իսկ վասն ամենալին գոլ լուսնոյ յաւելու նմա մետա-  
սան աւուրս, որոց բաղադրութիւնն ծնանի զԵ. ն և զԺ. ն: Եւ սորայ  
15 են, ասէ, որ յամենայն ամի յաւելուն նմա զմետասան աւուրցն  
ամի ամի ժողովմունսն լուսնոյ, ասէ, զոր և վերագիր անուանեմք:
- Արդ՝ ըստ այսմ տեսութեան և Դ. իցն ապրիլի գոլ լրումն առա-  
ջին այսպէս իմաստասիրի. կա՛լ զլուսնոյ ի նմին ձևի կատարե-  
լութեան զաւուրս լրման միոյ ի Ե. ն մարտի ամսոյ մինչև ի Դ. ն  
239բ ապրիլի և ապա սկիզբն առնուլ պակասութեան, // քանզի անվայե-  
լուչ ամենակին և արտաքոյ բանի է ընդ ստեղծանելն պակասելոյ  
առնուլ սկիզբն: Այլ և յոյժ անըմբոն այլոց համարէն արարածոց



կենդանեաց և անշնչից, մահկանացուց և անմահից կատարելա-  
պէս բնութեամբ գոյ և տեսեամբ ի սկզբան և լուսնոյ միայն կամ  
25 անկատար ձևով և տեսեամբ ստեղծանիլ և կամ ի կատարելու-  
թենէն անդէն և անդ վազվազակի նուազիլ, որպէսզի եղիցի նոյն  
ժամանակ կատարման և նուազութեան, որ ի վերայ ալլոց արա-  
բածոց ոչ տուա:

Այլ թէպէտ և այն բնութիւն է նորա, արդ և ըստ այնմ որ  
30 կարծիցէ իմանալ ի սկզբանն ցուցաւ անվայելուչ ահա և անյար-  
մարական գոյ, բայց հանգերձ այդու և յուրով տեսանեմք ի սկզբանէ  
իրացն փոփոխածութիւնս և այլալլութիւնս եղեալ, և նախ զմար-  
դոյն մահկանացութիւն և սակաւակեցութիւն: Արդ՝ այդոքիկ ամե-  
նեքեան ըստ դիպողարան լինելոյ ի կարի վայելչականք որպէս  
35 թուիեն, բայց ըստ ինքեանց և ճշմարտութեանն ո՛չ ումեք է յայ-  
լոց գիտել զժամս և ժամանակս, զոր հայր ետ իւրում իշխանու-  
թեան, այլ՝ յեւանելոյն Աբամայ ի գրախտէն և ոչ ի սկզբանէ  
արարչագործութեանն ժամանակք գրին, և այնոքիկ ոչ նմանապէս  
ո՛չ միայն ըստ յունաց և քաղզէացոց և կամ եգիպտացոց, այլ և  
40 ո՛չ նոցին ինքեանց երբայեցոցն՝ այլազգ ըստ շարմատացոցն և  
այլազգ ըստ հրէից զժամանակագրութիւնս՝ որ ի մեծէն Մովսէսէ  
կարգեալ տեսանելով: Իսկ երկոցունց զոցա անմիաբան զըստ  
և թանասնիցն թարգմանութեան վասն յոյժ առաւել ճշմարիտն գո-  
լով և անխարդախ, որպէս է գտանել ի բազմաց: Բայց ըստ  
45 արուեստի և մակացութեան հնար է մերթ զնոյն ինքն ճշմարտու-  
240ա թիւնն և մերթ մերձն առ // ճշմարտութիւնն, և զայսոսիկ դարձեալ  
երկակի և կամ աւել և կամ սուղ գտանել, այլ ի ստութենէն ամե-  
նեին հեռի լիցուք և յանուանեցելոցն պիտակարար իմաստակս  
կամ մահացուս խոյս տացուք, զի մի ընդվայր և ի նանիր աշխա-  
տութեամբ մաշեցուք զկեանս և փոխանակ շահից, աուգանս ժո-  
ղովեցուք: Սակայն որչափ ի կարի է զաշխատութիւն բազմուսում-  
նութեան և զչան հանճարագիտութեան, մի՛ արհամարհեսցուք ան-  
50 փութութեամբ՝ գիտելով քաղցր առաւել զնա և բազձալի ստատա-  
ձասիրաց և անձանց առաքինեաց:

### ԾԱՆՈԹՅ.ԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննէս Իմաստասերի այս աշխատությունը, ինչպես ասել ենք  
ուսումնասիրության բաժնում (էջ 96—97), հասել է երեք խմբագրությամբ՝  
2ՊՁՄ-ի № 2001 ձեռագիրն ունի «Սարկաւազի սակս Երկուցն պարիսիյի և շա-  
րիցն անմիաբանութեան» վերնագիրը, 2ՊՁՄ-ի № 1973 ձեռագիրը՝ «Յովհան-  
նու Բանանայի Յաղագս եղանակաց և տօնից և Բանիօնութեան ամաց դի-  
պարանութեամբ ի նոյն տեսութիւն» վերնագիրը, իսկ № 1971 խմբի ձեռա-  
գրում նա ընդօրինակված է «Յաղագս ըստ հոռմայեցոցն ամաց...» աշխա-  
տության հավելվածում, առանց վերնագրի:

Ներկա տեքստը հրատարակում ենք № 1973 ձեռագրի ընդօրինակության  
հիման վրա:



18. «ՅԱԳԱԳՍ ՅԱՐԱԿԱՅԻ, ՎԵՐԱԳՐԱՅ ԵՒ ԲՈՊԷԻՅ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՅԱԳԱԳՍ ՅԱՐԱԿԱՅԻ

Կարծեալք և առանց պատճառի գիտութեան ո՛չ ասի և ո՛չ մակացութիւն՝ գիտութեան: Իսկ որպէս տեսանեմք ձեանալ զբազումս առ ախտի փառամոլութեան զգիտնոց կերպարանս ունել, առ  
5 որս դիմարանել ժամանակ ո՛չ է: Բայց վասն պատճառի յարակալիցդ գիտութեան, զոր յառաջագոյն իսկ ասացաք, զքանիաւնութեան ամսոց և վերադրաց, ըստ իւրաքանչիւր ազգաց, վասն ի բաց հանելով զվերադիրսն ի հանապազորրաց անտի, զմնացեալսն տեսանեմք, եթէ աւելի է քան զերեսուն, եթէ նուազ, և կամ թէ անցեալ ամիսն ԼԱ (31) է՝ եթէ Լ (30) և կամ հինգ ատուր աւելեացն  
10 զիպիցի, բաժանեմք ի նոսա զթիւսն և զայլն առաջիկայ ամսոյն տամք և գտանեմք զքանիս ամսոյն:

Բայց // Խ2 վասն այնորիկ ասեմք, զի լուսին Լ ար է լիով կիսաւրն իւրովք: Բայց զի մարտ ամիս հոռմայեցոց ԼԱ (31) է, թէ  
15 սակաւ է վերադիրն զոր երթամք՝ զԼԱ (31) թիւն հանեմք մարտի ամսոյ, և մնացելովն գտանեմք յապրելի ամսեան զարն որքան և իցէ հնգետասան լրմանն լուսնոյ: Իսկ որոց ո՛չ իցէ ամիսն ԼԱ (31), նոյն Խ2-ին, թէ աւելի ինչ իցէ քան զլրումն լուսնոյ, ի վերադիրսն պակասէ, և գտանի շափով ուղիղ միայն քանիաւնութիւն  
20 լուսնին: Բայց որք ԽԳ (44) կանոնեցին զյարակայսն, չորեքտասան միայն ճշգիւ ասեն ի լրմունս իննետասներեկի ամաց զաւուրս լուսնին, և զի աւելի քան զչորեքտասան պատահէ, քաջայայտ է ճիշտ գիտողացն, և ո՛չ ըստ պակասութեան, ապա այդ վերադիրք և յարակայք են, որ անթերի ցուցանեն զաւուրս լուսնոյ: Ո՛չ եթէ  
80ա զառաջին սահմանիչսն խոտեցին, քա՛ւ լիցի, այլ // անտի սկսեալ իբրև ի վարդապետէ գտին զկատարեալն և կանոնեցին: Բայց և ո՛չ այնորիքն վարին, վիճիմք ինչ՝ գիտելով զարուեստին կորովութիւն, այլ զայսոցիկ արհամարհողքն ըմբերանեմք, որպէս զանհմուտս: Եւ արդ՝ է՛ այսպէս:

30 Ապրիլ Դ (4), վերադիրն ԺԱ (11) և մարտ ԼԱ (31), բազազրեալ թիւք լինին Խ2 (46): Մարտ ԻԳ (24), վերադիրն՝ ԻԲ (22),

նոյնպէս լինի ԽԶ (46): Եւ ամենայն ըստ կարգի դոյնգործակ: Ապրիլ ԺԲ (12), վերադիր Գ (3), և անցեալ ամիսն՝ լինի ԽԶ (46): Ապրիլ Ա (1), վերադիր ԺԳ (14): Մարտ ԻԱ (21), վերադիր ԻԵ (25):  
 35 Ապրիլ Թ (9), վերադիր Զ (6): Մարտ ԻԲ (29), վերադիր ԺԷ (17): Ապրիլ ԺԷ (17), վերադիր ԻԸ (28): Ապրիլ Զ (6), վերադիր Թ (9): Մարտ ԻԵ (25), վերադիր ԻԱ (21): Վասնզի նահանջից նահանջ է, երկոտասան պարտ է ածել ի վերայ հնոյ վերադիրն: Եւ պատճառն յայտնի է, որք ոչ են ամենայնիւ ազէտ: Ապրիլ ԺԳ (13),  
 40 վերադիր Բ (2): Ապրիլ Բ (2), վերադիր ԺԳ (13): Մարտ ԻԲ (22),  
 80 Բ վերադիր ԻԳ (24): Ապրիլ Ժ (10) // վերադիր Ե (5): Մարտ Լ (30), վերադիր ԺԶ (16): Ապրիլ ԺԸ (18), վերադիր ԻԷ (27): Ապրիլ Է (7), վերադիր Ը (8): Մարտ ԻԷ (27), վերադիր ԺԹ (19): Ապրիլ ԺԾ (15), վերադիր Լ (30): Բայց Գ (3) լրմանցն որ են ապրիլ ԺԸ (18) և  
 45 ԺԷ (17) և ԺԵ (15), քան զվերադիր թիւ մի ալ Երթ ի հանապազորդէն:

Իսկ եթէ ԽԴ (44) ունիցիմք զյարակայն ի երեքտասանիցն ապրիլի լրմանցն, նոյնպէս պարտ է երթիւլ ցթիւն աւելորդ, որպէս յասացելոց լրմանցդ: Բայց յորժամ յերեսուն մարտի լինի լրումն,  
 50 աւելորդութիւն իր ո՛չ լինի քաջայայտ, ալ ի վերադիրն, որ է վեշտասան համարեալ լինի, և այդ սոսցեալ՝ թէ յորժամ երթնս զվերադիրն յարակայնէն, մնացեալն թէ քան զհասարակածն աւելի է, ի նմին ամսեան լինի լրումն, և թէ պակաս է, յառաջիկայ ամիսն խաղայ: Իսկ ի հասարակ լրմանս առնել լուանոյ, որ ի  
 55 տարուջն կատարի:

81 Խ ԽԵ (45) զթիւն յազրագս այնորիկ ունիմք, // զի հանգէտ և զոյգ են ամենայն լրմունքն միմեանց: Եւ կիսակաւք գտանեմք զաւելին և զպակասն: Բայց ի տէրունի լրմանց զատկաց երկու պատճառաւ ասեմք ԽԶ (46), մի՛ զի կիսակ ո՛չ տոնումք ի կիր, և երկրորդ՝ զի աւելի [գտանի] երբէք երբէք լրումն լուանի, քան զչորեքտասան և զհինգետասան, մանաւանդ յամենայն իննետասաներկի լրմունսն: Եւ զի առաջինքն ԽԴ (44) կանոնեցին զյարակայն, բազում անգամ գայ հանդիպէ շորեքտասաներորդ լուանոյ զատկաց՝ ի ներքոյ քաներորդին մարտի ամսոյ, ի հնգետասանին և յութնտասաներորդին և ի իննետասաներորդին և ի քաներորդին: Իսկ յորում հասարակաւորութիւն է գարնանային, որ և մի՛ լիցի այս ի համար եկեալ և առնել զլրմունս զայնոսիկ կամ զմի ի նոցանէ, որ նախ քան զհասարակել տուրնջեան և զիշերոյ, և պատահին

81 Բ յոլովակի երկու պատիկ ի միում, ամի: Իմաստասիրեցին // ալսպէս  
 70 ի ձեռն այնր թուոյ զաւելին պակաս ածել, զի անդք քան զհասարակածն իցէ լրումն լուանոյ սրբոյ պասերին: Եւ մի՛ վասն աւելի թուոյն սխալիցիմք, որպէս ասացաւդ, ո՛չ եթէ կանոնիչքն ո՛չ զիտէին թէ յաւելուն աւորք լրմանցն քան զչորեքտասան և զհինգետասան, բայց վասն ասացելոյ պատճառիդ սահմանեցին այսպէս:

75 Եւ եթէ քառասուն շորիքն ոք վարեացի յարակային, որպէսզի մի՛ պակաս լիցի աւորցն լուանոյ, զոր ածէ այն թիւ, անցցէ ա՛նդր



քան զՏասարակելն տուրնչեան և զիշերոյ և ասել զայն լրումն  
 բարիոր աննէ, որ և ինձ հաւանելի է: Բայց վերադարձ և հինգե-  
 կաւ ի յայլ լրմունս տարոյն որ ի յերկուցն ապրիելի, մի՛ ոք վարե-  
 80 ցի, զի սխալեցուցանէ երկու թուով, որպէս ասացաք բազում ան-  
 գամ: Նա և վասն լրմանցդ զատկի զթոյլ տալն վասն իրիք պատ-  
 82ա ճառի հաւանեցաք, որպէս // ցուցաւդ վերագոյն, քանզի ճշգրիտ  
 զբանիս աւուրցն ո՛չ ցուցանէ: Յիշեցից և զմոռացեալն իսկ յաւուրն  
 հասարակատրութեան, որ ի քսան մարտի պատահէ լրումն, բայց  
 85 ո՛չ ընկալան ի կանոն հինգհարիւրեկին, որք զիննևտասներեակդ  
 աշխատեալ գտին և սահմանեցին, այլ միանգամ միայն յետ տասն  
 և միոյն ապրիելի կանոնիցն ո՛չ քսան, այլ ԻԱ (21) զմարտի՝ զի  
 ամենայն, որ ըստ նմա ո՛չ միայն նախ քան հասարակածն մի՛  
 զիպեացի, այլ և ո՛չ յաւուրն հասարակին գտանի, որ է միշին, բայց  
 90 և թէ անցցէ ի միւս ծայրն:

### ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱԴՐԱՅ

Զորս ի լրմանցն պակասեցուցանեմք զմեռասան թիւսն յա-  
 ւելումք ի վերագիրն, և այսպէս աճմամբ և պակասեցուցանելով  
 արուեստիւ հաստատապէս զքանիամուրթիւն գտանեմք // զաւուրս  
 82բ ամսոցն, յորս լրմունքն կատարին լուանոյ: Եւ է այսպէս: Ապրիելի  
 շորս, զի՛ր զայդ ի վերոյ մարտի ամսոյ, և լինի ԼԵ (35), երթ  
 զմեռասան, մնայ ԻԿ (24) լրումն լուանի առաջիկայ ամին: Ա՛ծ  
 ԺԹ (19) ի վերայ ԻԴ (24), լինի ԽԴ (43), հան ԼԱ (31) մարտի  
 ամսոյ, մնայ ԺԲ (12), զի երկուքին թիւքդ՝ ԺԱ (11) և ԺԹ (19) լինի  
 10 Լ (30), երթալն ԺԱ (11) և ածելն ԺԹ (19), զնոյն և նմանապէս  
 ցուցանէ: Բայց զի առաջիկայ ամիսն անցանելոյ, և զի մի՛ ԳԺ (13)  
 թուեսցի մարտի ամսոյ, ածեմք ԺԹ (19): Արդ՝ երթ յերկուտասանէն  
 ԺԱ (11) և մնայ մի զոյն իսկ ապրիելի: Եւ ամենայն այդպէս:  
 Բայց յորժամ լինի վեց ապրիելի, յարդարեմք զնա ընդ մարտի  
 15 ամսոյ և լինի ԼԷ (37), երթամք ԺԲ (12) և յաւելումք ի վերագիրն  
 ԺԲ (12) և լինի մարտ ԻԵ (25) և վերագիրն ԻԱ (21): Քանզի ի  
 երեքտասանիցն ապրիելի, որ է զլուխ իննևտասներեկիդ, ըստ  
 83ա թուականացդ սկզբանց // հոռմի և հայոց, թէպէտ ՅԴ (304)  
 ամաւր զկնի է հայոյն, որ են իննևտասներեկ վեշտասան մինչև ի  
 20 ԻԵ (25) մարտի, աւելիքն լուանի ժողովին և լինին ամիսք վեց և  
 ար ԻԹ (29), իսկ ԺԹ (19) մասունքն լուանոյ, որ ամի ամի յա-  
 ւելուն, լինի ար մի և ընդ զթիւ երեսներն և յայնմ ամի առնէ լուան  
 աւել ի երկուտասան ար զմի արն ի մասանց ժողովմանէ և մե-  
 տասան ըստ այլոցն ամաց: Վասն այսորիկ յայն ամի ԺԲ (12)  
 25 երթամք յանցեալ լրմանն, և նոյն շափ արկանեմք ի վերայ հնոյ  
 վերագրին: Իսկ այլ ամենայն լրմունքն և վերագրերն ութևտասանցն  
 յաւելուն և պակասն մեռասան թուով որպէս ասացաւ: Եւ պատ-  
 շահեցուցանեմք զնոսա ընդ լինելութեան ի սկզբանն վասն մեռա-  
 սանին, որպէս ահա ասացաւ Թ՛պէտ և այժմ կէսք երկուտասան



83բ ամսոցն և է աւուրք անլիեաց կատարեն զթիւսդ: // Իսկ վասն  
 իննևտասան մասանցն անլորդաց ի տարւոջն քան զմետասան  
 աւուրսն, որպէս ասի իսկ: Եթէ ըստ աւուրցն և զմասունսդ ունէր  
 յաւուր լինելութեան իւրոյ, ըստ որում զժամս ընթացից արեգա-  
 կանն, և զմասունսդ համեմատելով, ասեն կարծեալք ընդ լուսնոյ:  
 35 Թէ մինչ էր արեգակն ի տեղոջ մետասաներորդի ժամուն անլի  
 մասամբ, իննևտասան ի մուտս կոյս: Ստեղծաւ լուսինն կատա-  
 րեալ ձևով յելս կոյս, հետի գոլով ի միմեանց վեց կենդանակեր-  
 պաւք: Ըստ որում և յամենայն լրմունս կարծեն զմետասան ժամսն  
 ի գոյացութիւն աւուրցն և զմասունս ըստ ինքեան և եթ, որում ոչ  
 40 հաւանիմ, իսկ ճշմարտութիւն զոցս յառաջագոյն ասացաւ, և այ-  
 դոքիկ բաական լիցին խնդրողացն: Եւ իմա՛, զի քաջմտաց և  
 առատագունից պէտք են և ամենայնիւ բազմա//հմուտ լինելոյ առ  
 84ա ի ճշմարիտ գիտել զփոփոխմունս լուսնոյ ըստ աւուրց և ժա-  
 մուց և մասանց և ըստ կենդանակերպացոց յաջ և յահեակ նկատ-  
 45 ման ի կէտսն հասանելոյ և զամենայն պատճառս մասանցն առա-  
 ւելութեան իմանալոյ:

### ՅԱՂԱԳՍ ԲՈՊԷՅ

Արդ՝ յորժամ բովանդակ բոպէիւքն գրանիս աւուրց լուսնոյ  
 կամիցիս գտանել և զաւուրսն, յորում ես կրկնել ըստ հրամանին  
 զրոպէն վասն գիտի լրմանն և կամ ծննդեանն, մի՛ միայն զվաթ-  
 սուն տունջեան յամենայն ժամ և յամենայն լրմունս և ի ծնունդս  
 5 տայցիս, այլ ըստ գիշերոյն և տունջեան առաւելելոյ և նուազանա-  
 լոյ, զժամս և զմասունս բաժանեպցես: Զի եթէ ԲԺ.ան միա՛յն իցեն  
 ժամք տունջեան և գիշերոյ, Կ (60) հանցես, իսկ եթէ Թ՝ (9) ժամ՝  
 84բ ին (45), և թէ Ժ (10) // ժամ՝ Ծ (50), և թէ ԺԱ. (11) ժամ՝ Ծն (55),  
 10 թէ ԺԳ (13), Կն (65), և թէ ԺԴ (14)՝ Հ (70), իսկ եթէ ԺԵ (15)  
 ժամ՝ Հն (75): Նմանապէս և յորժամ գիշերն առաւելուցու՝ յաւել-  
 ցես ի նա զթիւսդ ար ըստ արէ նուազեցուցանելով և աճեցուցա-  
 նելով: Բայց մի՛ և վասն ամսոցոց և եթ, յորս ժամքն բովանդակին,  
 15 գործեսցես զայդ, այլ և ըստ աւուրց՝ ի վեց աւուրս մասն մի կա-  
 տարելով: Քանզի այսպէս համեմատելով հնգամսեայ լուսնական  
 ժամքդ, զարեգակնային ժամսն Լ (30) մասամբք ժողովել սովորե-  
 ցար: Իսկ զլուսնականս երբեմն զոյգ թուով և երբեմն հնգիւք, իսկ  
 երբեմն այլ ազդ, որպէս քաջահայտ իսկ է: Արդ՝ ըստ աւուր յաւել-  
 ցես կամ պակասեպցես մասն մի յերեսնիցն յաճելն ի նուազել ա-  
 20ւուրցն և գիշերաց: Քանզի այս դիրին է մանկանց առիմանալ: Եւ  
 85ա ի վեց աւուրսն նմանապէս ի յաւելույն և ի պակասելն // տացես և  
 բարձցես մասն մի հինգամսեայ ժամուցն յերկոտասան՝ երկու, ի  
 ԺԸ (18)՝ Գ. (3) և ի ԻԴ (24)՝ Դ (4), իսկ յերեսնին՝ Ե (5), որ է  
 ժամ՝ մի: Եւ այդպէս բաժանմամբ, ըստ տարեառութեան լուսաւո-  
 25րացոց ճշմարտիւ գտցես: Այլ և զաւուրսն և զժամսն և զմասունս  
 լուսնոյ՝ և զմասանց մասնկունս:

Ունէի և գրազումս և այլս գրել քեզ վասն զոցուն և այլպիսեաց իրաց, բայց արգելայ յանպարապութենէ, մանաւանդ՝ զի տալ պատճառս իմաստնոց բաւական համարեցայ:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննէս Իմաստասերի «Յաղագս յարակայի, վերադրաց և բոպէից» ներկա աշխատութիւնը մեզ հայտնի է Հայաստանի Պետական մատենադարանի շորս ձեռագրով՝ № 1973 (թ. 24ա—27բ), № 1971 (թ. 79ա—85ա), № 2180 (թ. 444բ—448բ) և № 2762 (թ. 19ա—23ա):

Իմաստասերի ներկա աշխատութիւնը մենք հրատարակում ենք № 1973 ձեռագրի հիման վրա, սակայն նկատի ունենալով, որ այդ տեքստում բացակայում էր «Յաղագս բոպէից» գլուխը, ուստի և անհրաժեշտ համարեցինք առաջնորդել № 1971 ձեռագրի տեքստով, և վերջինիս էջահամարներն էլ նշված են տպագրված տեքստի էջերի լուսանցքներում:

## 19. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱՄԱԿՐ ՈՄՆ ՍԱՐԳՍԻ՝ ԱՄԻՍՆԵՐԻ ԱՆՇԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆՈՐԻՆ (ՅՈՎՀԱՆՆՈՒ) ԱՌ ՍԱՐԳԻՍ

Զքո՛ւ ո՛վ պատուականդ ինձ և փափագելի, լուեալ և յոյժ  
ախորժեալ զխնդիր հրամանի՝ վերստին երկրորդել զառ ի չինէն  
գրեալ վասն հայկական ամսոց զշարժութեան պատճառս՝ և եթէ  
5 բարիոք կամ // ըստ բանի ուրուք արդեաւք յոմանց կարգեցաւ՝  
ատար այլոց ազգացդ զկարգն ունել, նմանապէս և առ յեղանակս  
չորեաին փորձեցայց ցուցանել կարճառատ բանիւ Արդ՝ թէպէտ և  
ինձ ո՛չ այդպիսի գրութիւն իցէ հաճելի յազագս զանազան և իրա-  
ւացի պատճառանաց, բայց ի նախնեացն յովոյք կամեցան գրել  
10 այդպէս, նա և՛ ի յունաց ևս: Սակայն ո՛չ նմանապէս, այլ ոմանք  
այսպէս և կէսք այլ ազգ, որով ցուցանի անհանձարութիւն ազգիս  
մերոյ, զատ և որիչ յամենեցունց՝ զխառնումն ամսոց և յեղանա-  
կաց ընդ միմեանս ունել առանձնակի, առնել գումարութիւնս նա-  
հանջիցդ ըստ արեգական ընթացից, զոր ամենեքեան արկանեն ի  
15 թիւ ամսոցն ի շորրորդումն ամի կատարման աւուրն նահանջի:  
Վասն որոյ ո՛չ իսկ փոփոխին ի միջոցէ անտի քանիք ամսոցն և  
86ա // յեղանակ տարոյն, և ոմանք՝ ի տանից, որպէս ընկալան ի  
սկզբանն զկարգ:

Նախ երբայեցիքն, որպէս ունին գիրքն Եզրի և մարգարէին  
20 Զաքարիայ, յայտնապէս ցուցանեն՝ ո՛չ այսպէս կանոնիլ ի սկզբա-  
նէ գրութեան: Քանզի զազար ամիս, որ է ըստ նոցա վերջին ամիս,  
դնեն զոյգ ընդ մեհեկանի, և թներորդի ամսոյն մերոյ, որպէս զի  
պատահել զարնանային հասակաւորութեան ի շորրորդումն աւե-  
լեացն, որ ըստ նոցա: Իսկ ըստ մերոսմ՝ արեգ ամսոյ ի շորրոր-  
25 դումն նմանապէս և ասորիք զարեգ ամիս գիտեն և կարգեն: Իսկ  
ոմանք ի յունաց զոյգ ընդ մարտոյ ամսոյ դնեն զմեհեկանի միշտ,  
և զարեգ յիսն մտանել մարտի ամսոյ, որպէս զի յերկուս նորս  
մուտ իցէ ապրելի ամսոյ:

Բայց այլն աստուծոյ Կիրղոս Երուսաղէմի Եպիսկոպոսն ի  
86բ թղթին՝ որ առ թագաւորն Կոստանդին // վասն պատուական խաչին

2 A փափագելի

3 A վերբասին



գրէ, երևեալ ի գլուխ ահեկանի ամսոյ, որ է մայիս ամսոյ և՛ն: Եւ  
 ըստ այսմ հանդիպի հասարակաւորութիւն գարնանային յերկո-  
 տասան արեգ ամսոյ, ըստ որում և մեր զկանոն կարգեցաք և զը-  
 վանդակ պալտ՛ճէն տումարին: Այլ ոմանք զինն կարգեցին նորին  
 35 ամսոյ լինել զհասարակաւորութիւն գարնանոյ: Եւ ըստ այսմ ամե-  
 նեցունց և սոցունց համաձայնից գոյ ուսանել թէ այժմուս կարգ  
 ո՛չ է հետի յանպատեհութենէ: Քանզի ո՛չ ի յիշեցելոցդ ոք, և այլք  
 բազումք, որպէս երկասիրաց և ուսումնասիրաց է գիտիլ, ո՛չ այժ-  
 մու սովորութեամբ հաճեցան կանոնել զյեղանակս և զշարժումս՝  
 40 որ ըստ հայ ամսոց: Եւ է առաւել տգիտութիւն ժողովմունք նա-  
 հանջի ատուրց զատ և որիշ յատուրց տարւոյն և ի թուոյ ՚| ամսոց,  
 զոր և ո՛չ մի ազգ անէ, քանզի բազում սխալութիւն գործի յայդ-  
 մանէ, առաջին՝ յաւելումն թուոյ ամսոց, երկրորդ՝ զանցանելն ընդ  
 կանոնս: Զի թէ միոյ թուոյ յաւելուած այսպիսի շփոթումն և  
 45 սխալմունս գործեաց յեթներեկաց կանոնս և իննևտասներեկաց,  
 և նորին ինքեան հինգհարիւրեկին և յայս բազումս: Եւ թէ ի  
 սկզբանէ իսկ եղեալ էր հաւաքումն նահանջիցն արտաքոյ ամենե-  
 ցուն, զիա՛րդ ոչ եղծանէր զամենայն կանոնեալսն և կամ հարկա-  
 տորապէս ինքն ի բաց կտրեալ լինէր յամենայն կանոնելոցն: Վասն  
 50 զի ժողովին ատուրքն նահանջականք ՅԿԵ (365) ի յամաց ՌՆԿ.ից  
 (1460-ից) և անցանէ ընդ շարժմունս եղանակացդ ի միս ամն  
 միով թուով: Եւ ժողովին ի թուականացդ՝ որ յելիցն Ադամայ ի  
 87բ դրսխտէն ատուրք իբրև շորից ՚| ամաց սակաւ ինչ կամ նուազ՝  
 կամ աւելի մինչև ի գիր մատենիդ: Եւ զիա՛րդ համեմատի այդպիսի  
 55 շարժմունք, որ լինի ի ձեռն աւելի թուոցդ՝ ընդ անշարժ և անա-  
 լելորդ կանոնեցելոցն, քանզի բազում խառնակութիւն և շփոթ-  
 մունք գործին յաւելի թուոցդ, և անբոխէ զմիտս սոքաւք վարեցե-  
 լոցն: Ոչ միայն ի վերայ սասցեալդ գործէ սխալ, այլ և զամն  
 նահանջին մի թուով յառաջ բերէ: Եւ թէ պատահեալ լինի երկու  
 60 կամ երեք անգամ ընդ շրջագայութեան ամացն և յեղանակաց  
 զատուրք տարւոյն, որպիսի պատճառ կուրութեան լինէր և վիճոյ և  
 հակաբանութեան գիտնոց առ անգէտս, բայց միայն ի ժողովիլ  
 ամաց շորից և զոյգ և հաւասար պատահէր ըստ նահանջին, այլ  
 և ո՛չ այնու ևս, քանզի անհաւասար գտանի աչոցն և անմիալլբան  
 88ա ըստ յաւելման թուոցն և նահանջիցն առաւել յաճախելովն: Քանզի  
 ԻԸ (28) բազմապատկմամբ զեթամբն անցանելով նահանջիցն  
 գրովք: Այլ թէպէտ անդրէն ի նոյն դառնայր վասն անշարժութեան,  
 սակայն վաղվաղակի դարձեալ անցանէր զկարգն: Եւ այսպէս  
 յանհունս արտաքայլեալ լինի այսոքիւք, յորմէ ո՛չ է հնար լինել  
 70 մակացութեան:

Եթէ զիա՛րդ կամ ե՛րբ եմուտ ի ներքս մի թիւն այն, զոր ի բաց  
 ընկեցաք, ասացաւ երբեմն առ ի մէնչ: Բայց և այժմ յիշեսցուք  
 սակաւ ինչ բանիւք:

Յորժամ անարուեստ պատճէն այն կարգեցաւ, ասի հասա-  
 75 բակ լինել գարնայնոյն յահկի ամսոյ ժԳ (13): Եւ ըստ փոփոխման

88ր թուոյ աւուրցն ամսոյ՝ անցանել աւուրսն ի միւս ամն, յամիսն նա-  
 ւասարդի, որ է առ մեւք ճէ (107) ամ: Եւ ոչ ոք կալլրաց իմանալ՝  
 ո՛չ ի կարգողացն զառաջինն՝ թէ այս լինիցի յաւարտման ամին, և  
 80 ո՛չ չընդունողացն ի նոցանէ ոք՝ թէ եղև թիւ եկամուտ, և կամ  
 զպատճառն՝ թէ վասն է՞ր եղև. զի թէ ոչ զմտանելն ծաննան,  
 զիա՞րդ կարէին զպատճառն քննել արդիւք կամ իմանալ: Բայց  
 միայն յորժամ տեսանէին զսխալմունսն, որ պատահեալ լինէին,  
 յարէին և կարկատէին բանս անոճս և անըմբոսս՝ որպէս ի խոր  
 գիշերի առանց աչաց զաւազանաւք խարխափեալ որմն զորմով  
 85 զանցս ճանապարհի՝ հեռի եղեալք ի հաւաստագոյն տեղեկութեանց՝  
 վհից և վիրապաց և քարանց զյորմանց, պատահեալ զայթակղու-  
 թեանց: Եւ արդ՝ դու ի՞մ Յովսէփ քաջասունդ և պարկեշտագեղ,  
 թէ այդ քեզ ո՛չ իցէ հաճոյ վասն ստուգիւ լինելոյ առ ի չինէն իրա-  
 89ա սացի ի պատճառաւ, կալչի՞ր զազնուականսն՝ որ անմոլար ունի  
 90 զամենայն սահմանեալսն վասն սանի և յեղանակաց տարոյ, և  
 լրմանց լուսնոյ զատկաց, վերադրաց, և հիմներկաց, և զառաջա-  
 տորաց պահոց և զայլոցն ամենեցունց: Ապա եթէ վասն զայդ գի-  
 տելոյ և ունելոյ ամենեցունց ո՛չ կամիցես տանել այսմ հոգ և ջան,  
 95 քեզ և այդ մի՛ եղէց խորհրդակից, այլ թողու զաւելորդն ի թուակա-  
 նէն զմի թիւն և ուղղապէս վարիլ: Քանզի յետ 37 (304) ամաց թուոցն  
 հոռոմայեացոց, որ են ԺԶ (16) իննևտասներեկ: Ակիզրն առնու  
 թուականն հայոց նմանապէս և նոցայն հոռոմայեացոց ի հրեքտա-  
 սանիցն ապրելի՛ շորեքտասաններորդի լրման զատկի ամի, որ և  
 ցուցանէ ճշմարտապէս զաւելուած թուոյն այնորիկ: Քանզի այնու  
 100 յորժամ որ կամիցի զտանել զակիզրն իննևտասներեկին, ո՛չ հրեք-  
 89ր տասան ապրելի, այլ զերկու նորին ի ամսոյ ցուցանէ, որ է ամե-  
 նեին սուս, զի անցանէ յառաջ միով կանոնաւ: Յորժամ հրեքտա-  
 զբովանդակ թուականն իննևտասան իննևտասան և կամ հարկ լինի  
 անարուեստաբար և անբանապէս զԻԾ (25) մարտի զնել սկիզբն,  
 5 և հանդիպել լրման տարոյն, և են երկոքեանն ընդ սխալանաւք,  
 բայց թողով զաւելորդ թիւն, ամենայն ամբողջ մնայ: Նա և զայն  
 գիտել արժան է, որոց կենդանի իցեն, զի որքան առնու զա-  
 ւարտ Ռեն (1460) ամքն, լինի զարձեալ թիւ մի յաւելուած, զոր  
 թողու պատշաճ է: Եւ որ ինչ խնդրի ի պէտս՝ սահմանել զայն  
 10 արուեստի: Վասն զի ո՛չ ի կանոնեալսն միայն արժան է հայել,  
 այլ և խուզել ջանիք զրոլորն, որպէս զի հանդերձ պատճառաւ  
 գիտացէ զոր ուսան: Եւ եթէ իցէ ինչ զանխոյ՝ հասու լինիցի, և  
 զպակասն մեծաւ հանճարով ուղղեալ լնուցու: ի Ռոյ աղագաւ՝ և  
 90ա զհանապազորդն զատկի, զոր ասէին Խ (40) անիմաստաբար,  
 15 փոխեցար լինել ԽԶ (46) ըստ ճշմարտութեան խնդրոյ: Քանզի և  
 յայլ շորեքտասաներորդս կամ ի լրմունս լուսնոյ, որք ի տարոջն,  
 յորժամ կամիցիմք գիտել, ունիմք ԽԾ (45), և ապա հանիմք ի բաց  
 զվերադիր ամին, և զկիսակն անցելոց ամսոցն և ԺԾ (15) լրմանն  
 լուսնոյ: Իսկ Խ (40) չի՞նչ պատճառս լինի առեալ, ա՛ղէ հարցցուք  
 20 զնոսս և մանաւանդ յայն շորեքտասաներորդսն, զոր ասել ի գալոյ



վեշտասաներորդ անուանեմք, այլ և վերագիրս նա՛հանջի ամացն,  
յոր խրատն ասէ տաս ամել ի վերայ հնոյ վերագրին և ո՛չ մե-  
տասան ըստ այլոց ամացն վասն աւելեալ աւուրցն յարեղականէ,  
որ լիննք քանայ յափշտակելով զմի արն ի լուանոյ ի մետասա-  
25 նիցն, յիպում տեղոջ ո՛չ աննելով թիրեն, նոյնպէս և զիննետաս-  
90 ր նեկի ամին թէ զիպես//ցի էրբէք, սխալին: Եւ պատճառ անգիտու-  
թեան սոցա՝ աւելորդ թին է:

Արդ՝ պարտ է ըստ նորում թուականիս զվերագրին այսպէս  
առնել. յորժամ երթումք ի բաց զՇԼԲ (532) և մի թիւ՝ զաւելեալն,  
30 որ լինի ՇԼԳ (533), իսկ ի մնացեալն, որ է նոր թուական, ունել և  
զայն տեսանել զնահանջն և զիննետասաներեական: Թէ քանի իցն  
երկորին ըստ իրեանց թուոյ: Եւ յորժամ առնես բազմապատիկ և  
յաւելուս ըստ իննետասաներեկացն և ըստ նահանջիցն որքանութեան  
պակասեցուցանես, երեք թիւ ի վերայ ամ հանապազ, և զայլ երթ  
35 երեսուն երեսուն, որ մնայ՝ վերագիր է ամին: Իսկ եթներեկ յորժամ  
առնիցես՝ շորս ամ ի վերայ թուականին, կամ երեք ի բաց երթ, և  
զայլն երթ եթն եթն, որ մնայ՝ եթներեկ է: Քանզի յորժամ մի թին  
այն զատանի, այսպէս ուղիղ կարգաւորի: Մինչ շե էր յաւելեալ  
թին այն, թէ ճշմարտապէս ըննեսցես ի վերջույս, գտանի զոյն  
91 օրինակաւ: // Բայց որպէս ի շորերտասաներորդան լուանոյ զատ-  
կաց տղայարար իմն առնեն, զի ունեն և (40), և երթան զանցեալ  
ամի վերագրին, և այլ ևս 5 (5) աւել աւուրս ասելով: Նոյնպէս  
և զայդոսիկ յետոյ շաղեցին, այլ ընդ այլոյ յաւելուլ և պակասե-  
ցուցանելով և հանապազորդս անուանել: Ոչ ևս զայն թողցուք ասել,  
45 որովհետև այնքան վեր և ի վայր շարժմունք են իրաց զվասն նա-  
հանջիցն յատկակի գումարութեան, նայել և տեսանել զուղիղն և  
զթիրին յետ ամաց այսպէս յաճախ պատահելոյ զթիրն ուղղել և  
զուղիղն ո՛չ շարժել:

Եւ այդորիկ այժմ բաւական լիցին յոյգպիսի պատճառս:  
50 Ապա եթէ վասն տանից և յեղանակաց գիւրադատութեան, որ առ  
թուականաւոյ հաճոյ են քեզ գիտել, այլում ժամանակի և տեղոյ ի  
կամս աստուծոյ թողցուք զայն:

Եւ զո՛ւ, // անձկալի՛ց իմ և քոջաշնորհ, խնայեսցես ինչ և  
ի մեզ, վասն խնորոյ աչգպիսի իրաց, զոր խոստովանիմ՝ շահ մեծ  
55 և ազուտ՝ որոց տան և որոց առնուն, վասն զի արթնոց և ուշմա-  
գունից է դործդ և խնդիր, որք զպարգևս մեծ և գերազանցեալ առ ի  
տեսանէ զիմաստութիւն, ապախտ առնել ո՛չ ախորժեն: Ոմանք զի  
առաւելապէս իմաստնասցին և սիրելեացն բարձրագոյն իմն և  
նազելի ընծայեսցի: Երկրորդ, որք առնուն՝ զի ըստ քանքարոյն և  
60 յարգեսցեն: Երրորդ և հրաշափառագոյն, զի սիրոյն հոգևորի ջեղքի  
խարոյկ և մտերմութեանն առ միմեանս ցուցցի զպարութիւն:

Ո՛ղջ լեր:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամիսների անշարժության մասին Հովհաննես Իմաստասերի Սարգսին ուղարկած այս նամակը մեզ հայտնի է Հայաստանի Պետական մատենադարանի երեք ձեռագրից՝ № 1971 (թ. 85ա—91բ), № 2180 (թ. 448բ—452բ) և № 2762 (թ. 23ա—27բ):

Մեր ներկա հրատարակության համար, ինչպես ասել ենք ուսումնասիրության մասում, հիմք ենք ընդունել № 1971 ձեռագրի ընդօրինակությունը և նրա մեջ աննշան ուղղումներ կատարել № 2762 ձեռագրի ընդօրինակության հիման վրա: Տողատակ ծանոթագրության մեջ առաջինի տարբերակները նշել ենք Ա նշանագրով, իսկ երկրորդինը՝ B նշանագրով:

## 20. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՊԸՏԱՌԻԿԸ

[ՆՈՐԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ]

- Ըստ երբայցեաց հնագիտաց և մարգարէից սմանց ի շորս  
 91ա արեգի ամսոյ հանդիպի հասարակատրութիւն տունջեան և // դի-  
 շերոյ ի յեղանակս դարնայնոյ: Այլ թէպէտ և յուրմս ինչ ածաք ի  
 5 վկայութիւն զասացեալսն յառաջնոցն վասն հայ ամսոց: Սակայն  
 առաւել հաճոյ թուի ասացեալն ի Յովսէպոսէ՝ յազագս սկզբանն  
 եղանակի դարնայնոյ լինել յառաջին աւուրն նիսան ամսոյ՝ որ ըստ  
 երբայցեացն, և հանդիպի ըստ եգիպտացւոցն ի ԻՉ (26) պեմի-  
 նովթայ, իսկ ըստ հոռոմոց՝ ի ԻԲ (22) մարտի ամսոյ: Նմանապէս  
 10 և ըստ յունաց՝ դիւսոս//րոս ամսոյ ԻԲ (22), և ըստ ասորոցն՝ ազար  
 28ա նոյնպէս ԻԲ (22) և ըստ հայոց՝ արեգ ամսոյ ԺԱ (11), զոր  
 դիւրին է ածել յուղղութիւն: Բայց զի ոմանք ի բազմահմուտ արանց  
 յայսկոյս և յայն հառն շարագրութիւնս, որպէս վերագոյն գրեցաւ,  
 որոց վայելուչ համարիմ զայնոսիկ և զայս: Արդ՝ եթէ դիցես սկիզբն  
 15 ժամանակին դարնայնոյ զիններորդ արեգ // ամսոյ և շորս աւելեացն  
 երբայցեացն՝ որ է քսան մարտ ամսոյ և ազարայ և դիւստրոսի, և  
 ԻԴ (24) պեմենովթայ: Երկու աւուրբք յառաջ գտանի՝ քան զոր  
 Յովսէպոսն ասացն: Բայց ո՛չ բանակոյս ինչ լինիմք յազագս ասա-  
 ցելոցդ, քանզի երկոքին յազնուական արանց սահմանեցան: Եւ  
 20 ըստ այսմ ամենեցունց արեգ ամիս միայն ունի զուղղութիւն, և  
 անուն յայտ առնէ զառաջնութիւն ժամանակին ի նմա գոլ, և զա-  
 վելումն ի տիւ՝ լուսնոյ արևն ալ ըստ արէ ի սկսմանէ անտի  
 ասացելոյ իմաստնոց իրիդ քննեսցի հաւաստապէս ճշտութիւն: Բայց  
 այնոցիկ մի՛ հեռեկացուք՝ որոց կոյր կուրի առաջնորդելով, կա-  
 25 տարածն ի խորխորատ աննել զվաղճանումն, այլ միայն հետեւել  
 ճշմարտութեան աստուածազգեաց իմաստնոց արանց և անձանց  
 առաքինեաց:

3 Ա աւուրնջեան

4 գարնանոյ

6 Ա Յովսէպոսէ

7 Ա գարնանոյ

14 Ա վայելուչ

15 Ա գարնանոյ

18 Ա Յովսէպոսն

ՄԱՆՈՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Իմաստասերի տոմարական այս պատասխիկը մեղ հայտնի է շորս ընդօրինակություններով՝ ՀՊՁՄ-ի № 1973 (թ. 263բ), № 1971 (թ. 91բ—92բ), № 2180 (թ. 452բ—453ա) և № 2762 (թ. 27բ—28ա): Այս մասին մենք խոսել ենք ուսումնասիրության մասում:

Ներկա հրատարակության համար բնագիր է ընդունված № 1971 ձեռագրի ընդօրինակությունը, քանի որ № 1973 ձեռագրի ընդօրինակության տեքստը խառնված է Իմաստասերի այլ աշխատության հետ:



21. «ՆՈՐԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅԱԳԱԳՍ ԻՆՆԵԻՏԱՆԵՐԵԿ ԱՄԸՅՆ»

- ]] Ի ազիտաց ոմանց տարակուսեն յազոպս չորեքտասանե-  
րորդոց սրբոյ զատկին, որ իննևտասան ամաւք յառաջ և վերջ  
խաղայ զատիկն: Արդ՝ թէպէտ և զիտնոցն յայտնի է ստուգապէս,  
յաղագս ազիտաց սուղ ինչ բանի նշանակեսցուք: Եւ է այսպէս:
- 5 Կատարէ արեգակն՝ զտարին ՅԿԵ (365)՝ երկոտասան ամաւք  
հինգ աւուրբք՝ երեսուն երեսուն ար ի կենդանակերպաց շաւիղան  
ընթանալով՝ սկսեալ ի խոշէն և զհինգ աւուրսն յուելեալ յընթա-  
ցիցն հանապարհէ ժողովէ, և ո՛չ որպէս ստեղծանեն յանուանեալ  
աստեղացն ընթակցութենէ: Իսկ լուսին զբովանդակ տարուոյն ըն-  
թացս արեգական կատարէ յաւուրս ԻԹ (29) և կէս: Եւ զտյս առնէ  
10 ի տարուոջն երկոտասանիցս, և այն կոշի տարի ըստ լուսնին՝ մե-  
տասան արուր պակաս քան զտարի արեգական: Եւ ո՛չ է արժան  
երկու ամս առնել զմին և անուանել ա՛յլ ըստ արեգական և ա՛յլ  
ըստ Խլուանոյ, և քակտել ի միմեանց զաւուրս միոյ ամի, և  
93բ արիինակ իմն տալ պատերազմել ընդ միմեանս արեգական և  
լուսնոյ և աւուրց ժամանակին, այլ զուգել և հաւասարել  
զերկոսին և ի միարանութիւն գումարել, և անուանել զեղեպն մի  
ամ: Եւ լինի այս յորժամ առնումք մետասան ար ի լուսնոյ ապա-  
ղայ ամէն և դնեմք ի վերայ երկոտասանին լուսնոյ: Քանզի լուսին  
20 ՅՄԳ (354) ար կատարէ զերկոտասան ընթացսն կիտէ ի կէտ, որ  
կոշի տարի ըստ լուսնին, իսկ զմետասան ի վերայ ածելով հաւա-  
սարեմք ընթացիցն արեգական և լինի ՅԿԵ (365) ար: Եւ յերիս  
ամս աւելեալ աւուրքն լուսնոյ, լինի ԼԳ (33) ար և կոշի արն այն  
երեքտասանեալ լուսնին: Թողումք զերեսուն արն յամիս մի, և  
25 երիս աւուրսն ածեմք ի միտոյ ամին մետասան աւուրցն: Սորա  
կոշին վերադիրք: Եւ այսպէս ժողովեալ ի ԺԹ (19) ամին լինին  
է (7) ամիսք, մի աւուրք պակաս, զոր լնուն իննևտասան մասունքն,  
94ա որ ժողովին ի իննևտասան ամացն և կատարեն լիով զևթն ամի-  
սքն, և զարժուցանեն անդրէն ի նոյն: Եւ պարտ է առնել զատիկն  
30 յետ հասարակելոյ տուրնչեան և դիշերոյ, զի եթէ ի ներքոյ քան  
զայս ոք կամիցի առնել, սխալ է բազում անզամ և առնէ երբէք  
երբէք ի մի տարուոջն երկու զատիկս, որպէս և հրեայքն յոլովակի  
գտանին արարեալ այնպէս: Այլ և պարսիկք ամենեկին անհմտա-

35 բար կրկնատասան միայն թուելով զամիսս լուանոյ, և անդէն առնեն  
 զանուանեալն զատկին իւրեանց եղծական: Վասն որոյ յետս ընդ-  
 դէմ ընթանալով արտաքոյ բանի և բնութեան և նորուն իսկ ճշ-  
 մարտութեան ըստ կարկատուն անկրան կրանիցն: Եւ յերկոտա-  
 սան ամս բովանդակէ զամիս տարւոյն՝ և այլ ևս ՃԼԲ (132) ատարբ  
 94բ անդր անցանէ, որ են ամիսք Գ (4) և ատարս ԺԲ (12), թող զերկո-  
 40 տասան ամիսն: Եւ է սա // նշանակ անհնարին կուրութեան մտաց  
 նոցա: Իսկ եկեղեցի աստուծոյ, յորժամ զչորեքտասաներորդի լու-  
 նոյ զատկաց առնէ յետ հասարակելոյ տունջեան և գիշերոյ, կամ  
 անդէն իսկ ի յաւուրն հասարակելոյ, մատչի յառաջ յար միա-  
 շարաթուն յարութեան տեան մերոյ, և կատարէ զսուրբ պատեքն:  
 45 Եւ ո՛չ անդէն ի լրմանն լուանոյ առնէ, զի մի՛ ընդ հրեայն միա-  
 բանեացի տանել: Այլ և այնպէս առնել սխալեցուցանել յետ ժա-  
 մանակաց ինչ երկու զատիկս առնել ի միում ամի: Եւ երկրորդ՝ զի  
 ո՛չ ի միաշարաթոջ հանդիպի բազում անգամ շորեքտասաներորդ  
 լուանոյ զատկաց: Եւ թէպէտ յառաջին և ի հին ժամանակս կող-  
 50 մանքն ստիացուց՝ անդէն ի լրման լուանոյ կատարելին զատիկն  
 ժամանակս ինչ, այլ ո՛չ հաճոյ եղև ամենեցունց, յազազս որոյ  
 բազում եղեն ժողովք ի Պաղեստին և յԵգիպտոս և ի կողմանս //  
 95ա հոռմայեցոց, յաւուրս Բեքտորի եպիսկոպոսին Հոռոմայ, զի ամե-  
 նայն եկեղեցի աստուծոյ ընդ ամենայն տիեզերս յաւուր միաշա-  
 55 րաթուն կատարեն զատիկն՝ յետ հասարակածին գարնայնոյ, զկնի  
 շորեքտասաներորդին լուանոյ տանեցեն միաբանութեամբ՝ նմա-  
 նապէս յաւուր կիրակէի զսուրբ զատիկն: Եւ որպէս պարտ էր ասել  
 համառուտի՝ այդ են պատճառք յԹԺ (19) լրմունս բաժանելոյ  
 լուանոյն, որ ասի լրմունք զատկաց: Այլ թէպէտ ոմանց հաճոյ եղև  
 60 Լ (30) սահմանել, և այլոց՝ Բ (8) և ոմանց՝ Ժ (10) և այլոց յայլ  
 բանակս, սակայն շի՛ք գտանել ճշգրիտ և անսխալ, բան զկանո-  
 նեան իննևասաներեկ թուոյդ, որ ցուցանէ ճշմարտութեամբ զբանիս  
 ամսոյն, յորում շորեքտասաներորդին լուանոյ զատկաց պատահեն,  
 զկնի գարնայնոյ հասարակածին, որ և անուանի սկիզբն տարւոյ,  
 95բ ո՛չ ան//բանապէս առանց խորհրդոյ: Բայց հրէայքն և այլք ոմանք  
 արտաքոյ այսոցիկ գտանին նահանջիչք՝ ո՛չ միայն զի բազում ան-  
 գամ ի միում տարոջ երկու կատարեն զատիկս արտանեալ սխալ-  
 մամբ, այլ զի արուեստի և ուղիղ ընտրութեան և ուսման ճշմարտի  
 անտեղեակ գտանին:

### ՊԱՏՃԱՌԻ ԽԱՆԳԱՐՄԱՆ ՁԱՏԿԻՆ ՀՈՌՈՄՈՑ

Ժողովեցան յԱզերսանդրիայ ի մայրաքաղաքն Եգիպտացոց  
 արք անուանիք և իմաստասէրք ի յունաց և յասորոց, ի հոռմայեց-  
 1 տոց և յեգիպտացոց՝ թուով ԼԵ (35): Եւ առաքեն յԵրուսաղէմ և կո-  
 5 շեն առ ինքեանս զՓեննէզ, որ ազգաւ երբայեցի էր և հաւատով



- քրիստոնեայ: Եւ լինին 12 (36): Եւ գլուխ իմաստասիրացն և առաջ-  
 96ա նորդ՝ էաա էր, որ բուն արգաւ աղեքսանդրացի էր || և հաւատով  
 քրիստոնեայ: Կարգեցին և հաստատեցին բոլորակ ՇԼԲ (532)  
 ամաց, որ կոչի հինգհարիւրն: Եւ գլուխ բոլորին հաստատեցին  
 10 զչորս ապրելի ամսոյ: Եւ ունի յինքեան բոլորակն զընթաց արե-  
 գական, որ ԻԲ, Կակ (28-Կակ) կոչին՝ և նահանջից նահանջ: Եւ  
 զընթացս լուանոյ, որ իննևտասներեակ կոչին, և զեթներեկսն և  
 զբեսեքիստոնքն, որ նահանջ կոչին և ցուցանէ ճշմար-  
 տապէս անսխալ զար լրման մեծի պասեքին ՇԼԲ (532) ամաց:  
 15 Զայսպիսի գործ իմացեալ զմեծ և զհզար իմաստնոյն Եւստոն, որ ի  
 ժամանակին յայնմիկ վարդապետ և գիտնական էր ի մեծ պաղա-  
 տին ի Կոստանդինուպոլսոս ի դրունս Յուստիանոսի կայսերն, յէ  
 պատգամ առ նոսա՝ եթէ զիս ընդէ՞ր ո՛չ կոչեցիր ի ժողովս ձեր, և  
 զայսպիսի գործ առանց իմ ընդէ՞ր հաստեցիր: Քինացեալ|| և մա-  
 96բ խացեալ ընդ ժողով իմաստասիրացն, որ առանց նորա զայսպիսի  
 գործն կատարեցին, սկսանի իւրն առանձին ժամանակագրութիւնս  
 առնել և կարգէ բոլորակ: Դնէ գլուխ բոլորակին իւրոյ զապրելի  
 հինգ, զոր ժողովք իմաստասիրացն զչորս ապրելի եղին գլուխ բո-  
 լորակին իւրեանց, և յիններորդի կանոնի լրմանցն՝ զապրելի վեց,  
 25 զոր իմաստասէրքն հաստատեցին, զոր Եւստոն տգիտարար կոր-  
 ծանեալ զապրելի հինգ հաստատեաց, զոր ամենայն ՂԵ (95) ամի  
 զար լրմանն մեծի պասեքին շարաթ բերէ հինգ ապրելի: Եւ յոր-  
 ժամ հանդիպի յաւուր մեծի պասեքին շարաթ, ո՛չ գոչ հնար և ճար  
 անցանել ընդ աւուրն ընդ այն՝ այլ ի նոյն կործանել, զոյգ ընդ  
 30 անաստուած և տիրասպան ազգին հրէից տանեն՝ զար մեծի գառ-  
 97ա կին յարութեան || տեանն: Այս է [պատ]ճառք խանգարման զատկին  
 յունաց: Իսկ որ ճշմարիտ և ուղղափառ մանկունքն են եկեղեցւոյ,  
 ո՛չ երթան զհետ անաւրէն տոմարին Եւստոնի, որ տգիտարար կոր-  
 ծանեցաւ, այլ զհետ երթան ճշմարիտ իմաստնոցն, որ յիններորդ  
 35 լրմանցն զապրելի վեց հաստատեցին՝ և ոչ հինգ, զոր Եւստոն հաս-  
 տատեաց, զի վեց ապրելի գատանէ և որոշէ զար լրման մեծի պա-  
 սեքին և ի կիրակին բերէ, և ո՛չ ի շարաթ զոր ի կիրակի տանեմք և  
 անդ տանեմք զար յարութեան փրկչին, և ո՛չ սխալիմք և ո՛չ  
 խոտորիմք մինչև ի միուս անգամ գալուստ փրկչին:

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ ԶԱՏԿԻՆ

- Եթէ ո՞րպէս և կամ զիա՞րդ հաստատեաց տէրն զտան սիրոյ  
 97բ զատկին ի վերայ լուանին, լո՛ւր բանին որ ասէ՝ եթէ շորեք-  
 տասան ար ամսոյն || յազագս լուսալիր լինելոյ՝ որպէս և Փիլոն  
 5 պատմէ: Քանզի ամիս լուանական համարի տուրս զառաջին սկիզբն  
 լրման լուանի, վասն զի յառաջ քան զՄովսէս ո՛չ ամիսք կային  
 երբայցեցոց և ո՛չ յայնժամ ի նորոյ ինչ հաստատեցաւ որ շէրն,



այլ լուսնականին ասէ ամիսս: Տե՛ս գրանն, զի շասաց եթէ ամիսս  
 այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց որ շէրն, այլ եթէ՛ ամիսս այս  
 10 եղիցի ձեզ սկիզբն ամսոց և առաջին եղիցի ամիսս տարուջ, յա՛յտ  
 է թէ զաւուրս լուսնին ասէ ամիս, քանզի լուսնական ամիսք էին:  
 Բայց տարի շև ևս էր երբայեցուցն, վասն զի քաղզէականան և վա-  
 րէին տարեաւ և ամսաւք, և ո՛չ վարկպարագի, զոր թէպէտ լրումն  
 98ա սահմալանեաց, այլ որպէս ի սկզբանէ արարչութեան էր լուսինն,  
 15 գնոյն և այժմ սահմանեաց: Քանզի յաւուր արարչութեան շորեք-  
 տասանարեայ էր լուսին. և թէպէտ միարեայ էր, սակայն լիութեան  
 բոլորին որպէս Դժ.անարեայ էր, զի անմարթ էր թերի և կի-  
 սակատար լինել լուսինն յաւուր լինելութեան իւրում, վասն զի ա-  
 մենայն արարածք լի և կատարեալ ստեղծան, որպէս բանջարքն ո՛չ  
 20 դնտարոյք, այլ հասեալք, և ծառք կատարեալք և պողպարեք, և  
 մարդն երեսնամեայ հասակաւ, թէպէտ միաւուրք կենդանի: Հստ  
 նմին արինակի և լուսինն շորեքտասանարեայ լիութեամբ լուսնոյ  
 կատարեալ:

Ասն վարդապետք երբայեցուցն թէ՛ երեք տանս զատկաց  
 25 արար Մովսէս յանապատին և ապա ի հակառակել ժողովրդեանն  
 ամենայն պատուիրանք աստուածային և կարգք լռեալ զադարէին  
 98բ մինչև յար // անցանելոյ որդուցն Իսրայէլի ընդ Յորդանանի տասն  
 ար տմսոյն առաջնոյ. և ո՛չ զամսոյն կոչէ տասն, այլ զլուսնին,  
 քանզի ամսոյն առաջնոյ, որ անուամբ կոչի, նիման ութնասն էր՝  
 30 և լուսինն՝ տասն: Այս տասնեակ մեծի խորհրդոյ՝ յորում և առին  
 զոչխարն, և արինակ մկրտութեանցն ընդ Յորդանան և զգալուստն  
 Քրիստոսի յճրուսաղէմ յաւուր արմաւենեացն: Եւ արար Յեսու  
 զատկին քսաներկու ար տմսոյն յառաջնոյ, բայց անուանէ շորեք-  
 տասան ըստ աւուրց լուսնին և առնէ նորոգումն կարգաց եղծելոցն  
 35 յանապատին որպէս և թլփատեաց զժողովուրդն անթլփատ՝ զժը-  
 նեալսն յանապատին: Եւ առնէ իբրև նորոյ սկիզբն կարգաց և աւ-  
 րինաց, որպէս Մովսէս յելանելն յճիպտոսէ: Քանզի անցանելն  
 99ա ընդ Յորդանան ելս կոչի յճիպտոսէ, և զադարէ // տան զատկին  
 մինչև ի ութնասն տմն Յովսիայ թագաւորին, անդանար տբունել  
 40 և անգէն զադարել մինչև յաւուրս Զարարարէլի և ցշինուած տա-  
 ճարին ասի տանել մինչև յաւուրս Եզեկիայի և այլոց ոմանց: Բայց  
 ո՛չ յառաջնումն ամսեանն, այլ յերկրորդումն և ո՛չ ըստ արինացն  
 ոչ կամեցաւ:

Ապա յետոյ Եղբայ նորոգեալ կարգեաց զիննետասներկ լուս-  
 45 նին զազգին երբայեցուց՝ և անտի անխափան տանեցաւ մինչև ի  
 խաշելութիւն Քրիստոսի, յորում զիպաւ շորեքտասաներորդն նիսան  
 յաւուր Եշարթոջ լրումն լուսնին ըստ արինակի ելիցն յճիպտոսէ,  
 զի և մեք փրկեցաք պատուական արեամբ Քրիստոսի:

10 Ա տարոջ 12 Ա երբուեցոց 14 Ա լուսին 22 Ա լուսին 24 Ա երբա-  
 յեցոց 27 Ա որդոցն 33 Բ գատիկն լւբ 36 Բ իբրև նորոյ շիք 40 Բ աւուրս  
 45 Ե երբայեցոց 48 Ե փրկեցաք

99բ Յեառոյ և սուրբ առաքեալքն յամենայն ամի երթալով յերու-  
 սաղէմ յիշատակեալ կատարէին զար շարշարանաց փրկչին և //  
 տանէին զար յարութեան և աստուածային նշանագործութեամբն  
 զբազումս զարձուցանէին ի Քրիստոս, և մկրտէին՝ մինչև յերկու  
 ամն Վեսպիանոսի, յորում եղև յո՛ակ յետին աւերումն տաճարին և  
 պաշարումն և զերութիւն Երուսաղէմի: Յորում ի սրբոյ հոգւոյն  
 55 հրամայել ոչ ումեք ի քրիստոնէից անդ լինել յայնմ տանի, յա-  
 դագս ապրելոյ ի շարեացն եկելոցն ի վերայ Երուսաղէմի և ար-  
 տաքոյ ժողովել ի տեղիս տեղիս տանէին զտան սրբոյ զատկին:

60 Յեառոյ Արիստրիգէս փիլիսոփայ Աթենացի ընկեր Կողրատեայ  
 եպիսկոպոսի, ունկնդիր առաքելոցն, արար իննևտասներեկ լուսնի  
 հոռմայեցոցն և այսպէս նմանեցուցեալ ասաց եթէ առաջին արն  
 ապրիելի է սկիզբն արարչութեան, և զի շորս աւուրն, ասէ, ստեղ-  
 100ա ծաւ լուսին ի շորս ապրիլի եղ զշորեքտասան լուսնի և // կարգեաց  
 զնա զլուսն բոլորին, վասն զի ի սմին աւուր հանդիպի շորեքտա-  
 սան նիսանայ լրումն և անվերադրութիւն:

65 Յեառոյ Ղևոնդէս, հայրն Որոգինէսի, արար զիննևտասներեակ  
 լուսնին եպիստացոց և եթովպացոցն: Յեառոյ Որոգինէս որդի նորս  
 արար իննևտասն նորուն լուսնի արարացոց և մակեդոնացոցն ըստ  
 նմանութեան և ձևոյ եպիստացոց անդր հայելով: Յեառոյ Անատա-  
 լիոս եպիսկոպոս եկեղեցւոյն լատղիկեցոց արար զԹժ լուսնի յու-  
 70 նաց և անորոց, ըստ ձևոյ արինակի հոռմայեցոցն անդր հայելով:  
 Արդ՝ թէպէտ այս ամենեքեան նախագոյն կարգեցան, սակայն ընդ-  
 հանուր աշխարհս շուսան վասն նեղութեան հալածանաց որ ի վերայ  
 քրիստոնէից, այլ տանէին խառնակ՝ զոյգ ընդ հրէից, անսուրբ,  
 100բ մինչև յաւուրս երանելոյն Կոստանդինոսի: // Եւ ժողովոյն նիկիայ  
 75 ասացաւ ի թագաւորէն մի՛ ևս այնուհետև ընդ տեառնասպան ազ-  
 գին հրէից տանել, այլ զատանիլ ի նոցանէ, տուեալ հրաման ի  
 մէջ տոնուլ զիննևտասներեկ լուսնի զատկաց, որք կարգեալ էին ի  
 վերոյ ձառեալ արանցդ՝ առնուլ աշակերտս յամենայն ազգաց  
 քրիստոնէից՝ ուսանել նոցա տոմար, և զատուցանել զքրիստո-  
 նէականն ի հրէականն: Այլ թէպէտ և ըստ հրամանի թագաւորին  
 80 զործն կատարէր, այլ ո՛չ անտարակուսելի կարգեցաւ արինակք:

Յեառոյ և յաւուրս Կոստանդեայ որդւոյն Կոստանդինոսի,  
 Անդրէաս, եղբայր Մազնոսի եպիսկոպոսի, կարգեաց տոմար ամաց  
 երկուհարիւրից, սակայն և այն ո՛չ անտարակուսելի: Ապա ի սպա-  
 85 նոկ Անդրէասեան տոմարին ամացն երկուհարիւրից, յաւուրս Յուս-  
 տիա//նոսի թագաւորի՝ եղև բազում խնդիր հմտագոյն իմաստա-  
 սիրաց՝ վասն ոչ բերելով ճշգրտիւ զկարգ իննևտասներեկ բոլորին,  
 որ Ղն ամաւ բովանդակէր զեղանակ շրջագայութեան: Եւ ի նոյն  
 յոյովից թուեցաւ գծուարինագոյն, զի բազում ամաւք ըստ աւուրց  
 90 բոլորակին շտողէր զկնի բեսեքիստոնին: Վասն որոյ եղեալ քննու-  
 թիւն յկղեքսանդրիայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաստասի-

54 A հոգոյն

65 AB գԹԺ.երեկ

69 եկեղեցոյն

78 A աշակերտ

90 A որոյ չի



րութեան, դասւ անտարակուսելի արինակ ՇԼԲ ամաց շրջաբերու-  
 քեանց, որ ստուգի ցուցանէ զաւուրս շորեքտասան պատեքին:  
 Գլխաւոր իմաստասիրացն Աղեքսանդրացին էաս, ունելով իւր ըն-  
 95 կեր զՆրէայն Փենե՛՛էզ՝ որ էր ի Տիրերիդայ, զՔարբէլ յԱսորեաց,  
 զՅո՛՛ան յԱրարացոց, զԱրգիէ ի յԹովպիէ, զՍերգի ի Մակեդո-  
 նացոց, զԵւզոզն ի Յունաց, զՔիգան // ի Հոտմայեցոց, էաս՝ ի նոյն  
 101բ Եգիպտացոց՝ ունելով ընդ ինքեանս ա՛յլ ևս ընկերս՝ և բազում  
 աշակերտս, որոց անուանքն ո՛չ յիշատակեցաք: Բայց ընդ ամե-  
 100 նայն, ասէ, լինել թոտով արս երեսուն և վեց: Աստանաւր եղեալ  
 Բոիոն վարդապետ դրան արքունի Կոստանդինապոլսի, որ ազ-  
 րականութեամբ աւտար և ո՛չ քաղաքացի զոր ոմանք Աղեքսան-  
 դրացի գոլ ասացին զնա: Սա զշարեալ ընդ իմաստասիրաց ժողով  
 որ յԱղեքսանդրիայ՝ իրր քամահանս վարկուցեալ զոչ տանելն ի  
 5 ժողովն, հակառակ ճշմարտութեան մաքառի, խոտէ զկարգեալն ի  
 նոցանէ: Նոյնպէս և զառաջ եղեալսն գոզէ իրրև տպէտս զնոսա  
 համարեալ, ասնէ ժամանակագրութիւնս նորաձայնս հակառակ աս-  
 102ա տառձային գրոց և ամենայն ժամանակագրաց, նոյնպէս // և  
 տոմար փոխէ զիննևտասներեակ լուսնին ի վեցէն ապրելի, ի հինգ  
 10 և զնէ զնա գլուխ բոլորին: Եւ ասնէ արինակ իւր դասս պարժուի  
 բստ եգիպտացոցն, որ ի մէնջ պարժուիի ձայնի՝ զնէ զնա գլուխ  
 բոլորին լրման վերագիր հակառակ առաջնոցն՝ որպէս և նոքա  
 երրայեցոցն հայելով ձևացուցին: Սորա նոյնպէս զեգիպտացին  
 արարեալ արինակ, իրր թէ ցուցանել իմաստասիրացն աղեքսան-  
 15 դրացոց՝ թէ յոյժ ազեւք էք, որ և ոչ ձեր ազգին գիտէք հմուտ,  
 գիտ՞րդ վասն ալոց ազգաց կարգեցէք տոմար: Եւ զհոտմայեցոցն  
 աչապէս կարգեաց. եզ զհինգ ապրելի գլուխ բոլորին և կարգեաց  
 նմա վերագիր ութ, վասն զի Գժ.անապեայ ասաց զլուսինն յաւուր  
 ստեղծման իւրոյ, զուզելով զութ և զհինգ, աչաինքն զվերագրին  
 102բ խորհուրդն նմա համարեցաւ//, և արկանելով ի վերայ վերագրին  
 մետասան մետասան թիւ մինչև ի կատարումն Բժ.երեկին և խա-  
 զացուցանէ անուացեալ, ի ճարտարութիւն արուեստին պանծա-  
 ցեալ, աղարտեալ խոտէ զառաջնոցն գիրս, և բնութեամբ հրա-  
 մանաւ թաղարտին ընդ ամենայն աշխարհս զիւր հաստատեաց:  
 25 Բայց քա՛ւ և մի՛ լիցի մեզ հասանել ժամանակագրութեան Եոիո-  
 նի, քանզի աչապէս գրեալ է թէ՛՝ անիծեա՛լ որ ասնէ զատիկ չերկո-  
 տասաներորդումն ամսեանն յառաջ քան զհասարակել տուրնչեան  
 և զիշերոյ, անիծեա՛լ՝ որ ասնէ զատիկն ընդ տիրասպան ազգին  
 հրէից, կամ ընդ շարմատացիսն, կամ ընդ պաւղիանոսացն, անի-  
 30 ծեա՛լ՝ որ ասնէ զատիկն քսան և երեք լուսնի: Արդ՝ Եոիոն թէպէտ  
 103ա բիւր ան//գամ կարծէ ճարտարանալ, սակայն ո՛չ զերծանի ի նզո-  
 վից աստի յայնցանէ, որ միոյն փաղչի և միոյն շաղախի, նմանեալ  
 ալնմ, որ սակաւ աղաւթէ և բազում հայհոյէ: Քանզի յորժամ դիպի

94 A իւր շի՛ 99 B գանուանս 1 A Բոսնի 10 A պարժուի  
 11 A եգիպտացոցն 13 A երրայեցոցն 16 A զհոտմայեցոցն 22 B անուա-  
 նացեալ



Ի շարաթ Տինգ ապրելի ըստ եօթական թուոյն, համարեն զնա  
 լրումն և ի վեց ապրելի առնեն զատիկն որ գիպի ի վեշտասան  
 նիսանայ տանել զոյգ ընդ Տրէի ստուգել հայոց նզովիցն: Քանզի  
 ո՛չ երբեք տանել Տրէիցն ի շորեքասանիւ, քան զտան զատիկս,  
 այլ միշտ տանեն ի վեշտասան նիսան նոքա և շամարտացիքն: Քան-  
 զի շամարտացիքն հաստատագոյն ևս առնեն քան զնոսա, թէպէտ  
 40 և ի նոցանէ ուսեալք: Այլ և պաղղինարոսքն ի նմին աւուր տա-  
 նեն և զինչ ար և զիպի լրմանն՝ կիրակի անուանեն, որպէս և  
 39p Տրէայցն շարաթ անուանեն, թէպէտ և շիցէ ՚| շարաթ: Բայց քա՛ւ  
 լիցի տանել ընդ նոսա և կրել նզովս: Վասն զի ամենայն շան սուրբ  
 հարցն վասն ի նոցանէ զատուցանելոյ էր, յոր և հաշատանեալցս  
 45 ճշմարտապէս անուանի զատիկ տեառն, այսինքն՝ զատուցեալ  
 յամենայն հեթանոսականաց և ի Տրէական տանից արեալ և եղևալ  
 տանից տեառն տան, և ժողովոց ժողով, որպէս Գրիգոր Աստու-  
 ծարանին հաճոյ թուեցաւ ասել: Վասն այնոսիկ հրամայեցին մեզ  
 հարքն մի՛ տանել ի լրմանն երրաչիցոց, այլ մինչ աւուր շարա-  
 50 թուն զիպեսցի շորեքասան լուսնի պահել զշարաթն, զի երթիցէ  
 հասցէ ի տանի կիրակէ, և լցցէ զխորհուրդ շարաթուն, շարշարա-  
 նացն պահեսցի, վասն այնորիկ և պասքոյ կոչեցին, որ թարգմանի  
 շարշարանք: Եւ թէ կիրակի զիպի շորեքասան լուսնի, անցանէ ի  
 միւս կիրակին, զի մի՛ ընդ Տրէիցն տանեսցի: Եւ ո՛չ ինչ դանձա-  
 60աւ զելի է և երկմտելի զՁ արն աւելի պահել, քանզի լուսացեալ  
 վատահէ՛ եթէ ի շարաթուն ընու զխորհուրդ շարշարանացն և ի կի-  
 րակէն ցյարութիւն: Եւ եթէ զիպիցի Դժ լուսնի ի շարաթու, անցցէ  
 աւուր միով յառաջ ի կիրակի, զի մի՛ տանեսցի ընդ Տրէից: Եւ  
 փոխանակեսցի կիրակի՛ն սուտ ընդ ճշմարիտ կիրակէն, որպէս  
 60 պաղղինարոսքն ժպրհեցին առնել, այլ զի կացցէ շարաթն շարաթն,  
 և մի՛ որպէս Տրէայցն առնեն շարաթ փոխանակեալ զողունի, կամ  
 որպէս պաղղինարոսքն՝ զկիրակէն: Այլ եկեղեցի աստուծոյ ո՛չ գիտէ  
 փոխանակել կիրակէ ընդ կիրակէի, և ո՛չ շարաթ ընդ շարաթու,  
 այլ յետ ճշմարիտ շարաթուն եկեսցէ մեծ ար յարութեան: Եւ Եռիոն  
 65 ի ժամանակագրութեան իւրում զնէ ՐՇ (5500) ի ծննդեան փրկչին.  
 74p և արինակ առնու զչափ տա՛լպանակին վկայութեան ի հինգ կանդ-  
 նոյ և կիսոյ լիալ: Եւ այս ի՞նչ նմանութիւնք են ժամանակաց և  
 կամ զի՞նչ նմանութիւն է երեքտասանարեայ ստեղծեալ լուսին, զի  
 մինչ ամենայն արարածք լի և կատարեալ ստեղծան, լուսինն ըն-  
 70 զէ՛ր թերակատար եղև, որ Եմիգինէս ասէ այսպէս թէ՛ միարեայ  
 ստեղծաւ լուսին, վասն զի մի ար իսկ էր լինելութեան, և զոյգ  
 ընդ արեգական ստեղծաւ ի միւսում ստեղոյ ի միջոցի երկնի՝ ծագ-  
 ման կողմանէ, որպէս այժմ յորժամ երթայ և զեպի լուսին արե-  
 գական միարեայ անուանի լուսինն: Արդ՝ թէպէտ և սխալ ևս,  
 75 սակայն պարտ է հանդոյն նմանեցուցանել քան զԻոռնին: Բայց

39 A շարմատացիքս 49 A երբայեցոցն 51 A Տն կրակէ 62 A աստուծոյ չիէ  
 70 B որ և միգինէս

մէք յերկոցունցն զատեսցուք: Իսկ Իոիոն ո՛րչափ ճարտար քան  
 զամենեւեան զինքն վարկեաւ, սակայն ընկալաւ զհինգհարիւրեա-  
 105ա կրն, կարգեալն յհասանց, զի հիմն // ո՛չ որ եզիտ ալլ արինակի,  
 քանզի հիմն ո՛չ որ կարէ զնել, քան եզեալ յհասանցն: Արդ՝ մի՛  
 80 տանեսցուք ի երկոտասան ամսեանն յառաջ քան զհասարակել  
 տուրնչեան և զիշերոյ: Ալլ յառաջնումն ամսեան տանեսցուք,  
 քանզի ամսեան առաջնումն շարշարեցաւ Քրիստոս զկնի հասարա-  
 կածին, որպէս և ի սկզբանն իսկ ստեղծաւ մարդն առաջին զկնի  
 հասարակութին: Եւ Իսրայէլ զկնի հասարակելոյ յամսեան առաջ-  
 85 նում ել չնգիպտուէ: Ի նմին աուր և մեր փրկեցաք ի սատանայէ  
 և ի պիղծ զարագ նորա: Արդ՝ մի՛ տանեսցուք ի քսան և երեք  
 լուսնին, և մի՛ ընկալցուք զշորեքտասան լուսնին և զվեցն ապրիլի  
 և մի՛ զիցուք ալլ գլուխ բոլորին: Բայց միայն զհրամայեալն ի  
 տեառնէ՝ զշորեքտասան նիսանայ և զալլոց ազգացն, որ նմա հան-  
 105բ դիպին: Բայց էասեանքն, որ զԻԴ // նիսանայ կարգեցին գլուխ  
 բոլորին և զալլոց ազգացն՝ որ նմա հանդիպին, ո՛չ թէ զնա խոս-  
 տովանեցան և համարել գլուխ բոլորին և ո՛չ ազարեցին զառա-  
 ջինան: Ալլ վասն զի առաջարկ Անդրէասայ երկու հարիւր ամացն ի  
 շորս նիսան սպասեցաւ: Եւ սկիզբն Ե.եակ բոլորին ի քսան և երեք  
 95 նիսանայ եզե, վասն այնորիկ զնա եզին գլուխ բոլորին ո՛չ միայն  
 ի սկզբանն, և ելիցն և խաշիւութեան, ալլ միայն ամին իսկ հինգ-  
 հարիւրեակ բոլորին: Բայց խոստովանեցին գլուխ բոլորին զԺԴ  
 նիսանայ հրամայելոյն ի տեառնէ, որում մեր հեռեսցուք: Արդ՝  
 յորժամ զիպի շորեքտասան լուսնի ի շորս աւելեացն մինչև ի ԻԸ  
 100 (28) նիսանայ, այսինքն՝ ապրիլի ութ և տասն պահեմք և աննեմք  
 զատիկն, իսկ եթէ ի Դ աւելեացն և անդէն յազարասիս, իսկոյն  
 106ա կատարեցին երկոտասան ամսեայ, որ անուանեալ կոչի նահան-  
 ջեալ, քանզի յայն ամքն պակաս գտանին ընթացս լուսնին: Քանզի  
 զթիւ ընթացիցն արեգական: Այսպէս կազմեցաւ նահանջեալ ամ-  
 5 սաւք լցցի, որպէսզի երթիցէ հասցէ թիւ ընթացից լուսնին ընթա-  
 ցից արեգականն: Զի թէ այսպէս ո՛չ լինէր, զիպէին երեք երկու  
 զատիկ ի միում ամի, ալլ նահանջեալ ամսաւք ձգեսցեն, ածցեն  
 զմեզ, զի միշտ յիս հասարակելոյ տուրնչեան և զիշերոյ արաս-  
 ցուք զատիկն, քանզի նորաւք հասանեմք յամիսն յառաջինն, վասն  
 10 այսորիկ յաւելուլ հարկ և պատշաճ է: Քանզի և արինակն և նմա-  
 նութիւն յառաջամուտ ամսեանն հրամայէր աննել ի հնումն: Եւ չէ՛  
 իշխանութիւն եկեղեցւոյ աստուծոյ ի երկոտասան ամսեան աննել  
 զատիկ, որպէս և աստուածային առաքեալն ասէ. Եթէ առաջին  
 էանց և ամենայն ինչ վերստ//ին նորոգեցաւ Քրիստոսիւ: Արդ՝  
 106բ այսուհետեւ ամի ամի զնոյն տրամութիւն, զոր ընկալան առաքալ-  
 քըն, պահաւք սգացուք և մեր, և յարութեամբ միածնին ուրախ  
 լիցուք: Եւ վասն այսորիկ ի հարկէ ամի ամի աննէ եկեղեցի աս-

79 B որ չիք                    84 B Եւ փոխ. նորոգէս                    84 E ամսեան                    86 A պեղծ  
 100 A նիսան                    100 B ասնեմք փոխ. ասնեմք                    1 B աւելեաց                    8 B ընթացք  
 8 B քանզի փոխ. քան                    12 A եկեղեցոյ                    16 A սգացաք                    17 A աստուծոյ չիք

տուժոյ գատիկ բաղարջակերացն, զի հաստատեալ կացցէ յիշատակ շարշարանաց փրկչին՝ յուրախութիւն ամենայն քրիստոնէից:

### ՅԱՂԱԳՍ Շ.ԵԿԻՆ

Այս բոլորակա ՇԼԲ (532) ամաց ունի իշխանութիւն շրջագայի՝ ստուգապէս ցուցանելով զաւուրս շորեքտասաներորդի պասեքին, յաղագս որոյ բաղում խնդիր եղեալ ի մէջ հմտագոյն ուսումնասիրաց՝ վասն ոչ ճշգրտիւ բերելոյ զկարգ իննետասան բոլորին, որ 95 (95) ամսաւ բաւանդակէ զեղանակա շրջագայութենէ ի նոյն: Եւ թէպէտ զայս այսպէս կատարեցին հարքն յառաջա/լզոյն, բայց յո-  
107 ա լովիւք զժուարինս թուեցաւ, զի բաղում ամաւք ըստ աւուրց բոլորակին ոչ ուղղէր զկնի բեսեքիստոնն: Եւ յաղագս այսու եղև բա-  
10 զում քննութիւն, գտաւ անտարակուսելի արինակա ՇԼԲ (532) ամաց շրջաբերութեան յԱղեքսանգրեայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաստութեանց, ո՛չ եթէ նոր ինչ աղարանք զվաղնչուց եղեալ կանոնս, այլ ճշգրտիւ զնոյն շորեքտասաներորդ իննետասաներեկ թուոցն:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Իմաստասերի ներկա աշխատությունը բաղկացած է շորս գլուխներից՝ «Յաղագս ԹՓ.Երեկ ամացն», «Պատճառ խանգարման գատկի հոռոմոց», «Պատմութիւն սրբոյ գատկին» և «Յաղագս Շ.Եկի»:

Այս աշխատությունը մեզ հայտնի է երեք ձեռագրից՝ № 1971 (թ. 83ա—107ա), № 2180 (թ. 453ա—461բ) և № 2762 (թ. 30ա—37ա): Առաջին գլուխը «Յաղագս ԹՓ.Երեկ ամացն», անշատ մյուս գլուխներից, ունի նաև ՀՊՁՄ-ի № 1973 ձեռագրում (թ. 260ա—263բ): Տեքստը մենք հրատարակում ենք № 1971 ձեռագրի ընդօրինակությունից:



22. ՅԱՐԿԱՎԱԳԻ ԼՈՒՍՆԻ ԼՐՄԱՆ ԵՎ ԽԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ  
ԳՐԱԾ ՊԱՏԱՌԻԿՐ

ՆՈՐԻՆ ՅՈՂԱՆՈՒ

Ըստ շրջաբերութեան ժամանակաց առ մեաք՝ յորում ամի և շորեքտասաներորդ լուանոյ զատկաց պատահէր յապրելի ամսոյ ի շորերորդումն՝ յառաջ քան զերեքտասան նորին ամսոյ, որ է մարտի 5 ամսոյ ի ժԹ (19), որ շորեքշաբթոջ ատուք, յորում և լուսաւորք հաստատեալ զոյացան զոյգ կշիռ անխոտոր // և անշեղ ի միում 107բ արշաւակցեալ կենդանի՝ ձգանցն կոշեցելոյ լուանոյ և արեգական: Եղև պակասութիւն լուանոյ արեգական ի գէպ ուղիղ և հարթ ներքոյ նորա կալոյ ընթացիւք լուանոյդ: Եւ է՝ աչս վկայութիւն, որպէս 10 համարիմ ճշմարիտ զոյ ի սկզբան լինելութեան իրեանց ի միասին զոյացան, թէպէտ և կատարեալ չափով տեսեան լուսինն ստեղծաւ յարարէն, որպէս գրեցաք երբեմն և ո՛չ ըստ որում կարծեն ոմանք մերձ անկատար կամ հեռի յարեւելս կատարեալ: Այլ վայել էր զհինգետասան մինչև ի շորերոյն ապրիելի աչսպէս ընթանալ ար 15 ըստ արեւ. գելիւք, և ապա սկսանել ի ժողով, կամ զարեւելիայն և և՛թ ունել արամագիծ յաւուրսն յայնոսիկ, և ըստ մասին ընդ երկրաւ, ապա զժամս գիշերոյն կատարել զմուտն: Քանզի պարտ իցէ 08ա հաւանել արուեստի // աչսք քննութեան: Եւ որպէս վկային աչք աչսար, որոց ոչ սակաւ իցեն տեղեկութեամբ հաստարիմ զգրե- 20 հալղ և զասացուածդ աչժմ համարելի է: Վկայէ և պարկեշտ երանելի և աստուածային ասորին, քանզի յառաջ քան զգոյանալ ատուրց ատուրս ո՛չ ստեղծարանէ և ըստ զմեատասան տուրսն ըստ ձևոյ ատուրն քանակութեան ո՛չ ստելով իմաստասիրէ, քանզի որ զաւրութիւն կամ խորհուրդ է սորա, պարսաւեմ յոյժ զկարծողն: Այլ զըորս ընդ 25 արեգական ունել կորովարանէ սուրբն և զմեատասան յաղագս լուսայիր գոյոյն՝ որպէս առ շորիւքն եղիցի հնգետասան, զի և աչժմ նոքաւք լինի ուսձացեալ՝ և նոյն մեատասան ամի ամի յաւելուն նմա քան զարեգակն: Քայց յերկուցն սկիզբն կարծել ապրիելի, թէպէտ և զթիւ շորեքտասանին աւելորդ և անպակաս պահէ ընդ այլ բո-

108բ վանդակ|| տարոյն լուանական թիւս աւուրց ո՛չ հաւասարէ, և զնոյն  
ինքն զատկացն ճշգրտէ հաւասարապէս, քանզի զվեշտասանն զչո-  
րեքտասան զգուլ ցուցանէ, և զնոյն թիւս երկուցդ ամենայն ուրեք  
պակաս բերէ: Իսկ այն թէպէտ և ո՛չ զանունն, սակայն զէութիւն  
ստուգապէս ցուցանէ: Եւ քաջ է էութիւն իսկական, քան զանունն  
35 պիտակ ո՛չ խոտելով ինչ գայն, որ է առաջին: Քաւ մի՛ լիցի, այլ  
ըստ արուեստին զանազան յեղանակս ուսուցանել գրեմ: Եւ եթէ  
կամիցի ոք՝ զերկուցունց լիով խնդրել ի մենչ զպատճառ անհասա-  
րակութեան ի վերայ, որոց գրեցաքն՝ պատրաստ եմք տալ միւս-  
անգամ, ապա եթէ զայնոսիկ բաւական համարեսցին՝ || և մեք

109ա նոյնպէս համարեսցուք:  
Այլ զընթացիցն կարգ ո՛չ յամելով յարեւելս զչորեքտասան  
աւուրն հաստատուն համարելի է, զի մի՛ կարգաւորութիւն արշա-  
ւանին այլայլեսցի: Որոյ ազագաւ և մեծն Յեսու զերկուսին կացու-  
ցանէր լընթացից, հաւանեսցուք առաջնոյն: Զի թէպէտ լի և կա-  
45 տարեալ հասակաւ ստեղծաւ լուսինն ըստ այլոց արարածոց ամե-  
նայն, և տեկաց կալաւ զաւուրսն յայնմ ձևի, սակայն եղանակ ըն-  
թացիցն ըստ այժմուս կարգաւորութեան ի դէպ էր լինել: Իսկ ըստ  
քանակութեան թուոց ժամանակաց ի սկզբանէ լինելութեան աշ-  
խարհի մի՛ ոք պանծացի գիտել՝ թէպէտ բազումք են որ գրեցին  
109բ և կարծեն: Քանզի և ժամանակն ելիցն Ազամայ || ի դրախտէն  
զոր գրեաց Մովսէս՝ ո՛չ անսխալ և ճշգրտիւ առանց երկբայութեանց  
ոք կարաց ժամանակադրել՝ վասն անմիաբանութեան երբայա-  
կանին և շամարտացոյն արինակաց՝ և այլոց թարգմանչացն, յա-  
զագաւ անյայտիցն և լսեցելոցն: Ո՛ր լեզու խառնել համարձակեսցի  
55 տալ անգեկութիւն:

Յալամ խաւարման արեգականն՝ էր թուական հոռմայեցոց փոք-  
րքն ՅԼԳ (333), և հայոցն նոյնպէս փոքրն ԻԹ (29), յերկրորդ ժա-  
մուն, ի քսաներորդ մարտի, աւուրն շրեքշարթոջ ի սուրբ քառաս-  
ներորդացն, ի հինգերորդ շարսթին խաւարեցաւ արեգակն: Եւ էր  
60 շինութիւն քաղաքին Հոռմայ՝ ՌՊԿէ (1867) ամ, իսկ ի Դէոկղեաթա-  
նոսէ ՊԼ (830) ամ: Եւ անտիրք քաղաքի շինութեան՝ ՌԿԳ (1063)  
ամ: Եւ Կիւրղոս քաղաքի՝ ՌԵԼԵ (1425): Իսկ ի գալստենէ տեաւն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ՌՃԺԵ (1115) || ամ ըստ հաստատուն  
110ա և ճշմարիտ համարոյ: Եւ յԱզամայ՝ ՅՅԺԳ (6313) ամ ըստ եթա-  
65 նաանիցն թարգմանութեան, արեգ ամսոյ ի մետասան կամ սրպէս  
արուեստ կարգն ունի նաւասարդի ի ևթն, միտվ աւուրք յառաջ  
քան զհասարակաւորութիւն տունչեան և գիշերոյ, ի նՂԳ (473)  
ոլոմպիազին՝ յառաջնում ամին ըստ համարոյ յունաց: Եւ էր բուն  
թուական հայոց ՇԿԹ (562), ի ճՂԳ (194) ոլոմպիազին, ի շորթոր-  
70 դոմ ամին: Եւ էր ծնունդն Քրիստոսի ի ՅԼԳ (333) ոլոմպիազին,  
յառաջին ամին եղաւ թուականն հայոց:

110բ || Ի կուսական յարգանդէ յայնսութեան բունին աստուծոյ

- մինչև ի սկիզբն հինգհարիւրեկին՝ են ամբ ԾԿԲ (562), և յերկու-  
հարիւրեկին և ի ինսունհինգեկին գրուվեան՝ ինն ամ, և ի հոսմ  
75 թուականին ի սկզբանէ՝ յԺԳ: Ոմանք յերիս ամս անչորդ մուծա-  
նեն ի ներքս ի մէջ ամացո՝ որք ասեն ԾԾԶ (556) ի ծննդենէն  
տեան մինչի ի սկիզբն հաչ թուականին. բայց ոչ այգպէս, ալ  
ԾԾԳ (553) ամ ի գայտենէ փրկչին մինչի ի հալոց թուական  
գրութիւն, ինն ամաւ զկնի երկուհարիւրեկին առաւմանն, ի շորեք-  
80 տասան ապրիկի լրմանն:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովանենէս Ինստատսերի լուսնի լրման և խաղարման մասին գրած ներ-  
կա աշխատութեան բնորոշնակութեաններից մեզ հայտնի են երեքը՝ ՀՊԶՄ-ի  
№ 1971 (թ. 107ա—111բ), № 2180 (թ. 461բ—464ա) և № 2762 (թ. 37ա—  
39բ): Հրատարակութեան տեքստը վերցված է № 1971 ձեռագրից: Անհրաժեշտ  
ուղղումներ կատարված են № 2762 ձեռագրի բնորոշնակութեան հիման վրա:



23. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ «ՅԱՂԱԳՍ ԱՄՍՈՅ ՀԱՅՈՅ ԵՒ ՏԱԻՆԻՅ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՐ

ՆՈՐԻՆ (ՅՈՂԱՆՆՈՒ) ՅԱՂԱԳՍ ԱՄՍՈՅ ՀԱՅՈՅ ԵՒ ՏԱԻՆԻՅ ԵՒ  
ՅԱՂԱԳՍ ԴԺ.ԱՆԵՐՈՐԳԱՅ ԼՈՒՄՆՈՅ ԶԱՏԻ

- 162բ // Ախմարաց և ոչ քաջահմուտ արանց կարգուածքդ երևին, ըստ  
հայ ամսոց անշարժարար իմն դիրք: Եթէ որ ասասցէ՝ շարժմանց  
5 եղանակաց և տանից սմանց, զորս պարս էր ըստ հոտոմոց և եր-  
բայչեցոց և այլոց ևս ազանց համանգամայն իտաղացմամբ ընթա-  
ցիցն յարինել շարժմունս, յորմէ անմոլար և անտարակոյս զամն-  
նայն գիտել պատահ էր և ո՛չ դժուարին ինչ և սխալական յանար-  
ուեստութենէ, զարուեստից սալթաքմունս յառանձնակի նահան-  
10 ճիցն հաւարմանէ: Ո՛չ գիտեմ՝ ի՞նչ արդեաւք, կամ վասն որո՞չ  
պատճառի զայտքան զործեցին ծիծաղելի անհանճարութեանդ իրս:  
Զիմացեալք և ոչ զվրիպական անախ դժպատահութենէն զյաւելուածն  
ըստ շրջագայութեան եղանակացն ի նահանջից անախ, հակառակ  
ստուգադրութեան ժամանակացն թուոց և զանո՞շարժ կանովնացն  
163ա զանցմունս՝ կարգելոցն ի նախնեացն յարանց արուեստիւ և վա-  
րուք առաքինեաց: Քանզի ո՛չ միայն յետ դալստեան փրկչին արու-  
եստագլխք իրացս, այլ և ի մարգարէիցն սմանք արարին յիշատակ՝  
թէ ո՛ր ամիսք ընդ ո՛րս երբայչեցոց զուգնցին հայոց, զի թէպէտ  
և ոչ նմանապէս, սակայն համբնթացս և զոյգս մախցն և էլիցն  
20 սկզբմամբք և վախճանիւք գտանեմք զամիսս հայոց այլոց ազգաց  
ամսոց ի բանս և ի կանոնս արուեստուորացն: Ըստ որում և պա-  
հանջէ իսկ ճշմարտութեան իրին ըստ այնմ սահմանեցելոցն վարել,  
այնքան զործէ իտար, մինչ զի և ոչ նոցուն ինքեանց իմանալ կար-  
դողացն զվրիպանացն յետոյ սխալմունս: Քանզի պարտ էր կան-  
15 իսու գիտել զժամանակացն վասն յարաշարժութեան աւուրց յա-  
ւուրս, զյաւելուածս շուրջ զրո՞վանգակ տարոյն ամսոց աւուրքք և  
զրեւ զվերստին ուղղութեան սխալանացն հանգամանս, որպէսզի  
մի ընդունելով ի կանոնս ընդ այլս զոյգ զվասն անշարժութեան  
ամացն, շարժուն յեղանակացն աւուրս, նմանապէս և զեթներեակս:  
30 Այլ և զթուականն անուանեալ, որով նահանջիցն ցուցանին փո-  
փոխմունք շփոթեացեն զդրութիւն կամ ըստ նոսին այլսն, զուգա-

ձեռն իննևտասներեկուք ամաց, զչորեքտասներորդս լուսնոյ  
զատկաց, և քսաննութեկուք յատուկ զնահանջիցն անդրադարձու-  
թիւն աւուրց: Բայց արդ՝ հաւաստապէս ոչ գիտելով զոցէ վրի-  
35 պեալ ո՛չ միտն յայսմ ի միտմ թուոյ եկամտութեան յաղագս անդր  
ատաջին ամիսն հասարակաւորութեան անցանելոյ ըստ յեղանակին  
164ա կար||գութեան: Սակայն յապագային, ըստ որում և ի ներկա-  
լուսն ըստ լայնութեան ասեմ: Բայց և յանցելոցն ժողովն ոմանք  
40 աւուրս նահանջեալս, իբր շորից ամաց և արկանեն ի վերայ ժա-  
մանակացն զրելոց, զոր ոչ ընդունել արժէ:

Արդ՝ որպէս վերադոյնդ յիշեցաք ըստ երբայեցոց հնագիտա-  
կաց և մարգարէիցն ոմանց, ի յերկոտասան արեգ ամսոյն հանդի-  
պի հասարակաւորութիւն տուրնջեան և զիշերոյ, ըստ յեղանակին  
45 գարնայնոյ: Ըստ որում, գտանի ի գիրս Եզրի, քանզի ասէ՝ Յամին  
վեցերորդի Դարեհի կատարեցաւ տաճարն սուրբ ի քսաներորդի  
երրորդ ամսոյն աղար, որ է մեհեկանի ԻԳ (13): Իսկ ի Զաքարիայ  
մարգարէութեանն՝ թէ ի քսաներորդի և ի չորրորդի մեասասնե-  
րորդ ամսեանն, որ է ինքն արաց, յերկրորդ ամի Դարեհին, եղև  
50 րան տեսնն առ Զա||քարիայ մարգարէ Բարեքեայ, որդի Ազովայ:  
164բ Արդ՝ ըստ այսմիկ գոցես՝ զչորրորդ ար անլիացն երբայեցոց  
կշիռ զոյգ հանդիպեալ երկոտասան արեգ ամսոյ, յորում սկիզբն  
է յեղանակին գարնայնոյ: Ունէի և այլս գմարգարէիցն յիշատա-  
կել զմերոց ամսուց՝ թէ ո՞չք, որո՞ց նոցայոցն զոյգ հանդիպին:  
55 Բայց բաւական են այսորիկ, իսկ ըստ այլոց, այլազգաց ոմանց,  
անշարժապէս կարգողաց: Իսկ ոմանց շարժել ըստ յեղանակացն և  
զամիսս: Որպէս յայտնի է ընթերցասիրաց, ո՛չ վայրապար: Գրէ  
դարձեալ մի ոմն ի մանկանց եկեղեցւոյ վասն իննսունհինգեկի  
բոլորակին՝ թէ նոյն աւուրք գան և ի նոյն շաբաթս՝ ըստ թուոյ  
60 գիտատրոս ամսոյ կամ քանթիկոս, որ է մարտի կամ ապրիլի և  
հայերէն՝ մեհեկանի կամ արեգ: Եւ սուղ ինչ աւուրքք սա || զանա-  
165ա գանի յառաջնոյն: Գոցեալ և ի զուգաւորութեան ազգաց կանոնս,  
կարգեալ յառաջնոց հարց հաւասար ասացելոցդ: Բայց հաւանեալ  
ընտրեցաք կանոնն ըստ երանելոյն Կիրդի, յառ թագաւորն Կոս-  
տանդիանոս թղթի վասն խաչին պատուականի, յորում ասէ՝ երևել  
65 եթն մայիս ամսոյ, այսինքն ի գլուխ ահեկանոյ: Քանզի ըստ այսմ  
ի վերջ տեսանելոյ, գտանեմք յերկոտասաներորդում աւուր ամ-  
սոյն արեգ, զհասարակարեայն յեղանակ, որ ըստ գարնայնոյ:  
Վկայեն և այլք ոմանք և ի հակառակէն, զի ո՛չ այդպիսաբար,  
70 ըստ որում վարին ոմանք գոցէ որ ուրեք զանուանիսն վկայել, նա  
և ո՛չ արուեստն հաւանի՝ վասն յոլովակի սխալման յայնպիսոյ  
յարիւնէ: Վասն զի լինի յաւելուած թիւ մի ի ժողովմանէ նահանջիցն  
165բ յետ ՌնԿ (1460) ամաց, որով || այլայլեալ ապականէ կանոնն: Եւ  
ոչ այսքան և եթ, այլ և յամենայն լրժունս իննևտասներեկացն  
75 ամաց, և յարեգակնադիսնն ըստ շորից, որովք լինի յաւելումն և  
պակասութիւն վերադրացն, որ ըստ հայում: Յայսպիսոյ սահմանէ





**24. ԱԳՅՈՒՍԱԿՆԵՐ ԼՈՒՄՆԻ ԺՆՆԿՅԱՆ ԵՎ ԼՐՄԱՆ ՀԱՇՎՈՒՄՆԵՐԻ**

Ծնունդն լուսնի	Քանիք	Տիւ գիշ	Ժամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ	Ժամ	Մասն
Յունուար	ժը	տիւ	ժ	ւ	Փետրուար	բ	գիշ	դ	ւ
Փետրուար	ժէ	գիշ	ժ	ւ	Մարտ	բ	տիւ	դ	ւ
Մարտ	ժը	տիւ	թ	դ	Ապրիլ	դ*	գիշ	դ	դ
Ապրիլ	ժէ	գիշ	թ	դ	Մայիս	դ	տիւ	դ	դ
Մայիս	ժդ	տիւ	թ	բ	Մայիս	լա	գիշ	բ	բ
Յունիս	ժե	գիշ	թ	բ	Յունիս	լ	տիւ	դ	բ
Յուլիս	ժդ	տիւ	բ	ե	Յուլիս	իթ	գիշ	բ	ե
Աւգոստ.	ժդ	գիշ	բ	ե	Աւգոստ.	իբ	տիւ	բ	ե
Սեպտեմբ.	ժա	տիւ	բ	դ	Սեպտեմբ.	իգ	գիշ	բ	դ
Հոկտեմբ.	ժա	գիշ	բ	դ	Հոկտեմբ.	իդ	տիւ	բ	դ
Նոյեմբ.	իթ	տիւ	բ	ւ	Նոյեմբ.	իդ	գիշ	բ	ւ
Դեկտեմբ.	իթ	գիշ	բ	ւ	Դեկտեմբ.	իդ	տիւ	բ	ւ

Հնգեակն ե  
վեցեակն Զ  
ապրիլի Գ  
վերապիբն  
ժԱ Թ  
ԲԺ Լուսնի

Ծնունդն լուսնի	Քանիք	Տիւ գիշ	Ժամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ	Ժամ	Մասն
Յունուար	է	գիշ	է	դ	Յունուար	իբ	գիշ	ա	դ
Փետրուար	դ	տիւ	է	դ	Փետրուար	իա	տիւ	ա	դ
Մարտ	է	գիշ	է	բ	Մարտ	իգ*	գիշ	բ	ւ
Ապրիլ	դ	տիւ	է	բ	Ապրիլ	իա	տիւ	ա	դ
Մայիս	ե	գիշ	դ	ե	Մայիս	ի	գիշ	ժբ	ե
Յունիս	դ	տիւ	դ	ե	Յունիս	ժբ	տիւ	ժբ	դ
Յուլիս	դ	գիշ	դ	դ	Յուլիս	ժբ	գիշ	ժբ	դ
Աւգոստ.	բ	տիւ	դ	դ	Աւգոստ.	ժդ	տիւ	ժբ	ա
Աւգոստ	լա	գիշ	դ	ւ	Սեպտեմբ.	ժե	գիշ	ժբ	ա
Սեպտեմբ.	լա	տիւ	դ	ւ	Հոկտեմբ.	ժդ	տիւ	ժա	դ
Հոկտեմբ.	լ	գիշ	ե	դ	Նոյեմբ.	ժդ	գիշ	ժա	դ
Նոյեմբ.	իթ	տիւ	ե	դ	Դեկտեմբ.	ժբ	տիւ	ժա	բ
Դեկտեմբ.	իէ	տիւ	ե	բ	Յունուար	ժբ	գիշ	ժա	բ

Հնգեակն ժ  
վեցեակն ժԲ  
Մարտի ԻԳ  
վերապիբն  
ԻԲ Ի  
ԲԺ Լուսնի

Ծնունդն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Ժամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Ժամ	Մասն	
Յունուար	իէ	տիւ	ե	դ	Փետրուար	ժ	գիշ	ժա	բ	Հնդեակն ժե
Փետրուար	իե	գիշ	ե	բ	Մարտ	ժբ	տիւ	ժա	բ	Ղեցեակն ժԸ
Մարտ	իէ	տիւ	ե	բ	Ապրիլ	ժբ*	գիշ	ժա	ե	ապրիլի ժԲ
Ապրիլ	իե	գիշ	դ	ե	Մայիս	ժ	տիւ	ժ	ե	Ղեքաղիբն ԳԱ
Մայիս	իե	տիւ	դ	ե	Յունիս	բ	գիշ	ժ	դ	ԳԺ Լուսնի
Յունիս	իդ	գիշ	դ	դ	Յուլիս	բ	տիւ	ժ	դ	
Յուլիս	իդ	տիւ	դ	դ	Ագոստ.	դ	գիշ	ժ	ա	
Ագոստ.	իա	գիշ	դ	ա	Սեպտեմբ.	ե	տիւ	ժ	ա	
Սեպտեմբ.	ի	տիւ	դ	ա	Հոկտեմբ.	դ	գիշ	ի	դ	
Հոկտեմբ.	ժի	գիշ	դ	դ	Նոյեմբ.	դ	տիւ	ի	դ	
Նոյեմբ.	ժբ	տիւ	դ	դ	Դեկտեմբ.	բ	գիշ	ի	բ	
Դեկտեմբ.	ժէ	գիշ	դ	բ	Յունուար	ա	տիւ	ի	բ	

Ծնունդն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Ժամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Ժամ	Մասն	
Յունուար	ժդ	տիւ	դ	բ	Յունուար	լ	գիշ	բ	ե	Հոգեակն Ի
Փետրուար	ժդ	գիշ	բ	ե	Մարտ	ա	տիւ	բ	ե	Ղեցեակն ԻԴ
Մարտ	ժդ	տիւ	բ	ե	Ապրիլ	ա*	գիշ	բ	դ	ապրիլի Ա
Ապրիլ	ժդ	գիշ	բ	դ	Ապրիլ	իի	տիւ	բ	դ	Ղեքաղիբն ժԳ ժԲ
Մայիս	ժդ	տիւ	բ	դ	Մայիս	իբ	գիշ	բ	ա	ժԲ Լուսնի
Յունիս	ժբ	գիշ	բ	ա	Յունիս	իէ	տիւ	բ	ա	
Յուլիս	ժբ	տիւ	բ	ա	Յուլիս	իդ	գիշ	ե	դ	
Ագոստ.	ժ	գիշ	ա	դ	Ագոստ.	իե	տիւ	ե	դ	
Սեպտեմբ.	ի	տիւ	ա	դ	Սեպտեմբ.	իդ	գիշ	ե	բ	
Հոկտեմբ.	բ	գիշ	ա	բ	Հոկտեմբ.	իդ	տիւ	ե	բ	
Նոյեմբ.	ե	տիւ	ա	բ	Նոյեմբ.	իա	գիշ	դ	ե	
Դեկտեմբ.	դ	տիւ	ժբ	ե	Դեկտեմբ.	իա	տիւ	դ	ե	

Մանուկն լուսնի	Քանիք	Տիւ գիշ:	Փամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ:	Փամ	Մասն
Յունուար	4	գիշ	ժր	4	Յունուար	ժթ	գիշ	4	4
Փետրուար	4	տիւ	ժր	4	Փետրուար	ժը	տիւ	4	4
Մարտ	4	գիշ	ժր	4	Մարտ	թա <sup>3</sup>	գիշ	4	4
Ապրիլ	4	տիւ	ժր	4	Ապրիլ	ժը	տիւ	4	4
Մայիս	5	գիշ	ժա	4	Մայիս	ժէ	գիշ	4	4
Յունիս	4	տիւ	ժա	4	Յունիս	ժգ	տիւ	4	4
Յուլիս	1	գիշ	ժ	4	Յուլիս	ժե	գիշ	4	4
Յուլիս	1	տիւ	ժա	4	Ագոստ.	ժգ	տիւ	4	4
Ագոստ.	թբ	գիշ	ժ	4	Սեպտեմբ.	ժը	գիշ	4	4
Սեպտեմբ.	թե	տիւ	ժ	4	Հոկտեմբ.	ժը	տիւ	4	4
Հոկտեմբ.	թգ	գիշ	ժ	4	Նոյեմբ.	ժ	գիշ	4	4
Նոյեմբ.	թե	տիւ	ժ	4	Դեկտեմբ.	ժ	տիւ	4	4
Դեկտեմբ.	թգ	գիշ	ժ	4	Յունուար	թ	գիշ	4	4

Հնդեակն ԻԵ  
 Վեցեակն 1,  
 մարտի ԻԱ,  
 Վերադարն  
 ԻԵ ԻԳ  
 ժԲ Լուսնի

9

Մանուկն լուսնի	Քանիք	Տիւ գիշ:	Փամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ:	Փամ	Մասն
Յունուար	թգ	տիւ	ժ	4	Փետրուար	ը	տիւ	4	4
Փետրուար	թբ	գիշ	ժ	4	Մարտ	թ	գիշ	4	4
Մարտ	թգ	տիւ	ժ	4	Ապրիլ	թ <sup>3</sup>	տիւ	4	4
Ապրիլ	թբ	գիշ	թ	4	Մայիս <sup>3</sup>	ե	գիշ	4	4
Մայիս	թբ	տիւ	թ	4	Յունիս	4	տիւ	4	4
Յունիս	թ	գիշ	թ	4	Յուլիս	ե	գիշ	4	4
Յուլիս	թ	տիւ	թ	4	Ագոստ.	4	տիւ	4	4
Ագոստ.	ժը	գիշ	ը	4	Սեպտեմբ.	ը	գիշ	4	4
Սեպտեմբ.	ժէ	տիւ	ը	4	Հոկտեմբ.	ը	տիւ	4	4
Հոկտեմբ.	ժգ	գիշ	ը	4	Հոկտեմբ.	լա	գիշ	4	4
Նոյեմբ.	ժե	տիւ	ը	4	Նոյեմբ.	1	տիւ	4	4
Դեկտեմբ.	ժգ	գիշ	ը	4	Դեկտեմբ.	թթ	տիւ	4	4

Հնդեակն 1,  
 Վեցեակն 1Զ,  
 մարտի Թ  
 Վերադարն  
 ԶԳ  
 ժԳ Լուսնի



Պատկեր լուսնի	Քանիք	Տիւ զիշ.	ժամ	Մասն	Լուսնի լուսնի	Քանիք	Տիւ զիշ.	ժամ	Մասն
Յունուար	ժգ	տիւ	ը	ա	Յունուար	կը	տիւ	բ	դ
Փետրուար	ժա	զիշ	է	դ	Փետրուար	կզ	զիշ	ա	դ
Մարտ	ժբ	տիւ	ւ	դ	Մարտ	կը	տիւ	ա	դ
Ապրիլ	ժա	զիշ	է	բ	Ապրիլ	կզ	զիշ	ա	բ
Մայիս	ժա	տիւ	ւ	բ	Մայիս	կզ	տիւ	ա	բ
Յունիս	ժբ	զիշ	դ	հ	Յունիս	կզ	տիւ	ժբ	հ
Յուլիս	ժբ	տիւ	դ	հ	Յուլիս	կզ	զիշ	ժբ	հ
Ագոստ.	է	զիշ	դ	դ	Ագոստ.	կբ	տիւ	ժբ	դ
Սեպտեմբ.	դ	տիւ	դ	դ	Սեպտեմբ.	կբ	զիշ	ժբ	դ
Օկտեմբ.	ժբ	տիւ	դ	դ	Օկտեմբ.	կբ	տիւ	ժբ	դ
Նոյեմբ.	կբ	զիշ	դ	բ	Նոյեմբ.	կբ	զիշ	ժբ	բ
Դեկտեմբ.	կբ	տիւ	դ	բ	Դեկտեմբ.	կբ	տիւ	ժբ	բ

Հնգիսկն և  
Վեցիսկն թիւ  
Մարտի Թիւ  
Վերազիսկն  
Փն ժե

Բժ րուսն

Պատկեր լուսնի	Քանիք	Տիւ զիշ.	ժամ	Մասն	Լուսնի լուսնի	Քանիք	Տիւ զիշ.	ժամ	Մասն
Յունուար	բ	տիւ	հ	դ	Յունուար	ժգ	զիշ	ժա	բ
Փետրուար	լա	զիշ	հ	բ	Փետրուար	ժի	տիւ	ժա	բ
Մարտ	բ	տիւ	ւ	բ	Մարտ	ժգ	զիշ	ժ	հ
Ապրիլ	լ	տիւ	դ	հ	Ապրիլ	ժէ	տիւ	ժ	հ
Մայիս	կբ	զիշ	դ	դ	Մայիս	ժգ	զիշ	ժ	դ
Յունիս	կբ	տիւ	դ	դ	Յունիս	ժգ	տիւ	ժ	դ
Յուլիս	կէ	զիշ	դ	ա	Յուլիս	ժբ	զիշ	ժ	ա
Ագոստ.	կզ	տիւ	դ	ա	Ագոստ.	ժա	տիւ	ժ	ա
Սեպտեմբ.	կզ	զիշ	դ	դ	Սեպտեմբ.	ժբ	զիշ	ժ	դ
Օկտեմբ.	կբ	տիւ	դ	դ	Օկտեմբ.	ժբ	տիւ	ժ	դ
Նոյեմբ.	կբ	զիշ	դ	բ	Նոյեմբ.	կբ	զիշ	ժ	բ
Դեկտեմբ.	կբ	տիւ	դ	բ	Դեկտեմբ.	կբ	տիւ	ժ	բ

Հնգիսկն և  
Վեցիսկն թիւ  
ապրիլի Թիւ  
Վերազիսկն  
Թիւ Իշ

Գժ րուսնի

Մնունդն լուսնի	Քանիք	Տիւր զիշ.	Ժամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւր զիշ.	Ժամ	Մասն
Յունուար	ի	գիշ	բ	և	Փետրուար	դ	տիւ	ը	և
Փետրուար	ժթ	տիւ	բ	և	Մարտ	և	գիշ	ը	դ
Մարտ	ի	գիշ	բ	դ	Ապրիլ	դ*	տիւ	թ	բ
Ապրիլ	ժթ	տիւ	բ	դ	Մայիս	դ	գիշ	ը	ա
Մայիս	ժը	գիշ	բ	ա	Յունիս	բ	տիւ	ը	ա
Յունիս	ժէ	տիւ	բ	ա	Յուլիս	ա	գիշ	է	դ
Յուլիս	ժդ	գիշ	ա	դ	Յուլիս	լա	տիւ	է	դ
Աւգոստ.	ժե	տիւ	ա	դ	Աւգոստ.	իթ	գիշ	է	բ
Սեպտեմբ.	ժզ	գիշ	ա	բ	Սեպտեմբ.	իը	տիւ	է	բ
Հոկտեմբ.	ժդ	տիւ	ա	բ	Հոկտեմբ.	իէ	գիշ	դ	և
Նոյեմբ.	ժա	տիւ	ժբ	և	Նոյեմբ.	իզ	տիւ	դ	և
Դեկտեմբ.	ժա	գիշ	ժբ	դ	Դեկտեմբ.	իև	գիշ	զ	զ

Հնգեակն ԽԵ  
 զեցեակն ՄԴ  
 ապրիլի Զ  
 զերրորդիսն  
 Թ Է  
 ԲԺ Լուսնի

Մնունդն լուսնի	Քանիք	Տիւր զիշ.	Ժամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւր զիշ.	Ժամ	Մասն
Յունուար	թ	տիւ	ժբ	և	Յունուար	իդ	տիւ	զ	և
Փետրուար	է	գիշ	ժբ	դ	Փետրուար	իբ	գիշ	զ	զ
Մարտ	թ	տիւ	ժբ	զ	Մարտ	իև*	տիւ	զ	և
Ապրիլ	է	գիշ	ժա	ա	Ապրիլ	իբ	գիշ	զ	ա
Մայիս	է	տիւ	ժբ	ա	Մայիս	իբ	տիւ	զ	ա
Յունիս	և	գիշ	ժա	դ	Յունիս	ի	գիշ	և	զ
Յուլիս	և	տիւ	ժա	զ	Յուլիս	ի	տիւ	և	զ
Աւգոստ.	դ	գիշ	ժա	բ	Աւգոստ.	ժբ	գիշ	և	բ
Սեպտեմբ.	բ	տիւ	ժա	բ	Սեպտեմբ.	ժէ	տիւ	և	բ
Հոկտեմբ.	ա	գիշ	ժ	և և	Հոկտեմբ.	ժզ	գիշ	զ	և
Հոկտեմբ. Նոյեմբ.	լա իթ	տիւ գիշ	ժ ժ	զ դ	Նոյեմբ.	ժև	տիւ	զ	և
Դեկտեմբ.	իթ	տիւ	ժ	զ	Դեկտեմբ.	ժդ	գիշ	զ	զ
					Յունուար	ժզ	տիւ	զ	զ

Հնգեակն Մ  
 զեցեակն Կ  
 ժարտի ԻԵ  
 զերրորդիսն  
 ԻԱ ԺԺ  
 ԲԺ Լուսնի

Մանուկն լուսնի	Քառկէ	Տիւրիշ	Փափ	Մասն	Լրուսնի լուսնի	Քառկէ	Տիւրիշ	Փափ	Մասն
Յունուար	Կի	Չիշ	Ք	ա	Փետրուար	ժա	աիշ	դ	ա
Փետրուար	Կի	Չիշ	Ք	ա	Մարտ	ժգ	աիւ	դ	ա
Մարտ	Կի	Չիշ	Ք	ա	Ապրիլ	ժգ*	աիշ	դ	ա
Ապրիլ	Կի	Չիւ	Ք	ա	Մայիս	ժա	աիւ	դ	ա
Մայիս	Կի	Չիւ	Ք	ա	Յունիս	Ք	աիւ	դ	ա
Յունիս	Կի	Չիւ	Ք	ա	Յուլիս	Ք	աիւ	դ	ա
Յուլիս	Կի	Չիւ	Ք	ա	Աւգոստ.	է	աիւ	դ	ա
Աւգոստ.	Կի	Չիւ	Ք	ա	Սեպտեմբ.	դ	աիւ	դ	ա
Սեպտեմբ.	Կի	Չիւ	Ք	ա	Նոյեմբ.	ե	աիւ	դ	ա
Նոյեմբ.	Կի	Չիւ	Ք	ա	Դեկտեմբ.	դ	աիւ	դ	ա
Դեկտեմբ.	Կի	Չիւ	Ք	ա	Յունուար	ժ	աիւ	դ	ա

Հնգյեակն ՅԵԻ  
 զեցեակն ԿՉ  
 ապրիլի ՔԳ  
 զեքադիբն  
 ԵՂ  
 Գժ Լուսնի

Մանուկն լուսնի	Քառկէ	Տիւրիշ	Փափ	Մասն	Լրուսնի լուսնի	Քառկէ	Տիւրիշ	Փափ	Մասն
Յունուար	Կի	Չիւ	Ք	ա	Յունուար	Լա	աիւ	դ	ա
Փետրուար	Կի	Չիւ	Ք	ա	Մարտ	բ	աիւ	դ	ա
Մարտ	Կի	Չիւ	Ք	ա	Ապրիլ	բ*	աիւ	դ	ա
Ապրիլ	Կի	Չիւ	Ք	ա	Ապրիլ	լ	աիւ	դ	ա
Մայիս	Կի	Չիւ	Ք	ա	Մայիս	բբ	աիւ	դ	ա
Յունիս	Կի	Չիւ	Ք	ա	Յունիս	բէ	աիւ	դ	ա
Յունիս	Կի	Չիւ	Ք	ա	Յուլիս	բէ	աիւ	դ	ա
Աւգոստ.	Կի	Չիւ	Ք	ա	Աւգոստ.	բէ	աիւ	դ	ա
Սեպտեմբ.	Կի	Չիւ	Ք	ա	Սեպտեմբ.	բդ	աիւ	դ	ա
Նոյեմբ.	Կի	Չիւ	Ք	ա	Նոյեմբ.	բդ	աիւ	դ	ա
Դեկտեմբ.	Կի	Չիւ	Ք	ա	Դեկտեմբ.	բա	աիւ	դ	ա

Հնգյեակն Կ  
 զեցեակն ԼԲ  
 ապրիլի Բ  
 զեքադիբն  
 ՔԳ ՓԱ  
 ժԲ Լուսնի



ժգ

Մնունդն լուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն	
Յունուար	ե	դիշ	ե	բ	Յունուար	ի	տիւ	ժա	բ	Հնգեակն Կե
Փետրուար	դ	տիւ	ե	բ	Փետրուար	ժբ	դիշ	ժա	բ	Վեցեակն ՀԷ
Մարտ	ե	դիշ	դ	ե	Մարտ	իբ*	տիւ	ժ	ե	Տարտի ԻԲ
Ապրիլ	դ	տիւ	դ	ե	Ապրիլ	ժբ	դիշ	ժ	ե	Վերադիբն ԻԳ ԻԲ
Մայիս	դ	դիշ	դ	դ	Մայիս	ժէ	տիւ	ժ	դ	ԲԺ Լուսնի
Յունիս	բ	տիւ	դ	դ	Յունիս	ժդ	դիշ	ժ	դ	
Յուլիս	ա	դիշ	դ	ա	Յուլիս	ժե	տիւ	ժ	ա	
Յուլիս	լա	տիւ	դ	ա	Յուլիս					
Աւգոստ.	իթ	դիշ	դ	դ	Աւգոստ.	ժդ	դիշ	ժ	ա	
Սեպտեմբ.	իբ	տիւ	դ	դ	Սեպտեմբ.	ժդ	տիւ	իթ	դ	
Հոկտեմբ.	իէ	դիշ	դ	բ	Հոկտեմբ.	ժբ	դիշ	թ	դ	
Նոյեմբ.	իզ	տիւ	դ	բ	Նոյեմբ.	ժա	տիւ	թ	բ	
Դեկտեմբ.	իհ	դիշ	դ	ե	Դեկտեմբ.	ժ	դիշ	թ	բ	
					Յունուար	ժ	տիւ	բ	ե	

ժգ

Մնունդն լուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն	
Յունուար	իե	տիւ	դ	բ	Փետրուար	բ	դիշ	բ	ե	Հնգեակն Հ
Փետրուար	իզ	դիշ	բ	ե	Մարտ	ժ	տիւ	բ	ե	Վեցեակն ՋԳ
Մարտ	իե	տիւ	բ	ե	Ապրիլ	ժ*	դիշ	բ	դ	Տարտի Ժ
Ապրիլ	իզ	դիշ	բ	դ	Մայիս	բ	տիւ	բ	դ	Վերադիբն ԵԳ
Մայիս	իզ	տիւ	բ	դ	Յունիս	դ	դիշ	բ	ա	ԳԺ Լուսնի
Յունիս	իա	դիշ	բ	ա	Յուլիս	դ	տիւ	բ	ա	
Յուլիս	իա	տիւ	բ	ա	Աւգոստ.	դ	դիշ	է	դ	
Աւգոստ.	ժթ	դիշ	ա	դ	Սեպտեմբ.	դ	տիւ	է	դ	
Սեպտեմբ.	ժբ	տիւ	ա	դ	Հոկտեմբ.	բ	դիշ	է	բ	
Հոկտեմբ.	ժէ	դիշ	ա	բ	Նոյեմբ.	ա	տիւ	է	բ	
Նոյեմբ.	ժդ	տիւ	ա	բ	Նոյեմբ.	լ	դիշ	դ	ե	
Դեկտեմբ.	ժե	դիշ	ա	ե	Դեկտեմբ.	լ	տիւ	դ	ե	

Յունուդն յուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն	Լրումն յուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն
Յունուար	ժ	դիշ	ժ	դ	Յունուար	ի	դիշ	դ	դ
Փետրուար	ժ	աիւ	ժ	դ	Փետրուար	ի	աիւ	դ	դ
Մարտ	ժ	դիշ	ժ	ա	Մարտ	լ*	դիշ	դ	ա
Ապրիլ	ժ	աիւ	ժ	ա	Ապրիլ	ի	աիւ	դ	ա
Մայիս	ժ	դիշ	ժ	դ	Մայիս	ի	դիշ	ե	դ
Յունիս	ժ	աիւ	ժ	դ	Յունիս	ի	աիւ	ե	դ
Յուլիս	թ	դիշ	ժ	բ	Յուլիս	ի	դիշ	ե	բ
Աւգոստ.	բ	աիւ	ժ	բ	Աւգոստ.	ի	աիւ	ե	բ
Սեպտեմբ.	դ	դիշ	ժ	ե	Սեպտեմբ.	ի	աիւ	դ	ե
Հոկտեմբ.	դ	աիւ	ժ	ե	Հոկտեմբ.	ի	աիւ	դ	ե
Նոյեմբ.	դ	դիշ	ժ	դ	Նոյեմբ.	ժ	դիշ	դ	դ
Դեկտեմբ.	դ	աիւ	ժ	դ	Դեկտեմբ.	ժ	աիւ	դ	դ

Հնդեակն  
ՀԵ  
Վեցեակն Դ  
ժարաի Լ  
Վերագիրն  
ԺԶ ԺԴ  
ԹԺ յուսնի

Յունուդն յուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն	Լրումն յուսնի	Քանիք	Տիւ դիշ	Փամ	Մասն
Յունուար	բ	դիշ	ժ	ա	Յունուար	ժ	դիշ	դ	ա
Փետրուար	ա	աիւ	ժ	ա	Փետրուար	ժ	աիւ	դ	ա
Մարտ	բ	դիշ	թ	դ	Մարտ	ժ	դիշ	դ	դ
Ապրիլ	ա	աիւ	թ	դ	Ապրիլ	ժ	աիւ	դ	դ
Մայիս	ա	դիշ	թ	բ	Մայիս	ժ	դիշ	դ	բ
Մայիս	դ	աիւ	թ	բ	Մայիս	ժ	աիւ	դ	բ
Յունիս	ի	դիշ	բ	ե	Յունիս	ժ	աիւ	դ	բ
Յուլիս	ի	աիւ	բ	ե	Յուլիս	ժ	դիշ	բ	ե
Աւգոստ.	ի	դիշ	բ	դ	Աւգոստ.	ժ	աիւ	բ	ե
Սեպտեմբ.	ի	աիւ	բ	դ	Սեպտեմբ.	ժ	դիշ	բ	դ
Հոկտեմբ.	ի	դիշ	բ	ա	Հոկտեմբ.	ժ	աիւ	բ	դ
Նոյեմբ.	ի	աիւ	բ	ա	Նոյեմբ.	բ	դիշ	բ	ա
Դեկտեմբ.	ի	դիշ	բ	դ	Դեկտեմբ.	բ	աիւ	բ	ա
					Յունուար	դ	դիշ	ա	դ

Հնդեակն Զ  
Վեցեակն  
ԴԶ  
Ապրիլի ԺԸ  
Վերագիրն  
ԻԵ ԻԵ

ժԷ

Ծնունդն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Փամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Փամ	Մասն
Յունուար	իբ	տիւ	ը	ա	Փետրուար	չ	տիւ	բ	ա
Փետրուար	ի	դիշ	է	զ	Մարտ	ե	դիշ	ա	զ
Մարտ	իբ	տիւ	է	դ	Ապրիլ	է*	տիւ	ա	զ
Ապրիլ	ի	դիշ	է	բ	Մայիս	ե	դիշ	ա	բ
Մայիս	ի	տիւ	է	բ	Յունիս	զ	տիւ	ա	բ
Յունիս	ժը	դիշ	զ	ե	Յուլիս	զ	դիշ	ժբ	ե
Յուլիս	ժը	տիւ	զ	ե	Աւգոստ.	ա	տիւ	ժբ	զ
Աւգոստ.	ժզ	դիշ	զ	զ	Աւգոստ.	լա	դիշ	ժբ	զ
Սեպտեմբ.	ժե	տիւ	զ	զ	Սեպտեմբ.	իթ	տիւ	ժբ	ա
Հոկտեմբ.	ժդ	դիշ	զ	ա	Հոկտեմբ.	իթ	դիշ	ժբ	ա
Նոյեմբ.	ժզ	տիւ	զ	ա	Նոյեմբ.	իէ	տիւ	ժա	զ
Դեկտեմբ.	ժբ	դիշ	ե	դ	Դեկտեմբ.	իէ	դիշ	ժա	զ

Հնդեակն  
ՁԵ  
վեցեակն  
ՃԲ  
ապրիլի է  
վերբադիբն  
ԼՁ

ժԲ

Ծնունդն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Փամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ գիշ.	Փամ	Մասն
Յունուար	ժա	դիշ	ե	դ	Յունուար	իե	դիշ	ժա	բ
Փետրուար	ի	տիւ	ե	բ	Փետրուար	իդ	տիւ	ժա	բ
Մարտ	ժա	դիշ	ե	բ	Մարտ	իէ*	դիշ	ժ	ե
Ապրիլ	իթ	տիւ	դ	ե	Ապրիլ	իդ	տիւ	ժ	ե
Մայիս	բ	դիշ	զ	ե	Մայիս	իդ	դիշ	ժ	զ
Յունիս	է	տիւ	զ	զ	Յունիս	իբ	տիւ	ժ	զ
Յուլիս	զ	դիշ	զ	զ	Յուլիս	իա	դիշ	ժ	ա
Աւգոստ.	զ	տիւ	զ	ա	Աւգոստ.	ի	տիւ	ժ	ա
Սեպտեմբ.	զ	դիշ	զ	ա	Սեպտեմբ.	ժբ	դիշ	թ	զ
Հոկտեմբ.	զ	տիւ	զ	զ	Հոկտեմբ.	ժբ	տիւ	թ	զ
Նոյեմբ.	բ	դիշ	զ	զ	Նոյեմբ.	ժզ	դիշ	թ	բ
Դեկտեմբ.	բ	տիւ	զ	բ	Դեկտեմբ.	ժե	տիւ	թ	բ
Դեկտեմբ.	լա	դիշ	զ	բ	Յունուար	ժզ	դիշ	ը	ե

Հնդեակն Դ  
վեցեակն  
ՃԼ  
ժաբի է  
վերբադիբն  
ժԹ ժԷ  
ԲԹ Լուսնի



Ծնունդի լուսնի	Քանիք	Տիւ. զիշ.	Փամ	Մասն	Լրումն լուսնի	Քանիք	Տիւ. զիշ.	Փամ	Մասն
Յունուար	ԻԲ	զիշ	բ	ե	Յունուար	ժգ	տիւ	բ	ե
Փետրուար	ԻԸ	տիւ	բ	ե	Փետրուար	ժգ	զիշ	բ	զ
Մարտ	ԻԲ	զիշ	բ	զ	Մարտ	ժե*	տիւ	բ	զ
Ապրիլ	ԻԸ	տիւ	բ	զ	Ապրիլ	ժբ	զիշ	բ	ա
Մայիս	Իէ	զիշ	բ	ա	Մայիս	ժա	տիւ	բ	ա
Յունիս	Լդ	տիւ	բ	ա	Յունիս	ժ	զիշ	է	զ
Յուլիս	Իե	զիշ	ա	զ	Յուլիս	Թ	տիւ	է	զ
Աւգոստ.	Իդ	տիւ	ա	զ	Աւգոստ.	բ	զիշ	է	բ
Սեպտեմբ.	Իբ	զիշ	ա	բ	Սեպտեմբ.	է	տիւ	է	բ
Հոկտեմբ.	Իբ	տիւ	ա	բ	Հոկտեմբ.	է	զիշ	զ	ե
Նոյեմբ.	Իբ	զիշ	ժբ	ե	Նոյեմբ.	զ	տիւ	զ	ե
Գեկտեմբ.	ժԹ	տիւ	ժբ	ե	Գեկտեմբ.	ե	զիշ	զ	զ
					Յունուար	զ	տիւ	զ	զ

Հնգեակն  
ՂԵ  
Վեցեակն  
ՃԺԳ  
ապրիլի ժե  
Վերսդիբն  
Լ ԻԷ  
Գժ լուսնի

Ո՛վ սիրելի հանճարեզ ուսումնասէր հղբայր հոգևոր, այս ժԺ տարոյ ծնունդին և լրումն լուսնիս որ գրեցաւ, ապրիլեաց խորանացն ընթանայ: Եւ զկնի ինն և տասնեակ բոլորկացն մուտն և ելն միապէս է սոցա: Եւ այն դաւազանն, որ ի մէջն է անգիր, այն բաժանման նշանն է՝ որ մին տարոյ վերին տուփն է և մին տարոյ ներքին: Այլ և զժազրեալ է ամեն տուփ զկնի մասանցն զհնգեակն և զվեցեակն: Եւ զլրումն զատկին՝ թէ յորում ամսոջ է խաշանիշ կեառովն նշանեալ և զվերագիր հոսումին զմեծն և զփոքրն ի մի տեղ և թէ որ տարի ԲԺ լուսին է և կամ որ տարի ԳԺ: Արդ՝ յորժամ ի վերջին տուփս հասանես, դարձեալ յառաջինն սկսիր զկնի ապրիլեացն: Եւ թէ ստուգիւ իմանալ կամիս զխորան տարոյն. թուիս համարագրովն զիս, որ ի գլուխն է, ի մէջ կարմիր բոլորակին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Լուսնի ծննդյան և լրման ներկա աղյուսակները մենք վերցրել ենք Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 1973 և № 2001 ձեռագրերից: Նրանք ընդօրինակված են Հովհաննես Իմաստասերի տոմարական աղյուսակների շարքում, ուստի և ենթադրում ենք, որ նրա աշխատությունը պիտի լինի: № 1973 ձեռագրում այդ աղյուսակները Հովհաննես Իմաստասերի «Պատճէն տոմարի» շարունակությունն են կազմում (թ. 38բ-ից մինչև թ. 47բ), իսկ № 2001 ձեռագրում այս աղյուսակներն ընդօրինակված են Հովհաննես Իմաստասերի «Ազնըվացանկ»-ից առաջ (թ. 61բ-ից մինչև թ. 66ա). հագիվ թե այլ հեղինակի նման բովանդակությամբ խորանները մուծվեին Իմաստասերի տոմարական աշխատությունների շարքում:

Աղյուսակները կազմված են լուսնի բոլորակը կազմող 19 տարիների համար: Յուրաքանչյուր տարվա վերին եզրում տրված է լուսնական 19 տարիների համարական շարքը. թվահամարով նշված է՝ թե ո՞ր տարվա աղյուսակներն են:

Յուրաքանչյուր տարվա աղյուսակ բաժանվում է երկու մասի, որից մեկում տրված է լուսնի ծնունդը, իսկ մյուսում՝ լրումը: Առաջին սյունակում տրված են տարվա 12 ամիսներն ըստ հերթականության, երկրորդ սյունակում՝ լուսնի ծննդյան ամսաթիվը, երրորդում՝ երբ է եղել ծնունդը՝ ցերեկ թե գիշեր, չորրորդում՝ ո՞ր ժամին և հինգերորդում՝ ո՞ր մասին (հնում ժամը բաժանվում էր հինգ մասի): Նույն հերթականությամբ տրված է նաև լուսնի լրումը՝ ամսի քանիսին է տեղի ունենում, գիշերը թե ցերեկը, ո՞ր ժամին է և ո՞ր մասին:

Այս երկու աղյուսակների աջ կողմում առանձին լայն սյունակով տրված են լուսնական բոլորակի տվյալ տարվա հնգյակը, վեցյակը, դասկի լրումը, հարմեական մեծ և փոքր վերագիրները և տվյալ տարվա ընթացքում բոլորվող լուսինների թիվը՝ 12 է՝, թե՛ 13: Այդ նկատառումով որոշ աղյուսակների ներքին գրաֆիկայում 12 ամիսները վերջանալուց հետո (դեկտեմբերից հետո) տրված է նորից հունվար ամիսը:

Մեր հրատարակած աղյուսակների բնագիրը վերցված է № 2001 ձեռագրից: ՀՊՁՄ-ի № 1973 և № 1999 ձեռագրերի հիման վրա որոշ ուղղումներ են կատարված բնագրի մեջ: Տեքստում կատարված են աննշան փոփոխություններ. ամեն տեղ լուսնի գաղափարագիրը՝ տպագրական դժվարության պատճառով, բաց է արված: Միատեսակության համար ամսանունները լրացված են պակաս տառերով: Վերջին սյունակում թվական իմաստով գործածված տառանիշերը արված են մեծատառով (բնագրում փոքրատառով է): Մի քանի քառերի վերջում պակասոց տառերը լրացված են:

## 25. ՀՈՎՀԱՆՆԵՄ ԻՄԱՏԱՏԵՐԻ ՏՈՒՐԱԿԵՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԸ ՀԱՄԱՌՈՏՎԷԾ ՀԱԿՈՒ ՂՐԻՄԵՅՈՒ ԿՈՂՄԻՅ

ՀԱՐՈՅՈՒՄԸ ԳԷՈՐԳԵԱՅ ԲԱՔՈՒՆԱՊԵՏԻ ԵՎ ԾԱՌԱՅԱԲԱՐ  
ԿԱՏԱՐՈՒՄԸ ՅԱԿՈՒՅ ԱՇԽԱՏԻ

...Ծանիր աստ բարունի իմ, զի ոչ եթէ զիմ ջանից ցուցանեմ  
զքաջութիւն, ալ զՄարկաւագ վարդապետին, որ հասարակ ամենե-  
ցուն յայտնի է առն քաջութիւն ի գիտութիւն մակացութեանս ալս,  
2ա զնորայն աշխատասիրութիւն և վաստակ ջանից, զոր փարթամ և  
երկար բանիւք շարագրեալ է զաւուրցս զստուգութիւն: Մեր զայն  
ջանիւ մեծաւ համառատեցաք վասն ուսումնասէք անձանց, զի առ  
ձեռն պատրաստ և դիւրին լիցի ի տրամաբանութիւն անիրաւ հա-  
կառակորդաց յաղազս ալսմ իրի...

Վասն առաջնոցն ասելի է ըստ առաջնոցն սահմանարէն:  
Թուական է շարժումն յաւէտ յառաջխաղաց և հիմն զանազան մա-  
սանց արհեստից: Եւ զայս իրաւ է, զի երկինք և լուսաւորք ուստի  
ի սոցանէ պատճառի ժամանակն միշտ յառաջ խաղալով ի կիտէ  
յարեւելից առ կէտն յարեւմտից բացկատարեն զժամն և զժամա-  
նակն է դարձն, որ պարունակեն զժամանակն, վասն այսր պատ-  
ճառի և թուականս յաւէտ յառաջխաղացմամբ շարիէ զժամանակն և  
թուէ զքանիանութիւն դարոյս կենցաղոյս: Իսկ զանազան մասունք՝  
զեթնեղեակն, զնահանջն, զվերադիրն, զիննետասնեղեակն և զայն  
իմա ըստ սոսա, զի սոքաւք ալքն եղանին, զի տումարն բոլորի  
անուն է, որպէս վերագոյն ասացաք և սոքա մասունք՝ ի ներքոյ բո-  
լորին, նա և սեռական անուն է և սոքա տեսակք՝ ի ներքոյ սեռի:  
Եւ սոքա ամենեքեան թուականան լինին, վասն որոյ ասի հիմն  
զանազան մասանց արհեստից, և վասն յիշելոյ գտումարս. եթէ ոք  
ասիցէ զինչ է տումարն, առաձնակի ունի զինդիրն և ոչ ըստ տե-  
ղոյս յարմարի:

22բ Վասն երկրորդին ճառելի է, թէ գործք//թուականիս բազում է:  
Նախ՝ յայտնէ գորքանութիւն ծննդագործութեան մարդկան՝ ըստ  
այնմ Ադամ լեալ ամաց Մլ, ծնանի զՍէթ:

Երկրորդ՝ յայտնէ զչարի կենաց, որպէս ասէ Ադամ լեալ ամաց  
Ջլ ամաց, մեռանի:



Երրորդ՝ զգարուց ըստ այնմ յԱղամայ ի փոխելն Ենովբայ  
են ամբ ՌնՁէ և մինչև ի շրհեղեղն՝ ՍՄԽԲ: Զորրորդ՝ ցուցանէ ոլոմ-  
պիաթն, որ են նաճանջքն. և որպէս ասէ Եսայի և Սէթի ի ՃԺԱ  
ոլոմպիաթն թագաւորէ Ալեքսանդր Մակեդոնացի:

23ա Էինզերորդ՝ զչափ առաջնորդական և թագաւորական իշխա-  
նութեանց՝ ըստ այնմ Յեսու առաջնորդեաց ամս Իէ, և Դողոնիէլ՝  
ամս Խ, և թագաւորեաց Սաւուլ ամս ԽԶ. և Դաւիթ և Սողովմոն  
զմեծամեծ շինուածոց // և զայլոց գործոց ըստ այնմ զԽԶ ամ շի-  
նեցաւ տաճարս այս և Նեէմի կատարեաց զպարիսպն Երուսա-  
ղէմի ժԹ ամս:

Եսթներորդ՝ յայտնէ զառումն քաղաքաց և մեծամեծ պատե-  
րագմաց, որպէս ասեն թէ՝ առաւ Ելիոն քաղաք յաւուրս զառաւու-  
րացն Ելոնայի յերրորդ ամի, և Երուսաղէմ՝ ի Սեղեկիայ ժԹ ամին:

23բ Վասն երրորդին զհատելի է, զի վասն այս պատճառի եզին  
զթուականս Տայոց, զի ի լրման Մ. եկին Անդրկասայ, լրումն զառ-  
կի մարտի ԻԵ. ն էր և ի սկզբանն յապրիլի շորս: Եւ վասն զի ոչ ի  
սկիզբն կարացին զնալ, զի յետ ԻԵ. ին Գժ. ան էր ապրիլի և Թ  
լրմունքն այլ կայր ի մէջն և աչնր պատճառաւ սկսան շփոթել  
տանք և ամենայն արուեստ իրողութեան տումարաց: Ապ/լա Տան-  
ճարեզր ժամանակին ի միասին եկեալ կարգեցին թուականս Տա-  
յոց, զի ուղղեցեն զզատիկն տեանն այլաչն Տանզերծ, բայց ոչ  
կարացին ի ճշմարտութեանն կալ անսխալ զամս ինն, իսկ ի տա-  
ներորդ թուականին էսս անուն ամն իմաստաւեր աղբսանզրացի,  
ուշիմ և Տանճարեղ մտաւր, ժողովեաց աս ինքն զարս կորովամիտս  
և նորահաշիացս և կարգեցին զանտարիութելի արինակն, որ կուշի  
Շ. եակ: Եւ ապա ուղղեցան ամենայն կանոնեալքն. և այս եղև  
պատճառ եղելոյ թուականիս, շփոթումն տաւնից և զատկաց:

24ա Զորրորդ խնդրի՝ թէ յոր՝ ամ ժամանակի եզին: Զթուականս  
եզին ի ժամանակս երկրորդ Յուստիանոսի կայսեր, որ // Այալ-  
սոֆիան շինեաց ի Կոստանդնուպոլիս ի ԻԹ ամին սորա և պար-  
սից արքային Խոսրովի ժԹ և Տայոց սպարապետ Մեծէժ Գնունեցոյ  
ի տաս ամին և ի տէր Մովսէս կաթողիկոսին, որ երկոտասանե-  
րորդն էր ի Լուսաւորչէն, ի շորս ամի սորա, զոր ոմանց յայլոց  
[այլ] ասացին, բայց այս է ճշմարիտն:

Էինզերորդ, զի յԱղամայ Տեաէ ԲԶԶԶ ամ էր, ի ծննդեմէն  
Քրիստոսի ՇԾԳ իսկ, վեցերորդ արա զթուականն, որպէս պատ-  
ճէն խրատէ:

24բ Զարց. բնզէ՛ր է զի յորժամ Տոռոմ թուական աննեմք և ըստ  
խրատուն կալնումք զյարակայն ՅԳ և զՏայ թուականն ի վերայ  
բերեմք և առնեմք մեծ թուական Տոռոմի, և յորժամ կամիմք // Եթ-  
նեբեակ և վերադիր առնել, եթէ թիւ մի ոչ պակասեցուցանեմք, ոչ  
բերէ զարուեստն: Այսպէս և զՏայոցն և զնաճանջիցան մէկ ամաւ  
յառաջ ցուցանէ, յորժամ շորեքպատկեմք զթուականն:

Պատասխանի. Մանի՛ր որդի, զի այս ի պատճառէ Տասարակածին  
եղև, զի Տասարակածն յորժամ ի նաւասարդ եմուտ, զանխարար

25ա թիւ աւելի ի ներքս հմոյծ և ոչ գիտեցեալ բազմաց, շփոթեաց զամենայն կանոնեալսն առաջնոց հարցն և յայնմհետև ոչ բերել ուղիղ գիտեալանսն, զեթնեքեակս զվերադիրս և զլրմունս միով թուով յառաջացեալ գտանի բստ հայրսմն, աչսպէս և զնահանջն ոչ ցուցանել յորում ամի և լինի, զի յորժամ շորեթ/պատկես, գիտեալանն տարով մի յառաջ ցուցանել զնահանջն՝ վասն յաւելեալ թուոյ և չէ ամն նահանջի:

Հարց. Ազաշեմ բացայայտել զյաւելեալ թիւղ թէ՛ որպէս հասարակածն անխարար ի ներքս հմոյծ:

25բ Պատասխանի. Գծուարին և նուրբ է գիտութիւն սորա, զի զանխուլ է և ծածուկ, բայց դու աչսպէս իմա: Զի ի զնել թուակահին հասարակածն զարնանային յահի ամսոյ ի ժԳ էր, և փոփոխելով բստ շորից շորից ամաց հասարակածն բստ հայ ամսոցղ կատարեաց յահի ամսոյն ի հետ զտարին և անցեալ հմուտ ի նաւասարդի ամիս ի միս ալլ տարին և արար թիւ մի յաւելուած, 26ա քանզի ունիմք զնահանջ թուականին և շոր/եքպատկեմք և լինի թուականն, և յաւելուած միոյ թուոյն շարժել զամենայն կանոնեալսն, զի հասարակածն յահի ժԳ.էն հասեալ մինչև յաւելեացն ի հինգն զամս նՄԲ, յորմէ հետէ եղաւ թուականն ուղղապէս, և միարան զայր ալլոց ազգաց կանոնեալն կարգ: Իսկ յորմէ հետէ հասարակածն հմուտ ի նաւասարդի ամիսն, թիւր իմն և անմիարան վարի ընդ ալլսն, եթէ ոչ ուղղեացի: Եւ թէ որպէս եղև յաւելումն աչամ թուոյ, ուսիր. ի զնել թուականին տոտջի ամ էր նահանջի, զի լրումն յապրիլի ժԳ էր, որ առաջի ամ էր. և տես ի Շ.եակն, որ զլուխ բոյսրին յապրիլի ժԳ է, զի առաջի ամ է: Եւ նահանջն ի յահի ժԳ.էն մինչև ի յաւել/ացն ի հինգն նՄԲ ամի գոչգ թիւն զայր ի շորսն, ի յուլիս, ի տասներկուսն, ի տասներկուսն, ի քսանն և ալլն ամենայն բստ կարգի: Եւ յորժամ հասարակածն հմուտ ի նաւասարդ, յայնմ հետէ ֆարտ թիւն զայն մինչև յարս և առ յապա, և բստ աչամ ֆարտ թուոյս յաւելաւ թիւն:

Հարց. Եւ զի՞նչ է պատճառն, զի մինչ ի յաւելեացն ի հինգն ի զոչգ թիւն զայր նահանջն և ի նաւասարդէ ի հետ՝ ֆարտն:

Պատասխանի. Այս է պատճառն, զի յառաջ հասարակածն զայր վասն զարնանամտին և ապա՝ տարեմուտն, աչժմ յառաջ տարեմուտն զայ և ապա հասարակածն, վասն զի հասարակածն կոխեաց զտարեմուտն և էանց յայս կոչս:

26բ Հարց. Ո՞րպէս կոխեաց հասարակածն զ//տարեմուտն:

Պատասխանի. Տես աստ և ուսիր ուշիմ մտաւք, զի նուրբ է տեսութիւն սորա: Գիտեա, զի տարին 346 ար է և նահանջ ամն՝ 342, որ է ար մի աւելի, և այս աւելի արս թիւ մի յառաջ խաղացուցանել զհասարակածն ի քանիս ամսոյն: Արդ՝ ի յահի ժԳ.էն ի յաւելեաց ի հինգն հասարակածն հասաւ նՄԲ ամն և եկեալ նահանջն բստ շորից շորից ամաց ի զոչգ թիւն եղև նՄԳ ամն առաջի ամն, որ նահանջի և սկսեալ ի նաւասարդոյ մինչև ի յաւելեացն ի հինգն և կատարեաց զտարին 346 ար, 346 ար, մինչև ի շորս



ամն նահանջի, որ է ՆՄՁ ամ: Եւ աւելի ամն արն նահանջի, այլ ոչ գտեալ աւելի նահանջի ամս, որ էր ՆՄՁ ի Հին (տարիս), որպէս յանցեալ ամսն Հին տարին, վասն այն տեսն, զի // առջին ամ

27ա նահանջին նոր ապի և շորդա՝ Հին: Զի ՅԿն արն տարոյն ի շորս ամն ի յաւելեացն ի Հինգն լմնեաց ի Հին տարին: Եմուտ հասարակած ի նոր տարին ի նաւասարդն և վասն այս անկաւ նահանջն ի Ֆարա թիւն: Զի այս, որ նահանջս պիտէր որ գայր ՆՄՁ ի գոյգ թիւն, որպէս որ գայր հանապագ մինչև ցայս, և վասն ոչ գտանելոյ աւելի աւելի արն նահանջի ի Հին տարին, եմուտ ի նոր տարին և խաղաց հասարակածն և նահանջն ի ՆՄԷն ի Ֆարա թիւն, որ շարժեաց զամենայն կանոնեալսն և հՀան ի միտքանութենէ ազգացդ և զեթնեբեակս, զվերագիրս, զլրմունս, // և զնահանջս և զայլսն ամենայն:

27բ

Հարց. Մեք զաւելի թիւս գայս ընդունի՞մք ի համարս թուականին հոտոմոց, եթէ ոչ:

Պատասխանի. Գրտեա, զի յորժամ զյարկայն կալնուս ՅԳ և զհայ թուականն ի վերայ բերես և առնես հոտոմ թուական ոչ կարես ևթնեբեակ և վերագիր առնել հոտոմի, եթէ ոչ թիւ մի պակաս կալցես զթուականն և զայն թիւն որ պակաս բռնես անտարակոյս զիտացիր զի այն թիւն չէ, և չէ ի թուականէն հոտոմոց այլ այս աւելի թիւս է, որ ի հասարակածէն եմուտ զանխարար ի թուականս հայոց: Եւ զու յորժամ զհայ թուականն ի վերայ յարակային բերես, այսինքն ի վերայ ՅԳ-ին զաւելի թիւն թուականիս մեր հետ

28ա իրն ունի և զհոտոմ թուականն բերէ թիւ մի աւելի, վասն այն ոչ բերէ զարուեստն: Եւ թէ կամիս, որ հոտոմ թուականն ուղիղ գայ և ի լման զարուեստն զեղեցիկ բերէ, որպէս Սարկաւագ վարդապետն արա, զի նա զաւելի թիւս հետ շրջանին գնայ, զի շրջանն որ ՇԼԹ ամ է, ՇԼԳ գնայ և հանէ զաւելի թիւն և մնացեալն սկիզբն լինի նոր շրջանի և գայ ամենայն ինչ ուղիղ: Եւ նահանջն դարձեալ անկանի ի գոյգ թիւն, և տես Շ.եակն, որ փոքր թուականան վարի, որ զլուխ բոլորին ապրիլի ԺԳ.ն է: Այսպէս և զու ուղղեա կրկին կերպիւ կամ զաւելի թիւն ի բաց ձգէ մեր թուականէս և գայ ուղիղ հոտոմ թուականն առանց յաւելուածոյ և կամ զյարակայն թիւ // մի պակաս կալ, այսինքն՝ ՅԳ և դարձեալ գայ ուղիղ: Բայց այս թէպէտ ուղիղ գայ, բայց կրկին սխալումն առնէ մի ամ, զի զյարակայդ, որ ՅԳ ամ էր հոտոմոց, յորժամ զհայ թուականն եզին, թիւ մի պակաս առնեմք, յորժամ այսպէս ուղղեմք, այսինքն զի ՅԳ կալմումք և երկու և երկրորդ զի ծածկէ զյաւելեալ թիւս, որ ի մեր հասարակածէն եղև, բայց զու զՅԳ.ն ամդ ողջ պահէ, որպէս էրն և զաւելի թիւն ի մեր թուականէն հան և բեր ի վերայ ՅԳ.ն և գայ ուղիղ: Իսկ թէ զաւելին ոչ հանես, իբր թէ զժուար թուի քեզ, զի թուականս մեր աւելի թուովս բերի, զու ի հոտոմ թուականէն թիւ մի պակաս կալ և զարուեստն ուղիղ բեր և այն ոչ առնէ զհոտոմ թուականն թիւ մի պակաս, զի այն մեր աւելի թիւն է, կու պակասեցուցանես, որ ի հասարակածէն եղև և

28բ



29ա ոչ է ի հոռոմ թուականէն, զի յայնժամ գայ հո//ոսմ թուականն ուղիղ և լման, յորժամ գմեր աւել թիւն ի բաց հանես: Իսկ ըստ հայտմն այսպէս ճանաչէ զթիւրն և զուղղեալն, զի յորժամ աւելի թուովս և թնրեակ և վերադիր առնես և կամ այլ ինչ և բերէ ուղիղ, գիտացիր, զի այն ուղղեալ է և թէ իցէ վերադիր և կամ այլ ինչ ըստ այլոմ եղանակի և արուեստի և առանց թիւ մի պակաս կալնելոյ, ոչ բերէ զարուեստն այն են ի սկզբանէ կաճոնեալքն առաջին հարցրն, որ զամս ՆՄԲ ուղիղ բերէր և յորժամ աւելի թիւս ի ներս անկաւ, այլ ոչ կարէ բերել, և թէ ոչ թիւ մի պակաս կալցես:

Դարձեալ ծանիր, զի զաւելի թիւս զժուար է հասարակ մտաց  
29բ իմանալ, զի զանխարար եմուտ, վասն այն զանխույ // և ծածուկ է հասարակ տումարագիտաց, վասն այն երկարեցի: Բայց և թէ կամիս յայտնի և զիրաւ ճոնաչել զաւելի թիւս, զու այսպէս իմալ, զի թուականս մեր ի գլուխ Շ. եկ շրջանին եղաւ, որ ապրիլ ԺԳ է և մեկ անգամ զանձամբ եկեալ շրջանս ՇԼԲ ամ և զարձեալ նոր սկսեալ: Եւ այժմ նոր շրջանս ՅԻԴ ամ է, որ առնէ ՊՄԶ, և է ամս նահանջ և թուականս մեր է ՊՄԷ, ահա տես յայտնի զաւելի թիւս որ եղև ի հասարակածէն, զի յորժամ թուականն առնես և չորեքպատկես, գտանես զնահանջի ամն, նահանջի առաջին ամ, որ է ամենին թիւր և սխալ և սուտ: Այսբան բաւականացի վասն թուականիս: Եւ այժմ զվեցերորդն արա թուական ըստ խրատու պատճէն-  
30 էն, որպէս և // հրամայէ:

#### ՇՄԼԱԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Արիմեցու ներկա աշխատութիւնը համառոտագրութիւն է հանդիսանում Հովհաննես Իմաստասերի կազմած տոմարի: Արիմեցին իր այս աշխատութիւնն ներածականում, ուղղված իր ուսուցչին՝ Գեորգ Երզնկացուն, հայտնում է, որ իր ներկայացրած աշխատութիւնը ինքնուրույն ստեղծագործութիւն չէ, այլ համառոտագրութիւն է հանդիսանում Հովհաննես Իմաստասերի տոմարական աշխատութիւնների: Նկատի ունենալով ահա այս պարագան, ինչպես նաև հաշիվ առնելով, որ ներկա աշխատութիւնը պարզ պատկերացում է տալիս մեզ հայկական թվականի փոփոխութիւնների մասին, ուստի և անհրաժեշտ համարեցինք հրատարակել նրա այն հատվածները, որոնք վերաբերում են հայկական թվականին:

Նշված աշխատութիւնից մյուս մասերը մենք բաց ենք թողնում, որովհետև նրանք, ինչպես ասացինք, վերցված են Իմաստասերի աշխատութիւններից, և քանի որ այդ աշխատութիւններն արդէն մտնում են ներկա հրատարակութիւն մեջ, ուստի նույնը կրկնելու անհրաժեշտութիւնը չկար:

Հակոբ Արիմեցու այս աշխատութիւնը մեզ հայտնի է ինը ձևագիր բնագործինակութիւններով, որոնցից մենք վերցրել ենք ՀՊԶԿ-ի N 2017 ձևագրի բնագործինակութիւնը, որը 1637 թվից է:

Հակոբ Արիմեցու Հովհաննես Իմաստասերից համառոտած այս տոմարի կապակցութիւնը մենք անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հայկական թվականութիւն խնդրին և հայտնել մեր կարծիքն այդ հարցի մասին:

Տոմարական առաջին առեղծվածը, որն անմիջապէս կապված է հայկա-

կան թվականության սկզբնավորության հետ, այդ հին հայկական տոմարի հարցն է ընդհանրապես:—Մենք ունեցել ենք արդյոք հին հեթանոսական տոմար, թե ո՛չ:

Պատմահայր Մովսես Խորենացին այս հարցին, ինչպես հայտնի է, դրական պատասխան է տալիս: Նա հայտնում է, որ մինչև Արտաշես առաջինը (189—160) հայերը «...մեծամեծ արուեստից և զիտութեանց ունայնացեալք էին... և այսպիսի զիտութեանց՝ կա՛մ անփոյթ արարեալ, և կամ ոչ հասեալք՝ զշարաթուց ասեմ, և զամսոց և տարեաց բոլորմանց... Եւ այս ամենայն յօրինի յառույս Արտաշեսի» (Խորենացի, էջ 175):

Նիրակացին հայկական ամիսների սկզբնավորությունը կապում է Հայկ նահապետի հետ և բերում ավանդական այն տեղեկությունը, որ իբր թե «նաասարդի, Հոռի, Սահմի և Մահեկի, Արեգ և Մարերի՝ դասերք էին Հայկին, Տրէ, Քաղոց, Արաց և Հրտաից՝ որդիք էին Հայկին» («Տիեզ. և տոմար», էջ 76—77):

Տոմարագետների ոմանց կարծիքով հեթանոսական հայկական թվականության սկիզբը կապված է եղել «Հայկյան» կոչվող համաստեղության հեփտոսիկ ծագման հետ և սկիզբ է առել 2494 թ. մեր էրաչից առաջ (պրոֆ. է. Սեմյունով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, «ՀՍՍՌ Մատենագարանի գիտական նյութերի ժողովածու», I հատոր, էջ 22—23):

Վերին աստիճանի հետաքրքիր հարց է պարզել հին հայկական տոմարական սխառեմը, տոնվող հեթանոսական կարևոր տոները, նրա ազդեցությունը քրիստոնեական հայկական տոմարի վրա և այլն: Իհարկե, այդ զժվար մի դործ է, քանի որ հին հայկական տոմարի մասին մեզ հասած տեղեկությունները շատ կցկտուր են և զժվար են ենթարկվում գիտական ընդհանրացման, բայց քանի որ քրիստոնեությունը ի վիճակի չգտնվեց հիմնովին արմատախիլ անել հեթանոսական շրջանից եկող շատ սովորություններ և հարմարեցրեց նրանք նոր վարդապետությանը, ապա հնարավոր է քրիստոնեական շերտով ծածկված հին հեթանոսական տոմարի որոշ բեկորներ գրանել հին հայկական մատենագրության մեջ:

Մեր կարծիքով, նախ՝ անվիճելի հեթանոսական ծագում ունի հին մատենագրության մեջ պահված մեր ամսօրերի անունները: Հնում զենդերենի, պարթևերենի և պարսկերենի նման, հայկական ամիսների 30 օրերն ունեցել են իրենց անունները: (Տե՛ս «Հայկական աշխարհ», օրագիր, 1888 թ., էջ 261):

Հայկական ամսվա այս 30 օրանուններից երեւում է, որ հեթանոսական հայկական աստվածների համար սահմանված են եղել առանձին օրեր՝ 1-ին Արեգն է, 7-ին՝ Աստղիկը, 8-ին՝ Միհրը, 14-ին՝ Վանատը, 15-ին՝ Արամազդը, 19-ին՝ Անահիտը, 27-ին՝ Վահագնը և այլն:

Ամսօրերի շափ գրեթե հավասար հնություն ունեն օրվա 24 ժամերի անունները, որոնք ընդօրինակված են լինում «Հայոց մեծաց» տոմարական «պատճէե»-ներում:

Հեթանոսական ի՛նչ տոներ են եղել, որոնք անցել են քրիստոնեության: Մեր կարծիքով այդպիսի տոներից պետք է համարել՝ «ամեն օր»-ը, «գրքն-զեզ»-ը, «վարդավառ»-ը և «համբարձում»-ը:

Կարևոր է նաև պարզել հայկական թվականության սկզբնավորության հարցը: Հայկական մեծ թվականը հայ մատենագրության մեջ շատ խոր հնու-



թյուն շունի. նրա գործածությունը սկսում է VIII դարի երկրորդ կեսից: Վերանայման կարիք ունի բանասեր Գ. Հովսեփյանի կարծիքը՝ հայկական հնագույն թվականի գործածությունը Անիի միջնաբերդի բաղիլիկ եկեղեցու հարավային պատի արձանագրությունը համարելու խնդրում, որը, իրր թև, 622-ից է: Մեզ հասած ամենահին հայկական թվական պարունակող արձանագրությունը, որի գեմ չի կարելի առարկել, այդ Ուխտանեսի Թալինի եկեղեցում թողած արձանագրությունն է՝ 783 թվականից: Հայկական թվականների մասսայական գործածությունը սկսում է միայն IX դարից:

Թվականների սկիզբը, սովորաբար, կապված է լինում պատմական որևէ կարևոր իրադարձության հետ, իսկ հայկական թվականը, որը կապված չէ ոչ մի իրադարձության հետ, ինչպես ցույց ենք տվել մեր «Շիրակացու մատենագրություն» մեջ, կապված է եղել Շիրակացու ՇԼԲ աղյուսակի հետ: Հովհաննես Իմաստասերի ներկայումս տպագրվող տոմարական աշխատությունները լիովին հաստատում են տարիներ առաջ մեր արտահայտած կարծիքը:

Հայկական թվականի հետ կապված մյուս կարևոր հարցը՝ այդ տարեմտի հարցն է. հ'րր է եղել հայկական տարեմուտը: Հայանի է, որ տարբեր ժողովուրդներ տարբեր ամանօրեր են ընտրել իրենց համար, ոմանք ընտրել են մարտի 22-ը, ոմանք՝ սեպտեմբերի 1-ը, ոմանք՝ հունվարի 1-ը և այլն: Հայկական տարեմուտը Հովհաննես Իմաստասերը սահմանել է օգոստոսի 11-ին: Հին հայկական մատենագրության մեջ տեղեկություններ կան, որ իրր հնում ևս հայկական տարեմուտը եղել է օգոստոսի 11-ին: Հայագիտության մեջ սակայն կարծիքներ են հարյնվել, որ հայկական տարեմուտը եղել է ամառնամտին:

Մեր ուսումնասիրությունից պարզվել է, որ հին հեթանոսական հայկական տարեմուտը անվիճելիորեն եղել է մարտի 22-ին՝ գարնանային գիշերահավառարի օրը: Այդ մասին մնացել է մի թանկարժեք վկայություն 2ՊՁՄ-ի N 1999 ձևագրում, որին մենք կանդրադառնանք առաջիկայում մեր ուսումնասիրություններից մեկի մեջ:

Հայկական թվականության հետ կապված մյուս կարևոր հարցը հայկական և քրիստոնեական թվականների միջև եղած տարբերության հարցն է:

Հայագիտության մեջ լայն քաղաքացիություն ունի այն կարծիքը, որ հայկական և քրիստոնեական թվականների միջև եղած տարբերությունը 551 է: Սակայն ուշագիր ուսումնասիրելով հին հայկական մատենագրությունը, մենք եկել ենք վճռական այն համոզման, որ այդ երկու թվականների միջև տարբերությունը մեծ մասամբ ոչ թև 551 է, այլ 553:

Մեր ուսումնասիրությունը մեկ բերել է այն համոզման, որ միջնադարյան հայ մատենագրության մեջ գործածվող քրիստոնեական թվականն այն թվականը չէ, ինչ որ գործ ենք անում մենք ներկայումս, այլ քրիստոնեական այսպես կոչված հայկական հաշվումների թվականը, որը երկու տարով ավելի է, քան մեր ներկայումս գործածած թվականը, այլ խոսքով ասած, ըստ հայկական հաշիվների, Քրիստոսի ծնունդը եղած պետք լինի մեր ներկա թվականից 2 տարի առաջ:

Մենք այս հարցի վրա չենք ուզում ծանրանալ, քանի որ ավելի մանրամասն մենք մտադիր ենք խոսել մեր մի այլ ուսումնասիրության մեջ: Առայժմ միայն կասենք, որ հայկական թվականը ներկա քրիստոնեական թվականի



վերածելու համար անհրաժեշտ է առաջվա նման գումարել 551, իսկ քրիստոնեական թվականի գործածության ղեպքում՝ նրանից հանել ո՛չ թե 551, այլ 553:

Ինչ վերաբերում է արարչության թվականներին, ապա բյուզանդական կամ կայսերական թվականից պիտի հանել ո՛չ թե 5508, այլ 5510, «արարչութիւն» յոթանասնից կոչվող թվականից պիտի հանել ո՛չ թե 5198, այլ 5200, արարչության ալեքսանդրյան թվականից պիտի հանել ո՛չ թե 5423, այլ 5425, արարչության Շիրակացու թվականից պիտի հանել ո՛չ թե 5279, այլ 5281 և արարչության հրեական թվականից պիտի հանել ո՛չ թե 5271, այլ 5273:

Սակայն այստեղ անհրաժեշտ է մի վերապահություն կատարել. հայ մատենագրության մեջ պատահում են առանձին ղեպքեր, երբ պետք չէ մեր առաջարկած այդ փոփոխությունը կատարել. այդ այն ղեպքերումն է, երբ թվականի գործածությունը գալիս է հայ ունիթոսական կամ նրանց ազդեցության տակ գտնվող շրջանից, որոնք գործ են ածում ո՛չ թե քրիստոնեական հայկական թվականը, այլ մեր ներկայումս գործածած հոռմեական թվականը:

26. ՀՈՎՏԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԳԱՊԵՏ ՀԱՂԲԱՏԱՅՈՒ  
 «ՎԱՍՆ ՇԱՐԺՄԷՆ ԵՒ ՍԵՍԸՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐԻ»

[1]

- 376ա Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետ, Սարկա-  
 ապէն՝ զիր գրով յազգս ամենայն եթէ զի՞արդ ունի երգ սաղմո-  
 սին ասացեալ. «Դու խորտակեցեր զգլուխ վիշապաց ի վերայ ջուրց-  
 Դու փշրեցեր զգլուխ վիշապին և հառուր զնա կերակուր զարացն  
 հնդկաց»։ Ի զիմաց գերելոց ժողովրդեանն ի Բարելոն մատուցանէ  
 զողբերգական պաղատանս Դաիթ Ասափաւ հանդերձ և այլովք  
 երգակցաւք. || «Ընդէ՛ր մերժեցեր, աստուած, ի սպառ. բարկացաւ  
 սրտմտութիւն քո ի վերայ ժողովրդեան քո»։ Եւ ի կարգ արկեալ  
 մի ըստ մի՞ջէ՛ զանցսգ ծնգակ կրիցն, որ ի Քաղզէացոցն զաւերակ  
 քաղաքին Երուսաղէմի. և զի ելեան ազգին գերութիւն, զկիզումն  
 տաճարին և զի խորհեցան լոկոցոցանել զամենայն տունս Երուսա-  
 զեմայ։ Եւ ապա ի վրէժխնդրութիւն կոչելով զաստուած, ասէ.  
 «Մինչև յերբ աստուած նախատէ թշնամին, բարկացուցանէ հա-  
 կառակորդն զանուն սուրբ քո»։ Յուշ առնէ և զառաջին սքանչե-  
 լեացն վասն ազատութեան Երուսաղէմի, վիշապս անուանէ զնա-  
 խարարս, իսկ վիշապ... զինքն իսկ զլխովին։ Այլ զի ասէ. «Եթէ  
 377ա հառուր զնա ի կերակուր զարացն || հնդկաց»։ Այս հնդիկք, զրա-  
 ցիք Եգիպտոսի, հկին ի բուն Հնդկաց, որ յարեկա հարաւոյ առ  
 Հնդկս գետով ասեմ. և այնքան զարացան ի պանդխտութենէն, որ  
 և բազում անգամ տիրէին Եգիպտացոց և թագաւոր ի վերայ նոցա  
 չինքեանց կացուցանէին։ Եւ յորժամ կորեաւ փարաւոն իւրովքն առ  
 հասարակ, ևս առաւել քաջալերեցան աննու յաւարի զազգն Եգիպ-  
 տացոց և ծառայեցուցանել զնոսա, վասն որոյ ի կերակուր տալ  
 ասէ զվիշապն փարաւոն զարացն Եգիպտացոց՝ զողջոյն ժողովուրդ  
 ժառանգութեան նորա յանուն նորա կոչելով. քանզի յուտճահալ ի  
 յափշտակելն և ծառայեցուցանել, որպէս և ասէ իսկ աստուած  
 բերանով սուրբ մարգարէին վասն իւրոյ ժառանգութեան Իսրա-  
 յելզի կոչեցելոյ յԱսորեստանեացն || վշտացելոց, որ կուտէին  
 377բ զժողովուրդ իմ որպէս կերակուր՝ զալն օկնարկելով։

Այլ միւս ևս հարցումն ձեր վասն գեղջկաց տգիտաց վիշապին անուանողաց, ոչ ունին դժուարինս և տարակուսելի ինչ, քանզի ոչ եթէ վիշապ է փոշին մանուածոց ի փոթորկէ գիանականէ յաւրս խաղացելոց, այլ հողմ ինչ է պտուտկեալ՝ պատեալ զմիմեամբք լցեալ հողմով յերկրէ, զի յորժամ դէմ ընդ դէմ միմեանց փչիացեն և հանդէպ գտանիցին, առ ի շղթկելոյ շրջան իմն առնուն ի միասին գնալով պատմամբ զիրերաբ. և քանզի ոչ գատանին և ոչ խոտորին ի միմեանց, մինչև ի բարձրութիւն աւզոյղ վերնոյ, այնպէս // երկին. և լինի այս երբեմն բուռն և սաստիկ զարուրեամբ, իսկ երբեմն հանդարտագոյն և նուազ. առասպելական ստութեան ոմնքն զնկէ և հաւատալ մի երբէք յանձն առնուցուս վիշապ զնս անուանողաց, քանզի չիմարաց են աչգպիսի կարծիք, որպէս և որք վասն լուանոյ խաւարման աղճատին ի տիտանոյ վիշապի դատարկարանելով:

Այլ վասն որ ի Յոր վիշապին էիք հարցեալ, բազում ունի տեսութիւն բանն, որ ոչ է այժմու ձեռնարկութեանս: Սակայն փոքր ինչ և մանաւանդ զխնդրելին ձեր ծանուցուք համառատ բանիւ: Նա է սկիզբն արարածոց տեառն, ասաց որ խաւրճան ընդ Յոր յամպոց և ի մրրկի: Ոչ ամենայն արարածոց, այլ որ ի ջուրս կու ածին: Քանզի Մովսէս զերկինն առաջի գրէ արարածոց ամենայն // ի սկիզբն. և է յաղթ կենդանին մարմնով և անհնարին մեծութեամբ, թագաւոր որոտի շարսն, ըստ որում և գրեալն իսկ է. զոր և անտանին Լեւիթան ժողովք իմաստ[ն]ոց, քանզի որպէս է Բե[ն]մովդ ցամաքին սողնոց կենդանեաց թագաւոր, և զազանաց առեծ. այսպէս և ջրային արարածոց շրջան, որոյ Լեւիթան միւս առանց լծորդի ընկերութեան ոչ ծնեալ յումեքէ, վասն զի առաջին յարարածս աստուծոյ զաւղական կենդանիս և ոչ ծնեալ զոք չինքենէ, քանզի ոչ տուա նմա սիրել աճմամբ ձեռն ծնրնդեան: Մահ է պատճառ աճականաց ի ծնրնդեան, զի մի ապականեսցին սեռք և տեսակք կենդանեաց, այլ փոխանորդութեամբ մնասցէ ամենայն առանց եղծման և ապականութեան ի պակասութենէ նմա. վասն զի ոչ մեռանի, ոչ էլ հրամայեցաւ ծնրնդա[ն]ործութեամբ յառաջխաղացութեամբն. և ունի գործ զարգելումն ջուրց ներքին և անգրնդոց, քան զյատակս վերին ծովու, քանզի զահապին ծանրութիւն մեծութեան իրոյ մարմնոյն կեցուցեալ ունի ի վերայ սառցկարխող հոսանաց յորդութեան ջուրցն, այնքան միայն թոյլ տալով ջուրցն ելստեան, որքան հեշտ և դիրքին որովայնի մարմնոյն իրոյ թուեսցի և իցէ: Եւ այս գործ մեծի նախախնամութեան աստուծոյ, զի բիծու (?) վառցի ծածկութեամբ ջուրց երկիրս ցամաք, որպէս ի սկիզբն. ոչ եթէ զի զանդրնդային բղխմունս նոր ստեղծ զամենայն յունչէ և դեղեցկապէս նախախնամէ, ոչ կարէր այլովք արգելու



379բ

կամ խտփանել, զի մի բնաւ իսկ լինիցի, այլ որպէսզի զիւրոյ  
անշափական գաւրութեան և զիմաստութեան || հանդէս ցուցցի,  
ըստ որում ետես Յունան յանդուն[դ]ան կառավարելով, և երկիցեն  
ի նմանէ ամենայն ազգք, այնպէս կամեցաւ մատակարարել. բայց  
բազում ինչ ի բանից պատմութենէն գնմանէ այլաբան արարեալ  
լինի ի վերայ իմանալոյ վիշապին կամակորի. և այդ յազագս  
զորին բաւականացի:

## [IV]

380ա

Իսկ վասն շարժմանց, թէ ուստի լինին, է պատճառ այսոցիկ  
ը[ն]ութիւն հողմոց անզընդայնոց, քանզի երակք ընդարձակք են  
գնացից հողմոց երկրի, որպէս և ջրոյ ընթանալոյ. վասն զի ըստ  
որում ի վերայ ծովու հիմունս էարկ բարձրեալն երկրի և ի վերայ  
զետոց պատրաստեաց գնա, այնպէս և ի վերայ հողմոց գծանրու-  
թիւն սորա կացոյց ամենահնարապէս և կարողարար: Իսկ յորժամ  
թիւթ[ի]կացին շունչք հողմոյն յընտանի և [ի բն]աւոր ճանապարհացն  
ըստ իրիք պատահման յաղխս և ի փապարս ստոր երկրոյս, հարկ  
լինի սասանել երկրի մինչև ուղ[ղ]կացին գնացք շնչմանցն հողմոց.  
այլ երբեմն սաստկագոյն լինի շարժումն ըստ բռնութեան հողմոցն  
և կործանական, իսկ երբեմն համարձակագոյն վասն կակղութեան  
շնչմանն յուղիղն ընթանալոյ և բարեկարգապէս ոչինչ վնասի եր-  
կիր, բայց խոտորումն գնացիցն և առաւելութիւն բռնութեան զզըր-  
դումն երկրի գործ է. է երբէք, զի թարթափէ միայն, և է, զի մօրնշումն  
և եթ գործ է, զոր մօրնշողական կոչեն, և անաւ[ա]րութեան պատահիլ  
երկրի՝ պատառի, ջուր կամ հուր կամ վէմս ի վերայ ձգեալ ըն-  
կենու. և այլ երբէք գոչին միայն լսեցուցանէ: Իսկ արարիչն

380բ

ամենայնի յորժամ կամիցի ներել մեզ || ընաւորական իւրովք  
քաղցրութեամբ, սանձակործեալ ըն[դ]գրկէ զբռնութիւն և աեսեալ  
յանդարձութեան զազգս մարդկան և շշահալ ինչ յերկայնմտու-  
թենէն, ի տանջանս հարուածոց մեզ ներգործէ, որպէս զի և զայս  
ի վերայ [երկրի] ի պատուհասս. և եթէ ընդէ՛ր բարիք ընդ շարս  
մեռանին և անմեղք ընդ մեղատրս, ի բանէ անտի՛ ուսցիս, զոր  
արարեալ է մեր ըստ կարողութեան յազագս մեծի և սաստկական  
արեւմտեալ շարժմանն:

\* \* \*

Եւ զայդ բաւական համարեալ, թող զուք զերկայնմտութիւն  
բնախօսութեան:

Հովհաննես Իմաստասերի տիեզերագիտական-օդերևութաբանական քովանդակությունն օճեցող ներկա աշխատությունը մեզ է հասել երկու խմբագրություններ՝ համառոտ և ընդարձակ: Ընդարձակ խմբագրության տեքստը մեզ հայտնի է երկու ընդօրինակությամբ՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1212 ձեռագրով՝ գրված 1290 թվին (թ. 376—380), առանց վերնագրի, և Վենետիկի Մխիթարյանց մատենադարանի ձեռագրերից մեկում՝ «Վասն շարժման և սասանութեան երկրի» վերնագրով:

Համառոտ խմբագրության ընդօրինակությունները ևս երկուսն են՝ Վիեննայի մատենադարանի № 324-ր՝ արտագրված 1305 թվին և Նույն մատենադարանի № 442 ձեռագիրը՝ առանց հիշատակարանի:

Նշված խմբագրություններից առաջինը հրատարակել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը «Հովհաննես Սարկավազ Վարդապետ Հաղբատացու Վասն շարժման և սասանութեան երկրի» խորագրի տակ (տե՛ս «Հայկ. ՍՍՌ ԳԱ տեղեկագիր», հասարակական գիտությունների սերիա, № 1, Երևան, 1934, էջ 77—80), իսկ համառոտ խմբագրությունը հրատարակել է Հ. Սսկյանը՝ «Հանդէս ամսօրեայ»-ում (1925 թ., էջ 242—243): Հովհաննես Իմաստասերի այս աշխատությունը նորերս հրատարակել է նաև Գ. Հովսեփյանը իր «Յիշատակարաններ»-ի առաջին հատորում:

Վերև հիշված երկու խմբագրություններից նախնականը և հեղինակի բնագրին հարազատը մենք համարում ենք ընդարձակ խմբագրությունը և այն էլ զետեղել ենք ներկա հատորում՝ վերցնելով պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի հրատարակությունից:

27. «ՅԱՂԱԳՄ ԽՐԱՏՈՒ ՄԸՆԿԱՆՅ...» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

119ա ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔՍԶ[ԱՆԱՅ]Ի ՅԱՂԱԳՄ ԽՐԱՏՈՒ ՄԸՆԿԱՆՅ ՍՈՒՂ ԻՆՉ  
ԲՆԱԽԱԻՍՈՒԹԵԱՄԲ

Երկու միայն են, որովք զլինելութիւն ամենայնի սովորեցին  
սահմանել, զորս է գտանել մանաւանդ առ տրամաշքականս՝  
5 զզարութեամբ ասել և զներգործութեամբ: Եւ է զարութեամբն ար-  
մատ իմն և սկիզբն ի ներգործութիւն գալ հանդերձելոցն: Այսինքն՝  
որ շնն է այնինչ կամ թէ էութիւն զգալի, բայց կարութիւն է լինել  
յայնմանէ, որ ի լինելոցն է: Ըստ որում, և զնիւթն առնուն ոմանք  
յորանց բնայխաւից: Սակայն նիւթ անմարմին ո՛չ ինչ է, նայե  
10 ոչ կարաւո նիւթոյ աւտար խոր հաստիչն ամենայնի է: Զի թէպէտ  
և ասեմք ի նիւթոյ զամենայն տեսակայգործիլ առ աստուծոյ ո՛չ  
ի յարակայէ և յանեղէ, ըստ փիլիսոսփայոցն, որպէսզի գոլ յաւի-  
տենից զնիւթն աստուծոյ, այլ առ ի նմանէ նախագոյնայ զնիւթն  
ի ճահաւորութիւն ընդունել տեսակ խոստովանիմք, որ և զտեսակ-  
119բ սըն շնորհեաց: Եւ հակայբանեմք || նոցա յեղծումն առասպելա-  
կանացն կարծեաց և բանից այսպէս: Զաստուած ո՛չ անգործ եր-  
բեք գոլ և պարապորդ նախ քան զլինելն ամենայնի, զի մի՛ դա-  
տարկութիւն ի միշտ բարին և բարեգործակն և ի միայն մերձե-  
ցուցանիցեմք, այլ զարութեամբ միշտ գոլ արարիչ. և իմանալ  
20 աստուածայպէս զամենայնի զեղեցկայարմար և քաջայգիր կազմու-  
թիւն: Քանզի ոչ ժամանակաւ աստուածութիւնն և կեսցէ ի կատա-  
րումն: Եթէ արարիչն ո՛չ գոլ անկատարութիւն իցէ, իսկ գոլն  
արարիչ կատարելութիւն, ապայ ուրեմն իմանալովն, զոր և թէ զա-  
րութեամբ որ ասացէ, եղիցի միշտ արարիչ: Իսկ ընդ ներգործու-  
25 թեան, որպէս զի սկիզբն գոլոյ տալ էից ամենեցուն յետոյ, յորժամ  
կամեցաւ, ըստ վայելման ամենայն կարաւո իւրոյ իմաստութեանն:  
Եւ այսու յեղանակաւ ասացեալ լինի հայր իմանալեացն: Իսկ  
զգալեացն սկիզբն լինելութեան տուեալ, թուի/ ինձ, ոչ մեղան-  
120ա շել, եթէ զկամսն զայն և զիմացումն աստուածային մշտնջեն/յաւո-  
30 բական յամենայնի կազմութիւն անուանեսցէ որ նիւթ անմարմին,  
յորմէ տեսակագործեցան եղականք, նիւթ ասեմ ո՛չ իբրև մասն ինչ  
և ենթակայ կազմածոյն, ըստ որում ասր ոստայնի, այլ անմարմին



բարեգործակ կամս և զարութիւն: Քանզի ա՛յլ է նիւթ ենթակայ  
 գործոյ և ա՛յլ զարութիւն և կամք աստուծոյ, զի սա առնէ, իսկ  
 35 նայ լինի: Եւ զի՞նչ հաւատարութիւն է արարչի և արարածոյ: Արդ՝  
 նիւթ գոյական ո՛չ էր, իսկ անմարմինն ո՛չ ինչ է, քանզի և ո՛չ նիւթ  
 յայտ է արած գոյ աստուծոյ նախ քան զտեսակագործիլն: Դիւրին  
 և կարի իսկ քաջ էր նմա առանց զնիւթն նախագործելոյ կատարեալ  
 տեսակս ի գոյզն վայրկենի բաց անել՝ կամելով միայն,  
 40 ալլ ո՛չ կամի անդաս և անկարգս ինչ յարինել, զի և ո՛չ յարի-  
 նուած իսկ անուանեսցի: Ըստ այսմ, և շե ևս այժմ ըստ ներգործու-  
 թեան լեալք են զարութեամբ: Իմաստասիրէ վասն այսպիսոյ իրի  
 և առաքեալ: Ընդ Աբրահամու ասէ և Դեւի տասանորդիչ ժողովրդ-  
 120ր դեանն իսկ տասանորդեցան տակաւին յերանսն // զոլով Աբրա-  
 45 համու, յորժամ էլ նմայ ընդառաջ Մելքիսեդեկ և այլոր ընդրեաց  
 զմեզ նովա յառաջ քան զլինել աշխարհի: Իսկ Արիստոտելէս եր-  
 կուս ախորժէ անուանել՝ զոր ի մեզ բանականն, ըստ զարութեան  
 զոմն և զմիւսն՝ ըստ ներգործութեան: Զզարութեամբ զմիտսն  
 ամենեցուն ունել, իսկ ըստ ներգործութեան՝ կարի յոյժ սակաւաց,  
 50 իմաստասիրաց միայն: Եւ զզարութեամբն բնաւորական գոյ, իսկ  
 զներգործութեամբն ի դրուատ մտեալ, որ է ուսմամբ և երկայսի-  
 րութեամբք առաքինայգործել և լինել կատարելայմիտ: Եւ նախայ-  
 շարիզ բանիզ զիտաւորութիւն ունի գայս: Զառաջին հասակն ո՛չ  
 տալ թոչ արտաքս ընդ զգայութիւնսն ցնդիլ մտացն, ալլ որպէս ի  
 55 մամուլս, խելյամութեամբ մեծաւ, առանց յապագման, յամե-  
 նայն կողմանց շարայպնդել ի զանազան ուսմունս իմաստութեան,  
 մինչ զի բնատրապէս ընտանենալ հանճարայսիրութեան կանոնի և  
 121ա ընդ աիոցն աճման // զարգանալ յաւէտ պնդափութութեանն  
 պարապման: Քանզի հասակաւ կատարելոցն և անազանայկոյից  
 60 երկբայելի է, տի ահա և անյուսալի բազում անկամ, և ոչ այնպէս  
 թէ և՛ պատահեսցէ երբեք ընդունել: Զի հոսանուտ և մշտայսահ  
 յառաջմունք ամանակաց քարշին տանին առանց հասանելոյ զան-  
 ցեալն և այնուհետև շեն ի միջի իսկ կանխայժաման և արագել  
 աճայպարմունք և զանցեալն գործեն ըմբռնելի և դիրտհոպ ո՛չ  
 65 միայն ներկայումն, ալլ և ևս արագայգոյն: Քանզի հաւաքելովքն  
 ի նմա յարանայ ի ներկայումն և քաջայոյս առ հանդերձեալն լինի  
 և հեշտաւ կարի յաղագս նախայկրթութեան կորդեալ ձգէ առ ինքն  
 և յայնմ զմնացորդս բաղցալեացն: Իսկ դերեացելոցն ի մանդու-  
 70 թեան և մտացն ի խամութենէ, վտարելոց ընդ զգայարանս ար-  
 տաքս և ունակացելոց ի նմա հակառակացն՝ զժաւորութեանց՝ թէ  
 121բ արդե՛ւր կամք երբեք լինիցին: Նախ առաջինն՝ // դժուար յոյժ սկըսը-  
 նայկարգութիւնն, զի այսպէս ասացից հիմնատրութիւն: Երկրորդ՝  
 ոչ դիւրին ի բացաճառաք բանին զանբանութեան լուանալ շարա-  
 շար գիծս: Զի զանգիտութիւն ևս այսու անուանեսցուք կոչմամբ:  
 75 Երրորդ՝ և գրելն կամ և գրիլն յաւագունացն: Չորրորդ՝ ոչ քաջա-  
 յարմար, թէ և պատահեսցէ որում և ոչ բնաւ իսկ ունի մակն՝ թէ իցէ  
 ևս որ ի քաջյամտաց: Արդ՝ նախատպաւորիլ և իրբե յեսանաւ

սրիլ առ գործականի, նմա կայ ստացութիւն առաջնականաւք վարժ-  
 մանց: Քաջայդէպ և բարեվայելուչ առաւել մանկականն բուսոյ և  
 80 ժամանակ: Անտի ներգործական մտաւորութիւն, անտի բարիոք  
 սովորութեանց բնաւորայպէս ունակութիւն. զգայութեանց, բազ-  
 մայխար պատրանաց անարմատութիւն ի նմանէ, յոքնաշափող  
 առաքինութիւն նախահոգ: Նա՛յ զգաստութեան մայր, արգարու-  
 122ա թեան ասպնջական, արութեան մարգարան, || վարդապետ համես-  
 85 տութեան, շարութեան, աւտարութիւն և լծակցի նորուն, վատութեան  
 տապար արմատահատ, ընտանութեան աստուծոյ հիմն, յիշատակ  
 գովելի առ կենաւք և յետ մահու: Նա զՈվսէփ առաւել, քան զտեսիլ  
 գեղոյ մարմնոյն գործեաց քաջաշնորհ: Նովա և Գանիէլ մեծարոյ  
 առջի ժողովրդեան և թագաւորին լինէր: Եւ Անանեանքն ոչ այլ ուս-  
 90 տեք, քան եթէ յայնմանէ զբարեպաշտութիւն համարձակապէս  
 ուսան քարոզել՝ նախ աստուածայնովք դաստիարակեալք ի Հրէաս-  
 տանի ուսմամբք և արինակաւք՝ տակաւին մատաղ գտիոցն բերե-  
 լով արբունս: Եւ ապա՝ ի գերութիւն վարեալք զբազդէացոցն հրա-  
 հանգէին ուսմունս, ո՛չ ամբարշտութեան նոցայ լինելովք հաւա-  
 95 նակիցք վասն առաջնոյ կրթութեանն բարիշքոյ, այլ որպէս զի և  
 աշխարհական անվնաս իմաստութեամբ լինիցին ի հրապարակա  
 122բ արքունեացն, երևի/ելիք քան զանուանիսն, և պաշտոնք ի բանս:  
 Զի եթէ ոչ յառաջին տիոցն զոգիսն ունէին ի սուրբ արինացն  
 կրթութենէ ամեթացեալս և կատարեալս, թերևս հաւանէին ընդ այլ  
 100 ևս մանկտիսն գերեալս յազգաց լինել կցորդ գերշացն կամացն և  
 իրաց: Բայց սորա՝ ոչ և սեղանոյ անգամ թագաւորին յանձն առ-  
 նուին ճաշակել: Ո՞վ հոգոց կատարելութեան: Ո՞չ իբրև զողայս  
 յարձակէին ինչ փափագանաւք ի զանազան տեսիլս թագաւորական  
 խորտկացն և ո՛չ ակն առնուին հրամա[յ]աւորին զայնտիկ երեսաց  
 5 բուռն և մեծազար թագաւորին, և ո՛չ բտ մանկան սովորութեան  
 մտաց սարսէին ինչ յիշխանական պերճութենէն. յորմէ տիեզերք  
 ամենայն և ոլորտակալք աշխարհի բոունք զողաին մեծաւ տազ-  
 նապաւ: Զի բնաւորեալ են միտք մանկանց և ի զոյն զի՞նչ սպառ-  
 նալեաց կամ ի փոքր ինչ շախտթելի երեսաց տեսլենէ, պակնուլ և  
 123ա խուսափել սաստկապէս: Իսկ նո//քա վասն զի խարսխեալք էին նախ  
 կատարելական հաւատովք և անսայթաքելի յուսով և ապայ ուր-  
 մամբք արինացն Մովսիսի: Զամենայն քամահէին որ ինչ մարդ-  
 կան թուիցի ահագին, ի մին և եթականակառոց եղեալ հայէին  
 թէ որպէս աստուծոյ գաանիցին քաջ բտ մտի և արինաց նորա  
 15 շատագովք: Եւ առաւել քան զար կան ցուցանիցին սէր առ աս-  
 տուած, առաքինութիւն ապացուցական: Ուտի և յետ հրաժարե-  
 լոյ ի ցանկալեացն բարեհամութենէ խահից և յարուեստապէս կազ-  
 մեցելոց ի նաշնոյ հացիցն և ի գինեացն ծաղկայհոտացն պա-  
 տեհագունից յարբումն թագաւորին: Ոչ գոնէ հաց անպաճոյճ և  
 20 խորտիկա անաւելորդս խնդրէին, այլ ունդս ցաւածեստոս և ջուր  
 լով և զայն ի պարարումն բարեշնորհապէս և ոչ առ կեալ և եթ,  
 որպէս եղեն իսկ, քանզի յոյն ոչ երբէք ամաշեցուցէ: Եւ արդ՝



ո՛ւր իցեն, որք ի պարծանս կրանից անկրանութեան իրեանց  
 123բ յառաջ մեզ բեր//են զհացսն սառամնեայս, պատկառեսցեն ի սե-  
 25 զանոյ անտի տղաոցն, որոց յոլովք են հեշտութեանցքն և ազատ  
 կամ սուղ պարկեշտաբանութիւնք: Այլ սոքա եթէ անպահպանաբար  
 ինչ ի զգայութեանց անտի ունել սովորեալ էին, ո՛չ այնպէս վաղ-  
 վաղակի զամենասբանչ սոռաբիսութիւնն լինէին քաւական ընծայե-  
 ցուցանել: Քանզի գողացելոց ի զգայարանաց մտաց թէպէտ և ոչ  
 30 անհնարին և անկարելի, սակայն ոչ զիրին է արագապէս յաղթել  
 սովորութեան ժամանակաւք զաւրացելոյ: Վասն զի ոչ ընդհատ  
 ինչ բնութեան բռնանայ, ուստի բնութիւն մակրստացական զոլ  
 սահմանեցին զսա մակացուք իրողութեան բանականի: Եւ եթէ ոչ  
 որ ըստ բնութեան է, իշխանական ի մեղ զկարգն ունիցի և զգահ  
 35 առաջին. ալ խառնիխուռն իմն, ստահակութեամբ ամենայն և  
 զմիմեամբք ելանելով ևղծանեն զարմարութիւն դասուն: Մարմին  
 բռնացեալ յաղթահարէ զգայութիւնս և զգայութիւնք ապստամբեալ  
 124ա հարս//տահարեն զմիտս և խտր արտաբա ըստ սահմանն մո-  
 լեզնարար ելանելով ի զգայութեանց անտի, բռնազրատեալք յանդ-  
 40 գուշութենէ գերեն զբաւանդակ՝ անզգամութեան շահեալ: Իշխէ  
 ցասունն մոլի, ցանկութիւն կատաղեալ ջեռնու, անիրաւութիւն՝  
 ազահեալ զլանայ նախ զբնութեանն պատշաճ ուղղութիւնս, և  
 ապա զազգականացն, որ ինչ առ վայելումն կամ առ կեալ մի-  
 այնից են հարկաւորագոյնք: Գծընդակագոյն քան զգազանացն ան-  
 45 խորհրդականութեան յարձակմունս յանձին բերել արորժելով:  
 Քանզի նոքա ըստ բնութեան սահմանս ո՛չ և միով խիք յանցանել  
 յանդգնին: Այլ և ի ներքս քան զբնութիւնն յոլով անգամ փոփո-  
 խեալ զսպին և հանդարտանան կամաց և նախախնամական հրա-  
 մանի անսալով աստուծոյ: Իսկ մարդ վայրենայմտեալ յանուսում-  
 50 նութենէ առաւել քան եթէ ի շար տրամադրութենէ և յունակութենէ  
 ո՛չ խնսալ սիրէ և ո՛չ իմիք՝ ո՛չ արինաց, ո՛չ բնութեան, ո՛չ նա-  
 խախնամական ինչ այցելութեան աստուծոյ: Եւ ողջախոհանալ  
 124բ տանջա//նաւք այլոց յանձն ոչ առնու, ալ և կրեալ ինքեամբք ոչ  
 զպատճառն զմտաւ ածել և չիշել փութայ և ոչ տրամականաւքն  
 55 ամփոփի կամ երկիրդիւս թափի, որպէս և ո՛չ փարաւունն այն կամ  
 քանանացիքն, և Սենեքերիմ և այլք յանզգայելոցն բազումք: Ան-  
 գրէն ուստի զիմեաց յառաջարկութենէն զարձցի բանս: Եթէ ո՛չ  
 զաւրութեամբ, ալ առ այսու և ներգործութեամբ զբանտկանութիւն  
 ընդունել ի մանկութենէ իրաւացի և ամենաբարիոք զոլ ծանիցուք,  
 60 որով սանձահարեալ ճնշին անարգելութիւնք չորձակման զգայու-  
 թեանց, որպէս զի մի մահու ըստ յերեմիայի, որ ասեն, մահ էլ  
 ընդ պատուանս ձեր և եմուտ յերկիր ձեր, լինիցին սոքա զործիք  
 մեզ, ալ տիրականգունին կենաց և որ բարիոքն է: Գիտես ապա-  
 65 առաջին և իշխանականագոյն, որպէս հոգւոջ միտք, երեսք, որ և  
 125ա՝ իմաստասիրակ և զեղեցկագոյն այլոցն, որովք ի գո//րծս ձեռաց  
 տեանն հայելով խոհականարար իմաստասիրեմք զեղեցկայպէս



- առաջին զարուեստարն կազմութեան ամենայնի՝ և դրաշահան-  
 70 արն ճարտարայպետի շինուածոյ անտի մեծութեան և գեղեցկու-  
 75 րեան նկատելով և ճանաչելով: Որպէս ասէ գիրն՝ փառաւորելոյ և  
 գոհանալ և սպա գրնութեան հետախուզել իրս հանգերձ պատճա-  
 րաւ և այլոց բիրուց, յոր և հաստատեցան իսկ լաւագունաց  
 պատրաստել զնա անալի և գործարան: Եւ զայնպիսին ո՛չ վասն  
 դատարկութեան և անխրատութեան տղեղացուցանել լիտի և յա-  
 րատ հայեցուածաւք: Մի՛ յազիկեցէ, ասէ, բեղ ցանկութիւն գեղոյ,  
 մի՛ յափշտակեցիս աշաւք բոլորովք, և մի՛ ըմբունեցիս արտեա-  
 րամք նորա, շարէ յինքենէ ըմբունումն և ծանրագոյն քան զմահ: Եւ  
 շիք զուգական կապանք կապանաց աշաց իւրոց: Եւ ոչ բազդատի  
 ըմբունումն ի ծառայութիւնն թշնամեաց ըմբուման արտեանաց իւրոց,  
 80 քանզի աշք անդգոյշք և ընդվայրյաձք ո՛չ դիտեն խտրել զթոյնս  
 125բ դառնութեան բալլամատեսակս և զմեծամեծս, որք իշուցանեն  
 յայս ներքինս դժոխոց: Անտի խեղկատակութիւնք և տղեղաբանու-  
 րեանք, անտի այրումն մտաց անհնարին բոցով և տանջանաւք ոչ  
 85 թէ թեթեւագոյնք ինչ քան զգեհնին հրոյ, անտի և ձիք իգամոլք  
 մարդիկ իւրաքանչիւր որ ի կին ընկերի իւրոյ վրնջելով ամաշեմ  
 զանամալութիւն այնպիսի աշաց և զլպրշուրթիւն յանդգնութիւն  
 հաւասարապէս ի մէջ բանիւ ածել և յանդիման կացուցանել: Այլ  
 և ակն ածեմ ի լսելեաց պարկեշտագունից և ի դիմաց ամալթա-  
 ձից, քանզի անձն համեստ և ընդ լուր բանից անմարտոյ դժուարի:  
 90 Եւ շիկնեալ ամաշէ վասն անամալթից, որ յաղագաւ վասն այսպի-  
 սեանցն աղճատարանութիւնս լուրթեամբ կնքեցից: Բայց խուն ինչ  
 շահից վասն աշաց բարեխիւրաց նշանակել աւելորդ ինչ ո՛չ վար-  
 կանիմ: Առ վերագոյնն ասացելովք, աշք անզաշոտք և խրատեալք  
 ո՛չ միայն յանգործիցն փախչեն զգուշապէս ի վնասուց, այլ և եթէ  
 95 դէպ երբէք լիցի անդիտանալ ի պատշաճիցն ի պատճառէ իմեքէ  
 126ա պատահեցելոյ և կրել կալմ գործել, յորոց ոչն է արժան: Յին-  
 քեանս եկեալ զղջանան, դառնան, յոգիս սպաշաւեն, սոսոցանին  
 տղբերք արտասուաց, թէպէտ և անզրէն ընդ կրունկ դառնալ դիտեն  
 ոչ հնար լինել գործեցելումն յանգործութիւն, որպէս թէ շնացելոյ  
 100 կոյս լինել կամ սպանողի ոչ սպանող, սակայն զանճառելին զմտաւ  
 ածեալ մարդասիրութիւն զաստուծոյ: Եւ եթէ ո՛չ կամի զմահ մեղա-  
 տորի զթողութիւն ի ձեռն արտասուաց հնարին գտանել, և անյազք  
 ի բանս աղերսանաց և առանց լրութեան ի պաղատանես եղեալք,  
 5 փոյթ ընդ փոյթ զկամսն հեղականս և ամենագութս խոնարհեցու-  
 ցանեն յառատաձեռնութիւն պարգեացն ողորմութեան: Եւ զգայ-  
 թակղութիւնն այն անգթելի կայման և հաստատութեան ո՛չ ըստ  
 իւրում ինչ բնութեան լինի պատճառ, այլ վասն զի շիրմաջերմ առ  
 10 տէր սիրոյ զղջացելոյն: Այսպիսի էր Դաւիթ վաստակեալս ի հե-  
 ծութեան իւրում, որ լուանայր զամենայն գիշեր զմահիճս իւր, և  
 թանայր արտասաւք աշացն ցանկացողաց զանկողինս իւր, որ ոչ և

126բ լետ լսելոյն՝ եթէ տէր անցոյց զբէն զմեզս քո || և ոչ մեռանիցիս: Գաղար և հանգիստ երբէք ո՛չ առնոյր լինել խոստովան և ապաշ-  
 15 խարել իբրն զմահապարտ որ, առաջի անկանէր ողորմք թաղաւո-  
 րին: Եւ որպէս քաջի ցուցանէր բժշկի՛ զփութութիւն նեխոթեան վիրացն և զյանկուցիչն բեռնաւորաց և աշխատելոց, ի գթութիւն խոնարհեցուցանէր զժանրութենէ՛ և քան զգլուխն բարձրացելոյ անարէնութեանցն բեռինն ունելով բողոք և ոչ զիւրայթուելիս առանել յայնմ՝ հետէ կատարէր երանելին ուղղութիւնս: Բայց Պետ-  
 20 րոս մեծն և զարմանալին քան զամենեսեան ելեալ ի գայթակղա-  
 րանէ անախ, լայր դառնապէս: Զի՞նչ կարծիացես արգելաբ զգառ-  
 նայալէան լսելով: Զգտանէ աւետարանիչն զեղանակ և զչափ լալոյն և զարտասուացն նշանակելոյ ապացոյց ինչ, միայն զդառնայալէան ասել, բաւական համարի առ իմանալ, որոց միտս ունիցին, զող-  
 25 բոցն մեծութիւն շէր ինչ ընդհատ յարտասուացս լայսցանէ: Արտա-  
 սուացն վտակք կնոջն, որ ի մեղացն անուանեցաւ: Քանզի բաւա-  
 27ա կան եղին թանալ զփրկչին և դասաւուծոյ || մերոյ ոտս և առանել աչնորիկ շատութիւն սիրոյն, որում ինքնին վկայեաց: Ըշմարտու-  
 թիւնն շնորհ էր առնուլ նմա զբազմութեան մեղացն թողութիւն: 30 Այսպիսեաց արտասուաց պէտս ունիմք և խստացուցաք զսիրտս մեր քան զաղամանա: Գուցէ լայցեմք յորժամ ոչ իցէ ժամանակ և ոչ գտանիցեմք և ոչ սակաւիկ ինչ աւճան ողորմութեան: Մի՛  
 հեղապայուք ի ժամանակի ընդունելութեան և յաւոր փրկութեան, յորում առաջիս կայ մատչել համարձակութեամբ հանդերձ բնձա-  
 35 չիւր արտասուաց, առաջի աթոռոյ շնորհաց աչնորիկ, որ եկն բառ-  
 նալ զամենայն արատար չամենայն երեսաց, որպէսզի այժմն աստ առնուցումք զիւրաւ զանդն անհնարին և անդտանելի: Նա գոյ և ականջաց լծորդին աչաց առ իմաստասիրութիւնն պարկեշտութիւն կարգաց: Եւ քաջահայտ է, որպէս և ամենայն անդամոց դաստիա-  
 40 րակութեան քան ի գիրս սուրբս ի շարարանութենէն է խցումն և բարեաց ունկնդրութիւն բանից և ձայնի տկարաց և կարաւելոց: Իսկ բերան վասն զի ո՛չ միտ, որպէս այլք ի զգայարանաց, այլ  
 127բ երկոյլց է գործի: Վասն որոյ և մեծայգոյն քան զայս որ ի դէմն ունի ի բնութենէ զկազմութիւնն, որակութեանց ճաշակականաց  
 45 գուրով զգայութիւն ի ներքս մտելոց և արտարերտկան սպասարբանի: Ըստ որում, ասէ ոմն, թէ մուտ ունի մահկանացուին և ել ան-  
 մահին: Անմահ զբանն և մահկանացու զկերակուրս անուանելով տիրագոյն և ճշմարիտ անուամբ զիմաստունն և զհասակէս և ոչ զգատարկ կամ զվնասարեբն ասէ անմահ: Եւ է առաջինն յառաքի-  
 50 նութեանց սորա շինել որովայնամոլ և ծառայ անյագութեան՝ պարարելով ի ձեռն կոկորդին և ապաշնորհական խաչից՝ զբազ-  
 մագլուխն ասացեալ պա[տ]ճաբ, մարտընչել և յոյժ զժրնգակապէս

55 քան զվայրենացոյցնս ի գագանաց ընդ մեզ ինքեանս, և տալ սու-  
 սեր հակառակ զինուորեցելոց մեզ արինացն խոցոտել զժուարա-  
 128ա րանիւք, և աստուր վիրաւք զհակառակամարտ ինքեանք խորհուրդ-  
 60 արն: Եւ զրոցոյն բնաւորականի սաստկագոյն զործել յաւելուածովք  
 նիւթոյն, որովք կերակրի գտոչորմանն ամբարձումն և զժուար-  
 128ա րա/րգելիք: Իսկ բաւականութեամբ հարկաւորացն առ ի կեալ և  
 60 սակաւապետութեամբ ողջախոհանայ: Եւ երկ[ր]որդ կանոն բանի  
 և լուսեանն ստանալ զերկաքանչիւրոցն՝ ճշմարտացալս և անսխա-  
 յարար ճանաչելով զժամանակ ըստ ժողովողին: Քանզի ի շատա-  
 խաւսութենէ ո՛չ գոյ ապրել ի մեղաց: Իսկ վասն տգեղ և զաղիւր  
 խաւսից կամ զատարկաբանութեան, զի՞նչ ասել իցէ արժան,  
 որովք պարտաւորի մարդ, որպէս ծանրագոյն շարեաւք, զի ի  
 65 բանից քոց արգարտացիս և ի բանից քոց պարտաւորեցիս, որ  
 դատին ուղղութեամբ և արդարութեամբ արար վճիռ: Եւ մարդ բարի  
 ի բարի գանձուց սրտի իւրոյ բխէ զբարիս և մարդ շար ի շարէ  
 անտի բարբառի: Եւ վասն երգման սահմանաբար հրամանաւ հաս-  
 տատէ ո՛չ աւելի ինչ քան զայոն և զոչ երգմանկանս արտաբերել,  
 70 ի շարէն գոյ դառաւելագոյնն սոցա: Բան երգմնի ասելով, կարի  
 բազմապատկեցոյնս և զանաբանատեսիլս, յազագս շրթանց և  
 լեզուոյ, զտցես ի գիրս հրամանս և պատուերս զգոչութեան և  
 համեստութեան, զորս եթէ յարել ասաջիկայումս դիտման բանի  
 128բ ձեռնարկեցուք, ը զանցանէ սաստկապէս քան զհայցելին քեզ:  
 75 Իսկ վասն ողջա[խո]հութեան՝ ահա իբր յիշատակու իմն նշանա-  
 կեցաւ վերագոյն սուղ մի, զոր բաւական առ այժմուս կարծեմ  
 խնդիր: Սակայն զարդարութենէ հաւաստապէս գիտել է ըստ գա-  
 նազան յեղանակս: Եւ յա գմաստնս անձին զեղեցկապէս և ըստ  
 կարգի անարխիներ ըստ առաքինութեանցն շորից, որպէս զի բաւա-  
 80 կանն զգանութեամբ, որ է խոհականութեամբ, հակառակ անզգա-  
 մութեան և անդիտութեանն պաճուճեցի: Իսկ սրամտականն, թէ-  
 պէտ և իցէ բնաւորական, բանզի է եռանդն շուրջ զսրտին արեան  
 և ոչ ատար ըստ անզգամութեան, այլ ունի կրկին առաքինութիւնս:  
 Առաջին՝ զմիջակաձեն երկուց պարսաւելեաց ախտից յանդգնու-  
 85 թեան որ է ըստ գերագանցութեան և երկիւղի, ըստ նուազութեան  
 ասացելումն զարութիւն անուանել իշխեցելով հեշտ ցանկութեան,  
 այլ և հարկաւորին և ապա հեզութիւն, որում հետեին քաղցրութիւն  
 և խոնարհութիւն, ընդ որով՝ ստորագասի ողջախոհութիւն: Երկրորդ  
 129ա անկամ բարեպա/շտ առ աստուածութիւնն ամենայնիւ լինել պա-  
 90 տուիրանացն պահեստիւ: Երրորդ՝ ազգի և զաւառի աշխատու-  
 թեամբք արժանաւորելովք և զիպողագունիւք ըստ դիմաց և պա-  
 տուոյ լինել երախտաւոր: Չորրորդ՝ պատուազրութիւն ծնողաց աս-  
 տուածասիրաց: Հինգերորդ՝ չզրկել զոր: Յաւելուն ոմանք և չզրկել-  
 ապա թէ պատահեցէ այնպիսի ինչ, բարիոք է զրկել քան եթէ լ[ւ]ղբ-  
 95 կել: Բայց է և վեցերորդն սորա, որպէս վարկանիմ, և կարի իսկ քաջ



աղքատասիրութեան ամենահաճոյ և բարեղարդ մասն, այլ վասն շա-  
 շափելեացն և հոտոցն զգաարանի ընդմիջեցելոց, ի խանդին ոմանց  
 առնողաց և ի մոռացութենէ այժմ ասել ոչ դժպատեհ ինչ: Եւ անդ  
 1100 ասէ. և է նորա մասն յարդարութեանն ճառեցեալ: Արդ՝ ոչ մեղան-  
 շնել նոքարք միայն ո՛չ է արժան, այլ բարիս գործել ըստ հրամա-  
 եցելոցն՝ տարածմամբք յազալիս, և ի տեսչական աշխատութիւնս  
 129բ ընդ Պաւլոսի, ի գրչութիւնս պատուիրանաց, կամ ի բժշկութիւնս  
 տկարութեանն | աղքատաց և յայլս յարմարականս գործոյ ձեռաց:  
 5 Բայց շաշափականն ոչ ձեռաց ևեթ, այլ և բաւանդակ իսկ է զգա-  
 արանաց և մարմնոցն ամենայնի: Քանզի որ զգա ջերմութեան և  
 ցրտոյ կամ խոնաւոյ և ցամաքութեան, զողորկն, և զխոշոր, և  
 զանգալս և զխիստ՝ շաշափելիք են, զոր հասարակ ամենայնքն  
 վիճակեցան ունել կենդանիք, թէպէտ և յուրվք ի նոցանէ ո՛չ գո-  
 մանս ի զգալարանաց շորից: Եւ այլոցն սորա, որ ինչ առ մեղսն  
 140 խժրիծք են ըստ մասին ասել ո՛չ այժմ կամիմ, այլ քեզ թողու  
 իմանալ և խորհել, մի՛ վասն յայանին գոլոյ, և երկրորդ՝ հրամա-  
 րելով չերկարութենէ բանին: Սակայն առաւել անսխալ քան ամե-  
 ներհմբ այլովքն սովաւ մնալ և լինել խնդրէ բանն, և կարի յոյժ  
 չիրաւի: Իսկ ըոգանց ո՛չ հեշտացուցանողովքն լուծանիլ հստովք:  
 15 Քանզի և յայմանէ բազում բազում անկամ և մանաւանդ, որոց  
 վատ խառնուածոցն են՝ ջերմոյ և խոնաւի պատահէ՝ մեղկութեան  
 130ա ինչ կրիք վնասել: Այլ և ոչ ձենձերոյ և աշնպի/սի ինչ միտց կամ  
 գոլորշեաց լինել յուրակ և հեշտանալ: Արդ՝ որ ինչ բնութեանն,  
 20 եթէ գործարանք զգալեաց և եթէ մասունք անձին կամ ախտք հա-  
 մոտաւորիք բացատուեալ, այգորթիկ են և առաքինութիւնք իւրա-  
 քանչիւրոց դոցա, որպէս գլխաւորելով երկրորդել զերիս մասունս  
 անձին ըստ Պղատոնի, իսկ ըստ Ձենոնի՝ ուրբ և Թ.ն անբան և մի  
 բանական, քանզի դճինկ զգաարանս և զձայնին գործի և գտերա-  
 կանն անբանին գոլ և գմիտան տանձին, իշխանական և բան ունող  
 25 կամ նոյն ինքն: Եւ են ախտք անուանեալք շորք՝ ցասումն, և ցան-  
 կութիւն, և երկիւղ, և տրամութիւն: Եւ սահմանեն՝ զտրամութիւն  
 վրիպումն ի ցանկութենէ, իսկ զերկիւղ՝ կատկած ապագայի իրիք  
 շարի: Եւ զարձեալ՝ եթէ պատահայն շար տրամութիւն առնէ, իսկ  
 30 ակնկալ լին[ի] երկիւղ յորոց ոչ և ի միտջէ ըմբոնեացի մեծ անձ-  
 նացեալ հոգի: Բայց վնասք ախտից ոչ ի սկզբանէ ընդ մարդոցն  
 130բ ստեղծեալ գոյացան, այլ յետոյ ի կամակարուլթենէ և ի պատ-  
 րանաց շարին անկան ի ներքս: Վասն որոյ և յուրվք ի մերոցն, և  
 գրեթէ ամենեքին իսկ, ոչ բնատրականս զսոսա դոլ սասցին, մա-  
 նաւանդ՝ զերկիւղ և զտրամութիւն: Իսկ այլք՝ զերկիւղ անբուն գոլ  
 35 ոչ կամին: Վասն որոյ և պատուէր ընկալան շուտել ի տնկոյ անտի  
 զերկիւղ մահուն պատճառ ընկալեալք, այլ զսո բարին ցանկու-  
 թիւն, և զցասումն առ շարութիւն բնական գոլ ճշմարտապես յար-  
 տաքնոցն: Եւ ո՛չ մի ոք կարծէ գախտից բոլորովին գոլ առանց  
 բնաւորութեան, այլ մեղ այժմ, և որ բնականք իսկ են, եղիցին

- 40 մակըստանալիք վասն շատ առանել զաւրանալոյ շարութեան նսիրս: Քանզի թէ բունք յաւէտ միայն և ոչ իբր միջասահման մեր գոլով առ երկոցունցն շարժմունս, թէ լինի մեզ բարութիւնքն ասացեալք ոչ թերևս որ դիրաւ կարէր մեղանշել կամ արագադարձ յառաքինութեանց առ շարութիւնն գոյ: Եւ դիտել արժան է, զի ոչ նուազ
- 45 ինչ, որ մակըստացականն է, քան զբնութիւնն առնու հաստատու-
- 131ա թիւն թէ ունակապէս տրամադրեացի: // Եւ են տարբերք ի միմեանց ունակութիւն և տրամադրութիւն, թէպէտ և մի տեսակ որակութեան երկոքին ասին, քանզի ունակութիւն տեղագոյն և յոքնամանակագոյն գոյ սահմանեցաւ: Եւ այսպիսիք են մակացութիւնք և առաքինութիւնք, զի մակացութիւն թուի, ասէ, յարատեղացն գոյ և դժոխաշարժիչն, թէև շափարարոք մակացութիւն առցէ: Եթէ ոչ մեծ փոփոխումն ընկալցի ի հիւանդութենէ կամ յայլմէ իմեքէ պատճառէ այսպիսոյ: Այսպէս և առաքինութիւնն զիտրոգարարութիւն և ողջախոսութիւն և խորաբանչիւր որ այսպիսեացն ո՛չ դիրաշարժելի թուի գոյ: Եւ ո՛չ դիրափոխ: Եւ տրամադրութիւնք ասին, որք են դիրաշարժք և արագափոխք, որպէս զերմութիւն, և ցրտութիւն, և հիւանդութիւն, և ողջութիւն և որք միանգամ այլ այսպիսիք են: Քանզի տրամակախ իմն ըստ այսոցիկ մարզն, բայց արագափոխէ՛ ի ջերմոյ ցուրտ լեալ, և յողջանալոյն ի հիւանդանայն, սոյնպէս և ի վերայ այլոցն եթէ ոչ որ և սոցուն այսոցիկ
- 60 զիպեսցի բազում ամանա//կաւ ահայ ընաւորեալ անբոյժ և կամ կարի դժոխաշարժելի եղեալ, զոր ահայ որ իբր ունակութիւն առասացէ: Եւ երեկի է, զի այստիկ կամին ունակութիւնս տեղ, որք են յոքնամանակագոյնք և դժուարաշարժագոյնք: Քանզի
- 65 զմակացութեանցն ո՛չ քաջ զունաւոսն, այլ դիրաշարժելիս եղևալս ոչ ասեն ունակութիւն ունել, այլ սակայն տրամակախ իմն ըստ մակացութեան կամ վաթար և կամ քաջ: Իսկ ապա տարբերէ ունակութիւն ի տրամդրութենէ այսու: Գիրաշարժելին գոյ և ունեմն յոքնամանակագոյն և դժոխաշարժագոյն: Եւ են ունակութիւնքն և տրամադրութիւնք, իսկ տրամադրութիւնքն ո՛չ ի հարկէ ունակութիւնք, քանզի որ ունակութիւնս ունին, և տրամակախն իմն ըստ սորա, իսկ որ տրամակախինն ոչ ամենայն իրաւք ունակութիւն ունին: Արդ՝ ո՛ր եթէ զուզնաքեայ եղիցի տարւաւոր ընդունել զայնպիսի մակացութիւնս, ո՛չ դիրաշեղ և արագափոփոխ եղիցի յայնպիսի մակացութենէ, իսկ ի կատարելոցն ևս զժարարար:
- 75 Ասոյնպէս և առաքինութիւն, որովք ըն//կալցի իսկապէս, ոչ ևս
- 132ա դիրաշարժ եղիցի միս անգամ առ վաթարութիւն փոխել: Իսկ տրամադրութիւն, վասն զի գոչդն իմն ընկալաւ յորոց և իցէ ախորժակաց, յաղազս այսորիկ դիրափոխ զսա պատահեաց գոյ, որպէս և ի բժշկականոսմն ունակականքս ասին, որոց դժոխաշարժելի ախտիցն պատահեաց գոյ այլայլութիւն: Ասոյնպէս՝ որ միանգամ տրամադրեալք են առ մակացութիւն և կամ թէ առ ինչ արուեստ, զքաջ ունաւոսն մակացութիւնս ասեն ունել, իսկ զոչ քաջսն տրա-

- մադրութիւն տճա՝ ծանուցաւ քեզ ունակութիւնն, ո՛չ զազգիափղուն և
- 85 կանդաղեալս գտլ, ալլ խոր արմատ իմն և յարատեակ: Ըստ որում, քաջակրթապէս զերկոսին ախորժեմ մակատանալ քեզ՝ որ ինչ վարուց նախ, և ապա զտեսականին՝ ըստ կարողութեան աստուածային և բարձրագոյն աստուծոնս զիտելով: Զի շար է և աղբիւր անբանութեան և հանկիտական նմա գործոց անուամնութիւն, ուստի և խա-
- 90 ւար, յորոց և զբնութիւնս քննել սովորեցին արդարապէս անուանեցաւ: Քանզի լուսոյ ո՛չ ելոյ գործ և ոչ մի յարմարապէս և ան-
- 132բ պարսա/լուր կարասցէ զործել և տեսութեան կարաւտ անձն յաւրինաց հաճոյից, ո՛չ և զմի կարասցի աշխատել, յարգարել և ցուցանել յինքեան, ալլ և ըստ որում յիմաստութիւնէ ակնութիւնք
- 95 կենաց և շահք անձնականք, ոչ զիւրայթիւր և զիւրաշափք յորդեալ մտաննն ի մարդիկ: Այսպէս և յանուամնութեանն անգիտութիւնէ: անհունք են մոլորութեան և անրոյժ հիւանդ զժընդակութեան բերեք յաշխարհ՝ ամենայն, բանզի զոր ինչ և արասցէ որ ի շարեաց կամ անուամնագործեսցէ նորոգապէս, զնա դասնիցէ ար-
- 100 մատ և սկիզբն բոլորեցուն: Եւ յիրաւի: Զի եթէ վասն բանին պատկեր նմանութիւն աստուծոյ մարդն, որով ամենայնք առ ի բարի կեանս պատճառք և յարարարգութիւնք սկսջնատրեաղ աւարտին, ուրեմն անբանութիւն յանգիտութիւնէ. զտիրապէս շարութիւնն ի ներքս ածեալ ձեւացուցանէ: փոխադարձակի, ի ժանդատեսինն զի-
- 5 զիմաւորութիւն զկերպարանս անձին, վասն որոյ ասացի և յոյժ
- 133ա զիւրոգապէս, մանաւանդ եթէ ըստ ճշմար/տութեան, կոսապաշտութեան վարդապետ, զիջութեան և պղծութեան առաջնորդ, սպանութեան դաստիարակ, ազահութեան ստորակա, որովայնի ծառեցուցիչ, ստորութեան և նենգութեան հայր, և պարզարար ասել՝
- 10 ամենայն բարեաց իսկականաց ամա[յ]ութիւն և բովանդակ զեղխութեան, և անաւրէն վարուց սկիզբն և կատարած:
- Ալլ իմաստութիւնն նախաշաւթարութեան սկիզբն է երկիւղ տեսոն, որպէս Գաւիթ և Սողոմոն ուսուցանեն, որով խորշի ամենայն որ ի շարէ և գնալով ի ճանապարհս տեսան երանեսցին:
- 15 Ատեա՛ զանիրաւութիւն և զհպարտութիւն և զճանապարհս շարաց, զուարթանայ անմեղութեան, աճէ, զարգանայ մտաւորական սնրն-գազործութեամբքն: Աշխատեալ ի սոսին ոչ լքանի, հանգչի աքնութեամբքն, զարանայ տկարութեամբք, կարատութեամբ հարկատրացն առ ի կեանս, փափկանայ առաւել վատտակովքն, զրզի, աղքատութեամբ ճոխանայ, կեա[յ] մահուամբ:
- 20

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Իմաստասերի «Յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախաւսութեամբ...» աշխատութիւնն մենք հրատարակում ենք Հայաստանի Պետական մատենադարանի № 5619 ձեռագրից, որն ընդօրինակված է 1176 թվին Կամըրչաձորում: Փիլիսոփայական տեքստն այս ձեռագրում գրված է ալլ զըշի կողմից: Այս մասին մանրամասն խոսք կզել է ուսումնասիրության մասում:



Իմաստասերի տվյալ տեքստը մենք հրատարակում ենք առանց փոփոխութեան. համեմատել այն այլ ընդօրինակութեան հետ և շտկել նրա մեջ նկատվող թերութիւնները հնարավոր չէր, քանի որ նշված տեքստի այլ ընդօրինակութիւն մեզ հայտնի չէ:

Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական մտքերը մեծ մասամբ ցըրված են նրա կրօնա-բարոյախոսական աշխատութիւնների մեջ, որոնք, ինչպես ասել ենք, մտադիր ենք հրատարակել առանձին հատորով: Սակայն հայ փիլիսոփայութեան պատմութեամբ զբաղվող մասնագետների գործը մասամբ դյուրացնելու նպատակով, մենք անհրաժեշտ համարեցինք, այնուամենայնիվ, մի քանի մեջերերումներ անել Փիլոնի «Եօթնամասեան»-ի մեկնութիւնից, որը վերագրվում է Հովհաննես Իմաստասերին:

Հովհաննես Իմաստասերը, ինչպես ասել ենք ուսումնասիրութեան բաժնում, անվերապահ, իրենալիստ է, նա ասածուն է համարում գոյի սուբստանցիան. աստված է ստեղծել ամեն ինչ, նա է ձև և որակ տվել իրերին, նա է շարժում աշխարհը: Իմաստասերը նույնիսկ վիճում է հեթանոսական գուալիստ այն գիտնականների հետ, որոնք գտնում են, որ աշխարհը «ի սկզբանէ» անձե վիճակում է գտնվել և հետո է, որ աստված ձև է տվել նրան, իր բառերով ասած՝ «զարգարեաց զանգարդն»: Նա գտնում է, որ այդ տեսակետը հեռուգրական չէ. եթե աշխարհը նախապես ձև չի ունեցել, ուրեմն «և չէր աշխարհ», իսկ եթե գոյութիւն է ունեցել, ապա գոյութիւն է ունեցել իր ձևով և որակով (ՀՊՁՄ, № 2595, թ. 242ա):

Աշխարհի սկզբնավորութիւնը կապելով նախախնամութեան հետ, նա միտածամանակ գտնում է, որ շոշափելի ամեն ինչ կազմված է կոնկրետ գոյութիւն ունեցող տարրերից: Նա մի տեղ նույնիսկ վկայակոչել է Պլատոնին. «Պղատան ի յերից տարերց է ասացեալ գրոյորիցս գոյացութիւն՝ ի հրոյ, ի ջրոյ, ի օդոյ...» (թ. 263ա):

Հովհաննես Իմաստասերի կարծիքով, նյութը կազմող տարրերը անմիաբան են իրար հետ, այսինքն հակասական են. «Չկայ այլ ինչ իրք—գրում է նա.— որ սիրեն զմիմեանս և միարանին, որպէս մասունք աշխարհիս, որ են տարրերդ, վասն զի ի միմեանց էութենէ, գոյանան, որպէս ի ջեռեալ ջրոյ և ի շիջեալ հրոյ օդն լինի...» (թ. 260բ):

Նա գտնում է, որ աշխարհում առանց պատճառի ոչինչ չի լինում և ամեն մի բան, ամեն մի երևույթ ունի իր պատճառը: Որպես օրինակ նա մատնացույց է անում կայծքարը. կայծքարը, ասում է նա, բնական կրակ ունի իր մեջ, բայց մինչև որ այն չհպես երկաթին, չհարվածես երկաթով, կայծ առաջացնել չի կարող. «Թէպէտ [հուրն] որ ի քարն է,—գրում է նա,—բայց առանց մարդոյ և երկաթոյ ոչ էլանէ հուրն և շարժի» (թ. 243բ):

Հովհաննես Իմաստասերն այն տեսակետն է պաշտպանում, որ աշխարհի վրա ստեղծված բոլոր արարածներից միակ բանական արարածը մարդն է. նա է որ գիտակցութիւն ունի, զատուղութեամբ է շարժվում, իսկ կենդանիները գործում են միայն բնազդով: Կենդանիների մտա, ճիշտ է, կա արվեստ, բայց այդ՝ բնազդական արվեստ է: Նա օրինակ է բերում մեղվի պատրաստած մեղվարջիջները և սարգի ստապնը. ինչպիսի՞ մեծ արվեստով են շինված լինում նրանք. «Մի՞թէ արուեստի և խորհրդով գործէ մեղուն և սարգըն, որ ուսեալ է և կու մարթէ ասնել,—հարց է տալիս նա և պատասխա-

նում,— ո՛չ, այլ ի բնութենէ, առանց խորհելոյ և արուեստի ուսանելոյ, զի հնարքն և արուեստ բնականք է» (թ. 250ա): Այնուհետև Իմաստասերը եզրակացնում է. «Զգիտութիւն և զիմաստնութիւն, որ կարգաւորարար է, բանականքս է», իսկ բնութիւնն արվեստը՝ «ո՛չ միայն բանականքս, այլ և յանբնագս» (թ. 250ա):

Նա գտնում է, որ բնագրով են շարժվում կենդանիները, որոնք և ունեն որոշ սովորութիւններ, սակայն ոչ բոլոր դեպքերում են, որ նրանք հետևում են սովորութիւններին: Որպէս ապացույց նա մատնացույց է անում մկան ծննդյան պարագան. «Զլ թէ ուսեալ է մուկն,— գրում է նա,— որ յառաջ քան ծնանի և աճէ, ի յորջն ցանկայ մտանել, բազում անգամ լինի, որ արտաբոյ որջոյն ձգէ զձագն...» (թ. 250):

Հովհաննէսի մտա բանական մարզն անձնիշխան է, նա ինքն է իր բախտի տերը. նրա ճակատագիրը նախապէս չի տնօրինվում նախախնամութիւնից, ինչպէս պնդում են բախտագուշակ քաղզկեացի աստղաբաշխները: Նա գտնում է, որ սխալվում են բոլոր նրանք, որոնք «գանձնիշխանութիւնն ի բաց բանանան» (թ. 243բ):

Այստեղից արամարանորեն հետևում է Իմաստասերի երկրորդ կարեոր եզրակացութիւնը, որ մարդու խնդիրն է փորձի հիման վրա ուսումնասիրել աշխարհը և հասկանալ նրա գաղտնիքները: Քննադատելով «երազահանական առասպելոց» հավատացողներին, գտնում է, որ «Տեսանել օրինակաւ իմանամք և քննեմք գառաջիկայն, որ լինելուց է» (թ. 242բ):

Հովհաննէսը գտնում է, որ մարդու խորհելու հատկութիւնն է, որ մարդուն բանականութիւնն է տալիս. ինչպէս որ հայրվող նյութերի մեջ ամենից ազնվագույնը ոսկին է, այնպէս էլ մարդու առաքինութիւններից առաջնագույնը՝ խոհականութիւնն է (թ. 261ա): Մարդը պիտի անվերջ ուսումնասիրի բնութիւնը և բացահայտի նրա գաղտնիքները, թեպէտև նա ի վիճակի չէ սպասելու նրանք իր կարճ կյանքի բնթացքում: Այս կապակցութեամբ նա միտեղ մեջբերում է արեւ շիպոկրատեսի այն միտքը, որ «այս աշխարհը փոքր է» մարդու կարճ կյանքը, բոլոր գաղտնիքները հասկանալու համար (թ. 279ա):

Հասարակութեան մասին խոսելիս նա գտնում է, որ հասարակութիւնը բաժանված է անհավասար իրավունք ունեցող զասերի և դասակարգերի: Թեպէտև բանականութեամբ, գրում է նա, «մի ասեն իշխան և ուսմիկ, դատաւորն և քաղաքացին», իսկ եթէ նայելու լինենք ուսել իրականութեանը, ապա նրանք անհավասար են «և թէ որ հաստարե զսոսաչ ընդ միմեանս. զուզէ, մտորի ի ճշմարիտ կարգէն» (թ. 261բ):

Հովհաննէսն ինքը լինելով սոցիալական միջին խավի ներկայացուցիչ, իզեպակականացնում է միջին դրութիւնը. նրա կարծիքով, պետք չէ ո՛չ շատ բարձրի ձգտել և ո՛չ ցածրութեան մեջ մնալ, այլ պիտի բնորէլ միջակութիւնը. «Համեստ հոգին,— գրում է նա,— ո՛չ բնորէլ զվերին ծայր բարձրութեանն և ո՛չ զառաւել ցածուն խորհելին, այլ զմիջակին» (թ. 158ա):

Հովհաննէս Իմաստասերն ունի իր ժամանակի բնա-պատմական առաջադեմ հայացքները: Նա, օրինակ, բնզունում է, որ երկրագունդը կլոր է. «Տարերք ի միմեանց վերայ մնան. վասն այն, որ ճախարապէս երկիրնս շրջի և երկիրս որպէս գունդ ի միջին է» (թ. 246բ):

Նա կատարի թշնամի է անտիապաշտության, շի հավատում նաև ավան-  
դություններին ու առասպելներին: Այսպես, մի տեղ խոսելով կիկլոպների  
երկրի մասին, գրում է. «Վասն կիկլոպաց երկրին զինչ որ ասեն, սուա է...»  
(թ. 248բ):

Գարեջի է նման բազմաթիվ փաստեր բերել Հովհաննես Իմաստասերի փի-  
լիսոփայական և բնա-պատմական ասույթները պարունակող այս և այլ աշ-  
խատություններից, սակայն բերած փաստերը, կարծում ենք, բավական են  
ընդհանուր գաղափար կազմելու Իմաստասերի աշխարհայացքի, նրա գար-  
զացման և որդեգրած գաղափարական ուղղության մասին:



28. ՅՈՎՀԱՆՆՈՒՆ ՍԵՐԿԵԼԵԳԻ ԻՄԵՍՏԱՍԻՐԻ ԵՒ ՎԵՐԳԱՊԵՏԻ  
 ԱՍԸՅԵԱԼ ԲԱՆ ԻՄԵՍՏՈՒԹԵԱՆ Ի ՊԵՏՃԱՌՍ ԶԲՕՍԱՆԱՅ  
 ԱՌ ԶԵԳՆ ՈՐ ԶԵՂՕԹՒԱՆՈՅԼԻ ՆՈՐԱ ՃՈՌՆՈՂԷՐ  
 ՔԵՂՅՐԸՂԱՅՆ ՈՐ ԿՈԶԻ ՍԵՐԵԿ

Արթուն և զուարթուն թրռուն հրակող և բառբառող,  
 Անգառասելք միայնակեաց և ձեռնընդել համբուրասէր.  
 Կանչող և կարկաչող, ճճուող ձայնիւ պաշտօնասէր,  
 Արդ՝ ե՛կ ինձ մերձ ի գովութիւն, զի արարչին փառք մեծասցին,  
 5 Մեծն ի փոքուդ քարոզեսցի և քաջ արուեստըն ծանխցի:  
 Ազգաւ թրռուն մեզ թիատր, ի ջուրց բղղխեալ ընդ հոմասեռս,  
 Բայց տեսակաւ դու անշատեալ ընդ փանաքիս և աննըշանս.  
 Ի նոյնսըդ յամբաշարժ և զի դեղով անվայելուչ,  
 Ըստ հասակի յոյժ անարգիկ և յօգայինս վերջադասեալ.  
 10 Աղքատ և անհամբար ընդ այլան և դու ես կոչեցեալ,  
 Անհոգ և անարար, որպէս ուսաք ի Քրիստոսէ.  
 Այլ ըստ անձին ես քաջավարժ, բոլոր մասամբ անձնականաւդ,  
 Խոհեմ և ողջախոհ, իրաւացի և քաջասիրտ.  
 Իսկ արուեստիւ դու երաժիշտ ամենահնար, անվարդապետ.  
 15 Ինքնաբաւ և ինքնուսումըն, վայրարնակ և անքաղաք,  
 Անմերձ և մերձաւոր, ուրախարար լըստօրրաց,  
 Քաղցրաձայն դաշնակաւոր՝ որպէս կարծեմ ըստ արուեստիդ,  
 Սասակախօս և հարթավանկ, խանդաղատող և ողբերգակ,  
 Հրամայող և ողորդող, ըզխրատականըս ներազրող,  
 20 Սպառնացող և հեղախօս, զրգուող, կոշող և հրաժարող,  
 Կականող և ձայնարկու, յոյժ խրնդացող և զուարճացեալ:  
 Արդ զիշերըն քեզ ի տիւ, և խաւարն որպէս ըզլոյս,

Վերնադրու՞մ՝ A Բօհանու A Սարկառօսի Իմաստախիի և չիք A Վարդապետիկ  
 B Սարիկ 1 A Թուշուն A հրակող և բառբառող 2 B ամբողջ տողը չիք 3 A  
 Կաջօղ A կարկաչօղ B ճճուող B ձայնող 6 A բղղխեալ 7 A աննշանս  
 8 զի չիք 11 անարար փոխ. անարոր 13 B առօջիկ և չիք 15 A ինքնուսումն  
 16 մօտաւոր փոխ. մերձաւոր A յատեալ 17 B արուեստին 19 Հրամայող  
 և ողբօղ A ըզխրատականս 20 A պօռնացող A զրգուող A կոշող  
 A հրաժարող 21 Կականող 21 A խրնդացող 22 B զիշերն A զլոյս

- Տընասէր մշտապաշտօն, անմարմնոցըն սարասի,  
 Տօժարախորժ յաշխատութիւն և վաստակօքըն հանդուցեալ:
- 25 Պիտոյիւք ողագունիւք իբր անճաշակ մարմին լըցեալ,  
 նըւագօքըն կերակրեալ որպէս ոնող զայն գօրութիւն,  
 Պարպեալ միայն երգոց ընդ գերակայաւն կենդանիս:  
 Անգիր օրէնք ես միանձանց և կըշտամբիչ հեղզացելոց  
 Ոչ միով, այլ յովիւք, որպէս տեսար ի նախերգեալսդ:
- 30 Ո՛վ պարող դու անձանձիր և կաքաւիչ յոգնանուազ,  
 Աննշան երեւիի, և անպատիւ փաստորեալ,  
 Աքանչելի ի քեզ խորհուրդ, որոց ընտրեաց տէր յաշխարհէ-  
 Բայց շառեր դու գօրութիւն, որով դիւրաւ խօսին լեզուք:  
 Ոչ մըտեր ի վերնատունն ընդ հրաւիրեալսն յաւետիան:
- 35 Արդ ուստի՞ իցէ քեզ խօսեզ յայլպեղբուս և յընտանիս.  
 Ե՛կ ուսո՛ ինձ զի ծանեայց կիսակատար իմաստակիս.  
 Մի պատճառեր զանբանութիւն դու յօղածայնրդ վերծանող-  
 Անյօզ ձայնիւ վարդապետեա, և ըստացիր զիս աշակերտ:  
 Զի հատուցից քեզ փոխարէն ընդ ուսելոյ իմաստութեանն:
- 40 Արձակեալ քեզ ներբողեան թողից ըզկնի անապական,  
 Աս հանգերձեալըն ժամանակ անջնջելի քաջայարմար,  
 Յորդորականս և վայելուչս, յորմէ օգտին իմաստանցեալքն:

Զագն պատասխանէ:

- Ահա յուայ և գիտացի, զոր իմացար և խօսեցար.
- 45 Այժմ հրամայես և մեզ պատմել՝ սա որում ունիս ի քեզ իմաստս,  
 Ըստ այսպիսում յեղանակի, որ ասել գայ ի կարգի,  
 Անխտոր և անսայթաք, թէպէտ անբաւ է զոր թողում:  
 Ո՛չ մեղայ, ո՛չ մահացայ, ոչ կորուսի զոր ընկալայ:  
 Զաւանդըն պահեցի և տուգանաց ոչ ըզգացի:
- 50 Զշինեցի ես աշտարակ, զի յողնակի դարձեալ մեղայց,  
 Կամ ընկալայց ըզպատուհաս նըմանապէս բանաւորացդ.  
 Միոյ շրթան և բարբառոյ, բաղմատեսակ բաժանելոյ,  
 Ըզշար կամացըն միութիւն այնու ի բաց անշատելոյ:  
 Զի և բաղմացն է միութիւն, նըմանապէս պարսաւելի:
- 55 Փոխադարձել յոչ բնաւոր, ըստ մեղանացն շահեցման:  
 Արդ կացի ի բնականին, որոյ պարզեն է յայտնութիւն.  
 Որ ի լրման ժամանակաց ընծայեցաւ փոքու հօտին.  
 Ընձեռեցաւ նոցա բազում, զի կոշեցին բազումքն ի մի.  
 Զոր միովըն կորուսին՝ հակառակօքըն շահեցին:
- 60 Որպէս և այլ տնտեսականն, որով կեցար ի մահուանէ,  
 Ըզմետս որողայթից ընդդիմակօք սըխալանացն:

23 A Տըքնասէր մշտապաշտօն B ըստ անմարմնոցըն 25 B սրղարգունիւք  
 փոխ. ողագունիւք A լցեալ 26 A նւագօքըն 30 A պարող B յորնանր-  
 ւազ 31 A Աննշան 34 A մտեր 35 B խօսել 4 B իմաստասիրեալք  
 40 զղացայ 53 B կամաց 55 B փոխադարձիչ 57 A լրման 58 B մին  
 59 A հակառակաւըն 60 արնտեսականն 61 ըզմեզ նորողեցին փոխ. ըզմիտս  
 նորողեցին

Իրաւացուցանել վարպետն զղիմադրութիւն ձագուն և անու  
աճեան ամբաստանութեան:

- Ձայս ասաց պատճառ բազմանուազ եղանակացն.
- 65 Թռչունըն քաղցրախօս ի հարցանելըն մեր ըզնա.  
Թէպէտ բազմացըն միութիւն, թէպէտ միոյն տարբերութիւն,  
Բնականին ի բաց դրութիւն, վասըն սղալման առ վեհագոյնան.  
Նրմանապէս են պատուհասք որպէս գիտեմք ի բնութենէ.  
Ուայս ևս զեպերմամբ, ևս ի բազմաց ամաց հետէ.
- 70 Զի տըքնեցայ զօր ամենայն և ըզգիշերըն բովանդակ.  
Առ իմաստըս ցանկութեան, նա և սիրովն որ առ հանճար:  
Ձայս ասաց և հաստատեաց որպէս կընիք իւրոցն իրաց.  
Յանգիմանեաց ըզմեկ ուղիղ, և ինքն օղովըն սըլացաւ,  
Ի բարձրութիւն ոստոյն նըստաւ ըզհայրենին բարբառելով.
- 75 Աղադակաւ զիս ձանձրացոյց, և շօտեցայ ի խոկմանէն.  
Տըբամեցայ և զուարճացայ ի մէջ երկուցըն պաշարեալ.  
Յանուանէ զնա կոշեցի և խօսեցայ դատաստանաւ:  
Հարցի և ըբնեցի և պարտեացայ ի չաղթութեանն:  
Ասացի ընդ անմեղին, որ ճարտար էր առ իս բանիս,
- 80 Գաղանեօք ներհակ ձայնիւ ջանայր յաղթել ինձ ի մարտին.  
Ասեմ, ընդէ՞ր դու զիս նեղեա, ըզխտըհեցողս իմաստութեան.  
Ուշի մրտացս իմոց յաղթես անդըլակի ճճուողութեամբ.  
Խորհրդոցս ալլալութեամբ, ըզգեղերանս աննես անշահ,  
Լընուս զականջըս խոտվութեամբ ըզմիտըս ցրուքս ունայնութեամբ:
- 85 Վասն որոյ սիրտս արտաբերին, ո՛չ յամելով առ իս ինքեան,  
Վաղեն արտաքս իբրև ընդ ծերպս և բնաւ արդել ոչ ունելով:  
Ի գիւտըն քո փութամ և ըզգըտեալըն մոռանամ,  
Ի շահաւէտ ճառից զըրկիմ առ ի շահել զոչ շահելիդ,  
Յանպպատի ասա դամ նըստիմ զի օղտեցայց հանդարտութեամբ.
- 90 Ասացից և իմացայց և մի՛ եղէց ընդվայրատանջ,  
Աշխատեցայց անշահութեամբ ունայնաստըր իմաստութեամբ.  
Բազմաղիմի վնասուն ձըգմամբ, որ հանդիպի ի մէջ մարդկան.  
Գու նեղես զիս անձանձիր որպէս զըտեալ յինէն վընաս,  
Դատախազես, աղադակես որպէս օրէնն է զըրկելոց.
- 95 Ատենարար առ դատաւորն սաստիկ զինէն ամբաստանես.  
Կամ թէ կարծես զիս թըշնամի օտարապէս քեզ մարտուցեալ:  
Զորմէ սիրեմըդ տըրտընջեմ, զի ասա կրեցի զոր ասացիդ.  
Նաև այսու ևս աշխատիմ, զի մուրհակաւ ամբաստանեմ,

63 B ոճ փոխ. աւճան 64 A բազմանուազ 65 A ըզնա 68 B պատուհաս  
71 B ցանկութեամբ 74 նստաւ 78 A քնեցի 81 A ըզխտըհեցողս 82 B մրտաց  
B ճճուողութեամբ փոխ. ճճուողութեամբ B ժուտողութեամբ փոխ. ճճուողութեան  
83 A խորհրդոցս B անշահ աննես 84 B ըզհայրենաձըս բաժանես փոխ. ըզ-  
միտըս ցրուես ունայնութեամբ 85 B վասն որոյ սիրտս փոխ. ընդ որս և միտըս  
87 B ըզգըտեալըն փոխ. ըզգըտեալըն 88 B ճահելիդ փոխ. շահելիդ 90 B գի  
փոխ. և 91 B անշահարեր B ունայնաստըր 94 B աղադակես 94 B  
օրենքն է զըրկելոյ 97 A արտաբերջեմ 98 A ամբաստանիմ



- Յոյով ժամըս պարսպեալ ի գրով ձեռին բզփէն տըրտունջ.
- 100 Ըզկարհորսըն մտոացեալ որով ապրի անձն և մարմին.  
 Ըզմերձս առ նոյնքս խափանեալ որով լինի իմաստանանալ,  
 Զուգել մեծաց և անուանեաց, նաև վերին իսկ զօրութեանցն:
- Արդ ևս ո՛չ երբէք ծանեայ զիս վարեցեալ յորս ասացիդ,  
 Բայց աւելեօք ամբաստանեմ, զի ծանիցի ոսոխութիւն,
- 5 Որպէս սովոր են զայս առնել որ յատենի են զատեցեալ,  
 Զի բանքն և զօրացին և մարթացեն անույ օձան:

Վասն մաշկեկին, ուոյ վերայ բանաքն վարեցաւ:

- Այլ գայծմուս իսկ պատահումն ո՛չ լրոնցից արտարերիւլ.  
 Ըզնախահօրքն փոխազգեստն որ յետ յանցմանն ընձեռեցաւ,
- 10 Ապացոյց մեռելութեանն, և զուշակիչ անակութեանն,  
 Ըզվերարկուս ինձ համունակ զայս արարեր զու անպիտան,  
 Զի ի թո բանս անդ ըզբաղմամբ ներկեաւ սաստիկ այս մեկանաւ:  
 Բայց սոսա ինձ գիտեկաւ զոր հարցանեմքս խորհրդիւ.  
 Զի թէ պատկան առ դատախազն զատեցելոցն շարարանել,
- 15 Թէ ազգացի ես սոխակի ասպուճակի կամ ճպրան՝.  
 Ընդէ՛ր շունիս զու քեզ կայան, յանապատի որպէս նորայն.  
 Երաժիշտք են և նոքա, բայց ցանկացան անապատի.  
 Գաշնականացքն նուագօք, ըզբացավայրսըն զարդարեն.  
 Սակաւոց եղև լրսել՝ ըզբարեհձայն երգատրութիւնսն.
- 20 Գովեցան և զբզուեցան յորոց լուան ըզբաղցրավանգան:  
 Ամփիսն այր Թերացի և Արիոն Միթեմնացի,  
 Որվես Թրակացի՞, այս երաժիշտք են մեծագով.  
 Այլ նուազեալ են առ նոքօք, որք բնականան են պաճուճեալք,  
 Զի գործի այսր արուեստի, նոքա շունին ի բնութենէ:
- 25 Մի և զու ես յայնցանէ, զորոց լուար ըզպատմութիւնն,  
 Համարուեստ և անուանի, որպէս արդիւնքն վրկայեն.  
 Բայց միով ես պակասեալ, զի չսիրեցիր զքնդ նոսա կեայն.  
 Եւ շարարեր անդ քեզ զաղարս, ուր և նոքա տաղաւարին.

<sup>1</sup> Յօրին. խանդարեալ է: Թվահամարով բոլոր ծանոթագրությունները Ղ. Ալիշանինն են—Ա. Ա.:

<sup>2</sup> Յօրին. լսող:

<sup>3</sup> Ամփիսն երաժիշտ յայն՝ արքայ Թերացուց: որ և պարսպեաց գեթերէ. կամ որպէս բերթոզն առասպելին, քան յԱղոզանէ բնկալեալ, նօրին նուազացն քաղցրութեամբ գրաբինս շարժեալ ի շարդ և ի գեռեղուճն պարսպացն ընթացուցանէր:— Արիոն բերթոզ և երաժիշտ ի Մեթիմեա քաղաքէ Լեւրոսի՝ թովեալ ստի քնարան զլինին մի, որ այդա բնդ ստեղատունս գասեցաւ:— Իսկ Որվես երգիչ կամ բերթոզ էր անուանի, յորոյ ի լուր ձայնին զազանք ամեհիք բնթանային, և կողերք ծառոք ծափ զծափին հարկանէին:

100 B ապրէ 1 B ըզմերձն 4 B ոսոխութիւնն 5 B գատեցեալք 7 B լաշկէին, որ թանարն ի վերայ վաթեցաւ. 12 B բանազ 13 A խորհրդիւ 14 B Զի թէպէտ ըզգատախ զն 14 B շարարանել փոխ. շարարանել 5 B ազգակից B սոսա զու ինձ զիմազրութեամբ վոխ. ասպուճակի կամ ճպրան 18 A նուագօք 19 A լսել 20 A ըզբաղցրանգան 21 A Անփիսն 22 B մեծագովք 23 B նուագեալ 27 B կեալ 28 B տաղաւար

Աստ գաս նըստիս մերձ առ ինե իբր արուեստիս ինձ յանդակից.  
30 Բազմադեա երգարանաւ եղանակես և կաքաւես.

Հոմերական տաղիցքս շափք և ծանուցեալ լինի բազմաց.

Ոտանաւոր և ցուցական ըստ քերդողացքն տեսակի:

Կամ թէ ևս աւելագոյն, որպէս թոյի ինձ գիտողիս.

Ձի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ մերձ առ բընութիւն:

35 Հաւն պատասխանէ ամբաստանաբար առ վարդապետն:

Գարձաւ պատասխանեաց բոլոր բանիցս ասացելոց,

Երազագոյն քան զոր լրւան ասպբանեաց հազներգութիւնմբ.

Ծանոց ինձ հասատեաւ կորովակի արտադրութեամբ

Ձիմաստըս խորհրդոց մեզ ընդ միմեանըս բնակութեան.

40 Ասէ, Ձես արգարախօս ամբաստանողդ ըզմէնչ բանիւք.

Տարապարտ արբորնչեցեր յորըս ևս ոչ եմ պարտաւոր.

Լուր և դու իմոց բանից, արգարախօս դատեցելոյս:

Իմ և ձեր է այս աշխարհ՝ յորում և դուք էք պանդրխտեալ.

Ընտանի և սեպհական ըստ որում էրըն բնակութիւն,

45 Ի յարարչէն մեզ աւանդեալ տեղի ուսման և աճեցման

Յարմարական մեզ առ ի պէտս որպէս ունիմք ըզկազմութիւն:

Դուք ըզձերըն տուժեցայք վասըն յանցման առ արարչին,

Աստուածութեանըն ցանկացայք, զոր ունէիք՝ զայն կորուսէք.

Յերկինս ելանելով մերձ առ զբժոխըս սողացէք,

50 Ձեռնարկելով առ ճոխանալ՝ ազբատացայք և տնանդացայք,

Առ գերակայն ամբառնալով կործանեցայք ի ստորին վայրս,

Առ մեծ փառըս դիմեցմամբ վերջոտնեցայք աստ առ մեզ.

Չարարչին բան մոռացայք, և բանսարկուին հաւանեցայք.

Սրինօք՝ անօրինեալք և անիծիւք դատապարտեալք,

55 Յանմեղութեան անդ ոչ կացեալք, անթիւ շարեաց եղէք պահակք:

Չարդարութիւնըն կորուսեալք՝ յոքունց մեզաց եղէք զբախչք.

Տեսարբըզ ծառայք ախտից զըտայք հաւանութեամբ մարգասպանին:

Մտռայքս ի ձէնչ ապրստամբեալ որպէս և դուք ի տեսունէն,

Փուշ և տատակ ձեզ փոխարեն զի շիրիցէք ըզփափկութիւնն.

60 Մահու վրճիռ ձեզ հատուցանումն զի շխտորժէք ըզկեանս անեղծ.

Թըշնամութիւն առ սիրեցեալն ըստամբակացդ առ սիրուն հայրն.

Անդրազարծիլ ձեզ առ երկիրն ապականիչըրդ պատկերին,

Կերակուր ձեզ ի վայրէ որպէս և մեզ երկրակեցացս,

Անասնականըս պարենիկ շիմացողացդ ըզվայելուչն,

65 Ընդ մեզ կենակցութիւն ձեզ չընտրողացքդ առ աստուածն,

Առ ծառայս անզուգութիւն՝ զանզուգութիւն մեծարողացդ:

Բայց և անմեղքըս վնասեցաք վասն ձերոյդ ժրպրճութեան:

Ի փառըս ձեր մեք զոյացեալք և վասըն ձեր ապականեալք,

<sup>1</sup> Զօրին. օրինակօք:

29 A նստին

31 B տաղիցքն

B շափ քև փոխ շափ և

32 B Յոտանաւոր

փոխ, Ոտանաւոր

32 B քերթողացքն

33 B Թըւի

34 B մերձ չիւ

- Ոչ միայն մահուամբ, այլ և սաստիկ գանարբութեամբ,  
 70 Դնդ ընկալողացդ ըզտեաորն կամբս շքնկալողքս ըզգիտութիւն,  
 Ընդ ազատ կամաց ունողսրդ հետեւելքս ըստ բընութեան,  
 Ընդ մըտաւորսդ և բանաւորս անբանութեամբ պարաւանդեալքս:  
 Արդ մեզ և ձեզ առ հասարակ եղէք զըտիչքք կորըստեան,  
 80 Զի և ընդ մեր իսկ տուգանաց պարտիք համար տալ արարչին:  
 Եւ աղէտք վշտագինք պարեպատեն ըզմեզ յերկրի,  
 Խորշակք և ճըմերունք և պիտոյից պակասութիւնք,  
 Յաւք և խօթութիւնք և տարածամ մահու արկուածք,  
 Որք յաւելան վասըն մեզաց զի տանջեսցին զըստահողսն,  
 Յորս աւելի մեք աշխատիմք՝ ոչ ունելով յարկս և քաղաքս,  
 80 Ոչ համբարբս մըթերեալս ի լիութիւն հարկաւորացն,  
 Ոչ դեղս և ոչ բըժիշկս որով ցաւոց ախտ դագարէ,  
 Ոչ կակուզ ինչ կերակրիկ մեզ ի սիրտիանքս դիրութեանս,  
 Եւ ի վերայ ամենայնի՝ մեօք կերակրիմք որպէս հատիւ,  
 Ի միմեանց և քս ծախիմք որպէս զիտէք և տեսանէք:  
 85 Արդ եթէ այսքանեօք մեզօք զորքս թուցաբըզ վերագոյնդ  
 Զըրկեցալք դուք ի կենաց և յընտանի բնակութենէ,  
 Մեզ զի՞ էք մեղադիր որ չզըրկեցաք զոք ի տեղուչ,  
 Ոչ անցաք ըզսահմանաւ զոր աւանդեաց մեզ արարչին,  
 Զըրկումըն մեր ի ձէնջ, և դուք ըզմէնջ ամբաստանէք:  
 90 Իրաւամբք դատեցարուք ըստ հրամանի ըստեղծողին:

**Արտագրութիւն Երկոցունց բանից և զպարտութիւն  
 խոստովանել վարդապետին:**

- Ճըշմարտիւ գայս խօսեցաւ ըստ պատահմանցըն հանդիպման,  
 Ըզբացատրեալ հոյլքս բանից իմաստարար բարբառելով:  
 95 Որով յաղթեալ մեզ իմաստանոցս և կարծեցեալ բանաստեղծացս,  
 Լըսութեամբ յանդիմանեալ, ոչ կարօտեալ երկար բանից:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հովհաննէս Իմաստասերի «Սարեակ» տալը մենք հրատարակում ենք  
 Ղ. Ալիշանի 1847 թվի «Բազմավեպ»-ում լույս տեսած բնագրի հիման վրա:  
 Նրա մեջ կատարել ենք որոշ ուղղումներ Զմմառի ընդօրինակութիւնից, որի  
 լուսանկարները մենք բերել ենք անցյալ տարի Լիբանանում գտնված ժա-  
 մանակ: Տողատակ ծանոթութեան մեջ Ղ. Ալիշանի հրատարակած տեքստը  
 նշել ենք B նշանագրով, իսկ Զմմառի ձեռագրինը՝ A նշանագրով:



## 29. ՆՈՐԻՆ (ՅՈՎՀԱՆՆՈՒ) ԸՌ ՍԵՐԳԻՍ ՈՂԲՔ

- Յիսուս հար միածին, Կուգապատիւ, և գոյակից բան և ծնունդ:  
Որով ծանուցաւ հար իսկութիւն. անծանաթից երկրածնաց:  
Վազածամեա աշժմ ի խնդիր. տարամերժեալ քո ծառայի:  
Հաս յազնութիւն վշտագնելոյս. յախտից մեղաց և շարութեան:
- 5 Արա արժանի սղորմութեան. զանձամբ ընդրոզս կորստեան:  
Նախնոյն հետողի, եղէ ծնունդ հար հանկունակ, արինազանց:  
Նոյն աճեցեալ յիս շարութիւն. յոգնապատիկ ի սպանողէն:  
էի երբեմն և ես անմեղութեամբ բարգաւաճեալ, որպէս և նայն:
- 89բ // Սուտն և նենգաւորն պատրանաւք որսաց և զիս նմանապէս:
- 10 Քաղցր և մարդասէր հովիւք քաջ, որ զթացար ի մոլորեալն:  
Ճոխս ևս գարձիս անշարայուշ, երկայնամիտ և բազմագութ:  
Հողմոց դառնաշնչից յարուցելոց. սաստեա և աշժմ որպէս երբեմն:  
Արա անդորրութիւն տազնապելոյս. ի ծփանաց ալեաց մեղաց:  
Նշանաւք սքանչելեաց և զիս կորզեա, ձեռնտուութեամբ ըստ
- 15 Պետրոսի:  
Աղերս պաղատանաց մատուցանեմ. քում տէրութեանդ ամենագութ:  
Սիրով յիս խոնարհեա ի վիրաւորս. որ ես բժիշկ բազմահմուտ:  
Անկեալ և ես ի ձեռս աւազակաց. անողորմից ըսպանողաց:  
Բազմաց նենգաւորաց որք և թողին. զիս կիսամահ կամ թէ մեռեալ:  
90ա Գանիցս և վիրացս արա դարման. //բժշկութեան տէր բարեբար:  
Սուզմանցս անդրնդայնոց զիս մի մատներ. զապաւինեալս առ  
քեզ փրկիչ:  
Ինև ծանիցեն յուրվաթիւնք որդոց մարդկան զքոյդ գթութիւն:  
Միով ակնարկութեամբ ցուցես և յիս. զդարութիւն մեծիդ աշոյ:
- 25 Ես միայն մոլորեցայ յուղիղ շաւղաց. արքունական ճանապարհացդ:  
Ծանեա աշժմ գտուգանս մոլորութեան. յետ վտանդի ազբատութեանս:  
Ի քեզ դիմեցի հայր բարեգութ ամենառաւ. տէր սեղանոյ իմաս-  
տութեան:  
Խնայեա յիս քաղցրութեամբ աստուծայնով, որպէս յորդին յայն  
յանառակ յանմտաց:
- 30 Նորով պատմութեանս զիս զարդարեա և մատանեաւ հայրականաւ:  
Գողամ զարհուրագին յորժամ յիշեմ զփարթամութեանն. զհայրե-  
նեացն իմոց վատնումն:

- 90բ Այլ ի գութ քո հայրական վատհացեալ, իշխեմ ասել զհայր  
**35** մեղայն առաջի քո:  
 Լեր գու ունկնդիր անոխակալ, մոռանալով զիմ գառաջինն խա-  
 կութիւն:
- Յաւզնել ինձ փութացիր արագապէս, վարատելոյս ի քոց զբկաց:  
 Աչաբ քաղցրատեսաւք ակն ածեսցես, երկիւղալից պակուցելոյս:
- 40 Մանո յանդգամի անձին իմոյ զիմաստութեանն, բմպակցութիւն  
 քեզ հաղորդաց:  
 Կանխեա ողորմութեամբ առ վհատեալս անյուսութեամբ, վասն  
 անշափից գործոց բարեաց:
- 45 Ել ընդ առաջ լրջմտութեամբ, կանխակալաւ, զիմեցողիս առ կե-  
 նագործդ:  
 Նոր զիս ստացիր զատարացեալս, երկայնագոյն ժամանակաւք:  
 Գեղ կենաց ընձեռեա ախտացելոյս, ի յորովից մահացուցչաց գե-  
 ղարբութեանց:
- 50 Ասնուլ ինձ շնորհեա զմախթանաց իմոց խնդիրս, առատաբաշխ և  
 ողորմած:
- 91ա Նախ ընկալ փառատրութեամբ արժանացոյ զիս մարդասէր, ընդ  
 գերակայան:  
 Ի նոյն ձայն զովսդաց ըզքեզ աւրհնել անյոելի, միշտ յափտեան:

Փոխ ասա:

- 55 Յիշեա տեր ոգեակեր, զմիաժինի քո շարշարանս:  
 Որ առ սէր մեր տանջեցաւ, որպէս մահու ոք պարտական:  
 Եւ մատոյց քեզ պատարագ, զինքն ի վերա կենաց փայտին:  
 Եւ եղև քեզ բարեխառ վասն սիրոյ կորուսելոցս:  
 Եւ հաշտեցոյց զքեզ ընդ մեզ, իւրով մարմնովն շարշարեալ:
- 60 Մատուցանեմ քեզ պազատանս, բերանով քոց սիրելեաց:  
 Եւ զվերս բեռուցն, մածուցմամբ առ խաչին փայտ:  
 Եւ զկողին սրբոյ բացումն, զեղարդեամբն ի զինուորէն:  
 Չնուէրն զայն ըզմեժ, որում հասու ևս զու միայն:  
 Չչքնազ ընձայն իրր առ ի մէնջ, զոր բարեխառ առ քեզ ունիմք:
- 91բ Չվիրաց մերոց չնջիչ, և զցաւոց մերոց բժիշկ:  
 Քաւութիւն շնորհեա մեղաց, միայն ա[յ]նմ եղև մարդասէր:

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Իմաստասերի նորահայտ այս տաղը, ինչպես ասել ենք  
 ուսումնասիրության բաժնում, հայտնի է եղել ՀՊՁՄ-ի № 7 (16) ձեռագրից,  
 որը բովանդակությամբ «Աղօթամատոյց» է, ընդօրինակված 1211 թվին «Է  
 գուառս Առանիպաղին, ի սրբափայլ լերինս Հայր Մակար Կոչելոյ, յանա-  
 պատս զժուարայարկ Միծոանքար կոչելոյ» (թ. 124բ): Ձեռագրի գրիչն է  
 հանդիսացել Քրիստոսատուրը:

### 30. ՅՈՂԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՌ ՍԱՐԳԻՍ, ՎԱՍՆ ՏԱԳԻՅՆ

Վստահութիւնս կարծեմ և ոչինչ նուազութիւն երջանիկդ հռչակելոյ.  
 Անփոփել ո՛չ միայն զաղաւթականսդ, որ է՛ և յառաջատելո՛յ,  
 Այլ և զանճառագո՛յնսն զոր պատահ է անուշ,

Որոց տան մշակողին զճարիրեա՛կն ընդ միոյ արդեանցն պտուղս-  
 5 Վասն որոյ անուցանեն պարարտագոյն լինելոյ զսերմանսն ան-  
 զաստանիդ-  
 Ուստի արտալածին և որք զկուս պոզատայիցն ուսել սիրեն սեր-  
 մանս.

Վասն զի անգնալի՛ որպէս և կն լինել վարկանիմ,  
 10 Եւ ո՛չ ինչ հրաշափառագոյն է յողորս պարսպին և պատուպանին.  
 Նոյն ինք է ասել և սերմանողի՛ն.

Բայց փոխադարձցի՛ և մեզ զքնականագոյնն ի բարոյականէն:  
 Տուզով մարտագունիք-ստոգողաց.

92ա Զո՛չն արտարեալ ի կայծականցն որակայիմնս,

15 Եւ զի՛նչ ալարան թէ՛ ազուր զուզակցեալք աստուածայնոցն պար-  
 զկաց.

Միայն զի ալս միջնորդա՛ւ, իսկ այն՝ լծորդարար:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննէս Իմաստասերի «Առ Սարգիս, Վասն սաղիցն» հրատարակում  
 ենք ՀՊԶԴ-ի N 7 ձեռագրի ընդօրինակութիւնից: Նրա մեջ կատարել ենք ան-  
 հրաժեշտ ուղղումներ Զմեառի ձեռագրի հիման վրա:

Վերագրում՝	Ա Առ Սարգիս, Վասն սաղիցն	Յաննէս Իմաստասերի	5	Ա	զսերմանս
7	Ա որ	9	Ե լինել չիմ	12	Ե զքնականագոյ բարոյականն
կայծականց	15	Ա եւ չիմ		Ա	Զոչ



### 31. ՆՈՐԻՆ, ՎԼՍՆ ՄԻՒՍՈՅՆ ՈՂԲԸԿԸՆԻՆ

Տացին կենցաղոյս յոլովագունիւք արտակացելոյ մասամբք, իրր հիացման մշտենչենացելոց անարատիդ և մաքրոյ գիտաւորութիւնք ի սմայցս ներտրամագրեցելոց, էապէս ազգմունք զարութեանց անփոխադրապէս, որպէս զի անբշլանայի զբաղձանացն  
 5 բերելով խարոյկ՝ զվստահացեալսն աճիւնացուցես փշոց մացառս, և թէ իցէ երբէք կոտեալ իրրև ի սխարմանէ՝ մտարինագոյն սպի ազտոյ շնջիլ անտեսարար բանիցն իրաց:

### ՆՈՐԻՆ ՅՈՂԱՆՆՈՒ. ԱՌ ԿՈՅՐՆ ԱԶԵՂԱԳՈՅՆ ԵՒ ԼՈՒՍԱԼՈՐ

Ի կափուցման զգայութեանց ոմանց, մանաւանդ որ ասեն իմաստասերք || վրիպել ի բարութք կելոյ ևս ոչ ասեմ եթէ ունիցի, զոր ըստ անձինն բիրս անպզտորս և կորովիս վերահաշեացս, զի  
 5 եթէ գոյութիւն անապական անձն և ներհակ մարմին արժան ուրեմն է, ո՛չ զըստ մարմնոյն յաւէտ, քան թէ ըստ անձինն կոչել ուղղակի քաջազգայութիւն և համայն բարեբախտութիւն: Իսկ որ ըստ խառնուածոյն է պիտակարար և ևս, զի արութեամբ զայս վասն ընդգիմակին և բունազրաւամբ: Եւ ոչ միայն բնարար ստացեալ, ուստի լիցի և ասացի երանելի, որ է իսկ հաւանական և քաջայարմարտի տի ահա և ո՛չ անվայելուչ: Տացի այս, և տուա ո՛չ միայն յիմաստասիրելն սովորից, այլ և որք ո՛չ ամենևինբիր  
 10 իցեն արտաքոյ տեղոյ և խորհրդոց: Արդ՝ եթէ պարզագոյնքն նմանեան նկատին բոլորեքին, այլ և պատճառն՝ երիցագո՛յն. որ է  
 15 առաւել իմաստութիւն, ո՛չ ամենայն երաժըշտագոյն է ասել գովել-  
 93ա լոյ՝ հասեալ երջանկ/ութեան, որ զնայն ստացաւ սրատեսագոյն և բարեխրատ զճշմարիտն իմաստասիրելով: Եւ զանյութանելին, որովք յազապս անյութանելացն, որ և է: Եւ ասի բիւրապատկազոյն

5 A զգնեմացեալսն փոխ. զվստահացեալսն 6 B մտարկօրճնագոյն փոխ. մաւրինագոյն  
 7 A ընտանէիցն փոխ. բանիցն 1 A Առ կոյրև աղեղագոյն և լուսաւոր. Յոհաննու Լահանայի 3 A իմաստասիրաւք A վրիպեալ 5 A թէ փոխ. եթէ 6 ըստ փոխ. զըստ 6 A թէ որ ըստ 9 B բնգրիմակին փոխ. զիմակին 11 տի չիք 12 A ամենելին 15 B ամեն փոխ. ամենայն 16 A ստացաւ փոխ. ասացաւ 16 A սրատէս ասոյն փոխ. սրատեսագոյն

- ստացեալ զաւգտակարութիւն, զի նա յայսմ և խափանելի, իսկ  
 26) յայնմ և անփոխադրելի զաւգոտոն ունի: Եւ ասեմ զայս առ եր-  
 կոեան, որք անուամբք և եթ և որ արդեամբք իմաստասիրեն յար  
 արժուն՝ զիմաստասիրականն ունելով զգալութիւն, որ կոչի միտք:  
 Արդ՝ եթէ այսոքիկ այսպէս, և ո՛չ ընդդէմ զոք ասել վարկանիմ, ո՛չ  
 25) զգալոյ աստի արդելեալք ի լուսոյ, որք եզէն բարեկիրք առաջնովն  
 և մեծաւ, վասն որոյ զնոյն վարիլ հետ:

Ո՛վ սիրելի, յոյժ արորժեմ բաղձանաւք անձին քում բարւոյ և  
 մեզ նուաստից լինիլ բարեխաւս: Ողջ լեր:

21 A և եթ որ արդեամբք չիմ 25 A ի զգալոյ 27 B ուրախ եմ փոխ. արորժեմ  
 27 A բարոյ 28 A լինել A Ողջ լեր չիմ

32. ՆՈՐԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՆԱՆԱՅԻ ԼՈՒ ՈՐՍ ՊԻՂԺ ԶՄԻՍ  
ՎԱՐԿԱՆԻՆ ԵՒ ԶԼՆՁԻՆՍ ՈՉ ԱՐԿԵԼՈՒՆ

Պ. 9.

Նորք սմանք փարիսեցիք և առանց դպրութեան այժմ ի մէջ մեր  
ընծայեցան, զժուարակիրս և ծանունս զղիւրքմբերսն և թեթևադոյնս  
բասեղծանելով յանձանց, բառնալ առանց արիւնաց հրայմային,  
ոչ միայն զի մատամբ ոչ կարեն երթալ յայնստիկ ինքեանք մերձ,  
այլ և գործել զանարժանս զյցեալսն ամենայն անիրաւութեամբ,  
արիւնատր ինքեանց համարին: Զգերան յախան ոչ տեսանելով  
10 չիրում, բամբասէ և որ ոչ զղուզնաբեայն ծանեաւ շիւղ, և ոչ միայն  
զի ոչ շիւղ, այլ և սահման աստուածային և յաստուծոյ առ ար-  
դարս և անարատս կարգեալ, զհիմն ոչ ունելով կործանեալ, ի հե-  
ղեղաց և հողմոց, կամ զիսկն ասել և զճշմարիտ՝ առանց իրիք  
բնութեան ցողուն և փայտ ի կերակուր հրոյ ժողովեն, իսկ զհիմ-  
նամբ հաստատեալս առանց վթարութեան և հերքելոյ, սուղ  
շինող ինչ նուազ շինող ոսկի, և արծաթ և պալծառ քարինս քա-  
մահէն փրոնկայով, վասն զի պիղծ է յաջս ամբարշտի աստուա-  
165բ ծապաշտ // և մոլեղնեալ անգիտանալով զանձն զողջամիտ որ աս-  
տին նախատէ, ծարաի է արեան Հարէլի Կայէն: Արք քաղղեացիք  
20 շարսխաւս զԱնանիանց և զԴանիէլէ լինին: Սիրեմ թէ ոչ զազանք  
և ոչ հուր պատերազմեսցին ընդ ասելիս ատելեացն: Բազում անի-  
ծանել զԻսրաէլ հանդգնի, սակայն ոչ տուեալ նմա լինի: Եւ թեպէտ  
անիծանեն նոքա, տէր արհեստցէ, և զամաթ շարուցեալքն ի վերայ  
կրեսցեն, վասն զի սխորժեն զկուրութիւն և յուսաւորութիւն՝ խա-  
ւար նոցա կարծի, ոչ զանգիտեն անլուսաւորք անանել զտեսանողս:  
Եւ թե այնպէս ի հուստ վնասեալք են, սրանչանամ և ոչ մի  
վասն անառակութեան գնացից նոցա, բանզի որ ոչ զինքնաշարժ  
ունիցի շարժող, զիա՞րդ ինչ պիտանեաց և ի կարգաւորաց կա-  
րասցէ գործել: Ոչ զանզգամբ զիմաստունս թշնամանեն, ոչ անաւ-  
30 ղէնք զքաջ արիւնաւք զաստիարակեալս, զբարեպաշտս՝ ամբարիշտք,  
զարդարս, անիրաւք, զմարտրս և զգաստս, վաւաշոտք և զէջք-

1 B Յօճաննու 10 B դուսնաբեայն 14 B հիմամբ



ազանք և կապկալք ածղութեամբ, զտղորմածս, զսփոտոյս ազրատաց: Քանզի զիա՞րդ ներճակք միաբանեացին՝ բաց ի տարերց, ո՞ր զառաքեալս, ո՞ր զմարգարէս, զմարտիրոսս, ոչք ոչ շարք և մեղաւորք հալածեցին և սպանին: Զի եթէ զտանուտէրն, ո՞րչափ ևս առաւել զընտանիս նորա: Այլ խրախ լինիմ, զի յազազս բարեպաշտութեանն վտանգիմ, թեպէտ և ոչ նոցա այսպէս երեւի, վասն զի և որոց շրջեալ են խելք. կամ տնապահաւ այլապիսի ըստ էութեան, ոչ ինչ կարեն տեսանել: Բարձրագոյն անզգայաբար և իմանան 166ա 40 զյիմարութիւն, և ըստ բանի թուեցեալքն նոցա, ծիծաղելիք են ստողաց և զբնութիւն ամբողջ ունողաց: Լուիցեն և նորա ի մէնջ գատուել քան զճառասարն պատասխանիս ոչ ըստ ստիսասիրաց և վիճողաց, այլ զիրատունս պահանջողաց, ոչ յազազս ատելութեան բնէ՞ղիմտորոգաց, այլ թիւրութիւն բնորութեան նոցա ի գատաստան արդար ածողաց:

Արդ՝ զի թեպէտ և բազում ինչ առ ի մէնջ յազազս բանի հատուտ շատացաւ հակառակ նոցա, դարձեալ զյխաւորելով փոքր ինչ իրբև զյիշատակարան հասել ոչ աւելորդ ինչ, այլ յարմարական գոլ երևի: Արպէսդի և յայսմ իսկ ուսանիցիմք անճառատարիմս զնստա ի մեծամեծս ըստ որում և ի փորունան այնքան կարճամտաց և խորհրդով զուղնարեալց յաստուածարանութիւնս: Զի զարմանք իցեն և առ ազս երեւել անճառարար առգնել, ոչք ոչ զբանն մարմին եղեալ, որ է մարդ ըստ ճշմարտութեան լինել, խոստովանել յայնձն անունն Յովհաննու հոտանկով, այլ մարդ զումն ապակահացու և անկատար, ունայն ի փառաց աստուածութեան յառաջ գալ ի Մարիամայ ստեղծանեն, մահկանացու միայն ըստ մեղ, և շարչարելի, անխառն և անմիաւոր գերագոյն ըստ բնութեան մինչև շարչարեցի խաչի ի մահն ի զերեզման, և յարուցեալ մարդ Կիստուորեացի ապա աստուծով: Իսկ ոմանք ի պատահելոցն զլորման և զայլնագրութեան բարին և վիմի կարծելով լաւագոյն քան զնստա ի խոստովանել, և յառաջ իսկ քան զխաչն ասեն քանիւ զմիաւորութիւն, ոչ ճշմարտապէս և ըստ բնութեան, այլ արժանաւորութեան հանգանակաւ իմն և չափովք: Եւ զայս կամ նախակազմեալ յորովայնի ուրումն համբակի և կամ զկնի ծննդեանն սբանչելոյ երկու զիմաց կատարելոց և անձնաւորութեանց յարակցութիւն զմիաւորութիւնն զայն ասեն: Զի թեպէտ շանան թագուցանել արուեստատար ճոռոմարանութեամբ զերկուց զիմացն դաւանութիւն, այլ ոչ կարեն ամենայն իւրք զնայն զեկուցանելով: Վասն զորոշեալ կամաց երկուց և երկուց բնութեանց և ներդրութեանց կամ կրից ատանձին մարդոյ ճառք և տրամարանութիւնք զինչ այլ, եթէ ոչ երկուս նշանակեն զէմս, խառնմանն և միաւորութեանն յեղանակի գոյով անճմուտք, փորձեն եղծանել զեկեղեցոյ ճշմարիտ աւանզութիւնս:

Արդ՝ ի նահատակաց բանին կշտամբեալք նորա առաւելապէս և խոցոտեալք, թեպէտ և ոչ զգան մեռեալք գոյով, առաջիկայս մեզ քննեցի աշխատութիւն ինչ բարձրագունի և խորագունի յայսոսիկ,

ոչ ինչ պիտոյանամբ քաջայայտ ունել անմտութեանն զամբաստանութեամբ ինքեան, զորոց և առաքելոյ նախախնամարար յաղագս իւրոցն հոգեով սրբով արապրեաց զհակառակաձայնութեանն առ 80 ինքն հերժուած մարդոց ապականելոց մտաբ և ի հաւատս անպիտանից գոլ գիտս (!) զայնպիսի նորաձեւութիւնս: Այլ հոգին սուրբ յայննապէս ասէ, թէ ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք ի հաւատոց, ուրոյցութեան հաւատոց լինել ծնունդ, զխարդախ 167 ա || մտածութիւնն և զանարկն գրութիւնն զայն՝ գունոց ասէ զիւաց և մոլար հոգոց անկրան եղծեալ իմաստութիւն: Քանզի հարեալ ի նոյն յաւելու ասել աշափէս. Հայեսցեն յայսս մոլորութեան և վարդապետութիւնն զիւաց, կեղծաւորութեամբ ստաբանք, խարեալք իւրեքանց խղճիւն մտաց, որ արգելուցուն յամուսնանալոյ և մեկնեսցեն ի կերակրոց, զոր աստուած հաստատեաց ի վայելումն հաւատացելոց, և որք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ, զի ամենայն արարածք աստուծոյ բարի են, և չիք ինչ խոտան, մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին, զի սրբի բանիւ աստուծոյ և աղաւթիւք:

Եւ արդ՝ ոչ յայննապէս հակառակարար ունին հոգոյն սրբոյ և հաւատոցն՝ որ ի Քրիստոս Յիսուս, զի եթէ հոգեոց մոլորութեան և զիւաց վարդապետութիւն ցնորականն այն իցէ՛ վատխար և զառն ուսումն, չիք ի նոսա դիտութիւն ըստ Քրիստոսի, բանզի զի՞նչ հազորդութիւն է Քրիստոսի ընդ բելիարայ կամ զի՞նչ բաժին հաւատացելոյ ընդ անհաւատի: Եւ թե ի վայելս հաւատացելոց և գիտակաց 100 ճշմարտութեանն կերակուրք յաստուծոյ հաստեցան, թշնամանեն զարարիչն, ոչք զարարծ նորա գարշեցուցանեն հեռի և ինքնեանք անկանին յուղիղ հաւատոց և ճշմարիտ գիտութենէ: Քանզի ասեն զբարին շար և ոչ բարի, զառուելի զժնդակս՝ իբրև զաբինաւորս և կանոնեալս ամենայն յաժարութեամբ գործեն, զասճման ճշմարիտ հաւատոյ լքին, թողին, և զարժանաւոր վարուց իբրև զատելիս կամակարութեամբ, առանց իրիք բռնութեան և ընդգիմութեան 167 բ մնասեալք || ի բռնականն յոյժ և հակառակաւք զուարճանան: Վա՛յ որ զնէ զխաւարն յոյս և յոյսն խաւար, զբաղցր՝ զառն, և զղառն՝ բաղցր, զչարքն՝ բարի, և բարին՝ շար. արդար և մոլորելոց են 10 անխորհրդականութեան ընտրութիւնք և բանք:

Հայցեալ և ընդ միւս ևս զառանցութիւն մտոց նոցա և յիմարութիւն ոգոց, ոչ է արգել նոցա և ոչ մի յաւուրց և ի ժամանակաց նորումք կերակրովք զմայլեալ ամենայն շուայտութեամբ և անլիր ազահոութեամբ, և զորս գոհութեամբն մերձենան և աղաւթիւք յաւուրս երեւիս և նշանաւորս, հաւատովք և վարուք պարկեշտք, հայհոյել ոչ պատկանեն: Զի եթէ շար է ինձ, ընդէ՛ր քեզ բարի, և եթէ ինձ ի մեզս, վասն է՛ր քեզ արդարութիւն. կամ մի՛ ուտեր կամ մի՛ զատապարտեր: Քեզ բաւական տարույն ժամանակ: Իսկ ինձ և ոչ մի ար պայժառ և աստուածային քեզ աստոց պատճառի, իսկ 167 ինձ ոչ և ի տկարութեան: Եւ ո՞ զայս որոշեալ սահմանեաց: Զի՞նչ է հակառակ արէնսգրութիւն, քեզ արքեցութեամբ և որովայնամո-

լուսնամբ զեխել և եղծանել զկեանս ի մանկութենէ: Մինչդեռ ի կատարած ատանց խղճի մտաց և որ զաստուածայինսն հանապազ իմաստասիրէ, նմա և ոչ մասն ինչ ի պատճառ կելոյ՝ թե երբեք  
 5 հանդիպեսցի ի բարիսք աւուր: յԱրենէ և ի մեռելատույ հրաժարել տուեալ է, զմիս արեամբ մի՛ ուտիցիս, այլ զարիւն յերկիր հեղուցուս, քանզի ամենայն շնչոյ կենդանուոյ շունչ՝ արիւր խոր է, զոր և առաքելքն տեսնն հաստատեցին թղթովն, որ առ հաւատացեալս ի հեթանոսաց, քեզ ո՞ համարձակեաց ուտել զհեղցուցիկս արեամբ  
 168ա կամ // յորս թռչնոց և էրէոց, ո՞ սպանագործ զշունչս քեզ հրամայեաց, զի զխղճն ձեռուք և խեղդանաւ կոելն լսու եղէց կամ զանմաքուր կենդանեացն ըստ արինացն անխտիր ճաշակս թողացուցին քեզ սպասաւորք բանին անծանաթիդ, և զաներկրայ մաքրոցն պէտս  
 1ա բացասահմանիցին և ստոյգ բանին ուղ//իդ ընդունողաց: Թողում զապականութեան վարդապետացն քոց խառնակ և զանսուրբ կեանս և որքան ինչ այլ:

Մի բաւական համարելով զսո նոսա ի մէնչ յայլում ժամու ատացեալս: Եւ միւս ևս՝ զի ոչ է գիտաւորութիւն այժմու բանիս մեծ խեղիքն այն, սակայն ունիմ շնոթ/Տ հոռմայեցուցն արինաց վերջնոց սատակել իբրև զթշնամիս հասարակաց բնութեան մարդկան՝ զխրդիչս արականացն հրամայողաց:

1բ // Արգ՝ յայսպիսեաց և այնպէս խրատեալք, զպղծեալս արինացքն կենդանիս, որ ի ծովու և ի ցամաքի և յաւրս շրջին, ուտեն ատանց խտրութեան, և մեզ զհրամայեալս և համարձակեալս անուամբ սրբութեան յաստուծոյ ի գործ համարին մեղաց: Այլ տեսն, զի թեպէտ և սուրբ է և արինատր, սակայն ոչ է արժան զձե պարկեշտութեան և կրանատր ժուժկալութեանն ընկալելոց և որոշելոց ի  
 2ա սովորութենէ հասարակաց այլովք վարուք հաւա//ստրել մարդկան:

Աեսմ և ևս զգոյն: Եւ ոչ հաճելի է ինձ յայնպիսի կերակուրս շուսյաութիւն ոմանց, մանաւանդ կարողաց ուժով մարմնոյ և առողջաց յախտէ հիւանդութեան, ևս առաւել մանկագունաց ի նոսա, և կարատից թառամացուցանել ընդ ծաղիկի մարմնոյն և զախտս բնատրականս, և որոց պարտն է արեամբ շափ պատերազմա կալ հակառակ մեղաց ոչ միայն յայնպիսի կերակրոց և  
 2բ դինոյ դանձինս արգելով, // այլ և յամենայն փափկութենէ, և ի յաղեցմանէ զոչն ևս կերակրոց:

Սակայն և ոչ զատապարտեմ զբարեձեռութեամբ մերձեցեալսն ի տկարագունիցն, իբրև ի զեղ ցաւոց և ի պատճառ կելոյ և ո՛չ բամբասեմ որպէս զգործաւոր անաւրէնութեան և զմեղակագունի ապիրատութեան:

60 Եւ ոչ տեղի որոշեմ զչարագործաց և ժամանակ երկայն ի ներքս ածելոյ զկնի, և խառնելոյ ընդ եզրարս ի կցորդութիւն աղաթից // և սեղանուոյն երկնատրի: Իսկ զու յանստգտանելոցն շարապէս գատիս զիմն և պարսաւես գառնութեամբ, որպէս որոց ոչ գուցէ փրկութիւն և զեղ բժշկութեան:

Բայց զքո՛յան, զի ասացից զկողման շարին կամ ձախու, զմահու շափ ի մեղանշականս և առ աստուած և առ բնութիւն վազ-



վաղուկի առանց և դոյզն միոյ ժամանակի որոշման մերձեցուցանես յանուանեալն քո սեղան՝ խառնակ և բնդ շփոթեալ հացին և  
3բ բաժա կին բնդունակ լինել արժանի առնես: Թո՛ւի ինձ, գիտելով,  
